# ԷՋՄԻԱԾԻՆ

Ը-Թ

1997



ԾԳ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս–Սեպտեմբեր
1997

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ- Նոր իրագործումների ճանապարհին ........ 3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Միասնական հաղորդագրություն ........ 6
Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակները և օրհնության գրերը ........ 8
Հայրական խոսք և Հայրապետական օրհնութիւն առ Արժանթինի Հայկական Ազգային Համագումարն ........ 21
Հայրական խօսք և Հայրապետական օրհնութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ վարժարաններու համագումարին ........ 23
Հայրական խօսք և Հայրապետական օրհնութիւն «Զարթօնք» օրաթերթին վաթսունամեակին առթիւ ........ 25
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարոզը՝ խոսված Խաչվերացի տոնին, Մայր Տաճարում ........ 30
Հայրենիքը պատկերն է հայության (Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը Հայաստանի Անկախության վեցերորդ տարեդարձի առթիվ) ........ 33
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Հռոմի Պապին՝ Մայր Թերեզայի մահվան առթիվ ........ 38
Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը տվեց Ղարաբաղի նորընտիր նախագահին ........ 39
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Արկադի Ղուկասյանին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ ընտրվելու առթիվ ........ 40
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Վերաբացվեց Գևորգյան ճեմարանը ........ 41
Վեհափառ Հայրապետը երկու ակադեմիաների անդամ ........ 48

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱՐՄԵՆ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Հարավային Ռուսաստանի թեմ ........ 50

ԿՐՈՆԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ - Մարիամ Աստուածածինը Հայ Եկեղեցւոյ հոգևոր փորձառութեան մէջ ........ 76
ԶԱՔԱՐԻԱ ՁԱԳԵՑԻ - Զաքարիա Հայոց Կաթողիկոսի «Ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» ճառը (Գրաբարից թարգմանեց Բագրատ արք. Գալստյանը) ........ 80

Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ - Նարոտի խորհուրդը կամ հնագույն ծեսի վերականգնման ուրվագիծ ... 88
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Անանիա Շիրակունու՝ Հայոց վերադիրների աղիւսակը ... 94
ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - Բռնի միության դեմ լեռնահայոց զանգվածային ինքնապաշտպանությունը ԺԸ դարում ... 104
Ա. Գ. Սարյան - Հայրենական սրբավայրերը ուշ միջնադարի ուղեգրություններում (ԺԸ դար) ... 142
ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ - Թիֆլիսի Վանքի Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի պատմությունը ... 150
ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ - Գևորգյան ճեմարանի երախտավորները. Գրիգոր Ղափանցյան ... 164
ԱՎԱԳ - Հողմակոծ ցողուններ ... 170
ԲԱԳԱՐԱՏ ԷՍԴՈՒՔԵԱՆ - «...Եթէ ոչ ճամբորդ մի արի...» ... 178

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Մոսկովյան ցուցադրությունից հետո Հայ Եկեղեցու Գանձերը բերվեցին Ս. Էջմիածին ... 184
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի հերթական տարեկան նստաշրջանը ... 185
ԼԱՐԻՍԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի եռօրյա նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ... 187
Սպիտակ քաղաքի նոր եկեղեցու հիմնարկեքը կատարվեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ... 192
Վեհափառ Հայրապետի քարոզը Սպիտակի եկեղեցու հիմնարկեքի ժամանակ ... 193
Վեհափառ Հայրապետի օրհնությամբ բացվեցին երկու նոր դպրոցներ ... 196
Օծվեց Արենիի վերանորոգված եկեղեցին ... 198
Ուխտագնացություն դեպի Մայր Հայրենիք - Ս. Էջմիածին ... 199
Ուխտագնացություններ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ ... 200
Ուխտագնացություն Ղրիմի Ս. Խաչ վանք ... 206
Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն ընդունեց առաջին ուխտավորներին ... 208
Կիլիկիո Կաթողիկոսության Կիրակնօրյա դպրոցների ուսուցչական կազմերի Միջթեմական Համագումարը Արցախում ... 209
Տ. ՆԱՐԵԿ ՔՀՆ. ԱՀԱՐՈՆՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմում ... 218
Տ. Նարեկ քահանա Ահարոնյան ... 219
Տ. Տիրան քահանա Ավագյան ... 220

ԱՐՏԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ - Սևանի Վազգենյան ճեմարանն սկսեց իր ութերորդ՝ 1997-1998 թթ. ուսումնական տարին......221
Ընդունելություններ Մայր Աթոռում......223
ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ - Եկեղեցական բեմ. լուրեր......230
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата......233
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin......236
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine......239

Խմբագիր՝ ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ***

# ՆՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Լրացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 65-ամյակը: Ուրախարար այս առիթով Վեհափառ Հայրապետը բազմաթիվ բարեմաղթություններ և շնորհավորանքներ ստացավ թե՛ հայաստանաբնակ մեր ժողովրդից և թե՛ Սփյուռքի հայությունից: Լավագույն նվերը, սակայն, ինքն իրեն մատուցեց Նորին Սրբությունը՝ սկսվող ուսումնական տարվա շեմին կատարելով վերաբացումը Գևորգյան Ճեմարանի:*

*Երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի անկատար մնացած այս երազանքի իրականացմանը Գարեգին Ա Վեհափառը ձեռնամուխ եղավ իր գահակալության առաջին իսկ օրերից: Խորհրդանշական է, որ Հայաստանի երրորդ Հանրապետության ծննդյան հինգերորդ տարեդարձի նախօրեին տեղի ունեցավ այն, և որին իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Լեռնային Արցախի Հանրապետության նորընտիր նախագահ Արկադի Ղուկասյանը, որը վկայությունն է թե՛ հայ ժողովրդի հոգևոր վերածնության և թե՛ հայոց պետականության ամրապնդման ու հարատևման գործում Ճեմարանին վերապահված կարևորության:*

*Գևորգյան Ճեմարանի բացման հանդիսության ժամանակ Վեհափառ Հայրապետն ասաց, որ ինքը ևս միջնորդավորված, անուղղակի ձևով եղել է այս Ճեմարանի սանը, քանի որ Գևորգյան Ճեմարանի քուրայում են թրծվել Հայ Եկեղեցու նշանավոր շատ դեմքեր, այդ թվում և՛ Նորին Սրբության ուսուցիչ Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետի այս խոսքերի հետևողությամբ կարող ենք ասել, որ ինքը Գևորգյան Ճեմարանի աշակերտը, սանը լինելուց հետո, նույն կերպ այնուհետև Ճեմարանի միջնորդավորված ուսուցիչն է եղել մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալը՝ Կիլիկյան Աթոռից Հայրենիքում արժազանքվող ոգեշունչ և ոգեղեն քարոզներով, «Հովվական աստվածաբանության» ձեռնարկով և հեղինակած մյուս գործերով, ինչպես նաև իր բարձր հովանավորությամբ հրատարակված բազմաթիվ գրքերով, որոնցից շատերը որպես դասագիրք և լրացուցիչ ձեռնարկներ են ծառայել Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սաների համար:*

*Հայ Եկեղեցու բազմադարյան պատմության ընթացքում եղել են շրջադարձային պահեր, երբ Հայոց Կաթողիկոսներին է վիճակվել գլխավորել ժողովրդի՝ հանուն հոգևոր ինքնության և ազգային անկախության մղած պայքարը: Եղել են շրջաններ, երբ Հայոց Հայրապետների*

ուսերին է ծանրացել համեմատական խաղաղության տարիներին Եկեղեցու նորոգ պայծառացմանը և Հայրենիքի վերաշինությանը նվիրվելու նվիրական գործը: Հայոց պատմության նոր շրջանում առաջինի տիպարը եղել է Ներսես Աշտարակեցին՝ արժանանալով «Պաշտպան Հայրենյաց» կոչմանը, իսկ երկրորդի օրինակը՝ Գևորգ Դ Կաթողիկոսը՝ Գևորգյան Ճեմարանի և «Արարատ» ամսագրի հիմնման, Մայր Աթոռի Ձեռագրատունը ժամանակի չափանիշներով կարգի բերելու և մի շարք այլ ձեռնարկումների համար արժանանալով Մեծագործ կոչմանը:

Գարեգին Վեհափառի Կիլիկյան Աթոռում գահակալության տարիները համընկան. լիբանանյան պատերազմի շրջանին, և Վեհափառը եղավ ոչ միայն գահակալը Կիլիկիո տարագիր Աթոռի, այլև «պաշտպան հայրենյաց» վտանգված լիբանանահայության համար՝ այդ ծանր տարիներին անգամ բարձր պահելով հայ մշակույթի և դպրության ջահը:

Գարեգին Վեհափառն Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձավ 1995 թվականի ապրիլի 4-ին, երբ ավարտված պատերազմից հետո Հայաստանը սկսել էր դանդաղորեն բուժել իր վերքերը և եկեղեցական կյանքի վերաշխուժացման, միջեկեղեցական հարաբերություններում ծավալած գործունեության, Ավետարանի խոսքը և Հայ Եկեղեցու կենդանի ավանդույթը և խորհուրդները ժողովրդի բոլոր խավերում քարոզությամբ հասու դարձնելու, ինչպես նաև ծավալված եկեղեցաշինության համար, որի դրսևորումներից մեկն էլ Գևորգյան Ճեմարանի վերաբացումն է, Գարեգին Ա Վեհափառին կարելի է համեմատել միայն Գևորգ Դ Մեծագործ Կաթողիկոսի հետ:

Պատմությունը զարմանալի զուգահեռներ է գծում միշտ: Գևորգյան Ճեմարանի վերաբացման խանդավառ մթնոլորտը, ճեմարանական նոր սերնդից ունեցած սպասումները ակամա մեզ ետ են տանում նախորդ դարի վաթսունական թվականները, երբ Գևորգ Դ Կաթողիկոսը ապագայի տեսլականով հանուն հայ ժողովրդի հոգևոր-մշակութային վերածնության և հաջորդ տասնամյակների ուրվագծվող արհավիրքներին ազգային-եկեղեցական նոր սերնդի պատրաստությամբ դիմագրավելու համար անտեսելով բոլոր դժվարություններն ու խոչընդոտները և իր հասցեին հնչող մեղադրանքները, որոնք հաճախ դժբախտաբար ավելի շատ զազրելի էին, քան անգամ անարդար, նվիրվեց իր մեծագործ իրագործումների իրականացմանը: Երջանկահիշատակ Հայրապետի ծավալած այս մեծ գործունեությունը և ժամանակի կենդանի շունչը այնքան հարազատորեն արտացոլված ենք տեսնում Գևորգ Դ-ի անվանակոչության հերթական տարեդարձի առիթով 1869 թվականին «Արարատ» ամսագրի հոկտեմբերյան համարի խմբագրականի հետևյալ տողերում. «Այն օրը ամենայն արդարամիտ և անկողմնասէր անձինք ուրախացած պէտք է լինին և երախտապարտ զգացմամբ համբուրած այն Վեհապետին շնորհաբաշխ և ազգախնամ Սուրբ Աջը, որ հիմն ձգեց հայկական

*Ուսումնարանի մը վանքին պարսպէն դուրս, Ուսումնարանի մը, որոյ հիմը իւր նախորդաց ատեն քանի մի անգամ փորուած և հողով լցուած էր, և այժմ հսկայաքայլ շինութիւնը առաջ կ'երթայ և Աստուծով առաջիկա 1870 տարւոյն մէջ 'ի գլուխ կ'ելնէ քաջութեամբ: Ահա անմահ յիշատակի արժան մի, ահա՛ հաւատոյ և լեզուի հաստատուն Նեցուկ մի, որ դարուց 'ի դարս պիտի անմահացնէ ազգասէր հիմնադրին Վեհափառ անունը:*

*Բայց մի՞թէ այն օրը բազմաթիւ խմբին մէջ թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց չկային նաև այնպիսիներ, որ անտարբեր անունը սովորաբար կ'կրեն, կամ այնպիսիներ, որոնց համար վարդը ևս ատելի է, վասն զի փուշ ունի իւր վերայ. ուստի և ամենայն գեղեցիկ ձեռնարկ իրենց մտաց կանգունովը ծուռ ու թիւր կ'չափուի: Անկարելի է, որ չ'լինէին կամ չ'լինին ազգին մէջ այնպիսի անտարբեր և վայրահաջ անդամք, բայց ժամանակին արդեացը թողընելով ճշմարտութիւնը և ազգին եղած օգուտը պարզելու; այնպիսեանց առջևը մեք համարձակ կարող եմք ասել, որ սատանայն ամենայն բարութեանց խափանողը կարող էր միայն նախանձիլ այն օրուան փառաւորութեան վերայ և իւր արբանեակներովը յարձակիլ իրեն նման նախանձամիտ անձանց վերայ, նոցա միտքը չարաչար թունաւորելու և դիւահնար մեքենայիւք կաշկանդելու համար:*

*Իսկ մեք մեր արդարամիտ և անկողմնասէր եղբարց հետ խնդրելով մեր սիրելի ընթերցողներէն, որ իրենց գործակցութեամբ 'ի դերև չ'հանեն Վեհափառ Հայրապետին ազգաշահ նպատակները, հապա փայլելով ճշմարիտ բարեպաշտութեամբ և ուսումնասիրութեամբ այս լուսաւոր դարուս մէջ՝ ջանադիր լինին հետևիլ իրենց հարց պայծառափայլ շաւղին, և մեր հետը ուրախանալով Վեհափառ Հայրապետին եռանդնալից ջանացողութեան վերայ 'ի պայծառութիւն ազգային Կրօնի, Լեզուի և Եկեղեցւոյ, աղօթող լինին նորա կենաց երկարութեանը համար, որպէս զի հետզհետէ բարեչուք զարդարի մեր հասարակաց Մայր Սուրբ Էջմիածինը, և մեք հարազատ որդիքս նորա հետ զարգանամք լուսաւորութեան ասպարիզին մէջ»:*

*Տա Աստված, որ խաղաղությունը շարունակ թևածի մեր Հայրենիքում, և Գարեգին Վեհափառը հանուն «Հայոց փոքր ածուի» շարունակի եկեղեցաշեն և ազգաշեն բոլոր այն ձեռնարկումները, որոնց իրագործումը երազանքն է եղել նաև մեր նախորդ երանաշնորհ Հայրապետների, և մենք, ամեն անգամ Վեհափառ Հայրապետի ծննդյան հերթական տարեդարձը շնորհավորելիս, Նորին Սրբությանը շնորհավորենք նաև ազգաշեն-եկեղեցաշեն հերթական ձեռնարկումի իրագործման համար:*

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութիւններու*

Ընդառաջելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի հրաւէրին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէն քառանդամ պատուիրակութիւն մը Ս. Էջմիածին հասաւ Հինգշաբթի, 7 Օգոստոս 1997 թուին, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը ներկայացնող նոյնաթիւ պատուիրակութեան մը հետ սրտրաց խօսակցութիւններ ունենալու երկու Աթոռներուն յարաբերութեան, թեմերուն կապուած հարցերուն և երկու Աթոռներու միջև գործակցութիւնը առաւել ևս սերտացնելու դիտումով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնող պատուիրակութեան անդամներն էին.–

Գերաշնորհ Տ. Վաչէ Արք. Յովսէփեան
(Առաջնորդ Հայոց Միացեալ Նահանգաց Արևմտեան թեմին)

Գերաշնորհ Տ. Գարեգին Արք. Ներսիսեան
(Առաջնորդական փոխանորդ Այրարատեան Հայրապետական Թեմի)

Ակադեմիկոս Տիար Գրիգոր Խաննեան
Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ

Ա.Ժ. Պատգամաւոր Տիար Ռաֆայէլ Պապայեան
Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացնող պատուիրակութեան անդամներն էին.–

Գերաշնորհ Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան
(Ատենապետ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովին)

Գերաշնորհ Տ. Օշական Եպս. Չոլոյեան
(Առաջնորդ Քուէյթի և Արաբական Ծոցի Երկիրներուն Թեմին)

Մեթր Խաչիկ Պապիկեան
(Ատենապետ Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովին)

Պրն. Երուանդ Փամպուքեան
(Անդամ Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովին)

Զոյգ պատուիրակութիւնները իրենց աշխատանքը սկսան Ուրբաթ, 8 Օգոստոս 1997-ի առաւօտեան ժամը 10.00-ին: Նախ միասնաբար ներկայացան Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի գրասենեակը, ուր Նորին Սրբութիւնը պատուիրակութիւնները ողջունելով համառօտակի ներկայացուց հանդիպումին առաջադրանքները, և տուաւ իր օրհնութիւնը: Ապա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անունով Մեթր Խաչիկ Պապիկեան հաղորդեց Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ.

Արամ Ա Կաթողիկոսի սիրոյ ջերմ ողջոյնները և պատուիրակութեանց աշխատանքին կապուած իր դրական սպասումները:

Այնուհետև պատուիրակութիւնները անցան իրենց աշխատանքին: Առաջին հերթին կազմուեցաւ Դիւանը, իբրև Ատենապետներ ունենալով Տ. Վաչէ Արքեպ. Յովսէփեանը և Մեթր Խաչիկ Պապիկեանը, որոնք փոխն ի փոխ վարեցին ժողովական նիստերը, և իբր Ատենադպիր ունենալով Տ. Զարեհ Արքեպ. Ազնաւորեանը ու Տիար Ռաֆայէլ Պապայեանը: Խօսակցութեանց Արձանագրութիւնը պահեց Տ. Աբրահամ Եպս. Մկրտչեանը:

Օրակարգը կազմելէ ետք, պատուիրակութիւններէն իւրաքանչիւրը նախ ամփոփ զեկոյց մը տուաւ իր Աթոռի գործունէութեան այն երեսներուն, որոնք կը վերաբերին երկու Աթոռներու յարաբերութեանց մէջ վերջին՝ 1988-ի հանդիպումէն ի վեր տեղի ունեցած փոփոխութեանց և համապատասխանաբար տարուած աշխատանքներուն: Ապա այդ խորքին վրայ լայնօրէն քննարկուեցաւ որդեգրուած հիմնական օրակարգը՝ "Հայ Եկեղեցւոյ միասնականութեան ամրապնդում" ընդհանուր անուան տակ, իր գլխաւոր երեք երեսներով, որոնք էին. –

ա. – Թեմերու հարցը,

բ. – Թեմերու միջև գործակցութեան անհրաժեշտութիւնը և կերպերը,

գ. – Հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւնը:

Բոլոր կէտերուն կապակցութեամբ ալ խօսակցութիւնները ընթացան միշտ եղբայրական սիրալիր մթնոլորտի մէջ. Հայ Եկեղեցւոյ ներքին միութիւնը դրական և շօշափելի կերպերով արտայայտուած տեսնելու մտահոգութենէն առաջնորդուած:

Հանդիպման աւարտին, խօսակցութիւններուն կապակցութեամբ նշելէ ետք իրենց գոհունակութիւնը, պատգամաւորութեանց անդամները փափաք յայտնեցին, որ նման հանդիպումներով խօսակցութիւնները շարունակուին, և մանաւանդ կազմուի յատուկ յանձնախումբ մը, որ ուսումնասիրէ բարեկարգութեան վերաբերեալ մտածումներն ու առաջարկները և աշխատանքային ծրագիր մը կազմէ Հայց. Եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութեան, բարոյագիտական հայեացքներուն, վարդապետական ուսուցումին և ծիսական կեանքին մէջ ապահովելու համար անհրաժեշտ վերանորոգութիւնը և միութիւնը:

Երկու պատգամաւորութեանց խօսակցութիւններուն արդիւնքները և որդեգրած բանաձևերը պիտի փոխանցուին Վեհափառ Հայրապետներուն առ ի նկատառութիւն:

| | |
|---|---|
| ԱՏԵՆԱԴՊԻՐՆԵՐ՝ | ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ՝ |
| ԶԱՐԵՀ ԵՊՍ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ | ՎԱՉԵ ԱՐՔԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆ |
| ՏԻԱՐ ՌԱՖԱՅԷԼ ՊԱՊԱՅԵԱՆ | ՄԵԹՐ ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ |

9 Օգոստոս 1997
Ս. Էջմիածին

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

## ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՆԻԿՈԼԱՅ Հ. ՔՈՉԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՏՈՒԱՊՍԷ, Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի անհուն ուրախութեամբ տեղեկացանք Հարաւային Ռուսաստանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանէն, որ Դուք լիագոյն ձեւով Ձեր մասնակցութիւնը կը բերէք Հարաւային Ռուսաստանի մեր Թեմի վարչական-կազմակերպական կեանքին, որպէս Թեմական Խորհուրդի անդամ:

Գոհունակութեամբ տեղեկացանք նաև որ սիրայօժար կամքով կառուցել տուած էք Տուապսէի շրջանի Օահումեան գիւղի եկեղեցին "Ս. ԷՋՄԻԱԾԻՆ" անուամբ, որ պիտի ծառայէ որպէս հոգևոր սնունդի աղբիւր թէ՛ Տուապսէի և թէ՛ շրջակայ գիւղերի մեր սիրեցեալ և հաւատացեալ հայ ժողովուրդի զաւակներուն համար:

Ի գնահատութիւն Ձեր եկեղեցանուէր ծառայութեանց և Ձեր եկեղեցաշինութեան բարերարական աստուածահաճոյ և ազգօգուտ գործին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը անուամբ մեր հաւատոյ Հօր՝

### *Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:*

Կ՚աղօթենք առ Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի անդամներուն շնորհէ կատարեալ և շարունակական առողջութիւն, Ձեր բարի գործոց լիագոյն յաջողութիւն և անսպառ ու անստուէր երջանկութիւն, որպէսզի շարունակէք առաւել արդիւնաւորութեամբ արժեցնել և ծաղկեցնել Ձեր եկեղեցանուէր և ազգաշէն գործը ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և ի վայելումն հայ ժողովրդեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 104

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՆԱԻՐԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ* ՈՐ Ի ԿՐԱՍՆՈԴԱՐ, Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Հարաւային Ռուսաստանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանէն Ձեր նուիրեալ գործունէութեան մասին ի սպաս Հարաւային Ռուսաստանի մեր Հայոց Թեմի սիրեցեալ և հաւատացեալ ժողովրդեան:

Մենք ուրախութիւնն ալ ունեցանք Ձեզ անձամբ ճանչնալու ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Ձեր ուխտաւորական այցելութեան առիթով:

Թեմական Խորհրդի ատենապետութեան կարևոր պաշտօնին առընթեր, Ձեր վարչական և կազմակերպչական գործունէութեան հետ միասին Դուք ունեցաք աստուածահաճոյ գաղափարն ու սէրը Կրասնոդարի Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ Եկեղեցւոյ կառուցման ծախսերը հոգալու և այդու դառնալու բարերար մեր հայ ժողովուրդի և Ս. Եկեղեցւոյ ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ի գնահատութիւն Ձեր անձնուէր գործունէութեան և բարերարութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռոյս բարձրագոյն կարգի շքանշանը անուամբ մեր հաւատոյ Հօր՝

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի անդամներուն պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի վայելէք Ձեր ազգօգուտ սպասաւորութեան և եկեղեցաշէն բարերարութեան ազնիւ բարիքները և նոր ոյժ ու կորով ստանաք շարունակելու Ձեր եկեղեցանուէր և ազգաշէն գործունէութիւնը ի փառս Աստուծոյ և ի շինութիւն և ի պայծառութիւն մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 25 Օգոստոսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 103

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ԻՒԹԻՒՃԵԱՆԻ* ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ՅԱՒՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակութիւն զգացինք տեղեկանալով Աւստրիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն Ձեր նուիրեալ աշխատանքի մասին Աւստրիոյ հայ համայնքի մէջ: Մենք ալ ուրախութիւնն անձամբ վկայ ըլլալու Ձեր անձնուէր ոգիին Մեր Հայրապետական անդրանիկ այցելութեան ընթացքին յԱւստրիա անցնող Յունիսին ունեցանք:

Ուրախութեամբ կը ողջունենք Ձեզ և բարձրօրէն կը գնահատենք Ձեր զոհողութիւնը ու քաջութիւնը, որով Ձեր երիտասարդ տարիքին դուք ստանձնեցիք Աւստրիոյ Հայ Եկեղեցական Համայնքի Վարչութեան ատենապետի պաշտօնը, զոր կը շարունակէք կատարել պատասխանատուութեան բարձր զգացումով, առանց խնայելու Ձեր ջանքն ու աշխատանքը:

Իւթիւճեան ընտանիքը, յատկապէս լուսահոգի Եղիշէ Ծ. Վրդ. Իւթիւճեանը, կարևորագոյն դեր խաղացած են Աւստրիոյ մեր Ս. Եկեղեցւոյ կեանքին մէջ: Մենք ուրախ ենք որ Դուք կը շարունակէք այդ աւանդը:

Ի գնահատութիւն Ձեր եռանդուն գործունէութեան և բեղուն աշխատանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզ և Իւթիւճեան ընտանիքի բոլոր անդամներուն, ինչպէս նաև Աւստրիոյ Հայ Եկեղեցական Համայնքի Վարչութեան անդամներուն շնորհէ երկար կեանք և բեղմնալից ծառայութիւն ի վայելումն Աւստրիոյ մեր հաւատացեալ ժողովրդեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 11 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 101

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԱՍՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆԻ* ՈՐ յՈՒՍՏՐ. Ի ՄԷՍՍԷՉԻՒՍԷԹ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մեզի համար անհուն ուրախութիւն եղաւ տեղեկանալ Ամերիկայի Արևելեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպ. Պարսամեանէն այն բազմօգուտ գործերուն մասին զորս Դուք ընծայած էք, և կը շարունակէք ընծայել, Ուստրի Ս. Փրկիչ եկեղեցւոյ մեր պատուական հայ համայնքին և առհասարակ մեր տիրախնամ թեմին, Ս. Ներսէս ընծայարանին և թեմական գործունէութեան այլ բնագաւառներուն: Մենք մեծապէս գոհ մնացինք նաև Ձեր ծառայութիւններուն համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան, Ամերիկայի Հայկական Համագումարին և այլ համայնքային կազմակերպութիւններուն:

Այս բոլորը կը նկատենք կենդանի և պերճախօս արտայայտութիւնը այն անհուն սիրոյն և նուիրումին, զոր կը տածէք հանդէպ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և անոր հոգևոր կրօնական, կրթական ու ազգային փրկաւէտ առաքելութեան:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հօր փափաքին, ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմարդիւն գործունէութեանց, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք յանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ կեանք և լիագոյն երջանկութիւն Ձեր կեանքի ամբողջ տևողութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 23 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 102

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՎԻԿՏՈՐ Զ. ՅԱԿՈԲԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՊԻԱՏԻԳՈՐՍԿ, Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հոգեկան հրճուանքով տեղեկացանք Հարաւային Ռուսաստանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանէն Ձեր երկար տարիներու այն հետեւողական և օգտաշատ ծառայութիւններուն մասին, զորս հաւատարմօրէն և անձնուիրաբար կը մատուցէք Հարաւային Ռուսաստանի մեր սիրեցեալ ժողովուրդին, թէ՛ որպէս Պիատիգորսկի եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Գործադիր անդամ և թէ՛ մանաւանդ հայ Գիրի և մամուլի սպասաւոր, Համալսարանի դասախօս և պատմաբան:

Ձեր պատմական-բանասիրական ուսումնասիրութիւնները վստահաբար նոր լոյս կը սփռեն Հարաւային Ռուսաստանի մեր հայ ժողովուրդի պատմութեան ճշգրիտ և ամբողջական հասկացման համար:

Ի գնահատութիւն Ձեր գրական, մշակութային և հասարակական սպասաւորութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի շնորհէ երկար և քաջառողջ կեանք և Ձեր գրչին բեղուն արդիւնաւորութիւն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 23 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 105

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ Գ. ԿՈՒԿՈՒԵԱՆԻՆ* ՈՐ Ի ԿՐԱՍՆՈԴԱՐ, Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Հարաւային Ռուսաստանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանէն, որ Դուք անձնուիրաբար կը ծառայէք Կրասնոդարի մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ համայնքին թէ՛ եկեղեցական, թէ՛ հրապարակագրական և թէ՛ ակադեմական, մտաւորական գործունէութեանց մակարդակներու վրայ:

Անշահախնդիր և անխոնջ աշխատանքով Դուք լծուած էք նաև հայ կրթական-դաստիարակչական գործին, յատկապէս հայ երիտասարդ սերունդին համալսարանական պատրաստութեան այնքան կենսական առաքելութեան:

Ի գնահատութիւն Ձեր բեղուն սպասաւորութեան հայ Գիրին և Դպրութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Հայց. Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի յարաճուն արդիւնաւորութեամբ Ձեր նպաստը բերէք Հարաւային Ռուսաստանի Թեմի՝ յատկապէս Կրասնոդարի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 23 Օգոստոսի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 107

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ* ՈՐ Ի ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի անհուն ուրախութեամբ տեղեկացանք Հարաւային Ռուսաստանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանէն, որ Դուք Ձեր անձնուէր ծառայութիւնները կը մատուցէք Վլադիկավկազի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն Ծխական Խորհուրդի որպէս ծրաջան ատենապետ:

Քաջատեղեակ դարձանք նաև, որ իբրև արուեստագէտ նկարիչ Դուք անսահման սիրով նուիրուած էք նաև սրբապատկեր պատրաստելու և նորոգելու այնքան գեղեցիկ և օգտաշատ գործին, մեծապէս սատար հանդիսանալով հայ հաւատացեալներու հոգևոր կեանքին և կրօնական բարեպաշտութեան զարգացմանը:

Ի գնահատութիւն Ձեր անշահախնդիր և հետևողական ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի անդամներուն շնորհէ քաջառողջ կեանք, Ձեր արուեստի ծաղկում և բարգաւաճում ի սպաս և ի վայելումն Հարաւային Ռուսաստանի մեր տիրախնամ Թեմի հաւատացեալ ժողովրդեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 23 Օգոստոսի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 106

## ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ
## ԲԱՐԵԿԱՄԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
## *ԴՈԿՏՈՐ ՄԻՀՐԱՆ ԱՂՊԱՊԵԱՆԻՆ*
## ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Երկար տարիներէ ի վեր ուրախութիւնն ենք ունեցած անձամբ ճանչնալու Ձեզ և Ձեր մէջ տեսնելու իսկական բարեկամ մը, քրիստոնէական հաւատքի, գիտութեան բարձրագոյն աստիճանի, համալսարանական կրթութեան և հայութեան առողջ զգացումի և ըմբռնումի տէր և նուիրեալ անձնաւորութիւն մը:

Մեծապէս ուրախացանք Ամերիկայի Արևմտեան Թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպ. Յովսէփեանէն իմանալով որ Լոս Անճելոսի մէջ արժանավայել շուքով պիտի նշուի Ձեր բազմամեայ վաստակը այնքան ազնուօրէն և անձնուիրաբար ընծայուած Միացեալ Նահանգներուն, Հայ ժողովուրդին և Մայր Հայաստանին:

Ամերիկայի մէջ Ձեր ձեռք բերած գիտական հմտութիւնը առատօրէն բաշխեցիք Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանի միջոցաւ բազմահարիւր երիտասարդ ուսանողներու: Հաւատացիք երիտասարդ սերունդի առողջ դաստիարակութեան և ջանք չխնայեցիք Ձեր բարիքը ընծայելու անոր զարգացման ամենուրեք:

Վերջին տարիներուն Ձեր գործունէութեան ծիրին մէջ կեդրոնական տեղ տուիք Ձեր Մայր Հայրենիքին՝ մեր բոլորի բնօրրան Հայաստանին: Կարևոր և որոշադրիչ դեր ունեցաք Երևանի մէջ Ամերիկեան Համալսարանի հիմնադրութեան և կազմակերպման մէջ: Ձեր անունը ոսկի տառերով պիտի արձանագրուի անոր պատմութեան մէջ:

Եղաք նուիրեալ և ղեկավար անդամներէն մէկը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որուն Կեդրոնական Վարչութեան մէջ կը կատարէք երախտարժան գործ: Եղաք անդամ ուրիշ համայնքային հասարակական կազմակերպութիւններու: Այս բոլորի մէջէն Դուք պերճախօս վկայութիւններով արտայայտեցիք Ձեր մասնակցութիւնը Ամերիկահայ և առհասարակ հայկական կեանքին, թէ՛ Սփիւռքի և թէ՛ Մայր Հայաստանի մէջ:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմաբեղուն ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ–Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր ազնիւ և նոյնքան նուիրեալ Տիկնոջ՝ Էլիզաբէթին, Ձեր զաւակներուն, և ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջութիւն «ընդ երկայն աւուրս», որպէսզի յարաճուն արդիւնաւորութեամբ առաւել ևս արժեցնէք և ճոխացնէք Ձեր սպասը Միացեալ Նահանգներուն և Հայ Ժողովուրդին ու Մայր Հայրենիքին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16 Սեպտեմբերի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 107

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
## ԱՌ ԳԵՐԱՇՆՈՐՀ
## *Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆ,*
## ԱՏԵՆԱԴՊԻՐ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
## ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Սիրելի Սրբազան,

Սրտի գոհունակութեամբ իմացանք Կ. Պոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճեանէն այն նուիրեալ և հետևողական աշխատանքին համար զոր անձամբ կատարեցիք Մուսա Տաղի Վագըֆ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառուցման համար:

Քաջատեղեակ ենք այն բոլոր անձնական ջանքերուն զորս ի գործ դրիք ի կատար ածելու պատմական նշանակութիւն ունեցող այս սուրբ գործը, որուն պտուղն եղաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառուցումը Վագըֆի մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովուրդին համար: Վստահ ենք նորակառոյց եկեղեցին պիտի դառնայ սիրտը Վագըֆի մեր հաւատացեալներու հոգևոր կեանքին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ սրբարար սնունդը ջամբելու համար բոլորին անխտիր:

Հայրապետական Մեր գնահատանքը կը յայտնենք նաև ճարտարապետ պրն. Լևոն Էրանոսլուին, գլխաւոր բարերար պրն. Պետրոս Շիրինօղլուին և բոլոր նուիրատուներուն Վագըֆ գիւղէն կամ այլ շրջաններէն:

Մեր աղօթքն ու մաղթանքն է որ Ս. Աստուածածին եկեղեցւոյ օծումը ձեռամբ Պատրիարք Հօր դառնայ հոգևոր և ազգային վերանորոգութեան մի սքանչելի առիթ և շարժում Վագըֆի մեր ժողովուրդի կեանքի մէջ և առհասարակ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան խնամատարութիւնը վայելող ամբողջ ժողովուրդի կեանքին մէջ:

Հայրական ամենաջերմ սիրով կ'ողջունենք նաև բազմահարիւր ուխտաւորները, որոնք Ստամպուլէն, Հայաստանէն և այլ վայրերէ յատուկ կերպով եկած են Վագըֆ իրենց հոգևոր զօրակցութիւնը յայտնելու Մուսա Տաղի մէջ ապրող մեր ժողովուրդին: Թող Բարձրեալն Աստուած ընդունի իրենց ուխտը և զօրացնի իրենց մէջ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ իրենց պատկանելիութեան անխախտելի և երջանկաբեր ոգին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ Օգոստոսի 10-ին Մենք յատուկ աղօթք պիտի կատարենք հոգևոր հաղորդութեամբ միանալու Վագըֆի նորակառոյց եկեղեցւոյ մէջ մատուցուելիք անդրանիկ պատարագին մասնակցող հաւատացեալներու աղօթքին և հոգեկան ապրումներուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 6 Օգոստոս 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 67

# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՄՈՒՍԱ ՏԱՂԻ ՎԱԳԸՖ ԳԻՒՂԻ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Սիրելի զաւակունք Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և հաւատարիմ հաւատացեալներ Վագըֆ գիւղի,

Հայրական քաղցրագոյն սիրով կ'ողջունենք Ձեզ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն երբ այս օրերուն կ'ապրիք հոգևոր երջանկագոյն պահեր Ձեր գիւղի նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ օծման առիթով:

Բարձրօրէն կը գնահատենք Ձեր մէջ քրիստոնէական սուրբ հաւատքին վառ կենդանութիւնը և մեր մայրենի Առաքելական Եկեղեցւոյ աւանդութեան առողջ պահպանութիւնը:

Մենք շատ մօտէն կը ճանչնանք Մուսա Տաղի մեր սիրեցեալ ժողովուրդի աւանդապահ ոգին և տոկուն, չարքաշ նկարագիրը:

Ապրի՛ք, հազար ապրիք:

Ուրախ ենք որ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան անմիջական և հոգածու հովանին կը վայելէք: Նորին Ամենապատուութիւն Գարեգին Պատրիարք Գազանճեանի և Կրօնական Ժողովոյ Ատենապետ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանի խնամատար և նուիրեալ հոգածութիւնը ձեր նկատմամբ թող ըլլայ ձեզի համար քաջալերութեան մղիչ ույժ ձեր գիւղի բոլոր հաւատացեալներու կեանքին մէջ:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ օծումը թող դառնայ ձեր հոգիներուն համար Աստուծոյ շնորհքին հեղում, որպէսզի վերանորոգեալ հաւատքով ապրիք ձեր մայրենի եկեղեցւոյ հոգևոր հարազատ սնունդովը Աստծոյ փառքին, ձեր գիւղի շէնութեան և ձեր կեանքի բարգաւաճման համար:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 6 Օգոստոս 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 68

# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
# *ԱՌ ԱԼՊԵՐԹ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳ ԽԱՉԷՄԱՐԵԱՆԻ*
# ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, յԱՒՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Աւստրիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն, որ Դուք երկար տարիներ անշահախնդիր ոգով և ամբողջական ու անվերապահ նուիրումով Ձեր մասնակցութիւնը ընծայած էք Աւստրիոյ համայնքի կեանքին՝ յատկապէս Ս. Հռիփսիմէ Եկեղեցիին: Ձեր քրիստոնէական հաւատքի և երաժշտական տաղանդի բերումով Դուք միշտ հաւատարմօրէն Ձեր սպասը դրիք եկեղեցական հոգևոր երգեցողութեան բարւոք կատարման համար ի հոգևոր վայելումն մեր հաւատացեալ ժողովրդեան:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու հետևողական և հաւատարիմ ծառայութեան, ուրախութիւնն ունինք Ձեզի շնորհելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն սոյն

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ
## ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ Ձեզի շնորհէ երկար կեանք և առաւել բեղուն գործունէութիւն ի վայելումն Աւստրիոյ մեր հաւատացեալ ժողովրդեան, և անսպառ երջանկութիւն Ձեր ամբողջ կեանքի ընթացքին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 11 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 69

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
## *ԱՌ ՊՐՆ. ԳԷՈՐԳ ԱՆՏՈՆԵԱՆԻ*
## ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, յԱՒՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Աւստրիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանէն, որ Դուք բազում տարիներէ ի վեր անսակարկ նուիրումով և անվերապահ ոգիով Ձեր ծառայութիւնը կ'ընծայէք Աւստրիոյ հայ համայնքի թէ՛ Եկեղեցւոյ Վարչութեան և թէ՛ մանաւանդ որպէս տնօրէն "*Յովհաննէս Շիրազ*" դպրոցին: Մենք ալ անձամբ ներկայ եղանք այն նուիրեալ աշխատանքին որ կը կատարէք Վիեննայի հայ ժողովուրդի նոր սերունդի մարդկային և ազգային առողջ դաստիարակութեան գործին համար:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմարժէք ծառայութեանց թէ՛ ազգային-եկեղեցական և թէ՛ կրթական բնագաւառի մէջ, Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն սոյն

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզի շնորհէ քաջառողջ կեանք և երկար տարիներ որպէսզի շարունակէք Ձեր օգտաշատ ծառայութիւնը ի սպաս մեր ժողովուրդի հայապահպանման և նոր սերունդի մաքուր և առողջ դաստիարակութեան նուիրական գործին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 11 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 70

# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՀՈՒԹԵԱՆ
# ԱՌ
# ՆԵՐՍԷՍԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
# «ԵՐՈՒԱՆԴ ԳԸՍԱՃԸՔԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ
# ՈՐ Ի ՄՈՆԹԷՎԻՏԷՕ, ՅՈՒՐՈՒԿՈՒԱՅ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ուրուկուայի Հայոց Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յակոբ Եպիսկոպոս Գըլըճեանէն որ այս տարի արժանաւայել շուքով պիտի նշէք ձեր կրթական հաստատութեան 25-ամեակը:

Մեզի համար հոգեկան ուրախութիւն է անդրադառնալ որ 25 տարիներէ ի վեր Ս. Ներսէս Շնորհալի Եկեղեցւոյ հովանիին տակ կրթական մեղուաբոյնի պէս կը գործէ Ներսէսեան Կրթական Հաստատութեան Վարժարանը, որ կը կրէ անունը Ազգային բարերար ԵՐՈՒԱՆԴ ԳԸՍԱԺԸՔԵԱՆԻ:

Կ'երեւակայենք թէ որքա՜ն հայ պատանիներ և պատանուհիներ շրջանաւարտ ըլլալով ձեր վարժարանէն հարստացած են հոգւոր, բարոյական և ազգային հայկական գիտակցութեամբ և արժէքներով: Հայակերտումի իսկական օճախ մը՝ Ուրուկուայի օրհնեալ հողին վրայ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կ'օրհնենք յիշատակը բոլոր բարերարներուն, նուիրատուներուն և այն նուիրեալ անձերուն, որոնք գործած են այս նուիրական հաստատութեան համար և այժմ երկինքէն կը դիտեն իրենց գործին շարունակումն ու ծաղկումը:

Բարձրօրէն կը գնահատենք ներկայիս գործող Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը և Հոգաբարձութիւնը, աշակերտութիւնն ու ծնողները, որոնք կոչուած են նոր իրագործումներով և աշխոյժ աշխատանքով արժեցնելու 25-ամեակը, վերանորոգեալ կամքով և նուիրման ոգիով:

Մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն ձեզի կ'առաքենք Մեր հայրական սիրոյ ջերմ խօսքը և Հայրապետական սրտագին օրհնութիւնները կոչ ընելով ձեր բոլորին կենդանի պահել Ս. Լուսաւորչի հաւատքը և Մ. Մեսրոպի գիրը և սէրը հանդէպ մեր Առաքելական Ս. Եկեղեցիին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և վերանկախացեալ մեր հայրենիքին և հայ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 11 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/71

# ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
# ԱՌ
# ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ
# ՈՐ Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ՅԱՐԺԱՆԹԻՆ

Սիրեցեալ և պատուական անդամք Համագումարի,

Սրտի անհուն գոհունակութեամբ և ուրախութեան վառ զգացումով ստացանք Ձեր 28 Յուլիսի (1997) նամակը, որով կը յայտնէք երջանկաբեր լուրը Արժանթինի Հայկական Ազգային Համագումարի կազմութեան, նպատակ ունենալով անվերապահօրէն զօրավիգ կանգնիլ Ազատ ու անկախ Հայրենիքին:

Քաջածանօթ ըլլալով Արժանթինի մեր հայ ժողովուրդին, յատկապէս Մեր անդրանիկ Հովուապետական այցելութենէն ետք (Օգոստոս 1996), Մենք ամենաբարձր գնահատանքով կ'ողջունենք Համագումարի կազմութիւնը և անոր մէջ կը տեսնենք ճշմարիտ, գործնապաշտ հայրենասիրութեան շօշափելի փաստը: Կը յիշէք որ Մեր այցելութեան ընթացքին եկեղեցիներու, սրահներու, վարժարաններու բեմերէն Մեր հրապարակային պատգամներու ընթացքին մէկէ աւելի անգամներ ըսինք որ հայրենասիրութեան իսկական անունը հայրենաշինութիւն է: Հայրենիքը սէրէն արտահոսող քրտինքով միայն կրնայ վերակառուցուիլ որպէս ազատ, անկախ և ժողովրդավար պետութիւն և ազգ:

Ահա, աւելի քան երկու տարիներէ ի վեր որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց, այստեղ մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի մէջ եկեղեցական պատասխանատուութեան այս ծայրագոյն և ծանրագոյն և սուրբ պարտաւորութեան մէջէն Մեր կեանքն ու գործը միաջաղախած ենք մեր մայր հայրենիքի և ողջ հայ ժողովուրդի կեանքին հետ: Անձամբ կը բաժնենք թէ՛ ցաւը և թէ՛ ուրախութիւնը մեր հայրենաբնակ ժողովուրդին և կը բերենք Մեր ամբողջական և անվերապահ աջակցութիւնը մեր Հանրապետութեան ամրացման և զարգացման նուիրական գործին: Մեր կեանքի փորձառութիւնը Մեզ բերած է այն անխախտելի և խորագոյն համոզման, որ այսօր, Հայաստանի, Արցախի և շրջակայ երկիրներու ներկայ քաղաքական դրուածքին և կացութեան մէջ մեր ամենամեծ և փրկարար ոյժը մեր համայն ազգի իրական, ճշմարիտ և գործնական միութեան մէջն է: Ոչ ոսկիի և ոչ ալ արծաթի և ոչ ալ քարիւղի հանք ունինք: Այժմ մե՛նք ենք մեր ոյժը մեր համահայկական ամբողջութեամբ և միասնական գործունէութեամբ:

Ապրի՛ք, հազար ապրիք, որ Դուք Արժանթինի մէջ օրինակելի վերաբերումով ձեր անսակարկ և անվերապահ զօրակցութիւնը կը յայտնէք Արժանթինի պետութեան ու ժողովուրդին և Հայաստանի պետութեան ու հայ ժողովուրդին փոխյարաբերութեանց զարգացման: Կը գնահատենք ձեր լիագոյն մասնակցութիւնը հայոց պետութեան Դեսպանութեան և "Հայաստան" Համահայկական Հիմնադրամի բարւոք և ատոք գործունէութեան:

Մեր ազգի՝ որպէս քրիստոնէական ազգի՝ ծննդավայրէն՝ մեր բոլորի Մայր

Աթոռ Ս. Էջմիածնէն բի՛ւր օրհնութիւն ձեզ: Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ ձեզի շնորհէ ոյժ և կորով, քաջութիւն և իմաստութիւն, որպէսզի առատ պտղաբերութեամբ պսակուին ձեր բոլոր գործերը և լիագոյն արդիւնաբերութեամբ արգասաւորուին ձեր նուիրեալ ջանքերը, բերելով *«ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»*, ըստ Քրիստոսի Ս. Աւետարանի խօսքին (ՄԱՐԿ.Դ. 20) :

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 11 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 72

# ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ Ի ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ԼԱՐՑԱԽ,

18 ՕԳՈՍՏՈՍ-1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1997

**ԳԵՐԱՇՆՈՐՀ**
**Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ**
**ՎԱՐԻՉ-ՏՆՕՐԷՆ**

Սիրելի Սրբազան և սիրեցեալ մասնակցողք,

Հայրական քաղցրագոյն սիրով և Հայրապետական ամենաջերմ ողջունիւ կ'ուղղենք ձեզի Մեր այս խօսքը երբ դուք համախմբուած, առաջին անգամ ըլլալով, պատմական և պատուական Արցախի հողին վրայ, ձեր տարեկան համախմբումը կը կատարէք Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ:

Մեր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Մայր Աթոռէն, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Հոգևոր Կեդրոն Ս. Էջմիածնէն բի՛ւր օրհնութիւն ձեզ բոլորիդ: Թող Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքին լոյսը՝ լոյսի լուսաճաճանչ ՝ ու փառասանման այս խորանէն առատօրէն լեցուի ձեր սիրտերուն և հոգիներուն մէջ: Քրիստոսի լոյսին այս հայկեան ոսպնեակէն թող պայծառափայլ շողայ ան ձեր կեանքերուն մէջ:

Եկած էք Սուրիայէն, Լիբանանէն, Կիպրոսէն, Քուէյթէն, Յունաստանէն և միացած էք այստեղ ձեր մայր հայրենիքի՝ Հայաստանի և հերոսական Արցախի ձեր եղբայրներուն և քոյրերուն միասնաբար խորհրդակցելու ձեր նուիրական գործին՝ հայ մատղաշ սերունդի կրօնական առողջ դաստիարակութեան զարգացման մասին: Աստուածաշնչական ընթերցումներու և մեկնաբանութիւններու, դասախօսական նյութերու և խորհրդակցական հանդիպումներու մէջէն պիտի հարստանաք, պիտի լիցքաւորուիք առաւել ևս հարստացնելու և լիցքաւորելու համար ձեր կրթա-դաստիարակչական աշխատանքը: Քրիստոսի Աւետարանի ուսուցումները և մեր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ աւանդութեան հոգևոր գանձարանի կեանք-գանձերը թող պայծառակերպին ձեզ, որպէսզի անոնցմով կարենաք հոգևորապէս սնուցանել և կենսաւորել մեր դեռատի սերունդի զաւակները:

Բացառիկ պատեհութիւն ընկատեցէք ձեր այս համախմբումը Արցախի մէջ, որովհետև այստեղ Քրիստոս ու իր հայկական այգին՝ Հայոց Եկեղեցին կը խօսին ձեզի ու կը պատմեն յաղթանողական, աննահանջ և անպարտելի հաւատքի մասին, ապրուած, քրտինքով և արիւնով վկայուած այն հաւատքին, զոր «ո՛չ հրեշտակք երկնից և ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր, ո՛չ ջուր և ո՛չ դառն հարուածք» կրցան արմատախիլ ընել մեր ժողովուրդի հոգիէն ու կեանքէն: Լսեցէ՛ք անբարբառ ձայները Ղուշիի և Ամարասի, Գանձասարի և Դադի վանքերուն, որոնք «անլռելի զանգակատան» նման կը հնչեն այսօր, ինչպէս միշտ հնչեցին պատմութեան մէջ և ինչպէս միշտ պիտի հնչեն ապագայի անպարագրելի հորիզոններուն վրայ...:

Դուք պիտի ըլլաք մայր հայրենիքին մէջ: Արժէցուցէք ձեր կարճատեւ այցելութիւնը: Այստեղ, Հայաստանի հողին վրայ, հաւատքի մշտազանգ եւ յարաշունչ ձայները այնքան են բազմահունչ եւ բազմաձայն որ անկարելի է ինծի համար անուններ ջոկել հազարաւոր վկայախօս կոչնակներէն... :

Այսօր մեր ժողովուրդը ամենուրեք, ի Հայաստան, յԱրցախ եւ յարտասահման, առօրեայ հացին պէս կարիքն ունի քրիստոնէական հաւատքի զօրութեան եւ ներգործութեան, այլապէս տժգունելու վտանգին է ենթակայ մեր հասարակաց կեանքին մէջ: Նիւթապաշտութեան, սպառողական ընկերութիւններու յատուկ հաճոյապաշտութեան տիրապետութեան ենթարկուած արդի կեանքին մէջ, հոգեւոր արժէքները այնպիսի կարեւորութիւն են զգեցած ինչպէս արեւէն երաշտացած դաշտերը կարօտն ունին կենդանարար ջուրին... : Մեր Եկեղեցին չէ միայն հպարտութիւնը մեր, այլ, ու մանաւանդ պարտաւորութի՛ւնը մեր: Մեր Եկեղեցին սննդատու աղբիւրն է մեր ոգեղինութեան, մեր մարդկայնութեան եւ մեր հայ ազգային ինքնութեան:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խօսքը թող դառնայ ձեր բոլորին՝ որպէս Կիրակնօրեայ Վարժարաններու ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու՝ կեանքի նշանաբանը եւ գործի մղիչ զսպանակը. « ՆԱԽԱՆՁ ՏԱՆ ՔՈ՛ ԿԵՐԻՑԷ ԶԻՍ» :

Մեր հայրաշունչ աղօթքն ու մաղթանքն է, որ երբ վերադառնաք Արցախէն ու Հայաստանէն՝ ըլլաք այլակերպեալ անձեր: Որովհետեւ Արցախն ու Հայաստանը Թաբօր լեռ են բոլոր անոնց համար, որոնք լոյսին նայելու քաջութիւնն ունին իրենց սիրտերուն մէջ, լոյսէն այցելուելու կարողութիւնն ու իմաստութիւնը ունին իրենց միտքերուն մէջ եւ լոյսով պայծառակերպուելու պատրաստակամութիւնն ունին իրենց կամքերուն մէջ:

Ի խորոց սրտի կ'աղօթենք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որ Ամենակարող եւ Ամենաբարի Աստուած յաջողութեամբ պսակէ ձեր այս առաջին համագումարը Արցախին մէջ եւ զայն վերածէ ներքին հոգեւոր ու ազգային վերածնութեան եւ վերաբիւրեղացման հոգեւոր հոսանքի մը, որ շարժէ ձեզ եւ ուղղէ ձեր գործը գալիք տարիներուն այնպիսի ուժգնութեամբ, հաւատարմութեամբ եւ հետեւողականութեամբ, որ ձեզի վստահուած հայ մանուկները կարենան ըսել, Հայաստանէն ու Արցախէն ձեր վերադարձին.

-Ա՜հ, որքա՛ն են գեղեցկացած մեր ուսուցիչներն ու ուսուցչուհիները... :

Հայրական օրհնութեամբ,

Աղօթարար՝

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

18 Օգոստոս 1997
Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

# ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ "ԶԱՐԹՕՆՔ" ՕՐԱԹԵՐԹԻՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ՈՐ Ի ՊԷՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Ցարգարժան խմբագրական կազմ,

Հոգեկան գոհունակութեան և սրտի ուրախութեան զգացումներով ողջունեցինք Ձեր նամակը, որով կը յայտնէիք թէ այս տարի արժանավայել շուքով պիտի նշէք ԶԱՐԹՕՆՔ օրաթերթի վաթսուն տարիներու բեղմնալից վաստակը՝ ի սպաս Հայ Գիրին, Հայ Մամուլին և Հայ ընթերցող հասարակութեան:

Մեր աքսորի/աբեղայութեան օրերէն ասդին, շատ մօտէն հետևած ենք ԶԱՐԹՕՆՔ-ի յարաչան և բեղմնալից ծառայութեանց, զորս ան յարատևողական հաւատարմութեամբ ընծայեց մեր լիբանանահայ ժողովուրդի հասարակական կեանքին, ամենապարզ խաւերէն սկսեալ մինչև ազգային-եկեղեցական, մտաւորական և գեղարուեստասէր շրջանակները, ազգային-քաղաքական մարզէն սկսեալ մինչև կրթական, գրական, գիտական, ընկերային և մարզական բնագաւառները:

Միտքով կ'երևակայենք այժմ թէ քանի՜-քանի՜ տասնեակ հայ մտաւորականներ, գրագէտներ, քաղաքական գործիչներ, արուեստագէտներ իրենց հոգեկան ապրումները, գաղափարական ըմբռնումները, լիբանանեան, միջազգային և հայ ազգային կեանքի մասին վերլուծական հայեացքները ԶԱՐԹՕՆՔ-ի էջերէն մատուցեցին իրենց ժողովուրդին: Քանի՜-քանի՜ տասնեակներով նոր գրողներ, հրապարակագիրներ իրենց գրական սկզբնական փորձերը կատարեցին և կազմաւորուեցան ու հասունացան ԶԱՐԹՕՆՔ-ի սիւնակներով:

ԶԱՐԹՕՆՔ-ի ծառայութեան այլազան բնագաւառներուն մէջէն ամենէն կարևորներէն և յատկանշականօրէն կը նկատենք այն մէկը, որուն ԶԱՐԹՕՆՔ իր վաթսուն տարիներու ընթացքին մեծ արժէք ընծայեց: Այդ՝ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին է, որուն միութեան զօրացման, միասնական առաքելութեան ջատագովը հանդիսացաւ ան, միշտ ճանչնալով Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընդհանրականութեան և գերակայութեան դիրքն ու հանգամանքը որպէս արտայայտիչը Հայ Եկեղեցւոյ միութեան և ամբողջականութեան: ԶԱՐԹՕՆՔ-ի 60 տարիներու բազմահազար էջերուն լայն տեղ ունեցաւ Հայոց Եկեղեցին իր լուսաւոր և ստուերոտ կողմերով, բայց միշտ սիրոյ և նախանձախնդրութեան զգացումով և մօտեցումով զսպանակուած և բնորոշուած:

ԶԱՐԹՕՆՔ եղաւ նաև Հայրենիքի ընդհանրութեան գաղափարին շեփորողը և մեր վերանկախացեալ Նոր Հանրապետութեան զօրավիգ կանգնողը:

Վաթսունամեակի այս պայծառ հանգրուանին, Մենք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կ'օրհնենք յիշատակը բոլոր այն խմբագիրներուն, վարչական պատասխանատուներուն, աշխատակիցներուն, որոնք իրենց լայն և անձնուէր բաժինը բերին ԶԱՐԹՕՆՔ-ի շարունակական ի լոյս ընծայման՝ ի սպաս հայ ժողովուրդին, ի կենդանի պահպանութիւն հայոց լեզուին, ի ջատագովումն Հայց. Առաքելական Եկեղեցիին, ի պանծացումն հայկական մշակոյթին և ի բարւոք և ատոք ծառայութիւն հայակերտումի նուիրական գործին:

Բարձրօրէն կը գնահատենք ներկայիս ԶԱՐԹՕՆՔ-ի պատասխանատու

բոլոր հայ նուիրեալները՝ խմբագիր, վարչական գործավար և աշխատակիցներ. թղթակիցներ, հրապարակագիրներ: Շարունակեցէք 60-ամեայ վաստակը և ճոխացուցէք զայն: Վաթսունամեայ հասուն տարիքէն քաղեցէք նոր ույժ, նոր կորով, յարատևութեան ոգի և նուիրումի ույժ: Այդ է վաթսունամեակի պատգամը:

Մեր վերջին խօսքը կը հասցէագրենք ընթերցողներուն: Օրաթերթին բուն սնուցիչը ընթերցողն է: Մառին պտուղն ի՞նչ կ'արժէ երբ պտուղին համը ճաշակող չկայ: Եւ որքան ճաշակող ըլլայ՝ այնքան մշակողը ծառը առողջ ու պտղալից կ'ընծայէ: Կարդա՛լ...: Ի՞նչ մեծ բարիք է կարդացողին համար: Հայ գիրը հայ մարդով կը կենդանանայ և կ'արժևորուի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բի՛ւր օրհնութիւն ձեզ՝ ԶԱՐԹՕՆՔ-ի հաւատարիմ սպասաւորներ: Թող Լուսաւորչի սուրբ հաւատքը ույժ ներշնչէ ձեզի, նորոգէ ձեր կամքն ու նուիրումը և լուսազարդէ ձեր ճանապարհը դէպի ապագայ:

Հայրական սիրոյ ողջունիւ և օրհնութեամբ,

Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18 Օգոստոս 1997

ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

## ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԺԱՆ ԹՈՐՈՄԱՆԵԱՆԻ* ՈՐ յՈՒՍՏՐ, Ի ՄԷՍՍԷՉԻՒՍԷԹ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հոգեկան գոհունակութեան զգացումով տեղեկացանք Ամերիկայի Արևելեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպ. Պարսամեանէն Ձեր բազում տարիներու ազգային-եկեղեցական ծառայութեանց մասին, զոր այնքան յարատևողական և հաւատարիմ ոգիով մատուցած էք Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ համայնքին և ընդհանրապէս Ամերիկահայոց տիրախնամ թեմի առաքելութեան: Եղած էք հաւատաւոր և նուիրեալ անդամ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին և անսակարկ սպասաւորութեամբ և համեստութեան հոգիով Ձեր սատարը ընծայած էք մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ հոգևոր, վարչական և ազգային կեանքին:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի փափաքին, և ի գնահատութիւն Ձեր բազմամեայ ծառայութեանց՝ կը շնորհենք Ձեզի մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Մեր

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզի և Ձեր ընտանիքի անդամներուն պարգևէ քաջառողջ և երկար տարիներ, որպէսզի մէկ կողմէ վայելէք Ձեր գոհողութեանց բարի արդիւնքները և միւս կողմէ շարունակէք նորոգեալ կորովով Ձեր սպասը ընծայել մեր Ս. Եկեղեցիին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 25 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 74

## ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ԵՒ ԴՍՏԵՐ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
## *ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԷՈՐԳ ԵՒ ՍԻՐՎԱՐԴ ՅՈՎՆԱՆԵԱՆՆԵՐԻ*
## ՈՐ Ի ՆԻՒ ՃԸՐՋԻ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Բազում տարիներէ ի վեր Ձեզ անձամբ ճանչնալու և առաջին իսկ օրէն Ձեր մէջ իսկական բարեկամներ գտնելու ուրախութիւնն ենք ունեցած: Մօտէն հետևած ենք Ձեր կեանքին և գործունէութեան յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգներում և մեր բոլորի բնօրրան՝ Մայր Հայրենիքին, Հայաստանի մէջ:

Ձեր բարերարութեան ոսկի շղթան երկար է և պերճախօս: Հիւսիսային Ամերիկայի Արևելեան մեր Տիրախնամ Թեմին ընծայեցիք բազմարժէք ծառայութիւններ թէ՛ Ձեր իմաստուն խորհուրդներով և թէ՛ բարերարութեան ազնուագոյն արարքներով Էլպըրոնի մէջ Ս. Ստեփանոս եկեղեցիի կառուցմամբ պսակաւորուած:

Արևելեան Թեմի Առաջնորդ Սրբազանին և Թեմական Վարչութեան հետ համախորհուրդ ու ներդաշնակ գործակցութեամբ Հայ Օգնութեան Ֆոնտին Ձեր բերած առաջնորդողական մասնակցութեամբ վերջին տասնամեակին, Լենինականի երկրաշարժի աղետէն և Հայաստանի Անկախ Հանրապետութեան հռչակումէն ասդին Դուք անգնահատելի ծառայութիւններ մատուցիք Մայր Հայրենիքին: Եղաք անվերապահ աջակից մեր պետութեան, ամրացնելու և զարգացնելու համար հռչակուած անկախութիւնը: Տիպար հայու կեցուածքով եղաք ջատագովը Հայց. Եկեղեցւոյ և հայ ժողովուրդի միութեան ու Հայաստանի Հանրապետութեան հզօրացման:

Դուք հանդիսացաք նաև Հայոց Ընդհանրական Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենսական դերին հաւատացող և անոր օժանդակող ճշմարիտ հաւատացեալ և նուիրեալ անձեր: Ձեր բարերարութեանց ոսկի շղթային վերջին օղակը եղաւ հռչակաւոր ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ շէնքին հիմնական վերանորոգումը, որով ան վերստին կը դառնայ գործօն կեդրոնական հաստատութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան: Մեր վերանկախացեալ Հայրենիքին մէջ հոգևորական նոր սերունդի պատրաստութեան այնքան կենսական գործին բերիք Ձեր թանկագին մասնակցութիւնը:

Ի գնահատութիւն Ձեր եկեղեցասիրական և ազգասիրական օրինակելի ոգիին և մեծարժէք ծառայութեանց Ձեզի կը շնորհենք

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր զաւակներուն ու թոռներուն և Յովնանեան ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ և

երկար կեանք, որպէսզի վայելէք Ձեր բարերարութեանց բարի պտուղները և շարունակէք Ձեր սպասը առաւել արդիւնաբերութեամբ ընծայել մեր Ս. Եկեղեցիին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմին և Մայր Հայաստանին և անոր ազատ և անկախ Հանրապետութեանը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 18 Սեպտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 75

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(14 սեպտեմբեր 1997 թ.)

*«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը)*

(ՅՈՎՀ. Գ 17)

***Այս բառերը, հավատարիմ հայորդիք, քիչ առաջ այս բեմից կարդացվեցին Հովհաննու Ավետարանից:***

***Որքա՜ն խորունկ է այն իմաստությունը մեր Հայրերի, որոնք Խաչվերացի տոնի առիթով այս բառերն են ընտրել Ավետարանից, որպեսզի մենք կարողանանք հասկանալ ճշմարիտ իմաստը Խաչի:***

***Աստված Սեր է: Աստուծո միակ անունը Սեր է: Այդ սերը մի ճառագայթում է՝ բարու, բարեգործության, երջանկության: Աստված սեր է արևի նման, որ ճառագայթում է, և արևի ճառագայթներից, Աստուծո ճառագայթներից տիեզերքը ստեղծվեց, մարդիկ ստեղծվեցին, սերը արտահայտվեց ստեղծագործությամբ, որովհետև տիեզերքը, որի մեջ ապրում ենք մենք, Աստուծո ձեռագործն է, Աստուծո սիրո թանձրացյալ, շոշափելի արտահայտությունն է այս տիեզերքը, որ ինքնին բարի է, որովհետև Աստված երբ սեր ճառագայթեց, սերը իրենից դուրս տարածվեց, որովհետև սերը չի կարող ինքն իր մեջ բանտարկվել: Այդ սերը բարի է. «Եւ ետես Աստուած, զի բարի էր» (Ծննդ.): Աստված այնչափ սիրեց մեզ, որ մինչև իսկ իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի մենք գիտենանք, իմանանք ճշմարիտ ճանապարհը կյանքի և ունենանք իսկական աղբյուրը երջանկության: Աստված իր ձեռագործը չթողեց անտեր, անտիրական: Մարդը հեռացավ Աստծուց, բայց Աստված երբեք չհեռացավ նրանից: Աստված եկավ դեպի մարդը, մարդ եղավ մեզ նման և մեզ փրկելու համար Իր կյանքն անգամ ընծայեց՝ որպես գինը մեր փրկության, և դա եղավ իր խաչելությունը:***

***Բոլորդ էլ գիտեք, որ Խաչը նշանակն է, խորհրդանիշն է քրիստոնեական հավատքի: Խաչը մեր գմբեթների վրա ենք բարձրացնում, Խաչը քարերի վրա ենք դրոշմում, Խաչի նշանն ենք անում՝ որպես իր հավատքի, իսկության արտահայտություն: Ի՞նչ է Խաչը: Այն մի գործիք էր Քրիստոսից առաջ, քառաթև մի գործիք, չարչարանքի համար նախատեսված մի գործիք Մահապարտներին, որոնք սոսկալի չարչարանքներով դատապարտվում էին մահվան, խաչի վրա էին գամում, որ նրա հոգին քամվի, տառապանքով մահանան՝ որպես պատիժ իր գործած հանցանքների: Սակայն Հիսուս ի՞նչ հանցանք ուներ, ինչո՞ւ խաչվեց:***

Երբ Հիսուս խաչվեց այդ նույն խաչափայտի վրա, խաչափայտը դադարեց չարչարանքի գործիք լինելուց, հեղաշրջվեց նրա իմաստը, այն կերպարանափոխվեց: Խաչը դարձավ փրկության գործիք, ոչ թե չարչարանքի: Քանզի խաչը սիրո արտահայտությունն է. քարոզել սեր, բայց չցիտենալ զոհվել՝ այդ սերը վավերական և ճշմարիտ չի: Սիրելի զավակին՝ ի՞նչ է նշանակում: Նշանակում է նրա համար զոհողություն հանձն առնել, զրկանք հանձն առնել, խնամք ցուցաբերել: Սերը բառ չի, սերը զգացում չի միայն: Սերը կյանք է և գործ: Եթե Հայրենիքը սիրում ես, սակայն հայրենիքիդ համար ոչինչ չես անում, ապա ի՞նչ սեր է այդ: Ինչպե՞ս կարող է լույսը լույս լինել առանց լույս տալու: Ինչպե՞ս կարելի է սիրել առանց զոհ տալու, առանց զոհաբերվելու: Քրիստոնեական սիրո մեծագույն ուժը Քրիստոսի անձի միջից խաչելության արտահայտությունն է: Եվ դրա համար խաչելությունը ճանապարհն է ոչ թե մահվան, այլ հաղթանակի, հարության: Մի նշանավոր, իմաստուն մարդ ասել է, որ բոլոր կրոնքների մեջ սիրո գաղափարը կա, բայց միայն քրիստոնեության մեջ խաչ կա:

Աստված այնքան խոնարհվեց դեպի մարդը, սերը նրան միացրեց մարդու հետ, նույնացրեց մարդու հետ և մինչև իսկ իր կյանքը տվեց մեր մեղքերի համար, որպեսզի մենք գիտենանք սերը արտահայտել մեր կյանքում, սիրո ճանապարհով, զոհողության ճանապարհով փրկության հասնել, հարության հասնել: Ահավասիկ խաչին իմաստը հակիրճ կերպով:

Սիրելի՛ք, այս պահին, երբ մենք հավաքվել ենք Միածնաէջ այս տաճարում Խաչվերացի տոնի առիթով, որ մեր Եկեղեցու հինգ մեծագույն տոներից մեկն է, տաղավար տոներից մեկը, այսօր անդրադառնանք իբրև հայ քրիստոնյաներ, իբրև հարազատ զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որ մեր ժողովուրդը խաչապաշտ է եղել ոչ թե խոսքով, նշանով, այլ նշանով և մինչև իսկ նահատակության գնով: Մարդիկ խոսում են խաչակիրների մասին: Եվրոպայից 11-րդ դարին խաչակիրներ եկան, խաչի նշանն իրենց կրծքի վրա էին դրել, բայց մեր ժողովուրդը այդ խաչը ապրում է իր սրտով, իր կյանքով, իր ողջ գոյությամբ: Նրանք խաչը օգտագործեցին, մենք խաչը ապրեցինք: Եթե խաչակիր ժողովուրդ կա, մեր ժողովուրդն է եղել այս ամբողջ տարածաշրջանում: Խաչի խորհուրդը մեզանում այնքան կենդանի, առողջ է մնացել, որ մեր փրկության ուժն է դարձել: Այսօր Հայաստան աշխարհը խաչը իր ուսերին շալակած, գնում է դեպի հառաջ: Ոչ մեկ քրիստոնյա կարող է ասել, թե ինքը քրիստոնյա է առանց խաչը շալակելու: «Առ զխաչ քո եւ եկ զկնի իմ»՝ վերցրու քո խաչը և իմ հետևից եկ,– ասում է Քրիստոս: Ով խաչ չունի, ով խաչով չի ապրում, նա քրիստոնյա չի կարող լինել: Խաչը շալակելու եղանակն է տարբերությունը մարդկանց միջև: Այսինքն՝ իմ անձի համար չպիտի ապրեմ միայն խաչը: Խաչը անձնակենտրոն ապրումի եղանակ չի, խաչը ուրիշի հանդեպ իմ սերը արտահայտելու եղանակն է: Ամեն մի հայ պիտի խաչը շալակի այսօր, իր սերը պիտի արտահայտի դեպի Եկեղեցին, այս Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և այս ժողովրդի օրրանը, Հայաստանը, նոր Հայաստանը՝ ազատ ու անկախ

հանրապետության, դեպի իր ապագան, իր կյանքի ուղղությամբ ապրող ժողովրդի երկիր և ոչ թե օտարների, ուրիշների կողմից տիրապետված բռնակալված երկիրը: Խաչը ապրելու նոր եղանակ ունենք, այն է՝ մեր ազգի համար, մեր ժողովրդի համար, մեր Հայրենիքի համար, մեր Եկեղեցու համար սեր ցույց տանք գործով, մասնակցությամբ: Խաչը շալակենք միասնաբար, ձեռք-ձեռքի տված, սիրտ-սրտի կապած: Ինչ գեղեցիկ երևույթ է այսօր և ամեն կիրակի: Ես տեսնում եմ ժողովուրդը հայոց այս Մայր Տաճարում: Այստեղ 301 թվականին տակավին ո՛չ տաճար կար, ո՛չ կամար, ո՛չ խաչ, երբ Քրիստոս այցելեց և այս Սուրբ Սեղանին տեղը, որ դուք խոնարհվում եք և համբուրում Իջման Սեղանը, Աստված այնտեղ նվիրագործեց Իր ձեռքով, և այդ տեղը նշանակեց որպես Իր Եկեղեցու տեղ:

Այսօր Քրիստոս այցելում է մեզ, ձեր բոլորի ներկայության և հավատքի կենդանության միջից: Այսօր ի՜նչ քաղցր է ինձ համար ողջունել այստեղ իմ հարազատ եղբայրները և քույրերը աշխարհի չորս ծագերից՝ ԱՄՆ-ից, Կանադայից, Արգենտինայից, Ուրուգվայից, Լիբանանից, Ֆրանսիայից և տակավին ուրիշ երկրներից դառնալով աշխարհի հայության մանրակերտը, երբ Քրիստոս այցելում է ձեզ Իր Խաչով: Խաչը մտքից, քարից դուրս բերեք, այն ձեր հոգու մեջ զետեղեցե՛ք, ձեր կյանքի մեջ արտահայտեցեք: Խաչը զարդ չի, խաչը ոսկի չի, խաչը մարմար չի, խաչը կյանք է, կյանք: Եվ այդ կյանքն է, որ բաշխվում է մեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Շատ անգամներ մեզ համար խաչը եղավ ոչ թե նշան հավատքի, այլ խաչելության, մենք խաչին վրա բարձրացանք, Քրիստոսի խաչելությունը բաժանեցինք, կիսեցինք մեր կյանքով և այսօր այդ խաչը պիտի ապրենք ստեղծագործականորեն, այսինքն՝ պիտի նվիրաբերենք մեր ունեցածից, մեր եղածից Աստծուն և Հայրենիքին ու Եկեղեցուն, մշակույթին պիտի բաժին հանենք, որպեսզի մեր խաչը՝ արտահայտենք, ինչպես Քրիստոս Իր սերը արտահայտեց՝ մեր մեղքերի համար խաչ բարձրանալով: Հետևաբար, ողջունում եմ ձեզ այս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, դուք, որ աշխարհի չորս կողմերից եք եկել, և իմ հարազատ հայաստանցի եղբայրների և քույրերի հետ ողջագուրվենք, և խաչը թող լինի մեզ միացնող, մեզ իրար զուգող, շաղկապող հոգևոր ուժը մեր Եկեղեցու կնիքովը դրոշմված, մեր հայրերի սուրբ արյունովը նվիրագործված, և մենք քայլենք այդ խաչելության ճանապարհով:

Ես հրավիրում եմ այս պահին արտասահմանից եկ... մեր բոլոր քույրերին և եղբայրներին, որ Եկեղեցու պաշտամունքի... հետո եթե ցանկանան, թող Վեհարան գան, ես իրենց անձնապես ողջունեմ և իմ օրհնությունները տամ, իմ սիրո զգացումները փոխանցեմ իրենց, որպեսզի տանեն աշխարհի չորս ծագերը, և Սուրբ Էջմիածինը արևի պես ճառագայթի բոլոր անձերի, բոլոր հոգիների մեջ, և այնտեղ թագավորի Քրիստոս և թագավորի մեր Սուրբ Եկեղեցին հավիտյանս հավիտենից. ամեն:

# «ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՏԿԵՐՆ Է ՀԱՅՈՒԹՅԱՆ»

**Սույն հայրական պատգամը Վեհափառ Հայրապետը տվեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Հայաստանի Հանրապետության անկախության վեցերորդ տարեդարձի առթիվ, Հանրապետական Մաղթանք-Աղոթքից առաջ: 21 սեպտեմբեր, 1997 թ.:**

«Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղոթս եւ մի՛ ձանձրանալ»
«Մենք պարտաւոր ենք միշտ աղոթել և չձանձրանալ աղոթելուց»:
/Ղուկ. ԺԸ. 1/:

*Քրիստոսի այս խոսքերը այնպիսի ներշնչողական ուժ ունեցան ամբողջ քրիստոնյա աշխարհի համար, որ աղոթքը եղավ սիրտը կրոնքին, սիրտը հավատքին: Առանց աղոթքի քրիստոնեություն չի կարող գոյություն ունենալ: Աղոթքը մարդուս հոգեկան շնչառությունն է: Ինչպես մեր ֆիզիկական մարմինը շնչառության պետք ունի ապրելու համար, այնպես էլ մեր հոգին աղոթքի պետք ունի առողջ մնալու և հավերժորեն ապրելու համար:*

*Աղոթքը բոլոր կրոնքների մեջ գոյություն ունի, և առանց աղոթքի կրոնք գոյություն չունի: Աղոթքը այն հաղորդությունն է, որ մենք կ'ունենանք մեր Ստեղծիչին հետ, կյանքի Բաշխիչին հետ, մեկ խոսքով՝ մեր գոյության աղբյուրին հետ, որ է Ինքը՝ Աստված:*

*Մենք մեզնից գոյություն չունեցանք, տիեզերքը ինքնիրեն գոյություն չառավ: Այս ամբողջ տիեզերքը՝ իր անջրպետային հսկայության, անհունության մեջ, այնքան տարածուն, այնքան խորհրդավոր և տակավին մարդուս անծանոթ տարածքներուն մեջ, և մինչև հյուլեական անտեսանելի էություններու մեջ Արարիչ մը ունի: Եթե մենք կտրվինք այդ Արարիչից, կտրված կլինենք մեզ կյանք տվող ավիշից, մեր արմատից, մեր գոյության աղբյուրից:*

*Աղոթում ենք եկեղեցում, աղոթում ենք կերակրի սեղանին շուրջ, աղոթում ենք քնելուց առաջ, աղոթում ենք առավոտուն՝ գործի երթալուց առաջ: Աղոթքը մեր գոյությանը հետ շաղախված է և ոչ թե կամավոր և պարագայական մի արարք մըն է: Ես պիտի ուզեի այսօր աղոթքի մասին երկու մտածումներ ձեզի փոխանցել:*

*Առաջինը այն է, որ աղոթքը բառ և խոսք չէ, մարդ կարող է շատ բան խոսիլ, բայց չաղոթել, կարող է և սակայն ոչ մեկ բառ արտասանել և սակայն աղոթել զգացումով: Նույնիսկ բառերի շատությունը ձանձրույթ կպատճառի աղոթողին: Հիսուս ասում է. «Միշտ աղոթեցեք, բայց մի՛ ձանձրանաք»: Աղոթքը այն զգացումն է, որ մարդս կկապի իր Արարիչին հետ, և աղոթելու իղձն անգամ աղոթք է:*

*Երկրորդ՝ ինչպես ըսած է մեծ իմաստուններեն մեկը.* «Աշխատանքը ինքը թանձրացյալ աղոթք է»*: Սուրբ Գրքին մեջ կարդում ենք Պողոս առաքյալին խոսքը, թե՝ «Մի՛ ձանձրանաք բարիք գործելուց»: Բարիք*

գործելը, աշխատանք կատարելը մարդուս համար աղոթե՛լ է, Աստուծո՛ մեզի տված կարողություններն արժեցնելն է: Եվ չաշխատող մարդը չի կարող աղոթել անկեղծ, որովհետև աղոթքը միայն ձեռքերուն բարձրացումը չէ, խաչահանումը չէ: Աղոթքը Աստուծո՝ մեզի տվածին արժևորումն է, մեր կյանքով և գործով:

Աղոթքը կ'ունենա տարբեր-տարբեր հասցեներ: Աղոթքի հասցեն կարող է լինել անձին մեղքը, ապաշխարության աղոթքն է այդ, որով մեկը ասում է. «Ով Տեր, ների՛ր ինձ, քավի՛ր իմ մեղքերը, ես մարդ եմ հանցավոր, ես մարդ եմ մեղանչական»: Երկրորդ՝ աղոթքը կարող է լինել ուրիշի՛ն համար, բարեկամին համար, այն բարեխոսական աղոթքն է. «Ով Տեր, տուր իմ հորս և իմ մորս երկար կյանք և առողջություն», որը աղոթքի բարեխոսական տեսակն է, իսկ առաջինը աղոթքի ներանձնական տեսակն է:

***

Աղոթքը կարող է ունենալ ուրիշ հասցե մը. Ազգը, Եկեղեցին, Հայրենիքը: Եվ այսօր, 21 սեպտեմբերի այս կիրակին ամբողջ հայ ժողովուրդին աղոթքին սլաքը ուղղված է մեր Հայրենիքին: Այսօր մեր աղոթքները արևի ճառագայթների նման պետք է կենտրոնանան մեր Հայրենիքին վրա, որովհետև այսօր մենք նշում ենք, պանծացնում ենք մեր Հայրենիքի՝ Ազատ և Անկախ Հանրապետության վեցերորդ տարեդարձը:

Այսօր թողնենք մենք մեզ իբրև անհատ անձ, միանանք հոգեկան հաղորդակցությամբ իրար հետ և մեր աղոթքները միացնենք և զանոնք կենտրոնացնենք մեր Հայրենիքին և մեր Հանրապետության վրա: Ա՛յս է այսօրվա Հանրապետական մաղթանքին իմաստը, որ պիտի կատարվի այս քարոզից անմիջապես ետքը: Մեր Ս. Եկեղեցին ոչ թե այստեղ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, այլ բոլոր եկեղեցիներում, ողջ աշխարհում տարածված բոլոր հայ եկեղեցիներում այսօր մեր Հանրապետության համար աղոթք է կատարում, որը «Հանրապետական մաղթանք» է կոչվում:

Սիրելիներ, մենք այս դարում, քսաներորդ դարում ունեցանք մի անկախության շրջան, երկու տարվան տևողությամբ մի անկախություն, 1918 թվին: Այստեղ՝ նույն այս Ս. Էջմիածնի մեջ մեր երջանկահիշատակ նախորդներից Գևորգ Հինգերորդ Կաթողիկոսը Հանրապետության համար աղոթք էր մատուցում, Հայոց բանակն էր օրհնում և Հայոց Հանրապետությանն էր բաշխում իր հայրական խոսքը և օրհնությունը: Շրջանի մեջ դեպքերը այնպես դասավորվեցին, որ մենք այդ երկամյա անկախությունը կորցրինք: Բայց անկախության գաղափարը չկորցրինք. այդ երկամյա անկախության մեզի ներշնչած հույսը, հավատքը, ազգասիրությունը կենդանի պահեցինք 70 տարիներ շարունակ խորհրդային կարգերի բռնապետական իշխանության ներքև: Չկարողացանք ազատությունը արտահայտել, բայց ազատությունը մեր հոգիներում չկորսվեց: Եվ ահավասիկ, 20-րդ դարը չփակված՝ մենք

ողջունեցինք մեր նո՛ր Հանրապետությունը, որը ահավասիկ վեցամյա կյանք ունի: Եվ այսօր մենք կոչված ենք աղոթելու, որ այլևս անկախության տարիները այնպես շարունակվեն, որ ոչ մի վտանգ և ոչ մի սպառնալիք մեր անկախությանը չբերի ստվեր, չբերի այնպիսի վիճակ, որ մենք գտնվենք այնպիսի դրության մեջ, որ մեր հոգու, մեր զգացումների արտահայտությունը եղող այս անկախությունը չվտանգվի, մնա առողջ, մնա տոկուն, խոր արմատներ արձակի, և զարգանա, ժողովրդին կյանքը բարելավվի: Այսօր իմ Հայաստանցի, հայաստանաբնակ եղբայրների և քույրերի հետ, ես միանում եմ և ասում. այս անկախության գերագույն բարիքը ճանաչենք մեր կյանքովը և մեր գործովը: Մեր շուրջը տակավին մութ ամպեր կան, Արցախի հարցը տակավին ամբողջովին չէ լուծված, տակավին շրջափակումը մեզ խեղդելու փորձ է կատարում, տակավին մեր տնտեսական, ստեղծագործական, արդյունաբերական զորությունը տկար է, մեր ժողովրդի տնտեսական, ընկերային կյանքի պայմանները չեն այն, ինչ որ մենք սպասում ենք, որ լինեն: Բայց մենք է, որ պիտի անենք, ինչ որ հարկ է անել: Աստված երկնքից հրեշտակներ պիտի չուղարկի մեր կյանքը փոխելու, բարելավելու համար: Մենք ենք Աստուծո գործակիցները այս հողին վրա մեր աշխատանքով, մեր ջանքերով, մեր Հայրենիքը զորացնելու համար, որպեսզի մեր զավակները մի օր չգան ապագայում և չասեն՝ մեր հայրերը և մայրերը այնպիսի ճղճիմ հարցերով, ներքին պայքարներով իրար դեմ ըլլալով՝ մթագնեցին մեր անկախությունը: Մեր երեխաները, թոռները գան և օրհնեն մեզ՝ ասելով. «Ապրե՛ք, հայրեր և մայրեր, որ ամրացրիք մեր Հանրապետությունը միության, ամբողջականության, համագործակցության սկզբունքներով, նվիրումով և աշխատանքով և ոչ թե ոժգոհանքով, բամբասանքով և ներքին հոգեմաշ այնպիսի արարքներով, որոնք ոչ մի բարիք չունեն մեր Հայրենիքին և մեր ժողովրդին համար»: Մենք ենք Հայրենիքը կերտելու կոչված ժողովուրդը:

Այսօր որքան երջանիկ եմ զգում ես, որ այստեղ՝ Մայր Տաճարում ունենք նաև մեզնից անբաժան, Հայրենիքից անանջատ մեր արտասահմանի հայության զավակներից այնպիսի ընտրանի ներկայացուցիչներ, որոնց հայրաբար ողջունում եմ ես, որոնք գալիս են Պարսկաստանից, Լիբանանից, Սիրիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Արգենտինայից, Բրազիլիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, մի խոսքով՝ արտասահմանյան բոլոր այս երկրներից՝ այս համախմբումը, այս միասնությունն է մեր ուժը: Ուրիշ ի՞նչ ունենք, դուրսից ի՞նչ ուժ, բարիք ենք սպասում: Աշխարհումս ոչ մի ազգ ուրիշին չի օգնի, եթե այդ ազգը շահ չունենա: Սա մենք սովորել ենք Համաշխարհային առաջին պատերազմից, մեր ցեղասպանությունից մինչև Արցախյան մեր տագնապը, մինչև Սումգայիթի, մինչև Կիրովաբադի և Բաքվի այն բոլոր տանջանքները և տառապանքները, որոնց ենթարկվեց մեր ժողովուրդը: Մի բան սովորենք ցավից. լինել համախումբ, միասիրտ, միախոհ, միակամ, միաձայն: Այն ատեն է, որ աշխարհը մեզ կհարգի և այն ատեն

*է, որ մեր զավակները մեզ կօրհնեն: Ճիշտ է, մեր երկրում շատ հարցեր կան, ինչպես երեկ Հանրապետության վեցամյակի տոնակատարության ընդունելությանը մեր Հանրապետության Վսեմաշուք Նախագահն ասաց՝ պրոբլեմներ կան, որոնք լուծեցինք, պրոբլեմներ կան, որոնք լուծում ենք հիմա, պրոբլեմներ էլ կան, որոնք դեռ չենք կարողացել լուծել և թերևս էլ պրոբլեմներ լինեն, որ չկարողանանք լուծել: Բայց ինչ պրոբլեմներ էլ լինեն, մե՛րն են բոլորն էլ՝ ուրախությունն էլ մերն է, ցավն էլ մերն է, Հայրենիքն իր բոլոր կողմերով՝ դրական և ժխտական՝ մերն է:*

*Եթե մի զավակ իր հորը և մորը անտեսի, որովհետև հայրը և մայրը հիվանդ են՝ անիծված լինի այդ զավակը: Իմ հայրն ու մայրը, որ իմ կյանքիս պատճառն են եղել և ինձ կաթ են տվել, սնունդ են տվել, ես նրանց հանդեպ միայն և միայն երախտագիտություն կարող եմ ունենալ: Հայրենիքը, որ մեր պատմության կյանքն է տվել, այս Հայրենիքը իր բոլոր զավակներից պետքն ունի: Վերք ունի Հայրենիքը, ցավ ունի, բայց մենք ենք, որ պիտի դարմանենք, մենք, և ոչ թե դրսից պիտի սպասենք, որ գան և մեր ցավերը ուրիշները բժշկեն: Այսօր, արտասահմանից եկած մեր հայ ժողովուրդի զավակների մեջ ես տեսնում եմ այդ միասնության, մասնակցության, Հայրենիքի մեջ իրենց ներդրումի փաստը և ողջունում եմ նրանց ամբողջական և անվերապահ աջակցությունը և մասնակցությունը Հայրենիքի կերտման այս նոր շրջանին: Եվ Աստված տա, որ երբ 2001 թուականը մտնենք՝ երրորդ հազարամյակը, պայծառ լինի մեր Հայրենիքը, հպարտանանք մեր Հայրենիքով:*

⁂

*Եղբայրներ և քույրեր, այսօր գտնվում ենք այս Մայր Տաճարում: Այստեղ ամեն ինչ աղոթք է, քարերն անգամ աղոթում են: Իմ այս գահին վրա, որ ես խոնարհաբար և անարժանաբար նստում եմ, 130 Կաթողիկոսներ այստեղ աղոթել են, տառապել են, ճգնել են, այստեղ քանի՜ միլիոն հայեր եկել են դարերի ընթացքում և իրենց շունչը խառնել են այս քարերին, այս կամարներին, այս Մայր Աթոռի մեջ Սրբություն Սրբոց ճանաչված մեր Միածնաէջ Սեղանին: Այստեղ Աստված ինքն է իջել Միածին Որդու հետ, և երկինքն ու երկիրը հանդիպել են Սուրբ Էջմիածնում, Աստված այցելել է մեր ժողովրդին: Եկեք աղոթքով Աստուծո հետ, Քրիստոսի հետ հաղորդությամբ մեր արտահայտությունը ունենանք մեր Հայրենիքի շինության համար, որովհետև նա, ով Հայրենիքը չի սիրի, նա ինքն իրեն սիրած չի լինի: Հայրենիքը միայն հողը չէ, Հայրենիքը հողի մեջ իմ ու ձեր հայրերի թողած սրբություններն են, մշակույթի գործերն են, նրանց արյունն է, նրանց ոսկորներն են: Եթե մեկը Հայրենիքը չսիրի, ինքն իրեն սիրած չի կարող լինել: Ես ո՞վ եմ, դուք ո՞վ եք իբրև հայ՝ առանց այս Հայրենիքին, ի՞նչ եք դասավանդում դպրոցներում: Չինաստանի մասին չեք խոսում, Հնդկաստանի մեջ չեք խոսում, խոսում եք Հայաստանի՛ մասին: Հայաստանը պատկերն է մեր*

*ժողովուրդի կյանքին: Մենք մաս և բաժին ենք, միս ու ոսկոր այդ ժողովուրդին: Պիտի գիտնանք մեր մասնակցությունը, պատկանելիությունը քրտինքով արտահայտել, մասնակցությամբ արտահայտել և ոչ թե անցյալի հիշողությամբ: Անցյալի հիշողությունը նոր ուժ կուտա մեզի, բայց մենք ապրելու ենք ներկան և ապագան: Ատոր համար այսօր, ձեր բոլորին սրտերից, ձեր բոլորի մտքերից քաղելով աղոթքները իբրև ծաղկեփունջ հոգևոր, այսօր ես իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս վերառաքում եմ ձեր աղոթքները դեպի Աստված և ասում եմ. «Հայր երկնավոր, արևդ թող միշտ շողա մեր Հայրենիքին վրա, ուժ տուր մեր Նախագահին, ուժ տուր մեր Խորհրդարանին, ուժ տուր մեր Կառավարությանը, ներշնչիր քաջություն մեր բանակին, զորացրու բոլոր հայրենակիցներին և՛ Հայաստանում, և՛ արտասահմանում, նորոգի՛ր մեզ, ո՛վ Տեր Աստված, պայծառացրո՛ւ մեզ, որպեսզի մեր Հայրենիքը լինի մեր հոգու պատկերը, ինչպես եղել է մեր հայրերի պատկերը: Ինչ որ ուզում ես, որ լինենք, ով Տեր Աստված, ներշնչիր մեզ, իմաստնացրո՛ւր մեզ, զորացրո՛ւր մեզ վասն Քո փառքի, վասն մարդկության բարիքին և վասն Հայաստանի բարեկարգության և զարգացման ու բարգավաճության, հավիտյանս, հավիտենից, ամեն»:*

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ ՀՂՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ**
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ**

ՀՌՈՄ

*ՍԻՐԵՑՅԱԼ ԵՂԲԱՅՐ Ի ՔՐԻՍՏՈՍ,*

*ԽՈՐԱՊԵՍ ՎՇՏԱՑԱԾ ԵՆՔ ԼՍԵԼՈՎ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ՝ ԱՍՏԾՈ ՆՎԻՐՅԱԼ ԾԱՌԱՅԻ ՄԱՀՎԱՆ ՏԽՈՒՐ ԼՈՒՐԸ: ՆԱ ՄԵԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՄԱՏՈՒՑԵԼ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ, ԵՎ ՆՐԱՆ ՄԻՇՏ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՀԻՇԵՆ: ՆԱ ԻՐՈՔ ՄԱՅՐ Է ԵՂԵԼ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ: ՆՈՒՅՆԻՍԿ ԻՐ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԳԱԼԻՔ ՍԵՐՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱ ԿԴԱՌՆԱ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ:*

*ՆՐԱ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ԱՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ Ի ԹԻՎՍ ԱՄԵՆԱԲԱՐԵՐԱՐ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՆԱ ԵՎ ԻՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՑԻ ՔՈՒՅՐԵՐԸ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ 1988 Թ. ԱՀԱՎՈՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՂԵՏՅԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԱՅՍՏԵՂ՝ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ, ՄԻՇՏ ԿՀԻՇՎԵՆ:*

*ԹՈՂ ՄԵՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐՆ ԸՆԴՈՒՆԻ ՆՐԱ ՀՈԳԻՆ ԴՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ:*

*ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ,*

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՂԱՐԱԲԱՂԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

*Սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորընտիր նախագահ Արկադի Ղուկասյանը և ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը՝ Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազանի ուղեկցությամբ:*

*Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց և իր հայրապետական օրհնությունը տվեց պրն. Ղուկասյանին՝ նշելով, որ Եկեղեցին իր բոլոր ուժերը կգործադրի Արցախի կորացման համար: Տնտեսական վարգացումից պատ Նորին Սրբությունը կարևորեց հոգևոր-բարոյական դաստիարակության խնդիրը և Եկեղեցի-պետություն միասնական գործակցության անհրաժեշտությունն այս հարցում:*

*Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, պրն. Ղուկասյանը հույս հայտնեց, որ Եկեղեցու օգնությամբ արցախահայությունը կհասնի իր բոլոր նպատակների իրականացմանը:*

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

**ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ**
**ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ**
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**

*ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ*

*ՍԻՐԵԼԻ ԱՐԿԱԴԻ,*

*ՍՐՏԻ ԽՈՐ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՆՀՈՒՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ:*

*ՄԵՐ ՈՂՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԵՆՏՐՈՆԻՑ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ ԱՆՁՆԱՊԷՍ ԵՒ ՀԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ԲԱՐՁՐՕՐԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՅՍ ՊԱՇՏՕՆԻ ԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ, ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ:*

*ԱՂՕԹՈՒՄ ԵՆՔ ԱՌ ԱՄԵՆԱԿԱՐՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ, ՈՐ ՁԵԶԻ ՇՆՈՐՀԻ ՔԱՋԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ԱՆՍԱՀՄԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, ԱՆՆԿՈՒՆ ԿՈՐՈՎ ՈՒ ՔԱՋՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ Ի ԳԼՈՒԽ ՀԱՆԵԼՈՒ ՁԵԶԻ ՎԱՏԱՀ ՈՒԽԱԾ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ի ՍՊԱՍ ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ, ԶՕՐԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՑՄԱՆ:*

*ԲԻՒՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԻ ՕՋԱԽԻՑ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ: ԹՈՂ ԱՍՏԾՈՅ ԱՄԵՆԱՏԵՍ ԱՉՔԸ ՈՒ ԱՄԵՆԱԶՕՐ ԱՋԸ ՀՈՎԱՆԻ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ ԼԻՆԵՆ ՁԵԶ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱՅ:*

*ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ,*

ԱՂՕԹԱՐԱՐ՝

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*7 սեպտեմբերի*

# ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

*Հիրավի պատմական օր էր 1997 թվականի սեպտեմբերի 18-ը թե՛ հայ ժողովրդի և թե՛ Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար, զի իրականությամբ էր գգեստավորվում վաղեմի մի երազանք, որը նաև մեր Հայրերինն էր, մեր երջանկահիշատակ Հայրապետներինը:*

*Ութսուն տարիների լռությունից հետո, ի վերջո, ուսանողության աշխույժով էին լցվելու Գևորգյան Ճեմարանի սրահներն ու լսարանները, դասագանգի հնչեղ ղողանջներով էին վերակերպավորվելու փառքի գափնիներով պսակված մեծերի ավանդները, մեծեր, որոնց անունները ոսկյա տառերով գրվեցին Հարազատ ժողովրդի ու Եկեղեցու պատմության էջերում:*

## ...ԹԵՐԹԵԼՈՎ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԸ

Գևորգյան Ճեմարանի մասին պատմող ցանկացած գրքում կամ տեղեկատվության մեջ կարդում ենք. Հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն: Բացվել է 1874-ի սեպտեմբերին, Էջմիածնում, Գևորգ Դ Կաթողիկոսի նախաձեռնությամբ, ում անվամբ էլ կոչվել է: Ռուսական կայսերկուլմից 1874-ին հաստատված կանոնադրության համաձայն, Ճեմարանի նպատակն էր պատրաստել Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներ, ինչպես նաև հանրակրթական դպրոցների ուսուցիչներ: Տնօրենը Կաթողիկոսն էր:

Գևորգ Դ երջանկահիշատակ Հայրապետի հուշերում կարդում ենք. *«Ժամանակի յառաջադիմութիւնն և ուսմանց ու գիտութեանց բարգաւաճանքը կը պահանջէին բարձրագոյն ուսումնարան մը, և այդ նպատակի համար անձնական և ազգայիններէ նուիրուած մեծ գումարով հիմնեցի հոյակապ Գէորգեան Ճեմարանը՝ արեւելեան կողմը, մեծահանդէս նաւակատիք կատարելով 1874 տարւոյ սեպտեմբերի մէջ. հրդեհուելուց յետոյ արիաբար վերստին շինեցի. կարգեցի գիտնական ուսուցիչներ զանազան ուսմանց և լեզուներու, յատուկ կանոններով և 80ի չափ աշակերտներով. յետոյ շինեցի նաեւ աշակերտաց ննջարան և հիւանդանոց»:*

Ճեմարանի հյուսիսային կողմում, վերին նակատին, կա շինության հիշատակարան:

Դժվարին է եղել Գևորգյան Ճեմարանի անցած ուղին հատկապես ցարական կառավարության օրոք: Առավել է ծանրացել ռուս-թուրքական պատերազմի տարիներին՝ հայահալած քաղաքականության ու անգութ ջարդերի պատճառով, երբ Ճեմարանի շենքը վերածվում է հոսպիտալի ու գաղթականների կացարանի:

Քանիցս հետաձգվում են ուսումնական վերամուտները: Այդպես է լինում նաև 1915-16 ուսումնական տարում: Ի վերջո, 1917 թվականի դեկտեմբերի 21-ին, փակվում է Գևորգյան Ճեմարանը:

***

Հայ ժողովրդի կյանքում գրվում են պատմության նոր էջեր: Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահին Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսն էր: Օրվա խնդիրների թվում նաև Գևորգյան Ճեմարանի վերաբացումն էր, որի առիթով 1926 թվականի հունվարի 25-ին գումարված նիստը քննության է առնում նաև այդ հարցը: Սակայն այն նույնպես մնում է թղթի վրա:

վերաբացման  երջանիկ ու երկար սպասված արարողությունը տեղի է ունենում միայն 28 տարի հետո, 1945 թվականի նոյեմբերին, Գևորգ Զ Կաթողիկոսի օրոք:

⁂

Իր գործունեության 43 բեղուն տարիների ընթացքում հոգևոր այս դպրանոցում կրթվեցին այնպիսի նշանավոր անձինք, ինչպիսիք են Կոմիտաս վարդապետը, Մանուկ Աբեղյանը, Լևոն Շանթը, Ակսել Բակունցը: Թերթերով շրջանավարտների մասին պատմող էջերը, այնտեղ, շատերի թվում, գտնում ենք նաև Արմենակ Շախմուրադյանի, Գարեգին Հովսեփյանցի, Խաչատուր Աբովյանի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և մյուսների անմահ անունները, երախտավորների մի հույլ, որոնց թողած ժառանգությամբ իրավամբ հպարտանում են հայ ժողովուրդն ու Հայոց եկեղեցին:

⁂

Թեև 1945-ի վերջին վերաբացվեց հոգևոր մտքի և հոգու կերտման կաճառը, սակայն ոչ իր նախկին շենքում: Մինչև 1997 թվականի վերամուտը, դասերն անցկացվեցին Մայրավանքի տարածքում՝ հյուսիս-արևելյան կողմում, ճարտարապետ Զուրաբյանի նախագծով 1911 թվականին կառուցված մատենադարանի շենքում: Այն վերակառուցվեց երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրոք և ցանկությամբ, շահագործման հանձնվեց 1983 թվականին: Այդ մասին նախասրահի արևելյան պատին փորագրվեց արձանագրություն:

⁂

Մինչ այսօր գործող Հոգևոր Ճեմարանն ուներ վեց լսարան, 30 դասախոս, 95 ուսանող: Ի տարբերություն անցյալի, ներկայիս Ճեմարանում պատրաստում են միայն եկեղեցու սպասավորներ: Այստեղ ուսանում են հումանիտար, կրոնագիտական առարկաներ: 1995-96 ուսումնական տարվանից մեծ ուշադրություն է դարձվում նաև ռուսաց և անգլերեն լեզուների ուսուցմանը:

Ճեմարանում դասախոսում են ոչ միայն հանրապետության բուհերի փորձառու մանկավարժները, այլև հենց Ճեմարանի նախորդ տարիների լավագույն շրջանավարտները:

Բոլորովին վերջերս Ճեմարանում հիմնվեց համակարգչային սրահ, որի նպատակն է ուսանողների համար դասագրքեր պատրաստելը, դասախոսությունների բազմացումը, ինչպես նաև համակարգչին տիրապետող մասնագետներ պատրաստելը: Ամեն մի շրջանավարտ պետք է կարողանա անձամբ օգտվել համակարգչից:

## «ՎԵՐԱԲԱՑՎՈՂ ՃԵՄԱՐԱՆԸ ՃԱԿԱՏԱԳԻՐ Է, ՇԵՆՔ ՉԷ...»

1997 թվականի սեպտեմբերի 18-ին, երեկոյան ժամը 17.30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության նորընտիր նախագահ Արկադի Ղուկասյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Արա Սահակյանը, ՀՀ նախարարներ, Կոստանդնուպոլսի Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, Ամերիկայի Արևելյան և Արևմտյան թեմերի առաջնորդներ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, բարերարներ տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները: Հենց նրանց ֆինանսական աջակցությամբ էլ ճեմարանի վերանորոգումն իրականացրեց ԱՄՆ-ի Արևելյան թեմի հայ օգնության ֆոնդը:

Վեհարանի սրահում բարձրաստիճան հյուրերին ընդունեց և իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետը: Կարճ զրույցից հետո, Նորին Սրբությունը նրանց առաջնորդեց դեպի վերանորոգված Գևորգյան ճեմարան, որի մուտքի մոտ էին հավաքվել ՀՀ Կառավարութան անդամներ, մարզային, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, հոգևորականներ, մեծաթիվ հյուրեր ինչպես արտերկրից, այնպես էլ Հայաստան աշխարհի տարբեր վայրերից, մեծաթիվ ազգայիններ ու հավատավոր հայորդիներ:

Բարձրաստիճան հյուրերի թվում էին նաև ներքին և արտաքին թեմերի թեմակալ առաջնորդներ, ՀՕՖ-ի, քույր եկեղեցիների, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ:

Խորին ակնածանքով պետական այրերը, Նորին Սրբության նախագահությամբ, մոտեցան ճեմարանի մուտքը երիզող եռագույն ժապավենին, որ նաև մեր ինքնության խորհրդանիշն է: Ճիշտ ժամը 18.00-ին Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետը, Հայաստանի վերանկախացյալ Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ինչպես նաև բարերար Գևորգ Հովնանյանը հատեցին շենքի մուտքը երիզող եռագույն ժապավենը՝ ներկաներին շնորհելով ներս մտնելու մեծագույն պատիվը:

Ապա հրավիրյալները, Գարեգին Ա Կաթողիկոսի առաջնորդությամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին հիմնովին վերանորոգված շենք և ի մի եկան հանդիսությունների պատկերազարդ սրահ, ուր և տեղի ունեցավ բացման արարողությունը, Նորին Սրբության նախագահությամբ, որը սկսվեց «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ, ապա հնչեցին Հայաստանի Հանրապետության և Հոգևոր ճեմարանի հիմներգերը:

Օրվա խորհրդին պատշաճող Սուրբգրային հատվածների ընթերցումից հետո, Վեհափառ Հայրապետի ձեռամբ, կատարվեց վերաբացված կրթօջախի օրհնության արարողությունը, հավարտ որի բացման խոսք ասաց Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը.

*«Ձերդ Սրբություն Վեհափառ Տեր,*

*Ձերդ վսեմություն պրն. Նախագահ Հայաստանի Հանրապետության,*

*Մեծարգո վարչապետ Հայաստանի Հանրապետության,*

*Ամենապատիվ Պատրիարք Հայր և բարձրաստիճան եկեղեցականներ, Հոգևոր եղբայրներ,*

*Պատվարժան ներկայացուցիչներ Հայաստանի կառավարության, Հարգելի մտավորականներ և հյուրեր,*

*Պատմական մեծ իրադարձության առաջ ենք գտնվում մենք բոլորս և միասնաբար այս Հոգևոր Հարկի՝ 1917 թ. դեկտեմբերի 23-ի կանգնած ժամացույցը ուղղում և առաջ ենք մղում:*

*Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից Հայ Եկեղեցու կողքին հիմնվեց դպրոց և տարածվեց դպրություն: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ջանքերով ծնվեց հայ ազգային հոգևոր մշակույթը և այնուհետև Էջմիածնի մայր դպրոցից մտքի և հոգու լուսարձակներ տարածվեցին Հայաստանի ամենահեռավոր անկյունները, որտեղ վանքեր և դպրոցներ հիմնվեցին:*

*Հայ Եկեղեցին և դպրոցն իրար հետ մի ամբողջություն դարձան, և հայ ժողովրդի նկարագրի մաս կազմեցին ուսումն ու մշակույթը:*

*19-րդ դարի համեմատաբար խաղաղ պայմաններում Գևորգ Դ Կաթողիկոսի ջանքերով Ս. Էջմիածնին կից հոգևոր դպրոցը վերածվեց բարձրագույն ուսումնական հաստատության ողջ Անդրկովկասում: Իր գործունեության 43 տարիների ընթացքում այս հաստատությունը տվեց բազում արժանավոր եկեղեցականներ, գիտնականներ և մտավորականներ: 1917 թ. Հայաստանում տիրող քաղաքական և տնտեսական դժվարությունների պատճառով Ճեմարանը փակվում է ժամանակավորապես, որը սակայն տևում է շուրջ 80 տարի:*

*Փառք և պատիվ Գևորգյան Ճեմարանի հիմնադիրներին, տեսուչներին, դասախոսներին և ուսանողներին, որոնցից շատերը վերջիվերջո եղան հիմնադիրները Հայաստանի պետական համալսարանի և բարձրագույն այլ ուսումնական հաստատությունների:*

*1946 թ. Գևորգ Զ Կաթողիկոսի ջանքերով բացվեց Հոգևոր Ճեմարանը: Անցնող ավելի քան 50 տարիների ընթացքում Հոգևոր Ճեմարանը դժվարին պայմաններում տվեց իր համեստ հունձքը, և շնորհիվ տեսուչների ու դասախոսական կազմի, Հայաստանում այսօր աշխատող բոլոր բարձրաստիճան եկեղեցականները և հոգևորների մեծ մասն այս հաստատության հարկից են դուրս եկել: Փառք և պատիվ բոլորին:*

*Այսօր, սակայն, նոր պայմանները նոր լուծումներ են թելադրում, և այս շենքի վերաբացումը առաջին քայլն է այդ ուղղությամբ:*

*Հարգելի պարոն Նախագահ, քաջ գիտենք, որ Ճեմարանը հատուկ տեղ ունի Ձեր սրտում, որպես նախկին դասախոս՝ Դուք հպարտությամբ կարող եք նայել Ձեր սաներից շատերին, ովքեր առաջնորդներ և բարձրաստիճան եկեղեցականներ են այսօր: Սակայն Ձեր ներկայությունն ընդգծում է և շեշտում կապը անցյալի հետ՝ տեսնելու համար Ս. Էջմիածինը շրջապատված զարգացած, իրենց Եկեղեցուն և Հայրենիքին նվիրված եկեղեցականների փաղանգով:*

*Այս օրերը հիշեցնում են Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Վռամշապուհ արքայի և մի քիչ ավելի ուշ՝ Վահան մարզպանի և Գյուտ Կաթողիկոսի ժամանակաշրջանը:*

*Անցյալում էլ, մեր ամենադժվարին պահերին, ոչ միայն մեր հույսը չկորցրինք, այլև երկնեցինք մեր ոսկեդարը: Եվ ահա այսօր մեր երկրի քաղաքական բարդ և տնտեսական ծանր պայմաններում վերաբացում ենք հոգու և մտքի այս կենտրոնը, Ավետարանի խոսքով՝ մենք իսկապես «Լուսո որդիներ» ենք, մենք հավատում ենք, որ միայն Միածնաէջ այս աղբյուրից խմող երիտասարդներից կարող են ծնվել նոր Եղիշեներ, Ղևոնդ Երեցներ, Տաթևացիներ և Գարեգին Հովսեփյանցներ:*

*Շնորհակալ ենք մեր հայրենի կառավարության ցույց տված աջակցությունից՝ լինի դա տեղական, թե կենտրոնական մակարդակով: Հայ ժողովրդի ընդհանուր շահերից ելնելով, հույս ունենք, որ մեր ազգային Եկեղեցին պետության կողքին կկարողանա առաջնորդել մեր ժողովրդին հոգևոր, մշակութային և տնտեսական ավելի բարձր ոլորտներ:*

*Բախտավոր եք և Դուք, Վեհափառ Հայրապետ, որ Ձեր աչքի առջև իրականանում է այն սուրբ երազը, որին ձգտել էին մեր Կաթողիկոսներից Գարեգին*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ԿՏՐՈՒՄ Է ՎԵՐԱԲԱՑՎՈՂ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԵՐԻԶՈՂ ԵՌԱԳՈՒՅՆ ԺԱՊԱՎԵՆԸ

*Հովսեփյանցը, Գևորգ Ե-ն և Վազգեն Ա-ն: Տա Աստված Ձեզ այնքան ժամանակ, որպեսզի կարողանաք տեսնել Ս. Էջմիածինը՝ շրջապատված կարող եկեղեցականներով, և Մայր Աթոռը՝ որպես հոգևոր կենտրոն համայն հայության:*

*Ազգային բարերար պրն. Գևորգ և տիկ. Սիրվարդ Հովնանյաններ, Աստված Ձեզ օժտել է բնական տաղանդով, այդ տաղանդը, սակայն, ինչպես Իմաստուն Ծառան, չատացրիք. և Ձեր կառուցողական աշխատանքները տարածվեցին Միջին Արևելքից մինչև Ամերիկա և Եվրոպա: Սակայն այս բոլորի մեջ Դուք չմոռացաք Ձեր արմատները՝ Եկեղեցին: Ձեր ծնողաց հիշատակին, Ամերիկայի Արևելյան թեմում կառուցեցիք Ս. Ստեփանոս եկեղեցին: Երկրաշարժից հետո Ձեր աչքով տեսաք ավերը և այդ օրվանից շարունակում եք օգտակար լինել հայրենի ժողովրդին՝ Եկեղեցու միջոցով:*

*Ցույց տալու համար Ձեր սերը Հայաստանի անկախ Հանրապետության հանդեպ՝ Նյու Յորքի ՄԱԿ-ի հայ ներկայացուցչությանը օժտեցիք սեփական շենքով, Հայաստանում օժանդակել եք Բամբակաշատի եկեղեցու վերանորոգմանը, և այսօր Ձեր բարերարությամբ բացումն ենք կատարում հիմնովին վերանորոգված Գևորգյան Ճեմարանի:*

*Շենքը շուրջ 125 տարվա ընթացքում տեսել է չորս տարբեր իշխանություններ, շատ բաներ եկել ու անցել են, սակայն շենքը մնացել է հաստատուն: Հայաստանում հայրենի հողի վրա եղած աշխատանքը ավելի մնայուն է, երկարակյաց և մեր ժողովրդի համար առավել օգտակար: Ձեր նվիրատվությամբ նորոգված այս շենքին մաղթենք երկար և օգտակար տարիներ, իսկ Ձեզ՝ առողջություն և ազգանվեր ու եկեղեցանվեր գործունեություն»:*

Ուրախության ու բերկրանքի անկեղծ խոսք ասաց նաև ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպ. Պարսամյանը, ում նվիրական գործունեության լավագույն արդյունքներից մեկն էլ հոգևոր դպրանոցի վերաբացումն է:

Այնուհետև ճեմարանի երգչախումբի և Սամվել սրկ. Խաչատրյանի կատարմամբ հնչեց «Երգ մեռնող հայրենասերի» երգը, որի վերջին տողերն ընտրելով իր խոսքի բնաբան, Վեհափառ Հայրապետն ասաց.

*«Հարազատ եղբայրնե՛ր և քույրե՛ր.*

*«Լույսի Հայրենիք, լույսի Հայրենիք» բառերով ավարտվեց այս երգը: Եվ ես զգում եմ, որ Հայրենիքը շարժվում է, Հայրենիքը լույս է ստանում, Հայրենիքը դառնում է մեր հոգիների մեջ՝ մեզ երջանկացնող և մեզ պարտականության կոչող մի երկիր, մի ժողովուրդ, մի ավազան, որի դիմաց ենք կանգնած այս պահին:*

*Փառք Քեզ, Աստված, որ տվեցիր մեզ այս օրը: 80 տարի շարունակ այս շենքը լռեց, լռեցվեց իբրև Ճեմարան հոգևորականների պատրաստության օջախը: Ահա այսօր շարժվում է հայոց Հայրենիքը, և այս շարժման մեջ է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, և ես իմ հոգու մեջ ծունկի եմ գալիս Աստծու առջև, որ ինձ տվեց այս պատիվը՝ նախագահելու այս պատմական պահին, այս հանդիսությանը և իմ միջով իբրև այս հաստատության միջնորդական աշակերտ՝ հարգանք ընծայելու նրանց, ովքեր մեր պատմությունը կերտեցին Գևորգյան Ճեմարանից ստացած հոգով, գիտությամբ, հայրենասիրությամբ և եկեղեցանվիրումով: Ինչո՞ւ եմ ասում միջնորդականորեն: Զգիտեմ՝ այս շենքի ո՞ր անկյան մեջ է նստել Գարեգին Հովսեփյանը, չգիտեմ՝ մի ուրիշ ո՞ր անկյան մեջ է նստել Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, արդյոք ո՞ր գրասեղանի առջև է ուսում առել Կոմիտաս վարդապետը, Մատենադարանի ո՞ր գրքի առջև են ուսումնասիրել հայոց պատմագրությունը Մանուկ Աբեղյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Ստ. Մալխասյանը և Լեոն Շանթը, ում գիրքն է եղել առաջին գիրքը, որ իմ կյանքում կարդացել եմ, ես նրա աշակերտն եմ և աշակերտ լինելու մեջ եմ գտնում իմ փառքը:*

*Այս ճեմարանը ճակատագիր է, շենք չէ. և դրա համար ես այսօր, բարձրագույն ատրճանի գնահատանքով իմ խոսքն ուղղում եմ մեր վսեմաշուք Նախագահին, որովհետև գիտեմ, որ բարձր պարտականությունների, պատասխանատվության բերումով նա չի կարող լինել բոլոր հանդիսությանց ներկա, բայց չէր կարող իր հոգու զգացումով բացակա լինել այս հանդիսությանը, որովհետև Գևորգյան ճեմարանի պատմությունը նրա համար կենտրոնական տեղ ունի, և այսօր որքան պարտավոր ենք մենք, որ ունենք մեր սեփական ազատ, անկախ Հայրենիքի նախագահը, որ միշտ իր ներկայությամբ պետության ամբողջ համակրանքը և սերն է արտահայտում հանդեպ մեր Սուրբ Եկեղեցու և նրա հոգևոր կենտրոնը եղող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության:*

*Բախտավոր ենք մենք այսօր, որ մեզ հետ է ընտրվելուց հետո առաջին անգամ Հայաստանի հողը ոտք դրած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահը՝ մեծարգո Արկադի Ղուկասյանը, Արցախի ժողովրդի իրավունքները պաշտպանող, քաղաքագետ, հեռատես և նվիրյալ առաջնորդը:*

*Ուրախ ենք, որ մեզ հետ է մեր սիրելի վարչապետը, որ իր սրտի մեջ միացրել է Ղարաբաղը և Հայաստանը:*

*Ես ուզում եմ իմ երախտագիտական սերն արտահայտել հանդեպ Կոստանդնուպոլսո մեր ամենապատիվ Պատրիարք Սրբազանին, որ այստեղ է գտնվում և վկա է դառնում այս պատմական պահին և վստահ եմ, երբ վերադառնա իր Աթոռ, այնտեղ կվկայի, թե ինչ օրեր է ապրում Հայաստանը:*

*Սիրելինե՛ր, չեմ ուզում երկարել իմ խոսքը, բայց հոգու վկայություն եմ տալու այսօր նրա համար, որ ես հավատում եմ, թե նրանք, որ երկրի վրա չեն, բայց այս հաստատության միջից են անցել, այսօր ժպտում են երկնքից աստղի նման:*

*Սիրելի տեսուչ հայր սուրբ, սիրելի ուսուցչական կազմի անդամներ, հոգևորական եղբայրներ և աշխարհական անձինք, այս ճեմարանը պետք է լինի այն, ինչ որ դուք ուզում եք, որ լինի: Այս ճեմարանը շենք չէ, պատմություն չէ, հիշատակ չէ, այլ առաքելություն է. ով այս ճեմարանով անցնի, թող խղճի խայթ զգա, եթե այս ճեմարանին դավաճանի: Ով այս ճեմարանի դասարանը մտնի, թող դուրս գա հոգևորականի կերպարով, մտավորականի կերպարով, ուսուցչի կերպարով, ազգին ընծայված անձի կերպարով:*

*Այսօր ճեմարանն Ամենայն Հայոց Կաթողիկոսության կենտրոնական հաստատությունն է: Եվ դուք պետք է ուխտ կատարեք: Ուխտ կատարեք՝ կյանքի ճղճիմ հարցերից վեր կանգնել, որպեսզի կարողանաք այս նոր ժողովրդին և Հայաստանի Հանրապետությանը, ողջ հայ ժողովրդին Սփյուռքում, դառնալ ծառաների ծառան, և դրա մեջ է ձեր պարտքը: Այնքան ժամանակ, որքան ես իմ ուխտը կատարում եմ ձեր առջև, բոլորիդ առջև, այնքան ժամանակ, որքան Աստված իմ ոտքերիս քայլելու կարողություն տա, որքան իմ շրթներին խոսք տա, ես այս ճեմարանի ուսուցիչ պիտի մնամ, այս ճեմարանում պիտի դասավանդեմ իմ սիրելի սաներին և ինչ որ ստացել եմ Մեր ուսուցիչներից, պիտի փոխանցեմ ձեզ:*

*Ես իմ գնահատանքի և երախտիքի խոսքը պիտի ասեմ մեր բարերար Գևորգ Հովնանյանին, ինչպես նաև ՀՕՑ-ի նախագահ, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոսին, ով ևս իր նյութական օժանդակությունը բերեց այս հոյակապ շինության վերաբացմանը»:*

Հավարտ Նորին Սուրբ Օծության խոսքի, որպես գնահատանքի լավագույն դրսևորում, Տ. Արտակ արդ. Տիգրանյանն ընթերցեց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը՝ ուղղված բարերար Գևորգ Հովնանյանին *(տե՛ս էջ 28-29)*:

Անհուն հուզմունքով ու սրտի թրթիռով իր ապրումները ներկաների հետ կիսեց տիար Գևորգ Հովնանյանը՝ հույս հայտնելով, որ Գևորգյան ճեմարանի վերաբացված շենքում, ութսուն տարիների ընդմիջումից հետո, ի վերջո կկրթվեն

ազգին ու Եկեղեցուն նվիրված հոգևորականներ, ովքեր իրենց կոչման բարձր գիտակցումով կհովվեն հավատացյալ ժողովրդին, կառաջնորդեն Երկնառաք Վարդապետի նշած ուղով, որ է լույսը և անմահությունը:

Յուրահատուկ դաստիարակչական շեշտ ուներ վերանկախացյալ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի խոսքը, որ նաև անսովոր մի խոստում էր ոչ միայն Ամենայն Հայոց Հայրապետին, ներկաներին, այլև ամեն մի ճեմարանականի.

*«Գևորգյան Ճեմարանն իրականացրել է երեք լուրջ առաքելություն:*

*Այն նախ և առաջ եղել է հոգևորականության դարբնոց, որտեղ պատրաստվել են Եկեղեցու ծառաներ, եղել է Հայագիտության հզոր կենտրոն: Միայն դասախոսների անունների թվարկումը բավական է դա ապացուցելու համար: Եվ եղել է մի այնպիսի կենտրոն, որտեղ հոգևոր և աշխարհիկ գիտությունը միավորված են եղել: Հոգևորական գիտնականներն ունեցել են պրոֆեսիոնալ նույն մակարդակը, ինչ աշխարհական գիտնականները: Եվրոպայում փայլուն կրթություն ստացած Գևորգյան Ճեմարանի նախկին սաները վերադարձան վարդապետական-աստվածաբանական կոչումներով: Նրանք էին Գարեգին Հովսեփյանցը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Կարապետ Տեր-Մկրտչյանը, Հայր Կոմիտասը, Երվանդ Տեր-Մինասյանը: Նրանց կողքին էին աշխարհական հայտնի հռչակավոր հայագետներ Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը»:*

Հանրապետության նախագահը, շարունակելով իր խոսքը, շնորհակալություն հայտնեց բարերարներին, շեշտեց իր վաղեմի ծանոթությունն ու մտերմությունը այդ հայրենասեր գերդաստանի հետ, հիշեց մի գեղեցիկ միջադեպ՝ կապված Հովնանյան գերդաստանի ավագների և իր հանդիպմանը, ապա եզրափակեց խոսքը՝ մտերմիկ այս արտահայտությամբ. *«Ինչպես Վեհափառ Հայրապետը ձեզ հավաստեց իր դասախոսությունների մասին, ես էլ ցանկանում եմ հույս հայտնել, որ պաշտոնաթողությունից հետո ինձ նորից բախտ կվիճակվի դասավանդելու այս սրբազան հարկի ներքո»:*

Հանդիսույթն ավարտվեց «Տերունական աղոթք»-ով:
Վերջում տրվեց սիրո ընթրիք՝ ագապե:

***

Իրավամբ պատմական էր պահը, որն իր խորհրդով՝ անմեկնելի, իսկ իրականությամբ կերպավորված ավագ սերնդի երազանքը՝ պարտավորեցնող: Վերամուտը հարուստ անցյալ ունեցող հարկի ներքո դիմավորող սաները շատ բան ունեն անելու, զի նրանք են ազգի և Եկեղեցու ոսկեշող գալիքը, նրանցից են ծնունդ առնելու մերօրյա Կոմիտասները, Հովսեփյանցները, Աբեղյանները, բոլոր նրանք, ովքեր նորովի են կերտելու սեփական ժողովրդի հավերժությունը, պայծառակերպելու առաքելահաստատ տունը հավատքի և լուսավորչահիմն Աթոռը Հայրապետական...

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԿՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԱՆԴԱՄ

*Նորին Սբ. Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընտրվել է Համաշխարհային ինֆորմատիկացիայի /Կանադա/ և ժողովուրդների Համաշխարհային «Էլիտա» /Հարավսլավիա/ ակադեմիաների անդամ: Սեպտեմբերի 26-ին այցելելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, այս մասին հայտնեցին և անդամության դիպլոմները Վեհափառ Հայրապետին հանձնեցին Համաշխարհային ինֆորմատիկացիայի ակադեմիայի նախագահ Ակատ Վարդանյանը և «Էլիտա» ակադեմիայի նախագահ Միլան Ձեթսը:*

*Պրն. Վարդանյանը տեղեկացրեց, որ երկու ակադեմիաներն այն 80 կազմակերպություններից են, որոնք գործում են ՄԱԿ-ի հովանու ներքո: Այս ակադեմիաների անդամներ են Ալեքսիյ Բ Պատրիարքը, Բորիս Ելցինը, Բուտրոս Ղալին և նշանավոր այլ դեմքեր: Պրն. Վարդանյանը հաղորդեց նաև, որ երկու ակադեմիաները Հայաստանում կունենան իրենց մասնաճյուղերը, նրանց համատեղ ջանքերով Երևանում հիմնվում է բժշկական կենտրոն:*

*Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց շնորհված տիտղոսի համար՝ այն դիտելով իբրև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի նկատմամբ ցուցաբերած բարձր գնահատանքի արտահայտություն: Վեհափառ Հայրապետը, իր օրհնանքը տալով ներկաներին, հույս հայտնեց, որ ակադեմիաների գործունեությունը կնպաստի Հայաստանում գիտական մտքի պարգացմանը:*

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***


ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄ

## *ՄԵԿՆՈՒՄ*

*1997 թվականի օգոստոսի 29-ին, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի Առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, ինչպես նաև թեմական խորհրդի հրավերով, հայրապետական այցելությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը մեկնեց Հարավային Ռուսաստան:*

*Նորին Սուրբ Օծության ուղեկցում էին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուքյանը:*

## *ԺԱՄԱՆՈՒՄ ՄԻՆՎՈԴԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ*

*Օգոստոսի 29-ին, օրվա երկրորդ կեսին, օդանավը վայրէջք կատարեց Մինվոդիի օդանավակայանում, ուր Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին թեմակալ առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ստավրոպոլի, Վլադիկավկազի և Բաքվի միտրոպոլիտ գերաշնորհ Տ. Գեդեոնն իր շքախմբով, Կիսլովոդսկի քաղաքապետ Վիկտոր Բեկետովը, Մինվոդիի փոխքաղաքապետը, պաշտոնատար այլ այրեր, թեմական խորհրդի անդամներ, ազգայիններ, հայ համայնքի, մամուլի ու լրատվական ծառայությունների ներկայացուցիչներ:*

*Այստեղ Վեհափառ Հայրապետի շքախմբին միացավ Շիրակի թեմի Առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:*

***

*Օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի սպասասրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, հընթացս որի փոխանակվեցին բարիգալստյան և բարեողջույնի ուղերձներ:*

*Ուրախություն հայտնելով Նորին Սրբության օրհնաբեր այցելության առիթով, Եզնիկ սրբազանը շնորհակալություն հայտնեց հրավերքը պատվելու համար և ավելացրեց, որ տեղաբնակ հայ հավատավոր ժողովուրդն անհամբերությամբ ու խորին ակնածանքով է սպասել այս այցելությանը:*

*Կիսլովոդսկի քաղաքապետ պարոն Բեկետովը նախ կարևորեց Նորին Սրբության այս այցելությունը ժողովուրդների բարեկամության*



ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՄԻՆՎՈԴԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԳԵԴԵՈՆԻ ԿՈՂՄԻՑ

տեսանկյունից, ապա ընդգծեց հայ համայնքի բերած մասնակցության կարևորությունը քաղաքի բարգավաճման ու կորացման գործին:

Խոսելով Ռուս Ուղղափառ Եկեղեցու անունից, իր եղբայրական ջերմ սերն ու ողջույնը Ամենայն Հայոց Հայրապետին հղեց Ստավրոպոլի, Վլադիկավկազի և Բաքվի միտրոպոլիտ Գեդեոնը, ապա, կարևորելով Հայ Եկեղեցու հոգևոր առաջնորդի այս օրհնաբեր այցելությունը երկրամաս, միտրոպոլիտը Գարեգին Ա Կաթողիկոսին նվիրեց պանակե, հանձնեց հուշանվերներ:

Վերջում, իր գնահատանքի ու շնորհակալության խոսքն ուղղելով ներկաներին, Վեհափառ Տերը հույս հայտնեց, որ այցելության այս օրերը կանցնեն առավել գործնական մթնոլորտում, իսկ հայ համայնքի հետ հանդիպումները կունենան կարևոր և դաստիարակիչ նշանակություն օտարության մեջ, հայրենիքից հեռու ապրող հայորդիների համար:

Նորին Սրբությունը նաև ավելացրեց, որ եկել է իր անդրանիկ այցելությունը տալու նորահաստատ թեմին, ճանաչելու իր ժողովրդին: Մեծ բարեբախտություն է, ասաց նա, որ իր այս անդրանիկ այցելությունը հատկանշվելու և արժևորվելու է երեք նորակառույց հայկական եկեղեցիների օծման երջանկաբեր իրադարձությամբ:

## ՄԻՆՎՈԴԻԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օդանավակայանից Նորին Սուրբ Օծությանն առաջնորդեցին դեպի Մինվոդիի Սբ. Աստվածամայր ռուսական նոր կառուցվող եկեղեցի, ուր հավաքվել էր հավատացյալների հոծ բազմությունը:

Հենց բակում բարձրաստիճան հյուրերին բարի գալուստ մաղթեց վանքի վանահայրը՝ Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը համարելով երկու Եկեղեցիների դարավոր բարեկամության ու եղբայրության լավագույն դրսևորում:

Այնուհետև ներկաներին իր հայրական օրհնությունը բաշխեց Հայոց Հայրապետը՝ շեշտելով, որ այսօր հավատքի մի նոր գարուն է բացվել, իսկ այդ գարնան առավել սաղարթախիտ ծառերից մեկն էլ նորակառույց այս եկեղեցին է, ուր պետք է յուրաքանչյուր հավատացյալ իր աղոթքն առաքի առ Աստված: Նաև ցանկացավ, որ շուտափույթ ավարտին հասցվեն բարեկարգման վերջին աշխատանքները, որպեսզի նորաօծ տաճարն իր դռները բացի ամենքի առջև:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ՍԲ. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Օրվա երկրորդ կեսին Սուրբ Աստվածամայր ռուսական եկեղեցուց ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Կիսլովոդսկ քաղաքի հայկական թաղամաս: Այստեղ քաղաքի ամենաբարձր կետում է կառուցել հայ հավատավցյալն իր աղոթքի տունը՝ Սուրբ Վարդան եկեղեցին:

Ս. Վարդան եկեղեցու բակում Նորին Սրբությանն ու իր շքախմբին դիմավորեցին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Պողոսյանը հոգևոր դասի հետ, ինչպես նաև հավատավոր ժողովրդի խուռներամ բազմությունը:

Հոգևոր հովվի բարեողջույնի խոսքից հետո, «Հրաշափառ»-ով և թափորի ուղեկցությամբ մուտք գործելով տաճար, Նորին Սրբությունն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Ավագ խորան: Կանոնական աղոթքից հետո, Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանը բարիգալստյան ու բարեողջույնի ուղերձ հղեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի մասնավորի նշելով, որ Կիսլովոդսկի հայկական համայնքի համար այս այցելությունը պատմական մի երևույթ է, որ նաև դաստիարակիչ նշանակություն է ունենալու:

Այնուհետև ներկա հավատավոր ժողովրդին իր հայրական պատգամը հղեց Հայոց Հայրապետը.

«Սիրեցյալ հավատավոր, հավատարիմ զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որ ապրում եք Ռուսաստանում, մասնավորաբար Կիսլովոդսկի այս կանաչավետ շրջանում:

Ես առաջին անգամն է, որ ոտք եմ դնում այս հողի վրա և իմ խոսքը ձեզ չեմ հղում, այլ՝ Աստծուն. «Փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, որ ինձ շնորհեցիր այս օրը, որպեսզի ես տեսնեմ այս ժողովրդին և նրանց աչքերի մեջ, նայվածքներում կարդամ Գրիգոր Լուսավորչի հավատքը, մեր եկեղեցու հանդեպ սերը և կապվածության ապրումը. փառք Քեզ, Աստված, որ այսպիսի հավատարիմ ժողովրդին ինձ հովվելու հանձնեցիր:

Շատ չէր անցել այն պահից, երբ ես ժամանեցի Մինվոդիի օդանավակայան և այնտեղ ձեր առաջնորդ Տ. Եզնիկ նորապսակ սրբազանի կողքին տեսա իմ հոգևոր եղբորը՝ Գեդեոն միտրոպոլիտին, տեսա Կիսլովոդսկի քաղաքապետին, Մինվոդիի փոխքաղաքապետին, օդանավակայանի պատասխանատուներին, քաղաքային իշխանության ներկայացուցիչներին և զգացի իմ հոգու մեջ և իմ սեփական աչքերով տեսա, որ ռուս և հայ ժողովուրդները միասին ապրելով է միայն, որ զորավոր կկարողանան լինեն: Մեր պատմությունները իրար շաղախված մի հյուսվածք են. թելերը կապվել են իրար, պետք է ամուր մնան, որպեսզի չխանգարվեն, չկտրվեն, չմաշվեն: Իրար պետք է զորացնենք, մանավանդ այս նոր շրջանին, երբ երկու երկրներն էլ՝ Ռուսաստանի Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը, վերագտել են իրենց անկախ, ազատ ապրելու նոր դարաշրջանը:

Վարչակարգը, որ պարտադրվեց այս երկրներին, փառք Աստուծո, 70 տարիներում սպառեց իրեն, սակայն մենք մնացինք, հավատքը մնաց, հայրենիքը մնաց: Մեկ խոսքով՝ Եկեղեցին, մշակույթը, գիրը՝ դրանք են, որ մեր ազգին պահում են: Կարգերը կգան ու կգնան, սակայն ժողովուրդը, Եկեղեցին, հավատքը և մշակույթը կմնան: Քանի՜ թագավորություններ եկան ու գնացին հայոց պատմության մեջ, սակայն Սուրբ Էջմիածինը՝ մեր հավատքի ազգային աղբյուրը, մշտահոս, մշտաբուխ հավատք ներշնչեց մեր ժողովրդին: Ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ մեկ այլ բան չկարողացան այդ հավատքը մարել մեր ժողովրդի սրտում: Ես իմ հոգու մեջ ծնկի եմ գալիս և փառք տալիս Բարձրյալին, որ այս առավոտ իմ աչքերը բացեցի Ս. Էջմիածնի կամարների ներքո, Հայաստանի հողում և այժմ արևով ողջունում եմ ձեզ այստեղ՝ Կիսլովոդսկում:

Առաջին հերթին ողջունում եմ Տ. Եզնիկ սրբազանին, որ ժրաջան աշխատանքով կարծես թե եկեղեցիներ է ցանում այս երկրամասում: Եվ, ահավասիկ, առաջին եկեղեցին, առաջինը իմ կյանքում, որ ռուսական հողի վրա հայկական եկեղեցի եմ օծելու: Այս եկեղեցին քարե շինություն չէ.

*սովորական մի մարդն էլ է կարող քարը քարի վրա դնել: Այս եկեղեցու կառուցումը ձեր հավատքի վկայությունն է, այս քարերը հավատքով են շարվել, ոչ թե շաղախով: Եվ այդ ձեր հավատքը պետք է կենդանի պահեք: Ձեր այս կայտառ հավատքով, Եկեղեցու հետ կապվածությամբ օժանդակում եք Էջմիածնի հզորությանը: Մեր Սրբություն Սրբոց, մեր հոգիներում ապրող Սուրբ Էջմիածինը պիտի ծաղկի ձեզանով, այսպիսի եկեղեցիներով, և երբ կիրակի օրը օծումը կատարենք, այս մարմարը այլևս պետք է դադարի մարմար լինելուց, շինանյութերը, որոնք գործածվել են եկեղեցին կառուցելու, դադարելու են նյութ լինելուց, վերածվելու են Ս. Հոգու ներշնչման աղբյուրի, Աստծու ներկայության ներշնչարանի բոլորիս համար:*

*Այս առիթով մասնավոր շնորհավորանքներս եմ ուղղում Տ. Եզնիկ սրբազանին: Առաջին անգամն է, որ ես այս թեմն եմ գալիս: Երբ Եզնիկ սրբազանը իր եպիսկոպոսության աստիճանը ստացավ, այն ժամանակ ես չկարողացա գալ այստեղ և նրան ներկայացնել, բայց այժմ, որ եկել եմ, ասում եմ ձեզ, որ բոլորվեք Նրա շուրջը, գործակցեք, սատար կանգնեք նրան, որպեսզի զորացնեք Հարավային Ռուսաստանի թեմը նորանոր նվաճումներով, նոր իրագործումներով:*

*Իմ եղբայրական գնահատանքն եմ հայտնում Գեդեոն միտրոպոլիտին, որ առաջին իսկ վայրկյանին ինձ ասաց. «Դուք, որ գալիս եք որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, կգտնեք այստեղ մի եղբայր՝ հանձին ինձ, նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետի՝ Ալեքսիյ Բ Պատրիարքի»: Ես Ալեքսիյ Պատրիարքի հետ անձնական ծանոթություն և շուրջ 30 տարիների բարեկամություն ունեմ: Այսօր Նրա ներկայացուցչի Գեդեոն միտրոպոլիտի մասնակցությունը ինձ հատուկ ուրախություն է պատճառում: Իմ շնորհակալություններն եմ հայտնում նրան, որ առաջին վայրկյանից, երբ օդանավից իջա, ինձ դիմավորեց հանուն այս շրջանի ժողովրդի:*

*Շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ: Աստված օրհնի ձեզ բոլորիդ: Ամեն»:*

*Մեծ ուրախությամբ ընդունելով Հայոց Հայրապետի սրտի խոսքն ու շնորհակալությունը՝ ուղղված թե՛ Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիյ Բ-ին, ինչպես նաև անձամբ իրեն, Ստավրոպոլի, Վլադիկավկազի և Բաքվի միտրոպոլիտ Գեդեոնը ի սրտե փոխադարձեց ջերմ խոսքերի ու շնորհակալության ուղերձը, նաև ավելացրեց, որ Հայոց Հայրապետի բարեկամական ու եղբայրական վերաբերմունքն զգաց ժամանման հենց առաջին իսկ վայրկյաններից, երբ այցելեց ռուսական եկեղեցի, հանդիպեց ռուս հավատավորի հետ, նրան փոխանցեց իր հայրական օրհնությունը և պատգամեց ամուր ու հաստատուն մնալ հավատքի մեջ՝ միշտապես նորոգելով այն հայրենաշեն ու եկեղեցաշեն գործերով:*

*Իր խոսքի վերջում Գեդեոն միտրոպոլիտը Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանին նվիրեց մի պանակե, իսկ վանահայր Տ. Սարգիս քհն. Պողոսյանին՝ լանջախաչ:*

*Վերջում տեղի ունեցավ աջահամբույր:*

⁂

*Հանդիսավոր արարողությունից հետո Նորին Սրբությունը շրջեց եկեղեցու բակում, ծանոթացավ շինության հետ, իսկ վերջում եկեղեցու*

*սեղանատանը հանդիպեց տաճարի շինարարների և բարերարների հետ, նրանց բաշխեց իր քաջալերանքի խոսքերը:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԻՍԼՈՎՈԴՍԿԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

*Այցելության երկրորդ օրը, օգոստոսի 30-ին, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ստավրոպոլի, Վլադիկավկազի և Բաքվի միտրոպոլիտ Գեդեոնի հրավերով, առավոտյան ժամը 10.00-ին, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Կաթողիկոսն իր շքախմբով այցելեց Կիսլովոդսկում նոր կառուցվող Նիկոլսկի ռուսական եկեղեցի:*

*Այստեղ բարձրաստիճան հյուրերին հոգևոր երգեցողությամբ դիմավորեցին Ռուս Եկեղեցու տեղի հոգևորականները և հավատավոր ժողովուրդը: Առ Աստված առաքած կանոնական աղոթքից հետո, երկուստեք հնչեցին ողջույնի ուղերձներ:*

*Նախ պատվարժան հյուրերին բարի գալուստ մաղթեց վանքի վանահայրը: Ապա խոսեց Գեդեոն միտրոպոլիտը և վերջում՝ Ամենայն Հայոց Հայրապետը:*

*Հավարտ հանդիպման փոխանակվեցին հուշանվերներ:*

## Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԳՈՐԾՈՂ ՄԱՏՈՒՌՈՒՄ

*Այստեղից ներկաները, շարականների երգեցողությամբ, քայլեցին դեպի Ս. Նիկողայոսի գործող մատուռ, ուր ներկաներին իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնությունը բաշխեց Հայոց Հայրապետը՝ առանձնակի շեշտելով հավատքի մեծ նշանակությունը մարդու կյանքում, ինչպես նաև կարևորեց հայ և ռուս ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամությունը, եղբայրությունը: Նաև ավելացրեց, որ նրանք, ձեռք-ձեռքի տալով, շատ արգելքներ են հաղթահարել և դեռ հաղթահարելու են:*

## ՌՈՒՍ ՄԵԾ ՆԿԱՐԻՉ ՅԱՐՈՇԵՆԿՈՅԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

*Քիչ ուշ Գարեգին Ա Վեհափառին պատեհ առիթ ընձեռնվեց այցելել ռուս մեծ նկարիչ Յարոշենկոյի տուն-թանգարան, որտեղ բարձրաստիճան հյուրերը մոտիկից ծանոթացան թանգարանի պատմությանը, հարուստ ցուցադրանքին, եղան նկարչի աշխատասենյակում, ուր ամեն ինչ պահպանվել է նույնությամբ, ինչպես նաև դիտեցին ռուս հայտնի նկարիչների վրձնին պատկանող արվեստի այն գոհարները, որոնք ցուցադրված են այստեղ:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՊՅԱՏԻԳՈՐՍԿ

*Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, Գարեգին Ա Կաթողիկոսն իր շքախմբով, ինչպես նաև իրեն ուղեկցող անձանց հետ, ժամանեց Պյատիգորսկ քաղաք, ուր կառուցվում է Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին:*

*Այստեղ, եկեղեցու մոտ, բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին հոգևոր հովիվ Տ. Արամ քհն. Հունանյանը, Պյատիգորսկի քաղաքապետ*

*պրն. Վասիլը, Ռուսաստանի Դաշնության նախագահի ներկայացուցիչ պրն. Միխայլենկոն, հայ համայնքի նախագահը, պաշտոնատար այլ անձինք, տեղի հոգևոր դասի ներկայացուցիչներ, ինչպես նաև հավատացյալ հայորդիների բազմությունը:*

*Վեհափառ Հորը դիմավորելուց հետո, «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ թափորն առաջնորդվեց դեպի Սուրբ Սարգիս մատուռ:*

*Կանոնական աղոթքից հետո, եկեղեցու բակում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպեց Պյատիգորսկում ապրող հայ ժողովրդի զավակների հետ:*

*Կարևորելով Նորին Սրբության այցելությունը, թեմակալ առաջնորդ Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանը մեկ անգամ ևս հիշեցրեց ներկաներին պահի մեծ նշանակությունը և պատմականությունը:*

*Քաղաքապետ պրն. Վասիլը, ողջունելով Գարեգին Ա Կաթողիկոսին, շեշտեց Հայոց Հայրապետի այցելության առանձնահատուկ նշանակությունը, կարևորելով այն թե՛ ժողովուրդների բարեկամության և թե՛ տեղական իշխանությունների ու Հայ և Ռուս Եկեղեցիների փոխհարաբերությունների տեսանկյունից:*

*Ներկաներին բաշխելով իր հայրապետական պատգամը, Նորին Սրբություն Գարեգին Ա-ն իր խոսքում ասաց.*

*«Սիրելի առաջնորդ սրբազան՝ նորաօծ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյան, սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան քաղաքապետ Պյատիգորսկի:*

*Ես այսօր իմացա, որ «Պյատիգորսկ» նշանակում է հինգ լեռների քաղաք, սակայն ես այսօր այս քաղաքը անվանում եմ «Շեստիգորսկ», որովհետև ես բերել եմ նաև վեցերորդ լեռը՝ Սուրբ Էջմիածինը, հավատքի լեռը մեր ժողովրդի: Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր դարավոր ազգի նոր ընձյուղները, այսօր այս քաղաքում և ընդհանրապես Հարավային Ռուսաստանում նոր կյանք եք ապրում, ազատ և անկախ պայմանների ներքո, ինչպես ձեր եղբայրները և քույրերը ապրում են մեր Մայր Հայրենիքում, Հայաստան աշխարհում, ազատ ու անկախ մեր նոր Հանրապետությունում:*

*Ես ցանկանում եմ այսօր, որ դուք տանեք ձեզ հետ այն զգացումը, որ մենք նոր ժողովուրդ ենք և ոչ թե միայն հին դարերի հիշատակ: Երկար պատմություն ունենք, հարուստ արմատներ ունենք հողում: Դարեր, դարեր ապրել ենք, սակայն չպետք է միայն հիշենք, այլ պետք է նորը կերտենք, նորը շինենք, դեպի ապագան նայենք: Այս է հիմա մեր ժողովրդի նշանաբանը. «Անցյալին նայել, նոր ուժ քաղել, ներկան կերտել մեր այս անուշիկ երեխաների փայլուն ապագայի համար»: Այս է հայի ճակտի գիրը այս դարի համար, և այս տաճարը, որ կառուցում եք, այս պատկերը, որ ձեր աչքի առջև է, հաստատումներն են մեր առաջադիմության, դեպի ապագան նայելու կամքին:*

*Եվ դրա համար շնորհավորում եմ ձեր երիտասարդ, նվիրյալ, ժրաջան առաջնորդին, որ աճավասիկ նոր եկեղեցիների կառուցումով նոր շունչ և կյանք է տալիս մեր ժողովրդին: Ուզում եմ, որ բոլորդ միասին մեկ սիրտ, մեկ կամք, մեկ հոգի դառնաք, և եկեղեցին դառնա ոչ թե մեկի կամ մյուսի եկեղեցին, այլ բոլորիդ եկեղեցին: Ամեն մեկը քրտինքի մեկ կաթիլ թող խառնի՝ քար դնի: Ես այսօր այնքան ուրախ եմ, որ առաջին անգամ իմ կյանքում տեսնում եմ այս ժողովրդին: Լսել էի, կարդացել, սակայն մեկ բան է լսելը, մեկ այլ բան՝ տեսնելը:*

*Սիրելի քաղաքապետ, Դուք այսօր շատ գեղեցիկ, շատ դիպուկ ձևով*

Հիշեցիք, որ պատմական օր ենք ապրում, ամեն մեկը ձեզանից, և ես անձնապես պետք է հիշեմ այս օրը: Ձեր երեխաները պետք է հիշեն, որ օգոստոսի 30-ին 1997-ի, առաջին անգամը լինելով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավատքի օջախ և հոգևոր սնունդի աղբյուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել էր, որ ձեզանով ուժեղանա, զորանա, երբ տեսնի ձեր հավատարմությունը, կապվածությունը Սուրբ Էջմիածնին: Ես եկել եմ Հայ և ռուս ժողովուրդների միջև կապը ամրացնելու, անբաժանելի, անքակտելի այդ կապը, որ ուժն է երկու ժողովուրդների զորության: Որքան ուժեղ լինի Ռուսաստանը, այնքան ուժեղ կլինի Հայաստանը, և որքան ամուր, տոկուն, հզոր լինի Հայաստանը, այնքան կուժեղանա Ռուսաստանը: Այս է մեր ըմբռնումը, և դուք պետք է այնպես ապրեք այս երկրում, որ ռուս ժողովուրդը ասի, որ սրանք հայեր են, լավ են գործում, շինարար են և ոչ թե անգործ, այլ պատիվ բերող: Սա է եղել հայի գործը, եկեք դա բարձր պահենք, քանզի մենք ուրիշ հարստություն չունենք: Ոսկի չունենք, նավթ չունենք, այլ մշակույթ, գիր, հավատք ունենք, դրանով ենք հպարտացել և պիտի հպարտանանք:

Այսօր ձեր քաղաքապետը ինձ նվիրեց մեկ գեղեցիկ տուփ, որը շրջազարդված է հինգ լեռներով, և ես էլ իրեն եմ ընծայում այն գանձերի գիրքը, որի ցուցանմուշները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Կրեմլում, Մոսկվայում ցուցադրվեցին մեկ և կես ամիս շարունակ: Իսկ այժմ աղոթքով եմ փակում իմ խոսքը, «Պահպանիչ»-ով, որ դուք հաջողություն ունենաք ձեր գործերում»:

Նորին Սրբության «Պահպանիչ»-ից հետո երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ, ապա ներկաները շրջեցին կառուցվող եկեղեցու տարածքում, մանրամասն ծանոթացան կատարվող շինարարական աշխատանքներին: Ի դեպ ասենք, որ Հայաստանից տարված տուֆ քարով է երեսպատվելու նորակառույց տաճարը:

Վերջում եկեղեցու բակում տեղի ունեցավ աչքահամբույր, որին արժանացան բոլոր ներկաները:

## ԿԻՍԼՈՎՈԴՍԿԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Այցելության երրորդ օրը, օգոստոսի 31-ը, երկար կիրչի Կիսլովոդսկում ապրող յուրաքանչյուր հայորդի, կի այդ օրն ի վերջո իրականությամբ պգեստավորվեց նրա նվիրական երազանքը: Հավատացյալների հոծ բազմություն էր հավաքվել նորակառույց Սուրբ Վարդան հայկական եկեղեցու բակում, ուր, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց տաճարի օծումը:

Ասենք, որ այն կառուցվել է «Կռունկ» հայկական մշակութահասարակական միավորման հանգանակած միջոցներով: Ստավրոպոլի երկրամասում կառուցված թվով հինգերորդ հայկական եկեղեցին է Սուրբ Վարդան տաճարը: Այստեղի հայ գաղթօջախը հնուց ի վեր իր թվաքանակով զիջում է միայն երկրամասում ապրող ռուսներին: Այստեղ մեծաթիվ հայ գաղթականներ վերաբնակվեցին Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության դժնդակ տարիներին:

Օծման հանդիսավոր արարողությունից հետո, հավուր պատշաճի քարոզ խոսեց Նորին Սուրբ Օծությունը՝ ի մասնավորի նշելով.

«Ձեզանից բոլոր նրանք, ովքեր հավատք ունեն և զգացում, հասկացան, որ պատմական օր է այսօր և որն հիշելու ենք մեր ամբողջ կյանքի ընթացքում: Մեր ողջ պատմության մեջ առաջին անգամն է, որ այս քաղաքում հայկական եկեղեցի է օծվում Սուրբ Վարդան անունով, այն քաջամարտիկ զորավարի անունով, որն իր կյանքը տվեց հավատքի և Հայրենիքի համար: Այսօր Մենք հատուկ կերպով եկանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ սրբազանների հետ միասին կատարելու այս եկեղեցու օծումը: Ի՞նչ է նշանակում օծում, Սուրբ Մյուռոն. Սուրբ Հոգու խորհրդանիշը, որը Սուրբ Էջմիածնում է օրհնվում: Մյուռոնով այս մարմարները, քարերը, սյուները, այս խորանն ենք օծում՝ որպես Աստծու ներկայությունը ձեր մեջ:

Այսօր այս քարերը վերածվեցին համբուրելիք սրբությունների, քանզի հավատքի սյունք են: Նրանց միջից մեր Գրիգոր Լուսավորչի հավատքն է ճառագայթում: Այսօր ուզում եմ բոլորիդ ասել, որ Մենք միայն քարը չօծեցինք, Մենք ձեզ օծեցինք, դուք օծվեցիք, դուք այսօր հոգեպես վերանորոգվեցիք, հավատքի մեջ վերածնվեցիք, և դրա համար ես այս օրը Կիսլովոդսկ քաղաքի համար նկատում եմ մի տեսակ Հոգեգալստի օր: Սուրբ Հոգին է իջել ձեր մեջ, զգացե՛ք, փոխվե՛ք:

Նոր դար ենք ապրում: Ազատության, անկախության այս շրջանը, որ ապրում ենք Հայաստանում և Ռուսաստանում, պետք է հավատքով թրծվի: Առանց հավատքի ազգերը չեն դիմանա: Հավատքն է այն ուժը, որ մարդուն զորություն է տալիս, անհաղթելիություն: Քանի՜-քանի՜ հազար եկեղեցիներ մեր թշնամիները քանդեցին, սակայն մեկ եկեղեցի կա, որը չքանդվեց, որը հավատքի եկեղեցին է մեր սրտերում: Դա չի քանդվի, քար չէ: Այդ հավատքը քարը եկեղեցու կվերածի, այդ հավատքն է, որ այօր պետք է վերանորոգենք մեր մեջ: Ես ուզում եմ, որ ձեր երեխաները այդ հավատքով մեծանան: Այսօր այսքան բազմահազար հավատացյալներ եմ տեսնում, սրտով հրճվում եմ: Սակայն եթե երբեք ուրիշ կիրակիներին այս եկեղեցին դատարկ լինի, ափսոս ձեզ: Եկեղեցին դուք եք, և ձեր երեխաները թող գան, շարական երգեն, մոմ բռնեն, բուրվառ անեն, շապիկ հագնեն: Թող ձեր երեխաները գան, մկրտվեն, երիտասարդները գան, պսակվեն: Եկե՛ք, Աստուծո խոսքը, Ավետարանը այս բեմից լսեք, Սուրբ Հաղորդություն ստացեք: Եվ այդ ժամանակ է, որ եկեղեցին ձեր կյանքում Եկեղեցի կլինի:

Ես այսօր ցանկանում եմ, որ բոլորդ ձեր առաջնորդի շուրջը բոլորվեք և ձեր կյանքը հային բնորոշ ձևով արժևորեք: Կյանքը ուտել-խմել չէ, կյանքը հրճվանք չէ: Կենդանիներն էլ են ապրում: Կյանքը հոգի է, մշակույթ, Աստուծո հետ հաղորդություն: Եթե դրանք դադարեն տեղ ունենալ մեր կյանքում, մեր կյանքը կվերածվի կենդանու կյանքի: Եկեղեցին ձեզ այս ճշմարտությունն է ուսուցանում: Այս եկեղեցու օծման առիթով ես օրհնում եմ Ռուսական Դաշնության պետությունը, որ այս շրջանում ազատություն է տվել մեր ժողովրդին, օրհնում եմ քաղաքապետարանը և քաղաքապետին:

Այս երկրում հայի անունը բարձր պահեք: Ամեն անգամ, երբ հայի անունը շոշափվի, հպարտ զգանք: Լծվեցեք գործի, շենացրեք ձեր թեմը, դպրոց բացեք, սովորեցրեք ձեր երեխաներին ռուսերենի հետ միասին հայերեն: Այսուհետ, երբ ես «Կիսլովոդսկ» ասեմ, ձեզ եմ մտաբերելու: Հրամեցե՛ք Սուրբ Էջմիածին, Մայր Հայրենիք, վերանորոգվեցեք և վերադարձեք նորոգված Աստծու փառքի և մեր ազգի պատվի համար հավիտյանս հավիտենից. ամեն:

Շնորհավորում եմ ամենքիդ և, որպես հաստատումն և կնիք իմ խոսքերի,

այս սկիհը նվիրում եմ այս եկեղեցուն, որը պատրաստված է Սուրբ Էջմիածնում, որ երբ սրտից Սուրբ Հաղորդություն ստանաք, Քրիստոսի մարմնի հետ Հայի հոգին, Հայի հավատքը ստանաք ու հավերժ ապրեք. ամեն»:

***

Նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությանն անմիջապես հաջորդեց Սուրբ Պատարագը: Նորաօծ եկեղեցում անդրանիկ Պատարագը մատուցեց Տ. Գրիգորիս արքեպսկ. Բունիաթյանը:

Սուրբ և անմահ Պատարագի վերջում, եկեղեցու բակում, հանդիսավորապես, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց խաղողօրհնեքի գեղեցիկ ու խորհրդավոր արարողությունը, ապա օրհնված պտուղը բաշխվեց հավատավոր ժողովրդին՝ տուն տանելու համար: Հիշեցման կարգով ասենք, որ այս և մյուս ծիսական արարողությունները Ռուսաստանի Դաշնությունում տոնախմբվում են համաձայն հին տոմարի:

Այնուհետև, դարձյալ եկեղեցու բակում, կազմակերպվեց մեծ տոնախմբություն:

***

Անդրադառնալով եկեղեցիների կառուցմանը, ասենք նաև, որ Ստավրոպոլի երկրամասի Գեորգիևսկ քաղաքում ևս, ուր բնակվում են 15 հազար հայեր, կառուցվում է Սուրբ Գևորգ հայկական եկեղեցին, որի հովիվն է Տ. Վարդան քհն. Հունանյանը, ով արդեն քանի տարի համառորեն իր ուժն ու կորովն է ներդնում հանուն եկեղեցու կառուցման: Տա Աստված, որ շատ շուտով վեր հառնի մեր հավատքի հերթական տունը, և հայ հավատավորն այնտեղ իր աղոթքն առաքի առ Բարձրյալը:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, օգոստոսի 31-ի երեկոյան, Կիսլովոդսկ քաղաքի հայ համայնքի կողմից կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին պետական պաշտոնատար անձինք, կրոնական գործիչներ, տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Պաշտոնական ճաշի ընթացքում փոխանակված խոսքերը հիմնականում նվիրված էին երկու ժողովուրդների, եկեղեցիների դարավոր բարեկամությանը, այդ հողում ամուր արմատներ գցած հայ ժողովրդի հետագա անելիքներին:

Գարեգին Ա Կաթողիկոսը ջերմորեն ողջունեց հայ եկեղեցական և մշակութային կյանքի վերազարթոնքը տարածաշրջանում:

### ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆՈՒՄՆ ԱՐՄԱՎԻՐ

Սեպտեմբերի 3-ին, վաղ առավոտյան, Նորին Սրբությունն իր շքախմբով մեկնեց Արմավիր: Քաղաքի մուտքի մոտ բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Արմավիրի քաղաքապետ Գեորգի Յուրևիչ

*Կորոլյովը, քաղաքային դումայի ներկայացուցիչ Վլադիմիր Նիկոլաևիչ Պավլուչենկովը, Մայկոպի և Արմավիրի միտրոպոլիտ Ֆիլարետը, տեղի Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները, Արմավիրի հայ համայնքի նախագահը, համայնքի ներկայացուցիչները, եկեղեցական խորհրդի անդամները, պաշտոնատար այլ անձինք, ազգայիններ:*

*Այստեղից հյուրերն առաջնորդվեցին դեպի քաղաքի Սուրբ Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցի, որը կառուցվել է 1846 թվականին: Հենց եկեղեցու մուտքի մոտ շքախմբին ավանդական աղ ու հացով դիմավորեց հավատացյալների հոծ բազմությունը, եկեղեցու վանահայր Տ. Ղևոնդ ավագ քհն. Աղաջանյանի գլխավորությամբ: Աղ ու հացի օրհնությունից հետո, Գարեգին Ա Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով մուտք գործեց հրաշակերտ տաճար և Ավագ խորանի առջև իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված:*

*Ապա հնչեցին բարեողջույնի ուղերձներ: Նախ ողջույնի իր խոսքն ասաց թեմակալ առաջնորդ Եզնիկ սրբազանը և այնուհետև եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Ղևոնդը: Որից հետո ներկա խուռներամ հավատացյալներին իր հայրապետական պատգամը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը.*

*«Գերաշնորհ Եզնիկ սրբազան՝ առաջնորդ Ռուսաստանի Հայոց Հարավային թեմի, սիրեցյալ հոգևոր եղբայրներ, հարգարժան պարոն քաղաքապետ, պետական իշխանությունների ներկայացուցիչներ, Ռուսական Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ և թանկագին, սիրեցյալ ժողովուրդ հայոց.*

*Առաջին անգամն է, որ շրթունքներս բացում եմ այս տաճարում և դեպի երկինք բարձրացնում իմ խոսքերը, որոնցով փառք եմ տալիս Աստծուն, խոնարհվում և ծունկի գալիս Նրա առջև և փառավորում Նրան, որ ինձ շնորհեց ձեզ հետ լինելու պահը, որ ձեզ հետ միասին աղոթեմ այս պատմական եկեղեցու կամարների ներքո: Իսկապես ես զգում եմ և ցանկանում եմ, որ բոլորդ էլ զգաք , թե պատմական մի օր ենք ապրում: Այսօր պատմության մեջ մի նոր էջ ենք ավելացնում, ինչպես ասաց ձեր առաջնորդ սրբազանը, առաջին անգամն է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, մեր հավատքի օջախից մի Ամենայն Հայոց Կաթողիկոս գալիս է հայկական անվամբ կնքված այս Արմավիր քաղաքը և տեսնում հավատքով լեցուն, հոգեկան ապրումներով եռուն այսպիսի մի ժողովուրդ:*

*Ես այսօր իսկապես ցանկանում եմ նախ շնորհավորել ձեր թեմին և անձամբ եմ ներկայացնում ձեր առաջնորդ նորաօծ եպիսկոպոս Տ. Եզնիկ Պետրոսյանին, որին ես եպիսկոպոսական օծում տվեցի անցնող հունիս ամսում, և տեսնում եմ աչքովս, որ մեր ժողովուրդը Ռուսաստանի այս օրհնյալ հողի վրա մի նոր զարթոնք է ապրում: Ինչպես ես չխոնարհվեմ Աստծու առջև, որ մեկ շաբաթվա ընթացքում շնորհ արեց մեզ՝ օծելու երեք հայկական եկեղեցիներ Հարավային Ռուսաստանի, այս հավատքով բերրի հողի վրա: Ո՞ր Կաթողիկոսն է ունեցել այս բախտը, որ մեկ շաբաթվա մեջ երեք նոր եկեղեցիներ օծվեն: Այսօր ես իմ շնորհակալության խոսքն եմ ուղղում Ռուս Ուղղափառ Եկեղեցու մեր քրիստոնյա եղբայրներին, քանզի Ֆիլարետ եպիսկոպոսը եկավ Արմավիր քաղաքի մուտքի մոտ և ինձ անձամբ դիմավորեց և իր ներկայացուցիչն է ուղարկել, որի միջոցով ես իմ*

եղբայրական սիրո ողջույնն եմ փոխանցում Ռուս Եկեղեցու Հոգևոր պետին և իմ թանկագին Հոգևոր եղբորը՝ Ալեքսիյ Բ Պատրիարքին: Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում նաև քաղաքապետին, քաղաքային իշխանություններին, պետական ներկայացուցիչներին և մյուս ազգայիններին, որոնք եկան և իրենց բարեկամությունը, սրտակցությունը հայտնեցին մեր տկար անձի միջից մեր մեծ ժողովրդին, ձեզ բոլորիդ: Ես նաև կուզենայի իմ գնահատանքը հայտնել քահանայից դասին և մեր թեմական խորհրդի, ծխական խորհրդի աշխարհիկ անձերին, որոնք զոհողությամբ հանձնառություն են ստանձնել, ժամանակ են տրամադրում, իրենց շահածից Եկեղեցուն և ազգին բաժին են հանում և իրենց ազգի նոր օրն են կերտում: Մենք նոր պատմություն ենք կերտում: Այլևս հին-հին օրերը հիշելով չմխիթարվենք: Մեկը եկել է Ալաշկերտից, մյուսը՝ Կարինից, մյուսը՝ Մուշից, սակայն մենք որտեղ էլ լինենք, մենք մեկ Հայրենիք և մեկ Եկեղեցի ունենք՝ մեր Հոգևոր Հայրենիքը: Մենք բոլորս էլ մեկ ենք, և նույնն է մեր մայրաքաղաքը, որ է Սուրբ Էջմիածինը, մեր Հոգևոր Հայրենիքի մայրաքաղաքը: Եվ դուք այստեղ այդ հավատարմության ոգին եք պահում, և ձեզանով եմ ես ուժեղանում ու զորանում:

Այսօր եկել եմ ձեզ ճանաչելու: Յուրաքանչյուր Հոգևոր Հովիվ առաջին հերթին պետք է ճանաչի իր հոտը:

Այսօր մեր ժողովուրդը ապրում է մի նոր դարաշրջան: Սիրելինե՛ր, եկեք խոնարհվենք Աստծո առջև և փառք տանք Նրան, որ այսօր մեր Հայրենիքը ազատ և անկախ է: Եվ մեր պարտքն է՝ գուրգուրել, պահել այդ Հայրենիքը:

Մենք այսօր պատրաստվում ենք տոնելու մեր Եկեղեցու 1700-ամյակը: Սակայն մի հպարտացեք միայն անցյալով: Ներկան ինչպես արժեցնենք, դրանով էլ կարժևորվի անցյալը: Եթե այսօր տկարանանք մեր հավատքի մեջ, ապա անցյալով չենք կարող փրկվել: Անցյալը կօգնի մեզ մեր ներկան հասկանալու համար, մեր ապագան տեսնելու համար, սակայն մենք պետք է ապրենք այսօրվա կյանքը վաղվա տեսլիքով, ապագայի զարգացման, առաջացման, բարգավաճման տեսիլքով: Այս է մեր նշանաբանը: Հետևաբար ես իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում բոլոր այն անձերին, որոնք ծառայել են այս Եկեղեցուն, օրհնում եմ նրանց հիշատակը, ովքեր այսօր չնայած կենդանի չեն երկրում, սակայն կենդանի են երկնքում, նրանք, ովքեր այս Եկեղեցին կենդանի պահեցին բազմաթիվ դժվար իրավիճակներում»:

Հավարտ իր պատգամի, Նորին Սուրբ Օծությունը եկեղեցուն նվիրեց Սուրբ Էջմիածնի պատկերով մի յուղաներկ նկար:

Հանդիսավոր արարողակարգն ավարտվեց Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով, իսկ վերջում տեղի ունեցավ աջահամբույր:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցուց Նորին Սրբությունն իր շքախմբով առաջնորդվեց Արմավիրի քաղաքապետարան, ուր տեղի ունեցավ պաշտոնական հանդիպում:

Բարի գալուստ մաղթելով, քաղաքապետ պարոն Գեորգի Կորոլյովը կարևորեց Նորին Սրբության այցը Արմավիր՝ այն համարելով պատմական և ոգեշինչ:

Խոսելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, միտրոպոլիտ Ֆիլարետն այս գործում յուրահատուկ տեղ հատկացրեց



ԱՐՄԱՎԻՐ. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՒՂՂՎՈՒՄ Է ԱՐՄԱՎԻՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ՝
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀՈԾ ԲԱԶՄՈՒԹՅԱՄԲ



«ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ ԱՐՄԱՎԻՐԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

*քույր Եկեղեցիներին, որ իրենց հավատավոր ժողովուրդներին բոլոր ժամանակներում էլ առաջնորդել են ճշմարիտ հավատքի ուղով:*

*Շնորհակալություն հայտնելով ջերմ և սիրալիր ընդունելության համար, Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ այսուհետ ևս ամեն ինչ կարվի՝ բարեկամության ամրապնդման և երկու ժողովուրդների բարօրության համար: Վերջում երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ:*

### *ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԿՈՒՐԳԱՆԻՆՍԿ ՔԱՂԱՔ*

*Օրվա երկրորդ կեսին, տեղական ժամանակով ժամը 15.00-ին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով ժամանեց Կրասնոդարի երկրամասի Կուրգանինսկ քաղաք, որտեղ առավոտյան արդեն, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպսկ. Չուլջյանի, օծվել էր Սուրբ Նիկողայոս եկեղեցին:*

*Ասենք նաև, որ եկեղեցու շուրջ կառուցվում է մի մեծ համալիր՝ իր դպրոցով, խաղահրապարակով, հանգստի գոտիով և մշակութային կենտրոնով: Շինարարական աշխատանքներն ընթանում են բարերար Լեոնիդ Ծատուրյանի նվիրյալ ջանքերով և նյութական միջոցների հատկացումով:*

*Եկեղեցու բակում Հայոց Հայրապետին դիմավորեց հավատացյալների խուռներամ բազմությունը՝ բարերար պրն. Ծատուրյանի գլխավորությամբ, և շարականների երգեցողությամբ առաջնորդեց դեպի տաճար: Դիմավորողների թվում էին նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, թեմական խորհրդի անդամներ:*

*Նորին Սրբությունը «Հարշափառ»-ով և թափորի ուղեկցությամբ մուտք գործեց եկեղեցի և առաջնորդվեց դեպի Ավագ Խորան: Ապա թեմակալ առաջնորդ Եզնիկ սրբազանի բարեողջույնի խոսքից հետո, ներկա հավատավոր ժողովրդին իր հայրապետական պատգամը տվեց Գարեգին Ա Կաթողիկոսը: Գնահատելով կատարված աշխատանքը, Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ այն չի մնա լոկ շենք, այլ կվերածվի հավատքի իսկական օջախի, ուր ամեն մի քրիստոնյա հայ կգա իր նախնիների շունչը, հավատարմորեն կպահի քրիստոսավանդ պատվիրանները:*

*«Սիրելի առաջնորդ սրբազան Տ. Եզնիկ եպիսկոպոս, սիրեցյալ հոգևոր եղբայրներ, հարգարժան եկեղեցական խորհրդի անդամներ, թանկագին հայորդիներ և մեծարգո բարերար պրն. Ծատուրյան.*

*Ես հավատում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրի կենսագրության մեջ այս օրը պետք է լինի անջնջելի, միշտ հիշելի և ձեր կյանքի ուրիշ օրերում խմոր դառնալիք մի օր, ներշնչման մի օր: Այս օրը եզակի է, իր տեսակի մեջ առանձնահատուկ մի օր է, որ պետք է ցորենի պես աճի: Ինչպես ցորենն է հասկ տալիս, նույնպես և այս օրը ցորենահատիկ է, որ Աստված սերմանեց մեր՝ եկեղեցականներիս, բարերարների և ժողովրդի ձեռքերով: Մենք գործիքներ ենք Աստծու ձեռքում: Տասը տարի առաջ ձեզանից ո՞ր մեկը կարող էր երևակայել, որ այսօր այստեղ եկեղեցի կկառուցվի: Զգիտեմ, որտեղից եք գալիս. տարբեր երկրներից, բայց կյանքը մենք չէ, որ որոշելու*

*ենք, այլ՝ Աստված: Մենք միայն զգայուն պետք է լինենք, հաղորդ, գիտակից Աստծու հետ, որպեսզի իմանանք, թե ինչ կցանկանա: Ես հավատում եմ, որ Նա կցանկանա, որ ոչ մի տեղ ոչ մի հայ համայնք չմնա առանց հայկական եկեղեցու: Նա երկնքից եկավ, մեզ նման մարդ եղավ, սեր քարոզեց, չարչարվեց, խաչվեց մեր բոլորի փրկության համար, մեր բոլորի մնայուն, շարունակական, վավերական երջանկության համար: Եվ Նա, որ Աստված է, եղավ և մարդ: Մենք այսօր պարտավոր ենք լսելու Նրա ձայնը, կատարելու Նրա կամքը, քայլելու Նրա ուղենշած ուղիով, Ավետարանի ճանապարհով և մեր հայրերի ցույց տված ուղղությամբ: Ես այնպես եմ զգում, որ այսօր այս եկեղեցին ձեր բոլորի կյանքի մեջ է, մասնավորաբար այս համայնքի կյանքի մեջ, որն էլ պետք է դառնա վերանորոգության, վերաշխուժացման, վերստին բյուրեղացման, հոգեկան մաքրության, հայացման մի օր, և դրա համար ես ցանկանում եմ այսօր ձեզ բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունները և Նրա խորհուրդը: Էջմիածինը նախ Աստծու Հայաստան այցելության խորհուրդն է: Երկրորդ՝ Էջմիածինը վկայություն է, խոսքը 1700 տարիների: Էջմիածինը նաև առաքելություն է, գործունեություն:*

*Լճացած ջուրը իմաստ չունի, սակայն երբ այն հոսանքի վերածվի, հողի մեջ խառնվի, բույսերին կյանք կտա: Հետևաբար, լճացած ջրի նման չպետք է ձեր կյանքը վարեք, այլ պետք է այս փոքրիկ երեխաներին, որոնցից շատերն այստեղ են, նրանց հայերեն սովորեցնեք, մեր գրականությունը, շարականները և այլն: Եկեղեցի միայն երբեմն գալով, մկրտություն կամ պսակ կատարելով և 'կամ, Աստված հեռու տանի ձեր տներից, մահվան պատճառով հոգեհանգիստ կատարելով չէ միայն սահմանափակվում ձեր եկեղեցասիրությունը: Այլ Եկեղեցին մասնակցություն է, և դուք այդ մասնակցությունը պետք է դրսևորեք եկեղեցի հաճախելով, աղոթելով: Այս եկեղեցին թող լինի մանրանկարը Սուրբ Էջմիածնի, այնտեղի լույսը թող այստեղ լուսավորի և առավել ևս լուսավորի մեր ժողովրդի զավակներին: Այս առիթով ես իմ անհուն ուրախությունն եմ հայտնում անձնապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մեր միաբաններին, մեր Գերագույն Հոգևոր Խորհրդին, մեկ խոսքով մեր ամբողջ Եկեղեցուն, քանզի այսօր մի նոր ծառ տնկվեց հայոց հոգևոր այգում, և այդ ծառի անունը Սուրբ Նիկողայոս է:*

*Սրանից երկու օր առաջ Կիսլովոդսկում Սուրբ Վարդան անունով մեկ ուրիշ ծառ ծաղկեց, վաղը՝ Կրասնոդարում Սուրբ Հովհաննես անվամբ մի նոր ծառ, և այսպես շարունակական ծառեր դեռևս պետք է տնկվեն: Եթե երբեք այդ ծառերին ջուր տվող չլինի, դրանց պտուղը ոչ ոք չի կարող վայելել: Մեր հավատացյալները պետք է այնպես կապված զգան այս եկեղեցուն, որ կիրակի օրը երբ գա, չասեն, թե գործեր ունենք, չենք կարող գնալ, այլ ասեն, որ գնանք եկեղեցի և ապա զբաղվենք մեր գործերով:*

*Ես ցանկանում եմ շնորհավորել ձեր առաջնորդ Տ. Եզնիկ սրբազանին, որ մեծ ժրաջանությամբ աշխատում է, և ահավասիկ նորանոր եկեղեցիներ ձեր բոլորի գործակցությամբ, բարերարների աջակցությամբ նա ընծայում է մեր ժողովրդին:*

*Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում նաև մեր բարերարին՝ պրն. Ծատուրյանին, տիկին Ծատուրյանին և նրանց ընտանիքի անդամներին, որովհետև տեսա իրեն Էջմիածնում, տեսա նրա միջի կրակը, սերը, կապվածությունը եկեղեցուն: Եվ այսօր, տղաս, քո ազգի պատմության մեջ պետք է արձանագրվի նաև քո անունը, որովհետև այս շրջանում դու այնպիսի մի գործ կատարեցիր, որը ոչ թե միայն թղթի վրա է գրվելու, այլ*

այս երեխաների սրտերում, և այդ գիրը չի ջնջվի, այդ գիրը ոչինչ բան անկարող է ջնջել: Ես այսօր աղոթում եմ Աստծուն, որ բազմապատիկ վարձահատույց լինի Ձեզ:

Շնորհավորում եմ բոլորիդ անխտիր, ցանկանում եմ, որ Աստված առավել շատ այսպիսի օրեր պարգևի մեր ազգին:

Աստված բոլորիդ պահի, պահպանի և օրհնի. ամեն»:

«Տերունական աղոթք»-ի երգեցողությունից հետո բոլոր ներկաներն արժանացան Վեհափառ Հոր աջահամբույրին:

Ապա Հայոց Հայրապետը հուշանվերներ հանձնեց նորաօծ Ս. Նիկողայոս եկեղեցուն, իսկ վերջում դիտեց տեղանքը, մոտիկից ծանոթացավ համալիրում կատարվող շինարարական աշխատանքներին:

## ԺԱՄԱՆՈՒՄ ԿՐԱՍՆՈԴԱՐ, ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Կուրգանինսկ քաղաքից Գարեգին Ա Կաթողիկոսն իր շքախմբով մեկնեց Կրասնոդար:

Երեկոյան ժամը 18.00-ին բարձրաստիճան հյուրերը ժամանեցին քաղաքի կենտրոնում կառուցված Սուրբ Հովհաննես Ավետարանիչ հայկական նորակառույց եկեղեցի: Բակում Վեհափառ Հորը և նրան ուղեկցողներին դիմավորեցին Կրասնոդարի քաղաքապետի առաջին տեղակալ Սերգեյ Կորշնևը, պետական պաշտոնատար այլ այրեր, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Կրասնոդարի և Նովոռոսիյսկի թեմի առաջնորդ Իսիդոր արքեպիսկոպոսն իր շքախմբով, եկեղեցու բարերար Նաիրի Հովհաննիսյանը, ինչպես նաև մեծաթիվ հավատավոր հայորդիներ:

Հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»-ով մուտք գործելով եկեղեցի, Նորին Սրբությունը կանոնական աղոթք առաքեց առ Աստված: Ապա Ամենայն Հայոց Հայրապետի ժամանման ուրախ առիթով ողջույնի խոսքեր ասացին Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանը, փոխքաղաքապետ պրն. Կորշնևը, Կրասնոդարի և Նովոռոսիյսկի ռուսաց թեմի առաջնորդ Իսիդոր արքեպիսկոպոսը:

Ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ իր խոսքում առանձնակի ասելով.

«Լսելն ուրիշ բան է, տեսնելը՝ ուրիշ: Եվ ես այսօր ուրախ եմ, որ ճանաչեցի ձեզ: Ես տարբեր թեմեր այցելեցի՝ Մոսկվա, Վրաստան և նաև արտասահման, բայց առաջին անգամն է, որ այցելում եմ այս թեմ: Այս շրջանի եկեղեցիները Մեր որոշումով առանձին թեմի վերածվեցին, և այս թեմի առաջնորդ նշանակվեց Տ. Եզնիկ սրբազանը: Ես այսօր տեսնում եմ այն նոր շունչը, որ տարածվում է մեր ժողովրդի կյանքում և մասնավորաբար՝ այստեղ, Հարավային Ռուսաստանի տարածքում:

Այս նոր կյանքի ծառայողներն ենք մենք՝ Հանրապետության նախագահից սկսյալ մինչև ամենապարզ հայը: Մեր ժողովուրդը, առանց ինքնագովության, եղել է կառուցող ժողովուրդ իր ամբողջ կյանքի ընթացքում: Մի մեծ հայագետ գիրք է գրել Բյուզանդիոնի պատմության մասին, որում հայերի վերաբերյալ ասում է «կառուցողների ազգ»: Հայը այս օրհնյալ հողի վրա միայն կբերի իր դրական, շինարար բաժինը ռուսական հայրենիքի ծաղկման համար: Թող մեկը պատմության մեջ կարողանա ասել,

*թե Հայը երբևէ դպրոց է քանդել, եկեղեցի և կամ քաղաք: Ուրիշները քանդել են, սակայն մենք կառուցել ենք. և դա է մեր կյանքի սկզբունքը:*

*Սիրելի պարոն փոխքաղաքապետ, այս շրջանում բազմաթիվ ազգություններ են ապրում, բայց Հայերից միայն բարին սպասեք: Քրիստոնեական հավատքը մեր ռուս եղբայրների հետ միասին ենք պաշտում: Նաև Հարավային Ռուսաստանում մեր ժողովրդի պատիվը բարձր պահենք ռուս ազգի հետ միասին: Ահա այդ գեղեցիկ գործերից մեկն է Կրասնոդարի մեջ այս Սուրբ Հովհաննես Ավետարանիչի անվամբ եկեղեցու կառուցումը: Վաղը մենք այս եկեղեցու օծումը պետք է կատարենք, և ես իմ գնահատանքը պետք է հայտնեմ այն բոլոր անձերին, ովքեր մաս ունեն այս գործում: Ապրե՛ք և վստահ եղեք, հազար կապրեք, եթե այսպես ապրեք:*

*Եկեղեցուն, մշակույթին և դպրոցին ծառայելով կարող եք մեծանալ, բարձրանալ: Ասացեք ինձ, ի՞նչ բանի արժեք կտաք, և ես կասեմ, թե ո՛վ եք դուք: Հետևաբար գիտցեք և ճանաչեք ձեզ: Ապրել եք ձեր հավատով, ձեր եկեղեցիով, ձեր գրով, մշակույթով և առաջ գնացեք դեպի անմահություն այդ ճանապարհով:*

*Իմ ողջույններն եմ հղում Ալեքսիյ Բ Պատրիարքին, Նախագահին՝ պարոն Ելցինին:*

*Երեկը, այսօրը և վաղը գրեք ձեր կյանքի գրքույկում: Դրանք պատմական օրեր են: Հետագայում այդ մասին պատմեք ձեր զավակներին: Եվ այսպես մեր պատմությունը կերտելով պետք է այն զարգացնենք: Աստված օրհնի ձեզ բոլորիդ»:*

*Հանդիսավոր արարողությունն ավարտվեց Նորին Սրբության «Պահպանիչ»-ով:*

*Երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, եկեղեցու բարերար Նաիրի Հովհաննիսյանի կողմից տրվեց պաշտոնական ընթրիք, որին մասնակցում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգևորականներ, տեղական իշխանությունների և հայկական համայնքի ներկայացուցիչներ:*

## *ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ*

*Առավոտյան ժամը 10.30-ին «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ թափորն առաջնորդվեց դեպի նորակառույց եկեղեցի:*

*Հանդիսավոր արարողությանը ներկա էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Կրասնոդարի և Նովոռոսիյսկի թեմի առաջնորդ Իսիդոր արքեպիսկոպոսն իր շքախմբով, Հայ Եկեղեցու այդ տարածաշրջանի հոգևոր հովիվները, սարկավագաց և դպրաց դասերը, բարձրաստիճան պաշտոնյաներ, մեծաթիվ հավատավոր հայորդիներ:*

*Նախ կատարվեց Դռնբացեքի գեղեցիկ ու խորախորհուրդ արարողությունը: Հանդիսավորությամբ բացելով տաճարի դուռը, Նորին Սրբությունն օծեց Խորանը կենտրոնով և չորս անկյուններով, իսկ սյուներն ու մյուս անկյուններն օծեցին Տ. Գրիգորիս արքեպսկ. Բունիաթյանը և թեմակալ առաջնորդ Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանը:*

*Ապա նորաօծ եկեղեցում, ձեռամբ Տ. Եզնիկ եպսկ. Պետրոսյանի, մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը, որի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը.*



ԿԻՍԼՈՎՈԴՍԿԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՆՈՐԱՕԾ ԵԿԵՂԵՑԻՆ



ԿՐԱՍՆՈԴԱՐԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ՝
ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

«Եկեղեցին Քրիստոս Ինքը հիմնած է և ոչ թե մենք, որ գայն կառուցած ենք: Մենք եկեղեցվո մարմինն է, որ կկառուցենք: Ինչպես մեր մարմինը իմաստ չունի առանց հոգիի, այնպես էլ եկեղեցին իմաստ չունի առանց Սուրբ Հոգու ներգործության, առանց Աստծու և մեր հաղորդության: Եկեղեցին միջոցն է, որ երկինքը երկրին կկապե և, ինչպես ըսված է գեղեցիկ բանաստեղծական իմաստով, եկեղեցին համբույրն է Աստծուն և մարդուն: Եկեղեցին միացումն է Աստծուն և մարդուն: Եվ ըստ այդմ պետք է մենք կերպարանափոխվենք, որպեսզի արժանի լինենք մեր Արարչին:

Ժայռը, որի վրա հիմնվել է Հայոց եկեղեցին Աստծու օրհնությամբ, մեր հայրերի հավատքի զորությամբ, Սուրբ Գրիգոր Լուսավորչից և նույնիսկ Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալներից սկսյալ, այդ եկեղեցին մեր հավատքի ժայռի վրա է շինված: Վստահ եմ, որ դուք Հայոց պատմությունը լավ եք իմանում: Քանի՜-քանի՜ հազարավոր գեղեցիկ տաճարներ սրա նման կանգնեցվեցին և, սակայն, ապազգային կործանվեցին մեր թշնամիների կողմից: Ո՞ւր է Մշո Սուրբ Կարապետ եկեղեցին այսօր, ո՞ւր է Նարեկավանքը այսօր, Աղթամարի եկեղեցին ավերակված է, Անիի հազար ու մեկ եկեղեցիները լուռ, անձայն քարերի են վերածվել: Շատերը խորտակվել, որոնները փոշու են վերածվել:

Քարը կգա ու կգնա: Քարը քար կլինի և կարող է նաև փոշու վերածվել, սակայն այն եկեղեցին, որ չի տեսնվում, մեր մեջ է, մեր սրտերում, մեր հոգիներում, մեր հավատքն՝ է, Ավետարանի ներկայությունը, ներգործությունը՝ մեր հայրերի կտակով մեզի փոխանցված: Եթե չպիտի ապրենք իբրև քրիստոնյա, այս եկեղեցին ի՞նչ իմաստ ունի: Հիսուսի խոսքերն իմանալով և դրանք մեր կյանքում գործադրելով, եկեղեցին կկենդանանա, կկանաչի, կպտղավորվի, արդյունք կտա մեր կյանքում: Այս է եկեղեցու խորհուրդը: Մենք մի մեծ բանաստեղծ ունենք, որ ասում է.

*Եկեղեցին հայկական մեն մի քարին տակ գետնի*
*Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի:*

Մեր թշնամիները մեր ճամփաները գտան և խոչընդոտեցին, արգելակեցին, սակայն չկարողացան այդ գաղտնի ճամփան գտնել, որ մեր հոգիներում էր՝ անքաժան, անխախտ և անսասան: Դա մեր հավատքն է:

Ո՛չ խորհրդային իշխանության 70 տարիները և ո՛չ էլ Թուրքի 600-700 տարիների բռնակալությունը չկարողացան այդ ներքին եկեղեցին քանդել: Երբ կա այդ եկեղեցին, այն մարմին կտա քարին, քարի տեղ նոր եկեղեցի կշինվի, կործանվածի տեղը նորը կկանգնի, պայմանով, որ մեր մեջ չխորտակվի, չտկարանա ներքին հավատքի այդ եկեղեցին, որ Քրիստոսի վրա է հիմնված, Ավետարանով է ներշնչված և մեր հայրերի արյունով, կտակով, իրենց դարերի տառապանքով մեզ փոխանցված Սուրբ եկեղեցին:

Այս վերջին երկուսուկես տարիներին, երբ ես Հայաստանում եմ ապրում և հաճախ շրջագայում Հայաստանի մեր թեմերում, տեսնում եմ հին-հին եկեղեցիներ, որոնք կիսավերակ վիճակի մեջ են: Եթե 5-րդ դարի, 7-րդ դարի, 10-րդ դարի և այլ դարերի մեր հայրերը 1500 տարիներ առաջ այսպիսի փառավոր եկեղեցիներ կարող էին կառուցել առանց էլեկտրական էներգիայի, առանց տեխնոլոգիական այլ միջոցների, որ մենք հիմա ունենք, ինչո՞ւ մենք էլ չենք կարող անել: Նրանք քարերն իրենց մատներով բարձրացրին, գմբեթի վրա դրին, ո՛չ «Կռունկ» մեքենա կար, ո՛չ էլ ուրիշ միջոցներ կային: Եթե իրենք կարող էին շինել, մենք ինչո՞ւ չենք կարող

նորոգել, ի՞նչն է պակասում մեզ: Ասեմ ձեզ՝ Հավատքը: Հավատքը երբ թուլանա մեր մեջ, եկեղեցին իր իմաստից կպարպվի, կդատարկվի: Ի՞նչ կլինի կյանքը, գիտե՞ք՝ «կեր, արբ և ուրախ լեր»:

Մարդու վրա կա Աստուծո կնիքը: Աստված Իր շունչը փչեց մարդու մեջ, և մարդը Աստծու նման էակ եղավ: Եվ մենք պետք է արժեցնենք Աստծու պատկերը մեր մեջ՝ Եկեղեցուն կապված լինելով: Դրանով մենք փրկվեցինք պատմության ընթացքում: Այսօր եկեք մենք մի փոքր լայն բացենք մեր մտքի հորիզոնը: Քանի՜-քանի՜ թագավորություններ ունեինք, ուր եկան ու գնացին՝ Երվանդյան, Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Կիլիկյան: Սակայն Եկեղեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով բոլոր տեսակի հարվածներին տոկաց: Ոչ ոք կարող է Աստծուն հարվածել: Ինքնասպան կլինի այդ անձը: Խորհրդային կարգերը ուզեցին Աստծուն հեռացնել մարդկանց կյանքից, սակայն չհաջողեցին, և ոչ ոք էլ չի հաջողելու: Աստծուց ստեղծվածը ինչպե՞ս կարող է իր Արարչին դեմ ելնել՝ Գերագույն Աստծուն, Ամենակարող Աստծուն, Ամենաբարի Աստծուն: Մեր կյանքը պետք է լինի Աստծու կամքին համաձայն ապրված մի կյանք, որպեսզի այս Եկեղեցին տոկա, շնչի, ներշնչումի, մեր երեխաների համար զորացման, մարդկային դաստիարակության, կրոնական, ազգային կազմավորման մի դպրոց լինի:

Այս բեմից քարոզներ կտրվեն, Աստծու խոսքը պիտի թարգմանվի, այստեղ պետք է գաք, Աստծու շնորհքը պետք է ստանաք Սուրբ Խորհուրդների միջոցով: Այստեղ պիտի գաք երիտասարդներդ, ձեր գլուխները, ձեր ձեռքերը իրար պետք է կապեք սուրբ ամուսնությամբ և ընտանիքներ պետք է կազմեք: Այդ բոլորի մեջ Եկեղեցին է սիրտը մեր հայության կյանքի: Ես ցանկանում եմ, որ այդ սիրտը կենդանի պահեք, և այսօրվա այս օծումը չլինի այս տուֆ քարին կամ այս պատին կամ սյունին, այլ լինի ձեր հոգեկան օծումը, լինի ձեր հոգուն այցելությունը Աստծու կողմից: Այսօր Աստված է ձեզ այցելում մեր հայրերի, մեր Եկեղեցու միջոցով: Փոխվեցե՛ք, քա՛ջ եղեք փոխվելու մեջ դեպի լավը:

Ի՜նչ գեղեցիկ մի խոսք կա մեր Եկեղեցու աղոթքների մեջ.

Ի խաւարէ ի լոյս, յապականութենէ յանապականութիւն,
յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան:

Մեկը խավարից լույսին է դառնում, անգիտությունից դեպի ճշմարտության իմացումը: Այս է իրական դարձը, ճշմարիտ քրիստոնեությունը:

Սիրելի եղբայրներ և քույրեր.

Այսօր ձեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը անցնում է մի նոր դարաշրջանի ճանապարհով: Այլևս բոլորդ էլ զգալու եք, որ ձեր հոգևոր տունը պատմական տուն չէ միայն, սրբական տուն չէ միայն: Այն այսօր իր ժողովրդի համար ծառայող, մատաղ եղող կենտրոն է՝ իր միաբանությամբ և աշակերտներով: Ես ուզում եմ, որ դուք կապված մնաք այդ կենտրոնին, ինչպես մեկը չի կարող անջատվել իր ծննդավայրից: Ես երբեք չեմ կարող մոռանալ այն գյուղը, որտեղ ծնվել եմ: Հազար ու հազար տաճարներ եմ տեսել աշխարհի չորս կողմերում, բայց իմ գյուղի փոքրիկ եկեղեցու ավազանը, որի մեջ մկրտվել եմ, այդ ավազանը իմ մեջ է մնացել: Այդպես էլ Սուրբ Էջմիածինը մեր ազգի քրիստոնեական ծննդավայրն է: Իբրև քրիստոնյա ազգ, ուր էլ գնանք, ինչ էլ լինենք, մենք չենք կարող Էջմիածնով չապրել մեր հոգու մեջ:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Այսօր եկել եմ ձեզ այդ նույն շունչը բերելու ազատ ու անկախ Հանրապետությունից, որտեղ Մայր Աթոռը գործում է ամբողջական ազատությամբ: Մարդու պետք ունենք, որ կարողանան ուսում առնել կրոնական, աստվածաբանական, Սուրբ Գրական, Հայագիտական և ապա գնան մեր ժողովրդին լուսավորելու:*

*Ես այսօր ձեր քաղաքապետարանում տեսնվելու եմ պետական անձանց հետ, վաղը՝ նահանգապետի հետ: Ես իրենց ասելու եմ՝ լավ հոգ տարեք մեր հայ ժողովրդին, մեր հայ ժողովուրդը արժանի է հոգածության, որովհետև նրա ձեռքից միայն ու միայն բարիք դուրս կգա: Դուք պիտի իմ խոսքին ուժ տաք ձեր կյանքով և ձեր գործով: Ես այսօր իմ խոսքը փակելուց առաջ շնորհավորում եմ ձեր առաջնորդ սրբազանին՝ Տ. Եզնիկ եպիսկոպոսին, որ շատ վաստակ ունի, քրտինք ունի այս եկեղեցիների նորոգման, նոր եկեղեցիների կառուցման և թե համայնքային եկեղեցական կյանքի կազմավորման, համայնքների մեջ քահանաների ներկայության ապահովման համար և այլ բազմաթիվ գրական աշխատություններով:*

*Ես գնահատում եմ այս թեմում գործող բոլոր կամավոր ծառայողներին, քահանա հայրերին, թեմական և ծխական խորհուրդներին, որոնք սիրով ընդառաջում են և գալիս են ու իրենց ծառայությունն են ընծայում՝ առանց վարձատրության: Երկու տեսակ աշխատանք կա. դերձակը հագուստ է կարում, որպեսզի իր ընտանիքի ապրուստը հոգա, սակայն մի երգչախմբի անդամ կամ մի սարկավագ եկեղեցում ծառայում է սիրո համար, ոչ թե վարձատրության: Այդ կամավոր ծառայությունն է, որ պետք է զորանա մեր մեջ:*

*Այսօր ես ցանկանում եմ իմ հատուկ և բարձր գնահատականը տալ մեր հայ ազգի ամենաարժանի և ընտիր զավակներից մեկին՝ պարոն Նաիրի Հովհաննիսյանին, այս եկեղեցու բարերարին, և ձեր բոլորի ներկայությամբ ասում եմ, իրեն և իր նման բոլոր այն անձերին, ովքեր բարերարության հոգի ունեն: Այդ բարերարության հոգին ի՞նչ է նշանակում. քո անձի և քո ընտանիքի համար քո շահածից բաժին ես հանում քո մեծ ընտանիքին՝ քո ազգին, Եկեղեցուն, մշակույթին և դրանով անմահանում: Ինչ որ կտաս քեզանից վեր եղող բանին, դա է, որ կանմահանա: Այս է բարերարության իմաստը:*

*Ո՞վ կարող է մոռանալ այն վարպետներին, ճարտարապետներին, բարերարներին, իշխաններին, իշխանուհիներին, թագավորներին, ովքեր մեր եկեղեցիները կառուցեցին Սուրբ Էջմիածնից սկսած, մինչև այսօրվա այս սուրբ եկեղեցին՝ Սուրբ Հովհաննես Ավետարանչի անունով մկրտված: Ես ցանկանում եմ, որ հավատքի կենդանությունը ներգործի ձեզ վրա: Այսօր պարոն Հովհաննիսյանը իր բաժինը բերեց, ինչքան որ կարող էր բերել, և ունեցանք եկեղեցի: Սակայն ձեզանից ամեն մեկը իր բաժինը պիտի բերի՝ գալով, ներկա գտնվելով, շարականներ երգելով, քարոզ լսելով: Ձեր երեխաներին մկրտեցեք, սովորեցրեք Եկեղեցու կարգ ու կանոնը, աղոթքները:*

*Ես աղոթում եմ, որ ամեն մեկը իր բաժինը բերի: Այսօր, հանձին պարոն Նաիրի Հովհաննիսյանի, ես գնահատում եմ բոլոր բարերարներին և մաղթում իրեն լիառատ և շարունակական հարաճուն հաջողություն, ընտանիքի անդամներին երջանկություն: Աստվածահաճո գործ արեցիք, և ձեր անունը արձանագրվեց Հայոց պատմության տարեգրության մեջ: Աստված ձեզ օրհնի, զորացնի առողջության, հաջողության և երջանկության բարիքներով»:*

Հավարտ իր խոսքի Նորին Սուրբ Օծությունը եկեղեցուն նվիրեց Սուրբ Էջմիածնից բերված մի սկիհ:

Նույն օրը եկեղեցում կատարվեց նաև անդրանիկ մկրտությունը. բարերարի նորածին մանկան այս մկրտությունն օրհնվեց Նորին Սրբության կողմից:

## ՄԱՂԿԵՊՍԱԿԻ ՁԵՏԵՂՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԿՈԹՈՂԻՆ

Օրվա երկրորդ կեսին, ժամը 16.00-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, Կրասնոդարի փոխքաղաքապետ պարոն Կորշնևի, պետական բարձրաստիճան այրերի ուղեկցությամբ այցելեց և ծաղկեպսակ վետեղեց անհայտ զինվորի, Մեծ Հայրենականում, ինչպես նաև Չեչնիայում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին: Վերջում կատարվեց նաև հոգեհանգստյան կարգ՝ զոհվածների հոգիների խաղաղության համար:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՇԵՆՔ

Հուշահամալիրից բարձրաստիճան հյուրերը մեկնեցին քաղաքապետարանի և քաղաքային դումայի շենք, ուր 16.30-ին Նորին Սրբությանն ընդունեց փոխքաղաքապետ պարոն Կորշնևը:

Ողջունելով Հայոց Հայրապետին, փոխքաղաքապետն ուրախություն հայտնեց հանդիպման համար՝ հույս հայտնելով, որ Նորին Սրբության այցն իր բարերար ազդեցությունը կթողնի երկու ժողովուրդների բարեկամության առավել սերտացման գործընթացի վրա:

Շնորհակալություն հայտնելով պարոն Կորշնևին ջերմ ու սիրալիր ընդունելության համար, Նորին Սրբությունը կարևորեց երկու ժողովուրդների եղբայրական ու բարեկամական հարաբերությունների անհրաժեշտությունը բոլոր ժամանակներում, անդրադարձավ հայ և ռուս ժողովուրդների, երկու եղբայր պետությունների և քույր Եկեղեցիների վերապարթոնքին:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՃԵՊԱԶՐՈՒՅՑԸ

Պաշտոնական հանդիպումից անմիջապես հետո, հենց նույն սրահում տեղի ունեցավ ճեպազրույց, որին ներկա էին տարածաշրջանի հեռուստատեսության, ռադիոյի, ինչպես նաև լրատվական գրեթե բոլոր ծառայությունների ներկայացուցիչները:

Առաջադրված հարցերին, որ առնչվում էին քույր Եկեղեցիների, պետությունների և ժողովուրդների փոխհարաբերություններին, նորանկախացյալ երկրների առջև ծառացած խնդիրներին, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, ինչպես նաև Եկեղեցիների համեղբայրությանը, Ամենայն Հայոց Հայրապետը տվեց հանգամանալից ու սպառիչ պատասխաններ:



ԱՂՈՒՀԱՑՈՎ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ
ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ

*Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Նորին Սրբության, հայկական համայնքի կողմից տրվեց պաշտոնական ճաշ, որին մասնակցում էր շուրջ 300 մարդ: Ներկաների թվում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բարերարներ, տարբեր քաղաքներից՝ Սոչիից, Տուապսեից, Կուրգանինսկից, Արմավիրից և այլ քաղաքներից ժամանած հայկական համայնքի ներկայացուցիչներ:*

*Պաշտոնական ուղերձների փոխանակումից հետո, ներկաներին իր հայրական պատգամը տվեց Նորին Սրբությունը՝ ի մասնավորի ասելով.*

*«Երբ վաղը վերադառնամ Սուրբ Էջմիածին, այնտեղ պիտի վկայեմ, պիտի ասեմ, որ այն հայությունը, որ ես տեսա Հարավային Ռուսաստանում, թեև աշխարհագրականորեն հեռու է Հայաստանից, բայց հոգով Հայաստանում է ապրում: Ապրում է նաև Սուրբ Էջմիածնի շնչով:*

*Ես տեսա Ռուս Ուղղափառ Եկեղեցու ծաղկումը, Ռուսաստանի բոլոր շրջաններում, թե՛ Մոսկվայում և թե՛ այստեղ, տեսա ռուս ժողովրդի վերազարթոնքը: Տեսնում եմ նաև իմ հայ ժողովրդի վերազարթոնքը: Ես, որ ո՛չ Հայաստանում եմ ծնվել և ո՛չ էլ մեծացել Հայաստանում, կյանքիս 65 տարիներից 63-ը անցկացրել եմ արտասահմանում, սակայն Հայրենիքը ծնվեց իմ մեջ այն օրից, երբ Հեռավոր Սիրիայում ես Ա, Բ, Գ, Դ-ն սովորեցի և Հայոց Եկեղեցու շարականները երգեցի: Հայաստանը իմ մեջ ծնվեց և մնաց ու ինձ ապրեցրեց: Ես այն երեք նորաօծ եկեղեցիները, որ մեկ շաբաթվա ընթացքում օծվեցին, համարում եմ Աստծու ժպիտը մեզ վրա, Աստծու աչքը, Աստծու Աջը, Աստծու օրհնությունը և մեր հավատարմության դրսևորումն Աստծուն:*

*Այստեղ ես ուզում եմ մեկ մտածում ևս փոխանցել իմ սիրելի եղբայրներին և քույրերին: Այս օրերին շատ խոսեցինք, և չենք կարող չխոսել, քանի որ խոսքը կյանքի արտահայտությունն է, և ես երեք իմաստներով ուզում եմ բացատրել այն:*

*Առաջին. խոսքը բառն է, որ մեր շրթունքներից հնչում է՝ մեր մտքից և սրտից գալով, երբ մեր ինքնության բնական արտահայտությունն է և ոչ թե մի վարագույր, որ վարագուրում է մեր անձը: Այդ խոսքը ճշմարիտ և վավերական խոսք է: Խոսք կա, որ մեզ անձնապես է դրսևորում, արտահայտում, խոսք էլ կա, որ մեզ ծածկում է: Ո՞րն է ճշմարիտ խոսքը: Անշուշտ այն, որ ինքզինքն է արտահայտում: Մարդ կա, որ հազար խոսք է ասում՝ բան չասելու համար, և մարդ էլ կա՝ մի խոսք է ասում՝ ամեն ինչ ասելու համար: Խոսքը արժեք ունի, երբ հարազատ, մաքուր ապրումի բնական արտահայտությունն է, ինչպես ջուրը, երբ բխում է աղբյուրից:*

*Երկրորդ. խոսքը գիրն է, գրով արտահայտված: Այսօր Սուրբ Մեսրոպ Մաշտոցը չկա, որ ձայնը լսենք, սակայն գիրը կա, գիրը կկարդանք և ճշմարտությունը կճանաչենք: Մի խոսքով, գիրը խոսքի մնայուն արտահայտությունն է:*

*Երրորդ և վերջին խոսքը գործն է. գործով մի այնպիսի արժեք ստեղծել, որ մնա, ապրի երկար: Այդ դեպքում այդ գործը կխոսի առանց բառի և գրի: Քարերը խոսում են Հայաստանում: Բայց ո՞ր քարերը: Այն քարերը, որոնք մեր հայրերի ձեռքի, տաղանդի, մտքի արտահայտություններն են: Քարերը խոսում են, երբ մարդիկ լռում են, ինչպես ասում է Ավետարանը:*

Այս բոլորն ասացի, որպեսզի գամ հետևյալին, որ ձեր խոսքը լինի գործը: Ձեր գործն է խոսելու ձեր մասին: Եվ այդ խոսքի թարգմանն եմ լինելու ես իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Փաստում եք ողջ Ռուսաստանի ժողովրդին, որ հայը կա միայն և միայն ստեղծագործելու համար և ոչ թե քանդելու համար: Եվ դուք տվեցիք ինձ փաստ, որ երբ ես ուրիշ գաղութներ գնամ, ասեմ. «Նայեցե՛ք Ռուսաստանի թեմի մեր եղբայրներին և քույրերին: Նրանք գործով են խոսում և ոչ թե միայն ճառով և գրով»:

Ես այս ժողովրդի մեջ ողջունում եմ երիտասարդ սերնդին: Եկեք միասին դադարենք ողբալուց, լալուց, դժգոհելուց: Ողբի հայրենիք չկա, լույսի հայրենիք կա, հույսի հայրենիք կա: Այլևս մենք չենք նայելու անցյալին, և միշտ ասելու, թե ուրիշները մեզ ջարդել են: Թող նրանք ամաչեն մեր կյանքովը: Մեր կյանքն է պատասխանը բոլոր այն թշնամիներին, ովքեր ուզեցին հայության գոյությանը վերջ տալ: Ամաչեցին, ամաչում են և ամաչելու են, եթե տեսնեն մեր կյանքը ծաղկուն, պտղաբեր և արդյունալից:

Ես ծունկի եմ գալիս Աստծու առջև, որ նորոգված ազգի, դեպի ապագան նայող ազգի Կաթողիկոս եղա և ոչ թե անցյալը հիշող, անցյալով մխիթարվող, մեր ներկայի անգործությունը անցյալով բացատրող ազգի:

Սիրելի ներկաներ, ես ցանկանում եմ, որ դուք ոչ միայն Կրասնոդար քաղաքում, այլ Սոչիում, Արմավիրում, Տուապսեում, Նովոռոսիյսկում, Գելենջիկում, Ապշերոնում և կամ ուրիշ տեղերից, որ եկել եք դառնաք իմ դեսպանները, պատգամավորները և գնաք, մեր ժողովրդին տարածեք այս նոր կյանքի փիլիսոփայությունը:

***

Ցանկանում եմ խոսքս ավելի գործնականորեն փակել և այստեղ եմ հրավիրում այս գաղութի մեջ վաստակ ունեցող երեք անձնավորությունների, որոնց ուզում եմ հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գնահատանքը իրենց եկեղեցաշինության համար: Մենք գեղեցիկ մի տող ունենք մեր եկեղեցական արարողությանց մեջ.

«Եկեղեցի շինողաց, նրախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց»:

Երանի նրանց, ովքեր եկեղեցի են կառուցում: Նրանք Հայաստանյայց Եկեղեցու պատմության մեջ կմնան: Հետևաբար ցանկանում եմ նրանց երեքին այսօր պատվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից: Հրավիրում եմ այստեղ պարոն Նաիրի Հովհաննիսյանին:

Սիրելի Նաիրի, ես քեզ ճանաչեցի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ստացա գրավոր վկայությունը այս թեմի առաջնորդի՝ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, և այսօր ազգային-եկեղեցական ձեր ընդհանուր գործունեության, որպես առնապետ թեմական խորհրդի և հատկապես այսօր մեր Կրասնոդարի Սուրբ Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու կառուցման որպես բարերար, ես ձեր կուրծքը զարդարում եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագույն կարգի շքանշանով՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի» անվամբ (տե՛ս էջ 9):

Այստեղ եմ հրավիրում երկրորդ եկեղեցաշեն բարերարին, հանձին պարոն Նիկոլայ Քոչյանին: Ես հիշում եմ նաև քո այցելությունը Սուրբ Էջմիածին: Այն ժամանակ շատ մոտիկից չէի ճանաչում քեզ, բայց, այստեղ գալով և Եզնիկ սրբազանի գրավոր նամակը ստանալով, իմացա, թե որքան

*ծառայություններ եք դուք մատուցում մեր ժողովրդին: Դուք Շահումյանում կառուցել եք Սուրբ Էջմիածին անվամբ եկեղեցին: Այսօր, ի գնահատություն Ձեր թեմական ծառայության և ի գնահատություն Ձեր մեծ բարերարության, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով զարդարում եմ քո կուրծքը, որպեսզի դու հպարտ լինես և գիտակից, որ եկեղեցին երբեք չի մոռանա իր բարերարներին (տե՛ս էջ 8):*

*Այստեղ եմ հրավիրում պարոն Լեոնիդ Ծատուրյանին: Պարոն Լեոնիդ, դու ամենաերիտասարդն ես: Երբ դու եկար և այցելեցիր ինձ Էջմիածին, ես տեսա, թե դու ինչպե՛ս էիր նվիրված այս գաղութին, և երեկ Կուրգանինսկում ես անձամբ տեսա նոր եկեղեցին և նրա կողքին այն դպրոցը, որ կառուցել ես քո աշխատանքով, քո ընտանիքի հետ միասին: Եվ ես այսօր ցանկանում եմ, որպես եկեղեցաշեն բարերար, քո կուրծքը զարդարել «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն կարգի շքանշանով: Աստված քեզ հաջողություն տա և նորանոր բարերարություններ անես:*

*Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք միայն նրանց չենք գնահատում, ովքեր նյութական մեծ նվիրատվություններ են կատարում, այլ նաև մշակութային կյանքին նվիրված անձնավորություններին: Եվ այսօր ձեր Առաջնորդի խնդրանքով և մեր հավանությամբ ուզում ենք երեք անձնավորությունների գնահատել, ովքեր իրենց գրչով, իրենց դաստիարակչական ճանապարհով, ուսուցչական պաշտոնով և իբրև արվեստագետ, գեղանկարիչ, բերել են իրենց տաղանդի սպասարկությունը, ծառայությունը մեր ժողովրդին: Հետևաբար այստեղ եմ հրավիրում Արմեն Գասպարյանին: Այսօր դու քո նկարչական արվեստով, եկեղեցու համար քո գծած պատկերներով ժողովրդին և Աստծուն ես ծառայում և մեր Եկեղեցու ամենից մեծ երկու դեմքերի անունով՝ «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» շքանշանով քո կուրծքն եմ զարդարում, որպեսզի զգաս Եկեղեցու սերը քո հանդեպ (տե՛ս էջ 14):*

*Վարդան Կուկուլյան, ես իմացել եմ, թե դու ինչպես ես նվիրված հայ գրին, հայ գրքին, մշակույթին: Դու արժանի ես «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին՝ որպես մշակույթի սպասավոր այս մեր տարածաշրջանում (տե՛ս էջ 13):*

*Երրորդ անձը ես ունենք, որ դժբախտաբար այստեղ չէ, անհանգստության պատճառով հիվանդանոցում է: Նա Վիկտոր Հակոբյանն է, որ Մինվոդիի մեջ պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ և «Խաչքար» թերթի խմբագիրը, տարիներ ի վեր իր գրի սպասարկությունն է բերում: Ես հանձնում եմ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը Եզնիկ սրբազանին, որ նրան փոխանցի իմ առողջության մաղթանքների հետ միասին (տե՛ս էջ 12):*

*Վերջինը այստեղ ցանկանում եմ պատվել Բեգլար Ազամիրյանին՝ Սոչիից: Առաջին անգամն է, որ տեսնում եմ քեզ և այն, ինչ որ լսեցի քո մասին, որ դու Շահումյանի Ս. Էջմիածին եկեղեցին, Կարսնոդարի Սուրբ Հովհաննես և Տուապսեի Ս. Սարգիս եկեղեցին և այլ եկեղեցիներ զարդարել ես քո ճարտարապետական տաղանդով: Այսօր «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանն եմ հանձնում քեզ. քո երիտասարդությունը քեզ նոր պարտավորությունների տակ է դնում: Մեր նշանավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ասել է. «Մահը մերն է, մենք՝ մահինը, մարդու գործն է միշտ անմահ:» Թող այս գործը լինի անմահ մեր ժողովրդի համար»:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ Ս. ԿԱՏԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑԻ

Այցելության վերջին օրը, սեպտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով այցելեց Կրասնոդարի Սուրբ Կատարինե ռուսական Մայր եկեղեցի, ուր նրանց հանդիսավորությամբ ու շուքով դիմավորեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Կրասնոդարի և Նովոռոսիյսկի թեմի առաջնորդ Իսիդոր արքեպիսկոպոսն իր շքախմբով, հոգևորականաց դասը, ինչպես նաև հավատացյալ ժողովուրդը:

Եկեղեցու հոգևոր և դպրաց դասերը, շարականների երգեցողությամբ, Հայոց Հայրապետին առաջնորդեցին դեպի Ավագ խորան:

Կատարվեց առավոտյան ժամերգություն, որից հետո հայերեն և ռուսերեն լեզուներով կանոնական աղոթք առաքվեց առ Բարձրյալն Աստված:

Այնուհետև Հայոց Հայրապետին բարիգալստյան և ջերմ սիրո խոսքեր ասաց Իսիդոր արքեպիսկոպոսը, ուրախություն հայտնեց տվյալ պատմական պահի համար, որ նաև քույր ժողովուրդների ու Եկեղեցիների դարավոր բարեկամության լավագույն դրսևորումը նկատվեց: Իր խոսքի վերջում առաջնորդ արքեպիսկոպոսը Հայոց Հայրապետին նվիրեց մի սրբապատկեր:

Իր խորին երախտիքը հայտնելով եղբայրական սիրո այդքան ջերմ դրսևորման առիթով, Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ այս հանդիպումը շատ երկար է հիշելու: Ապա իր հերթին Իսիդոր արքեպիսկոպոսին նվիրեց հայկական մի սրբապատկեր:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԲԱՆԻ ԿԱԶԱԿՆԵՐԻ ԶՈՐՔԻ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՏԱԲ

Նույն օրը, ժամը 11.00-ին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով այցելեց Կուբանի կազակային կորքի բանակային ընդհանուր շտաբ, ուր բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին կազակների կորաշարքերը, կորքի փոխատաման, շտաբի պետ գնդապետ Յուրի Գավրիլենկոյի գլխավորությամբ:

Այստեղ Նորին Սրբությունը շրջեց տարածքում, ծանոթացավ շտաբի աշխատանքներին, կազակների առօրյային, կենցաղին ու կացին:

Նիստերի ընդհանուր սրահում, պաշտոնական ընդունելության ժամանակ, Հայոց Հայրապետը ծանոթացավ նաև ղեկավարության հետ, միաժամանակ խոսվեց հայերի ու կազակների փոխհարաբերություններին, երկրամասում տիրող ներկա իրավիճակին առնչվող մի շարք կարևոր հարցերի մասին: Ապա երկուստեք փոխանակվեցին պաշտոնական ուղերձներ և հուշանվերներ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 11.30-ին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Կրասնոդարի երկրամասի կառավարություն, հանդիպում ունեցավ փոխնահանգապետ Վլադիմիր Աֆանասևիչ Մելնիկովի հետ:

*Նախանգապետարանի ընդունելությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին երկրամասի Դումայի անդամները, պետական բարձրաստիճան այրեր, հոգևորականաց դասի և հայ համայնքի ներկայացուցիչներ:*

*Փոխնահանգապետ Մելնիկովը նախ ցավ հայտնեց, որ նահանգապետը բացակայում է քաղաքից՝ Մոսկվա մեկնած լինելով, ապա բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի այցելությունը Կրասնոդարի երկրամաս և նշեց, որ այն կնպաստի տարածաշրջանում առկա որոշ խնդիրների խաղաղ հանգուցալուծմանը:*

*Իր պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետը հավաստիացրեց, որ հայ ժողովրդի զավակները որտեղ էլ ապրելիս լինեն, միշտ դրական, կառուցողական դեր են կատարում: Նա բարձր գնահատեց հայկական համայնքի Կրասնոդարի երկրամասում ծավալած շինարարական գործունեությունը:*

*Հանդիպման վերջում, պաշտոնական ուղերձների փոխանակումից հետո, երկուստեք փոխանակվեցին նաև հուշանվերներ:*

### *ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊԻ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ, ՃԵՊԱԶՐՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ*

*Հետկեսօրին, ժամը 13.00-ին, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով ուղղվեց դեպի Կրասնոդարի օդանավակայան:*

*Այստեղ, բարձրաստիճան հյուրերի սպասասրահում, տեղի ունեցավ հակիրճ ճեպազրույց, հընթացս որի Նորին Սրբությունը լրագրողներին ասաց, որ առաջին անգամն է այցելում Հարավային Ռուսաստանի հայոց թեմ: Ճանաչելով տեղաբնակ հայերին, ինքն իրեն երջանիկ է զգում՝ նրանց հոգիներում տեսնելով քրիստոնեական հավատքի վերածաղկումն ու հայության քաղաքացիական վեհ գիտակցումը:*

*Խոսելով իր ապրումների ու զգացածի մասին, Գարեգին Ա Կաթողիկոսն առանձնակի շեշտեց.*

***«Մայր Հողից, մեր Հայաստան աշխարհից եթե տեսնեն այսպիսի ժողովուրդ, հավատարիմ իր անցյալին, նվիրված իր ներկային, ապագայի հեռանկար ունեցող ժողովուրդ, անտարբեր չեն մնա:***

***Ես խոստովանում եմ, որ երբ վերադառնամ, այլևս այն նույն անձը չեմ լինի, ինչ մեկ շաբաթ առաջ էի: Դրա համար ես նախ ուզում եմ իմ գնահատանքի խոսքն ուղղել բոլոր նրանց, ովքեր այդ մի քանի օրերը արժեցրին, իմաստ տվեցին մեր այցելությանը: Կյանքի երկու մակարդակ կա: Առաջին՝ ապրում ես՝ ապրելու համար: Երկրորդ՝ ապրում ես՝ մի բան անելու համար, որ երբ դու դադարես ապրելուց, այն մնա, քեզ անմահացնի: Այս է կյանքը մեր ըմբռնմամբ:***

***Այնպես եմ ինձ զգում, որ ասես մի նոր, բոլորովին նոր շրջան ենք ապրում, որ բացվել է հայ ժողովրդի, ռուս ժողովրդի, ինչպես նաև Դաշնային Ռուսաստանի ամբողջ տարածքում բնակվող մյուս ազգերի համար: Թող այս նոր շրջանը լինի մի այնպիսի շրջան, որ գալիք սերունդները մեզ օրհնեն, այլ ոչ թե անիծեն»:***

## *ԺԱՄԱՆՈՒՄ «ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ*

*Սեպտեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով իր ութօրյա անդրանիկ հովվապետական, հայրապետական այցելությունը Հարավային Ռուսաստանի հայոց թեմ, վերադարձավ Մայր Հայրենիք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:*

*Օդանավը «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կատարեց Երևանի ժամանակով ժամը 16.30-ին:*

*Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Մայր Աթոռի միաբանները, բարձրաստիճան պաշտոնյաներ:*

## *ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ*

*«Զվարթնոց» օդանավակայանից Գարեգին Ա Կաթողիկոսը և իրեն ուղեկցող շքախումբն ավտոմեքենաների շարայունով ուղևորվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:*

*Զանգերի ղողանջներով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործելով Մայր Տաճար, Նորին Սրբությունն Իջման Սուրբ Սեղանի առջև իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Ամենակարող Աստված, ապա ողջունեց ներկաներին և համառոտակի մանրամասնեց իր այցելության օրերի հիշարժան իրադարձությունները:*

***

*Առավել կարևոր ու հիշարժան էր Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հովվապետական այս այցելությունը, քանզի յոթ օրերի ընթացքում Հարավային Ռուսաստանի հայոց թեմի տարածքում օծվեցին հավատի երեք նորակառույց տներ, որը հայոց ազգի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծաղկման ու վերապարթոնքի մի աննախադեպ դրսևորումն է, Հայոց Հայրապետի բառերով իսկ ասած՝* ***«մեր Հաւատի Հովտում ծաղկուն գարուն է, իսկ ամէն մի նորաօծ Հաւատի տուն՝ ծաղկափթիթ մի ծառ այդ Հովտում»:***

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ*



ԿՐՈՆԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ*

# ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1. Աստուածածնի Վերափոխման Տօնին առթիւ ներկայացուածը հակիրճ խորհրդածութիւն մըն է Հայ Եկեղեցւոյ մարիամական փորձառութիւնը նիւթին շուրջ: Տրուած ըլլալով, որ նիւթը յատուկ չէ միայն Հայ Եկեղեցիին, ստիպուած ենք ընդհանրացումներու մէջ մտնելու, այնտեղէն բերելով ինչ որ յատուկ է Հայ Եկեղեցւոյ:

Մարիամաբանական մտածողութեան զարգացումը, Ս. Կոյսին ընծայուած երկրպագութիւնն ու մեծարանքը դարերու ընթացքին նպաստած են միշտ Եկեղեցւոյ մարիմական դիմագիծը աւելի բացայայտ դարձնելու: Պէտք չէ մոռնալ, որ եկեղեցական փորձառութեան եւ հաւատքին հիմքը միշտ Քրիստոսն է: Ս. Կոյսի եւ Քրիստոսի փոխ-յարաբերութեան մէջ Տիրամօր խոնարհ ոգին, հնազանդ վերաբերմունքը հանդէպ Յիսուսին, անոր ամբողջական տրամադրութիւնը հետեւելու իր զաւկին առաքելութեան եւ պատրաստակամութիւնը՝ աշակերտելու, կը փաստեն այն, որ Ս. Կոյսը ունեցած է յատուկ նուիրուածութիւն, որուն համար Յիսուս Իր Մօրը վերապահած է բացառիկ դեր մը փրկչական հոգատարութեան մէջ: Քրիստոնեաները Մարիամը պատուած են, եւ միշտ ալ կը մեծարեն ու կը պատուեն, նախ անոր համար, որ մայրն է Քրիստոսի, երկրորդ՝ գիտակից են անոր վերապահուած առանձնաշնորհեալ հանգամանքին փրկչական հոգատարութեան ծիրէն ներս: Անոր որոշակի ուղղուածութիւնը դէպի Քրիստոս, քրիստոնեաներու մօտ ուժեղացուցած է յարաբերութեան, հոգեւո՛ր յարաբերութեան, բարեխօսական եղանակը, այս պարագային անշուշտ իգական նրբերանգով, որ քաղցրութիւն մը յառաջացուցած է անոնց կրօնական զգացողութեան մէջ: Աղօթքներու պահուն Մարիամին ուղղուած խնդրանքներէն յայտնի է, թէ քրիստոնեաները անոր մէջ մասնաւոր կերպով ողջունած են բարեխօսողը: Կարելի է ըսել սուրբերուն մէջ գլխաւորը զոր կը բարեխօսէ Աստուծոյ Միածին Որդիին քով, անշո՛ւշտ Քրիստոս ըլլալով միշտ գերագոյն Միջնորդը մարդոց եւ Աստուծոյ միջեւ:

Այսպէս, Եկեղեցիին մարիամական խորքը, քրիստոնեայ ժողովուրդի փորձառութեան մէջ անուրանալի տեղ մը կը գրաւէ: Բազմաթիւ օրինակներ ցոյց կուտան թէ ո՛րքան մեծ տեղ ունի Մարիամը հաւատացեալներու սրտերուն եւ կեանքին մէջ: Այն մտերմութիւնը զոր հաւատացեալները կը մշակեն Մարիամի հետ, յայտնի է, որ մակերեսային զգացումի մը վրայ հիմնուած չէ, այլ հաւատքով արմատացած, խորունկ եւ գիտակից ամուր սիրոյ կապի մը վրայ: Ահա այս արմատացումն է, որ սովորաբար կը մղէ երեկուան եւ այսօրուան քրիստոնեաները դիմելու Ս. Կոյսին, աւելի մտերիմ հաղորդակցութեան մէջ մտնելու համար Քրիստոսի հետ:

2. Յիշենք թէ վտանգներու դէմ «Աստուածամայր»էն պաշտպանութիւն խնդրելու ամէնէն հին աղօթքները բանաձեւուած են Գ դարուն Եգիպտոսի քրիստոնէական համայնքներուն մէջ: Աւելի ուշ մկրտութիւն ստացած հաւաքականութեանց կողմէ՝ առ Կոյսն ներկայացուած խնդրանքները բազմապատկուած են գրեթէ ամէնուրեք: Այս աղօթքները կը հաստատեն Մարիամ Աստուածածինին շատ զօրաւոր անձ ըլլալը Տիրոջ քով իր բարեխօսութեամբ:

Հայ Եկեկեցւոյ մէջ չկայ պաշտամունք, ուր պատիւ ընծայուած չըլլայ Մարիամ Աստուածածնին: Գիշերային, առաւօտեան եւ երեկոյեան հասարակաց ամէնօրեայ ժամերգութեանց ընթացքին, խորհրդակատարութիւններու ատեն, Պատարագի

ժամանակ, եւ այլ պաշտամունքային պահերու բազմաթիւ բարեխօսական աղաչանքներ ուղղուած են իրեն առատապէս: Յիշեցնենք թէ որեւէ անձ երբ որ Հայ Եկեղեցիէ մը ներս կը մտնէ, անմիջապէս կը նշմարէ Յիսուս – Մանուկին հետ Աստուածամօր պատկերը Սուրբ Խորանին վրայ հանգչած: Սրբանկարի այս գործածութիւնը փաստն է այն արժէքին ու յարգանքին, որ մեր Եկեղեցին կը տածէ հանդէպ Աստուածամօր:

Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ Աստուածածնի ընծայուած պատիւը առած է աւելի լայն համեմատութիւններ: Անոնց աղօթքներուն մէջ, ամէնէն հասարակացը «Ողջոյն քեզ Մարիամ»ն է, որուն առաջին մասը քաղուած է Աւետարանէն առնուած խօսքերով (ՂՈՒԿ. 1–28.42): Կաթողիկէ Եկեղեցւոյ զաւակները իրենց ամէնէն մատղաշ տարիներուն այս աղօթքը գոց կը սորվին՝ արտասանելու համար ընտանեկան յարկէն ներս, իրենց կեանքին մէջ պահելով զայն իբրեւ արժէքաւոր նուէր մը: Վարդարանի գործածութիւնը թոյլ կուտայ, որ անոնք բազմաթիւ անգամներ արտասանեն օրուան մէջ այս աղօթքը, որ ձեւով մը իրենց կ'օգնէ աւետարանական մտքերու խոկումին մէջ մտնելու եւ երկար ժամանակ մտերիմ կապի մէջ մնալու Յիսուսի մօրը հետ: Միջնադարէն ի վեր «Ողջոյն քեզ Մարիամ»ը ամէնէն հասարակաց աղօթքն է, ուր Տիրամայրէն կը խնդրուի, որ իրենց հանապազօրեայ գոյութեան ճամբուն վրայ ընկերակցի, եւ պաշտպանէ զիրենք:

Հայ Եկեղեցւոյ մէջ Վարդարանի գործածութեան աւանդութիւնը թէեւ չկայ, բայց հայ քրիստոնեան ալ կը վայելէ Աստուածածնի ընկերակցութիւնը իր առօրեայ կեանքին մէջ: Նախ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութեանց ընթացքին: Յետոյ ան կը շարունակէ իր մտերիմ կապը պահել անոր հետ գրպանի աղօթագրքին միջոցաւ. Հայ Եկեղեցւոյ պատրաստած գրպանի աղօթագրքերուն մէջ անպայման ներփակուած կ'ըլլան քանի մը հատ աղօթք՝ ձօնուած Ս. Կոյսին. օրինակ՝ Յովհաննէս Գառնեցիի աղօթքը «Ասացեալ տո Սուրբ Աստուածածինն», ներբողներ Նարեկացիէն եւ ուրիշ հեղինակներէ: Իսկ դեռ կան տարբեր կերպեր Աստուածածնայ հետ մտերմութեան կապ արտայայտող: Հարսեր՝ ծննդաբերութենէ 40 օր ետք իրենց նորածինը տաճար կը տանին. Հայ Եկեղեցւոյ ծիսարանը մասնաւոր արարողութիւն սահմանած է ատոր համար. Ս. Կոյսի օրինակին հետեւելու այս աւանդութիւնը զօրաւոր կնիքով մը դրոշմուած է մեր ժողովուրդի հոգեբանութեան վրայ:

Մեր ժողովուրդը, ինչպէս քրիստոնեայ միւս ժողովուրդները, ի նշան Մարիամի հանդէպ ունեցած իր խոր սիրոյն, դարերու ընթացքին կազմակերպեց իր արտայայտութեան ձեւերը: Շարական, ներբողականներ, աղօթք, գանձ, տաղ, բանաստեղծական շարադրութիւն երբեմն պարզ, երբեմն մեծ արժէքով, որոնք տոգորուած յար եւ նման գութով մը ի պատիւ Սրբուհիին, որ Խաչեցեալը նուիրեց մարդոց որպէս մայր: Ասոնց մէջ շատ մը երգեր, ինչպէս Մեծացուցէները, Նարեկացիի տաղերը խորապէս ազդեցին հաւատացեալներուն վրայ՝ կենսաւորելով անոնց մէջ խորունկ հաւատք մը:

Մարիամական բարեպաշտութիւնը, ինչպէս Արեւելքի եւ Արեւմուտքի ժողովուրդներու պարագային, մեզ ալ մղեց հարուստ արուեստի ստեղծագործութեան, որ արժեւորել տուաւ յաջորդող սերունդներուն մօտ Մարիամի հոգեւոր գեղեցկութիւնը: Մեր մէջ մանրանկարիչներ, երաժիշտներ, բանաստեղծներ, ուրիշներու մօտ նկարիչներ եւ արձանագործներ ալ, թողուցին գլուխ-գործոցներ, որոնք ի լոյս ընծայեցին Ս. Կոյսի մեծութեան զանազան երեսները: Արուեստի այս գլուխ-գործոցները օգնած են, ներկայիս ալ կ'օգնեն փրկչական խորհուրդին մէջ իր բերած մեծ նպաստին իմաստն ու արժէքը աւելի լաւ հասկնալու համար:

Քրիստոնէական արուեստը Մարիամի մէջ գտաւ նոր մարդկութեան, մարդկայինին իրագործումը, բան մը, որ կը համապատասխանէ Աստուծոյ ծրագրին, ինչ որ յոյսի գերագոյն նշան մըն է ամբողջ մարդկութեան համար:

3. Մեր հասարակութեան մէջ Մարիամէն բխող հոգեւորական վերափոխումներու ընկերային հետեւանքները ակնառու են: Բայց աւելի արձագանք գտած են անոնք քոյր Եկեղեցիներու մօտ: Մարիամը մասնաւոր կերպով պատուուած է կրօնական միաբանութիւններու կողմէ: Ո՛չ միայն բազմաթիւ կուսանոցներ, այլ նաեւ եկեղեցական հայրերու վանքեր կամ եղբայրակցութիւններ կը կրեն «Մարիամ» անունը: Այս երեւոյթը կը լուսաբանէ, թէ յիշեալ անուանումով մենաստանները, կուսանոցները կամ հաստատութիւնները, կը ձգտին մարիամական ինքնատիպ հոգեւորութեան մը, առաւել չափով անշուշտ արտայայտելու համար իրենց մասնաւոր կապը սրբուհի Մարիամին հետ:

Մարիամական նման ուղղուածութիւն շեշտող վանական դրութիւններ գոյութիւն ունեցա՞ծ են մեր մէջ: Այդ չենք գիտեր յստակ կերպով: Հայ Եկեղեցւոյ կրօնաւորուհիներու պատմութիւնն ալ դժբախտաբար հարուստ չէ մեզի այդ մասին մանրամասնութիւններ հաղորդելու: Ըստ աւանդական պատմութեան կը կարծուի, թէ առաջին կուսանոցը Հայաստանի մէջ կառուցուած է Բարթուղիմէոս Առաքեալի կողմէ: Իսկ Փաւստոս Բիւզանդի վկայութիւններէն գիտենք, թէ Պապ թագաւորը 374-ին աւերած է Հայաստանի գրեթէ բոլոր գաւառներուն մէջ Ներսէս Ա Մեծի (353-373) հրամանով կառուցուած կուսաստանները: Ասդին-անդին կցկտուր տեղեկութիւններ հայ քոյրերու կամ մայրապետներու վարքի կամ անոնց ղեկավարած հոգեւոր շարժումներու մասին, մինչեւ օրս ալ գոհացուցիչ եւ ամբողջական չեն. լրիւ գաղափար մը տակաւին կարելի չէ եղած կազմել այս կէտին շուրջ մեր կրօնական հին եւ նոր պատմութեան մէջ: Առաւելաբար եկեղեցասիրաց Տիկնանց Յանձնախումբերն են, որոնց անդամուհիներուն քով թէեւ չի՛ յայտնուիր, գոնէ մինչեւ այսօր չէ յայտնուած, կրօնական կոչում, բայց կայ նուիրումը եկեղեցիներու շուրջ գործելու: Անձնուիրութիւն՝ որ որոշ չափով մարիամեան հոգեւորութեան մը ներկայութիւնը զգալի կը դարձնէ մեր մէջ: Աղջկանց յատուկ որոշ վարժարաններն ալ կարելի է այս համակարգին տակ դասել:

Միւս կողմէ, եթէ ունեցած չենք կանոնաւորութեամբ սահմանուած մարիամական հոգեւոր եղբայրակցութիւններ կամ միաբանութիւններ, ունեցած ենք սակայն վանականներ, որոնք դէպի Մարիամ հոգեւոր այդ գիծը մեթոտիք կերպով գործադրած եւ մշակած են իրենց անձնական կեանքին մէջ կարգապահութեամբ եւ նախանձախնդրութեամբ: Այլապէս ինչո՞վ կարելի է բացատրել այդքան հարուստ մարիամաբանութիւն մը հայ եկեղեցական գրականութեան մէջ:

Մարիամի հանդէպ արտայայտուած այս զգացումը մարդոց կեանքին մէջ, Սուրբ Հոգիի ներգործութեամբ անշուշտ ծնունդ տուած է նաեւ միսթիք խորութիւններու, բան մը, որ ցոյց կու տայ թէ՛ քրիստոնեան Մարիամի բարեխօսութեամբ կրնայ իր էութեան ամէնէն խորերը երթալ: Ճանաչումի փորձառութիւն ձեռք ձգել:

Դէպի Մարիամ յղումը ո՛չ միայն քով քովի կը բերէ յանձնառու քրիստոնեաները, այլ նաեւ պարզ հաւատացեալները: Նոյնիսկ անոնք, որոնք քիչ մը հեռու կը զգան իրենք զիրենք Եկեղեցիէն, այդպիսիներուն համար յաճախ Սրբուհին կը հանդիսանայ անոնց կապը Եկեղեցւոյ կեանքին հետ: Հասարակաց այս զգացումին արտայայտութիւնը կը տեսնուի քրիստոնեայ ժողովուրդին մօտ ուխտագնացութիւններով:

Ամբողջ տարուան ընթացքին հաւատացեալներու բազմութիւններ Տիրամօր անունը կրող ուխտատեղիներ կ՛երթան, հոն աղօթք մատուցանելու: Լատինական աշխարհը հարուստ է մարիամական բարեպաշտութեան հանրածանօթ սրբավայրերով, ինչպէս Լուրտ, Ֆաթիմա, Լօրէթ, Կուատըլուփ, եւ այլն. ասոնք՝ միջազգային մակարդակով. իսկ ազգային եւ տեղական մակարդակով ճանչցուած Աստուածածնայ սրբավայրեր դեռ շատ ունի Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցին: Այս հասարակ այս ուխտատեղիներուն վրայ երեւցած է Ս. Կոյսը, որ մայրական քաղցրութեան պատգամներ կ՛արձակէ, մարդոց սրտերը բանալով աստուածային շնորհքին:

Այս համեմատութեամբ հանրածանօթ սրբավայրեր Հայաստանի կամ Կիլիկիոյ մէջ գոյութիւն ունեցա՞ծ են: Հարցումը ուսումնասիրութեան կը կարօտի: Այն տպաւորութիւնը ունինք, թէ Ս. Կոյսին երեւումները Հայաստանի հողին վրայ ծածուկ պահուած են: Շատ հաւանաբար մեր մէջ Աստուածածնի անունով օծուած բազմաթիւ ու անհամար եկեղեցիները եղած են նաեւ Տիրակիր Կոյսին ուխտագնացութեան սրբավայրերը: Իբրեւ հանրածանօթ սրբավայր մարիամական բարեպաշտութեան Հայերու համար եղած է Ս. Երկիրը: Նազարէթ, Բեթլեհէմ, Գեթսեմանիի «Աստուածամայր»ը: Իսկ անցեալ դարուն Արմաշու Չար-Խափանն ալ եղած է յաճախուած կարեւոր եւ հանրածանօթ ուխտատեղի մը:

Աստուածածնայ աղօթավայրերը կարելի է ըսել մէյ մէկ վկայարաններ են թէ՛ Աստուծոյ բարերարութեան եւ թէ՛ Մարիամի բարեխօսութեան: Աստուծոյ բարիքը երբ կը հասնի ուխտաւորին, մարմնական բժշկութեան հրաշքով մը, կամ հոգեկան տագնապ ունեցողին երբ կը տրուի ներքին կապանքներէն ազատագրուելու վայելքը ներքին ինքնամաքրութեամբ, այս բոլորը այն ատեն կը դառնան յայտնի նշաններ՝ ըսելու համար, թէ Քրիստոսով եւ Ս. Հոգիով Մարիամ Աստուածածինը կը շարունակէ պաշտպանութեան մայրական իր գործը:

4. Յաճախ այս ուխտավայրերը կը դառնան աւետարանումի կեդրոններ, այն իմաստով, որ կատարուած հրաշքները մղում մը կուտան բազմաթիւ քրիստոնեաներու, որպէսզի իրենք զիրենք նուիրեն ուրիշներու սպասաւորութեան, ըսենք՝ առաքելականութեան: Մարիամական բարեպաշտութեան գործադրութիւնը անպայման կ'առաջնորդէ գթութեան: Մարիամի ներկայութիւնը կը քաջալերէ հաւատացեալները հիւանդներու մօտը գտնուելու, աղքատներուն օգնելու, մարդկային ըլլալու տրամադրութիւններ ստեղծելու: Գթութեան վարդապետութիւնը կը դադրի լոկ աստուածաբանական ուսուցում մը ըլլալէ, այլ կը դառնայ ապրուած իրականութիւն մարդկային ընկերութեան մէջ: Այս շօշափելի նշաններով աւելի կը ցոլանայ երկնաւոր նոր գթութեան երեսը:

Մարիամական ծաւալը Եկեղեցւոյ կեանքին մէջ յաւելեալ առիթ մը կուտայ վերանորոգումի եւ հոգեւոր հարստացման:

Այստեղ կարեւոր կէտ մը կայ նշումի. Ս. Հոգիի ներգործութիւնն է այդ: Ան է վերջապէս, որ մղում կուտայ քրիստոնէական հաւատքին, ճամփայ ելլելու Մարիամին դիմագիծը տեսնելու: Ս. Հոգին է, որ հրաշքներ կը գործէ այն տեղերուն վրայ, ուր ի յայտ կուգայ մարիամական բարեպաշտութիւն մը: Ան է դարձեալ, որ կը խթանէ մարդիկը Մարիամը ճանչնալու, եւ սիրելու: Ան կ'առաջնորդէ հաւատացեալները մտնելու Ս. Կոյսի Մեծացուցէ օրհնութեան եւ ցնծութեան մէջ, կարենալ սորվելու համար կեանքի ընթացքին Աստուծոյ նշանները եւ ստանալու համար այն իմաստութիւնը, որ ամէն մարդու քաջութիւն կուտայ նոր մարդկութեան մը շինարարները կամ կերտիչները դառնալու:

*Լիոն, Յուլիս 1997*

## ԶԱՔԱՐԻԱ ԶԱԳԵՑԻ

# ԶԱՔԱՐԻԱ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ» [ՃԱՌԸ]

*1. ԱՅՍՕՐ ուրախացավ երկինքը և ցնծաց երկիրը:*

*ԱՅՍՕՐ փառավորվելով պայծառացավ Սիոն Մայր եկեղեցին:*

*ԱՅՍՕՐ բերկրալից ուրախությամբ հրճվելով, անարատ հարսնացյալ կաթուղիկե[1] Առաքելական եկեղեցին զվարթությամբ տոնախմբում է, քանզի Աստուծո Որդու արեամբ անբծելի[2] սրված աստվածային քառաթև նշանը, տիեզերքի փրկագործ աշխարհակեցույց խաչը, որ ասվում է Աստուածընկալ[3], որ կանգնվեց անսահմանության մեջ և ցոլացյալ բարձրացավ սուրբ Գողգոթայի վրա, [որպես] պսակ վայելչության՝ օղակելով, զարդարված պճնեց իր գլուխը: Եվ արփիահրաշ ճառագայթներով բացափայլված[4] պայծառացավ Երուսաղեմում ու արփիափայլ քան արեգակը զարդափայլ զվարճացավ, ինչպես և բոցաճաճանչ հրանյութ ճառագայթներով լցրեց ամբողջ տիեզերքը: Եվ իր պահպանական ամենահաղթ զորությամբ թևարկելով պարածածկեց[5] բոլոր հեթանոսներին, որի գերահրաշ և սոսկալի փառքից սարսափած, զարհուրելով դողացին սանդարամետականների լեգեովն զորքերը, քանզի զննելով հայեցին և տեսան խաչի վրա [Հորն] էակից անմահ և անժամանակ Որդի Աստծուն՝ ճշմարիտ մարդեղությամբ, բազկատարած, հեղյուսներով բևեռված փայտին:*

*2. Անմարմինների հույլերն՝ հրեշտակների սուրբ բանակները, ահով հիացած սքանչանում էին, սերովբեները սարսափմամբ խուճապում էին, իսկ գերագույն պետություններն ու վերնային իշխանությունները սքանչացած հիանում էին: Արեգակը չտոկալով իր Արարչի չարչարանքներին, մթնեցնում էր իր ոսկեճաճանչ ճառագայթները: Լուսինը քողասուզվելով ծածկում էր երեսը և աստղերի հրճվալիր բազմության պարսերը անհայտանալով չքանում էին: Եվ կարծր ու անտաշելի վեմերը հերձվելով պատռվեցին, իսկ հողը իր թանձրամած խտությամբ դողալով երերում և աշխարյալ[6] ողբում էր Եբրայեցի ժողովրդի կուրության վրա, քանզի աստվածամարտներ եղան և չճանաչեցին Իսրայելի փրկությունը:*

*3. Իսկ մեզ՝ հավատացյալներիս, երկրպագողներիս, փրկության նշան, զվարճատեսիլ տունկ և անթառամ տերևներով բողբոջած ծաղկալից ընձյուղ,զանազան համափթիթ ծաղիկներով ծառ ծաղկյալ, անճառելի և հրաշափառ պատկերով պայծառացած Փայտ, տեսակ տեսակ բարությունների պարգևարաշխ տունկ շնորհվեց: Արմատ, որի միջոցով սիրո աստվածային շնորհը աշխարհում տարածվելով աղբյուրացավ: [Որպես] ծաղկյալ ոստ ծագելով Երուսաղեմում, սովահար մարդկային ցեղը հագեցնում էիր երկնքից իջնող հացով, որ քեզ վրա պատարագվեց:*

*Նշան փրկության, որ պճնելով զարդափայլեց Նախաստեղծի մերկությունը:*

---

1 Կաթողիկե-Ընդհանրական, Տիեզերական

2 անբծելի-սուր, հատու, ազդու, չբթացող

3 Աստուածընկալ-Աստուածակիր, Աստծուն իր վրա ընդունող, կրող զգենող

4 բացափայլված - պայծառափայլ, պայծառագույն

5 պարածածկել-շրջանաձև ծածկել բոլոր կողմերից, պատել

6 աշխարել-սգալ, ողբալ, կոծել, ճչալ.

Փայտ մեծարված, որ հաստատացնում էր մարդկային ցեղի տնանկությունը:

Տունկ ուրախարար՝ սկզբնական ճաշակած դառնության [պատճառով] տրտմածներիս [համար]:

Շառավիղ կենագործող, քանզի քո միջոցով բացահայտվեց և մարդկությանը տրվեց Աստուծո իմաստության թաքնված գանձը:

Քանզի դու, ո՜վ սուրբ ծառ կենաց, հրեաների թշնամանքի [պատճառով] տնկվելով, տիեզերքը ազատեցիր աղամական անեծքից: Քեզ երաժշտական ձայնով գեղապարությամբ փառաբանում են բոլոր ազգերն ու ժողովուրդները, քանզի դու սուրբ Գողգոթայում կանգնեցվեցիր և պտղաբերելով երկինք վերաձգեցիր[7] [նրանց], ովքեր ճաշակում են քո փրկավետ ոստերից:

4. Ո՜վ սուրբ Փայտ, դու մեղավորների պարտքերի կտակները պատռեցիր և վերակոչեցիր երկնավոր որդեգրության: Ուրացողներին վերականգնեցիր և լուսավորելով փրկեցիր հավատացյալներին:

Ո՜վ տունկ անմահագործ, քո միջոցով բացվեցին երկնային[8] դռները և քո միջոցով վայր իջած անմահների զորքերը մարդկանց հետ երգաբանում են քեզ:

Ո՜վ ծառ կենաց, քեզնով կաչկանդված կապվեց բանսարկուն և ազատվեցին նրանից բանտվածները:

Ո՜վ ամենօրհնյալ նշան անպարտելի, ճոխացած մահվան իշխանությունը լքվելով քանդվեց և պարաբարձյալ[9] եղավ ծովացած մեղքի ահագնացած բռնությունը ու հորդելով բացվեցին արդարության ու ճշմարտության բազմադիմի ճանապարհները:

Դու, ամենօրհնյալ Փայտ սուրբ, հողանյութ մարդկային ցեղը վերաձնելով հրեշտակների հետ դասակարգեցիր, որպեսզի մարդիկ հրեշտակներին հանդիսակից լինելով հոգևոր գեղապարությամբ երգեն հարսնացած Կաթուղիկե, Սուրբ Եկեղեցու համար. քանզի [ինչպես] գիտության փայտի [պատճառով] մահացածներս հեռացվելով զրկվեցինք հավերժական կյանքից, իսկ քո միջոցով, ո՜վ ամենօրհնյալ Փայտ սուրբ, վերստին նույն պայծառությանը պիտի վերադառնանք, [որ] ավելի հրաշափառ է քան նախկինը:

5. Նախաստեղծը, իր ձեռքը կարկառելով ձգեց դեպի գիտության ծառը և մահվան մեջ նետեց մեզ՝ ամաչելով մերկանում էր փառքից և սաղարթապատ լինելով պարաթաքչում[10] էր անտառախիտ տունկերով: Իսկ անճառելի Բանն Աստված իր աշխարհակեցույց բազուկները տարածեց քեզ վրա, [ո՜վ] կենդանարար սուրբ Փայտ, և ըստ գրվածքի, թե «Ովքեր Քրիստոսով մկրտվեցին, Քրիստոս են զգեցել» (ԳԱՂ Գ 23), վերստին զգեստավորեցիր մերկացած մարդկային ցեղը՝ զարդափայլելով անկողոպտելի պատմուճանով: Ադամը ճաշակեց [գիտության] ծառի պտղից և տարորոշվելով բաժանվեց հրաշալի դրախտից ու սրովբեափակ եղավ տենչալի կենաց ծառից: Իսկ հավատացյալներս ճաշակեցինք կենաց պտուղը, որ քեզ վրա պատարագվեց:

Ո՜վ պանծալի Փայտ սուրբ, [նրանք] աներկյուղ հպվելով մերձենում են տենչալի կենաց ծառին:

6. Դու, ո՜վ ամենօրհնյալ Փայտ սուրբ, լուսատու [ես] տիեզերքի և պահապան քրիստոնյաների:

Դու, ո՜վ ամենասուրբ նշան անպարտելի, առաջնորդ [ես] կույրերի և լույս խավարածների:

---

[7] վերաձգել-վեր ձգել, վեր բարձրացնել

[8] տրամաբացել-լայնորեն բացել՝ այս ու այն կողմն նետելով

[9] պարաբարձյալ լինել-այստեղ՝ ջնջվել

[10] պարաթաքչել-չորս կողմը պատելով թաքնվել

*Դու, աշխարհակեցույց Փայտ սուրբ, ճանապարհ [ես] մոլորվածների և վերադարձնողը դեպի ճշմարտության ճանապարհը ու փրկության շավիղները:*

*Դու, ամենօրհնյալ Փայտ սուրբ, աղքատներին հարստացնում ես և խոնարհներին բարձրացնում:*

*Դու, հարուստներին կշտամբում ես և մեծատուններին սանձահարում:*

*Դու, տունկ փրկագործ, արդարներին պահում ես և մեղավորներին առիթ ես ապաշխարության:*

*Դու, ամենօրհնյալ արմատ փրկության, բանսարկուին վանելով պարտավորեցիր*[11] *և նրա խավարաբնակ ու դիվադունդ բանակները բացահայտելով վանեցիր և միշտ հալածում ես քո սիրելի երկրպագողներից:*

*Դու, զենք անպարտելի ընդդեմ աներևույթ նետի, դժոխքն ավերեցիր և բանտարկվածներին փրկեցիր:*

*Դու, ամենօրհնյալ սուրբ նշան, չառավիղ բարի, նավագնացներին նավապետելով առաջնորդում ես և վտանգվածներին հասցնում դեպի խաղաղ և անքույթ*[12] *նավահանգիստը:*

*Դու, սուրբ նշան, [որպես] անպարտելի ախոյան, պատերազմի ժամանակ պահպանում և շրջափակյալ խնամելով զորացնում ես՝ գետնվածներին ոտքի կանգնեցնում և ցրվածներին հավաքում:*

*Դու, պսակ պարծանաց Կաթուղիկե Սուրբ Եկեղեցու, թագավորներին պսակում ես ոսկեհուռ զարդարելով և պաճուճելով:*

*Դու, ազատեցուցիչ Փայտ սուրբ, գերությունից փրկում, հիմարներին իմաստնացնում, անմիտներին խոհեմներ և հանճարեղներ ես դարձնում, անօրեններին՝ օրինավորության մեջ վերակարգում:*

*7. Քեզ, ամենօրհնյալ Փայտ սուրբ, մարգարեները հեռավորությունից քարոզեցին, երջանիկ առաքյալները քեզնով ահավոր դարձան դևերի համար, սուրբ վկաները քեզնով հաղթեցին անօրեն բռնավորներին, անապատաբնակները քեզնով են կրոնավորվելով ամրանում, սուրբ և պարկեշտ կույսերը քեզնով են զգաստանում և քահանաները քեզնով են բարեկարգվում:*

*Դու, ամենապանծալի Փայտ սուրբ, սուրբ Եկեղեցու հիմքի հավատո վեմը և տիեզերքի ամրության պարիսպն ես, որ քանդեցիր կուռքերի պաշտամունքը:*

*Դու, հրեաների կործանումն ու հեթանոսների համար հիմարություն եղար (հմմտ. Ա. ԿՈՐՆԹ. Ա 22-23), իսկ քո երկրպագողներին պարծանքների պարծանք ես, երբ արփիահրաշ ճառագայթներով արեգակից հայտնվես երկնի ամպերի վրա և հաղթես արեգակնային ճառագայթներին և անհավատների համար հաստատես բորբոքյալ անշիջանելի հնոցը: Եվ քեզ երկրպագողներին վերառնելով ամպերի վրա թևապարելով*[13] *բարձրացնում ես դեպի Վերին Երուսաղեմ:*

*Քեզնով է ցնծում երկինքը, քեզնով ուրախանում երկիրը, քեզնով է զվարճանում Սիոն Մայր Եկեղեցին, քեզնով է բարգավաճելով պայծառանում մարդկային ցեղը:*

*Քեզ են օրհնում հրեշտակները, քեզ ենք ձգտում գեղապանծ ձայնով բարեբանելով, սակայն չենք կարողանում հասնել, որովհետև աղքատիմաստ և տկարաձայն ենք՝ չքավոր գիտությունից, քանզի դու մի ծաղիկ ես Լիբանանից և մի ուղեղ*[14] *տունկերից, որ աստվածության անտանելի հուրը քեզ վրա կրեցիր:*

---

11 պարտավորեցիր-պարտքի տակ դրեցիր, դատապարտեցիր

12 անքույթ-հանգիստ, խաղաղ, անխռով

13 թևապարել-թևերով պարել, թևածել, վերաթևել

14 ուղեղ-բարունակ, ընձյուղ, բողբոջ, ոստ

*8. Դու սեղան երկնքից իջած անպարտելի անմահագործ Հացի, որի մասին Երեմիան վերագուշակելով ասում է. «Եկեք ոչնչացնենք ծառն իր պտղով և Նրան ջնջենք ողջերի երկրից» (ԵՐԵՄ. ԺԱ 19):*

*Դու ամենօրհնյալ Փայտ սուրբ, չորս տեսակի տունկերից հավաքված բարձող եղար [մեղքը] բարձող Բանի և բոլոր էակներիս լինելությունը, ինչպես Եսային քեզ խորհրդանշելով անվանակոչեց ասելով. «դափնիով, սոսիով, նոճիով, ու մայրիով» (ԵՍ. Կ 13): Եվ տաշվելով քառաթև ձև ստացար ու քերովբեների վրա վերանստյալին քեզ վրա մարմնով բարձրացած կրեցիր անպարագրելի և աննյութական Աստծուն, մեր նյութական քառատարրյան բնության մեջ Ինքն Իրեն անճառապես առբերելով հայտնված՝ մեր բնությամբ կերպացած՝ մեզ համար քեզ վրա բարձրացավ: Եվ Աստվածորդու աշխարհակեցույց արյունը քեզնով հոսելով իջնում էր ու մեղքից մաքրագործում տիեզերքը:*

*Դու Տիրոջ անապական արյամբ սրված անբթելի զենք շնորհվեցիր մեզ, քանզի դու ես մարդկային ցեղի հույսն ու ապավենը, որ վերցրեցիր մեր դատապարտության կնիքը, փրկագործելով մեզ Ղարանի անմարմին աղեղներին հանդիպելուց, որի մասին Դավիթ երանելին խորհրդանշանական գուշակմամբ ասում է. «Երկյուղածներիդ նշան դու տվիր, որ փրկություն գտնեն աղեղից» (ՍՂՄ. ԾԹ 6), և դարձյալ կրկնում. «Քո երեսի լույսը ծագեց մեզ վրա, և ուրախություն տվիր մեր սրտերին» (ՍՂՄ Դ 7), և վերստին ասում. «Զորությո՛ւն տուր քո ծառային և ինձ զորության նշան ցույց տուր» (ՍՂՄ. ՁԵ 16-17):*

*9. Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի դու բարձրագույն և հրաշափառ [եղար] քան դրախտի կենաց ծառը, որովհետև նա Նախաստեղծին չկարողացավ վերադարձնել դեպի գեղազարդ և տենչալի դրախտը և հրեղեն սուրը պարփակյալ պահում էր կենաց ծառի անձկալի ճանապարհը բացամերժելով*[15] *դրախտի փափկության մեջ մտնել: Սակայն դու Բանն Աստծուն բառնալով բացեցիր դրախտի սերովբեափակ դուռը՝ հրեղեններին զսպելով, ավազակի միջոցով մարդկության համար ճանապարհ բացեցիր դեպի բաղձալի կենաց Ծառը:*

*Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի դու դրախտի բոլոր ծառերից գերագույն և արփիափայլ ես, որովհետև օձապատիր պտղի ճաշակումով Նախահայրը արտաքսվեց հավերժական կյանքից և մերկացած փայլակնացայտ փառքից տերևապատ լինելով թաքնվում էր անտառախիտ դրախտում: Իսկ դու՝ Աստծուն, որ մայրամուտին քայլում էր դրախտում և հարցնում, թե. «Ո՞ւր ես Ադամ», մարմնով պարունակված քեզ վրա բարձրացված կրեցիր՝ մերկ և բազկատարած, որպեսզի հրաշափառ քան առաջինը պարածածկես մերկացած Ադամին:*

*Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի բոլորի Աստծուն, որ վեց օրում գոյացրեց արարածներին և վեցերորդ հավիտյանի ուրբաթ օրվա վեցերորդ ժամին բարձրացավ քեզ վրա, որպեսզի օձաշամբ*[16] *պատրողական պտղի պատճառով մեռած Ադամին վերադարձնի դեպի Կենաց ծառը: Քո կողահոս աղբյուրից բխեցին Եդեմի աղբյուրները և քառաբաժ*[17] *գետի հորդումը՝ չորեքծագյան ավետարանով արբեցնելով համօրեն տիեզերքը:*

*10. Բարեբանյալ ես, փրկագործ և աշխարհակեցույց փայտ սուրբ, արտափայլյալ ճառագայթ գերագույն ես, քան Նոյի արկղանման տապանը, քանզի նա փոքրիկ մի մասին փրկեց ջրհեղեղից, իսկ դու համօրեն տիեզերքը փրկեցիր կյանքի մրրկածին ծփանքներից: Եվ ոչ թե կենդանական աղավնին ձիթենուց շյուղաբեր լինելով առմատուցեցիր մեզ որպես փրկության առհավատչյա, այլ Հոգին Սուրբ*

---

[15] բացամերժել-մերժելով դուրս վանել, արտաքսել

[16] օձաշամբ-օձի պատճառ դարձած

[17] քառաբաժ-չորսի բաժանված

*աղավնակերպ երևմամբ վայրիջյալ, անվախճան և մշտնջենավոր կյանքի որդեգրության կտակ վերընծայեց մեզ:*

*Բարեբանյալ ես, անմահագործ տունկ սուրբ՝ առավել բարձրաբերձ քան կաղնին Մամբրեի**, *քանզի նա իր հովանու ներքո կրում էր միայն Աբրահամի խորանը, իսկ դու՝ Աստծուն, որ երևաց Աբրահամին և զավակ ունենալու ավետիսի առհավատչյան էր մատուցում: Նաև, որ Սոդոմն ու Գոմորը հրակիզեց, մարմնով քեզ վրա կրեցիր և հովանի լինելով ամբողջ տիեզերքին և հեթանոսներին ապավինության առհավատչյա և ի Վերին Երուսաղեմ առաջնորդ [եղար] և ինչպես Սոդոմն ու Գոմորը՝ դժոխքը ավերեցիր:*

*Բարեբանյալ ես կենդանատու և ազատեցուցիչ սուրբ շառավիղ՝ գերարփի քան ծառն Սեբեկա, քանզի նա սրափողոտ*[18] *հրակիզությունից փրկեց միայն Իսահակին և հորը (Իսահակին-թրգմ.) շնորհեց ու նրա փոխարեն ընծայաբերված խոյն էր պատարագում: Իսկ դու Աստուծո անարատ գառանը կախված երկու եղջյուրներից՝ Հին և Նոր Կտակարաններից, որ աստվածությամբ և մարդկությամբ միավորված է խաչի վրա, տնօրինաբար պատարագված ընծայեցիր տիեզերքին և մարդկանց ազատեցիր մահվանից ու հողանյութներիս բարձրացրեցիր Հոր փառքին:*

*11. Բարեբանյալ ես, ամենօրհնյալ փրկագործ տենչալի Փայտ սուրբ, քանզի Հայրապետն Հակոբ սանդուղքի միջոցով քեզ օրինակված տեսավ***, *որի արմատը հիմնված էր երկրի վրա և գագաթը հասնում էր երկինք, որի վրա Տերն էր կանգնած, իսկ Աստուծո հրեշտակները ելնում և իջնում էին նրանով: Եվ տեսիլքը այդպես արժանացած մնաց մինչև արեգակի ծագելը: Իսկ Հակոբն այս վայրը Տուն Աստուծո և Բեթել անվանեց՝ արձան կանգնեցրեց և յուղով օծեց, ինչպես և դու երկրի վրա կառափնավայր Գողգոթայում կանգնեցիր, որտեղ առաջին մարդու շիրիմն էր և քո գլուխը մինչև երկինք հասավ: Եվ անժամանակն Աստված, պատվական վեմն ու անկյունաքարը, մարմնում շարամանված*[19] *և Սուրբ Հոգով օծված՝ քեզ վրա հեղյուսներով բևեռված հաստատվեց, իսկ սուրբ հրեշտակները քեզնով երկիր իջան ու քեզ երկրպագող մարդիկ հրեշտակացած վերանում են մինչև անմահների բանակները: Եվ դու արժանված կանգնած աշխարհի պահապանն ես, մինչև արդարության արեգակի հայտնվելը Հայրական իշխանությամբ, որի նախակարապետն ես դու:*

*Բարեբանյալ ես, տենչալի և փափագելի ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի սուրբ Նախահայր Հակոբը երբեմն հարստահարված Ղաբանից, քո սուրբ զորությանն ապավինեց և քեզ օրինակելով երեք գավազաններ պատկերեց ու դրեց ավազանների մեջ, որպեսզի [դառները] խայտապիսակ*[20] *ծնվեին*****: Իսկ դու պատկերվելով Աստուծո անմահ Բանի արյամբ, որ քեզ վրա հոսեց կողահոս աղբյուրից՝ քեզ տպավորելով սուրբ ավազանում դրոշմում են համորեն տիեզերքը քո նշանակերպով՝ ընդունարան լինել սուրբ Երրորդության: Եվ հափշտակում ես [նրանց] անմարմին Ղաբանից ու վերակոչում դեպի կյանք ու բոլորի վրա գաղափարում*[21] *ես Երեքանձնյա Տերությունը:*

---

* Քեբրոն քաղաքի արվարձաններից մեկում կար բարձր կաղնի կամ կաղնու անտառ, որը կոչվում էր *Մամբրեի (ԾՆՆ. ԺԳ 18)*:

18 սրափողոտ-սրախողխող, սրով փողոտել՝ սրով կոկորդը կտրել

** Տե՛ս ԾՆՆ. ԻԸ 10-15:

19 Միավորված, ներհյուսված:

20 Խայտաճամուկ, պտավոր, խատուտիկ:

*** Տե՛ս ԾՆՆ. Լ 37-39:

21 գաղափարել-տպավորել, օրինակել

*Բարեբանյալ ես, բաղձալի և ցանկալի աշխարհակեցույց Փայտ սուրբ, քանզի Մովսեսը մոգական գավազանը քո սքանչելի ներգործությանն օրինակելով, տասն հարվածով պատուհասելով դատապարտում էր Եգիպտոսը և գառների արյամբ շաղախում էր երկու [տեղ] բարավորներին[22] և Իսրայելի որդիների տան սեմերին ու փրկում էր ժողովրդին անգրանկածախ ոչնչացումից[*] : Իսկ դու հարվածեցիր մահվան իշխանությանն ու դժոխքի պետությանը և անապական Բանի արյամբ, որ հոսեց քեզ վրա [և] տպավորելով կերպարանվում է մեր հոգու և մարմնի վրա, փրկելու ես մեզ ապագայի բարկությունից, որ ամբարված պահվում է սատանայի և նրա գործակիցների համար, ըստ Աստուծո արդար դատաստանի:*

*12. Բարեբանյալ ես, գերապանծնաձև[23], արփիափայլ քառաթև աստուածընկալ սուրբ նշան, քանզի Մովսեսն իր գավազանը քեզ տպավորելով գաղափարած, հարվածելով բաժանում էր Կարմիր ծովի անդնդային խորքերը՝ փոսահերձ, փողոցաձև ճանապարհ բացելով եբրայեցիների բանակին, և խրոխտացած փարավոնին իր կառամարտիկ զորքով հանդերձ ընկղմում էր Կարմիր ծովում[**] : Իսկ դու մեզ համար որպես մկրտության ավազան բացեցիր Հորդանանի ջրերը և հավատացյալներին առաջնորդելով փոխադրում ես ի Վերին Երուսաղեմ, ինչպես և ջախջախելով փշրեցիր կամակոր վիշապի, անմարմին փարավոնի որջացյալ[24] գլուխը տարտարոսում գտնվող իր լեգեովն զորքերով հանդերձ:*

*Բարեբանյալ ես քառաթև լուսածին գերապանծ նիշ, քանզի քո նմանողությամբ Մեռայում Մովսեսը ձեռնափայտը քեզ օրինակելով դառնահամ ջրի մեջ էր մտցնում և համեղաճաշակ քաղցրության վերափոխելով, հագեցնում էր եբրայական բանակի ծարավի պասքումը[***] : Իսկ քեզնով աղբերացած կողահոս կենդանի ջրի ըմպումը՝ մաքրագործեց բոլոր ջրերի էությունը և բացելով սուրբ ավազանի արգանդը, քաղցրացրեց անծնդրական տունկի դառնությունը՝ վերածելով կյանքի:*

*Բարեբանյալ ես հրաշակերտ և լուսազարդյալ աստուածընկալ Փայտ սուրբ, քանզի քո նմանության ձեն ստացած օրինադրի[****] գավազանը հարվածում էր ապառաժ և անտաշելի վեմի կարծրությանը և բխելով հոսում էին ջրի վտակները հագեցնելով Իսրայելի որդիների անհագությունը: Իսկ Քեզնից բխած կողահոս աղբյուրից ամբողջ տիեզերքն արբեց անապական բաժակով և լցվեց առատության ուղխերով[25], որին ակնարկելով խորհրդանշանակորեն ասում է Պողոսը. «Ըմպում էին նրանք այն վեմից, որ գնում էր նրանց հետ, և այն վեմը Ինքը՝ Քրիստոսն էր, Իսրայելի Աստվածը» (Ա ԿՈՐ. Ժ 4):*

*Բարեբանյալ ես Փայտ սուրբ, հրաշագեղ, քառասայրի, Անեղի արյամբ աներթելի սրված՝ վայր ապաստանի, քանզի մեծն Մովսեսը ընդդեմ Ամաղեկի [պատերազմում] լեռան վրա իր բազուկները քեզ նմանեցնելով, որ պահապան և ապավեն ես իսրայելյան բանակի, կործանում էր ընդդիմամարտին[*****] : Իսկ անսկիզբն Բանն*

---

22 Դռան շրջանակի վերևի մասը:

* Տե՛ս Ելք ԺԲ 22-23:

23 գերապանծաձև-փառավորաձև, շքեղաձև

** Տե՛ս Ելք ԺԴ 27-28:

24 որջացեալ-իր որջում դարանված

*** Տե՛ս Ելք ԺԵ 25:

**** Ակնարկում է Մովսես մարգարեին:

25 ուղխ-հեղեղ, վտակ

***** Տե՛ս Ելք ԺԷ 11:

*Աստված ճշմարիտ մարդեղությամբ Գողգոթայի սուրբ կոհակին[26] Իր աշխարհակեցույց և սուրբ բազուկները քեզ վրա տարածեց և վանելով պատժեց անմարմին Ամաղեկին և տիեզերքը վերակոչեց դեպի փրկություն:*

*13. Բարեբանյալ ես ամենաօրհնյալ և զարդափայլյալ Փայտ սուրբ, քանզի մեծն Մովսեսը քո օրինակին նմանեցրած պղնձե օձը ձողին բարձրացնելով վերացնում էր օձերի դառնաթույն հարվածները եբրայեցիների բանակից՝ նրանցից, ովքեր վերանկատյալ տեսնում էին ձողի վրա բարձրացված օձին: Իսկ ովքեր ճշմարիտ հավատքով վերհայելով քեզ են նայում և մտքի աչքերով քեզ վրա տեսնում Փրկագործին, ազատվում են վիշապի դառնաշունչ թույներից, որ մեղքով վիրավորում է մարդկանց հոգիները, ինչպես կանխագրեց Մովսես երանելին. «Թե կտեսնես քո կյանքը փայտից կախված» (Հմմտ. Բ ՕՐ. ԻԸ 66): Եվ, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քո օրինակով ձևավորված Ահարոնի գավազանը ծաղկեց ընկույզի բողբոջից, որպես ընկույզ ամբողջությամբ յուղի առատությամբ բորբոքելով ճրագի ճառագայթները: Իսկ քեզ վրա բողբոջած ծաղկյալ գավազանը՝ բխելով Հեսսեի արմատից, յուղի առատությամբ լուսավորում է խավարաբնակ հեթանոսներին:*

*Ո՜վ սուրբ քառաթև, դու ես գավազան ուղղության, գավազան արքայության ընդդեմ թշնամու:*

*Բարեբանյալ ես աշխարհակեցույց Փայտ սուրբ, քանզի դու ես գավազան զորության առաքված Սիոնից՝ իշխանություն հաստատելով հակառակամարտ թշնամու վրա: Հեսու Նավեն գայիսոնը չարժելով կործանեց* Գայիա քաղաքը**, իսկ անժամանակն Աստված որոտաձայն քեզ վրա բարձրացավ, հարձակվեց դժոխքի վրա, կործանեց սատանայի ամրարները և գերյալներին վերափոխեց դեպի հավիտենական կյանքի հույսը:*

*Բարեբանյալ ես ամենօրհնյալ և աշխարհակեցույց Փայտ սուրբ՝ Երուսաղեմում բարձրացված լեռ, քանզի Դավիթը վերագոչեց քո մասին և ասում է. «Աստծու լեռը պարարտ լեռ է, հաստատուն լեռ և պարարտ լեռ, որտեղ բարեհաճեց բնակվել Աստված և Տերն իսկ բնակվելու է այնտեղ հավիտյան» (ՍՂՄ. ԿԷ 16-17բ): Քանզի անորիչ[27] և անբաժանելի է Աստուծո զորությունը կենդանարար սուրբ խաչից և չի պարաբառնում[28] ու չի բաժանվում սրանից:*

*Բարեբանյալ ես ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի սերովբեների Թագավորն ու հոգեղեն պետությունների Իշխանը, բարեհաճեց բնակվել քո քառաթև սեղանի վրա, համաձայն Դավթի կանխասացության. «Նա ելավ բարձունքներն ու գերեվարեց գերիներին. ավար առավ, պարգևներ բաշխեց ու տվեց մարդկանց որդիներին» (ՍՂՄ. ԿԷ 19): Քանզի Աստվածն համայնի բարձրացավ փայտակերտ տաճարեղեն սուրբ խաչի այս բարձր դիտանոցը և հարձակվեց դժոխքի վրա ու գերեց գերողներին և վերացրեց գերությունը:*

*14. Բարեբանյալ ես ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի քո մասին Սողոմոնը կանխասում է. «Նա կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան և վստահությամբ հենվում նրա վրա, ինչպես Տիրոջ վրա» (ԱՌԱԿՔ. Գ 18) և վերստին առձայնում. «օրհնյալ է այն փայտը, որով արդարություն է լինում» (ԻՄԱՍՏ. ԺԴ 7):*

---

26 կոհակ-ալիք, ծովային լեռնացած ալիք

* Տե՛ս Հեսու Ը 18-19:

** Քանանացիների թագավորանիստ քաղաքը:

27 անորիչ-անսահման

28 պարաբառնել-դուրս գալ միջից, ջնջվել

*Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի Եսային քո մասին կանխագուշակելով ասում էր. «քանի դեռ երկրի վրա չի հաստատել դատաստանը. և հեթանոսները իրենց հույսը պիտի դնեն Նրա անվան վրա» (ԵՍ. ԽԲ 4):*

*Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի դու երկրի վրա բարձրացար ի դատապարտություն հրեաների և քո թևերի հովանու ներքո փափագելով հանգստացան բոլոր հեթանոսները: Եվ կրկին քո մասին, ամենօրհնյալ Փայտ սուրբ, գոչում է Եսային. «քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի տվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի» (ԵՍ. Թ 6): Քանզի կատաղած հրեաները համայնի Աստծուն տանում էին ի սուրբ Գողգոթա և Ինքն էր խաչափայտը ուսամբարձ արել, որով մոլորյալ ոչխարին, մարդկային բնությունը վերամբարձեց:*

*Բարեբանյալ ես ամենօրհնյալ Փայտ սուրբ, կառք Աստուծո, ինչպես Ամբակումն է վերագոչում. «որպեսզի բարձրանաս քո ձիու վրա, իսկ քո հեծնելը փրկություն է» (ԱՄԲ. Գ 8, Շարական ԱՎԱԳ. ՕՐՀՆ. ԲՋ, Բ տուն), քանզի անմահ արքան քեզ վրա բեռնվեց և Իր աստվածահրաշ զորությամբ պարտության մատնեց թշնամուն:*

*Բարեբանյալ ես, ամենօրհնյալ Փայտ սուրբ, քանզի Պողոսը հրաշափառ մեծ խորհուրդ է վերագրում. «որովհետև կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն» (Ա ԿՈՐ. Ա 18): Աստվածային զորությունները քեզնից անքակելի և անորոշ [է համարում] և կրկին առձայնելով վերագոչում է. «Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (ԳԱՂ. Զ 14): Քանզի դու ես քառաթև, «Քառակուսի ազանց հովանի և պահապան ի յերս և ի մուտս, որ փրկեա զմեզ յայսոց, և պարիսպ ես մեզ ամրութեան և քաղաք ապաստանի և դրոշմ աստուածային նկարեալ ի դէմս ամենից» (ՄԱՆԿՈՒՆՔ ԽԱՉԻ ԳԿ Բ և Գ տուն), բոլորի համար լինելով աստվածային հարմար օթևան մաքրափայլ խորհրդով: Եվ քեզնից են փայլում արեգակնային ճառագայթները՝ Կաթուղիկե, Առաքելական Եկեղեցու փառքի պսակ և Քրիստոսի պատկերի լույս: Քեզնով են միշտ ուրախանում վերնական չորս պետությունները: Քեզնով կնքվելով են մաքրվում մեր կերակուրն ու ըմպելին:*

*Դու ես մեր պահապանը ցերեկ և գիշեր, կանգնելիս և քայլելիս, ննջելիս և արթնանալիս:*

*Դու ես պահապանը ողջերի և մեռյալների: Քո զորությանն ապավինելով և քեզ փափագելով, քո քառակերպյան տեսքն ենք խորհրգանշում քարերի, փայտերի և բոլոր գոյացական տարրերի վրա՝ կանգնած կառուցում և ընկած երկրպագում ենք աստվածազան սուրբ նշանիդ:*

*Դու ժամանակին երկնքից երևալով զորացրեցիր սուրբ Կոստանդիանոսին:*

*Դու կատարածին պիտի գաս արփիափայլ ճառագայթներով, ահարկություն բերելով թշնամիներին և պարծանք քեզ երկրպագող հավատացյալներին:*

*Բարեբանյալ ես, ո՛վ սուրբ նշան անպարտելի, քանզի քո մյուսանգամ գալստյան ժամանակ պիտի հաղթես արեգակնային ճառագայթներին:*

*15. Խոսեցի քեզ հետ ինչպես շնչավոր էակի հետ, որպես ողջակեզի խունկ վերընկալ մեր շրթունքների պտուղը՝ ինձնից ներքաղված իմ խոստովանության որպես այրու երկու խերեբշներ[29] և ստորաջնջելով[30] իմ հանցանքների ձեռագիրը, պատառիր մեր մեղքերի կտակը՝ շրջապարսպելով ամրացրո՛ւ մեզ գիշեր և ցերեկ, պահպանի՛ր մեզ երևելի և աներևույթ թշնամուց ի Քրիստոս Հիսուս՝ ի Տեր մեր, որին փառք հավիտյանս. ամեն:*

*Թարգմանությունը՝*
***Բագրատ աբղ. Գալստյանի***

29 խերեբշ-լումա

30 ստորաջնջել-իսպառ ջնջել արմատից, հիմքից

*Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

# ՆԱՐՈՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԱՄ ԾԵՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

«Սասնա ծռեր» դյուցազնավեպում, Մեծ Մհերի գերեզմանը նկարագրելիս, շեշտվում է նաև այն, որ նրանից կանաչ-կարմիր բոց (լույս) է դուրս գալիս.

Դավիթ իրիշկեց էն կրակ, էլավ գնաց վեր:
Գնաց, տեսավ կո, գերեզման մի կա էնտեղ,
Կանաչ-կարմիր բոցն էդ գերեզմանեն կելնի:
Լուս կամար գերեզմանի վերան կանգնե:
Դավիթ գնաց մոտ, ձեռ էտու բոցին—ձեռն չէրեց:
Հող թալեց վերան—չը հանգավ:

Մեջբերված կտորը «Մարութա վանքի վերաշինումը» գլխից է, որ հայ էպիկական շարքի ամենից ուշագրավ մասերից է, տիեզերածնության առասպելի գողտրիկ մի նկարագրություն, հնդեվրոպական աշխարհայացքի հենքի վրա կառուցված դիցաբանական մանրամասների վերապրուկ, որով հայկական նյութը դժբախտաբար այնքան էլ հարուստ չէ: Այս առումով այն բացառիկ արժեք է ստանում:

Գույների այս ընտրությունը պատահական չէ: Կանաչ-կարմիրը թերևս այնքան հին է, ինչքան մարդկության պատմությունը[1]: Բնականաբար այն իմաստային մեծ լիցք է պարունակում: Դա ամենից լավ երևում է նարատ-ի խորհրդի մեջ. նարատ-ը այն եռագույն[2] (ուշ շրջանում՝ նաև երկգույն)՝ կանաչ-

---

[1] Այս մասին են վկայում առասպելա-ծիսական բազմաթիվ ցուցումները, ըստ որում կանաչ-ին հաճախ փոխարինում է սև-ը կամ կապույտ-ը /տես R. Thurnwald, Psychologie des primitiven Menschen, 1922, p. 168 ff/.

Л. Сараджева, Сравнительно-типологическое Исследование Цветовых Обозначений в Древнеармянском и Старославянском Языках, ՊՀԲ, 1976, №4, էջ 186–198:

[2] Սակավ դեպքերում գունային սպեկտրը հասցվում է 7-ի, ինչպես Ալաշկերտի հարսանեկան արարողության դեպքում, որ կարող է լինել ուշ շրջանի վերափոխման արդյունք: Ի դեպ, նարոտի 7×7 հանգույցները խորհրդանշում են ըստ մեզ Զատկի Հինունքի օրերը, ի տարբերություն եռագույնի 7 հանգույցների, որի դեպքում սրանց գումարը հավասարվում է 21-ի և ներառնում Կարմիր կիրակին, այսինքն՝ կարելի է մտածել, որ սա է եզրափակել զատկական օրերը: Հետաքրքիր է նաև այն, որ այս բարբառում այն արտացոլված է արոտիք /*նարոտիք/ ձևով, Աճառյանի արձանագրած նարօդ ձևի կողքին /տե՛ս ՀԱԲ, 3, 433/:

կարմիր-սպիտակ ժապավենն է, «որ կապվում է երեխայի վզին մկրտության ժամանակ, իսկ պսակադրության դեպքում հարս ու փեսայի վզին»[3]:

Էպոսում կանաչ-կարմիրը ոչ խոսքային կոդի դրսևորում է և օժտված է տրանսցենդենտալ զորությամբ, ապահովում է վերտարածական և վերժամանակային կապ՝ հաղորդվողների կամ հարաբերվողների միջև:

Նարոտի խորհուրդը ներառվում է, ինչպես նշվեց պսակադրության մեջ: Սա անշուշտ ծիսական թագադրության՝ գերագույն իշխանության արտահայտությունն է, ավելի ճիշտ կլինի ասել՝ անընդմեջ նմանակումը: Սովորաբար. «շաբաթ օրը առաստեսան հրավիրում են ազգական և հարևան կանայք թագուրին թագ կապելու: Սրանք բոլորն էլ մի մի խնձորի մէջ արծաթի դրամներ ցցած և մի քանի մետաքսեայ թել բերում և տալիս են խաչեղբօր կնոջը: Սա խնձորներն ու դրամը յանձնում է թագուորի մօրը ... Յետոյ մետաքսեայ թելերից, որ երեք գոյնի՝ կանաչ, կարմիր և սպիտակ են լինում, հիւսում են մի գեղեցիկ պսակ և ամրացնում թագուորի գլխարկի վրայ»[4]:

Հարսանեկան արարողութիւնը վերջանալուց հետո, երբ հյուրերը հեռանում են, փեսան մոտիկ ազգականների ու քավորի ուղեկցությամբ այցի է գնում նախնիների գերեզմանին[5]: Այստեղ պետք է նկատել, որ սա կատարվում է նարոտի հանգուցված լինելու պարագայում (հմմտ. Էպոսում Դավթի՝ ծնողների գերեզմանին այցի գնալը):

Նարոտը քանդելուն հետևում է մուտքը առագաստ. «Էս խառսնիս որ պրծան, հելան կեթան, խառսնաքուր կմնա խառսի մոտ, հրաման չկա էտոնց քյնել մինչև արոտիք չկտրեն, Էրկու օր եդո տերդեր կբերա, տերդեր գյուքա ավետարան կկարդա, արոտիք կհարձկա, նոր հարս ու փեսեն կմտնեն առագաստ, հարսնաքյրոջ նվեր կտան ճամփու կդնեն կէթա»[6]:

Ընդհանուր առմամբ, նարոտի խորհրդի հետ առնչվող արարողությունները կարելի է բաժանել երկու մասի՝ նախածննդյան և հետծննդյան: Հետծննդյան ծեսերից մեկը մկրտությունն է. «Ծննդից 3-8 օր յետոյ կատարում են կնունքը: Տատմերի ձեռքով ուղարկելով քաւորին «խոնչա» (հալուայ, հաւ, փլաւ), երբեմն էլ ոչխար՝ եղջիւրներին կանանչ-կարմիր թել կապած, և կամ մի փոքրիկ գլուխ շաքար, հրաւիրում են գալ երեխան կնքելու ... գալիս է և կնքահայրը իւր հետ բերելով մի զոյգ մոմ, նարօտը և մի գունաւոր թաշկինակ: Գիւղերում սովորաբար եկեղեցումն են մկրտութեան խորհուրդը կատարում և միայն եկեղեցի չեղած դէպքում տանն են մկրտում և համարեա միշտ՝ թոնրի[7] վրայ»[8]:

---

[3] Ս. Ամատունի, Հայոց Բառ ու Բան, Վենետիկ, 1912, էջ 501:

[4] Ազգագրական հանդես, Զ գիրք, 1900, էջ 253:

[5] А. Е. Тер-Саркисянц, Брак и Свадебный Цикл у Армян, Кавказский Этнографический Сборник, IX, Москва, 1989, с. 257.

[6] Ռ. Գրիգորյան, Ալաշկերտի հարսանիք, Հայ Ազգագրություն և Բանահյուսություն, N⁰ 14, 1983, էջ 243:

[7] Օջախը (թոնիր) սովորաբար նախնյաց հավատալիքներում ընկալվում է որպես «զոհարան» (Иванов В., Топоров Б., Исследования в Области Славянских Древностей, Москва, 1974, с. 249). սրանով իսկ շեշտվում է ծննդկանի՝ «զոհի» կարգավիճակը:

[8] Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1900, Զ գիրք, էջ 280. Բ գիրք, 1897, էջ 148:

Հոտծննդյան արարողություններից մյուսը քառասունքից (կոխ) դուրս գալն է, երբ ծննդկանն այլևս ազատված է ամեն տեսակ չարիքներից ու վտանգներից. «Տատմերը յոթ հավից մի-մի փետուր փետելով և յոթ գույն թել վերցնելով ելնում էր կտուրը և հերթիկից կանչում,-ըստրա քռասունքը կտրե՞մ,-տան ներսից պատասխանում էին՝ կտրիր: Երեք անգամ այսպես հարցնելուց և պատասխան ստանալուց հետո տատմերը փետուրները ու թելը կտրատում էր երեխայի ոտների տակ»[9]:

Հայկական հնագույն հավատալիքների համակարգում պետք է առանձնացնել մեկ այլ երևույթ. դա Զատկի հետ առնչվող Կանաչ-Կարմիր կիրակի տոներն են: Օրմանյանը նկատել է, որ այս տոներին վերաբերող պատմական հիշատակներ չեն պահպանվել[10]: Ակնյասկած է, որ սրանք զատկական Հինունքի կարևոր փուլերից են: Կանաչ կիրակին Զատկից երկու շաբաթ անց է տոնվում, երբ «քանդվում» են սպիտակի և կանաչի «հանգույցները», այսինքն՝ լրանում են այս երկուսի 7-ական օրերը, իսկ Կարմիր կիրակին՝ երեք շաբաթ անց, երբ լրանում են երեք գույների 7-ական օրերը:

Նույն ժողովրդական հավատալիքներում նարոտն օգտագործվել է որպես բուժական հմայիլ, երբ ցանկացել են հողից հանել, ասենք, ամենազոր բուժական հատկություններով օժտված դեղաբույսերը: Այսպես. Գագիկ-Հեթումյան բժշկարանում կարդում ենք. «Եբ լուսինն փլէ յառջի Ե շաբթին, առ խունկ և կարմիր նարօտ կամ այլ ինչ կարմիր. գնա ի գաղտիկուրն բանջար, զխունկ ծխէ ի նոր պուտուկ կրակով. դանկով զտակն փորէ և զդանակն ի տակն ի ցից արա և զկարմիրն ի տակն կապէ և ասա. հրաւիրած ես գաղտիկուր զցաւու դեղ, սնգան ֆուլ, նա զքեզ վաղն կտրեմ և դարձիր յարևելս Գ ծունր ած ողջնա Աստուծով»[11]: Ինչպես նշում է Օդաբաշյանը, բուժական հմայության արարողությունների ժամանակ նարոտը ներկայանում է կա՛մ որպես ոգի, կա՛մ որպես միջոց, որին պետք է դիմել այս կամ այն հիվանդության բուժման նպատակով. «... կարմիր և սպիտակ նարաստ՝ մաւր ու դստեր մանած. Է հետ հանգուց արա»[12]: Սա մի տեսակ սրբազան զոհողության խորհուրդ ուներ, որին ենթակա էին նաև կենդանիները: Մատաղացու կենդանիներին ևս «զգեստավորում են» նարոտի ժապավեններով, որ ոչ այլ ինչ է, քան փրկությանը և հավերժությանն ուղղված խնդրանք: Սա նշանակում է, որ հնուց ի վեր տարբերություն է դրվել պարզ զոհողության՝ սպանդի և նպատակաուղղված՝ ծիսական զոհողության միջև:

Կանաչ-կարմիրի խորհուրդը կարծես քիչ թե շատ ուրվագծվեց, իսկ ի՞նչ դեր ունի սպիտակն այս եռագույնի մեջ: Ինչպես վերը շարադրվածը կարող է մտածել տալ, մենք հակված ենք հարսանեկան և ծննդի, այսպես ասած, զուտ ազգագրական արտացոլման մեջ տեսնել հնագույն ծիսական հենքը: Եվ այդ պատճառով կարծում ենք, որ հարսանեկան արարողության լիարժեք գաղափարաբանությունը անհնար է պատկերացնել առանց հնագույն ծեսի՝ արարչության խորհուրդի մեջ թափանցելու: Դատելով հնդևրոպական տիեզերածնության առասպելներում ծննդի և օծության բազմաթիվ մանրամասներից, կարելի է

---

9 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի Հայերը, Երևան, 1971, էջ 205-206:

10 Մ. Օրմանյան, Ծիսական Բառարան, Երևան, 1992, էջ 24-25:

11 Գագիկ-Հեթումյան Բժշկարան, Վենետիկ, մատ. ձեռ. № 1281, էջ 333:

12 А. А. Одабашян, Народные Верования Армян, Сб.: Кавказский Этнографический Сборник, VI, Москва, 1976, с. 118.

փորձել ինչ-որ կերպ վերականգնել Նարոտի խորհրդի հետ կապված արարողակարգը. նախ՝ արարման մշտական ուղեկցողը անշեջ հուրն է, սրբազան օջախը (որոշ տեղերում՝ թոնիր)։ Ցատկելով օջախի վրայով (Տրնդեզի), զույգը մաքրագործվում է, կոփվում՝ կրակի բաղադրատարրերի՝ եռագույնի միասնական զորությամբ։ Երկրորդ ակտը սեռական զուգավորման ակտն է, որ տեղի է ունենում բնականաբար օջախի կողքին՝ սպիտակ առագաստում։ Հաջորդ փուլում հայտնվում է նորածինը՝ անկասկած արական սեռի ներկայացուցիչ, որովհետև իգական «ես»-ը չի վերարտադրվում, այլ ինքնագո է։ Վերջապես հաջորդ ակտում (թագադրություն և մկրտություն) կնքահայրը իր պատրաստած սպիտակ շապիկը հագցնում է երեխային և ասում. «Հագցրու սրան հանդերձ փրկութեան և ուրախութեան պատմուճան», հետո գլխին դնում են կնգուղը՝ ասելով «Դիր Տէր սաղաւարտ փրկութեան, պսակ շնորհաց սրա գլխին»[13]։ Ուշագրավ է, որ ծննդկանին հագցնում են սպիտակ շապիկ. այստեղ պետք է հատուկ ընդգծել փոխանցելիությունը՝ մեռյալի սպիտակ պատանք, հարսանյաց սպիտակ առագաստ և ծննդկանի սպիտակ շապիկ։ Վերը բերված կտորի մեջ տրվում է շապիկի և սաղավարտի անունը՝ փրկության, որ կարծում ենք սպիտակի իմաստային նշանակման էական վկայություն է (հմմտ. Որդի Աստծու անունը՝ Փրկիչ)։

Սպիտակն այսպիսով փրկության, ուստի և հավերժության նշանն է, պոտենցիալ զորությունը, իսկ կարմիրն ու կանաչը՝ օպերատիվ զորություններ են։ Կարմիր-կանաչը կապ գցելու ու կապ (բախտ) բանալու համար են, սպիտակը՝ հաշտության, փրկության և հավերժության։

Հաշվի առնելով այս և մի շարք այլ ցուցումներ, փորձենք վերականգնել նաև հայկական հնագույն ծիսական համակարգը հետևյալ փակ շրջանի ձևով.




13 Դերենիկ եպիսկոպոս, Մկրտություն և Դրոշմ (Կնունք). Էջմիածին, 1988, էջ 9. Ս. Պողոսյան, Թեկնածուական Ատենախոսություն, էջ 132, ծնթ. 2։

Հատուկ պետք է կանգ առնել հնդիրանական և խեթական փաստարկների վրա: Այսպես. Խորասանում չարքերին փախցնելու կամ վախեցնելու համար երկաթե իրերից բացի, որոնք դրվում են ծննդկանի գլխավերևում կամ բարձի տակ, երեխայի ձեռքին են կապում ասեղի վրա անցկացրած եռագույն թել[14]:

Հնդկական հին գրավոր աղբյուրներում, մասնավորապես Ուպանիշադներում նշված եռագույնը նյութական կրակի բաղադրատարրերն են, թեև նախանշում են տարբեր նախաստեղծ գույներ. կարմիրը՝ նախնական հուր, սպիտակը՝ նախնական ջրեր, սևը (=կանաչ)՝ նախագո հող: Իսկ ահա Սանքյակարիկայում եռագույնը ներկայացվում է guna-ների՝ «գոյության թելեր»-ի հետ (մի մանդիր, որ վերցված է մանածագործությունից. հմմտ. և հնդկական ավանդական քերականության մեջ միջին բարձրացման ձայնավորները՝ e, o, a /ar/, /al/, որոնք նույնպես կոչվում են guna): Այս guna-ներից յուրաքանչյուրը ունի իր անվանումը՝ սատտվա «կեցություն» /=սպիտակ/, ռաջաս «եռանդ» /=կարմիր/, տամաս «խավար» /=սև/:

Խեթական իրականության մեջ, մասնավորապես Ամանորյա տոների ժամանակ գլխավոր քրմի պարտականությունները դրված են եղել թագավորի վրա և սրա ծիսական դերը աստծուն փոխարինելու մեջ էր: Ծիսական նման արարողություններից մեկում թագավորը արևի աստվածության տաճարում զգեստավորվում է adupli կոչվող հանդերձանքով և կապում կարմիր ու սպիտակ բրդից հյուսած գոտի. մի այլ ծեսի ժամանակ կարմիր-սպիտակ բրդից հյուսած ժապավենը[15] փաթաթում են թագավորի թագին և այլն[16]:

Եթե մի պահ հեռանանք նարոտից և եռագույնը փնտրենք այլ ծիսահմայական իրերի մեջ, ապա պետք է առաջին հերթին հիշել սրբազան հացը կամ բլիթը խեթական համակարգում: Սրանք սովորաբար եղել են երեք գույնի՝ սև, սպիտակ և կարմիր: Ծեսերից մեկի ժամանակ թագավորը կես-կեռ էր անում բլիթները և տեղադրում քարե սյան աջ ու ձախ կողմերում, ըստ կարմիր-սպիտակ հակադրության: Սա խորհրդանշել է արարչական գործողությունը՝ բաժանումը, քանի որ սյունը այս դրվագում փոխարինում է տիեզերական սյանը կամ կենաց ծառին[17]:

Վերջապես, կարևորություն է ներկայացնում այս եռագույնի արտացոլումը պետական դրոշների մեջ. բոլոր այն երկրները, որտեղ ավանդապահությունը լավ հիմքերի վրա է դրված, եռագույնն առկա է, ինչպես. Եգիպտոս, Եթովպիա,

---

[14] S. A' Mirnya, Ilha va tāyefe-haye 'as˘āyerī-e-Xorāsān, Tehran, 1991. Իրան-նամէ (Արևելագիտական Հանդէս), թիւ 4–5, 1995, էջ 31:

[15] Ծավոք սրա խեթական անվանումը գրավոր աղբյուրներում չի պահպանվել:

[16] В. Ардзинба, Ритуалы и Мифы Древней Анатолии, Москва, 1982, с. 53, 56.

[17] В. Ардзинба, նշվ. աշխ., էջ 104. Տոպորովն այս կապակցությամբ գրում է. «Հնագույն պատկերացումների համաձայն ծայրահեղ իրավիճակում տարածությունը և ժամանակը հին և նոր տարվա հատման տեղում կորցնում են իրենց նախկին կառուցվածքը և «ճեղքվում» այնպես, որ մնում է միայն միասնական տարածա-ժամանակային մի կետ, որտեղ և վճռվում է ամեն ինչ, և որը դառնում է ապագա տարածության և ժամանակի ծնունդը և որն ստեղծվում է արարչության յուրաքանչյուր նոր փուլում» (В. И. Топоров, О Ритуале. Введение в Проблематику: Сб.: Архаический Ритуал в фольклорных и Раннелитературных Памятниках, Москва, 1988, сс. 14-15).

Իրան, Իրաք, Սիրիա, Լիբիա, Հնդկաստան, Շրի-Լանկա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա և այլն:

Այսպիսով, նարոտին անշուշտ վերագրվում է կապ գցելու և կապերը (բախտ) բացելու հմայական զորություն, որը.

ա) հասարակական մակարդակում առնչվում է սերնդափոխության և մարդու հասարակական ֆունկցիաների հաջորդման ու ծանրաբեռնվածության հետ (ինիցիացիա),

բ) ֆիզիկա-ֆիզիոլոգիական մակարդակում՝ մարդկային զույգ սեռերի պտղավորման և բազմացման հետ:

Բոլոր բերված փաստերն օգնում են հայերեն նարատ-ի ստուգաբանությանը: Ինչքան մեզ հայտնի է, միակ ստուգաբանությունը պատկանում է Գ. Ջահուկյանին, որ բխեցնում է *nar- հիմքից և համեմատության մեջ դնում խոտանոսակյան nar- «ներկել» միավորի հետ[18]:

Մենք կանխադրում ենք հնդեվրոպական *sner- «հյուսել» արմատից[19] ածանցված կազմության *nr-o-to /*snrt/, որի մեջ վերջածանցը համեմատելի է հուն.-ωδης-ին:

---

[18] Գ. Ջահուկյան, Հայոց Լեզվի Պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 536: Ճիշտ է, գունային հմայությունը շատ կարևոր է նարոտի պարագայում, բայց սա միակը չէ ծիսահմայական իրերի շարքում, այդ պատճառով գունային փաստարկը սրա ստուգաբանության համար տեղին չէ, և մենք նախընտրում ենք «հանգուցել, կապ գցել» → «հյուսել» իմաստային հիմքը:

[19] J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, 1959, Bern-München, s. 975.

*Գրիգոր Բրուտեան*

# ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԴԻՐՆԵՐԻ ԱՂԻՒՍԱԿԸ

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2001 ձեռագիր մատեանում կայ օրացուցային մի ուշագրաւ աղիւսակ, որ կրում է Անանիա Շիրակացու (Շիրակունու) անունը[1]: Աղիւսակը գծուած է այդ ձեռագրի 45ա էջին : Բաղկացած է 27 տողից եւ մէկ օժանդակ ու 20 հիմնական սիւնակներից: Տողերից իւրաքանչիւրն ունի 20 հիմնական վանդակ. ընդամէնը 27 × 20 = 540 վանդակ: Առիւսակում տրուած են Հայոց օրացոյցի վերադիրները 532 տարիների համար (ստորին տողում վերջից ութ վանդակ պարապ են թողնուած. 540 – 8 = 532 ): Վերջին օժանդակ սիւնակում (ամէն տողի աջ եզրին) նշուած է տուեալ տողի վերջին տարուայ համարը (Ի, Խ, Կ, Ձ,...): Առիւսակում յատուկ նշումներով առանձնացուած են նահանջ եւ տասնինններեակ տարիները: Ահա այդ աղիւսակը այնպէս, ինչպէս այն գծուած է յիշեալ ձեռագրում (տես աղիւսակ Բ):

Մատչելիութեան համար այս նոյն աղիւսակը տալիս ենք նաեւ սովորական («արաբական» կոչուող) թուանշաններով (տես աղիւսակ Գ):

Գ աղիւսակում (տե՛ս հոդվածի վերջում) նահանջ տարիները նշուած են թանձր գրերով, իսկ տասնիննհերեակ տարիները՝ շղագիր:

Աղիւսակիս բացատրութիւնը նոյն ձեռագրի նախորդ 44բ էջին է: Ահա այն.

*«Զմուտ վերադրացս հայոց ՇԼԲ (532) ամաց այսպ[էս]: Կալ զհայ փոքր թուականն թիւ մի պակաս. և յայբէն յառաջ տուր որ ի գլուխ Շէկիդ է: Ուր թիւն սպառի, այն է վերադիր տարոյն յորում ես: Նահանջի ամն Ա(1) կէտիւն է. և Թ և Ժ (19) երեկին Բ (2) կէտիւ: Անանիա Շիրակացին է արարեալ» (ձեռագիր թւ 2001, էջ 44ո):*

Ի՞նչ է նշանակում սա: Ըստ այս բացատրութեան, հարկ է Հայոց Փոքր թուականից հանել մէկ եւ ստացուած տարբերութեամբ նայել աղիւսակի համապատասխան վանդակը, սկսելով վերին ձախ անկիւնից (ուր գրուած է ա) ու շարժուելով ձախից աջ տող առ տող վար իջնելով (ինչպէս սովորական գրութեան դէպքում): Մէկական կէտով նշուած են նահանջ տարիները, երկուական կէտով՝ տասնիններեակները: Բացատրութիւնից յետոյ յաւելուած է, որ դա կազմել է (արարել է) Անանիա Շիրակացին:

Աղիւսակի կիրառման կերպը հասկանալի է, բացատրուած է շատ պարզ: Բայց այս մի քանի տող բացատրութեան եւ աղիւսակի միջեւ կան մի քանի <u>շատ լուրջ</u> հակասութիւններ: Նախ սկսենք նրանից, որ ըստ սոյն բացատրութեան, աղիւսակիս արարողն է Անանիա Շիրակունին: Միեւնոյն ժամանակ, առիւսակից օգտուելու կանոնը ասում է, որ այս աղիւսակից օգտուելու համար հարկ է կիրառել Հայոց Փոքր թուականը: Ինչպէս յայտնի է, Փոքր թուականը սկսւում է 1084 թ. Օգոստոսի 11-ից (կամ 1085 թ. Յունուարի 1-ից)[2]: Միեւնոյն ժամանակ, Անանիա Շիրակունին էլ ապրել եւ գործել է եօթներորդ դարում, երբ տակաւին չկար Հայոց Փոքր թուականը, ուրեմն եւ չէր կարող Փոքր թուականի վերադիրների համար աղիւսակ կազմել: Ինչպէ՞ս կարելի է իրար համաձայնեցնել սա եւ ձեռագրի յայտնածը Անանիայի հեղինակութեան մասին: Նախքան սրան պատասխանելը, նայենք միւս հակասութիւնները եւս:

Երկրորդ հակասութիւնը այն է, որ ըստ սոյն աղիւսակի բացատրութեան, այստեղ ներկայացուած է Հայոց Փոքր թուականը, մինչդեռ վերադիրների այն համակարգը, որ մատուցուած է այստեղ, ենթադրում է բոլորովին այլ օրացոյց: Իրօք, այս աղիւսակում ներկայացուած է վերադիրների մի համակարգ, որում իւրաքանչիւր հասարակ տարուայ վերադիրը ստացւում է նախորդ տարուայ վերադրին 11 գումարելով, նահանջ տարիներին 11-ի փոխարէն յաւելւում է 10, տասնիններեակ տարիներին՝ 11-ի փոխարէն յաւելւում է 12, իսկ եթէ տարին միաժամանակ ե՛ւ նահանջ է, ե՛ւ էլ տասնիններեակ, ապա նախորդ տարուայ

վերադիրին յաւելւում է 11 (տե՛ս Բ եւ Գ աղիւսակները) : Իսկ սրա հետ միասին յայտնի է, որ Յովհաննէս Սարկաւագի բարեփոխումից յետոյ Հայոց Փոքր թուականի տարեմուտը անշարժացուած է, եւ ամսակարգում ներմուծուած է նահանջի օր (չորս տարին մէկ՝ Մեհեկան եւ Արեգ ամիսների միջեւ), որով եւ այսպիսի՝ բարեփոխեալ Հայոց Փոքր օրացոյցը իր ներքին կառուցուածքով լրիւ ներդաշնակ է դառնում հռոմէական Յուլեան օրացոյցին: Իսկ դա նշանակում է, որ բարեփոխեալ Հայոց Փոքր օրացոյցի վերադիրների համակարգն էլ պիտի համանման լինէր Յուլեան օրացոյցի վերադիրների համակարգին: Եւ, Յուլեան օրացոյցում էլ, ինչպէս գիտենք, վերադիրների համակարգը հետեւեալն է: Իւրաքանչիւր տարուայ վերադիրն ստացւում է նախորդ տարուանին 11 գումարելով (այսպէս է եւ նահանջ տարիներին), ու միայն տասնիններեակ տարիներին 11-ի փոխարէն նախորդ վերադիրին յաւելւում է 12[3]: Իսկ Սարկաւագադիր կարգին վերաբերող տոմարական Պատճէնում ուղղակի գրուած է. *«Վերադիր այսպէս արա. ... կալ զվերադիր հռոովմին, Ե(5) ի վերայ ած, և այն է»*[4]: Այսինքն, Սարկաւագադիր կարգի վերադիրը հռոմէականից տարբերւում է միշտ 5-ով , ուրեմն եւ՛ փոփոխւում է վերջինիս հետ միեւնոյն օրէնքով:

Այսպիսով, սոյն աղիւսակում ներկայացուած վերադիրների համակարգը չի համընկնում Սարկաւագ վարդապետի բարեփոխած Հայոց Փոքր օրացոյցի վերադիրների համակարգին: Միեւնոյն ժամանակ, վերադիրների այս համակարգը իր ներքին կառուցուածքով նոյնաբար համընկնում է վերադիրների այն համակարգին, որ կիրառուել է Հայոց Մեծ թուականի աւանդական ամսակարգի հետ: Այս համակարգը նահանջի օր չէր պարունակում, եւ դա էլ բերում էր նրան, որ հարկ էր լինում նահանջ տարիներին (երբ հայկական ու հռոմէական ամսաթուերը իրարից մէկ օրով շեղւում էին) հայկական վերադիրը մէկով պակասեցնել: Այսպէս, Յովհ. Սարկաւագի անուամբ հրատարակուած տոմարական պատճէնի՝ Հայոց Մեծ թուականին վերաբերող մասում կարդում ենք. *«Վերադիրով վերադիրն այսպէս արա. կալ զանցեալ վերադիրն, ԺԱ(11) ի վերայ ած, ի նահանջի ամի Ժ(10) ած, յիննտասներեկի ամին ԺԲ(12) ած, ի նահանջի և յիննտասներեկի ամի ԺԱ(11) ած»*[5]: Այսպէս է հայկական վերադիրների համակարգը նաեւ Անանիա Շիրակունու կազմած ՇԼԲ բոլորակի հայկական ամիսներով հատուածում[6]:

Այսինքն, պատկերն այստեղ հետեւեալն է: Աղիւսակում ներկայացուած է վերադիրների մի համակարգ, որն իր կառուցուածքով իրօք համընկնում է Անանիա Շիրակունու կիրառած համակարգին եւ պիտանի է միայն 365-օրեայ աննահանջ ամսակարգով օրացոյցի համար: Իսկ Սարկաւագ վարդապետի բարեփոխած Հայոց Փոքր օրացոյցի նահանջաւոր 365,25 -օրեայ ամսակարգի համար վերադիրների այսպիսի համակարգը կիրառելի չէ, թէպէտ աղիւսակը բերուած է հէնց Հայոց Փոքր օրացոյցի համար, եւ դրա կիրառման կերպն էլ բացատրուած է այդ նոյն՝ Հայոց Փոքր օրացոյցի հիման վրայ:

Ի՞նչ կերպ իրար համաձայնեցնել այս ամենը: Այս՝ իրար հակասող իրողութիւնների համաձայնեցումը կարելի է դառնում, եթէ նկատի ենք առնում, թէ ինչպէս են կատարուել Սարկաւագ վարդապետի օրացուցային բարեփոխումները: Ինչպէս ժամանակին ցոյց է տրուել[7], Յովհ. Սարկաւագը Հայոց օրացոյցի բարեփոխումն արել է երկու փուլով. նախ (1102 կամ 1112 թուին) կազմել է Հայոց օրացոյցի երկրորդ 532-ամեայ աղիւսակը, թուահաշուից դուրս ձգելով Հայոց ՆՕԲ(452) թուից յետոյ յառաջացած «եկամուտ» մէկ տարին, ապա 1117-ին անշարժացրել է Հայոց ամսակարգը, դրա մէջ ներմուծելով նահանջի օր (չորս տարին մէկ): Ընդ որում, 1102 կամ 1112 - 1117 թթ. ընթացքում Հայոց օրացոյցի համար կազմուած երկրորդ 532-ամեայ շրջանը եղել է իր ներքին կառուցուածքով յար եւ նման Անանիայի կազմածին, տարեմուտ է եղել Յունուարի 1-ը եւ ողջ պարբերաշրջանը տրուած է եղել միայն հռոմէական ամիս-ամսաթուերով: Փաստօրէն, Յովհաննէսի կազմած ՇԼԲ աղիւսակի վրայ հիմնուած Հայոց Փոքր թուականը եղել է ըստ ամենայնի շարունակութիւնը Անանիայի բարեփոխած Հայոց Մեծ թուականի. երկուսում էլ տարեսկիզբը Յունուարի սկիզբն է, երկուսում էլ Հայոց ամսակարգը 365-օրեայ է, նահանջի օր չի պարունակում: Եւ այդ է պատճառը, որ Հայոց

ամսակարգով վերադիրների համակարգը աւելի խրթին է, քան հռոմէականով:

Այստեղից արդէն նաեւ կարելի է եզրակացնել, որ աստ քննարկուող վերադիրների աղիւսակը (աւելի ստոյգ՝ դրա նախօրինակը) իրօք հեղինակուած է եռեւ Անանիա Շիրակունու կողմից. փաստօրէն, դա եղել է Անանիայի կազմած ՇԼԲ բոլորակի տարիների Հայոց վերադիրների աղիւսակը: Կարելի է նոյնիսկ ենթադրել, որ նախապէս այն կից է եղել Շիրակունու ՇԼԲ բոլորակին:

Աստ մի փոքր քննենք մեր խնդրոյ առարկայ աղիւսակի վերադիրների համակարգը: Այստեղ առաջին տարուայ վերադիրը ա(1) է, յաջորդը՝ 12, 23,... Ստորեւ աղիւսակի տեսքով տանք մեր աղիւսակի եւ Ա. Շիրակունու ՇԼԲ բոլորակի հայկական մասի առաջին քսան տարիների վերադիրները:

Աղիւսակ Ա

*Թւ 2001 ձեռագրի աղիւսակի եւ Անանիայի ՇԼԲ բոլորակի հայկական մասի առաջին 20 տարիների վերադիրները*

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 16 | 26 |
| 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 25 | 6 | 18 | 28 |

Այստեղ վերին տողում տրուած են քննարկուող աղիւսակի, իսկ ստորին տողում՝ Շիրակունու ՇԼԲ բոլորակի վերադիրները:

Ինչպէս երեւում է այս համեմատութիւնից, Շիրակունու ՇԼԲ-ի վերադիրները, թէպէտ նոյնանման համակարգով են տրուած, այդուհանդերձ նոյնը չեն, ինչ մեր աղիւսակինը: Մեր աղիւսակի վերադիրները <u>միշտ</u> երկուսով փոքր են Անանիայի ՇԼԲ -ի վերադիրներից: Այսպէս է նաեւ 532-ամեակի մնացեալ բոլոր տարիների համար: Ի՞նչ է սա նշանակում:

Երբ Անանիայի ՇԼԲ բոլորակի վերադիրներով հաշւում ենք Լուսնի փուլը նոյն բոլորակում տրուած աւագ լրման օրուայ համար, ստանում ենք ճիշդ արդիւնքներ: Այսպէս. բոլորակի առաջին տարուայ համար տրուած է վերադիրը Գ(3) եւ աւագ լրումը Մարերի Է(7) -ին, օրը՝ Ա(կիրակի): Մարերի 7-ը (Նաւասարդի մէկից հաշուած) տարուայ 277-րդ օրն է ( 9 × 30 + 7 = 277): Սրան յաւելենք 3 վերադիրը, կը լինի 277 + 3 = 280: Իսկ 280 = 9 × 29,5 + 14,5: Այսինքն, հանելով ինը լուսնային ամիս (29 ,5 օրից), կը ստանանք 14,5 մնացորդ, որը եւ Լուսնի փուլն է այդ տարուայ Մարերի 7-ին: Սա հէնց լիալուսնի փուլ է: Այսինքն, սոյն ՇԼԲ բոլորակի առաջին տողում տրուած վերադիրն ու աւագ լրման ամսաթիւը լիովին ներդաշնակ են իրար:

Նոյն կերպ կարելի է ստուգել եւ միւս տարիների տուեալները: Այսպէս. ԻԹ (29)-րդ տարուայ վերադիրը Ե(5) է, իսկ աւագ լրումը ՝ Մարերի Ե(5)-ին, ուրբաթ(զ): Մարերի 5-ը 9 × 30 + 5 =275-րդ օրն է՝ Նաւասարդի մէկից հաշուած: Յաւելենք վերադիրը՝ 275 + 5 = 280: Հանենք ինն ամիս՝ 280 – 9 × 29,5=14,5: Նոյնն է, ինչ որ վերինը: Յաջորդ՝ Լ (30) տարուայ համար վերադիրը ԺԶ (16) է, լրումը՝ Ահեկան ԻԴ(24)-ին: Ահեկան 24-ը տարուայ 8 × 30 + 24 = 264-րդ օրն է: Յաւելենք վերադիրը. 264 + 16 = 280 : Էլի կը տայ Լուսինը 14,5 օրական:

Աղիւսակի վերջին՝ ՇԼԲ[8] տարին վերադիրը Թ(9) է[9], եւ աւագ լրումն էլ Նաւասարդի ԻԶ (26)-ին: Քանի որ վերադիրը հաշւուած է նկատի առնելով սոյն բոլորակի տարուայ սկիզբը, որ Յունուարի սկիզբն է (1-ը, կամ 6-ը), ապա վերադիրը պիտի ցոյց տայ Յունուարին նախորդած Նաւասարդի ամսի 1-ի Լուսնի փուլը (մէկով պակաս): Իսկ այդ Նաւասարդի մէկից մինչեւ նշուած աւագ լրման օրը (յաջորդ Նաւասարդի ԻԶ (26)-ը) 365+26=391 օր է: Սրան յաւելենք եւ վերադիրը. 391+9 =400: Հանենք 13 հատ 29,5, կը մնայ 400–13× 29,5=16,5: Այսինքն, աւագ լրման համար ստանում ենք Լուսինը 16,5 օրական[10] :

Արդ նայենք, թէ ինչպէս են մեր աղիւսակի վերադիրները համապատասխանում հէնց իրենց տարեթուերի Լուսնի փուլերին: Աղիւսակիս առաջին վերադիրը Հայոց Փոքր թուականի առաջին տարուայ համար է (տե՛ս աղիւսակի բացատրութիւնը վերեւում): Փոքր թուականի առաջին տարին, ըստ Սարկաւագ վարդապետի ՇԼԲ բոլորակի, Լուսնի աւագ լրումը եղել է Ապրիլի

13-ին[11]: Այդ տարի հռոմէական 1085 թ. Ապրիլի 13-ը համապատասխանել է Հայոց Հոռի 15-ին (Նաւասարդի 1 = 1085 թ. Փետրուարի 28): Հաշուենք Լուսնի փուլը Հոռի 15-ի համար: Հոռի 15-ը ամսակարգի 45-րդ օրն է: Յաւելենք 1 վերադիրը 45 + 1 = 46 : Հանենք լուսնային ամիսը. 46–29,5 =16,5: Ստացւում է լրման համար Լուսնի փուլը 16,5, որ դարձեալ 2-ով մեծ է պէտք եղածից[12]: Այսինքն, այս աղիւսակի վերադիրները Հայոց Փոքր թուականի տարիների համար Լուսնի փուլերը տալիս են ճիշդ այնպէս, ինչպէս Անանիայի ՇԼԲ բոլորակի վերադիրները Հայոց թուականի առաջին 532 տարիների համար:

Միեւնոյն ժամանակ, ակնյայտ է, որ այս աղիւսակի վերադիրները չեն ստացւում իբր բնական շարունակութիւն Անանիայի ՇԼԲ բոլորակի վերադիրների: Իրօք, Անանիայի ՇԼԲ բոլորակի ՇԼԲ (532) -րդ տարուայ Հայոց վերադիրը Թ(9) է: Ուրեմն, դրա յաջորդ ՇԼԳ (533) տարուայ Հայոց վերադիրը պիտի լինի 9 + 11 = 20 (Ի)[13]: Իսկ այդ տարին նոյնն է, ինչ մեր աղիւսակի (որ նոյնն է Հայոց Փոքր թուականի) առաջին տարին: Եւ մեր աղիւսակում էլ առաջին տարուայ վերադիրը 1(Ա) է: Միեւնոյն ժամանակ նկատենք, որ նահանջների եւ տասնիններեակների յաջորդականութիւնը մեր աղիւսակում նոյնն է, ինչ եւ Շիրակունու ՇԼԲ բոլորակում: Երկուսում էլ առաջին տարին տասնիններեակի սկիզբ է ընդունուած եւ առաջին տարին նաեւ նահանջի առաջին տարին է (չորրորդ տարին նահանջ է): Այսինքն, չենք կարող ենթադրել, թէ մեր աղիւսակի վերադիրների համակարգը նոյնն է, ինչ Անանիայի ՇԼԲ բոլորակինը միայն մէկ-երկու տարով տեղաշարժուած: Սա նշանակում է, որ մեր քննարկած վերադիրների աղիւսակը Անանիա Շիրակունու ՇԼԲ բոլորակում տրուած վերադիրների անմիջական շարունակութիւնը չէ (թէպէտ պէտք է այդպէս լինէր, ելնելով տարիների յաջորդականութիւնից):

Փաստօրէն, ստանում ենք այսպիսի պատկեր. Շիրակունու անուամբ մեզ հասած աղիւսակի վերադիրների համակարգը նոյնատիպ է, ինչ եւ նոյն հեղինակի ՇԼԲ բոլորակի Հայոց վերադիրների համակարգը. երկուսում էլ նոյնն են նահանջների եւ տասնիններեակների տեղերը, եւ նոյնն են վերադիրների յաջորդման օրինաչափութիւնները: Սակայն սոյն աղիւսակի վերադիրները միշտ երկուսով փոքր են ՇԼԲ -ի Հայոց վերադիրներից ու նաեւ այս ՇԼԲ բոլորակի Հայոց վերադիրների անմիջական շարունակութիւնը չեն: Այսինքն, քննարկուող աղիւսակի վերադիրները ոչ նոյնաբար համընկնում են Անանիայի ՇԼԲ բոլորակի Հայոց վերադիրներին, ոչ էլ դրանց անմիջական շարունակութիւնն են:

Ինչպէ՞ս իրար համաձայնեցնել այս ամենը: Յիշենք, որ Հայոց ՆՕԲ (452) թուից յետոյ, երբ Նաւասարդի մէկը համընկաւ գարնանամուտի օրուան (Մարտի 20-ին), Հայոց օրացոյցում յառաջ եկաւ մի «եկամուտ» տարի, որն էլ առիթ եղաւ տոմարական բազում շփոթութիւնների: Հետագայում Յովհաննէս Սարկաւագ վարդապետը 1102 (կամ 1112) թուին, կազմելով Հայոց օրացոյցի երկրորդ 532-ամեայ շրջանի աղիւսակը, նաեւ կարգադրում է տոմարական խառնաշփոթը ու տարեհաշուից դուրս ձգում մէկ «եկամուտ» տարին: Դրանով, ըստ Սարկաւագի կարգադրութեան, Հայոց Մեծ եւ Փոքր թուականների տարբերութիւնը լինում է 533 (եւ ոչ թէ 532)[14]: Ահա, մեր խնդրոյ առարկայ աղիւսակում եւս հաշուի է առնուած (աւելի ստոյգ՝ հաշուից հանուած է) այդ մէկ «եկամուտ» տարին: Այսպէս. ինչպէս վերն արդէն նշուեց, Շիրակունու ՇԼԲ բոլորակի վերջին ՇԼԲ(532) [15] տարուայ Հայոց վերադիրը 9 է: Դրա յաջորդ տարուայ վերադիրը կը լինի 20, եւ այս վերջինիս յաջորդող տարուայ վերադիրն էլ՝ կը լինի1 (20 + 11 = 31: Հանենք 30 , կը լինի. 31 – 30 = 1): Ուրեմն, աղիւսակիս կազմողը (աւելի ստոյգ՝ վերակազմողը) «եկամուտ» մէկ տարուայ հետ միասին դուրս է թողել նաեւ այդ մէկ տարուայ վերադիրը եւ իր աղիւսակի առաջին տարուայ վերադիր է դրել ոչ թէ 533-րդ, այլ 534-րդ տարուայ վերադիրը: Այդ տարին էլ (իր վերադիրով) ընդունել է իբր տասնիններեակի առաջին տարի եւ նահանջի առաջին տարի: Դրանով է պայմանաւորուած նաեւ այն, որ այս աղիւսակի վերադիրներով Լուսնի փուլը հաշուելիս արդէն հարկ չկայ հաշուի առնելու՝ նաեւ նախընթաց ամսակարգի 365 օրերը:

Հարկաւ, չենք կարող ենթադրել, թէ այս ամենը արել է Անանիա Շիրակունին: Նա չէր կարող դա արած լինել, թէկուզ այն պատճառով, որ նրա

ժամանակ տակաւին չկար «եկամուտ» տարուայ գաղափարը. եւ աւելին. այդ «եկամուտ» տարին ու դրա հետ կապուած թիւրիմացութիւնները ծնուել էին Հայոց Մեծ օրացոյցը Անանիայի քարեփոխածից տարբեր՝ Աքանաս Տարօնացու սահմանած աւանդական կերպով ընկալելու հետեւանքով:

Ուրեմն, մնում է մտածել, որ սոյն աղիւսակն իր այս տեսքով արդիւնք է մեզ անյայտ մի տոմարագէտի կողմից Անանիա Շիրակունու ստեղծած աղիւսակի վերակազմման: Այդ (մեզ անյայտ) տոմարագէտը, փաստօրէն, ձեռքի տակ ունենալով Անանիա Անեցու կազմած Հայոց վերադիրների աղիւսակը, եւ հիմք ընդունելով Սարկաւագ վարդապետի օրացուցային շտկումները, Հայոց Փոքր թուականի համար վերակազմել է այդ աղիւսակը:

Թէ ով է եղել Անանիայի աղիւսակի վերակազմողը, այժմ դժուար է ստոյգ որոշել: Չի բացառւում, որ դա լինի հէնց Սարկաւագ վարդապետը: Բանն այն է, որ նա Հայոց օրացոյցի երկրորդ 532-ամեայ շրջանի համար զատկացուցակ (տօնացոյց) աղիւսակը կազմել էր միայն հռոմէական ամիսներով. նրա կազմած ՇԼԲ բոլորակը բացառապէս Հռոմէական օրացոյցի հիման վրայ է: Հայկականն այստեղ բաց է թողնուած: Ուստի, կարելի է մտածել, որ հայկական ամիսներով՝ օրացոյցիս կիրառութիւնը մատչելի դարձնելու համար էլ նա իր ՇԼԲ բոլորակին պիտի կցած լինի այլ օժանդակ աղիւսակներ եւս, որոնց թւում եւ Հայոց վերադիրների խնդրոյ առարկայ աղիւսակը:

Հայոց օրացոյցի երկրորդ 532-ամեայ պարբերաշրջանի համար Հայոց վերադիրների այսպիսի աղիւսակի գոյութիւնը վկայում է, որ Հայոց Փոքր օրացոյցը նախապէս կազմուած է եղել իբր հայկական շարժական 365-օրեայ ամսակարգի վրայ յենուած օրացոյց, շարժական տարեմուտով: Այսինքն՝ իբր Աքանաս Տարօնացու հիմնած Հայոց Մեծ թուականի ուղղակի շարունակութիւն, միայն՝ մէկ «եկամուտ» տարին (եւ դրա վերադիրը) ընդհանուր տարեհաշուից դուրս թողնելով: Ուրեմն,կարելի է տալ եւ այս աղիւսակի վերակազմման հաւանական ժամանակը. դա պիտի եղած լինի, ամենայն հաւասականութեամբ, 1102 (կամ 1112) թուին Սարկաւագ վարդապետի կողմից Հայոց Փոքր թուականը հիմնելու (դրա աղիւսակները կազմելու) առնչութեամբ: Ամեն դէպքում, դա պիտի եղած լինի նախքան 1117թ. Սարկաւագադիր անշարժ (Օգոստ. 11) տարեմուտով եւ կայունացուած ամսակարգով օրացոյցի հիմնումը[16]:

Փաստօրէն, խնդրոյ առարկայ աղիւսակի վերակազմման ժամանակը որոշւում է քաւական սեղմ միջակայքում. այն է՝ 1112 (1102) –1117 թթ. ( աւելի հաւանական է՝ հէնց 1112-ին):

Այսպիսով, ի մի բերելով սոյն քննութեան արդիւնքները, ստանում ենք այսպիսի պատկեր: Անանիա Շիրակունին, ի թիւս օրացուցային այլ աղիւսակների, կազմած է եղել Հայոց Մեծ թուականի առաջին 532 տարիների համար Հայոց վերադիրների աղիւսակ, ուր տրուած են եղել բոլոր 532 տարիների Հայոց վերադիրները[17]: Հայոց օրացոյցի առաջին 532-ամեակի աւարտից յետոյ Յովհաննէս Սարկաւագը (կամ մի այլ ոք՝ Սարկաւագի տոմարական կարգադրութեան կապակցութեամբ) վերակազմում է Անանիայի աղիւսակը եւ այն համապատասխանեցնում Փոքր թուականին. նա հաշուից դուրս է ձգում մէկ «եկամուտ» տարին ու դրա վերադիրը (533-րդը), 534-րդ տարուայ վերադիրը դնում է աղիւսակի գլուխ եւ դրանով սկսում նոր տասնիններեակ ու նահանջ: Արդիւնքը լինում է այն, որ նոր աղիւսակի վերադիրները միշտ երկուական փոքր են լինում Անանիայի ՇԼԲ բոլորակի համապատասխան տարիների Հայոց վերադիրներից: Հիմք ընդունելով այս քննութիւնը, կարող ենք նաեւ փորձել վերականգնել Անանիա Շիրակունու կազմած նախնական աղիւսակը: Այստեղ մնում է միայն մէկ անորոշութիւն. այն է՝ աղիւսակի սկիզբն ու աւարտը (1-ից 532 թթ. թէ՝ 29-ից 560 թթ.): Սա արդէն առանձին քննութեան նիւթ է, որին այստեղ չենք անդրադառնայ:

# ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մատենագրութեան մէջ Անանիայի անունը հանդիպում է տարբեր ձեւերով. Մեծն Անանիա, Անանիա Անեցի, Անանիա Շիրակունի, Անանիա Շիրակացի, Անանիա Համարող եւն: Ինքը իրեն անուանել է Շիրակունի , որ թերեւս ոչ թէ վերադիր անուն է եղել (ծննդավայրը ցուցանող), այլ ազգանուն, տոհմանուն: Ըստ այդմ, այստեղ եւ ստորեւ կը գործածենք Անանիա Շիրակունի ձեւը, թէպէտ այսօր ընդունուած է նրան կոչել Անանիա Շիրակացի:
2. Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց Փոքր թուական (Սարկաւագադիր տոմար), «էջմիածին», 1994, Դ - Ե, էջ 100 – 116, նաեւ նոյնի` Օրացոյց Հայոց, Ս. էջմիածին, 1997, էջ 118 -139:
3. Այս մասին տե՛ս , օր., Յովհաննէս Սարկաւագի ՇԼԲ բոլորակում, ուր տրուած են հռոմէական վերադիրները վերոնշեալ ձեւով: Տե՛ս Աշ. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի Համալսարանի Հրատ. Երեւան, 1956 (այսուհետեւ` Յովհաննէս Սարկաւագ), էջ 191 - 200:
4. Տե՛ս Յովհաննէս Սարկաւագ , էջ 218:
5. Տե՛ս անդ, էջ 207:
6. Տե՛ս Աշ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, ՀՍՍՌ Մատենադարանի Հրատ., Երեւան 1944 (այսուհետեւ` Անանիա Շիրակացի), էջ 263 - 282:
7. Տե՛ս Գր. Բրուտեան, «էջմիածին», 1994, Դ - Ե, էջ 100 - 116:
8. Սա հրատարակուած աղիւսակի վերջին տարին է, իսկ իրականում Անանիայի ՇԼԲ բոլորակն աւարտուել է ՇԿ(560) տարիով: Այս մասին տե՛ս , օր., Գր. Բրուտեան , Օրացոյց Հայոց, էջ 33 - 35:
9. Հրատարակուածում տպուած է ԺԹ (19), որ ակնյայտ վրիպակ է (խմբագրական, կամ տպագրական), զի նախորդ վերադիրը ԻԸ (28) է. 28+11=39: Քանի որ գումարը 30-ից մեծ է, հարկ է հանել 30: 39 – 30 = 9, որ եւ ճիշդ վերադիրն է: Այդ (ՇԼԲ) տարուայ Հայոց վերադիրը Թ(9) է տրուած ձեռագիր բնօրինակում (տե՛ս Մաշտ. Մատենադարան, ձեռ. թիւ 2679, էջ 1բ):
10. Այս դէպքում աւազ լրման համար ստացուած Լուսնի փուլը երկու օրով մեծ է պէտք եղածից: Դա գալիս է նրանից, որ վերադիրները հաշուելիս լուսնային ամիսը ընդունւում է 30 օրական (դա հէնց վերադիրների պարբերութիւնն է), իսկ Լուսնի փուլերը հաշուելիս լուսնային ամիսն ընդունւում է 29,5 օրական: Միեւնոյն ժամանակ, 532 տարում հայկական օրացոյցը հռոմէականից առաջ է ընկնում 133 օրով, որ չորս ամսից մի քիչ աւելի է (համարեայ չորս ու կէս ամիս է): Ահա, 532 տարում գոյացող այս 4 (~ 4,5) ամիսների ընթացքում էլ առաջանում է վերոնշեալ երկօրեայ տարբերութիւնը . 4 × 30 – 4 × 29,5 = 2: Կամ` աւելի ստոյգ` 4,5 × 30 – 4,5 × 29,5 = 2,25 : Հէնց սա էլ գոյացնում է քննարկուող երկու (կամ աւելի ստոյգ` երկուս ու քառորդ ) օրուայ տարբերութիւնը:
11. Տե՛ս Յովհ. Սարկաւագ, էջ 191:
12. Տե՛ս ծանօթ. 10:
13. Այդպէս է, քանի որ այդ յաջորդ տարին սովորական տարի է . ոչ նահանջ է, ոչ էլ` տասնիններեակ:
14. Տե՛ս Գր. Բրուտեան, «էջմիածին», 1994, Դ - Ե, էջ 106 -107, 116:
15. Տե՛ս նաեւ ծանօթ. 8:

16. Սա այսպէս է, եթէ աղիւսակին վերակազմող ենք ընդունում Յովհաննէս Սարկաւագին: Իսկ եթէ համարենք, որ մի այլ ոք է դրա վերակազմողը, կարելի է հնարաւոր սեպել նաեւ դրա ստեղծումը նշուած թուականից յետոյ (պայմանով, որ այդ անողը տեղեակ չլինէր Սարկաւագի տոմարական նոր կարգադրութիւններին): Այս վերջին տարբերակը քիչ հաւանական է: Փ. 1102 (կամ 1112) -ից առաջ ստեղծուած լինելն էլ շատ քիչ հաւանական է, զի մինչ այդ ժամանակ տակաւին չէր լրացել Անանիայի ՇԼԲ բոլորակը, որում բոլոր տարիների համար տրուած էին նաեւ Հայոց վերադիրները:

17. Այժմ դժուար է միանշանակ ասել, Անանիայի աղիւսակը ո՞ր թուականներն է ընդգրկել: Հնարաւոր է, այն ընդգրկած լինի Հայոց ԻԹ (29) - ՇԿ(560) թթ., ինչպէս որ եղել է նրա ՇԼԲ բոլորակում: Չի բացառւում, սակայն, որ վերադիրների աղիւսակը կազմուած լինի Ա (1) - ՇԼԲ (532) տարիների համար, նկատի ունենալով 532-ամեակներով թուականների պարբերացումը: Ամեն դէպքում, վերակազմողը դրել է Փոքր թուականի Ա - ՇԼԲ տարիների համար:

## Աղիւսակ Բ

*Ա. Շիրակունու վերադիրների աղիւսակը ըստ Մատենադարանի թիւ 2001 ձեռագրի*

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | ժբ | իգ | գ | ժդ | իե | զ | ժզ | իէ | ը | ժթ | իթ | ժ | իա | բ | ժբ | իգ | դ | ժզ | իզ | Ի |
| է | ժը | իթ | թ | ի | ա | ժբ | իբ | գ | ժդ | իե | ե | ժզ | իէ | ը | ժը | իթ | ժա | իբ | բ | Խ |
| ժգ | իդ | ե | ժե | իզ | է | ժը | իը | թ | ի | ա | ժա | իբ | գ | ժդ | իդ | զ | ժէ | իը | ը | Կ |
| ժթ | լ | ժա | իա | բ | ժգ | իդ | դ | ժե | իզ | է | ժէ | իը | թ | ի | ա | ժբ | իգ | դ | ժդ | Ձ |
| իե | զ | ժէ | իէ | ը | ժթ | լ | ժ | իա | բ | ժգ | իգ | դ | ժե | իէ | է | ժը | իթ | ժ | ի | Ճ |
| ա | ժբ | իգ | գ | ժդ | իե | զ | ժզ | իէ | ը | ժթ | իթ | ժ | իբ | գ | ժգ | իդ | ե | ժզ | իզ | ՃԻ |
| է | ժը | իթ | թ | ի | ա | ժբ | իբ | գ | ժդ | իե | ե | ժէ | իը | թ | ժթ | լ | ժա | իբ | բ | ՃԽ |
| ժգ | իդ | ե | ժե | իզ | է | ժը | իը | թ | ի | ա | ժբ | իգ | դ | ժե | իե | զ | ժէ | իը | ը | ՃԿ |
| ժթ | լ | ժա | իա | բ | ժգ | իդ | դ | ժե | իզ | ը | ժը | իթ | ժ | իա | ա | ժբ | իգ | դ | ժդ | ՃՁ |
| իե | զ | ժէ | իէ | ը | ժթ | լ | ժ | իա | գ | ժդ | իդ | ե | ժզ | իէ | է | ժը | իթ | ժ | ի | Մ |
| ա | ժբ | իգ | գ | ժդ | իե | զ | ժզ | իը | թ | ի | լ | ժա | իբ | գ | ժգ | իդ | ե | ժզ | իզ | ՄԻ |
| է | ժը | իթ | թ | ի | ա | ժբ | իգ | դ | ժե | իզ | զ | ժէ | իը | թ | ժթ | լ | ժա | իբ | բ | ՄԽ |
| ժգ | իդ | ե | ժե | իզ | է | ժթ | իթ | ժ | իա | բ | ժբ | իգ | դ | ժե | իե | զ | ժէ | իը | ը | ՄԿ |
| ժթ | լ | ժա | իա | բ | ժդ | իե | ե | ժզ | իէ | ը | ժը | իթ | ժ | իա | ա | ժբ | իգ | դ | ժդ | ՄՁ |
| իե | զ | ժէ | իէ | *ժ | ի | ա | ժա | իբ | գ | ժդ | իդ | ե | ժզ | իէ | է | ժը | իթ | ժ | ի | Յ |
| ա | ժբ | իգ | դ | ժե | իզ | է | ժէ | իը | թ | ի | լ | ժա | իբ | գ | ժգ | իդ | ե | ժզ | իզ | ՅԻ |
| է | ժը | լ | ժ | իա | բ | ժգ | իգ | դ | ժե | իզ | զ | ժէ | իը | թ | ժթ | լ | ժա | իբ | բ | ՅԽ |
| ժգ | իե | զ | ժզ | իէ | ը | ժթ | իթ | ժ | իա | բ | ժբ | իգ | դ | ժե | իե | զ | ժէ | իը | ը | ՅԿ |
| ի | ա | ժբ | իբ | գ | ժդ | իե | ե | ժզ | իէ | ը | ժը | իթ | ժ | իա | ա | ժբ | իգ | դ | ժե | ՅՁ |
| իզ | է | ժը | իը | թ | ի | ա | ժա | իբ | գ | ժդ | իդ | ե | ժզ | իէ | է | ժը | իթ | ժա | իա | Ն |
| բ | ժգ | իդ | դ | ժե | իզ | է | ժէ | իը | թ | ի | լ | ժա | իբ | գ | ժգ | իդ | զ | ժէ | իէ | ՆԻ |
| ը | ժթ | լ | ժ | իա | բ | ժգ | իգ | դ | ժե | իզ | զ | ժէ | իը | թ | ժթ | ա | ժբ | իգ | գ | ՆԽ |
| ժդ | իե | զ | ժզ | իէ | ը | ժթ | իթ | ժ | իա | բ | ժբ | իգ | դ | ժե | իզ | է | ժը | իթ | թ | ՆԿ |
| ի | ա | ժբ | իբ | գ | ժդ | իե | ե | ժզ | իէ | ը | ժը | իթ | ժ | իբ | բ | ժգ | իդ | ե | ժե | ՆՁ |
| իզ | է | ժը | իը | թ | ի | ա | ժա | իբ | գ | ժդ | իդ | ե | ժէ | իը | ը | ժթ | լ | ժա | իա | Շ |
| բ | ժգ | իդ | դ | ժե | իզ | է | ժէ | իը | թ | ի | լ | ժթ | իգ | դ | ժդ | իե | զ | ժէ | իէ | ՇԻ |
| ը | ժթ | լ | ժ | իա | բ | ժգ | իգ | դ | ժե | իզ | է | | | | ՇԼԲ | | | | | |

*) Այստեղ բնագրում վրիպակ է, 15-րդ տողի եւ 5-րդ սեան հատման վանդակում ձեռագրում գրուած է «ժթ», որ հարկ է շտկել՝ «թ»: Այս շտկումը բխում է վերադիրների որոշման ընդհանուր կանոնից: Այդուհանդերձ, այս աղիւսակում տրուած է այնպէս, ինչպէս ձեռագրում է:

Աղիւսակ Գ

*Անանիա Շիրակունու վերադիրների աղիւսակը ըստ Մտնդ. թւ 2001 ձեռագրի*

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | *16* | 26 | 20 |
| 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | 12 | 22 | 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | *11* | 22 | 2 | 40 |
| 13 | 24 | 5 | 15 | 26 | 7 | 18 | 28 | 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | *6* | 17 | 28 | 8 | 60 |
| 19 | 30 | 11 | 21 | 2 | 13 | 24 | 4 | 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | *1* | 12 | 23 | 4 | 14 | 80 |
| 25 | 6 | 17 | 27 | 8 | 19 | 30 | 10 | 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | *27* | 7 | 18 | 29 | 10 | 20 | 100 |
| 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 10 | *22* | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 120 |
| 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | 12 | 22 | 3 | 14 | 25 | 5 | *17* | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | 140 |
| 13 | 24 | 5 | 15 | 26 | 7 | 18 | 28 | 9 | 20 | 1 | *12* | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | 8 | 160 |
| 19 | 30 | 11 | 21 | 2 | 13 | 24 | 4 | 15 | 26 | *8* | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 180 |
| 25 | 6 | 17 | 27 | 8 | 19 | 30 | 10 | 21 | *3* | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 200 |
| 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | *28* | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 220 |
| 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | 12 | *23* | 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | 240 |
| 13 | 24 | 5 | 15 | 26 | 7 | *19* | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | 8 | 260 |
| 19 | 30 | 11 | 21 | 2 | *14* | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 280 |
| 25 | 6 | 17 | 27 | *19* | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 300 |
| 1 | 12 | 23 | *4* | 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 320 |
| 7 | 18 | *30* | 10 | 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | 340 |
| 13 | *25* | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | 8 | 360 |
| *20* | 1 | 12 | 22 | 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | *15* | 380 |
| 26 | 7 | 18 | 28 | 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | *11* | 21 | 400 |
| 2 | 13 | 24 | 4 | 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | *6* | 17 | 27 | 420 |
| 8 | 19 | 30 | 10 | 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | *1* | 12 | 23 | 3 | 440 |
| 14 | 25 | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | *26* | 7 | 18 | 29 | 9 | 460 |
| 20 | 1 | 12 | 22 | 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | *22* | 2 | 13 | 24 | 5 | 15 | 480 |
| 26 | 7 | 18 | 28 | 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | 5 | *17* | 28 | 8 | 19 | 30 | 11 | 21 | 500 |
| 2 | 13 | 24 | 4 | 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | 30 | *12* | 23 | 4 | 14 | 25 | 6 | 17 | 27 | 520 |
| 8 | 19 | 30 | 10 | 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | 26 | *7* | | | | | | | | | 532 |

### Աղիւսակ Դ

***Անանիա Շիրակունու Հայոց վերադիրների աղիւսակի նախնականը***

***(վերականգնման փորձ)***

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 25 | 6 | *18* | 28 | 20 |
| 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 1 | *13* | 24 | 4 | 40 |
| 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | *8* | 19 | 30 | 10 | 60 |
| 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | *3* | 14 | 25 | 6 | 16 | 80 |
| 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | *29* | 9 | 20 | 1 | 12 | 22 | 100 |
| 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | *24* | 5 | 15 | 26 | 7 | 18 | 28 | 120 |
| 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | *19* | 30 | 11 | 21 | 2 | 13 | 24 | 4 | 140 |
| 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | *14* | 25 | 6 | 17 | 27 | 8 | 19 | 30 | 10 | 160 |
| 21 | 2 | 13 | 23 | 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | *10* | 20 | 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | 180 |
| 27 | 8 | 19 | 29 | 10 | 21 | 2 | 12 | 23 | *5* | 16 | 26 | 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | 12 | 22 | 200 |
| 3 | 14 | 25 | 5 | 16 | 27 | 8 | 18 | *30* | 11 | 22 | 2 | 13 | 24 | 5 | 15 | 26 | 7 | 18 | 28 | 220 |
| 9 | 20 | 1 | 11 | 22 | 3 | 14 | *25* | 6 | 17 | 28 | 8 | 19 | 30 | 11 | 21 | 2 | 13 | 24 | 4 | 240 |
| 15 | 26 | 7 | 17 | 28 | 9 | *21* | 1 | 12 | 23 | 4 | 14 | 25 | 6 | 17 | 27 | 8 | 19 | 30 | 10 | 260 |
| 21 | 2 | 13 | 23 | 4 | *16* | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | 16 | 280 |
| 27 | 8 | 19 | 29 | *11* | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | 12 | 22 | 300 |
| 3 | 14 | 25 | *6* | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | 13 | 24 | 5 | 15 | 26 | 7 | 18 | 28 | 320 |
| 9 | 20 | *2* | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | 8 | 19 | 30 | 11 | 21 | 2 | 13 | 24 | 4 | 340 |
| 15 | *27* | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 25 | 6 | 17 | 27 | 8 | 19 | 30 | 10 | 360 |
| *22* | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 1 | 12 | 23 | 3 | 14 | 25 | 6 | *17* | 380 |
| 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 7 | 18 | 29 | 9 | 20 | 1 | *13* | 23 | 400 |
| 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | 13 | 24 | 5 | 15 | 26 | *8* | 19 | 29 | 420 |
| 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | 8 | 19 | 30 | 11 | 21 | *3* | 14 | 25 | 5 | 440 |
| 16 | 27 | 8 | 18 | 29 | 10 | 21 | 1 | 12 | 23 | 4 | 14 | 25 | 6 | 17 | *28* | 9 | 20 | 1 | 11 | 460 |
| 22 | 3 | 14 | 24 | 5 | 16 | 27 | 7 | 18 | 29 | 10 | 20 | 1 | 12 | *24* | 4 | 15 | 26 | 7 | 17 | 480 |
| 28 | 9 | 20 | 30 | 11 | 22 | 3 | 13 | 24 | 5 | 16 | 26 | 7 | *19* | 30 | 10 | 21 | 2 | 13 | 23 | 500 |
| 4 | 15 | 26 | 6 | 17 | 28 | 9 | 19 | 30 | 11 | 22 | 2 | *14* | 25 | 6 | 16 | 27 | 8 | 19 | 29 | 520 |
| 10 | 21 | 2 | 12 | 23 | 4 | 15 | 25 | 6 | 17 | 28 | *9* | | | | | | | | | 532 |

*ՌԱՖԱՅԷԼ ՅԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ*
*Պատմ. գիտ. թեկնածու*

# ԲՌՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԼԵՀԱՀԱՅՈՑ ՋԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԷ ԴԱՐՈՒՄ

Հայ պատմագիտութիւնից յայտնի թռուցիկ տուեալների համաձայն՝ հայ ազատագրական՝ մտքի գործիչները շփումներ են՝ ունեցել նաեւ լեհական՝ արքունիքի հետ[1], որը պատմագիտութեան՝ չուսումնասիրուած խնդիրներից է: Լեհ պատմագիտութիւնը եզակի փաստեր է ընձեռում հարցի քննութեան՝ համար*: Կարեւոր են՝ նաեւ բռնի դաւանափոխութեան՝ դէմ լեհահայութեան՝ ինքնապաշտպանութեան՝ առնչուող տուեալները, որոնք հայկական՝ աղբիւրներին՝ համադրելիս, լոյս են՝ սփռում այդ իրողութեան՝ որոշ վիճելի կողմերի վրայ:

Հայ-լեհական՝ քաղաքական՝ կապերն՝ ու լեհահայերի բռնի կաթոլիկացման՝ գործողութիւնները մենք չենք զատում ո՛չ իրարից, ո՛չ էլ հայ ազատագրական՝ շարժման՝ եւրոպական՝ դիմահակութիւնից, որը, լինելով լատինական՝ շարունակութիւնը, լծորդւում է արեւմտեան՝ երկրների արեւելեան՝ քաղաքականութեան՝ ու Հայաստանում Հռոմէական՝ Եկեղեցու ծաւալած քարոզչական- առաքելական՝ գործունէութեան: Ինչպէս յայտնի է, Կիլիկեան՝ Հայաստանի անկմանը նախորդող շրջանից սկսած՝ հայ ազատագրական՝ միտքը յաճախ է փարել քրիստոնեայ Եւրոպայի օգնութեամբ թագաւորութիւնը պահելու կամ վերականգնելու յոյսերին՝ միջնորդ ունենալով Հռոմի Պապերին: Իսկ Հայաստանի թագաւորութեան՝ վերականգնմանը օժանդակելու Եւրոպայի խոստումները միշտ էլ խարսխուած են՝ եղել հայադաւան՝ եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու պայմանների վրայ: Այդ մտայնութեան՝ գաղափարական՝ հիմքը դնելիս ԺԱ-ԺԳ դարերից Կիլիկեան՝ Հայաստանի լատինենակ հոսանքը հրապարակ հանած ՝ Կոստանդին՝ Մեծ կայսեր ու Սեղբեստրոս Պապի եւ Տրդատ Մեծի ու Ս. Գրիգոր Լուսաւորչի միջեւ կնքուած «Դաշանց թուղթն» էր[2], որը Հայաստանեայց Եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու համար օգտագործում էին՝ թէ՛ միութեան՝ պաշտպան՝ հայերը, թէ՛ Հռոմի միարար առաքեալները: Լատին՝ միարարները յաճախ օգտագործում էին՝ նաեւ Ժ դարից շրջանառութեան՝ մէջ դրուած՝ հայերի թագաւորութիւնը «ֆրանկների» օգնութեամբ վերականգնելու մասին՝ Ս. Ներսէս Մեծի տեսիլքը, որը մուծուած էր այդ դարի մատենագիր Մեսրոպ Երէցի «Վարք Ներսիսի» մէջ[3]:

ԺԳ-ԺԴ դարերում, երբ Մամլուքների առաջխաղացմամբ նժարին՝ էր դրուած Կիլիկեան՝ Հայաստանի լինել-չը լինելու հարցը, Հռոմի Պապերը խոստանում էին՝ խաչակրաց արշաւանքներով հայերին՝ ազատել մահմեդական՝ աշխարհի յարձակումներից՝ փոխարէնը պահանջելով իբր թէ դեռեւս «Դաշանց թղթով» ամրագրած հայ-լատին՝ Եկեղեցիների միութիւն: Հեթումեան՝ հարստութեան՝ որոշ թագաւորներ ու կաթողիկոսներ նոյնիսկ այդ ժամանակ ազգային՝ եկեղեցական՝ ժողովներ գումարեցին՝ «Միութեան՝ խնդիրը» լուծելու համար: Միւս կողմից՝ Հայաստանեայց Եկեղե-

ցին Հռոմին միացնելու գործողութիւնների մասին հայ եւ օտար աղբիւրների բաղդատումից յստակօրէն երեւում է, որ միութեան գործն առաջ տանելիս, Հռոմը յատուկ ծրագրով աշխատել է երկու ճակատով՝ բուն Հայաստանում եւ գաղթաշխարհում: Իրօք՝ Հռոմի Եկեղեցին, Կիլիկիայում սկսած միարարական գործողութիւնների հետ գրեթէ միաժամանակ, արդէն ԺԴ դարասկէսին, ամուր խարիսխներ էր գցել Նախիջեւանի, Թաւրիզի եւ Արտազի հայաշատ շրջաններում ի դէմս նախ Ֆրանցիսկեան, ապա քիչ աւելի ուշ՝ նաեւ Դոմինիկեան կրօնական ուխտերի: ԺԴ դարի սկզբին հիմնուած Երնջակի Քռնայ վանքի (Յովհաննէս եւ Յակոբ Քռնեցիներին ու սրանց վարժապետ Բարթուղիմէոս Բոլոնիացին) եւ Արտազի Ս. Թադէի վանքի Ծործորի (Զաքարիա եւ Յովհաննէս Ծործորեցիներ) դպրոցները լատին առաքեալների առաջին հանգրուաններն էին Հայաստանում: Հռոմը հայերի կաթոլիկացումը շարունակում էր դնել քաղաքական հիմքերի վրայ՝ Հայաստանի անկախութեան վերականգնման մէջ իր օժանդակութիւնը կապելով կաթոլիկութիւնը ընդունելու հետ: Ուստի մեր ազատագրական պայքարի առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցին, Եւրոպայի վեհապետներից ու Հռոմի Պապերից բազմիցս ստանալով ոչ թէ երաշխիքներ, այլ խոստումներ, գրեթէ միշտ էլ ստիպուած է եղել Վատիկանին հպատակութիւն յայտնել «թղթի վրայ միայն»[4] միութենական գործողութիւնների անցնելու խնդրի քննարկումը թողնելով յետագային:

Պատմագիտութեան մէջ հայ-լատին եկեղեցիների միութեան դաշնագրերի մասին տեղեկութիւնները առատ են մանաւանդ Ֆլորենտիայի ժողովից (1439թ.) յետոյ: Կոստանդին Զ-ն (1430-1439) մեր այն եզակի կաթողիկոսներից է, որ ազատագրական ակնկալիքներով փաստօրէն ընդունում է Ֆլորենտիայի ժողովի որոշումները՝ թէեւ նրա մահուանից յետոյ Հայ Եկեղեցին չեղեալ յայտարարեց Ֆլորենտիայում ստանձնած պարտաւորութիւնները: Քրիստոնեայ պետութիւնների օգնութեամբ Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու յոյսերով Հռոմին «հպատակութեան» թղթեր են յանձնել նաեւ Ստեփանոս Սալմաստեցի, Ստեփանոս Ամնջեցի, Փիլիպպոս Աղբակեցի, Մելքիսեդէկ, Դաւիթ Դ, Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսները, որոնք բոլորն էլ այդ նպատակով ճամփորդել են Վենետիկ, Հռոմ կամ Լեհաստան[5]:

Հռոմի միարարական գործողութիւնները աշխուժացան ԺԶ-ԺԷ դարերում (1545թ. Տրիդենտեան ժողովից յետոյ մանաւանդ), երբ Պարսկաստանի եւ Թուրքիայի հակամարտութիւնները արեւմտեան երկրների մէջ Օսմանեան կայսրութիւնը Պարսկաստանի միջոցով մասնատելու յոյսեր ներշնչեցին, որը ԺԷ դարի 30-ական թուերին դարձաւ քաղաքական նոր ծրագիր: Թուրք-պարսկական պատերազմներից ամայացած Հայաստանը, ի դէմս Հայաստանեայց Եկեղեցու, այդ շրջանում է՛լ աւելի էր փարում Եւրոպայի ձեռքով հայոց անկախութիւնը վերականգնելու գաղափարին: Այսպիսով՝ հայ բարձրաստիճան եկեղեցական գործիչներին եւ հարուստ վաճառականութեանը տուած քաղաքական ազատութեան խոստումներով, Հռոմը բուն Հայաստանում ծաւալած միարարական գործողութիւնները յատուկ ծրագրով լծորդում էր գաղթաշխարհը դաւանափոխելու ջանքերին: Ահա այդպիսի պայմաններում է, որ լատին կղերը ԺԷ դարի 20-ական թուերին վերսկսեց իր նոր յարձակումը «ամբողջ Լեհաստանի բնակչութեան ընդամենը 0,023 տոկոսը կազմող»[6] լեհահայոց վրայ՝ լեհահայերին դաւանափոխելու համար, որը, ինչպէս կը համոզուենք, Հռոմի վրայ արժեց մօտ 120 տարուայ վիթխարի ջանքեր եւ հսկայական միջոցներ: Լեհահայերին կաթոլիկացնելու Հռոմի դիտաւորութիւնը նորութիւն չէր նոյնիսկ ԺԶ-ԺԷ դարերում: Ըստ պատմական տեղեկութիւնների, լեհահայերի մէջ Հռոմի հետ

միության՝ քաղաքականության առկայության տարածքը դեռևս Կազիմիր Մեծի թագավորության՝ շրջանում (1333-1370), երբ լեհական՝ այս միավորը Կիևյան Ռուսիայի ու Գալիցիայի հայաշատ վայրերը միացրեց Լեհաստանին՝ և Գրիգոր եպիսկոպոսին՝ 1367 թ. թույլատրեց որպես թեմակալ՝ հաստատվել Լվով:

Վկայակոչելով հռոմի արքեպիսկոպոսը, լեհ պատմաբանները նշում են, որ մինչև Լվովում լատին՝ ինքնուրույն՝ թեմի հիմնումը, այս քաղաքի կաթոլիկ եկեղեցու առաջին՝ եպիսկոպոսը հայազգի Թոմաս Լվովցին՝ էր, որը յետագայում հոգևոր ծառայության՝ ուղարկվեց Լոնդոն[7]: Դիվանական՝ եռագույն՝ փաստաթղթերը ցույց են տալիս, որ ոմն՝ Ստեփան՝ լեհահայ, սկզբում լինելով Խելմի (այժմ Լյուբլինի վոյեվոդություն) եպիսկոպոս-թեմակալը, 1383 թ. վճռագրերում յիշատակվում է նաև Պոզնանի և Վլոցլավի (այժմ Բիդգոշի վոյևոդություն) թեմերում[8]: 1350-1379 թթ. աղբյուրները Լվովում յիշում են՝ Կիևից եկած հայազգի կաթոլիկ եպիսկոպոս Յակոբին՝, իսկ Գդանսկում Ստեփան՝ արքեպիսկոպոսին[9]: Յակոբը, ըստ Վլ. Աբրահամի, Գալիցիայի հայ կաթոլիկների առաջնորդը՝ էր, որը 1371թ. Կրակովում ներկայ է լինում Մոլդավիայի առաջին՝ եպիսկոպոսի ձեռնադրութեանը[10]: Վլ. Լոզինսկին՝ նշում է որ լեհահայերի հետ առևտրատնտեսական՝ կապերի մէջ գտնվող ղրիմահայերը արդէն՝ 1318թ. Կաֆայում ունէին՝ առանձին՝ եպիսկոպոսութիւն՝ Երոնիմոսի գլխաւորութեամբ[11]: Լեհ պատմաբանը նշում է նաև, որ Լվովի՝ մեզ հասած վաւերագրերի ամենահին՝ մատեանում (ԺԴ դարավերջ), ուր հիմնականում դատական՝ վճռագրեր են, հայադաւանների հետ միասին՝ յիշատակվում են՝ նաև կաթոլիկ հայեր (նոյն՝ տեղը, էջ 81): 1374թ. մայիսի 24-ին՝ Գրիգոր ԺԱ Պապը Հալիչի լատին՝ համայնքի հաւատացեալներին՝ արտօնութիւններ է պարգևել, որը տարածուել է նաև կաթոլիկացած մի քանի լեհահայերի վրայ[12]: 1376թ. տուեալներ են՝ պահպանուել «Լվովցի ոմն՝ վաճառական՝ Եանի որդի Սոփիայի փեսայ Թայչոտի» մասին՝, որը Կիևից եկած վերոյիշեալ Յակոբ եպիսկոպոսի օրօք իր մահուան՝ կտակում մեծ գումարներ էր նախատեսել Լվովի ու Կաֆայի կաթոլիկ եկեղեցիների համար[13]: Յղուած գրքի նոյն՝ էջում Բարոնչը 1393թ. Լվովում նշում է հայուհի կաթոլիկ Մագդալինէ կոյսի մասին՝, որը հայուհի դոմինիկեաններին համար Լվովում մի փոքրիկ վանք էր հիմնել: Տեղեկութիւններ կան՝ ԺԴ դարում լատին՝ կրօնական՝ ուխտերից անկախ գործող հայ կաթոլիկ միաբանութիւնների գոյութիւնի փաստը: Յենլով Լվովի դոմինիկեան՝ վանքի դիւանում գտնուող Ուրբանոս Զ Պապի 1381թ. մի կոնդակը (բուլլա) ՝ Բարոնչը գրում է 1381թ. Հռոմի Պապը Լվովի կաթոլիկ հայերին՝ յիշեալ կոնդակով դոմինիկեան՝ միաբանութիւն՝ մտնելու թոյլտուութիւն՝ տուեց[14]: Նոյն՝ կոնդակի մասին՝ Զ. Լենինգսկին՝ գրում է, թէ Ուրբանոս Զ Պապը 1381թ. Լվովի դոմինիկեաններին՝ յորդորում էր «Լվովի կաթոլիկ հայ միանձնուհիների համար իրաւադրութիւն՝ (Եուրիսդիկցիա) մշակեն», որով հայ կաթոլիկ միանձնուհիները«կորցնում են՝ իրենց անկախութիւնը»[15]: Հիմնուելով դիւանական՝ փաստաթղթերի վրայ, Զ. Օբերտինսկին՝ նշում է, որ 1359թ. Լվովի լատինական՝ եկեղեցու արքեպիսկոպոսը հայազգի Թոմասն՝ էր (Տոմաշ): Եւ վերջապէս Ալ. Չոլովսկու հրատարակած Լվովի քաղաքապետարանի ենթագոյն՝ վաւերագրերում յիշատակուած են՝ մի քանի տասնեակից աւելի կաթոլիկ հայեր ( աչատուր, Սիրկըս (իմա՝ Սարգիս: Ռ.Հ.), Ասլաքարոն՝ (իմա՝ Ասլանպարոն: Ռ.Հ.), Յոհան՝ Արչիբէյ, Յոհաննէս և այլն)[16]: Թ. Գրոմնիցկին՝, հիմնուելով 1428 և 1436 թթ. փաստաթղթերից քաղած այն՝ տեղեկութիւնների վրայ, որտեղ նշում է, թէ Լուցկից Լվով եկած և հէնց Լվովում բնակուող մի քանի հայ ընտանիքների վրայ է հայկական՝, այլ մագդեբուրգեան՝ իրաւունք, եզրակացնում է, թէ նրանք կաթոլիկներ էին[17]:

Այս եւ նման՝ մի քանի այլ փաստերից կարելի է եզրակացնել, որ Հռոմը լեհահայերին՝ կաթոլիկացնելու գործը սկսել էր դեռեւս ԺԴ դարից: Այսինքն՝ ճիշտ այն՝ ժամանակ, երբ լատին՝ առաքեալները իրենց գործունէութիւնը աշխուժացրին՝ Կիլիկիայում, իսկ բուն՝ Հայաստանում հիմնեցին՝ կաթոլիկ համայնքներ: Բայց քրիստոնէական՝ միւս ծիսակարգի եկեղեցիները Ս. Պետրոսի Աթոռին՝ միացնելու շարժումը վճռական՝ տեսք ընդունեց 1517թ. Լութերի նշանաւոր «95 դրոյթների» հռչակումից յետոյ, երբ քրիստոնէական՝ աշխարհում, որպէս ռեֆորմացիայի հետեւանք, հանդէս եկան՝ նոր ուղղութիւններ՝ բողոքականութիւնն՝ ու կալվինիզմը: Ռեֆորմացիան՝ կարճ միջոցում հաւաքեց բազմաթիւ հետեւորդներ եւ արդէն՝ ԺԶ դարավերջին՝ Եւրոպայի մէկ երրորդը անջատուեց Հռոմէական՝ Եկեղեցուց: 1545-1563 թթ. ընդհատումներով գումարուած Տրիդենտեան՝ ժողովը մշակեց հակառեֆորմիստական՝ գործողութիւնների ընդհանուր ծրագիր, որի կէտերից մէկն՝ էլ միարարական՝ կենտրոնացուած շարժումն՝ էր Արեւելքում: Վատիկանը, շահարկելով Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդների ազատագրական՝ քաղձանքները, իր միարարական՝ գործողութիւնները քողարկում էր «քրիստոնէական՝ Արեւելքը թուրքերից պաշտպանելու» խոստումներով: Ժողովից յետոյ լեհ կղերը սկսեց Լեհաստանի միւս ծիսակարգերի ժողովուրդներին՝ Հռոմի հետ միութիւնը դաշնակել Լեհաստանում տարածուող ռեֆորմացիայի դէմ պայքարի հետ: Հասկանալի է, լեհահայ եկեղեցին՝ չէր կարող բացառութիւն կազմել: Ըստ Գր. Պետրովիչ Լեհահայի տեղեկութեան՝, կարդինալ Ջիովաննի Կոմենդոնին՝, երբ 1563թ. Լեհաստան՝ եկաւ Տրիդենտեան՝ ժողովի որոշումները լեհական՝ թագաւորին՝ ու կղերականութեանը յանձնելու, հանդիպեց նաեւ լեհահայ եկեղեցու գլուխ արքեպիսկոպոսին՝, այցելեց Լվովի ու Կամենիցի հայոց եկեղեցիները[18]: Տրիդենտեան՝ ժողովի որոշումները Լեհաստան՝ բերող լատին՝ եպիսկոպոսը լեհահայոց եկեղեցու պետի հետ հայադաւանութիւնը պահելու մասին՝ չէ, որ պիտի խօսէր: Բացի այդ՝ յայտնի է, որ Ստեփանոս Սալմաստեցի Կաթողիկոսը Հայաստանի ինքնուրոյնութիւնը վերականգնելու Հռոմի խոստումներին՝ ի հաւտոյց, 1549թ. Հռոմ էր հասցրել Հայաստանի ազատագրելու խնդիրների մասին՝ 1547թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցութեան՝ պատգամները, գրաւոր հպատակութիւն՝ էր յայտնել Պապին՝ եւ Հայաստան՝ վերադարձել Լվովի վրայով[19]: Ենթադրւում է Ստեփանոս Սալմաստեցին՝ Հայաստանի ազատագրութեան՝ գործերով շփումներ է ունեցել նաեւ լեհական՝ արքունիքի հետ: Մեզ որեւէ փաստ յայտնի չէ, թէ Լվովի կաթոլիկ եկեղեցու պետերի հետ ինչ բանակցութիւններ է նա վարել, բայց կարելի է ենթադրել, որ Հռոմի Պապին՝ հպատակութեան՝ թուղթ ստորագրած Ամենայն՝ Հայոց Կաթողիկոսը դժուար թէ որոշ խոստումներ տուած չը լինէր լեհահայերի միութեան՝ հարցի շուրջ: Մենք քիչ յետոյ կը բերենք լեհահայերին՝ Հռոմի հետ միացնելու մի շատ ծանրակշիռ փաստ եւս. բայց մինչ այդ նշենք, որ այդ շրջանում լեհահայերը լատին՝ կղերի միութենական՝ փորձերին՝ հանդիպադրում էին՝ այն՝ նկատառումը, թէ իբր հայոց ծիսակարգը չնչին՝ տարբերութիւններ ունի լատինականից, որ իրենք առանց այդ էլ ընդունում են՝ Հռոմի Պապի գերիշխանութիւնը[20], ուստի հարկ չը կայ աւելորդ ջանք թափել իրենց պաշտօնապէս Հռոմի հետ միացնելու համար: Սա անշուշտ դիւանագիտական՝ քայլ էր, եւ, ինչպէս կը տեսնենք, որոշ ժամանակ արդարացրեց իրեն: Կաթոլիկ միարարներն՝ այդ թուերին՝ նոյնիսկ գրքեր տպագրեցին՝ վերոյիշեալ տեսակէտը հիմնաւորելու համար, բայց հակառակ մեկնակէտից. քանի որ տարբերութիւնները մեծ չեն՝, ուստի հայերին՝ ոչինչ չի խանգարում միանալ Հռոմէական՝ Եկեղեցուն: Գրոմնիցկին՝ գրում է լեհ նշանաւոր եկեղեցական՝ գործիչ Ս. Լուբենչիկի՝ Կրակովում 1544 եւ 1546

թթ. հրատարակած երկու լատիներէն գրքոյկների մասին Batismus Armenorum (Հայոց Մկրտութիւնը), եւ Liturgia seu missa Armenorum ritu (Հայոց Պատարագը եւ ժամասացութիւնը, 1549թ.), որոնցում հեղինակը պնդում է, որ թէեւ հայադաւան եկեղեցու ծէսերը «չնչին ու երկրորդական տարբերութիւններ միայն ունեն լատինականից, բայց էական գծերով երկու ծիսակարգերն էլ շատ լաւ համաձայնում են իրարու»[21]: «Այդէն 1544 թ.,- գրում է Գր. Պետրովիչ Լեհահայը,- երեւելի լեհ գրող եւ հռչակաւոր Ս. Օժեխովսկին համոզուած ըլլալով, թէ միակ տարբերութիւնը Հռոմէական եւ Արեւելեան եկեղեցիներու միջեւ կը կայանայ լեզուի եւ ծէսերու զանազանութեան մէջ», ...կը հրաւիրէ լեհ եկեղեցու առաջնորդ՝ Պ. Գամբաուն, որպէսզի սուրբ եկեղեցու սահմանները ընդարձակէ՝ «Վալաքների եւ հայերի եկեղեցիները Հռոմին միացնելով»[22]: Ս. Բարոնչի տուեալներով, 1566թ. յայտնի քարոզիչ Բենեդիկտ Հերբեստը «կրօնական գործերով այցելեց Լվով, եղաւ նաեւ հայոց եկեղեցում, ուստի նրան ամէն ինչ շատ դուր եկաւ եւ հետագայում այն կարծիքը յայտնեց, թէ Հայոց Պատարագամատոյցը մեր (իմա՝ լատինական: Ռ.Հ.) արարողութիւններին շատ է համապատասխան... Նոյնն էր պնդում նաեւ Հռոմի Պապ Պիոս Ե-ի պապական լեգատ, կարդինալ Կոմենդոնին[23]: Զ. Լեխիցկին նշում է, որ 1550-1553 թթ. լվովի լատին ճեմարանի ռեքտորանտ, Հռոմից Լեհաստան ուղարկուած յիսուսեան քարոզիչ Բենեդիկտ Հերբեստը հայերին հակում էր այն մտքին, որ հայոց ծիսակարգը լատինականին շատ աւելի մօտ է, քան յունականին: Նոյն պատմաբանի կարծիքով Լվովի լատին արքեպիսկոպոս Եան Սոլիկովսկին (1585-1603) եւս մեծ տարբերութիւններ չէր գտնում հայկական եւ լատինական ծիսակարգերի միջեւ (Զ. Լեխիցկի, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, Լվով, 1928, էջ 47): Հայերին դաւանափոխելու գործողութիւնները, ինչպէս ասացինք, աշխուժացան Տրիդենտեան ժողովից յետոյ՝ ԺԷ դարում դառնալով որոշակի քաղաքականութիւն:

Լեհահայերին բռնի կաթոլիկութիւն պարտադրելու՝ ԺԷ դարի պատմութեան մասին բաւական գրականութիւն կայ թէ՝ օտար եւ թէ՝ հայ պատմագրութեան մէջ: Հայոց աղբիւրներից առաջինը դէպքերին ժամանակակից Առաքել Դաւրիժեցին է, որն իր «Պատմութեան» ԻԸ գլուխը ամբողջովին նուիրել է այդ իրադարձութիւններին: Միութեան վերաբերեալ տեղեկութիւններ են պարունակում Սիմէոն դպիր Լեհացու «Ուղեգրութիւն» աշխատութեան վերջում (որտեղ մի քանի տողով նշում է, որ Մելքիսեդէկ կաթողիկոսը 1626թ. եկաւ Լվով) եւ նրա գրքում զետեղուած «Յիշատակարան վարդանեայ մեկնութեան» մէջ, որի հեղինակը Ն. Ակինեանը համարում է Սիմէոն Լեհացուն[24]: Նիկոլի վայրագութիւնների նկարագրութիւնն է նաեւ «Վիպասանութիւն նիկոլական» երկը, որը Ն. Ակինեանը դարձեալ վերագրում է Սիմէոն Լեհացուն (Ն. Ակինեան, Սիմէոն դպիր Լեհացւոյ երկու յիշատակարանք, Հանդէս Ամսօրեայ, 1963թ., թիւ 4-6, էջ 252-258): Հարցին վերաբերող նիւթեր կան Ստ. Ռօշքայի «Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք» աշխատութեան մէջ, որը Վիեննայում տպագրել է հայր Ոսկեանը, 1964 թուին: Այս գործերը թէեւ Առաքել Դաւրիժեցու գրքում բացակայող որոշ փաստեր են ընձեռում, բայց 1626-1691 թուականների իրադարձութիւնների պատմութեան ուսումնասիրութեան տեսակէտից առանձնապէս մեծ արժէք չունեն: Առանձնանում է Ղ. Ալիշանի կազմած «Կամենից տարեգիրք» ժողովածուն, որը յոյժ արժէքաւոր ու արժանահաւատ աղբիւր է 1365 թուականից մինչեւ ԺԸ դ. լեհահայ գաղութի պատմութեան համար եւ միութեան պատմութեան մանրամասների տեսակէտից մեծապէս լրացնում է Առաքել Դաւրիժեցու տուեալները՝ յատկապէս 1653թ. յետոյ: Մ. Չամչեանը, հիմնուելով Առ. Դաւրի-

մեցու վրայ, իր «Պատմութիւն Հայոց» աշխատութեան Գ հատորի ԻԸ գլխում թռուցիկ շարադրում է այդ դէպքերը, բայց ուշադրութեան արժանի նոր փաստեր չի հաղորդում, բացի թերեւս նրանից, որ նշում է, թէ Նիկոլ Թորոսովիչի մահուանից յետոյ թեմը գլխաւորել է Վ. Յունանեանը (Մ. Չամչեանց, Պատմութիւն հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 642-643): Օտար աղբիւրներից ամենահաւաստին «Բռնի միութիւն» ժողովածոյում զետեղուած Ալոիսիոս Մարիա Պիդուի եւ անյայտ մի հեղինակի (Անանուն) գործերն են, որոնք լատիներէնից լեհերէնի վերածելով 1876թ. տպագրել է Ա. Պաւինսկին, ուրկից Կարապետ Եզեանը ընդարձակ առաջաբանով հրատարակել է գրաբար՝ Ստ. Մալխասեանի թարգմանութեամբ (Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի..., Ս. Պետերբուրգ, 1884թ.): Այդ իրադարձութիւններին մի քանի տողով անդրադարձել է նաեւ Բարթուղիմէոս Զիմորովիչը իր Leopolis Triplex (Եռեակ Լվով) աշխատութեան մէջ[25]: Զիմորովիչն այստեղ դրուատում է Նիկոլին ու իր գործը եւ այդ աշխատութիւնը առանձին աղբիւրագիտական նշանակութիւն չունի բռնի միութեան դէպքերին նոր փաստեր աւելացնելու տեսակէտից: Ս. Բարոնչի, Տ. Գրոմնիցկու, Զ. Լենկիցկու եւ լեհական միւս հեղինակների տեղեկութիւնների համաձայն, բռնի միութեանը վերաբերող արժէքաւոր փաստեր կան Տ. Կրուսինսկու «Պարսկական պատերազմի մասին» լատիներէն գրքում (T. Krusinski, Produmus ad tragicum vertentis belli Persici historiam... Lwow, 1773): Դիտարկուող հարցի մասին հայ պատմաբաններից գրել են՝ Գ. Այվազովսկին, Ա. Ալթունեանը, Մ. Բժշկեանը, Վ. Ըստկարեանը, Կ. Եզեանը, Մ. Օրմանեանը, Լէօն, Ա. Ալպօյաճեանը, Աշ. Յովհաննիսեանը, Գր. Պետրովիչ Լեհահայը եւ ուրիշներ: Օտարալեզու հեղինակներից կարելի է յիշել Ֆր. Զախարիասեւիչին, Ա. Պաւինսկուն, Ա. Ռոլլէի (D-r Antoni J), Մ. Դորոնեվիչին, Կիրիոն Եպիսկոպոսին (E. K.), կոմս Դ. Տոլստոյին, Ա. Աննինսկուն, Վլ. Լոզինսկուն, Թ. Գրոմնիցկուն, Զ. Լենկիցկուն, Ա. Օբերտընսկուն, նորերից՝ Մ. Զակժուսկա-Դուբասովային, Երաժշտագէտ Զբ. Կոսցիուվին եւ այլոց՝ չը հաշուած արդի հայ եւ ուկրաին պատմաբանները (Ս. Բ. Բեյիցկի, Գ. Պ. Պինկիրեան, Ա. Գ. Աբրահամեան, Վ. Ռ. Գրիգորեան, Վ. Ր. Գրաբովեցկի, Մ. Լ. Յովհաննիսեան եւ այլք), որոնք լեհահայերին նուիրած իրենց աշխատութիւններում անդրադարձել են նաեւ այդ խնդրին: Վերջերս հարցին բաւական հանգամանալի անդրադարձել է Բելլա Բարսեղեանը իր փաստաշատ մենագրութեան առաջին գլխում[26]: Հայ եւ օտար աղբիւրների ու պատմաբանների հաղորդած տուեալների բաղդատմամբ բռնի միութեան պատմութեան ամենաընդարձակ լուսաբանութիւնը տուել է Գր. Պետրովիչ Լեհահայը, որը սակայն երբեմն հանդէս է բերել բռնի դաւանափոխութիւնը «կամաւոր» միութիւն անուանելու միտումներ (տե՛ս սոյն աշխատութեան մէջ օգտագործուած նրա զոյգ յօդուածները):

Լեհահայերի բռնի միութեան լուսաբանութեան մէջ հայ եւ լեհ-լատին գիտնականների կարծիքները բաւական տարբեր են, յաճախ՝ հակադիր: Դրա հիմնական պատճառն այն է, որ վերջիններս, օգտուած լինելով միութիւնն արդարացնող լատին աղբիւրներից, այդ իրադարձութեանը մօտեցել են լատին եկեղեցու տեսակէտից: Հայ հեղինակների մեծ մասը հիմնուել է միութեան բռնի էութիւնը բացայայտող հայկական աղբիւրների վրայ եւ միութեան հարցը լուսաբանել հայադաւան եկեղեցու տեսակէտից: Հայերի բռնի միութեանն անդրադարձած գրեթէ բոլոր հեղինակները, միութիւնը սկսելով Նիկոլի թեմակալութեան տարեթուից, յաղթարշաւը համարում են 1664թ., երբ լեհահայերին դաւանափոխելու գործը ձեռքերը վերցրեցին Լեհաստան մտած թէատին կրօնաւորները՝ գլուխ ունենալով Կղեմենս Գալա-

նեսին՝ 1664-1666թթ. վերջերին նրանց ջանքերով Լվովի Մայր տաճարում, ապա՝ Կամենեց-Պոդոլսկում (1666թ. նոյեմբերի 1-ին) Նիկոլը առաջին՝ անգամ պատարագը մատուցեց լատին՝ ծիսակարգը հայացրած՝ եկեղեցու ծիսակարգից անջատող կարեւորագոյն՝ կէտերով (գինուն՝ ջուր խառնելը, «վասն՝ խաչեցարի» լատինատող կարեւորագոյն՝ կէտերով (գինուն՝ ջուր խառնելը, «վասն՝ խաչեցարի» լատինական՝ տարբերակով արտասանութիւնը եւ այլն): Այս եւ մի քանի այլ տուեալների վրայ հիմնուելով 1666 թուականն՝ էլ համարւում է Նիկոլի ձեռքով լեհահայերին՝ վերջնականապէս դաւանափոխելու թուականը: Օտար հեղինակները հայերին՝ Հռոմի Եկեղեցուն՝ միացնող հիմնական՝ գործիչներից են՝ համարում Ն. Թորոսովիչին՝ եւ Յունանեանին՝ վերջինիս դերը աւելի վճռական՝ համարելով այդ գործում, որովհետեւ մինչեւ Յունանեանի նստելը Լվովի թեմակալի գահին՝ (1686), լեհահայ եկեղեցու Պատարագամատոյցը, ծիսակարգն՝ ու ժամատեցութիւնը մեծ փոփոխութիւններ չէին՝ կրել: Հայ պատմագիտութեան՝ մէջ Վ. Յունանեանի անունը միացման՝ առիթով շատ չի շեշտւում. նրա դերը նշում են՝ հիմնականում մխիթարեան՝ հեղինակները (տե՛ս Վ. Ըստեփանեան՝, Եկեղեցական՝ պատմութիւն՝, Վիեննա, 1872թ., էջ 381-382): Ամբողջ մեղքը բարդւում է Ն. Թորոսովիչի վրայ, իսկ միութեան՝ սկիզբը մեծ մասամբ համարւում է 1630 թիւը: Ոմանք լեհահայերի Հռոմի հետ միութեան՝ մէջ կարեւոր դեր են՝ յատկացրել նաեւ Մելքիսեդէկ կաթողիկոսին՝ վարդան՝ Ըստեփանեան՝, օրինակ, գրում է, որ երբ Մելքիսեդէկը Լվով եկաւ, «Ինքն՝ սկսաւ իր թեմը կառավարել, եւ ձեռնադրած ամէն՝ եպիսկոպոսներուն՝ կաթողիկէ հաւատոյ դաւանութիւն՝ ընել կու տար: Ասոր համար ժողովուրդը....իրեն՝ հետ թշնամացաւ....մանաւանդ, երբ որ իրենց կամացը դէմ Նիկողայոս Թորոսեան՝ անունն՝ մէկը Լեոպոլսոյ արքեպիսկոպոս ձեռնադրեց 1626-ին»[27]: Վ. Ըստեփանեանի այս խօսքերից դուրս է գալիս, որ Մելքիսեդէկը միացել էր Հռոմին՝, եւ որ նա Նիկոլ Թորոսովիչին՝ դնում է լեհահայոց եկեղեցու գլուխը որպէսզի նրա միջոցով դաւանափոխի լեհահայերին: Զ. Լեխիցկին՝ եւս, վկայակոչելով լեհ-լատին՝ աղբիւրները, գրում է, որ Մելքիսեդէկը Հռոմի Պօղոս Ե Պապին՝ հպատակութեան՝ թղթեր է յղել 1610 եւ 1613թթ. (Զ. Լեխիցկի. Հայոց Եկեղեցին՝ Լեհաստ., էջ 51): Հարցին՝ նոյն՝ կերպ է մերձեցել նաեւ Աղեքսանդր Պալճեանը («Պատմութիւն՝ կաթողիկէ վարդապետութեան՝ ի Հայս», էջ 160-162): Կ. Եզեանը դիտումնաւոր կերպով Մելքիսեդէկի կաթոլիկամէտ հակումների մասին՝ հաւաստի փաստերը դուրս թողնելով հայոց կաթողիկոսին՝ յղած լեհահայերի 1631թ. նամակից[28], ոչ գիտական՝ մօտեցում է ցուցաբերել հարցի մեկնաբանութեան՝ մէջ՝ անհիմն՝ համարելով մխիթարեան՝ պատմաբանների ճիշտ կարծիքները: Լէօն՝ առանց որեւէ հիմքի, ընդհանրապէս ժխտում է Մելքիսեդէկի միութենական՝ հակումը: Ալ. Պիդուն՝, Անտոնիոսը, Զ. Լեխիցկին՝ եւ այլք որեւէ խօսք չեն՝ ասում Մելքիսեդէկի՝ Հռոմի հետ միութիւն՝ ընդունած լինելու մասին: Սիմէոն՝ դպիր Լեհացին՝ միայն՝ նշում է, թէ ինքը 1611թ. Զաքարիա վարդապետի հետ միասին՝ տեսակցել է Պապին՝ եւ նրան՝ տուել Մելքիսեդէկի նամակը եւ նուէրները, որոնցից Պապը միայն՝ ակնակուռ խաչն՝ է ընդունել՝ միւս նուէրները ետ տալով (Սիմէոն՝ Լեհացի, Ուղեգրութիւն՝, էջ 95-96): Այստեղ այդ կաթողիկոսի միութենական՝ հակումի մասին՝ խօսք չը կայ: Մինչդեռ Մելքիսեդէկի դաւանափոխութեան՝ մասին՝ Վ. Ըստեփանեանի, Աղ. Պալճեանի եւ այլոց տուեալները ճշտւում են՝ նախ՝ Ստ. Ռօշքայի «Ժամանակագրութիւնից», ուր նշուած է, որ Մելքիսեդէկ Կաթողիկոսը Զաքարիա վարդապետի ձեռքով Պօղոս Ե Պապին՝ յղած թղթով նրան՝ հպատակութիւն՝ էր յայտնել 1617, ապա՝ 1622 եւ 1623 թուերին: Երկրորդ՝ Ս. Մովսէս Տաթեւացի կաթողիկոսին՝ յղած Լվովահայերի 1631թ. յուլիսի 25-ի նամակի լեհերէն՝ թարգմանութիւնը, որն՝ իր Wiadomosc o ormianach w polszcze գրքում (Լվով, 1842թ., էջ 42-52) զետեղել է Ֆր. Զախարիասեւիչը (Զախա-

րիասեւիչի կարծիքով թարգմանութիւնը կատարուել է հէնց նրա՝ 1631 թուին): «Առաջին՝ յանցաւորը Քո Սրբազնութեան՝ նախորդ երջանկայիշատակ Մելքիսեդէկ պատրիարքն՝ ու կաթողիկոսն՝ է. նա իսկական՝ եւ զուտ ունիտոր էր տակաւին՝ Պօղոս հինգերորդ Հռոմի Պապի ժամանակներից (1605-1620.), որը նրա մօտ ուղարկել էր իր նուիրակ Զաքարիա վարդապետին, այն՝ ժամանակուայ Պոլսի արքեպիսկոպոսին, որ հաստատւում է հէնց նոյն՝ պատրիարք Մելքիսեդէկի լատիներէն՝ գրքերում տպուած թղթով: Այդ թղթի մէջ, որի պատճէնը կցում ենք ընդ սմին, Մելքիսեդէկը ճանաչում է Պապին՝ իրեն՝ գլխաւոր եւ յայտնում նրան՝ իր հնազանդութիւնը: Երկրորդ ապացոյցը դրան՝ (որ Մելքիսեդէկը ունիտոր է), որ երբ ...Մելքիսեդէկ կաթողիկոսը 1625թ. եկաւ մեզ մօտ Լվով (երեւի ի մեծ դժբախտութիւն՝ մեր) նա ցոյց տուեց մեզ Գրիգոր ԺԳ Պապի (1572-1585) իրեն՝ ուղղած թուղթը՝ գրուած լատիներէն՝ լեզուով, որից երեւում է, որ Մելքիսեդէկը ենթարկուել է Պապին: Պապի այդ թուղթը Մելքիսեդէկին՝ հասցրել էր Ջուղայի տագնէրէց Յովհաննէսը, որը երջանկայիշատակ Մելքիսեդէկի կողմից պատուիրակ էր ղրկուած Հռոմ՝ Պապի մօտ. այդ թղթի պատճէնը նոյնպէս կցում ենք: Երրորդ ապացոյցը մեր ականջներով լսածն՝ է, որովհետեւ երբ նա այստեղ մեզ մօտ Լվովում եպիսկոպոսներ էր ձեռնադրում, նրանց հրամայեց կարդալ Հռովմէական՝ Եկեղեցու հաւատոյ հանգանակը, այսինքն՝ այն՝ յաւելումը, որ Սուրբ Հոգին՝ բխում է Հօրից եւ Որդուց: Բացի այդ, նոյն՝ կաթողիկոս Մելքիսեդէկը այս ամբողջ չարիքի գլխաւոր պատճառն՝ ու հիմքն՝ է, որովհետեւ երբ մենք նրան՝ խնդրում էինք եպիսկոպոս չը ձեռնադրել այդ թշուառական՝ եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչին՝ ներկայացնելով նրան՝ կարեւոր հիմքեր, այսինքն՝ որ երիտասարդ մարդ է, անզարգացած, արդէն՝ շատ ոճիրներ գործած եւ, ուրեմն, անարժան՝ մեզ եպիսկոպոս լինելու, եւ որ մեր մէջ մեծ ատելութիւն՝ եւ երկպառակութիւն՝ է առաջ բերում, այդ բոլորին՝ այսպէս պատասխանեց մեզ ինքը՝ կաթողիկոսը եւ նրա մօտ եղած իր նման՝ եպիսկոպոսները. «Մեր ուզածն՝ էլ հէնց այն՝ է որ ձեր մէջ երկպառակութիւն՝ ընկնի, ահա ձեր միջեւ դրուած սուրը»[29]: Զախարիասեւիչի վրայ յենուելով Մելքիսեդէկին՝ կաթոլիկութիւն՝ ընդունած է համարում Տ. Գրոմնիցկին՝ (Հայերը Լեհաստանում, էջ 404): Մելքիսեդէկի լատինահաճութեան՝ մասին՝ տեղեկութիւն՝ է տալիս Ս. Բարոնչը. «Մօտ 1624թ. Լվով եկաւ Էջմիածնի պատրիարք Մելքիսեդէկը, որը չը կարողանալով պարսից թագաւորին՝ վճարել 2000 դուկատ հարկը, ստիպուած էր լքել իր մայրաքաղաքը եւ գբաղեցնել Լվովի թեմակալի աթոռը՝ Մեսրոպի մահուանից յետոյ... Բայց քանի որ կողմ էր Հայ Եկեղեցու միութեանը Հռոմին, ժողովուրդը նրան՝ ատում էր»[30]: Մ. Օրմանեանը նշում է, որ Մելքիսեդէկը մօտ 1624թ. ժամանեց Պոլիս: Այստեղի պատրիարք Յովհաննէս Խուլի ու սրա գործակից Զաքարիա վանեցու հետ միութենական՝ խմբակցութեան՝ մէջ միաւորուելով՝ քարոզում էր դաւանափոխութիւն, որի համար ժողովուրդը նրան՝ հալածեց քաղաքից[31]: Այսպիսով՝ աղբիւրները միահամուռ խօսում են՝ Մելքիսեդէկի կաթոլիկացած լինելու օգտին:

Հայ պատմագիտութիւնը լեհահայերի միութիւնը Հռոմէական՝ Եկեղեցուն՝ դիտում է ոչ թէ «կամաւոր միութիւն՝ Հռոմի հետ», այլ բռնի դաւանափոխութիւն: Թէ՛ հայ եւ թէ՛ օտար պատմագիտութիւնը լեհահայերի միութիւնը Հռոմին՝ սկսում է ԺԷ դ. 20-ական՝ թուերի վերջերից:

Մենք այս իրադարձութիւնը անուանում ենք *բռնի դաւանափոխութեան դէմ լեհահայերի զանգուածային ինքնապաշտպանութիւն* եւ համարում ենք ազատագրական՝ պայքար:

Երկրորդ՝ լեհ պատմաբաններից քաղած եւ հայկական՝ աղբիւրների սուղ փաս-

տնրը լրացնող տարբեր աւնղներով ջանում ենք ապացուցել, որ Նիկոլը առաջին՝ եկմտկալը չէր, որը կաթոլիկութիւն ընդունելով, լատին՝ կղերի նախաձեռնութեամբ ջանքերով ձգտենց դաւանափոխել լեհահայերին: Լատին՝ կղերը լեհահայերին՝ միացնելու փորձեր արել է նաեւ շատ աւելի վաղ, վերոյիշեալ Տրիդենտեան՝ ժողովից անմիջապէս յետոյ, 1560-1670-ական՝ թուականներին: Այսպէս՝ լեհ պատմաբան՝ Զ. Լեխիցկու տեղեկութիւններից պարզւում է լեհահայ եմի առաջնորդ Գրիգոր Բ -ն՝ լեհահայ եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու որոշակի ձգտումներ է ունեցել, բայց «Ժողովրդի մէջ կաթոլիկանալու ցանկութիւն՝ չը լինելու» պատճառով գործը գլուխ չի եկել: Լեխիցկին՝ հաղորդում է նաեւ, թէ Գրիգոր Բ-ի եւ հայ համայնքի «աւագանիի» միջեւ հակասութիւններ են՝ եղել «եկեղեցին՝ ղեկավարելու» եւ կազմակերպչական՝ այլ հարցերի շուրջ եւ որ սա լվովահայ «աւագների» դէմ 1568թ. բողոքել է Զիգմունտ Աւգուստ թագաւորին՝, որը Լվովի մի քանի լատին՝ եպիսկոպոսներից կազմուած յանձնախմբով քննել է եմտկալի բողոքը եւ 1569թ. մայիսի 16-ին՝ հրապարակած հրամանագրով (dekret) նրան՝ հաշտեցրել ժողովրդի հետ[32]: Ս. Բարոնչը բերում է հրամանագրի ամբողջ բովանդակութիւնը (Ռուշչեյով, էջ 114-115): Այս իրադարձութիւնների մասին՝ աւելի հարուստ տեղեկութիւններ է հաղորդում Տ. Գրոմնիցկին: Նա ոչ միայն՝ բերում է Գրիգոր եպիսկոպոսի բողոքագրի չորս հիմնական՝ կէտերը, այլեւ վէճը լուծելու համար թագաւորի կազմած վերոյիշեալ յանձնախմբի վեց կէտանից արձանագիրը, որը մուծուած էր 1569թ. մայիսի 16-ին՝ արձակուած վերոյիշեալ հրամանագրի մէջ[33]: Գրիգոր եպիսկոպոսի եւ լեհահայ համայնքի միջեւ ծագած հակասութիւնների վերաբերեալ թէեւ շատ սեղմ, բայց լեհական՝ աղբիւրների տուեալները հաստատող յիշատակութիւն՝ է պահպանուել Ստեփան՝ Ռոշքայի «Ժամանակագրութեան» մէջ, ուր խօսք կայ նաեւ յիշեալ եպիսկոպոսի միութենական՝ ձգտումների մասին: «... Սա (Գրիգորը: Ռ.Հ.) զդատաւորսն՝ Լէոպոլսեցիս՝ որք զքահանայքս ընդդէմ կամաց նորին՝ դատէին՝ եւ ի հոգեւոր իրս հակառակէին՝ նմա, կոչեաց ի դատ՝ առ նոյն՝ լեհաց արքայն՝ (Զիգմունտ Բ: Ռ.Հ.), որ յամի 1569 վճռեաց, զի դատաւորքն՝ ի հոգեւոր իրաւունս՝ քնեաւ մի խառնեսցին»[34] (ընդգծումն՝ իմը: Ռ.Հ.): 1569թ. այս հրովարտակը ազգընտիր աւագների իրաւունքները զգալիօրեն սահմանափակում է եկեղեցական՝ գործերում, ինչը հիմք էր դառնում պառակտելու համայնքը, քանի որ Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից հայութեան՝ մէջ գործող իրաւադրութեամբ, եկեղեցու պաշտօնեաներին՝, քահանայից սկսած մինչեւ կաթողիկոս, ընտրում էր ոչ թէ միայն՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԸ, այլ ամբողջ ժողովուրդը: Ինչպէս լեհահայոց մէջ, այնպէս էլ ամենուր, ժողովո՛ւրդն՝ էր (համայնքը) ընտրում թէ՛ հոգեւոր, թէ՛ աշխարհիկ իշխանութիւններին: Այսինքն՝ ազգը եւ եկեղեցին՝ ՄԷԿ ԷՐ, եկեղեցական՝ գործերը միայն՝ եկեղեցու սպասաւորների գործը չէր, այլ ամբողջ համայնքինը: Եկեղեցու գործիչը, իբրեւ համայնքից ընտրուած պաշտօնեայ, համարատու էր, հաշուետու էր ամբողջ համայնքի առաջ: Մի խօսքով՝ աշխարհիկ ու եկեղեցական՝ իշխանութիւնները, ինչպէս հոգին՝ ու մարմինը, իրար հետ ՄԷԿ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ ԷԻՆ ԿԱԶՄՈՒՄ, ներկայացնում էին՝ ամբողջ ազգը: Այս սկզբունքը միայն՝ հայերիս մէջ է կիրառուել եւ մեր ազգային՝ Եկեղեցու իրաւադրութեան՝ առանձնայատկութիւնների ՀԻՄՔՆ* է: Սա՛ է եղել մեր ժողովրդի միասնութեան՝, ուժի ու զօրութեան՝ աղբիւրը: Դիտարկվող հրամանագրով, որը 1574թ. վերահաստատեց նաեւ լեհական՝ յաջորդ թագաւոր Հենրիկ Վալեզան՝ (1573-1574), Լեհաստանում սկսւում է հայութեան պառակտելու-մասնատելու, մէկ-միասնական՝ ամբողջութիւն՝ կազմող հոգեւոր ու աշխարհիկ իշխանութիւնները տրոհելու կերպով իրար դէմ հանելու գործողութիւնը: Դա դուռ է բա-

ցում ժողովրդին՝ չնգօրացնել եկեղեցու գործերից, եկեղեցին՝ անջատել ազգից։ Այն՝է՝ համայնքի բոլոր գործերը վարելու նպատակով համայնքի ԸՆՏՐԱԾ ԽՈՐՀՐԴԻ («Հայոց 12 դատաւորների» կամ «տանուտէրների») ձեռից իշխանութիւնը վերցնել-յանձնել խորհրդին՝ համարատու-հաշուետու թեմակալին՝: Սա հիմք է դառնում, որպէսզի եկեղեցու գործիչների ընտրութեան՝ իրաւունքը ազգից խլել-յանձնել ազգի միայն՝ մէկ խաւի ձեռքը, ինչը Հռոմին՝ ի վերջոյ իրականացնել յաջողուեց մօտ 170 տարի յետոյ միայն՝ 1736թ.*: Ահա՝ այս տեսակէտից լեհահայ համայնքը չէր կարող հաշտուել պետական՝ լծակների օգտագործմամբ իր իրաւասութեան՝ շրջանակները ընդլայնել ձգտող թեմակալի հետ, որը ոտնահարելով հարիւրամեակներով գոյութիւն ունեցող աւանդութիւնն՝ու օրէնքները, ընդդիմանալով հայութեան՝ կազմակերպական զուտ ազգային՝ ոգուն՝, ձգտում էր յաւելեալ իշխանութիւն՝ ձեռք բերել: Լեխիցկին՝ գրում է, թէ թագաւորը 1568թ. Գրիգոր եպիսկոպոսին՝ հաշտեցրեց «աւագների» հետ: Մինչդեռ մեր օգտագործած աղբիւրների մեծ մասը չի նշում հաշտութիւնը կայացե՞լ էր, թէ ոչ: Յետագայ դէպքերը ցոյց են՝ տալիս, որ հաշտութիւն՝ չի եղել: Ստ. Ռոշքան՝ յայտնում է «...Յամի ՌԺԷ (1568) Գրիգոր Արքեպիսկոպոսն՝ Լէօպոլսի թողեալ զաթոռն՝ վասն՝ հերձուածողութեան՝ եւ հակառակութեան՝ ժողովրդոցն՝ երթայ յԵրուսաղէմ, եւ անտի ի Հռոմ» (Ստ. Ռոշքա, Ժամանակագրութիւն՝, էջ 165): Ս. Բարոնչի տուեալներով սա իր գործած ինչ-որ սխալների համար այդ նեյն՝ թուին՝ մեկնում է Երուսաղէմ, ապա Հռոմ: Իսկ Գրոմնիցկին՝ գրում է թէ թագաւորի հաստատած վերոյիշեալ վեց կէտանոց պայմանագիրը Գրիգոր եպիսկոպոսին՝ չի բաւարարել եւ նա գործերը կարգաւորելու համար մտադրուած է եղել միանալու «տիեզերական իշխանութիւն՝ ունեցող Հռոմի Պապին»[35]: Հայկական՝ աղբիւրներում լեհահայոց թեմի առաջնորդ Գրիգոր Բ-ի այս ուղեւորութեան՝ մասին՝ պահպանուել են՝ հատուկտոր տուեալներ՝ նախ Երուսաղէմ, ապա Հռոմ ուղեւորուելու մասին՝: Ըստ Մ. Աղաւնունի, «Գրիգոր Վարագեցի կամ Վանեցի, առաջնորդ Լեհաստանի (1552-1574), 1567-ին՝ Կամենիցի հայ դատաւորներէն՝ իր ճամբու ծախսը ստանալով՝ ուխտագնացութեամբ կայցելէ Ս. Յակոբ վանքը եւ յետոյ՝ Հռոմ 1568-ին»[36]: Ճշտուած է նաեւ, որ 1568թ. փաստօրէն՝ այդ եպիսկոպոսի գահակալութեան՝ վերջին՝ տարին՝ էր, որից յետոյ լեհահայ թեմը 11 տարի թեմակալ չի ունեցել՝ թէեւ Գրիգոր Վարագեցին՝ իրաւաբանօրէն՝ թեմակալ է համարուել մինչեւ իր մահը, որի մասին՝ Կամենից տարեգրքի 46-րդ էջում նշուած է. «Թուին՝ ՌԻԳ (1574) տէր Գրիգոր եպիսկոպոսն՝ որ էր Վանեցի, առ Աստուած փոխեցաւ ի յԸստամպօլն՝, զոր խառնեցաւ ի վերայ յԻլովցոց, եւ գնաց ի այս աշխարհէս»: Հետեւաբար «միութեան՝ ցանկութիւն՝ չունեցող» լվովահայերը նրան՝ վտարել են՝ պաշտօնից՝ հակառակ դէպքում այդ 11 տարիների ընթացքում նա պիտի որ «սխալները» շտկած լինէր ու վերադարձնար իր Աթոռը: Իսկ Լեհաստանում ռեֆորմացիայի դէմ պայքարող կաթոլիկ եպիսկոպոսներից բաղկացած հաշտարար յանձնախումբը չէր կարող անկողմնակալ դիրք բռնած լինէր միութենական՝ հակում ունեցող թեմակալի եւ ժողովրդի միջեւ ծագած վէճը լուծելու համար: Հետեւաբար այդ հաշտեցումը լատինամէտ եպիսկոպոսին՝ հովանաւորելու անյաջող գործողութիւն՝ պիտի համարել: Զ. Լեխիցկու, Թ. Գրոմնիցկու, Մ. Աղաւնունի, Ս. Բարոնչի ու Ստ. Ռոշքայի տուեալների համադրութիւնից կարելի է եզրակացնել հետեւեալը. Լվովում աւագանու եւ թեմակալի միջեւ ծագած այս «վէճը» ոչ այլ ինչ էր, քան՝ եթէ Նիկոլ Թորոսովիչի շրջանում Հռոմի միարարութեան՝ գործողութիւնների նախատիպը*:

Եթէ Գրիգոր եպիսկոպոսի վերաբերեալ սուղ տեղեկութիւնների պատճառով մեր վերոյիշեալ դատողութիւնները կարող են՝ ոչ այնքան՝ համոզիչ թուալ, ապա նրա յա-

ջորդի մասին՝ Ս. Բարոնչի հաղորդած տվյալները կասկած չեն թողնում լեհահայերին՝ միության՝ մղելու նախաձեռնության՝ շրջանի փորձերի մասին: «1579թ. հունիսի 28-ին՝՝, - հաստատությամբ՝ վավերագիրը յղելով գրում է Բարոնչը. -թագավորից (Ստեֆան՝ Բատորից: Ռ.Հ.) Լվովի եպիսկոպոսի աթոռին՝ հաստատվելու գիր ստացավ Բարսամյան Բոգդանովիչը»*: Սա չը կարողանալով կատրել հայադավանության՝ մեջ լեհահայերի տնական՝ յամառությունը, որոնք տարի նոր հեռացան եպիսկոպոսությունից. նրա տեղը գրավեցրեց Սուչավայից Լվով եկած Մոլդավիայի Յովհաննես (Եան) եպիսկոպոսը»[37]: Լեխիցկին՝ դիվանական՝ աղբյուրներից քաղած լրացուցիչ տվյալներով ամբողջացնում է Բարսամյան Բոգդանովիչի մասին՝ յայտնած Բարոնչի տեղեկությունները. «...Սա Տրապիզոնցի էր,- գրում է Լեխիցկին,- որին՝ որպես եպիսկոպոս, 1579թ. յունիսի 12-ին՝ հաստատեց Ստեֆան՝ Բատոր թագավորը: Սխիզմատիկների (հմտ՝ հայադավան՝ հայերի: Ռ.Հ.) գտած այս թեկնածուն՝ նա չարդարացրեց նրանց սպասելիքները: Շուտով բացայայտվեցին՝ նրա լատինահակ միտումները և որոնք տարի թեմը ղեկավարելուց յետոյ ստիպված եղավ 1582թ. հեռանալ աստղարէգից»[38]: ԺԶ դ. երկրորդ կէսից պահպանվել են՝ լեհահայ եկեղեցին՝ բռնությամբ Հռոմին՝ միացնելու մասին տվյալներ ևս: Օրինակ՝ նման՝ փորձ պիտի համարել այն, որ Լեհաստանի լատին՝ կղերը 1584թ. ճնշում էր գործադրում հայերին՝ ընդունել տալու Գրիգորեան՝ (նոր) տոմարը, որն՝ այն՝ ժամանակ սկզբունքային՝ նշանակություն՝ ուներ հայ և ուղղափառ՝ (ուկրային) եկեղեցիները Հռոմին՝ ենթարկելու գործում: Եւ պատահական՝ չէ, որ այդ գործողությունը ղեկավարում էր Լվովի կաթոլիկ եկեղեցու գլուխ՝ Եան՝ Սոլիկովսկի եպիսկոպոսը: Հէնց նրա նախաձեռնությամբ էլ տեղական՝ իշխանությունները Լվովի հայ և ուղղափառ՝ եկեղեցիները բռնությամբ փակեցին՝ ու կնքեցին՝ պահանջելով ընդունել նոր տոմարը[39]: Փաստորէն՝ լատին՝ կղերի այս գործողությունները շատ չէին՝ տարբերվում 1630-ական՝ թթ. յայտնի դէպքերից, որոնց մասին՝ խօսք կը լինի ստորև: Այսպէս՝ թէև Լվովի ոչ կաթոլիկների բողոքներից յետոյ Ստեֆան՝ Բատոր թագավորը 1584թ. յունուարի 20-ի հրովարտակով հրամայում էր վերականգնել նրանց իրավունքները[40], բայց լատին՝ կղերի բռնի գործողությունները շարունակվեցին՝ նաև յետագայում: Դրա վկայությունն՝ այն՝ իրողությունն՝ է, որ յիշեալ խնդիրը կարգավորելու համար Լեհաստանի թագավորը նման՝ հրովարտակ արձակեց նաև 1586թ. սեպտեմբերի 8-ին[41]: Ինչպէս յայտնի է, լեհահայերի բռնի կաթոլիկացման՝ ամենաթէժ շրջանում, 1630- ական՝ թթ., Վլադիսլավ Դ-ն՝ հայերի իրավունքները պաշտպանող հրովարտակներ արձակեց[42], որոնք ոչ մի լուրջ դեր չը կատարեցին՝ միաբարներին՝ և Նիկոլ Թորոսովիչին՝ զսպելու գործում: Եթէ այս տեղեկություններին՝ գումարենք Վատիկանի տնական՝ ու եռանդուն՝ միարարական՝ քարոզչությունը լեհահայերի մէջ, ապա պարզ կը դառնայ, որ դավանափոխ թեմակալի միջոցով լեհահայերին՝ միություն՝ պարտադրելը առկայ էր դեռևս Նիկոլի միարարական՝ գործողություններից 50-60 տարի առաջ: Հետևաբար՝ լեհահայերի բռնի միությունը կարելի է սկսել ոչ թէ 1630-ական՝ թվականներից, ինչպէս ընդունված է պատմագիտության՝ մէջ, այլ 1560-ական՝ թվականներից: Եւ եթէ 1568-1581թթ. իրադարձությունները այն՝ արձագանքը չունեցան՝, ինչ Նիկոլ Թորոսովիչի հետ կապված դէպքերը, պատճառն՝ այն՝ էր, որ այդ շրջանում Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին՝, ռեֆորմացիայի հետևանքով ինքն՝ էր գտնվում վտանգավոր կացության՝ մէջ: Այսպէս՝ արդէն՝ 1555թ. սէյմում ռեֆորմացիայի կողմնակիցները յաջողացրին՝ ռեֆորմատիկ եկեղեցիների ազատ գործունէությունը օրինականացնել: Հակառեֆորմականներին՝ միայն՝ 1569թ. յաջողվեց արքայական՝ հրովարտակի ու-

ժով բոլոր աշխարհիկ իշխանութիւնների օժանդակութիւնը ստանալ՝ ռեֆորմացիայի կողմնակիցներին պատժելու համար։ Բացի այդ՝ լեհահայերին Հռոմի հետ միացնելու մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցած Յիսուսեանք դեռ նոր էին հաստատուել Լեհաստան (1564թ.) եւ հիմնական ուժերը կեդրոնացրել էին Լեհաստանում արագ տարածուող եւ արդէն ժողովրդի 20-25 տոկոսը իր կողմը գրաւած[43] ռեֆորմացիայի դէմ պայքարով, եւ ինչպէս տեսանք, սկզբնական շրջանում մտածում էին հայ եւ լատին ծիսակարգերի «չնչին տարբերութիւնները» վերացնելու կերպով գործը հեշտութեամբ գլուխ բերելու վրայ։ Բացի այդ, ամենակարեւորը՝ այդ շրջանում բաւարար չափով պարարտ չէր այն հողը, որը լատին կղերի միութենական փորձերը Լեհաստանում դաշնակէր հայ ազատագրական պայքարի հեռանկարին։ Մի խօսքով քաղաքական կացութիւնն այնպիսին էր, որ կաթոլիկ եկեղեցականութիւնը պատրաստ չէր աւելի մեծ ուժերով արդիւնաւէտ յարձակում գործել լեհահայոց վրայ, ուստի Գրիգորն ու Բարսումաս Բոգդանովիչը աչքի ընկնող փոփոխութիւններ չը կարողացան կատարել լեհահայոց եկեղեցու ներսում։ Այսուհանդերձ, միաբանները այդ փորձն արեցին ըստ երեւոյթին օգտագործելով նաեւ Ստեֆան Բատորի (թագաւորել է 1576- 1586թթ.) խոստումները հայերին Հայաստանի ազատագրութեան գործին օժանդակելու մէջ՝ թէեւ Լեհաստանն այդ ժամանակ այն երկիրը չէր, որի հետ հայ ազատագրական միտքը մեծ յոյսեր կապէր (Դիտարկուող շրջանում հայ ազատագրական շարժման գործիչները հիմնականում բանակցում էին Եւրոպայում ազդեցութիւն ունեցող Վենետիկի հանրապետութեան հետ)։ Բայց կաթոլիկացման նշուած փորձերը բաւական ծանրակշիռ կռուաններ են յամոզուելու համար, որ լատին կղերը ձեռքից բաց չէր թողնում հայերին Հռոմի Եկեղեցուն միացնելու ամէն առիթ։ Այսպիսով՝ լեհահայերի Հռոմի հետ միութիւն պարտադրելու սկիզբը պէտք է առնուազն 60 տարով ետ տանել եւ 1560-1626թթ. ընդունել որպէս լեհահայերի բռնի միութեան նախնական շրջան։ Բռնի միութեան վաւերական կամ «նոր» շրջանը սկսւում է 1627թ. յունուարի սկզբին Նիկոլ Թորոսովիչի թեմակալութիւնից եւ անընդհատ շարունակւում է մինչեւ 1691թ. սինոդների որոշումները, որոնցում լեհահայերի խզումը Ս. Էջմիածնից եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնից իրաւական տեսք ստացաւ։

Այժմ պատմագիտութեան ընձեռած փաստերը դէպքերին ժամանակակից աղբիւրների տեղեկութիւններին բաղդատելով, հակիրճ ներկայացնենք միութեան վաւերական շրջանի (1627-1691թթ.) հետ կապուած իրադարձութիւնները՝ շեշտը դնելով այն փաստերի վրայ, որոնք աւել կամ պակաս չափով կապ ունեն հայ ազատագրական շարժման լեհական դիմախաղութեան պատմութեան։

Ինչպէս յայտնի է, Էջմիածնի Մելքիսեդէկ կաթողիկոսը 1627թ. յունուարի 6-ին 22-ամեայ Նիկոլ սարկաւագ Թորոսովիչից 300 թալեր կաշառք վերցնելով, նրան լեհահայերի կամքին հակառակ (Լվովահայերը թեմակալ էին ուզում դարձնել Հոլուբովիչ-Հորիչկանների գերդաստանի ներկայացուցչին) Լվովի «Կրակովեան» արուարձանում գտնուող հայոց Ս. Խաչ եկեղեցում գաղտնի օծում է եպիսկոպոս եւ նշանակում լեհահայոց թեմի առաջնորդ։ Ձեռնադրութիւնից անմիջապէս յետոյ Մելքիսեդէկը Թորոսովիչի հետ մեկնեց Կամենից։ Ճանապարհից Նիկոլը վերադարձաւ Լվով՝ իր հետ բերելով Մելքիսեդէկի գրութիւնը լվովահայերին, որով նզովքի սպառնալիքով պահանջում էր Թորոսովիչին ճանաչել Լվովի ու բովանդակ Լեհաստանի թեմակալ եպիսկոպոս եւ ենթարկուել նրան (Կամենից հասնելուց յետոյ Մելքիսեդէկը վախճանուեց 1627թ. մարտի 18-ին ու թաղուեց այդ քաղաքում)։ Լվո-

վի հայ համայնքը, անսալով Մնլքիսեդէկի հրամանին՝ չը կամայեցամբ Թորոսովի-չին՝ ճանաչեց եպիսկոպոս: Սակայն՝ Թորոսովիչի անտանելի վարքը եւ անլուր կամայականութիւնները լվովահայերին՝ ստիպեցին՝ ընդդիմանալ: Զիգմունդ Գ -ն՝ Նիկոլի թեմակալութիւնը հաստատեց 1629թ. մարտի 6-ին[44]: Նոր թեմակալին՝ գահընկեց անելու մի քանի տարուայ ապարդիւն՝ ջանքերից յետոյ եւ այն՝ բանից յետոյ, երբ Ս. Մովսէս Տաթեւացի Հայրապետի նուիրակ Գրիգոր Կեսարացին՝ Լվովի տաճարում նզովում է Նիկոլին՝ եւ դուրս գալիս այնտեղից. լեհահայ համայնքի պետերը ստիպուած 1630թ. փակում են՝ եկեղեցիները, բանալիները վերցնում, որպէսզի Նիկոլը ներս չը մտնի: Առաքել պատմագրի վկայութեամբ Նիկոլը իւրայիններին խորհրդով գնում է Արեւելք, որպէսզի Գրիգոր Կեսարացուն՝ յամոզի նրա վերցնել նզովքը եւ բանադրանքը: Հասնելով Բուրսա, Նիկոլը այնտեղից նամակ է ուղարկում Գրիգոր վարդապետին՝ թէ ինքը հիւանդութեան՝ պատճառով չի կարողանում գալ Կեսարիա, ուստի խնդրում է նզովքը չեղեալ յայտարարել: Գրիգոր Կեսարացին՝ Նիկոլին՝ հաւատալով՝ նզովքը վերացնելու մասին՝ մի թուղթ է ուղարկում նրան: Նիկոլն՝ այս թղթով գալիս է Լվով, հաշտւում ժողովրդի հետ: Բայց շուտով Գրիգոր վարդապետը իմանալով եղելութիւնը, վերահաստատում է նզովքն՝ ու բանադրանքը եւ լվովահայերը Նիկոլի առաջ նորից են՝ փակում եկեղեցիների դռները: Թորոսովիչը այս քայլին՝ պատասխանում է կաթոլիկութիւն՝ ընդունելով՝ ըստ Առաքել Դաւրիժեցու, Սիմէոն՝ Լեհացու եւ Միքայէլ Չամչեանի՝ Յիսուսեաններին եկեղեցում, ըստ Ալոյիսի Պիդուի, Անտոնիօ՝ հեղինակի, Ս. Բարոնչի, Դ. Զուբրիցկու եւ այլոց*՝ կարմելիտեանց բոկոտն՝ հայրերի եկեղեցում**: Զ. Լեխիցկին՝ գրում է, թէ Նիկոլը կաթոլիկութիւնն՝ ընդունել էր դեռեւս 1629թ., բայց իր այդ քայլը նա հրապարակօրէն՝ կատարեց 1630թ. հոկտեմբերի 24-ին՝ Լվովի Կարմելիտեանց եկեղեցում: Նիկոլի դաւանափոխութիւնը «Հաւատի տարածման՝ միաբանութեան՝ « (De propaganda Fide) կողմից Հռոմում հաստատւում է եւ աւելի ուշ՝ 1631թ. մարտի 28-ին՝ մուտքագրւում Ս. Անիօլի տաճարի մատեանում, որն՝ էլ իբրեւ աղբիւր յղւում է լեհ գիտնականի (Զ. Լեխիցկի, Հայ եկեղեցին՝ Լեհաստանի մէջ, էջ 55-26): Այնուհետեւ Նիկոլն՝ ու լատին՝ կղերը զինուորների հետ պաշարում են՝ հայոց եկեղեցին՝ եւ բանալիները մի քանի անգամ պահանջելուց եւ հայերից մերժում ստանալուց յետոյ ջարդում են՝ եկեղեցու դռները, եկեղեցին՝ յանձնում Նիկոլին***: Երբ հայերը հրաժարւում են՝ Թորոսովիչի ձեռքն՝ անցած Մայր տաճարը այցելելուց, Նիկոլը տեղական՝ իշխանութիւնների ձեռքով լվովահայերից խլում է նաեւ մնացած եկեղեցիները: Դրանից յետոյ Նիկոլը, ըստ Բարոնչի, 1634թ. վերջին՝ ուղեւորւում Հռոմ՝ իր դաւանափոխութիւնը Ս. Պետրոսի Աթոռում վաւերացնելու, որտեղ 1635թ. յուլիսի 11-ին՝ Ուրբանոս Ը Պապի առաջ հանդիսաւոր արարողութեամբ արտասանեց Հռոմէական՝ Եկեղեցու Հաւատոյ հանգանակը, Պապին՝ ճանաչեց լեհահայ եկեղեցու գլուխ, նրանից ստացաւ կարդինալական՝ փիլոն՝ (pallium) եւ արքեպիսկոպոսութեան՝ աստիճան*, որից մինչեւ օրս օգտւում են՝ իր յաջորդները..** Երկիր (Լեհաստան՝ Ռ.Հ.) վերադառնալով անուանեց Վլադիսլաւ Դ-ի քարտուղար... իր ծառայութիւնների համար հռոմէական՝ կայսրից ստացաւ Ս. Միքայէլի շքանշան»[45]:

Նիկոլ Թորոսովիչի Հռոմ ուղեւորութեան՝ մասին՝ Առաքել Դաւրիժեցին՝ ոչինչ չի հաղորդում, գուցէ եւ տեղեակ էլ չէր: Նիկոլի ուղեւորութեան՝ մասին՝ այս տեղեկութիւնները Բարոնչը քաղել է Լվովի քաղաքապետարանի դիւանական՝ փաստաթղթերից, որոնք այժմ պահւում են՝ «Լվովի կենտրոնական՝ պետական՝ պատմական՝ դիւան»-ում (ЦГИА Украины во Львове, ф.9, оп.1, т. 387, с. 775-778, ф..52, оп. 2., т. 51,

c. 446-450)։ Փաստորէն՝ Նիկոլին՝ իր գիրկը պահելու համար Պապը նրան՝ 1635թ. արքեպիսկոպոսի աստիճան՝ է տալիս եւ լեհահայոց թեմը ենթարկում է ոչ թէ Լեհաստանի տեղական՝ հոգեւոր իշխանութիւններին, այլ անմիջապէս իրեն։ Դրանով Վատիկանը մի կողմից յագուրդ էր տալիս թեմակալի Աթոռը պահելու համար ոչ մի քայլի առաջ չը կանգնող Նիկոլի արոշտօնտքած հակումներին, միւս կողմից՝ նպատակ ունէր լեհահայ եկեղեցին՝ որպէս Լեհաստանի հոգեւոր իշխանութիւններից անկախ միաւոր անմիջապէս Վատիկանին՝ ենթարկելու իրաւադրութեամբ՝ միարարութեան հակել լեհահայ գաղութի երերուն՝ տարրերին, որոնք արդէն՝ յօգնել էին՝ երկար տարիներ շարունակող այդ պայքարից։

Հռոմից նոր դառնալուց յետոյ, յիսուսեան՝ հայրերը Թորոսովիչին՝ օգնում էին՝ իր գործը շարունակելու մէջ։ Առաքել Պատմագիրը թէեւ յիշատակում է, թէ Նիկոլը հայերից «յափշտակեց» իրենց եկեղեցին, բայց չի յայտնում միութեան՝ դէմ լեհահայերի դիմադրական՝ ուժն՝ ու նախնեաց հաւատը պահելու վճռականութիւնը փաստող մէկ ուրիշ իրողութիւն։ Երբ Նիկոլը հայերից յափշտակում է Լվովի բոլոր եկեղեցիները, նրանք հրաժարւում են՝ մտնել եկեղեցիները՝ պահանջելով գոնէ մի եկեղեցի տրուի իրենց։ Անանուն՝ հեղինակի պատմելով «Եւ իբրեւ ոչինչ ազդեցին՝ Նիկոլի ո՛չ աղաչանք եւ ո՛չ սպառնալիք զի դարձուցէ նոցա գէթ զմին՝ յեկեղեցեացն՝ աղօթարան՝ արարին՝ իւրեանց տուն՝ մի մասնաւոր եւ զպաշտամունսն՝ կատարէին, թողեալ, տիրեսցէ Նիկոլ թափուր եկեղեցեացն՝ (ընդգծումը իմն՝ է։ Ռ.Հ.)»[46]։ Բայց Նիկոլը հայերից այդ աղօթատունն՝ էլ է խլում, մատուռն՝ էլ։ Լվովահայերը ստիպուած էին՝ պսակի արարողութիւնները եւ ննջեցեալների թաղումները Նիկոլից գաղտնի ուրիշ քաղաքների հայոց եկեղեցիներում անել (Առաքել Դաւրիժեցի)։ Բարոնչը, յենուելով Լվովի հայոց եկեղեցու դիւանական՝ փաստաթղթերի եւ այլ աղբիւրների վրայ, Անանուն՝ հեղինակի եւ Առաքել պատմիչի տուեալները հաստատում է հայ պատմագիտութեան՝ մէջ չարձանագրուած որոշակի փաստերով ու անուններով։ Նրա տուեալներով՝ Լվովի նշանաւոր «Հաճկատար» (1363թ.) վանքի կողքը գտնւում էր վաղուց աւերուած Ս. Խաչ մատուռը։ Նիկոլի քրոջ ամուսին, լվովցի հարուստ վաճառական՝ Սահակ Ագոպսովիչը այդտեղ կառուցում է փայտաշէն՝ մի եկեղեցի՝ հայադաւաններին՝ իբրեւ աղօթատեղի։ 1637թ. Նիկոլը Ագոպսովիչին՝ խնդրում է եկեղեցին՝ բացել, իրեն՝ ցոյց տալ։ Երբ Ագոպսովիչը եկեղեցին՝ բացել է տալիս, նախնական՝ պայմանաւորուածութեամբ իր կողմնակիցները եւ լատին՝ կրօնաւորներ լցւում են՝ եկեղեցին, բռնալին՝ խլում Ագոպսովիչից, հայադաւաններին՝ վտարում նաեւ այդ եկեղեցուց[47]։ «Անսալով հայերի բողոքներին,- շարունակում է Բարոնչը,- Վլադիսլաւ Դ-ն՝ 1638թ. հրամայեց Ս. Խաչ եկեղեցին՝ վերադարձնել հայերին, որը երբէք չը կատարուեց»։ Հայոց եկեղեցիները գրաւելու եւ դռները փակելու մասին՝ «Յիշատակարան՝ Վարդանա մեկնութեան՝ առակաց»-ի հեղինակը գրում է, որ երբ լեհահայոց «նախապատակ» թագաւորը եկաւ Լվով, հայերը՝ «...Ծերք եւ տղայք, երիտասարդք, յերեսաց մեծամծայն՝ եւ բարձր աղաղակէին՝ ողորմ եւ լալի եւ արտասուօք, ճիչ եւ ողբ կսկծալի հանեալ գոչէին՝ ասելով. Ողորմեաց մեզ, ով թագաւոր մեր, եւ բաց զեկեղեցիս մեր...Թագաւորն՝ ...կոչեաց առ ինքն՝ զՀայոց մեծամեծացն՝ եւ ասէ. Զի՞նչ է խնդրն եւ ողորմելի աղաղակն՝ ձեր։ Եւ նոքա ...ասեն՝. Մեծ օճիրս եւ բազում վնաս գործեաց մեզ Նիկոլ եպիսկոպոսն՝ եւ եկեղեցւոյ խազնան՝ ջնջեաց եւ վատնեալ կորոյս. եւ ինքն՝ գնաց ի Հռոմ կայեց եւ մօրբեց զդրամսն՝ եւ նոր բռնալիս բռնանալապետիցն՝ առա*։ Ասէ բարեպաշտ թագաւորն՝...մի հոգայք. երբ աստ եկի ես, զձեր բանն՝ կու հոգամ։ Եւ կոչեաց զմեծ բռնա-

նայապետն (Լվովի լատին միտրոպոլիտին: Ռ.Հ.) եւ ասէ. Առ ձե՞զ է բանալին Հայնոց եկեղեցւոյն: Եւ նոքա ասեն. Այո: Ապա ասէ (թագաւորն: Ռ.Հ.). Զի՞նչ արար յոգ եկեղեցւոյն: Եւ նոքա ասէն. Կայ ամէն: Եւ բարկացեալ արքայն՝ ասաց զայսչափ խազինան: Եւ նոքա ասէն. Կայ ամէն: Եւ բարկացեալ արքայն՝ ասաց խորհրդակիցն՝ եւ զնոսա. ասելով. Գնացէք կոտրեցէք զդրունս. զկնիքն՝ ալիրեցէք, բացէք եւ ի ներս մտէք, տեսէք զիմ խազնան: Եւ իբրեւ չգտին՝ եւ ոչինչ՝ ամօթալից դարձան առ թագաւորն. եկան՝ եւ ասէին... Ասէ թագաւորն՝ ցասմամբ. Ապա դուք է՞ր խաբէք զիս, թէ ամէն՝ խազնան՝ ի տեղն է: Էառ զբանալին՝ եւ հրամայեաց կրկին կնքել իւր մոհրովն: Եւ գրեց նամակ առ Փափն. թէ Ես ինքնին՝ եկեալ ի Լով՝ տեսի աչօք եւ լուայ ականջօք զամենայն՝ յօժարագործութիւնն եւ չարագործութիւնս այդ Նիկոլ եպիսկոպոսիդ. եւ թէ ո՞րպէս վատնեալ կորոյս զայդչափ խազնան: Այլ եւ գրեաց զամենայն՝ իրս նորա մի ըստ միոջէ. եւ թէ Ես կամէի դատել զնա, փախեաւ եւ եկն՝ առ Քո Սրբութիւնդ. արդ, Սուրբ Հայր, դատեսցես զնա որպէս զյանցաւոր. զի ոչ եթէ եկն՝ առ ի մեր հաւատն՝ վասն Աստուծոյ, այլ վասն՝ ընչից եւ խազնին՝ եկեղեցւոյ: Եւ հայոց պատուիրեաց, թէ երբ գամ ի Շվէտու պատերազմէն՝ ի յաթոռս իմ ի Վարշաւ, գայք առ իս. ես ձեր եկեղեցիքն՝ կու տամ ձեզ: Արդ գնալոյն՝ ի վեր եպիսկոպոսին (Նիկոլին: Ռ.Հ.) մինչեւ ցայժմ տարի ու կէս անցաւ, երկրորդ տարին՝ մտեալ (ՌՁԵ=1636թ.: Ռ.Հ.), բնաւ խապարն՝ չեկաւ...ոչ գիտեմք, (Նիկոլ: Ռ.Հ.) ո՞ղջ է թէ մեռած: Այլ եւ այլ զրուցնի կու զան, եթէ Փափին՝ զինքն՝ արգիլեր է. եւ այլք ասէն՝ թէ կորուսել է զինքն, բայց ճշմարիտն՝ միայն՝ Աստուծոյ է գիտելի: Իսկ Հայոց ազգնին՝ գնացին՝ ի Վարշով առ թագաւորն՝ ի մեծ դիւան, որ կոչի սէմ» (իմա՝ Սէյմ: Ռ.Հ.)[48]: Այս փաստաթղթից երեւում է, որ լեհահայերը հաւատացել են՝ թագաւորի խոստումներին՝ եւ անհամբեր սպասել իրենց քաղաքի արձագանքներին: Մինչդեռ Հռոմը ոչ միայն՝ պաշտպանում եւ հովանաւորում է լեհաց թագաւորի կողմից «յանցաւոր» համարուած Նիկոլին, այլեւ նրա համար յաջողացնում շքանշաններ եւ տիտղոսներ (Ս. Բարոնչ, Ժըլոտը, էջ 333-334): Իսկ 1643թ. փետրուարի 14-ին՝ կարդինալ Բարբերին՝ յատուկ նամակով Լվովի լատին՝ հոգեւորականութեանը պաշտօնապէս շնորհակալութիւն՝ յայտնեց հայոց արքեպիսկոպոսին՝ ցոյց տուած օժանդակութեան՝ համար՝ խնդրելով հետագայում եւս օգնել նրան, եթէ նա օգնութեան՝ կարիք զգա» (ընդգծումն՝ իմը: Ռ.Հ.)[49]: Պահպանուել է Ուրբանոս Ը Պապի 1637թ. մարտի 4-ի նամակը Լեհաստանի թագաւորին, լեհական եկեղեցու պետին՝ եւ «Ռուսիայի վոյեվոդ Ստ. Լեուբոմիրսկուն, որտեղ նա այդ գործիչներին՝ «խնդրում է, որպէսզի իրենց հեղինակութեամբ պաշտպանեն՝ հայերի միութիւը Հռոմին»[50]: Ստ. Ռոշքայի տուեալներով, երբ Փիլիպպոս Կաթողիկոսը Պօղոս Պիրոմալլի միջոցով լեհահայերի ու իր անունից Հռոմի Ուրբանոս Պապին՝ խնդրում է, որպէսզի Պապը «թերեւս հրամայեսցէ արքեպիսկոպոսին՝ թոյլ տալ նոցա (լեհահայերին: Ռ.Հ.) մնալ յառաջի կրօնսն», Պապը 1640թ. յուլիսի 16-ին՝ «գրեսցէ թուղթ առ թագաւորն՝ լեհաց խնդրելով զի օգնեսցէ Նիկողայոսին՝ (Նիկոլ Թորոսովիչին: Ռ.Հ.) եւ առ Փիլիպպոս Կաթողիկոսին, յորդորելով զնա բազում վկայութեամբք եւ օրինակօք... գալ յուղղափառութիւն»[51]: Ռոշքայի յիշատակած նամակը Հայաստան՝ էր հասցրել Հաւատատափիռ Ժողովի կողմից հայերին՝ Հռոմին՝ միութեան՝ յորդորելու ղրկուած Պօղոս Պիրոմալլին: Սա, իրօք, յորդորում էր վերսկսել Ս. Մովսէս Տաթեւացի Հայրապետի հետ սկսուած միաբանական՝ բանակցութիւնները[52]:

Լեհահայերի բռնի կաթոլիկացումը շուտափոյթ վերջացնելու Ուրբանոս Ը-ի կեցուածքի մասին՝ է խօսում նաեւ լեհ պատմաբան՝ Լ. Կորվինի բերած հետեւեալ փաստը. «Ուրբանոս Ը Պապը, ցանկանալով հայերին՝ որքան՝ հնարաւոր է շուտ հակել

միութեանը, տաս դոմինիկեաններին յորդորում էր հայերէն սովորել»[53]: Վերոյիշեալ եւ մի շարք այլ փաստերն, այսպիսով, չափազանց միակողմանի են դարձնում օտար մի քանի պատմաբանների այն կողմնակալ կարծիքները, թէ իբր ոչ միայն Հռոմը, այլեւ սկզբնական փուլում նոյնիսկ յիսուսեանք քիչ դեր են ունեցել միութեան հարցի մէջ, թէ իբր հայերն իրենք էին Հոլուբովիչ եւ Թորոսովիչ գերդաստանների ղեկավարութեամբ երկու մասի բաժանուած[54], պայքարում իրենց թեկնածուին թեմակալի աթոռին դնելու համար, եւ որ իբր Թորոսովիչի յաղթանակից յետոյ այդ երկու բանակները դարձան կաթոլիկ եւ հայադաւան եկեղեցիների կողմնակիցների կուսակցութիւններ, որոնցից յիսուսեանների ու թէատինեանների օժանդակութեամբ վերջին հաշւով, յաղթեցին միութեան կողմնակիցները: Այս տեսակէտը ճիշտ է, բայց խիստ միակողմանի է մեկնաբանուել: Իրօք, մինչեւ Մելքիսեդէկից Թորոսովիչի թեմակալ նշանակուելը, նման խմբակցութիւններ առաջացել էին եւ Մելքիսեդէկը իր այդ ապօրինի գործողութիւններով փաստօրէն գագաթնակէտին հասցրեց ընդդիմադիր կողմերի պայքարը: Բայց դա էջմիածնականների եւ լատինադաւանների կողմնակիցների պայքար չի եղել, ինչպէս ներկայացնում են ժամանակի լատին կղերականները: Դա եղել է թեմակալի Աթոռին սեփական թեկնածուին առաջ մղելու երկու անհաւասար խմբաւորումների պայքար, որը սովորական եւ ընդունելի երեւոյթ էր: Հարցն այն է, որ լատին կղերը Հռոմի ղեկավարութեամբ կարողացաւ Մելքիսեդէկ կաթողիկոսի միջոցով այնպիսի մէկին դնել թեմակալի Աթոռին, որը ամենաանարժանն էր եւ որին ոչ մի դէպքում, գոնէ իր տարիքի եւ արատաւոր վարքի պատճառով, լեհահայերը չէին ուզենա դարձնել իրենց հոգեւոր առաջնորդը: Ուստի Հռոմը, օգտուելով Մելքիսեդէկ կաթողիկոսի անխոհեմ ու պատեհապաշտ գործողութիւններից եւ երիտասարդ Նիկոլի փառամոլութիւնից ու պաշտօնաբաղձ մղումներից, նախ կարողացաւ թեմակալի երկու թեկնածուների միջեւ առկայ մրցակցութիւնը վերածել թշնամութեան, ապա՝ կանգնելով բացարձակ անարդարի թիկունքին, նրան օգնելու պայման առաջարկեց դաւանափոխութիւնը: Ամեն գնով թեմակալ դառնալու մոլուցքով լցուած 22-23-ամեայ երիտասարդը դարձաւ Վատիկանի կոյր գործիքը, որով միարարները կարողացան թեմակալի նախնադաւան երկու մրցակիցներից մէկի մի քանի կողմնակիցներին ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ իրականում գոյութիւն չունեցող լատինական հոսանքի ներկայացուցիչներ: Ուստի Լվովի հայոց համայնքի տրոհման փաստը գուցէ թէ ճիշտ էր մինչեւ Նիկոլի գահակալութեան սկիզբը, յատկապէս հայերի բռնի դաւանափոխութեան սկիզբը (1630թ.) դնել: Այդ իրադարձութիւններից յետոյ լեհահայերը աւելի քան երբեք համախմբուած դուրս եկան պաշտպանելու իրենց նախնիների հաւատը: Կրկնում ենք, այդ ժամանակ հայերի մէջ Նիկոլի կուսակիցների մասին խօսք լինել չէր կարող, որովհետեւ հէնց կաթոլիկ աղբիւրների իսկ վկայութեամբ «Ի բաց կացին ի նմանէ (Թորոսովիչէ: Ռ.Հ.) ժողովուրդն առհասարակ, հաստատեալ յուխտ իւրեանց, բաց ի միոյ կամ երկուց անտի քահանայից, եւ ոմանց ազգակցաց Նիկոլի սակաւուց»[55]: Եթէ Նիկոլը կուսակիցներ ունէր, ապա դրանք տեղի լատին կղերականներն էին: Իսկ լեհահայերը 1630թ. սկսած, մօտ 60 տարի չը դադարեցին իրենց ազգային ինքնութեան ամրոց հայադաւանութիւնը պաշտպանելու ազատագրական պայքարը 1640-1650, 1666-1670 եւ 1680-ական թուականներին արձանագրելով լուրջ յաջողութիւններ, որոնց մասին կը խօսենք ստորեւ: Իրօք, հայերի մատուռը խլելու 1637թ. դէպքը երեւի Նիկոլի վերջին քայլն էր իր հակառակորդների հանդէպ՝ չը հաշուած 1646թ. հայադաւան քահանաներին ծեծելու փաստը, որը մեզ է հասել Լվովի քաղաքային դատարանի ար-

ծանուցումներից*: Լեհահայերի միջեւ ծագած այս հակամարտութիւնները հանդարտեցնելու գործում, ինչպէս կը տեսնենք, շատ կարեւոր դեր ունեցաւ Ամենայն Հայոց Փիլիպպոս Կաթողիկոսը, որը այս խիստ բարդ ու խճճուած իրադրութիւնում կարողացաւ չափազանց նուրբ եւ ծանրակշիռ դիրք բռնել: 30-ական թթ. վերջերից սկսած նա բազմաթիւ նամակներ ու բանագնացներ ուղարկեց թէ՛ Լեհաստան, թէ՛ նոյնիսկ Հռոմ[56]: Հետաքրքիր է, որ Վլադիսլաւ Դ-ին ուղղած 1640թ. նոյեմբեր ամսի մեզ անյայտ մի նամակը Փիլիպպոս Կաթողիկոսը Լեհաստան է ուղարկել դիւանագիտական գործերով Լեհաստան գնացած պարսից շահի հայազգի դեսպան Մուսաբէգի հետ[57]: Փիլիպպոս Կաթողիկոսի դիւանագիտական եռանդի ունակութիւնների մասին որոշակի պատկերացում է տալիս Վլադիսլաւ Դ-ին ուղղած նրա 1646թ. յուլիսի 27-ի նամակը, որը Ղ. Ալիշանն հրատարակել է «կամենից տարեգիրք»-ում[58]: Նամակը լեհական թագաւորին հասցրած Գրիգոր եպիսկոպոսը, որը ամենայն հաւանականութեամբ լեհահայ էր, յատուկ առաքելութիւն ունէր Լվովում. ամէն գնով խաղաղեցնել հայերին՝ առանց սակայն դիպչելու հայադաւան եկեղեցու շահերին*: Հետագայ իրադարձութիւնները ցոյց են տալիս, որ Փիլիպպոս Կաթողիկոսը հասնում է նպատակին, որը անհնար մի բան էր այդ պայմաններում: Այս իմաստով, եւ ընդհանրապէս լեհահայոց բռնի միութեան մութ կէտերը լուսաբանելու տեսակէտից կարեւոր է այլ աղբիւրներից մեզ անյայտ Բարոնչի մի ուրիշ տեղեկութիւնը եւս. «1649թ.,- գրում է Բարոնչը,- արքեպիսկոպոս Թորոսովիչը ուղեւորուեց Հռոմ, որտեղից այլեւս ետ չէր ուզում գալ. ուստի իր փոխարէն թողեց Տաթեւի եպիսկոպոս Գրիգոր Պիրումովիչին, որը Փիլիպպոս Կաթողիկոսի նուիրակն էր Լեհաստանի թագաւորի մօտ: Երբ նրան Հռոմում սկսեցին հանգստացնել, *թէ մենակ չեն թողնի, որ նրան միշտ կ'օգնեն, համոզուեց ու ետ եկաւ Լվով*» (ընդգծումը իմն է: Ռ.Հ.)[59]: Հայ եւ լեհ պատմագիտութիւնից մեզ յայտնի չէ, որ Փիլիպպոս Կաթողիկոսի նուիրակ եւ Տաթեւի եպիսկոպոս Գրիգոր Պիրումովիչը 1649թ. որոշ ժամանակ Լվովի թեմակալի Աթոռին փոխարինել է Նիկոլին: Բարոնչն էլ ոչ մի լրացուցիչ տեղեկութիւն չի տալիս: Բայց այս թուացիկ տուեալը լեհական արքունիքում եւ լատին կղերի աչքում Նիկոլի հեղինակազրկման մասին վկայող բազմաթիւ փաստերին լծորդելիս, դժուար չէ եզրակացնել, որ Նիկոլին մենակ չը թողնելու եւ միշտ օգնելու Հռոմի խոստումները վերաբերում էին ոչ թէ Նիկոլի հակառակորդներին՝ հայադաւաններին, այլ բարեկամներին՝ լատին կղերին: Այս եզրակացութեան օգտին փաստերն այնքան շատ են ու պերճախօս, որ հիմնաւորելու կարիք չունեն: Բարոնչի տեղեկութիւնը մեզ այստեղ ամենից աւելի հետաքրքրում է լեհահայերի ինքնապաշտպանութեան մէջ Էջմիածնի խաղացած որոշիչ ու ղեկավար դերը բացայայտելու տեսակէտից, որը անմիջական կապ ունենալով հայ-լեհ քաղաքական շփումներին, պատմագիտութեան չուսումնասիրուած խնդիրներից է:

Արդ՝ ո՞վ էր «Վլադիսլաւ Դ-ի մօտ հայոց կաթողիկոսի նուիրակ» Գրիգոր եպիսկոպոսը եւ ի՞նչ առնչութիւն ունէր նա լեհահայ հակամիաբար շարժման հետ:

Պատմական աղբիւրներից՝ վերոյիշեալ տիտղոսով ու առաքելութեամբ այդ թուերին Լեհաստան ժամանած միայն մէկ Գրիգոր եպիսկոպոս է մեզ յայտնի: Դա Վլադիսլաւ Դ-ին յղած Փիլիպպոս Կաթողիկոսի 1644թ. յուլիսի 27-ի նամակը 1645թ. նոյեմբերին Լեհաստան հասցրած Գրիգոր եպիսկոպոսն է: Այս նամակի մէջ կաթողիկոսը նրա անունը միայն մի տեղ է տալիս՝ առանց նշելու որտեղից է: Չնայած այս երկու Գրիգորներին նոյնացնելու հիմնաւոր փաստեր չունենք, բայց կարծում ենք դրանք միեւնոյն անձնաւորութիւններն են: Իրօք, դժուար թէ 4-5 տարուայ տարբե-

բութեամբ միեւնոյն՝ կաթողիկոսի միեւնոյն՝ յանձնարարականով Լվով գնային՝ երկու տարբեր նոյնանուն՝ եպիսկոպոսներ: Բացի այդ՝ Բարոնչի այն՝ տուեալը թէ Գրիգոր եպիսկոպոսը որոշ ժամանակ Լվովում փոխարինել է Նիկոլ Թորոսովիչին՝, ճշտւում է Հայաստանից Հաւատատարածութեան ժողովին՝ Պ. Պիրոմալլիի 1644թ. օգոստոսի 22-ի նամակից, որտեղ Հայաստան՝ ուղարկուած կաթոլիկ այս առաքեալը գրում է, թէ Փիլիպպոս կաթողիկոսը Գրիգոր վարդապետին՝ եպիսկոպոս օծելով՝ ծրագրել էր Լեհաստանի թագաւորի միջնորդութեամբ Նիկոլին՝ փոխարինել Գրիգորով[60]: Յիշեալ փաստաթղթերի ու այլ վաւերագրերի վրայ յենուելով՝ Կ. Ամատունին՝ գրում է թէ Գրիգորը կամենից Պոդոլսկից էր[61]: Գրիգորի լեհահայ լինելը հաստատւում է նաեւ Առաքել պատմիչի մի հաղորդումից: Գրելով, որ Նիկոլի հալածանքներից բազմաթիւ լեհահայեր եկան՝ Ս. Էջմիածին, պատմագիրը շարունակում է. «Որք էին՝ որդիք նշանաւոր արանց որոց զոմանս ձեռնադրեաց Փիլիպպոս կաթողիկոսն՝ եպիսկոպոս յԻլովայ, եւ առաքեաց անդ առ ի հովուել զժողովուրդսն»[62]:

Այժմ տեսնենք Նիկոլին՝ ի՞նչ՝ էր ստիպել լքելու իր Աթոռը եւ ի՞նչ կապ կար նրա հրաժարականի ու լեհահայերի ազատագրական՝ պայքարին՝ օժանդակող Փիլիպպոս կաթողիկոսի ջանքերի միջեւ: Աղբիւրների մանրազնին՝ քննութիւնից երեւում է հայոց կաթողիկոսը 1640-ական՝ թթ. շատ լուրջ նախադրեալներ է ունեցել յուսալու, որ իրեն՝ կը յաջողուի որոշ փոխզիջումների գնով Նիկոլին՝ զահընկէց անել տալ եւ նրան՝ փոխարինել Էջմիածնի նուիրակ Գրիգոր եպիսկոպոսով: Պատմագիտութեան՝ մէջ այն՝ տեսակէտն՝ է տիրում, թէ իբր հայոց կաթողիկոսը ենար եւ կարողութիւն՝ չի ունեցել սատարելու լեհահայոց պայքարին: Մինչդեռ աղբիւրների բաղդատումը եւ մանրազնին՝ քննութիւնը մեզ բերել է ճիշտ հակառակ եզրակացութեան: Էջմիածինը ոչ միայն՝ օգնել եւ օժանդակել է լեհահայութեանը, այլեւ ղեկավարել է նրանց ինքնապաշտպանութիւնը, այն՝ է՝ իրենց նախնիների հաւատը պահպանելու պայքարը՝ արծանագրելով շօշափելի յաջողութիւններ: Այս գործի մէջ, ի դէպ, հայոց կաթողիկոսը կարողացել է ներգրաւել Դոմինիկեան՝ հայր Պօղոս Պիրոմալլիին՝, որի մասին՝ թուցիկ խօսք եղաւ վերը: Յենուելով դիւանական՝ փաստաթղթերի վրայ՝ Կ. Ամատունին՝ ճշտել է, որ Պիրոմալլին՝ առաջին՝ անգամ Հայաստան՝ է մտել 1632թ. ապրիլին: 1630-ական՝ թթ. դէպքերի առիթով Առաքել պատմագիրը Պիրոմալլիի մասին՝ հետեւեալն՝ է գրում. «Այլ եւ ի սոյն՝ ժամանակի՝ ի կարգէն՝ Դոմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ումն՝, այր իմաստուն՝ եւ երեւելի՝ յազգէն՝ Ֆռանկաց, եկն՝ յերկիրն՝ Նախչուանայ ի մէջ ախթարմայիցն՝ (դաւանափոխ հայ: Ռ.Հ.), որք անդ կան՝, եւ Փիլիպպոս կաթողիկոսն՝ բազում սէր եւ քաղեկամութիւն՝ արար ընդ Պօղոսին՝ այնի վասն՝ օգտին՝ ժողովրդեանն՝ մերոյ եւ փրկութեան՝ եկեղեցւոյն՝ Իլովայ. եւ Պօղոսն՝ այն՝ յետ կատարման՝ գործոց իւրոյ կամեցաւ գնալ ի Հռոմ, եւ գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ յԻլով քաղաք. եւ Իլովացիք եւս բազում աղաչանօք խնդրեցին՝ ի Պօղոսէ եւ բազում մեծարանս արարին՝ նմա, եւ զանձս եւս յոլովս առ ի թօշակ ճանապարհի ետուն՝ նմա. զի թերեւս օգնութիւն՝ ինչ հնարիցէ նոցա ի դատն՝ Փափին: Եւ յորժամ եհաս Պօղոս ի Հռոմ, եւ մինչ նա բանս ինչ բարեխօսութեան՝ վասն՝ Հայոց առաջարկեալ էր, եւ խօսէր ի դուռն՝ Փափին՝ վաղվաղակի գնաց զկնի նորա եւ Նիկոլ եպիսկոպոսն՝ ի Հռոմ ի դուռն՝ Փափին: եւ խափանեաց զօգնութիւնն՝ Պօղոսի՝ ձեռնտուութեամբ Եզվայիթացն»[63]: Առաքել Դաւրիժեցու տեղեկութիւնները հաստատւում են՝ մեզ հասած դիւանական՝ փաստաթղթերով ու նամակներով: Իրօք, Էջմիածնի, Հռոմի ու Լեհաստանի միջեւ սկսուած բանակցութիւններին՝ ու թղթակցութիւններին՝ իբրեւ արդիւնք, Հռոմը 1637թ. վերջերին՝ որոշում է Պիրոմալլիին՝ Հայաս-

տանից ուղարկել Լվով «Նիկոլի եւ ժողովրդի միջեւ ծագած վէճը խաղաղեցնելու»[64]: Պիրոմալլին՝ արդէն՝ 1638թ. Լվովում էր. ուր մնում է մինչեւ 1639թ. աշունը: Սա սկզբում շատ է հիանում Նիկոլով. բայց յետոյ փոխում է կարծիքը: Ըստ Հաւատատարածման ժողովի 1639թ. նիստերից մէկի արձանագրութեան՝ Պիրոմալլին՝ Լվովում խաղաղութիւն՝ հաստատելու միակ պայմանը Նիկոլին՝ Լվովից հեռացնելն՝ է համարում: Այդ մասին տեղեկութիւն՝ ստացած Նիկոլի յիսուսեան՝ հովանաւորների ջանքերով Պիրոմալլին՝ անմիջապէս ետ է կանչւում Հռոմ: Բայց Լեհաստանի թագաւորը 1639թ. նամակով Պապից խնդրում է Պիրոմալլին՝ ետ ուղարկել՝ «Իր իսկ սկսած հաշտարար գործողութիւնները վերսկսելու»[65]: Հաւատատարածման ժողովը 1640թ. մարտի 26-ի նիստում որոշում է Պիրոմալլիին՝ Հայաստան՝ ուղարկել Լվովի վրայով՝ նրան վրայ դնելով լեհահայոց միութեան՝ շուրջ Փիլիպպոս կաթողիկոսի եւ Նիկոլի հետ բանակցութիւններ վարելու պարտականութիւնը[66]: Նիկոլի եւ Պիրոմալլիի միջեւ դեռեւս 1637թ. սկսուած հակառակութիւնը սրւում է: Նիկոլի դիրքերը էլ աւելի են՝ խարխլւում, երբ գժտւում է նաեւ Լեհաստանում պապական՝ ներկայացուցիչ նուիրակ Գ. Մարեսկոտիի հետ: Անելանելի վիճակից դուրս գալու համար Հաւատատարածման ժողովը 1641թ. ապրիլի 10-ի նիստին՝ որոշում է Նիկոլին՝ ժամանակաւորապէս կանչել Հռոմ. նրա տեղը նշանակել Պիրոմալլիին[67]: Բայց քանի որ Հաւատատարածման ժողովի յիսուսեանները հովանաւորում էին՝ Նիկոլին՝, սրան՝ յաջողում է առժամանակեայ յաղթանակ տանել իր երկու զօրեղ հակառակորդների դէմ: Յիսուսեանք Պապին՝ յիշեցնում են՝ Պիրոմալլիի իսկական՝ առաքելութեան՝ մասին՝. այն՝ է՝ որպէս Փիլիպպոս կաթողիկոսի մօտ Պապի դեսպան՝, նա պէտք է միութեան՝ հակեր հայոց կաթողիկոսին: Եւ ահա Հաւատատարածման ժողովի 1642թ. յունիս ամսուայ նիստերից մէկում որոշւում է Պիրոմալլիին՝ անմիջապէս ուղարկել Էջմիածին՝ Հայոց կաթողիկոսի հետ միութեան՝ խնդիրների մասին՝ բանակցութիւնները շարունակելու[68]: Պիրոմալլին՝ 1642թ. աշնանը Լվովից դուրս է գալիս եւ 1643թ. փետրուարին՝ Էջմիածնում արտակարգ ընդունելութեան՝ է արժանանում հայոց կաթողիկոսից: Բայց, ինչպէս ցոյց են՝ տալիս յաջորդող դէպքերը, Պիրոմալլիի՝ Լվովից հեռանալը Նիկոլի համար ժամանակաւոր յաղթանակ էր: Հայոց Կաթողիկոսը շատ նուրբ դիւանագիտականութեամբ Պիրոմալլիի միջոցով Հռոմին՝ կարողանում է ներշնչել, թէ ինքը պատրաստ է Հայ Եկեղեցին՝ Հռոմին՝ ենթարկելու շուրջ բանակցելու, բայց միաժամանակ բանակցութիւնների յաջող ելքը կապում է լվովահայերին՝ կաթողիկոսի այդ դիրքորոշումը պարզ երեւում է Հաւատատարածման ժողովին՝ ու Պապին՝ յղած Պիրոմալլիի 1644-1645թթ. նամակներից: Պիրոմալլին՝ Հայաստանից գրում է, թէ միութեան՝ գործերը փոփոխական՝ յաջողութեամբ շարունակւում են՝, բայց «կարծես թէ ընդդիմութեան՝ հանգոյցը է աշխարհականներէն՝ ոմանց կողմէ, որոնք միշտ կը սպասեն՝ Լվովի եկեղեցիներում՝ հարցին՝ կարգաւորութեան», ուստի անհրաժեշտ է Փիլիպպոսին՝ քաջալերել Լվովի եկեղեցիներից գոնէ մէկը ժողովրդին՝ վերադարձնելով[69]: Եւ ահա Փիլիպպոս Կաթողիկոսը, գիտենալով Նիկոլի ու Հռոմի ազդեցիկ գործակալների միջեւ առկայ հակասութիւնների մասին՝, 1644թ. յատուկ առաջադրանքով Լվով է ուղարկում իր կողմից եպիսկոպոս օծուած վերոյիշեալ Գրիգորի Կոմենիցացի Պիրումովիչին: Վատիկանի դիւանում պահպանուած վաւերագրերը ցոյց են՝ տալիս, որ Փիլիպպոս Կաթողիկոսը տարիներ շարունակ Հռոմի հետ հայերի միութեան՝ խնդիրը կապելով լեհահայերի բռնի միութեան՝, ինչպէս նաեւ հայ ազատագրական՝ պայքարին՝, առանց շօշափելի յաջողութիւնների չի ցանկացել որեւէ զիջում անել միութեան՝ հարցում յարուցելով Հռոմի նուիրակների դժգոհութիւնը, որոնք դա ներկայացրել են՝ Հռոմին՝ տուած դատարկ

խօստումներ[70]: Եւ եթէ կատարել է որոշ զիջումներ, ապա միայն յանուն եւ ի խնդիր հայ ազատագրական պայքարի հեռանկարի եւ լեհահայ եկեղեցու փրկութեան: Այս մասին վկայութիւն ունի Առաքել պատմիչը. «Եւ Փիլիպպոս կաթողիկոսն բացում սէր եւ բարեկամութիւն արար ընդ Պապոսն այնի (Պիրոմալլին: Ռ.Հ.), *վասն օգտի ժողովրդեան մերոյ եւ փրկութեան եկեղեցւոյն ի Լովար*»[71] (ընդգծումն իմը: Ռ.Հ.): Փիլիպպոս կաթողիկոսի նուիրակ Գրիգոր եպիսկոպոսը, ինչպէս ասուեց, 1645թ. նոյեմբերին արդէն Լեհաստանում էր: Նա լեհահայերի հետ միասին անընդհատ ճնշում էր Նիկոլին: Ժողովուրդը ոչ մի կերպ չէր ենթարկւում ապօրինի թեմակալին, որի հեղինակութիւնը, վատ վարքի, կաշառակերութեան եւ եկեղեցականին անվայել այլ արարքների պատճառով, ընկել էր նաեւ իր հովանաւորներից շատերի մօտ: Ահա այս պայմաններում Էջմիածնի ու լվովահայերի միացեալ դիւանագիտութիւնը հարցը այսպէս է դնում. լեհահայերը կը ենթարկուեն Հռոմին, բայց ո՛չ Նիկոլի թեմակալութեամբ: Նիկոլի հեղինակազրկումը, Հայոց Եկեղեցին Հռոմին միացնելու մասին Պիրոմալլիի Հռոմ ուղարկած յուսադրական նամակները եւ Նիկոլին մէկ ուրիշով փոխարինելու մտադրութիւնը Հռոմին ստիպում են Նիկոլի հարցում երերալ: Իսկ Փիլիպպոս կաթողիկոսի հիմնական նպատակն էլ հէնց այն էր, որպէսզի հեղինակազուրկ ու լքեալ Նիկոլ Թորոսովիչը ուրիշ որեւէ նեցուկ չունենար, բացի Էջմիածնի գիրկը դառնալուց: Հետագայ դէպքերի ընթացքը ցոյց է տալիս, որ այս Հայոց կաթողիկոսը հասնում է նպատակին:

Այս բարդ ու խճճուած իրադրութիւնում լեհահայերի պայքարին օժանդակող հանգամանքներ են ստեղծւում նաեւ քաղաքական առումով: 1648թ. հեթման Խմելնիցկին կոզակների գլուխն անցած ապստամբել էր Լեհաստանի դէմ, պաշարել Լվովը՝ քաղաքում յառաջացնելով տագնապալի ու խառն իրադրութիւն: Հասկանալի էր, որ այդպիսի սպառնալի վիճակում հասարակական կեանքի հանդէպ դժուար էր իրագործել պետական վերահսկողութիւն՝ էլ ուր մնաց թէ լեհական արքունիքը Վատիկանի յորդորներով կարողանար վճռական օգնութիւն ցոյց տալ Նիկոլին:

Երկրին նախ եւ առաջ անհրաժեշտ էր ներքին հանդարտութիւն: Այնպէս որ լիովին հասկանալի է, որ լվովահայերը բազմաթիւ միջոցներով Թորոսովիչին ստիպէին լքելու իր Աթոռը: Իսկ Նիկոլը վտանգալից Լվովում շատ լուրջ պատճառներ ունէր երկիւղելու նոյնիսկ իր կեանքի համար*: Բացառուած չէ, որ Նիկոլի վերոյիշեալ հրաժարականը նաեւ Հռոմի Պապի վստահութիւնը է՛լ աւելի ամրապնդելու նպատակով արուած դիւանագիտական քայլ լինէր:

Քանի որ միարարները ժամանակաւոր նահանջել էին, իսկ հայերը՝ աշխուժացել, Հռոմը Թորոսովիչից բացի ոչ մի ուրիշ դէմք չէր տեսնում լեհահայութեան մէջ, որը թէ՛ իրաւական տեսակէտից, թէ՛ ի պաշտօնէ կարողանար հակամիարար շարժման դէմն առնելու գործում պիտանի լինէր Հռոմին: Ահա թէ ինչու էր Հռոմը Նիկոլին համոզում չը լքել Աթոռը՝ նրան խոստանալով մենակ չը թողնել եւ ամէն ինչում օգնել: Բայց Նիկոլի դիւանագիտական այս քայլն էլ արդիւնք չը տուեց, եթէ դա իհարկէ ոչ թէ բազմամեայ պայքարից ուժասպառութիւն էր, այլ իրօք դիւանագիտութիւն...: Ինչպէս ասուեց, լեհահայոց բռնի դաւանափոխութեանն անդրադարձած պատմաբանները, լեհահայերի կաթոլիկացումը դնելով 1630 թուին, այն համարում են աւարտուած իրողութիւն: Մինչդեռ 1640-50-ական թթ. դէպքերի քննութիւնը եւ պատմական անառարկելի փաստերը ապացուցում են, որ լեհահայ համայնքը չի ընկրկել աներեւակայելի եւ անլուր վայրագութիւններով ուղեկցուող բռնի դաւանափոխութեան

առաջ. ընդհակառակը. Աւտրայրը յիշեցնող այս գոտեմարտում Հռոմին՝ բազմիցս ստիպելով դիրքերը զիջել, լեհահայութիւնը արժանացրել է ծանրակշիռ յաջողութիւններ՝ հայ ազատագրական՝ պայքարի պատմութիւնը ճոխացնելով անմոռուն՝ դրուագներով:

1650-ական՝ թուերին՝ լեհահայերը իրենց ինքնապաշտպանութեան՝ մարտավարութիւնը փոխում են: Այս անգամ նրանք Հոգևորտի կանչով Տիզբոն՝ գնացած հայ իշխաններին նման՝ ժամանակ շահելու համար ստիպուած են՝ լինում դաւանափոխութիւն՝ ընդունել առերես: Հայերին՝ դաւանափոխելու նպատակով Հռոմից Լվով ուղարկուած Լատին՝ կղերական՝ Անտոնիոս՝ հեղինակը գրում է. «Յայնժամ միաբանեցան՝ դատաւորքն՝... զի զոնէ ի վերին՝ երեսս կաթոլիկս զանձինս ընծայեցուցանեն՝, որպէս զի գէթ այսու լիցի հնար յաղթահարել զարքեպիսկոպոսն»[72]: Լվովահայերը գտան՝ «Յովհան՝ Օձնեցուց առաջ գրուած» մի հին՝ Մաշտոց, ուր իբր գրուած էր, թէ հայերը ընդունում են՝ Հռոմի գերիշխանութիւնը՝ եւ դրա հիման՝ վրայ մի դաւանութեան՝ թուղթ ներկայացրեցին՝ թագաւորին՝, ըստ որի լեհահայերը պարտաւորւում են՝ շարժուել այն՝ դաւանութեամբ, ինչ Հայաստանեայց Եկեղեցին՝ ունեցել է մինչեւ Ս. Յովհան՝ Օձնեցին[73]: Լատին՝ կղերն՝ իհարկէ գլխի էր ընկել, որ հայերն՝ իրենց եկեղեցու ինքնուրոյնութիւնը պահպանելու համար «ի վերին՝ երեսս կաթոլիկս զանձինս ընծայեցուցանեն»[74]: Համաձայն հէնց լատին՝ կղերի յորդորներով լեհական՝ թագաւորը հրաժարուեց ընդունել այդ դաւանագիրը՝ մինչեւ լեհահայք այն՝ չը վաւերացնէին՝ Էջմիածնի կաթողիկոսից: Լեհահայերը իրենց ընտրեալներից՝ Խաչկոյ անունով մի «դատաւորի» 1653թ. ուղարկեցին՝ այդ ժամանակ ուղեւորութեամբ Պոլիս գտնուող Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ՝ դաւանութեան՝ թղթերը հաստատելու: Բայց «իբրեւ ծանեաւ արքեպիսկոպոսն՝ (Նիկոլն՝ Ռ.Հ.), թէ ահա մերձ է ի կործանումն՝...սկսաւ ապա հնարս խնդրել հաշտելոյ ընդ ժողովրդեանն՝, չոգաւ եւ ինքն՝ փութապէս առ կաթողիկոսն՝, աղաչէր եւ հայցէր հեզաբար, ներել նմա զամենայն՝ զյանցանս իւր եւ տայր գրով երդումն՝ ուխտի, թէ յայնմհետէ հպատակ լիցի Աթոռոյն՝ Էջմիածնի...Հուսկ ուրեմն՝ ընկալաւ ի կաթողիկոսէն՝ թուղթ առ եկեղեցականս եւ առ ժողովուրդն՝, յորս յորդորէին՝ նոքա հնազանդ լինել արքեպիսկոպոսին» (ընդգծ. իմը: Ռ.Հ.)[75]: Այսպիսով՝ Նիկոլը կանխում է լեհահայերին՝ եւ Փիլիպպոս կաթողիկոսը ոչնչացնում է լեհահայոց համայնքի ներկայացրած դաւանութեան՝ արդէն՝ հաստատուած թղթերը[76]: Առաքել պատմագիրը նշում է, թէ երկար բանակցութիւններից յետոյ Նիկոլը կաթողիկոսի հետ չորս կէտանոց պայմանագիր է կնքում, լեհահայերին՝ ուղղած կաթողիկոսի վերոյիշեալ կոնդակի հետ գալիս է Լվով եւ Փիլիպպոս Կաթողիկոսի նուիրակ Յովհաննէս Արղնեցի վարդապետի միջնորդութեամբ հաշտւում ժողովրդի հետ: Պայմանագրի էութիւնն՝ այն՝ էր, որ Նիկոլը եւ իր յաջորդները, ինչպէս նաեւ լեհահայ ժողովուրդն՝ ու քահանայք, երբէք չը պիտի շեղուէին՝ հայադաւանութիւնից, ո՛չ մի ժամանակ եւ ո՛չ մի դէպքում լեհահայոց եկեղեցիների մէջ Նիկոլից բացի ոչ ոք Պապի անունը չը պիտի յիշատակէր: Ընդ որում Պապի անունը տալու կէտը պայմանագրի մէջ էր մուծուել Նիկոլի յամառ խնդրանքներից յետոյ[77]: Պայմանագրի կէտերը միայն՝ Առաքել պատմիչն՝ է բերում եւ նրա վրայ յենուելով՝ նաեւ Միքայէլ Չամչեանը: Լատին՝ աղբիւրներն՝ ու լեհ պատմաբանները այդ փաստաթղթի մասին՝ խօսելիս բերում են՝ դրա մօտաւոր բովանդակութիւնը միայն՝: Առաքել Դաւրիժեցու այն՝ տեղեկութիւնը, թէ պայմանագրի կէտերը Նիկոլը թղթի վրայ գրեց, կնքեց ու յանձնեց Փիլիպպոս Կաթողիկոսին՝, իսկ կաթողիկոսն՝ այն՝ տուեց Լվովի հայոց համայնքի «Դատաւոր» Խաչկոին՝, որպէսզի սա տանի Լվով եւ «ի պահեստի ունիցին՝

վասն առ յապայն զգուշութեան» (տե՛ս Առ. Դաւրիժեցու ստորեւ բերուող մէջբերումը տողատակում), ենթադրել է տալիս, որ պայմանագիրը գաղտնի է եղել եւ լեհահայերն այն կաթոլիկներին ցոյց չեն տուել: Ալոիսիոս Պիդուն եւս պայմանագրի կէտերին տեղեակ չէր, որովհետեւ խօսելով Նիկոլի ու Փիլիպպոս Կաթողիկոսի հանդիպման մասին, յարում է. «Թէպէտ չէ յայտ հաւաստեաւ զի՞նչ ինչ իրաց բանակցութիւն ի նոսա եղեւ»[78]: Լատին աղբիւրներից պայմանագրի ճշգրիտ բովանդակութիւնը յայտնի չի եղել նաեւ Դ. Զուբրիցկուն, Ֆր. Զախարիասեւիչին, Ա. Պավինսկուն եւ այլոց: Տ. Գրոմնիցկին պայմանագրի կէտերը բերում է հիմնուելով ոչ թէ լատին կամ լեհական աղբիւրների վրայ, այլ Առաքել Դաւրիժեցու «Պատմութեան» ֆրանսերէն թարգմանութեան վրայ: Սա եւս լրացուցիչ կռուան է պայմանագրի կէտերը ԺԷ դարում գաղտնի լինելու օգտին: Հարկ ենք համարում ամբողջութեամբ մէջբերել Առաքել պատմիչի համապատասխան վկայութիւնները, քանի որ դրանք վերին աստիճանի ճշգրիտ եւ արժանահաւատ լինելով եւ ունենալով սկզբնաղբիւրի արժէք, մեր ստորեւ անելիք եզրակացութիւնների հիմքերից են*: Թէ՛ Նիկոլ, եւ թէ՛ լեհահայ համայնքը պայմանագիրը գաղտնի պահելու հիմք ունէին: Նիկոլը, որի դիրքերը սկսել էին խախտուել դեռեւս իր ամենազօրեղ պաշտպան Զիգմունտ Գ-ի մահուանից յետոյ (1632), չէր ցանկանա լատին հոգեւորականութիւնն իմանար դէպի Էջմիածին կատարած իր դիմաշրջութեան մասին: Իսկ լեհահայերն էլ, քանի որ հաշտութեամբ հասել էին հայադաւան Եկեղեցին Հռոմից անջատ պահելու որոշակի յաջողութեան, ըստ երեւոյթին պայմանագիրը «առ յապայն զգուշութեան» պահում էին իբրեւ Նիկոլի հնարաւոր դիմաշրջութեանը զսպող զէնք: Ընդհանրապէս օտար պատմաբանների համար առեղծուած է, թէ Փիլիպպոս Կաթողիկոսը ի՞նչ միջոցներով կարողացաւ շիջանել լեհահայերի միահամուռ թշնամութիւնը Նիկոլի հանդէպ, սրան շրջել դէպի հայադաւան Եկեղեցին եւ հաշտեցնել ժողովրդի հետ, երբ լվովահայերի գլխին նա բերել էր անհաւատալի թուացող փորձանքներ: Հարցի արտաքին, այսինքն տեսանելի կողմը բաւական հասկանալի է. մանաւանդ, երբ ձեռքի տակ ունենք Փիլիպպոս Կաթողիկոսի ու Նիկոլի պայմանագրի կէտերը: Կաթոլիկ կղերականութեան մէջ կորցնելով հեղինակութիւնը եւ տեսնելով լեհահայերը իրենից ազատուելու համար անընդհատ նորանոր քայլերի են դիմում, Նիկոլը պաշտօնին մնալու մի ելք էր տեսնում հակուել դէպի Էջմիածինը՝ բայց իր դիմադարձութիւնը գաղտնի պահելու պայմանով, ինչը նրան Վատիկանի գիրկը վերադառնալու սողանցք էր ապահովում: Պարզ է, Էջմիածնին աւելի շատ ձեռնտու էր Նիկոլը, քան Հռոմից նշանակուած մէկ ուրիշը, որը հասկանալի պատճառով պէտք է է՛լ աւելի մեծ գիջումներ անէր, քան Նիկոլը: Հարցի նման լուծումը ձեռնտու էր նաեւ լեհահայերին, որոնք Նիկոլի դէմ բազմամեայ պայքարից ուժասպառ թւում է, թէ Նիկոլի հետ հաշտուելու հնարաւորը պէտք է գերադասէին նրան ցահրնկէց անելու անյաջող փորձերից: Բայց սա, ինչպէս ասուեց, հարցի մէկ կողմն է: Նիկոլի ու լեհահայերի հաշտութեան միակ պայմանը դրա մէջ տեսնելը ինչ որ տեղ պակասաւոր էր թւում: Կար մէկ այլ պատճառ եւս: Հայ պատմագիտութեանն անծանօթ Լեխիցկու մի տեղեկութիւնը լրացնում է այդ պակասը: Պարզւում է, Պոլսում կնքուել է ոչ թէ մէկ, այլ երկու գաղտնի պայմանագիր, որը ազատագրական ակնկալիքներով հայ-լեհական գինակցութեան տուեալները համալրում է մեր պատմագիտութեան ուշադրութիւնից վրիպած նոր փաստերով: Նշելով, որ յայտնի չէ, 1653թ. հանդիպման ժամանակ Փիլիպպոս Կաթողիկոսը ի՞նչ միջոցներով Նիկոլին «կապեց իրեն», Չ. Լեխիցկին շարունակում է. «Որպէսզի Փիլիպպոսի հետ վարած իր բանակցութիւնները թրքերէնի ու լատին

կղերի աչքում այլ նշանակութիւն՝ վերագրէր. Թորոսովիչը Լվով դառնալուց յետոյ, 1653թ. օգոստոսի 21-ին Հռոմ է ուղարկում լատիներէն՝ մի նամակ, ուր Էջմիածնի եւ Մեծ Հայքի միութեան՝ հնարաւորութիւնը Հռոմին՝ ներկայացնում էր լաւատեսական՝ գոյներով՝ բերելով նոյնիսկ այդ միութեան՝ մտացածին՝ (բնագրում «ֆիկտիւ»: Ռ.Հ.) կէտերը»[79]: Մենք դժուարանում ենք ընդունել լեհահայ Եկեղեցու պատմութեան՝ հմուտ պատմաբան՝ Լեխիցկու պնդումը, թէ պայմանագիրը Նիկոլի կեղծիքն՝ է՝ թէեւ ձեռքի տակ ոչ մի վաւերագիր չունենք հակառակն՝ ապացուցելու: Բայց անկախ նրանից, Նիկոլի ներկայացրած պայմանագիրը կեղծիք էր թէ ոչ, լեհ պատմաբանի այս վկայութիւնը մեզ մղում է շատ հետաքրքիր ու համարձակ կռահումների: Քանի որ Նիկոլը Լեխիցկու վկայակոչած (ցաւօք աղբիւրը չի նշում) նամակի մէջ շօշափում է հայերին՝ դաւանափոխելու մտքեր, ուրեմն՝ կարծենք պայմանագրի մէջ հայադաւան՝ Եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու խնդիրը անպայման՝ պիտի առնչուէր Հայաստանի անկախութիւնը վերականգնելու հնարաւորին: Դա այդպէս է, քանի որ դրանից առաջ նման՝ պայմանագրեր կնքուած են՝ եղել թէ՝ Ֆրանսիայի, թէ՝ Վենետիկի հանրապետութեան՝ եւ թէ հետագայում նե՛ւ Լեհաստանի հետ, որի մասին՝ մանրամասն՝ կը խօսենք ստորեւ: Հաւանական է՝ եթէ Լեհաստանի արքունիքում եւ Հռոմում Նիկոլի նամակում նշուած պայմանագրի ոգով որոշակի մտայնութիւն՝ եւ նախադրեալ եղած չը լինէր, Նիկոլը այդպիսի նամակ չէր գրի Հռոմ: Նիկոլը այդ բովանդակութեամբ նամակ չէր գրի Հռոմ նաեւ այն՝ դէպքում, եթէ տեղեակ չը լինէր հայոց կաթողիկոսի այն՝ դիտաւորութիւնների մասին՝, որոնք ներդաշնակ էին՝ իր նամակում արծարծուած խնդիրներին: Իսկ եթէ հայոց կաթողիկոսը նամակի մասին՝ տեղեակ էր, որը գրեթէ կասկած չի յարուցում, ապա լիովին՝ տրամաբանական՝ է, որ յիշեալ փաստաթուղթը գալիս է ոչ թէ Նիկոլից, այլ Փիլիպպոս Կաթողիկոսից: Այդ պայմանագիրը եզակի բնոյթ եւ նպատակ ունէր: Թէեւ փաստերը աւելի շատ խօսում են՝ պայմանագրի վաւերականութեան՝, քան՝ դրա կեղծ լինելու օգտին՝, այսուամենայնիւ Նիկոլի ու Փիլիպպոս կաթողիկոսի միջեւ Պոլսում կնքուած երկրորդ պայմանագրի կեղծ կամ վաւերական՝ լինելը տուեալ դէպքում գրեթէ նշանակութիւն՝ չունի մեր հետեւեալ եզրակացութեան՝ համար.

1650-ական՝ թուերին՝ Հայաստանեայց Եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու կերպով հայ ժողովրդի ազատագրութեան՝ գործը Լեհաստանի մասնակցութեամբ առաջադրելու մտայնութիւնը այդ ժամանակ անպայման՝ առկայ էր թէ՝ Հռոմում, թէ՝ Լեհաստանում: Հետեւաբար, ի դէմս Զ. Լեխիցկու յիշատակած վերոյիշեալ նամակի, գործ ունենք հայ ազատագրական՝ պայքարի՝ Եռան՝ Գ Սեբեսկու շրջանին՝ նախորդող մի փաստաթղթի հետ, որը հայ պատմագիտութեան՝ ուշադրութիւնից վրիպած, թէեւ առայժմ անվաւեր, բայց լիովին՝ հաւանական՝ մի վկայութիւն՝ է՝ ԺԷ դ. երկրորդ կէսի հայ-լեհ քաղաքական՝ շփումների մասին: Այժմ տեսնենք, ի՞նչ կապ կարող էր լինել Զ. Լեխիցկու յիշատակած եւ Առաքել պատմագրի, կարելի է ասել՝ մէջբերած պայմանագրերի միջեւ, որոնք կնքուել են՝ նոյն՝ օրերին՝, նոյն՝ անձանց ձեռքով եւ միեւնոյն՝ առիթով:

Ասացինք, Նիկոլ Թորոսովիչը իշխանութեան՝ գլուխ մնալու համար կանխեց «դաւանութեան՝ թղթերը» Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ հաստատելու տարած պատուիրակութեանը եւ հասաւ այն՝ բանին՝, որ հայոց կաթողիկոսը ոչ միայն՝ լուծեց Նիկոլի վրայ դրուած բանադրանքը, այլեւ իր աշակերտ Յոհան՝ Արղնեցի վարդապետին՝ յատուկ կոնդակով Լվով ուղարկեց՝ լեհահայերին՝ յորդորելու ենթարկուել իրենց թեմակալին[80]: Հարց է ծագում Նիկոլը ի՞նչ միջոցներով պիտի հայոց կաթողիկո-

սին՝ համոզէր ոչնչացնելու դաւանութեան՝ թղթերը: Եթէ հայադաւանութեանը նուիրուած մնալու խոստումներով, ապա բարդյագուրկ Նիկոլին՝ լաւ ճանաչող կաթողիկոսը դժուար թէ հաւատար նրան: Դրա կարիքն՝ էլ չը կար, որովհետեւ Պոլիս ժամանած լվովահայերի ներկայացրած դաւանական՝ թղթերին՝ ծանօթանալիս, Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը շատ լաւ գիտէր, որ այդ քայլով լեհահայերը նպատակ ունէին՝ Հայ Եկեղեցու ծիսակարգում չնչին՝ փոփոխութիւններ մտցնելով Նիկոլին՝ վերացնել ասպարէզից, փոխարէնը թեմակալ ընտրել Էջմիածնին՝ նուիրուած իրենց թեկնածուին: Բացի այդ, ինչպէս ասուեց, հայոց կաթողիկոսը քաջատեղեակ էր լեհահայերի հանդէպ Նիկոլի ունեցած վարմունքին՝ եւ դժուար թէ նրա գրչական՝ միջամները եւ էջմիածնին՝ հպատակ մնալու երդումները վճռական՝ նշանակութիւն՝ ունենային՝ Նիկոլին՝ գահին՝ թողնելու եւ լեհահայերին՝ հնազանդութեան՝ յորդորելու կաթողիկոսի քայլերի համար: Այդ դէպքում ի՞նչը պիտի Փիլիպպոս կաթողիկոսը հակէր Նիկոլին՝ պաշտպանելու աննպաստ քայլին՝, երբ Նիկոլը ինքնիշխանակացրկուել էր նաեւ լատին՝ կղերի աչքում եւ արդէն՝ վտարւում էր ասպարէզից:

Տրամաբանութիւնը միայն՝ մէկ եզրակացութեան՝ է մղում. Փիլիպպոս Աղբակեցին՝, տեղեակ լինելով Հռոմի ու լեհական՝ արքունիքի հետ Նիկոլի լաւ կապերի մասին՝, նրան՝ ներգրաւում է ազատագրական՝ պայքարի մէջ: Այս քայլով կաթողիկոսը միանգամից երեք հարց է լուծում.

ա. Հայ ժողովրդի ազատագրութեան՝ հեռանկարի մէջ Նիկոլի ունենալիք հետագայ դերը շեշտելու ճանապարհով կաթողիկոսը ոչ միայն՝ կարողանում է անելանելի թուացող իրադրութիւնում չէզոքացնել լեհահայ գաղութը ջլատող հակամարտութիւնը եւ լուծել լեհահայերին՝ Մայր Եկեղեցու գիրկը պահելու հարցը, այլեւ միաբարեների երբեմնի ամենազօրեղ գործիքը հանդիսացող թեմակալին՝ ներգրաւել հայադաւան՝ Եկեղեցին՝ անխաթար պահելու պայքարի մէջ՝ այդ Եկեղեցու գոյութիւնը Լեհաստանում երկարաձգելով եւս մի քանի տասնամեակ:

բ. Նիկոլին՝ կապում է հայ ազատագրական՝ շարժմանը եւ նրան՝ օգտագործում իր ծրագրերը լեհական՝ արքունիք եւ Հռոմ ներկայացնելու համար:

գ. Որպէսզի իր եւ Նիկոլի յարաբերութիւնը գործին՝ վնասող կասկածներ չը յարուցէր, Նիկոլի հայանպաստ կեցուածքը լեհական՝ արքունիքի ու Հռոմի աչքին՝ ներկայացւում է իբրեւ լեհահայերին՝ համդարտեցնող զիջում Հայաստանեայց Եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու ճանապարհին՝, այսինքն՝ Հռոմին՝ մատուցելիք եղբայական՝ ծառայութիւն:

Այսպիսով՝ աղբիւրների ուշադիր քննութիւնը եւ Փիլիպպոս կաթողիկոսի ու Նիկոլ Թորոսովիչի շփումների մասին՝ եղած սուղ տուեալների բաղդատումները ցոյց են՝ տալիս, որ «ի յոլով ատուրս զկնի բազում խօսից եւ գործոց» Նիկոլն՝ ու Փիլիպպոս կաթողիկոսը կնքում են՝ ո՛չ թէ մէկ, այլ երկու առանձին՝ պայմանագիր: Առաջին՝ պայմանագիրը, որը հայադաւան՝ Եկեղեցու եւ Էջմիածնի հանդէպ լեհահայերի ու Նիկոլի պարտաւորութիւններին՝ է վերաբերում, հասկանալի պատճառով գաղտնի էր պահւում լատին՝ կղերից, որը միաժամանակ հայերի ձեռքին՝ միջոց էր՝ Նիկոլի եսարատր հաւատարմութիւնը զսպող: Իսկ հայադաւան՝ Եկեղեցին՝ Հռոմին՝ միացնելու գնով Հայաստանի ազատագրութեան՝ գործում Հռոմի ու Լեհաստանի օժանդակութեանը վերաբերող մասը գաղտնի էր մնում թէ՛ լեհահայերի եւ թէ՛ լատին՝ կղերի լայն՝ շրջանակների համար, որը միաժամանակ Նիկոլի զէնքն՝ էր լեհահայերի դէմ: Հետեւաբար իմաստուն՝ կաթողիկոսը լատին՝ կղերի աչքում վերջնականապէս ու անդառնալիօրէն՝ ինքնիշխանակազրկուած Նիկոլին՝ այնպիսի վիճակի մէջ է դնում, որ սա Ա-

թոռին՝ մնալու համար Էջմիածնին՝ հակվելուց բացի ոչ մի այլ ելք չունենար: Ահա թէ ինչու կաթողիկոսը ոչ միայն սիրայօժար ընդունում է «մոլորեալ ոչխարի դարձը», այլեւ նրա համար գտնում է մի այնպիսի ճանապարհ, որով նա պէտք է ամրապնդէր իր դիրքերը Հռոմում՝ առանց սակայն հեռար ունենալու լքելու Էջմիածինը...

Եթէ մեր այս ենթադրութիւնը հաստատւում ճշտուի Նիկոլի յիշեալ նամակի ու այլ փաստաթղթերի յայտնաբերումով, ապա Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը մի անգամ եւս մեզ համար հանդէս կը գայ որպէս խորիմաց, նուրբ ու երկարատեւ մի դիւանագէտ ու քաղաքական գործիչ: Պատմութեան հեռուից հետեւելով նշուած իրադարձութիւնների տրամաբանութեանը, տեսնում ենք, որ Նիկոլ Թորոսովիչին՝ գահընկեց անելու փոխարէն՝ նրան՝ ընդհանուր գործի մէջ ներգրաւելը, իրօք, թէեւ շատ համարձակ ու վտանգալէց, բայց միակ ճիշտ քայլն՝ էր տուեալ իրավիճակում, որով հնարաւոր եղաւ լեհահայ Եկեղեցին՝ մօտ 30 տարով կանխել վերջնական բաժանումից, այսինքն՝ այն՝ առաւելագոյնը, ինչը հնարաւոր էր անել այդ պարագային: Բայց լատին՝ կղերը որոշ ժամանակ անց շատ լաւ հասկացաւ գործի էութիւնը: Լեհ պատմաբանների վկայութեամբ, Պոլսի «հաշտութիւնից» յետոյ կաթոլիկ Եկեղեցու վերաբերմունքը Է՛լ աւելի անհանդուրժողական՝ տեսք ընդունեց Նիկոլի վերաբերութեամբ: Առաջ խօսք չէին՝ գտնում նրան՝ գովաբանելու, այժմ թերութիւն՝ չը կար չը վերագրէին՝ նրան՝ (Լոզինսկի): Իսկ Ալոիսիոս Պիդուն՝ մօտ 1670թ. այդ հաշտութիւնը հետեւեալ կերպ է մեկնաբանում. «Եւ այսպէս դարձաւ արքեպիսկոպոսն՝ յաթոռ իւր եւ զամենայն՝ ինչ կարգեաց ըստ այնմ որպէս էր յառաջ քան՝ զխոստովանութիւն՝ իւր (դաւանութեան՝ համայնեցւոց)... ի ներքոյ ընկալեան՝ զնա Հայք, որ կարի զուարճանային՝ ի սիրտ իւրեանց, զի գտին՝ հնար... միացեալս զանձինս ընծայեցուցանել եւ այնու պահել... զարտաքնութիւնն՝, զորս վայելեն՝ մինչեւ ցայսօր՝ մնալով կալով ի նախնի հաւատս իւրեանց: Վասն՝ որոյ սահմանեցին՝ տօն՝ երեւելի... եւ կոչի Տօն՝ Միութեան՝, եւ արդարեւ, *միաբանեցան նորա ընդ միմեանս, այլ ոչ ընդ Ս. Եկեղեցւոյն (Հռոմին: Ռ.Հ.): Սովաւ անջատումն մանաւանդ եղեւ յեկեղեցւոյն քան միութիւն*, զի յայնմհետէ մեծաւ եւս ջերմեռանդութեամբ պաշտէին՝ զհերձուածական՝ արարողութիւնս իւրեանց, թէպէտեւ քահանայքն՝, յորժամ հարկ լինէր նոցա մատուցանել պատարագ ի լատին՝ եկեղեցւոջ՝ յաւելուն՝ ջուր ի գինի, *որով դիւրացան եւս խաբէին զկաթոլիկսն*»[81] (ընդգծումներն՝ իմը: Ռ.Հ.): Այսպիսով՝ միութեան՝ նախնական՝ շրջանի առաջին՝ փուլում (1627-1644), երբ ըստ պատմագիտութեան՝ մէջ ընդունուած տեսակէտի, լեհահայերը պիտի կաթոլիկացած լինէին՝, ընդհակառակը, շնորհիւ իրենց միասնական՝ ու միակամ, կարելի է անվարան՝ ասել՝ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ, կարողանում են՝ անխաթար պահել հայադաւան՝ եկեղեցու ծիսակարգը՝ չը հաշուած Ս. Պատարագի ժամին՝ Նիկոլի կողմից Պապի անունը յիշատակելու ձեւական՝ հանգամանքը:

Առ. Դաւրիժեցին՝ լեհահայերի մասին՝ խօսքն՝ աւարտում է 1652-53 թթ. դէպքերով եւ վերջում նշում, թէ նրանք մինչեւ այսօր (այսինքն՝ 1660թ.: Տե՛ս «Պատմութիւն», էջ 289) հաշտ ու խաղաղ ապրում են՝ իրենց եպիսկոպոսի հետ: Հետեւաբար միութեան՝ հետագայ դէպքերին՝ նա տեղեակ չէր: Մինչդեռ 1664թ. թէատինեան՝ կրօնաւոր Կղեմենս Գալանոսը գալիս է Լվով, կաթոլիկ քահանաներ անեցնելու համար բացում Հայոց ճեմարան՝ եւ սկսւում է միութեան՝ երկրորդ եւ վճռական՝ փուլը, որը շարունակւում է մինչեւ Վարդան՝ Յունանեանի թեմակալութեան՝ սկիզբը (1686թ.): Այդ տարիներին՝ պատարագի մէջ հետզհետէ արմատաւորւում են՝ լատինական՝ ծիսակարգի որոշ տարրեր, մասնաւորապէս Ս. Պատարագի ժամին՝ գինուն՝ ջուր խառնելու խոր-

խումբը, որը Հայաստանեայց Եկեղեցին կաթոլիկ եկեղեցուց անջատող հիմնական կէտերից մէկն էր:

Թէեւ 1664թ. յետոյ թէատինեանների ջանքերով լատին կղերը կարողացաւ մի շարք արտաքին փոփոխութիւններ մտցնել հայադաւան եկեղեցու ծիսակարգի մէջ, բայց այսուամենայնիւ, լեհահայ եկեղեցին, միաժամանակ թէ՛ Էջմիածնին եւ թէ՛ Հռոմին ենթակայ լինելու իւրօրինակ հանգամանքով, իր կիսանկախ վիճակը պահպանեց մինչեւ Վ. Յունանեանի գահակալութեան սկիզբը, որից յետոյ հետզհետէ՝ թէ՛ իրաւաբանօրէն եւ թէ՛ փաստօրէն, վերջնականապէս անջատուեց Ս. Էջմիածնից: Այսպիսով կաթոլիկացման դէմ լեհահայ համայնքի 1627-1652թթ. ազատամարտի շնորհիւ, Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը կարողացաւ 1652 թուին վերականգնել լեհահայ եկեղեցու ենթակայութիւնը Էջմիածնին, պահպանել հայադաւանութեան հիմնական կէտերը:

Լատինացման դէմ լեհահայերի 1650-ական թուերի յաղթանակին որոշ չափով նպաստեց նաեւ 1648-1657թթ. Լեհաստանում տիրող քաղաքական խիստ աննպաստ իրադրութիւնը: 1648-1654թթ. կոզակների ատաման Բոգդան Խմելնիցկին, Ղրիմի թաթարներին զինակից եւ Ռուսաստանի գաղտնի հովանաւորութեամբ, ապստամբել էր Լեհաստանի դէմ: 1654թ. Պերէեասլաւեան ռադան Գալիցիան եւ Պոդոլիայի մեծ մասը միացնում է Ռուսաստանին: 1655 թուին Շուէդիայի թագաւոր Կառլ Գուստաւի զօրքերը, առիթից օգտուելով, ներխուժում են Ռէչ-Պոսպոլիտա եւ հասնում մինչեւ Զամոստիէ հայաշատ քաղաքի մատոյցները: Այդ նոյն ժամանակ Խմելնիցկին պաշարել էր Լվովը, իսկ Կառլ Գուստաւի հետ Լեհաստանը բաժանելու պայմանագիր կնքած Բրանդենբուրգի իշխան Ռակոցի Դ-Էորդը 1656թ. 40 հազարանոց բանակով պաշարել էր Կրակովը: Երկիրը անկախութեան կորստի շէմին էր եւ լեհական արքունիքը ժամանակ չունէր ուշք դարձնելու հայերի դաւանափոխութիւնը ամեն գնով վերջացնելու լատին կղերի եւ Հռոմի պարբերական պահանջներին: Ընդհակառակը՝ ի նկատի ունենալով Բ. Խմելնիցկու համակիրների շարքերը հայերով համալրուելու դէպքերը[82], լեհական արքունիքը լատին կղերի միութենական ջանքերը այդ իրավիճակում դիտում էր որպէս երկրի միասնականութիւնը խարխլող գործողութիւն եւ ճգնում էր հայերին սիրաշահել[83]: Բազմաթիւ փաստերի վկայութեամբ լեհահայերը պայքարը չեն դադարեցնում նաեւ 1664թ. յետոյ: Ալ. Պիդուի շարադրանքից երեւում է թէատինեանների կողմից 1652թ. «պայմանագրի» խախտումները Թորոսովիչին ստիպում են ընդդիմանալ: 1666թ. Գալանոսի մահը էլ աւելի է աշխուժացնում հայերին, որոնց պահանջով Թորոսովիչը վճռում է փակել Գալանոսի բացած «Հայոց ճեմարանը»: Բայց լատին բարձրաստիճան եկեղեցականների (Պիգնատելլի եւ ուրիշներ) եռանդուն ջանքերով դպրոցը վերաբացւում է: 1668թ. սեպտեմբերի 27-ին կայացած Լվովի «Հայոց աւագների խորհրդի» նիստը միաձայն որոշում է Հռոմ մեկնող Նիկոլին խնդրել, որպէսզի սա Հայաստանեայց Եկեղեցուց լեհահայ եկեղեցու հետագայ անջատման «դէմն առնի»[84]: Յանձնարարականների բնոյթ ունեցող լեհահայերին յղած Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի 1662-1672թթ. նամակներից երեւում է, որ Նիկոլը պահպանում էր Փիլիպպոս Կաթողիկոսի հետ կնքուած պայմանագրի կէտերը[85]: Փաստօրէն եթէ 30 տարի առաջ ինքնակամ միութիւն ընդունած եւ իր ժողովրդի դէմ անլուր յարձակումներ գործած թեմակալը միարարներին պէտք էր իրենց գործը սկզբնաւորելու համար, ապա այժմ, երբ սկսուել էր վերջնական միութեան վճռական փուլը, դէպի Էջմիածին հակուած եւ հայադաւանութեան հիմնական կէտերը պահպանել ջանացող Նիկոլը միարար-

ների՝ չէր կարող պէտք գալ։ Ահա թէ ինչու Նիկոլին մեկուսացնելու համար թէատինեանները նրան՝ 1668թ. կարողանում են՝ մի կերպ ղրկել Պապի մոտ։ Նիկոլը իր փոխարէն՝ թողնելով իր ազգական՝ Եան՝ Կերիմովիչ եպիսկոպոսին[86], մեկնում է Հռոմ, ուր Պապը նրան՝ բարձր պաշտօններով, ասենք, կարդինալի ծիրանի հագցնելով[87] նոյթ տարու չափ պահում է մոտը։ Այստեղ Նիկոլը փաստօրէն՝ տնային կալանքի մէջ էր, քանի որ հնարաւորութիւն՝ չունէր մասնակցելու իր թեմի գործերին՝ կամ ետ դառնալ Լվով, ուր թեմի գործերը տնօրինում էին՝ թէատինեանները։ Բայց կաթոլիկները Նիկոլին՝ մեկուսացնելուց յետոյ կանգնեցին՝ նոր խնդրի առաջ։ Յակոբ Ջուղայեցին՝ Նիկոլի Լվովից մեկնելը լսելով, 1671թ. սեպտեմբերի 1-ի կոնդակով Լվով է ուղարկում իր կողմից եպիսկոպոս օծուած Թէոդորոս Վարդանեանին՝ (լեհական՝ աղբիւրներում՝ Վարդանովիչ) որպէս «առաջնորդ հովիւ եւ տեսուչ լեհաց երկրին՝, որպէսզի իշխանութիւն՝ վարէ հայոց եկեղեցայ կանոնաց համեմատ»[88]։ Հասկանալի է՝ Էջմիածինը նպատակ ունէր պահպանելու լեհահայ եկեղեցու ինքնուրոյնութիւնը։ Լատին՝ կղերը անմիջապէս անցնում է հակադիր քայլերի։ Ալ. Պիդուին՝ փոխարինողներ Լուբենլին՝ եւ Բոսը լեհական՝ թագաւորին՝ բողոքում են՝, թէ քանի Նիկոլը կենդանի է, նրա յաջորդին՝ ընտրելու իրաւունքը պատկանում է լեհական՝ թագաւորին՝։ Այս գործին՝ խառնուեցին՝ նաեւ Հռոմի Կղեմենս Ժ Պապը՝ Լեհաստանի թագաւորին՝ գրած իր 1672թ. յունուարի 3-ի նամակով նրան՝ խնդրելով Վարդանովիչին՝ «քաղաքից վտարել»[89]։ Վարդանովիչին՝ թէեւ լվովահայերը լաւ ընդունեցին՝, բայց շուտով նա ստիպուած հեռացաւ քաղաքից։ Լեհահայերը տեսնելով Վարդանովիչին՝ չեն՝ կարողանում պահել՝, բազմաթիւ դիմումներով Հռոմից խնդրեցին՝ Թորոսովիչին՝ ետ ուղարկել[90]։ Թէեւ Հռոմը Նիկոլին՝ չէր ուզում Լվովում տեսնել, բայց յարմար թեկնածու չը գտնելով, ստիպուած Թորոսովիչին՝ 1675թ. սկզբին՝ ետ ուղարկեց Լվով՝ բայց նրան՝ ստիպելով աթոռակից ընտրել Վ. Յունանեանին[91]։ Թորոսովիչի բացակայութեան՝ ընթացքում, թէեւ ժամասացութիւններն՝ ու երաժշտական՝ հաստատուածները հիմնականում անփոփոխ էին՝ մնացել, բայց թէատինեանների ջանքերով պատարագի եւ ծիսակարգի մէջ նոր «շտկումներ» էին՝ մտցուել։ Թորոսովիչի Լվով ժամանելուց յետոյ Վարդան՝ Յունանեանը չը դիմանալով Նիկոլի վարմունքին՝, մեկնում է Հայաստան[92]։

Նիկոլ Թորոսովիչի մահուանից (1681թ.) յետոյ լեհահայերը Էջմիածնի ղեկավարութեամբ դիմում են՝ իրենց եկեղեցին՝ ազատելու վճռական՝ նոր քայլերի, որոնք անծանօթ են՝ հայ պատմագիտութեանը։ Բարոնչը դիւանական՝ փաստաթղթերի վրայ հիմնուելով այդ իրադարձութիւնների մասին՝ նշակի տեղեկութիւններ է տալիս։ Ըստ նախնական՝ պայմանաւորուածութեան՝, Վարդան՝ Յունանեանը, որը Նիկոլ Թորոսովիչի աթոռակից թեմակալն՝ էր, սրա մահուանից յետոյ պիտի նստէր թեմակալի գահին՝։ Բայց Եղիազար Կաթողիկոսը Յունանեանին՝ երկար ժամանակ թոյլ չէր տալիս մեկնել Լվով ու զբաղեցնել իր գահը։ «Միայն՝ Եան՝ Սոբեսկի թագաւորի միջնորդութեամբ ազատուեց եւ 1686թ. հոկտեմբերի 3-ին՝ ժամանեց Լվով»[93]։ Իսկ մինչ Եղիազար Կաթողիկոսը Յունանեանին՝ կը թոյլատրէր վերադառնալու Լեհաստան՝, լեհահայերը կատարում են՝ իրենց եկեղեցին՝ Հռոմից ազատելու մի նոր փորձ։ Դեռեւս Թորոսովիչի կենդանութեան՝ օրօք Լեհաստանում Հռոմի նուիրակ Պալլաւիչինին՝ յաջողացրել էր լատինամոլ Դէոդատ (հայկական՝ աղբիւրներում Աստուածատուր) Ներսէսովիչի համար Վատիկանից «պոկել Տրայանուպոլիսի եպիսկոպոսի տիտղոսը»[94]։ Թորոսովիչի մահուանից յետոյ Հռոմը լվովահայ համայնքի ցանկութեանը հակառակ, այս Ներսէսովիչին՝ նշանակում է Լվովի թեմակալ (Բարոնչ, Ժըվոտը, էջ 240)։ Ի հակակշիռ Հռոմի ապօրինի գործողութիւնների, Կամենեց-

Պոդոլսկի հայ համայնքը եպիսկոպոս է ընտրում Թորոսովիչի աճեցրած եկեղեցականներից՝ Եամ՝ Բեռնարտովիչին՝ (կամ Բեռնատովիչ), որը Լվովի մեծահարուստ Բեռնարտովիչների տոհմից էր, որոշ ժամանակ ուսանել էր Ս. Էջմիածնում: Բեռնարտովիչ եպիսկոպոսը գալիս է Լվով եւ անցնում եակամիաբարների գլուխը: Յեռլով Լվովի հայոց առաջնորդարանի դիւանական՝ փաստաթղթերը, Բարոնչը մանրամասնում է այս իրադարձութիւնները. «Բեռնարդովիչը խոստացել էր միշտ հնազանդ մնալ իր արքեպիսկոպոսին՝ (Նիկոլին: Ռ.Հ.): Նա գովելի կերպով պահում էր իր այդ խոստումը մինչեւ 1983թ., երբ Լվով ժամանեց հայադաւան՝ մի եպիսկոպոս, որն՝ իրեն՝ Երուսաղէմի պատրիարք անուանելով, հայադաւանութեանը վերադառնալու շատ մեծ յոյսեր արթնացրեց որոշ հայերի մէջ: Սրանք Եամ՝ Բեռնարդովիչին՝ համոզեցին՝ Կամենիցի եպիսկոպոս օծուել: Սա տեղի տուեց հայերի յորդորներին՝, ապօրինաբար եպիսկոպոս օծուեց եւ կատարում էր եպիսկոպոսի (իմա՝ թեմակալի փոխանորդի: Ռ.Հ.) պաշտօն: Այդ մասին՝ իմանալով, Լեհաստանում Պապի առաքելական՝ նուիրակ, Եփեսոսի արքեպիսկոպոս Օպցիուշ Պալաւչինենին՝ անմիջապէս եկովը դրեց Եամի վրայ՝ սպառնալով եկովել իւրաքանչիւրին՝, ով սրան՝ եպիսկոպոս ճանաչի»[95]:

Բեռնարտովիչի թեմակալութեան՝ մասին՝ գրել են՝ նաեւ Տ. Գրոմնիցկին՝, Զ. Լեխիցկին՝ եւ լեհ միւս պատմաբանները: Այսպիսով՝ չնայած Թորոսովիչի մահուանից յետոյ Յունանեանի պէտք է փոխարինէր նրան՝, բայց յեհահայերը Կամենէց-Պոդոլսկի յիշեալ եկեղեցականին՝ 1683թ. եպիսկոպոս օծելով, կարողանում են՝ 3-ից 6 տարի դնել Լվովի թեմակալի աթոռին՝, մինչեւ Վ. Յունանեանը 1686թ. հոկտեմբերի 3-ին՝ Հայաստանից Լվով ժամանելով»[96], չի անցնում իշխանութեան՝ գլուխ եւ 1687թ. Բեռնարտովիչին՝ կարգալոյծ անելով չի հեռացնում եկեղեցական՝ գործունէութիւնից[97]: Ինչպէս տեսնում ենք, բռնի միութեան՝ սկզբից (1630թ.) 53 տարի յետոյ, երբ ըստ պատմագիտութեան՝ մէջ հիմնաւորուած կարծիքի, լեհահայերի դաւանափոխութիւնը վաղուց պիտի աւարտուած լինէր, նրանք ոչ միայն՝ շարունակում են՝ պայքարը, այլեւ յաջողացնում են՝ Լվովի հայոց թեմը աւելի քան՝ երեք տարի (ըստ ոմանց կարծիքով՝ 1681-1686թթ.) վերցնել իրենց ձեռքը, որը նախընթաց հաստատ պահելու լեհահայերի երեւէ վերջին՝ ճիգն՝ էր: Այս փաստը եւս մի զօրեղ կռուան՝ է պնդելու, որ բռնի միութեան՝ դէմ լեհահայերի ինքնապաշտպանութիւնը եղել է անհուլ ու անդադար:

Երբ հայ ազատագրական՝ պայքարի գործիչները ԺԷ դարի 80-90-ական՝ թուերին՝ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու հարցի շուրջ Լեհաստանի ու Հռոմի հետ աշխոյժ բանակցութիւններ էին՝ վարում, Վարդան՝ Յունանեանը 1691թ. Լվովում գումարում է եկեղեցական՝ սինոդ, որտեղ իրաւաքանօրէն՝ վերջնականապէս վճռւում են՝ լեհահայոց եկեղեցու պատարագի հիմնական՝ փոփոխութիւնները, անկախութիւնը Էջմիածնից եւ հպատակութիւնը Հռոմի Պապին: Սինոդը ամբողջ լեհահայ հոգեւորականութեան՝ անունից լեհահայ կաթոլիկ եկեղեցու գլուխ հռչակեց Լվովի արքեպիսկոպոսին՝, ընդունեց նոր ծիսակարգ, որը Յունանեանը թէատինեաններին օգնութեամբ լատինացրեց[98]: 1699թ. կայացած յեհահայոց եկեղեցու ընդհանուր ժողովը հրահանգ իջեցրեց «եկեղեցիներում Տիրոջ խօսքը աշխարհաբար (բնագրում ժողովրդային՝ լեզուով: Ռ.Հ.) ներկայացնել»[99]:

Ֆր. Զախարիասեւիչի տուեալներով, ԺԹ դարի տասնամեակներին՝ լեհահայոց եկեղեցիներում աղօթքն՝ ու «ժողովրդի հետ երգող երգերը», որոնք առաջ գրաբարով էին՝, սկսեցին՝ լեհերէն՝ կատարել[100]: Բայց այդուհանդերձ, լեհահայ որոշ գաղթօջախներում կաթոլիկութիւն՝ չէին՝ ընդունել եւ շարունակում էին՝ պայքարը: Օրինակ ըստ Ֆր. Զախարիասեւիչի, Բուքովինայում 1825թ. ապրող 1824 հայերից 1134-ը

մնացել էին՝ «հին՝ հաւատին»[101]: Իսկ երբ թէատինեանք 1785թ. Կամենէց-Պոդոլսկում ուզում էին՝ հոգեւոր ճեմարան՝ բանալ, տեղի հայերը նոյնիսկ Գրիգորեան՝ տօմարը չուզեցին՝ ընդունել, ուր մնաց թէ Կամենէց-Պոդոլսկում հանդուրժէին՝ կաթոլիկ քահանաներ արտաքսող կղերանից: Ինչ որ է, լեհահայերի բռնի միութիւնը, որը սկսուել էր ԺԶ դարի 60-ական՝ թուերին՝ եւ տաղտկալի տեսք ընդունել 1630թ. Նիկոլ Թորոսովիչի շրջանին, աւարտուեց մօտ 120 տարուայ յամառ ջանքերից յետոյ: Հայ ժողովրդի տարագիր այդ հատուածը, հայրենիքից հազարաւոր մղոններ հեռու, Եւրոպայի կենտրոնում հարիւրապատիկ ուժեղ հակառակորդի դէմ դուրս գալով ազատամարտի, կարողացաւ արձանագրել մէկից աւելի յաջողութիւններ, մինչեւ որ վիթխարի ճնշման դիմանալու կարողութիւն՝ չունենալով, նահանջեց: Լեհահայերի միակ «յաղթանակն» այն՝ եղաւ, որ նրանց եկեղեցին՝ ո՛չ թէ ամբողջովին՝ ձուլուեց լատին՝ եկեղեցուն, այլ պաշտօնապէս անուանուեց «Հռոմին՝ միացած հայոց ծիսակարգի եկեղեցի»՝ պահպանելով բազմաթիւ ծիսական՝ իւրայատկութիւններ: Թէեւ ԺԸ-ԺԹ դարերում լեհ կղերը ձգտում էր լեհահայ եկեղեցին՝ լեհական՝ եկեղեցուն՝ միացնելու միջոցով վերացնել նաեւ ծիսական՝ այդ չնչին՝ տարբերութիւնները. Բայց Վատիկանը պահպանեց թէ՛ լեհահայ արքեպիսկոպոսութիւնը, թէ՛ «հայոց ծիսակարգը»: Հռոմի այս առաջին՝ հայազգիից հայանպաստ կեցուածքի հիմքն՝ ու պատճառը, ինչպէս ճիշտ նկատում է Վլ. Լոզինսկին, «պապական՝ Աթոռի շահերն՝ էին՝ Արեւելքում, ուր հռոմէական՝ եկեղեցին՝ ուժգնօրէն՝ աշխատում էր եւ այժմ էլ աշխատում է իրեն՝ ենթարկել Հայոց Եկեղեցին»[102]: Այս միտքն՝ արտայայտելուց յետոյ Լոզինսկին՝ աւելացնում է. «Պապը չէր արտօնում եւ չի արտօնում դեռ, որ հայերն՝ իրենց հոգեւոր կարիքները հոգան՝ կաթոլիկ եկեղեցիներում: Հայերի մուտքը կաթոլիկ հոգեւոր միաբանութիւններ թոյլատրւում էր որպէս բացառութիւն՝, միայն՝ Պապի անձնական՝ կարգադրութեամբ եւ միշտ դժկամութեամբ: Եւ Պապերի այս քաղաքականութեան՝ շնորհիւ է որ մինչեւ այժմ էլ հայ են՝ մնացել հռոմէական՝ եկեղեցուն՝ միացած հայերը»:

Դա ոչ թէ Հռոմի շնորհիւ էր, այլ դարձեա՛լ Հայաստանեայց Եկեղեցու անկախութեան՝ շնորհիւ: Մեր Եկեղեցին՝ նոյնիսկ ա՛յս դէպքում, հէնց սոսկ միայն՝ իր գոյութեամբ կարողացաւ նեցուկ լինել լեհահայերին, պահպանել նրանց ազգային՝ դէմքն՝ ու պատմական՝ յիշողութիւնը մինչեւ այսօր, երբ նրանք դարձեա՛լ անկախ են՝ լեհ եկեղեցուց, պահում են՝ «հայոց ծիսակարգի եկեղեցու» իրենց վաղեմի կարգավիճակը, բայց ենթարկւում են՝ ոչ թէ անմիջապէս Հռոմի Պապին, այլ հայոց կաթոլիկ կաթողիկոսին:

Եթէ լեհահայերի բռնի միութեան՝ պատմութիւնը շրջանաբաժանելու լինենք, ապա այն՝ կարելի է տրոհել երկու մեծ շրջանների:

Առաջին՝ կամ նախնական՝ շրջան. մօտաւորապէս սկսւում է Տրիդենտեան՝ ժողովից եւ շարունակւում մինչեւ Նիկոլ Թորոսովիչի գահակալութեան՝ սկիզբը (1545-1627):

Երկրորդ, կամ գլխաւոր շրջան: սկսւում է 1627թ. եւ շարունակւում մինչեւ 1691թ. սինոդի որոշումները:

Հռոմէական՝ եկեղեցու հետ լեհահայերի միութեան՝ պատմութեան՝ գլխաւոր շրջանի (1627-1691թթ.) հետազօտութիւնը մեզ բերել է հետեւեալ եզրակացութեան:

1627-1652 թուականներին՝ լեհահայ համայնքը լիովին՝ ենթարկւում էր *Էջմիածնին*, իսկ *թեմակալը՝ Հռոմին*:

1653-1686թթ. *թեմակալը* փաստօրէն՝ *վերամիաւորուելով* Էջմիածնին, *իրաւական-*

*ըէն* մնաց Հռոմի ենթակայութեան՝ տակ: Այս եզակի ու աննախընթաց վիճակը Փիլիպպոս կաթողիկոսի ու Նիկոլի միջեւ 1653թ. կնքուած պայմանագրի արդիւնքն՝ էր, ըստ որի, Նիկոլի մահուանից յետոյ լեհահայոց թեմակալին՝ պիտի հաստատէր Ս. Էջմիածինը: Բայց յիշեալ պայմանագրի անվերապահ կատարումը, հասկանալի պատճառով, չէր կարող ապահովուել: Ուստի լեհահայ եկեղեցու համար Հռոմի եւ Էջմիածնի միջեւ սկսւում է տասնամեակներ տեւող մի անօրինակ պայքար: Հռոմը ձգտում էր թեմի իրաւական՝ ենթակայութիւնը վերածել փաստականի, իսկ Ս. Էջմիածինը՝ փաստականը՝ իրաւականի: Թէատինեանների Լվով ժամանելուց յետոյ (1664թ.) Հռոմը լուրջ յաջողութիւններ արձանագրեց: Սակայն՝ 1670-ական՝ թուականներին՝ Էջմիածինը կրկին՝ մասնակիօրէն՝ վերականգնում է հաւասարակշռութիւնը, որը եթէ 1627-1652թթ. համար շատ լուրջ պարտութիւն՝ էր, ապա 1666-1686թթ. պայմաններում նշանակում էր շօշափելի յաղթանակ: Գալանոսի մահուանից (1666թ.) յետոյ Էջմիածինը երկու անյաջող փորձ է անում լեհահայոց իրաւունքները վերականգնելու համար: Հռոմի ծաւալապաշտական՝ քաղաքականութեան՝ դէմ լեհահայութեան՝ այս պայքարը տեւում է մինչեւ 1681թ., երբ Էջմիածինը կարողանում է մի քանի տարով թեմակալի փաստական՝ ու իրաւական՝ ենթակայութիւնը դաշնակել իրար (Բենետոստովիչի գահակալութիւնը): Բայց Հռոմը, 1686թ. թեմակալ նշանակելով Վ. Յունանեանին, տանում է իր վերջնական՝ յաղթանակը:

Այսպիսով Էջմիածինը 1627-1652թթ. պարտութիւն՝ կրելով Հռոմից, 1653թ. կարողանում է վերականգնել իր հիմնական՝ իրաւունքները եւ ճանաչել թեմակալի ու իր հօտի փաստական՝ միութեանը՝ յօգուտ իրեն՝ 1664թ. միարարողների յարձակման՝ նիր թափը խափանում է Ս. Էջմիածնի դիրքերը՝ լատին՝ կղերի եւ Նիկոլի միջեւ եղած հակառութիւնը հասցնելով առաւելագոյնի: Սակայն՝ 1681թ. լեհահայերին՝ յաջողում է լեհահայ թեմի գլուխը դնել իրենց կողմնակցին՝ Բայց 1680-ական՝ թուականներին՝ լեհահայ կղերի մէջ լուրջ տեղաշարժեր էին՝ կատարուել: Եթէ 1630- 70-ական՝ թթ. սկզբներին՝ կղերականութեան՝ եւ աշխարհիկ բարձր խաւի ճնշող մեծամասնութիւնը Էջմիածնական՝ էր, ապա 1670-1680-ական՝ թթ. այդ համամասնութիւնը խախտւում է: Անցած 50-60 տարիների ընթացքում հարիւրաւոր հայադաւանների երկիրը լքելու պատճառով լեհահայերի՝ լատինադաւան թիւը աճել էր: Այս իրողութիւնը աւելի ակնյայտ էր եկեղեցականութեան՝ մէջ: Լվովի հայոց ճեմարանի (կղերանոց) շրջանաւարտները հին՝ սերնդի հայադաւան՝ կղերի համեմատ մեծամասնութիւն՝ էին՝ կազմում: Հայադաւան՝ եկեղեցականների մեծ մասը կամ շարքից դուրս էր եկել, կամ Թորոսովիչի հալածանքներին՝ չը դիմանալով լքել էր երկիրը: Այս պատճառով հայադաւանները 1681թ. չլսանալով քահանայութեան՝ ու լեհահայ վերնախաւի բացարձակ մեծամասնութիւնը, թեմակալի գահը կարողանում են՝ պահել մի քանի տարի միայն՝ Հռոմը Լեհաստանի արքունիքի վճռական՝ օժանդակութեամբ 1687թ. Էջմիածնին՝ մեկուսացնում է իր թեմից, եւ Ս. Էջմիածինը՝ ի դէմս նոր թեմակալ Յունանեանի, կորցնելով յենարանը, կորցնում է իր ազդեցութիւնը լեհահայ թեմի վրայ: 1691թ. լեհահայ եկեղեցին՝ վերջնականապէս ենթարկւում է Հռոմին՝, որը 60-ամեայ վիթխարի ջանքերի գնով թեմակալի ու թեմի փաստական՝ ենթակայութիւնը վճռում է իր օգտին՝

Լեհահայերի բռնի միութեան՝ գլխաւոր շրջանը կարելի է երեք ենթաշրջանի բաժանել.

ա. Նիկոլ Թորոսովիչի թեմակալութիւնից մինչեւ թէատինեանց Լվով ժամանելը (1627-1664թթ.)՝ երեք փուլերով.

1. Նիկոլի թեմակալութիւնից մինչեւ նրա դաւանափոխութիւնը (1627-1630թթ.):
2. Նիկոլի դաւանափոխութիւնից մինչեւ Փիլիպպոս Կաթողիկոսի հետ հաշտու-

թիւն՝ կնքելը (1630-1653թթ.)։ Այս երկու փուլերում (1627-1653թթ.) լեհահայ համայնքը լիովին՝ ենթարկւում էր Ս. Էջմիածնին, իսկ թեմակալը՝ Հռոմին։

3. Պոլսի հաշտութիւնից մինչեւ թէատինեանների կողմից Լվովում հայոց ճեմարան՝ բացելը (1653-1664 թթ)։

բ. Թէատինեան՝ կղերանոցի բացումից մինչեւ Նիկոլի մահը (1664-1681)։

գ. Նիկոլի մահուանից մինչեւ 1691թ. սինոդի որոշումները՝ երկու փուլով.

1. Նիկոլի մահուանից ու Եան՝ *Բեմապտովիչի* գահակալութիւնից մինչեւ *Յունանեանի* թեմակալ նշանակելու տարին՝ (1681-1686թթ.)։

2. Յունանեանի Լվով ժամանելուց մինչեւ 1691թ. սինոդի որոշումները (1687-1691թթ.), որը պէտք է համարել լեհահայերի կաթոլիկացման՝ աւարտական՝ շրջանը։ Այսպիսով՝ լեհահայ եկեղեցու վերջնական՝ միութիւնը Հռոմին՝ ո՛չ թէ պիտի դնել 1630-ական՝ թուականները, ինչպէս ընդունուած է պատմագիտութեան՝ մէջ. այլ 1687-1691թթ., ինչպէս վկայում են՝ պատմական՝ աղբիւրները։

Լեհահայոց բռնի կաթոլիկացման՝ պատմութեան՝ այս հակիրճ շարադրանքը մեզ իրաւունք է տալիս անելու հետեւեալ եզրակացութիւնը. Բռնի դաւանափոխութեան՝ դէմ Հայաստանեայց Եկեղեցու գլխաւորած լեհահայոց 1530-1680-ական՝ թուականների պայքարը ոչ այլ ինչ էր, քան՝ ԱՒԱՐԱՅՐԸ յիշեցնող ինքնապաշտպանական՝ ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏ, որը անվերապահօրէն՝ պէտք է դասել հայ ժողովրդի ազգային-ազատագրական՝ պայքարի փառաւոր էջերի շարքը։

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Լ. Բարայեան, Հայերը Մոլդաւիայում եւ Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 24, 34; Յ. Զաւրեան, Լեհահայ գաղթը եւ ներքին կեանքը. Հայրենիք (ամսագիր). 1929թ., թիւ 6, էջ 129-131; Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հտ. Բ, Երեւան, 1959, էջ 200, 222, 349-352 (այսուհետեւ՝ Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ); Արշակ Ալպօյաճեան, Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշստան ԺԷ դարում, Կահիրէ, 1946, էջ 63; В. Воскапян, Древняя Рус и Украина в судьбах армян (Հին Ռուսիան եւ Ռութենիան հայոց ճակատագրում), Исторические связи и дружба украинского и армянского народов (ռութէն եւ հայ ժողովուրդների պատմական կապերն ու բարեկամութիւնը (յօդուածների ժողովածոյ), Երեւան, 1961թ., էջ 70-81, 88: Նոյն ժողովածոն տպուել է նաեւ 1965թ. Կիեւում, 1971թ. Երեւանում: Այսուհետեւ՝ ԻՍԴ:

* Այդ տուեալների մի մասը ամփոփուած է լեհ պատմաբան Վլ. Լոզինսկու Patryciat i meszczanstwo Lwowskie w XVI-XII wicku (Լվով, 1902թ.) աշխատութիւնում, որը քաղուածաբար հայերէնի վերածելով՝ մեզանում գիտական շրջանառութեան մէջ է դրել Յ. Զաւրեանը (Յ. Զաւրեան, Լեհահայ գաղթը եւ ներքին կեանքը, ՀԱՅՐԵՆԻՔ ամսագիր, Բոստոն, 1929թ., թիւ 6, էջ 129-131):

2 Այս թուղթը թէեւ հաւասար հիմունքներով դաշինք էր երկու քրիստոնեայ պետութիւնների միջեւ, բայց ժամանակի ընթացքում աննկատելիօրէն նենգափոխուեց Հայ Եկեղեցին Հռոմին ենթարկելու պայմանագրի:

3 Սոփերք Հայկականք, հտ. Զ, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, Վենետիկ, 1853:

4 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Կոստանդնուպոլիս, 1913թ., էջ 2613:

5 Ղ. Ալիշան, Կամենից տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետիկ, 1896, էջ 19, 32, 50, 62, 135 եւ այլն; Աշ. Յովհաննիսեան, Դրուագներ, հտ. Բ, էջ 34, 45-46, 104-105, 147:

6 Tygodnik powszechny (շաբաթաթերթ), Կրակով, 1980, թիւ 15: Բռնի կաթոլիկացման դէմ պայքարի դրօշակիր Լվովահայերը 1648թ. այդ քաղաքում ունէին ընդամէնը 147 տուն, 1704թ.՝ 73 տուն (տես B. Januaz, Mons Pius Ormian Lwowskie, Lwow, 1928, էջ 13):

7 K. Stopka, Poczatek organizacji kosciola ormianskiego na Rusi, Warszawa, 1983, էջ 8; Զ. Օբերտինսկի, Լեհահայերը եւ անոնց Անդրեաս եպիսկոպոսը Եազլովեցի մէջ, Հանդէս Ամսօրեայ, 1962թ. մայիս-օգոստոս, էջ 267-268:

8 Kosciol Ormianski na Rusi, «Nasza przeszlosc» Studia z dziejow kosciola i kultury katolickej w Polsce (հանդէս), t. 62, Krakow, 1984, էջ 82:

9 Բարոնչ, ժըլվոտը, էջ 180 ; T. Gromnicki, Ormianie w Polsce (Այսուհետեւ՝Հայերը Լեհաստանում) Encyklopedia Koscielna, t. 17, Warszawa, 1891 (այսուհետեւ՝ Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում):

10 Wl. Abraham, Powstanie organizacji kosciola latynckiego na Rusi, t. 1, Lwow, 1904, էջ 349, 352:

11 Հմմտ. Հ. Զաւրեան, Լեհահ. գաղութը եւ ներք. կեանքը. »Հայրենիք« ամսագիր, Բոստոն, 1929, թիւ 5, էջ 80-81:

12 Գր. Պետրովիչ Լեհահայ, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, Հանդէս Ամսօրեայ, 1974թ., թիւ 7-9, էջ 321:

13 Բարոնչ, ժըլվոտը:

14 S. Baracz, Rys dziejow Ormianskich, Tarnopol, 1861 էջ 107: (Այսուհետեւ՝ Ս. Բարոնչ, Ռըս ջեյով Օրմիանսկիխ):

15 Cz. Lechicki, Kosciol Ormian w Polsce (Այսուհետ՝ Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ). Lwow, 1928, էջ 39:

16 Z. Obertynski. Unia florenska Ormian polskich. Historia kosciola w Polsce, t. 1, Poznan, 1974, էջ 393:

17 Թ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 395:

18 Գր. Պետրովիչ Լեհահայ. Լեհ կղերի միութենական փորձերը եւ լեհահայերը, Հանդէս Ամսօրեայ, 1968թ., թիւ 7-9, էջ 299:

19 Անդ, էջ 293-294: Տե՛ս նաեւ՝ Աշ. Յովհաննիսեան. Դրուագներ. հտ. Բ, էջ 29-30, 135:

20 Գր. Պետրովիչ Լեհահայ, Լեհ կղերի միութենական փորձերը...

21 Տ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 403:

22 Գր. Պետրովիչ Լեհահայ, Լեհ կղերի միութենական փորձերը..., էջ 294-295:

23 Ռըս ջեյսվ Օրմիանսկիխ..., էջ 113-114:

24 Սիմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ Յիշատակարանք, ուսումնասիրեց ու հրատարակեց՝ հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 384, 405-418:

25 Jozef Bartlomej Zimorowicza Pisma do dziejow Lwowa odnoszace sie, Wydal dr. Korneli Heck, Lwow, 1899, էջ 208:

26 Բեյա Բարսեղեան, Լեհահայութեան մշակութային կեանքը եւ գրականութիւնը, Երեւան, 1992թ.:

27 Վ. Ըստեփանեան, Եկեղեցական պատմութիւն, Վիեննա, 1872, էջ 379:

28 Բոնի միութիւն Լեհաստանի... Ս. Պետերբուրգ, 1884թ., էջ ԻԵ, տողատակի թիւ 2-րդ ծանօթագրութիւնը:

29 Հ. Ջաւրեան, Լեհահայ գաղութը եւ նորին կեանքը, «Հայրենիք» ամսագիր, Է տարի, 1929թ., թիւ 12 (84), Բոստոն, 1929, էջ 148-149:

30 Ս. Բարոնչ, Ժղվոտը, էջ 191: Մեզ մատչելի այլ աղբիւրներից յայտնի չէ նաեւ Ս. Բարոնչի, Բիշոֆի, Վ. Ըստեփանեանի, Ռոլէի, Ք. Քուշներեանի եւ Դորոնովիչի այն տեղեկութիւնը, թէ Մելքիսեդէկը Մեսրոպի մահուանից յետոյ (Ռոլէի կարծիքով չորս տարի) գրաւեցրել է Լվովի թեմակալի քափուր Աթոռը: (Տե՛ս Քր. Քուշներեանի նշ. աշխ., էջ 180):

31 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ., էջ 2369-2370:

32 Չ. Լեխիցկի, Նշուած աշխատութիւնը, էջ 42-44:

33 Տ. Գրոմնիցկի, Հայերը Լեհաստանում, էջ 399-400:

34 Սա. Ռոշքա, Ժամանակագրութիւն կամ տարեգիրք եկեղեցականք, Վիեննա, 1964, էջ 165: Առուածի վկայութիւնն է հետեւեալ փաստը, որը պահպանուել է թէ՛ հայ, թէ՛ օտար աղբիւրներում: 1467թ. Լեհահայոց թեմի առաջնորդ ընտրուած Խաչատուր Արքեպիսկոպոսը Անենայն Հայոց Կաթողիկոսին յղած նոյն թուի նամակում գրում է. »Եւ ես նուաստ եպիսկոպոսս Խաչատուր խոստացա կատարել առաջի Աստուծոյ. Նախ եկեղեցեաց եւ ըն֊իցն հրաման չայնենք առանց տանուտրաց հրամանին.... գ. որ զայս տեղացս իրիցանուն զդաւոն ու զդատաստանն ի տեղս այնենք հետ տանուտրացն.... դ. որ զքահանայ կամ սարկաւագ առանց տանուտրաց հրամանին չի այնենք.... Այլ եւ եկեղեցապան եւ եպրապետ դնելոյ հրամանք չանենք առանց տանուտրացն հրամանին. Եւ այլ ինչ բան որ լինայ կամ դատաստան ՀՈԳԵՒՈՐ կամ մարմնաւոր առանց տանուտրացն չայնենք (ընդգ. իմը: Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 110): Նամակը մէջբերելուց յետոյ Մ. Բժշկեանը գրում է. »Յայսմանէ (ի նամակէ: Ռ.Հ.) յայտ է թէ Անեցիք սեղմեալ էին զիշխանութիւն եպիսկոպոսաց ի Լվով, եւ ամենայն ինչ հրամանաւ դատաւորաց լինէր«: Լեհաստանում Պիոս Ե Պապի նուիրակ Ֆուլիոս Ռուգերին, Պապին յղած իր 1565թ. մի տեղեկագրի մէջ հայոց թեմակալի ընտրութիւնների մասին գրում է, որ լեհահայ արքեպիսկոպոս-միտրոպոլիտ կարող էր դառնալ նոյնիսկ »լաւ փարքի տէր որեւէ աշխարհական« (թարգմանել ենք լեհերէնից, որը լատիներէնից լեհերէն թարգմանութեամբ իր գրքում զետեղել է Չ. Լեխիցկին՝ (Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 45): Ֆ. Ռուգերիի նշուած տեղե-

կապիրը, ըստ Բ. Բարսեղեանի, զետեղուած է հետեւեալ ժողովածոյում, Relacje uniuszow apostolskich i innych osob o Polske od roku 1548 do 1690, t. I, Berlin- Poznan, 1864, էջ 249):

* Այդ թուին, առաջին անգամ լեհահայոց պատմութեան մէջ, առանց »աւագների« մասնակցութեան, միայն եկեղեցական դասի ձեռքով թեմակալի տեղապահ ընտրուեցին չորս եկեղեցականներ, որոնցից Պապը տեղապահի պաշտօնին հաստատեց Յակոբ-Ստեֆան Ամզուստրենովիչին՝ նրան տալով արքեպիսկոպոսի աստիճան (Լեխիցկի, նշուած աշխ., էջ100): Պատմական փաստերը ցոյց են տալիս, որ սկսած 1569 թուից, հոգեւոր առաջնորդներին ընտրելու եւ եկեղեցու գործերին՝ ամբողջ համայնքի ընտրած ներկայացուցիչների միջոցով մասնակցելու աշխարհականների իրաւունքների աստիճանական սահմանափակումը ուղիղ համեմատական է եղել լեհահայոց անկախութեան կորստին: Ինչ չափով որ լեհահայութիւնը կորցրել է իր ղեկավար մարմիններին եւ թեմակալին ընտրելու իրաւունքը, նոյն չափով էլ համայնքը կորցրել է իր դաւանական անկախութիւնը, այսինքն՝ արագացել է ուծացումը:

35 Տ. Գրոմնիցկի, նշուած աշխ., էջ 400:

36 Մ. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 73:

* Ի դէպ ԺԴ դարում ապրած ոմն Գրիգոր եպիսկոպոսի վարքագրութը շշմեցուցիչ նմանութիւն ունի Նիկոլի կենսագրութեանը (տե՛ս Թէոդորոս Բ Կիլիկեցի կաթողիկոսի Կոնդակը լեհահայերին, Կամենից տարեգիրք, էջ 9-13):

** Ս. Բարոնչը սխալւում է: Պէտք է լինի յունիսի 12 (տե՛ս յաջորդ յղումները):

* Ստ. Ռոշքան այս թեմակալին անուանում է «Տրապիզոնցի Աստուածատուրի որդի Պարսամ»՝ գրելով, որ սա իր թեմակալ հաստատուելու գրութիւնը Ստեֆան Բատորից ստացաւ 1579թ. յունիսի 12-ին՝ առանց սակայն նշելու, թէ ինչու՞ վտարուեց Աթոռից (Ժամանակագրութիւն, էջ 166):

37 Ս. Բարոնչ, Ռըս ջեյուվ Օրմիանսկիխ, էջ 116:

38 Չ. Լեխիցկի, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 44:

39 Այս մասին տե՛ս Կոստանդնուպոլսի պատրիարք Երեմիայի նամակը «ուղղափառներին, հայերին եւ Կոնստանդին Օստրոժսկուն», ինչպէս նաեւ Լվովի եպիսկոպոս Գեդէոնի գրութիւնը Գալիցիայի կալուածատիրութեանը (Акты Юго-Западноя России, т..3, Спв., 1848, էջ 278-280, 281-283: Այսուհետեւ՝ Ակտը Յուգօ-Զապադնիյ Ռոսիի):

40 Ակտը Յուգօ-Զապադնոյ Ռոսիի, հտ. 3, էջ 280; Տես նաեւ՝ Գրիգոր Պետրովիչ Լեհահայ, Լեհ կղերի միութենական փորձերը... Հանդէս Ամսօրեայ, 1968, յուլիս-սեպտեմբեր, էջ 310-31:

41 Ակտը Յուգօ-Զապադնոյ Ռոսիի, հտ. 3, էջ 315-316:

42 ЦГИА Украины во Львове, ф. 52, оп.2/47-54.

43 Slownik Historii Polski, Warszawa, 1973, էջ 401:

44 Ս. Բարոնչ, Ռըս ջեյուվ, էջ 120:

* D. Zubrycki, Kronika miasta lwowa, Lwow, 1844; Е(пископ) (врион), олонизация армян юго-зап. России, аменец-Подолск, 1903, էջ 19: Կիրիոն եպիսկոպոսը յղում է կոմս Տոլստոյի հետեւեալ աշխատութիւնը. Граф Д.А. Толстой, Римская котолицизм в Россия, "Исторические исследование", т.II, 1876, էջ 57:

** Չեսլավ Լեխիցկին առանց աղբիւրը նշելու գրում է, թէ Նիկոլը դեռեւս 1629 թուին, բազատից իր պաշտօնի հաստատումը ստանալուց անմիջապէս յետոյ, Լվովի Յիսուսեան արքեպիսկոպոսի մօտ անհատապէս ընդունել էր կաթոլիկութիւնը, իսկ 1630թ. նա ուղղակի «հրապարակաւ թարմացրեց իր դաւանափոխութիւնը» (Լեխիցկի, նշուած աշխատ., էջ 55-56): Եթէ այս փաստը համարենք նոյն պատմաբանի այն պնդմանը, թէ Թորոսովիչը յիսուսեանների հովանաւորութիւնը ստանալուց յետոյ նրանց միջոցով կարողացաւ անմիջապէս կապերի մէջ մտնել արքունիքի ու Լվովի բարձրաստիճան կաթոլիկ կղերի հետ (նոյն տեղը), ապա կարող ենք ենթադրել, որ Նիկոլը յիսուսեանների միջնորդութեամբ թա-

ւատոից ստացել էր իր թեմակալութեան հաստատումը՝ փոխարէնը յիսուսեաններին խոստանալով միանալ Հռոմին: Եւ երկրորդ՝ Առ. Դաւրիժեցու, «Յիշատակարան Վարդանայ մեկնութեան» հեղինակի (տես յաջորդ էջի տողատակը), Անանունի եւ Ալ. Պիդուի տուեալը, թէ նա կաթոլիկութիւնը ընդունեց յիսուսեանների մօտ, ճշտում է:

*** Լվովի հայոց տաճարը զաւթելու, տաճարի թանկարժէք սպասքներն ու գրադարանը, պատկերները եւ այլ արժէքները խլացնելու մասին մանրամասն տեղեկութիւններ է տալիս Սիմէոն դպիր Լեհացին, «Յիշատակարան Վարդանայ մեկնութեան արարածոց»-ի մէջ. »Զոր ի թուին ՌՀԹ. եղ ոմն մեծազգի եւ փառքամաց զարմի, Նիկոլ անուն Թորոսենց նախնական անուամբ կոչեցեալ, մանուկ տիօք եւ տգէտ մտօք... անուղղայ վարիւք. ...լիրք, անզգամ եւ անդաւգն, ի կարգս աստիճանի դպիր գոլով: Եւ եղեալ ԻԳ ամաց՝ կաշառօք ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Մելքիսէթ կաթողիկոսէ, յորժամ եկեր զնա մեր մեղքն ի Լով...Ոմամբը համախոհիւք գնացեալ առ Յեզուիդսն՝ եղղամբ խոստացաւ դառնալ ի հաւատս եւ ի կրօնս նոցա եւ լինել ախոյարմայ (դաւանափոխ: Ռ.Հ.) ...Ապա սկսաւ բազում չարիս եւ նենգութիւն եւ դաւ գործել ազգիս իմոյ՝ ունելով իւր օգնական զամենայն ազգն Լեհու, պարոնայքն, զիշխանս, զդատաւորս եւ զամենայն քահանայս եւ զկարգաւորս...Յետոյ խլեալ եւ յափշտակեալ զեկեղեցիս եւ վանորայս ի ձեռաց մերոց՝ ...այլ եւ զքահանայս զրուեաց, զոմանս հալածելով, զայլս ի բանտ եւ ի կապանս մատնելով...Ապա սկսաւ վատնել եւ կորուսանել զինչս եւ զխազինայս՝ զոսկեղէն եւ արծաթեղէն անօթս, զմեծամեծ խաչսն, պատուական եւ ոսկեզօծ ըսկիս (սկիհս: Ռ.Հ.), ծանրաշէն բուրվառսն, մեծագին ջշոցսն եւ արծաթի խնկամանսն, զոտր (զոտ, մաքուր, համակ Ռ.Հ.) արծաթի ճրագարանս փոքր եւ մեծամեծսն, թող զշուրջառսն, զխաչվառսն, զեմիփորոնսն եւ մեծագին թագս հայրապետաց՝ ոսկով եւ մարգարտով եւ ակամբք ընդելուզեալ, եւ վարշամակս յոլով զուտ մեծամեծ մարգարտովք շարեալ ...Թող զարծաթապատ, ոսկիակազմ մագաղաթ, ոսկէգիր բազում Աւետարանս եւ յոլով Շարակնոցս, ոսկով եւ լաջվարդով նկարեալ պատուական պատկերս եւ Բ, Գ-ն ազնիւ գրեանս վարդապետականս ի թագաւորական խազնայէ ի դուրս ելած, մանաւանդ Սրբոյ եւ Քաֆայու. Բ, Գ Աստուածաշունչք... եւ այլ անթիւ ազնիւ գրեանք, նաեւ յոլով Արտաքին գիրք, զորս ոչ կարեմ մի ըստ միոջէ գրել, զի ծանձրասցին լսողքն: Եւ զայն ամենայն վերոգրեալ Մսրայ խազինան ի մի միում ամի կորոյս եւ ոչընչացոյց, նաեւ զգրեանս ամենայն ընդ նոսին. զո՞րս ծախէր եւ վաճառէր, զկէսս գրաւէր Հրէից եւ այլ եւ այլ ցեղից, զայլս հալէր եւ ի պէտս մարմնաւոր մսխէր եւ զո՞րս փոխէր ընդ ոչինչ իրս անպիտան եւ մարմնաւոր. տայր զոսկին եւ առնոյր զեղն եւ զմոխիր ի վերայ գլխոյն« եւ այլն (Սիմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն, էջ 410-413):

* Ռըս ջեյուվ Օրմիանսկիխ աշխատութեան մէջ Բարոնչը, հիմնուելով դիւանական փաստաթղթերի վրայ, նշում է որ Նիկոլը Պապից արքեպիսկոպոսութեան աստիճան ստացաւ 1635թ. յուլիսի 16-ին:

** Հռոմի Պապը Նիկոլին տալով Լեհաստանի, Մոլդավիայի եւ Վալաքիայի հայոց արքեպիսկոպոս-միտրոպոլիտի աստիճան, նրան իրաւաբանօրէն հաւասարեցնում-կարգակից է դարձնում Լվովի լատին մետրոպոլիտին: (Չ. Լեխիցկի, նշուած աշխ, էջ 61; Վլ. Լոզինսկի, տե՛ս «Հայրենիք», 1929թ., թիւ 6, էջ 124-125): (: Ի դէպ՝ Յոյն միարարների շատ աւելի բազմամարդ եկեղեցին արքեպիսկոպոսութեան (միտրոպոլիտութեան) վերածուեց միայն 1807թ.:

45 Բարոնչ, Ժըվոտը սլաւնըխ Օրմիան վ Պոլսցէ, էջ 333-334:

46 Բռնի միութիւն, էջ 156:

47 Ս. Բարոնչ, Ռըս ջեյուվ Օրմիանսկիխ, էջ 121: Այդ դէպքերի մասին յակիրճ գրում է նաեւ Դ. Զուբրիցկին (D. Zubrycki, Kronika miasta Lwowa, Lwow, 1844, էջ 175):

* «Յիշատակարան Վարդանայ մեկնութեան արարածոցի» հեղինակի սոյն վկայութիւնները, ինչպէս նաեւ Նիկոլի ապօրինի այլ գործողութիւնների դէմ լվովահայ համայնքի բողոքների մասին հաստատում են Լվովի քաղաքապետարանի 1630թ. վճռագրերը: (Տես ЦГИА

Украины во Львове, ф.9, оп.1, т. 387, с. 775-778, ф..52, оп. 2., т. 51, с. 446-450): Փաստաթղթերը մեզ է տրամադրել պատմաբան Գայանէ Պինգիրեանը:

48 Սիմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն...., էջ 416-418:

49 Ռըս ջեյում Օրմիանսկիխ, էջ 122:

50 Չ. Լեխիցկի, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 63-64:

51 Ստ. Ռոշքա, Ժամանակագրութիւն, էջ 176:

52 Կ. Ամատունի. Ոսկան Վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 98, 102:

53 L. Korwin, Ormianskie rody szlacheckie (Հայ ազնուական տոհմեր), Krakow, 1934, էջ 43, տող. թիւ 14 ծան.:

54 D. Zubrycki, Kronika miasta Lwowa, Lwow, 1844, էջ 273;Բարոնչ, Ռըս ջեյում Օրմիանսկիխ, էջ 118-119; Չ. Լեխիցկի, նշուած աշխ., էջ 52:

55 Բռնի միութիւն Լեհաստանի..., էջ 156:

* Այդ արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ երկու հայադաւան քահանայի ծեծելու համար հայերը Նիկոլի դէմ 1646թ. ապրիլի 21-ին դատ են բացում (Ուկրաինայի Հանրապետութեան Լվովի կենտրոնական պատմական դիւան, ф. 9, оп. 1, том. 396, էջ 1540-1541: Փաստաթուղթը զետեղուած է Եա. Դաշկեւիչի կազմած Армяно-украинские связи в XVII в., нев, 1970, էջ 94-95, փաստաթուղթ թիւ 26):

56 Ինչպէս տեսանք, Ուրբանոս Պապը Փիլիպպոս Կաթողիկոսի խնդրանքը կատարելու փոխարէն, 1640թ. նամակով նրան յորդորում էր »գալ յուղղափառութիւն«:

57 Ղ. Ալիշան, Կամենից տարեգիրք, էջ 244-246:

58 Անդ, էջ 247-249:

* Լվովի կեդրոնական պատմական դիւանում պահւում է Վլադիսլաւ Դ-ի 1645թ. նոյեմբերի 25-ի նամակը Լվովի քաղաքապետարան՝ Գրիգոր եպիսկոպոսին Լվովում չը հետապնդելու հրահանգով (Լվովի կեդր. պատմ. դիւան, ֆ. 9, օպ. 1, տօմ 396, էջ 1161-1162): Սա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Գրիգոր եպիսկոպոսը երկար ժամանակով էր Լվով եկել եւ երկրորդ՝ ճշտելու Գրիգորի Լվով մտնելու ժամանակը:

59 Ռըս ջեյում, էջ 122-123:

60 Կ. Ամատունի, Ոսկան վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը, էջ, 112-113:

61 Կ. Ամատունի, նշուած աշխ., էջ 82:

62 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 383:

63 Անդ:

64 Ամատունի, նշուած. աշխ., էջ 82:

65 Անդ, էջ 82-83:

66 Ամատունի, նշ. աշխ., էջ 84:

67 Անդ:

68 Անդ, էջ 102:

69 Անդ, էջ 109-110:

70 Կ. Ամատունի, նշուած աշխ., էջ 16:

71 Առաքել Դաւրիժեց, Պատմութիւն, էջ 38:

* Ի նկատի ունենք Նիկոլին պատժելու լվովահայերի դիտաւորութիւնների մասին խօսող մի քանի ուղղակի եւ անուղղակի փաստերը: Օրինակ, Լվովի դատարանի 1636թ. փետրուարի 25-ի ու մարտի 1-ի դատական նիստերի արձանագրութիւններից երեւում է 1636թ. փետրուարին Լվովի հայոց թաղամասում ծագած յուզումների ժամանակ հայադաւանները ծեծել էին Նիկոլին, նրա հօրը եւ մի քանի կաթոլիկ քահանաների, սպառնացել էին սպանել նրանց եւ այլն: Украино-армянские связи в 17-ом веке, нев, 1969 (Հայ-ուկրէն կապերը ԺԷ դարում, փաստաթղթերի ժողովածոյ, կազմեց Եա. Դաշկեւիչը), փաստաթուղթ թիւ 21:

72 Բռնի միութիւն, էջ 26:

* Մ. Օրմանեանը այս ծիսարանը համարելով կեղծիք, պնդում է, որ Հայաստանեայց Եկեղեցին Յովհան Օձնեցուց (գահակալել է 717-720) առաջ Հռոմի հետ նման բանակցութիւններ չի ունեցել (տես Ազգապատում, հտ. Բ, էջ 2477):

[73] Բոնի միութիւն, էջ 26, 158-159:

[74] Բոնի միութիւն, էջ 26, 158-159:

[75] Բոնի միութիւն, էջ 159:

[76] Անդ:

[77] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ , էջ 387:

[78] Բոնի միութիւն, էջ 27:

* Եւ ի յոլով ատրս զկնի բազում խօսից եւ գործոց, կատարումն գործոյն այն եղեւ՝ զի կաթուղիկոսն Փիլիպպոս հրամայեաց, որ բանս չորս գլխով յանձն առնեսցէ Նիկոլ եպիսկոպոսն, եւ զայն ձեռնագրով իւրով դրոշմեսցէ, եւ տացէ Փիլիպպոս կաթողիկոսին:

*Նախ՝ զի զդաւանութիւն Լուսաւորչին, եւ զնորին աթոռակալ հայրապետացն դաւանեալ խոստովանեսցի Նիկոլն, եւ իւր հետեւողքն՝ եկեղեցականք եւ աշխարհականք:*

*Երկրորդ՝ զի զարարողութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ արասցէ ինքն եւ իւր հետեւողքն:*

*Երրորդ՝ զի զկնի վախճանի Նիկոլին՝ ի տեղի Նիկոլին եպիսկոպոս նստողն, ի կաթուղիկոսէն Էջմիածնի լինիցի օծեալ եպիսկոպոս, եւ նորին հրամանաւն նստցի ի նոյն վիճակին, եւ նոյն կաթուղիկոսին հնազանդ եւ հետեւող լիցի:*

*Չորրորդ՝ զի ինքն Նիկոլն միայն յիշեսցէ զանուն փափին, եւ զայն եւս ի պատարագն միայն, եւ ոչ այլ ինչ բանս եւ յարարողութիւնս: Նաեւ եւ մի խառնեսցէ ջուր ի բաժակ սրբոյ պատարագին, իսկ յեկեղեցական ժառանգաւորաց եւ ի կղերիկոսաց՝ ոչ ոք բնաւ յիշեսցէ զանուն փափին: Սոյնպէս մի՛ յիշեսցէ զկնի Նիկոլին նստող եպիսկոպոսն զանուն փափին ամենեւին. ո՛չ ի բանս եւ ոչ ի գործս՝ այլ միայն Նիկոլն եւ զայն եւս ի պատարագն միայն:*

Եւ վասն յիշելոյ զանուն փափին, Նիկոլն ինքն խնդրեաց ի կաթողիկոսէն, զի այն միայն ներումն արասցէ, քանզի Նիկոլն ասաց թէ՝ ձեռնագրաւն, զոր ես տուեալ եմ ֆռանկաց՝ ի կարգէ լուծանին զիս, գուցէ մահապարտ եւս առնիցեն, վասն այնորիկ ներեաց կաթուղիկոսն: Եւ զայս չորս բանս գրեալ ի քարտիսի, կնիքով կնքեալ եւ ձեռնագրով դրոշմեալ Նիկոլն ետ կաթողիկոսին Փիլիպպոսի, եւ կաթողիկոսն ետ աչքօ դատաւորին, զի ընդ իւր տարեալ ի քաղաքն Իլով ի պահեստի ունիցին վասն առյապայյն զգուշութեան: Եւ ապա կաթողիկոսն արձակեաց զՆիկոլն ի կապանաց բանադրանաց, եւ ետ նմա կոմոս եպիսկոպոսական իշխանութեան՝ իշխել ի վերայ ժողովրդոցն Իլովա եւ պատուիրեաց նմա, զի զգաստացեալ ի թափառական եւ ի խէնէշ վարուց իւրոց եկեսցէ ի կրօնս եւ ի քարեչափող ճանապարհս արդարութեան, որ վայել է անուան եւ աստիճանի եպիսկոպոսութեան: Եւ Նիկոլ եպիսկոպոսն զամենայն հրամանս կաթուղիկոսին հոգով չափ եւ յօժար կամօք յանձն կալեալ եւ արձակեալ ի նմանէ եկեալ եհաս յԻլով քաղաք: Եւ ժողովուրդն իԼովայ համարէին թէ զղջացեալ եւ թողեալ իցէ Նիկոլն զթիւր վարս իւր. բայց տեսանէին զի նոյն վարս կայ անփոփոխ. այլ եւ յիշէին զանչափ զանձուցն իւրեանց եւ զանօթոցն վատնումն, եւ բազմապատիկ նեղութիւնսն՝ զոր հասոյց նոցա եպիսկոպոսն Նիկոլ...Վասն այսորիկ ոչ կամէին միաբանիլ ընդ նմա... (Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն. էջ 386- 387): (Ընդգծումները՝ իմը: Ռ.Հ.)

[79] Զ. Լեխիցկի, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 66:

[80] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, էջ 387-388; Տե՛ս նաեւ՝ Ստ. Ռոշքայ, Ժամանակագրութիւն, էջ 178:

[81] Բոնի միութիւն, էջ 27:

[82] W. Kachowski, Historia panowania Jana Kazimerza..., t. 1, Poznan, 1859, էջ 24:

[83] Հմմտ. Եար. Դաշկեվիչ, Ուկրաինօ-արմիանսկիե սվեազի վ XVII վիէկէ (Հայ-ուքրէն կապերը ԺԷ դարում), փաստաթղթերի ժողովածոյ, առաջարան, Կիեւ, 1969թ., էջ 20-23: Եան Կազիմիրը 1661թ. հրովարտակով ընդարձակում է հայ վաճառականների իրաւունքները,

իսկ 1664թ. արտօնագրով ոչ միայն մերժում է հայերի իրաւունքները սահմանափակելու Լվովի քաղաքապետարանի պահանջը, այլեւ հայերին տալիս է որոշ ապրանքներ վաճառելու, քաղաքի կենտրոնում տներ եւ արհեստանոցներ ունենալու լրացուցիչ արտօնութիւններ: Տես Ս. Բարոնչ, Ռըս ջեյուվ, էջ 123; Եա. Դաշկեւիչ, Հայ-ռութէն կապերը..., առաջաբան, էջ 21, նաեւ փաստաթուղթ թիւ 30 (էջ 99-106):

84 Լվովի պետական գիտական դիւան, ձեռագրաց բաժին, Օսսոլինսկիների ենթաբաժին, թիւ 1723 II, թերթ 3 (տես Հայ-ռութէն կապերը ԺԷ դ., էջ 116, փաստաթուղթ թիւ 38):

85 Ղ. Ալիշան, Կամենից տարեգիրք, էջ 257-265:

86 Բարոնչ, Ռըս ջեյուվ, էջ 125:

87 Բարոնչ, Ժըվոտը, էջ 335:

88 Յակոբ Դ կաթողիկոսի 1671 եւ 1672թթ. նամակները լեհահայերին, Ղ. Ալիշան, Կամենից, էջ 29-26:

89 Չ. Լեխիցկի, Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 76:

90 Զաւրեան, նշ. յօդուածը, «Հայրենիք», 1929, թիւ 6, էջ 126:

91 Չ. Լեխիցկի, նշ. աշխ., էջ 79-80:

92 Անդ, էջ 80:

93 Բարոնչ, Ժըվոտը, էջ 140; Տես նաեւ, «Հայրենիք», 1929թ., թիւ 6, էջ 127:

94 Ձ. Օբերտըննկի, Լեհահայերը եւ անոնց Անդրէաս եպիսկոպոսը Եազլովէցի մէջ, Հանդէս ամսօրեայ 1962թ., էջ247:

95 Բարոնչ, Ժըվոտի, էջ 76-77:

96 Բարոնչ, Ռըս ջեյուվ, էջ 130:

97 Բարոնչ, Ժըվոտը սլավնըխ օրմիան վ Պոլսցէ, էջ 77:

98 Չ. Լեխիցկի, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ, էջ 90-91:

99 Անդ, էջ 92:

100 Ֆր. Զախարիասեւիչ, նշ. աշխ., էջ 68:

101 Ֆր. Զախարիասեւիչ, նշ. աշխ., էջ 80:

102 «Հայրենիք», 1929թ., թիւ 6, էջ 127:

*Ա. Գ. ՍԱՐՅԱՆ*

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(ԺԷ դար)

Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում սույն թվականի օգոստոսից սկսած կազմակերպվելու են խմբային ուխտագնացություններ դեպի Հայաստանի տարբեր ուխտավայրեր: Այս հրապարակումներով վերհիշենք հայկական ուխտապատումի մի կարևոր էջը՝ ԺԷ դարում դեպի հայրենական սրբավայրերը կատարված ուխտագնացությունների նկարագրությունները, որ տեղ են գտել հայկական ուղեգրություններում:

Հայ միջնադարյան գրականության ժանրային համակարգում ուղեգրություններն ունեն իրենց կայուն տեղը թե՛ որպես պատմական սկզբնաղբյուրներ և թե՛ իբրև գրական ստեղծագործություններ: Հայկական ուղեգրական գրվածքների թեմատիկան մեծավ մասամբ կազմում են աստվածապաշտական ուխտագնացությունները դեպ մոտակա կամ հեռավոր սրբավայրերը:

Ուխտագնացությունները լայն տարածում են ունեցել քրիստոնյա Հայաստանում, վայելել մեծ ժողովրդականություն: Որպես կրոնական հավատալիքի ձև, ուխտագնացությունը հատկանշական է եղել նաև հեթանոսական ժամանակներին: Անտիկ շրջանում արդեն իսկ կար այն պատկերացումը, ըստ որի աղոթքն ու երկրպագությունը ներգործուն և ազդեցիկ են որոշակի վայրերում, որոնք կապված են որևէ չաստվածության հետ: Հույներն ու հռոմեացիները այս մտահայեցողության թելադրանքով այցելում էին դեպի հեռու սրբատեղիները[1]: Նախաքրիստոնեական Հայաստանում կատարված ուխտագնացությունների մասին տվյալներ են հաղորդում Ագաթանգեղոսը, Խորենացին, Կաղանկատվացին և էլի ուրիշ պատմագիրներ: Բազմաստվածության պայմաններում, երբ որևէ աստծուն երկրպագություն կամ զոհ մատուցելը ենթադրում էր զանգվածային ուխտագնացությունների ձեռնարկումներ դեպի այդ աստծու տաճարը, ուխտագնացությունն ուներ կոնկրետ միտումներ, պարտադիր էր գործնականում: Այնինչ քրիստոնեական հավատքում ուխտագնացությունն ունի զուտ բարոյաքաղաքական նշանակություն, ասել է, թե՝ «...սնունդ մ'է, որ կրոնասիրութիւնը կենդանի կը պահէ, կայծ մ'է, որ բարեպաշտական զգացմունքները կը բոցավառէ»[2]: Այս խոսքերի թիկունքում հայկական ուղեգրություններն են, թեկուզ այդ գործերում նման մտքեր ու զգացողություններ չեն արտահայտվել: Գրեթե միշտ ուխտագնացական ուղեգրություններում (դրանք կարելի է կոչել ուխտագրություններ) տրոփում է քրիստոնեական օտար և հայրենի սրբությունների հանդեպ սիրով լեցուն ուխտավորի սիրտը: Ի դեմս կրոնականի, ուղեգրություններում արտացոլվել են նաև հեղինակների հայրենասիրական խոկումները: Ինչպես առհասարակ հայոց պատմության բոլոր ժամանակներում, այնպես էլ առավել ևս ԺԷ դարում, կրոնի ու հայրենիքի գաղափարները միմյանցից տարանջատ չեն ընկալվել:

---

[1] Энциклопедический словарь, томь XXII^A , с П, 1897, ст. 643.

[2] «Սիոն», 1873, Մարտ 31, թիւ 3, էջ 58:

Դատելով մեզ հասած ուղեգրական բնագրերից, հայ հավատացյալներն ավելի հաճախ մեկնել են համաքրիստոնեական նշանակություն ունեցող ուխտավայրերը՝ Երուսաղեմ, Հռոմ, Կոմպոստելա, Կ. Պոլիս և այլ քաղաքներ: Անհամեմատ փոքր թվով են պահպանվել հայրենական սրբավայրերում ձեռնարկված ուխտագնացությունների նկարագրությունները: Դյուրին է եզրակացնել, որ այս կարգի ուխտագնացությունների մասին ուխտավորների կողմից քիչ է գրվել: Սակայն դրա պատճառը ոչ թե նման ուխտագնացությունների քանակն է (դրանք բավականին շատ են կատարվել), այլ մեկ այլ իրողություն. շատ դեպքերում ուխտավորներն ուղղակի հարկ չեն համարել գրելու ծանոթ, բոլորի կողմից հայտնի վկայարաններում կատարված ուխտերի մասին: Այս իմաստով տեղին է հիշել ԺԷ դարի բանաստեղծ Երեմիա Քյոմուրճյանի տողերը, որոնցից երևում է, որ ինքն ամենքին քաջածանոթ քաղաքը՝ Պոլիսը, նկարագրելուց առաջ նիշտ չհասկացվելու մտահոգություն է ապրել.

Տեսողքս զայս գիս ծաղր առնեն՝
 թէ ընդէ՞ր կաս ի յաշխատման,
Զծանօթս մեր մեզ պատմես՝
 տխմարից չունիմք զպատասխան[3]:

Չպետք է անտես առնել այն պարագան, որ Եվրոպա կամ Պաղեստին կատարված ուխտագնացությունների նկարագրությունները միջնադարում ունեցել են նախ և առաջ ճանաչողական նշանակություն՝ դիտվելով նաև որպես աշխարհագրական գործեր: Հետևաբար և ավելի շատ են ընդօրինակվել կամ եղած ինքնագիր միակ օրինակները պահպանվել են:

Ուղեգրական գրվածքների ճանաչողական այդ դերով է պայմանավորված և նրանց կրթական նշանակությունը: Հեղինակները ամենից առաջ հետամուտ են եղել ընթերցողի հոգում քրիստոնեական կրոնի հանդեպ սիրո և հավատի մեծացմանը: Իսկ դա սկսվում է քրիստոնեական նշանավոր սրբատեղիները ճանաչելուց և իմանալուց: Այդ նպատակով ուղեգնացները պատմում են այցելավայրերի եկեղեցական կառույցների, վանական համալիրների մասին ավելի, քան տեսած ու լսած այլ առարկաների և երևույթների մասին: Ուխտավորների այդ պատմությունները կարևոր նշանակություն են ստանում այնու, որ հյուսված են հեղինակային ապրումների ու տպավորությունների արտահայտմամբ: Լեզվի պարզությունը, եկեղեցական մատենագրության ընդունված կաղապարներից ազատությունը ուղեգրություններին տալիս է առանձնակի արժեք:

Հայկական վանքեր ու եկեղեցիներ, որ գտնվում են տարաշխարհում, տեսել և նկարագրել են շատ հայ ուղեգիրներ: Հատկապես մեծ թիվ են կազմում Երուսաղեմի Ս. Հակոբի տաճարի չափածո պատկերումները: Ուխտ կատարող հայ հավատացյալները հայաշատ վայրերի հայկական սրբատեղիների մասին գրել են առանձնահատուկ պարծանքով և ակնածությամբ: Այս հրապարակման նպատակն է ընթերցողին ծանոթացնել այն ուխտագրություններին, որոնք արդյունք են բուն Հայաստանում կատարված ուխտագնացությունների: Այսպիսի ուխտագնացությունների նկարագրությունները սկսվում են ԺԷ դարասկզբից: Հաջորդ հարյուրամյակում է գրվել Աբրահամ Կրետացու Պատմագրությունը, որին ներհյուսված են բազմաթիվ ուխտագնացական այցելությունների պատկերումներ՝ ձեռնարկված Մայր Աթոռից դեպի հայաստանյան ուխտավայրերը: ԺԹ դարում և մինչև Ի դարի կեսերը ունենք նմանատիպ մի շարք գործեր: Սակայն դրանք արդեն չեն հատկանշվում ուխտագնացական նկարագրությունների

[3] Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, հ. Ա, հրատարակեց և ծանօթագրեց տէր. Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 5:

ընդունված ձևերի պահպանումով, հեռանում են ժանրի պահանջներից: Ուշ միջնադարյան հայկական ուղեգրության տեսակը, ըստ էության, դադարում է գոյություն ունենալ:

ԺԷ դարում հայրենի սրբավայրեր են այցելել և պատկերել Սիմեոն դպիր Լեհացին, Թովմա վարդապետ Վանանդեցին, Գրիգոր Մոկացին, Մարտիրոս Ղրիմեցին, Եփրեմ Ղափանցին և այլք: Առաջին երեքի մասին մանրամասնենք մեր խոսքը:

Ուղեգրությունների սկսվածքներում հեղինակները հայտնում են ուխտ կատարելու իրենց ցանկության և տեղի մասին: Այդպես և Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրության» սկզբում բացահայտում է ճամփորդության գլխավոր կայանները և նպատակը՝ «...ուխտիւ գնալ նախ յաստուածակոխ քաղաքն սուրբ Երուսաղէմ՝ յերկրպագութիւն յուսաբուխ սուրբ գերեզմանին Քրիստոսի և այլոց սուրբ տնօրինականացն որ անդ: Եւ անտի գնալ ի Մուշ, ուր նշխարքն է սրբոյն Յովհաննու Մկրտչի, և ապա ի մեծն Հռոմ, ի սուրբ գերեզմանն Պետրոսի և Պօղոսի և այլ յօքնախումբ և բազմահաւաք արեամբ ներկեալ սուրբ վկայիցն»[4]: Այս թվարկման հերթականության հիմքում ընկած է իր համար ուխտատեղիների ունեցած կարևորությունը: Դիտելի է, որ Երուսաղեմից հետո Սիմեոնը դնում է Մշո սուլթան Ս. Կարապետ վանքը: «Ուխտագնացութիւն ի Մուշ» գլխում (Ակինյանն է վերնագրել) հեղինակն ուրվագծում է իր ճանապարհը դեպի Մուշ՝ Մարզվան, Ամասիա, Թոխաթ, Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Բալու երթուղով, և վերադարձը Պոլիս, այցը Տիգրանակերտ: Հետագայում, Լվովը նկարագրելիս վերհիշելով իր դիտումները, Լեհացին պիտի գրեր, որ տեղի եկեղեցիներում կատարվող արարողությունները («հաստատ ժամակարգութիւն եւ անխափան սաղմոսերգութիւն եւ պատարագ») համեմատելի են միայն Երուսաղեմի և Ամիդի (Տիգրանակերտի) հետ /339/: Իսկ «Ուղեգրության»՝ Ամիդին վերաբերող դրվագում նա ընդգծում է. «Աստ (Ամիդում – Ա. Ս.) եւ ի Սեւաստ տեսայ յաւ հաւատ եւ յաւ քրիստոնէութիւն» /205/: Այս միտքը Սիմեոնը տարբեր օրինակներով փորձում է հաստատել «Ուղեգրության» էջերում և ոչ միայն Ամիդի կապակցությամբ: Տիգրանակերտը իր հոգում արթնացնում է անցյալի փառահեղ օրերի վերհուշը. «Եւ մերձ յԱմթայ՝ երևեցաւ ազնիւ եւ պատուական պարիսպն տիգրանաշէն, որ է աթոռ եւ թախտ հայրապետացն Հայոց եւ թագաւորաց...» /204/: Այդ ավանդները շարունակվում են և Լեհացու ժամանակներում. Տիգրանակերտում իրենց հոգևոր կրթությունն են ստանում հայ պատանիներ, որոնք, դառնալով «ուսումնասէր եւ իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երաժիշտ վարպետք, ընտիր քահանայք» (անդ), նշանակալից դեր են խաղում հայ դպրության զարգացման գործում: ԺԷ դարասկզբի Տիգրանակերտը Լեհացին համարում է «Հայոց Աթենք. զի եւ փոքր տղայք գիտուն եւ հանճարեղք են, հանապազ ի հարցումն եւ ի քննումն են...» /207/:

Քրիստոնեության հաստատունությունը ցույց տալուն են միտված նաև վանքերի ու եկեղեցիների նկարագրությունները: Հետաքրքիր է Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցու մասին ակնարկը. «Եւ օր մի գնացի Սուրբ Կիրակոս ի ժամ. հինգ տեղ պատարագ էր, զի հինգ խորան ունէր...» /205/: Այս հատվածի շարունակության մեջ երևում է ուխտագնացական ուղեգրություններին բնորոշ մի կաղապար. ամեն մի սրբավայրի ճոխությունը որոշվում է եկեղեցու սպասավորների քանակով. «...եւ քսան եւ հինգ երէց համրեցի զատ վարդապետաց եւ հաբեղայից եւ եպիսկոպոսաց» (անդ): Նմանօրինակ նկարագրություններում նաև

---

[4] Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք, Աշխատասիրութեամբ Հ. Ն. Ակինեանի, Վիեննա, 1936, էջ 2: Այսուհետև շարադրանքում կնշվի համապատասխան էջը::

հանվանե նշվում են պաշտոնավարող եկեղեցականները: Ս. Կարապետի վերաբերյալ ասվում է, որ այնտեղ ծառայում էին «վարդապետ մի ընտիր եւ աստուածահաճոյ՝ Պօղոս անուն, չորս եպիսկոպոս, ԺԵ հաբեղայ, տնտեսք, սարկաւագք» /198/: Ուշագրավ է ներկայացված այդ եպիսկոպոսներից մեկի՝ Տեր Մարտիրոսի կերպարը, որի «քաղցրեղանակ» ձայնով «ոչ թէ միայն մարդիկ զմայլէին, այլ եւ թռչունք ժողովէին մերձ առ նա» (201):

Ուխտավայրերի նկարագրություններում սովորաբար ուղեգիրը մանրամասն կանգ է առնում սրբարաններում պահվող մասունքների թվարկման վրա, նաև հիշվում են ուխտավայրերը կառուցողների անունները: Այսպես, Լեհացին գրում է. «Եւ քաղքէն (Սեբաստիայից - Ա. Ս.) դուրս Սուրբ Նշան վանքն էր Սէնիքարիմայ թագաւորին շինած, եւ կայ մէջն սուրբ խաչափայտից մասն» /189/: Բերենք ևս մեկ օրինակ Սիմեոնից, որտեղ նկարագրվում են Տարոնի դաշտավայրի «իրեք անվանի սքանչելագործ մեծ վանքերը»՝ «մինն Մատնէվանք, ուր կայ Պետրոս առաքելոյն մատն եւ այլ բազում նշխարք, զոր եբեր Սասնցի տանուտէրն ի Հռոմայ եւ շինեաց ի վերայ եկեղեցին եւ կոչեաց Մատնէվանք: Երկրորդն՝ Սուրբ Աղբեր, ուր կայ շիշով պատուական արիւնն Քրիստոսի, որ ի կողէն: Եւ Սուրբ Առաքեալն ստորոտ լերինն, ուր կան Բեւեռքն Քրիստոսի, որ բեւեռեցաւ, այլ եւ Գեղարդն եւ այլ մասն» /201/:

Հաճախ եկեղեցիների, նրանց հիմնադիրների կամ սրբերի մասին, որոնց նվիրված են վանքերը, պատմվում են ավանդություններ, որոնց ներմուծումը պատումի հյուսվածք համարվում է ուղեգրության տեսակի մեկ այլ յուրահատկություն: Ահա մի այդպիսի ավանդազրույց. «Եւ ի ձախ կողմն մատուռ մի այլ տեսաք. եւ ասին. Կին մի իշխանի շինել է զայս. կամէր մտանել ի ներս եւ չթողուին, զի կնոջ հրաման չկար. եւ նա բռնութեամբ եմուտ ի ներս եւ ել սուրբ գերեզմանէն զօրութիւն, զի որպէս այր մի զրեհաւոր եհար զեղարդեամբ եւ սպան զնա. եւ թաղեցաւ աստ» /199/: Այս ավանդության աղբյուրը Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» գրքի մի հատվածն է: Չնայած Սիմեոն Լեհացին իր սիրած արտահայտությամբ վերոհիշյալ ավանդությունը ներկայացնում է իբրև իր կողմից լսված պատմություն, սակայն ամենայն հավանականությամբ դա պատկանում է վաղօրոք իմացված տեղեկությունների թվին: Ինչպես ցույց է տալիս Հովհան Մամիկոնյանի և Սիմեոն Լեհացու համեմատությունը, վերջինս ծանոթ է եղել «Պատմութիւն Տարօնոյ» երկին: Այդ մասին են խոսում որոշ արտահայտչաձևերի նույնականությունը երկու հեղինակների մոտ:

Օրինակ.

| Հովհան Մամիկոնյան | Սիմեոն Լեհացի |
|---|---|
| «...ուր հաճեցաւ տէր բնակել սրբոցդ»[5]: | «Աստ հաճեցաւ Տէր բնակիլ սրբոց» /200/: |

Սիմեոնը Հովհան Մամիկոնյանի բերած ավանդությունը կնոջ՝ եկեղեցի մտնելու և սպանվելու մասին[6] համառոտելով մտցրել է իր շարադրանքի մեջ:

---

5 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատութեամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 57:

6 Անդ, էջ 148-156:

Նմանատիպ, սրբավայրերի զորությունը պարզող ավանդություններ են պատմվում Ծովուց Սուրբ Նշանի /202/, Արղնիի Բարձր Աստվածածնի, որ համեմատվում է Վարագա վանքի հետ /203/, Խարբերդի Ս. Հակոբ եկեղեցու մասին, որն այնքան զորավոր է, որ նույնիսկ թուրքերը «յահէն սարսեն եւ հարկիս կառնեն եւ նուէրս տան վասն սքանչելեացն» /191/: Իսկ Ս. Կարապետի անունով մինչև անգամ քրդերն են երդվում /198/:

Սիմեոնին պատմում են նաև ավանդություններ Ջորեհանգիստ վանքի /200/, Իննակյան աղբյուրի մասին, ուր մկրտություն է կատարել Գրիգոր Լուսավորիչը /199/: Ճանապարհորդը Բալուում տեսնում է Մեսրոպ Մաշտոցի աղոթարանի վեմին փորագրված նշանագրերը, «որ յԱստուծոյ տուաւ Հայոց» /195/: Խարբերդի դաշտում Աբդլմսեհի վանքը, որտեղ «այն քարն կայ արենաթաթախ, որ հայրն զենեց ի վերայ» /191/ և այլ բազմաթիվ սրբավայրեր, որոնց շուրջ հորինված հրաշալի պատմություններին Սիմեոնին հաղորդակից են դարձնում, ինքն էլ՝ ընթերցողին: Սիմեոնը չի թաքցնում, որ ինքը լսել է այդ ավանդությունները, նույնիսկ բազմիցս նշում է այդ մասին: Ավանդություններն սկսվում են «եւ ասին թէ...» /195, 197, 199, 200, 203/, «եւ ասին» /199, 200/ և նման ուրիշ ձևերով: Քիչ դեպքերում, օրինակ, Ծովուց Ս. Նշան եկեղեցու մասին հարում է. «զոր եւ ի գիրս ընթերցեալ...» /202/՝ ցույց տալով հաղորդած տվյալի գրքային բնույթը:

Սիմեոնը միամիտ կերպով հավատ է ընծայում այն ամենին, ինչ պատմում են այս կամ այն վայրի եկեղեցականները: Օրինակ՝ Մուշում նրան պատմում են կաղ դևի մասին, որին «սուրբ Կարապետն անդ թողել է սպասաւոր վանաց» /199/: «Մյուս կողմից,– գրում է Ա. Մադոյանը,– ուղեգրի ջերմեռանդ հավատացյալ լինելը, մանկությունից երազած սուրբ վայրերը տեսնելու իրականացած իղձը, հավատը տեսիլներին ու հրաշքներին՝ մեծապես նպաստում են ճանապարհորդության ընթացքի զգայական ընկալումներին և, անշուշտ, ինչ-որ հետք թողնում են նաև ընթերցողի հոգում»[7]:

Ուխտագնացական ուղեգրությունների համար խիստ բնորոշ, գրեթե պարտադիր կաղապար է հեղինակների կողմից Աստծուն կամ որևէ սրբի գոհության մատուցումն առ այն, որ իրենց արժանացրել է սրբավայրի տեսությանը և երկրպագությանը: Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» Արևմտահայաստանին նվիրված մասերում առկա նմանաձև մի քանի դեպքերից /195, 199, 202, 203/ կատարենք մի մեջբերում. «Եւ իբրեւ տեսաք զխուպայքն Մշու սուլթան սուրբ Կարապետու՝ անկաք ի վերայ երեսաց մերոց եւ բազում խնդութեամբ լցեալ գոհացաք զԱստուծոյ, որ արժանի արար զմեզ տեսոյն սուրբ Կարապետին. փա՛ռք Աստուծոյ» /197/:

Ս. Կարապետի լուսավորչակերտ տաճարը և նրա շրջակայքը, ուր Սիմեոնը մնում է երեք օր, պատկերված է բավական ընդարձակորեն, նաև գրական վարպետությամբ: Այդ վանքի նկարագրության առիթով է, որ Լեհացին օգտագործում է ուխտագնացական երկերի համար հատկանշական այլևայլ ձևեր: Դրանցից մեկը, որ, ինչպես ավանդություններին մեծ չափով տեղ տալը, նպատակաուղղված է սրբավայրերի գովաբանությանը, այն է, որ որևէ ուխտատեղիի նկարագրության մեջ հատուկ շեշտվում է ուխտավորների այցելությունների հաճախակիության հանգամանքը՝ իբր տվյալ սրբավայրը բնութագրող կարևորագույն մի գործոն: Սիմեոնի գործում կարդում ենք. «Եւ այլ

---

[7] «Բանբեր համալսարանի», 1991, հ. 3, էջ 23:

առաջ տեսաք հազար եւ աւելի թօնիրս եւ օճախ վասն ուխտաւորաց, որ անդ խոռու եւ պիրեան կեփեն, զի ամենայն տիեզերաց գան առ նա ի հեռու եւ օտար աշխարհաց՝ Ուռումելու եւ Լեհաց ԲՌ - ԳՌ հոգի կու լինի...» /199-200/:

Ուխտագնացությունները դեպի նվիրական վայրերը հիմնականում իրականացվել են քրիստոնեական տոների առիթով: Լեհացին գրում է, որ Ս. Կարապետի «ուխտն է Վարդավառի օրն» /200/: Իսկ Գրիգոր Մոկացին, օրինակ, պատմում է Վանա ծովի Կտուց անապատ՝ Ս. Կարապետի տոնի կապակցությամբ ուխտ կատարելու մասին «Վասն գնալոյն մեր ի Կտցու անապատին, որ ծով զմեզ արգելոյր» /1701/ վերտառությամբ բանաստեղծության մեջ.

Սուրբ Կարապետին սէրն եկեր,
Ժողովեր զմեզ ստէ բերեր,
Սուրբ տաճարին երկրպագել,
Մի կանչեր, ծովիկ, մի կանչեր[8]:

Բայց ալեկոծվում է Վանա լիճը, և ուխտագնացները ճարահատ մնում են կղզում՝ սպասելով փոթորկի հանդարտմանը: Տաղը երաժշտականությամբ ու ժողովրդական միջոցներով կառուցված զրույց է անձնավորված ծովակի հետ: Նրանում ավելի մեծ տեղ է տրված տաղասացի հույզերին, քան, ասենք, որևէ սրբատեղիի նկարագրությանը: Ուստի մեզ զբաղեցնում է միայն այնքանով, որ հորինված է ուխտագնացության առիթով:

Չափածոյի ասպարեզում տեղական սրբավայրերի ուշագրավ պատկերումների հանդիպում ենք «Թովմայի վարդապետի Վանանդեցւոյ ի խնդրոյ Սահակայ եւ Ասլանի Բան չափեալ ի պրծազան տեղիս աշխարհին Հայոց» ուղեգրական պոեմում[9]: Գրվածքի պատվիրատուներ Սահակ և Ասլան եղբայրները ԺԷ դարի երկրորդ քառորդին, հայրենի Շամախիից դուրս գալով, սկսում են իրենց մեծ ուղևորությունը՝ կրոնասիրական զգացմունքները կրթելով ու զորացնելով Հաղպատի, Սանահնի, Երևանի, Օշականի, Էջմիածնի, Երնջակի, Գողթնի, Տաթևի և բնաշխարհի այլ հայտնի սրբավայրերում, որոնց թիվը պոեմում հասնում է մոտ հինգ տասնյակի: Ժամփորդության ավարտակետերից մեկը նրանց այցելությունն է «ի Գողթ գաւառն ցանկալի» /Թ, 137/, ուր բավական երկար մնալով, եղբայրները ուխտ են անում Ս. Ստեփանոսի և Թովմայի եկեղեցիներում, այնուհետև լինում են Ս. Խաչ վանքում, «Որ կառուցեալ յանքոյթ վայրին, Ի գագաթան Արունեաց ձորին» /Թ, 137/: Այստեղ է, որ ուխտագնացները հանդիպում են նույն վանքի վարդապետ, հետագայում Գողթան գավառի առաջնորդ, ինչպես նաև տպագրական գործունեությամբ հռչակված Թովմա Վանանդեցուն՝ խնդրելով չափածո գրել իրենց ուխտագնացության մասին:

Պոեմը կարելի է բաժանել երկու մասի: Առաջինում գովաբանվում են «ձանձրացեալ յաշխարհէ» (Ալիշան) ուխտավորի ցուպ վերցրած եղբայրները, ովքեր, հեսուն տարիները բոլորելով, միմյանց հետ դաշն են կապում՝ «Որջեալ զսրբավայրքն ճգնազգեաց, Հասուցանել զպարտս երախտեաց, Այլ և ի դրունս

---

[8] «Հայ հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», կազմեցին Ա. Մադոյանը և Գ. Անանյանը, Երևան, 1979, էջ 594:

[9] «Ծոփաղ», 1860, տետրակ Ը (էջ 121-122) և տետրակ Թ (էջ 135-137): Այսուհետ կնշվի միայն համապատասխան էջը:

եկեղեցեաց...» (Ը 121): Նրանք վեր են կանգնած մարմնական ցանկություններից. «Թէպէտ մարմնով յերկրի կային, Հոգւով զվերինն խորհէին...» (անդ): Երկրորդ, հիմնական մասում դրվատվում են հայկական սրբատեղիները, առանձնապես մանրամասն պատմվում է սրբերի շիրիմների, վանք կառուցողների, եկեղեցիներում հանգչող սրբազան մասունքների մասին: Ահա Էջմիածնի սքանչելագործ սրբությունների անդրադարձը պոեմում.

Էջմիածին Բանին կայան,
Ծնորհաց Հոգւոյն ընդունարան:
Աջըն հզօր մեզ պահապան,
Լուսաւորչին արիական:
Ռըստակիսի սրբոյ կուսան,
Աջըն տուեալ մեզ փրկարան:
Այլ և բևեռն սքանչելական,
Որ ի Փրկչին ձեռըս հարան:
Փայտն կենաց պատսպարան,
Ցուսացելոց զէն ամրութեան:
Սուրբ կուսանքն Հռովմայական,
Անդ եղեալ են ի գերեզման:
Կաթողիկոսն հրաշազան,
Սուրբ Փիլիպպոսըն Հաղբակեան,
Անդ հանգուցաւ նախ ի տապան,
Ի հոյակապըն Հռիփսիմեան /Թ, 136/:

Հեղինակը բազմազան ձևերով բարձրացնում-պանծացնում է հայկական սրբավայրերը, որով սեր և հավատ է սերմանում Հայ Եկեղեցու հանդեպ, որ ժողովրդի հարակա ենցուկն է, ինչպես Թեքեյանը կասեր, նրա հոգու բնակարանը: Վանանդեցու երկում տեսնում ենք ուխտագնացություն պատկերող գրվածքներին բնորոշ գրեթե բոլոր առանձնահատկություններն ու կաղապարները, որոնց մասին խոսք եղավ Լեհացու առիթով: Թովմայի պարագայում այդ ամենին անդրադառնալը անհարկի է:

Այսպիսով, մենք խոսեցինք երեք ստեղծագործության մասին, որոնցում նյութ են դարձել սրբերի կյանքով նվիրագործված հայկական սրբատեղիները: Դրանք գրվել են ԺԷ դարում և հաջորդ դարասկզբին, երբ հայ մատենագրության ընդհանուր պատկերը այնքան էլ նոխ վիճակ չէր ներկայացնում: Այդ գործերը մենք քննեցինք ըստ մեծի մասին գրականագիտական վերլուծությամբ՝ փորձ անելով ցույց տալ այն ընդհանրությունները, որոնց շուրջ միավորվում են ուղեգրությունները: Ինչ խոսք, մեր խնդրից դուրս էր այստեղ մանրակրկիտ անդրադառնալ տարբեր ուղեգիրների ոճական յուրահատուկ կողմերին, գրական նյութի մատուցման զանազան ձևերին և այլն:

Առանձին խոսակցության թեմա է ուղեգրական երկերի ճանաչողական արժանավորությունների բացահայտումը: Ուղեգրություններում ընթերցողը կգտնի պատմական, ազգագրական և տեղագրական բնույթի բազում տվյալներ: Ալիշանը, օրինակ, իր նշանավոր «Այրարատում» և «Սիսականում» այս կամ այն վայրի տեղադրությունը ճշտելու նպատակով շատ հաճախ դիմում է Թովմա վարդապետի օգնությանը՝ իբրև ստուգապատում հեղինակի:

Չպետք է, վերջապես, աչքաթող անել ուղեգրությունների կրթական դերը: Ուխտագնացները, երբ որևէ սրբի շիրմին կամ մի նահատակի կամ մարտիրոսի անվամբ հիմնված սրբարան են այցելել, մի տեսակ համակվել են այդ սրբի հատկանիշներով, գոնե ձգտել են նմանվել, այդ ձգտմամբ համակելով նաև ընթերցողին, երբ թղթին են հանձնել իրենց հուշերը: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ, նկարագրելով և ճանաչել տալով հայոց անվանի սրբավայրերը, ուղեգիրները կամեցել են ընթերցողին սիրել տալ դրանք, շնորհիվ որի նա առավել կկապվեր հարազատ Եկեղեցուն և կդիմագրավեր միաբարների (ունիթորների)՝ հատկապես ԺԷ դարում ուժգնացած շարժմանը: Այս մտահոգությամբ Վանանդեցին ավելի շատ ներքին ջերմություն, քան արտաքին

փայլ է ներդնում իր նկարագրություններում: Իսկ Հռոմի, Վենետիկի և Երուսաղեմի շքեղաշուք սրբությունները տեսած Լեհացին, թվում է, առավել ջերմեռանդորեն ու երկյուղածությամբ, առավել սիրով ու հպարտությամբ է գրում հայաստանյան ուխտատեղիների մասին:

Ինչպես արդեն նշել ենք, քննվող ժամանակշրջանի հայ իրականության մեջ կրոնասիրական զգացմունքները ունեին նաև հայրենասիրական մղումներ, «կրոնը ազգության գաղափարից բաժանվել չէր կարող»[10]: Մ. Աբեղյանը ԺԷ դարի գրականության «իշխող գաղափարն ու զգացումը» համարում է «երկու բան, կրոնասիրություն և հայրենասիրություն»[11]: Հայկական ուղեգրություններում մեկտեղվել են այդ երկու սկիզբները:

[10] Լեո. Երկեր, հ. 5, էջ 274:

[11] Մ. Աբեղյան. Երկեր, հ. Դ, էջ 547:

*ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ*

# ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆՔԻ ԱՎԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
## (1900-1920 թթ.)*

### *ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ*

Ղուկասյան մրցանակի կանոնադրության «ԺԱ» հոդվածով պարտավորեցվում էր մրցանակաբաշխության հանձնաժողովին ինչ-ինչ պատճառներով մրցանակաբաշխություն տեղի չունեցած տարվա մրցանակի գումարով հրատարակել «Նախնյաց ընտիր մատենագրություններ»: Այդ անվանման տակ նկատի էր առնվում հրատարակել հայ պատմիչների երկերը, որոնք պետք է վաճառվեին մատչելի գներով, իսկ հրատարակության եկամուտը հատկացնել թանգարանին:

1904 թվականի ապրիլի 5-ին գումարված նիստում քննարկվում է հայ պատմիչների աշխատությունների տպագրության հարցը:

Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ նախնյաց Մատենագիրներից Եղիշեի «Պատմություն Վարդանանց»-ը վաղուց է, ինչ չի հրատարակվել, իսկ հրատարակվածներն էլ մատչելի չեն լայն հասարակության համար, ուստի որոշում է հրատարակությունը սկսել Եղիշեից[47]:

Նիստում քննարկվում են նաև հրատարակության հետ կապված այլ հարցեր, այդ թվում Ստ. Կանայանի առաջարկը՝ տպագրել Մեսրոպ Երեցի իր կազմած «Պատմություն մնացորդաց Հայոց և Վրաց»-ի քննական բնագիրը: Հանձնաժողովը սկզբունքորեն ընդունում է Ստ. Կանայանի առաջարկը, միաժամանակ առաջարկում հեղինակին ձեռագիրը ներկայացնել՝ գրախոսման ուղարկելու համար:

Մնայուն հանձնաժողովի առաջին լուրջ հաջողությունն էր Եղիշեի «Պատմություն Վարդանանց» երկի հրատարակությունը: Այդ կապակցությամբ հանձնաժողովը որոշում է տասն օրինակ պատրաստել փառակազմ և դրանցից մեկն ուղարկել Վեհափառ Հայրապետին, մեկը վարչության նախագահ Վրաստանի Առաջնորդին, մեկը հանձնել թանգարանին, երեք օրինակ ուղարկել հանգուցյալ Ղուկասյանի կտակատարներին, իսկ մնացած չորս օրինակներն էլ բաժանել վարչության անդամներին: Այդ նիստով որոշվում է նաև հարյուր օրինակ պատրաստել լաթակազմ և յուրաքանչյուր օրինակի գինը նշանակել հիսուն կոպեկ, իսկ անկազմ օրինակները վաճառել հատը քսան կոպեկ: Որոշվում է նաև գրքի վաճառքի քանակը և վայրը: Վաճառքի համար առաջարկվում է դիմել Թիֆլիսի «Կենտրոնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներին 10%

---

* Սկիզբը տե՛ս №№ Դ-Ե, Զ-Է:

47 Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

գեղջով, յուրաքանչյուրին հանձնելով հիսուն օրինակ կազմած և 200 օրինակ առանց կազմի գիրք, իսկ մնացածը պահել թանգարանում և վարչության անդամներին, դիմողներին այնտեղից տալ:

Հանձնաժողովի 1907 թ. ապրիլի 1-ի նիստի արձանագրությունում ասվում է. «Ի նկատի ունենալով, որ հայ ժողովուրդը կա՛մ թանկ վճարով է ձեռք բերում Ավետարանը, կա՛մ գնում է անհարազատ ու թերի տպագրվածները, որոշում է կայացնում անցյալ և այս տարվա մրցանակների գումարներով տպագրել Չորս Ավետարանիչները և, մատչելի գին նշանակելով, տարածել ժողովրդի մեջ»[48]: Սակայն դա այնքան էլ դյուրին գործ չէր: Տպագրվելիք Ավետարանի համար անհրաժեշտ էր Կաթողիկոսի թույլտվությունն ստանալ: Այդ խնդրանքով հանձնաժողովը դիմում է Վեհափառին՝ շեշտելով, որ նպատակ ունի հրատարակել էժանագին Ավետարան: 1907 թ. սեպտեմբերին ստացվում է Կաթողիկոսի կոնդակը, որով նա թույլ չի տալիս հրատարակել, որովհետև Սբ. Էջմիածնի հրատարակած յոթ հազար օրինակ Ավետարանը դեռ մնում է չվաճառված[49]: Որից հետո հանձնաժողովը որոշում է կայացնում տպագրել Ղազար Փարպեցու Պատմությունը և Թուղթը՝ ընտրելով Ստ. Մալխասյանի և Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակած օրինակը: Որոշվում է այն տպագրել ընտիր թղթի վրա 1200 օրինակ:

Հանձնաժողովը լուրջ ուշադրություն էր դարձնում տպագրության գործին՝ ձգտելով այն ավելի ընդարձակել: Հանձնաժողովի նախագահ Գարեգին Արքեպիսկոպոսը տեղյակ է պահում հանձնաժողովի անդամներին, որ երբ ինքը գնացել էր Էջմիածին, Խրիմյան Հայրիկի թաղմանը մասնակցելու, Կարապետ Վարդապետ Տեր-Մկրտչյանը հայտնել է իրեն, որ ինքը Գարեգին Վարդապետ Հովսեփյանի հետ աշխարհաբար է թարգմանել Ավետարանը և հանգուցյալ Կաթողիկոսից հրատարակելու թույլտվություն ստացել: Նա համաձայն է Ավետարանի աշխարհաբար հրատարակությունը որոշ պայմաններով հանձնել Մնայուն հանձնաժողովին: Այս հանգամանքը հաշվի առնելով, հանձնաժողովը 1907 թվականի դեկտեմբերի 20-ին որոշում է կայացնում դիմել Գարեգին Վարդապետին՝ ճշտելու համար թարգմանիչների համաձայնության և տպագրության պայմանների հարցը[50]: Վաղարշապատի Հռիփսիմե վանքի վանահայր Գարեգին Վարդապետ Հովսեփյանը հայտնում է, որ հանձնաժողովի առաջարկը չեն կարող ընդունել, որովհետև որոշել են իրենք հրատարակել Ավետարանը Մայր Աթոռում: Այսպիսով, անհաջող է անցնում նաև Ավետարանի հրատարակության երկրորդ փորձը:

Հանձնաժողովը նախատեսում է տպագրել Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» գիրքը՝ հիմք ունենալով Մոսկովյան հրատարակությունը: Հաջորդը տպագրվում է Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» գիրքը:

1911 թվականին որոշվում է հրատարակել Հովհաննես Կաթողիկոսի «Հայոց պատմություն»-ը, որը արտատպվում է Էմինյան հրատարակությունից, ծանոթություններով և առաջաբանով: 1912 թվականին տպագրության համար ընտրվում է Արիստակես Լաստիվերտցու «Հայոց պատմություն»-ը: Որոշ

---

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում:

ժամանակ նախապատրաստական աշխատանք տանելուց հետո, որոշվում է տպագրության հանձնել նաև Սեբեոսի «Պատմություն ի Հերակլն» գիրքը:

«Ղուկասյան Մատենադարանի» այս և համանման գրքերը, գրված լինելով գրաբար, մեծ պահանջարկ չունեին ժողովրդի մեջ: Հաշվի առնելով, որ վարչությունը, տպագրելով այդ մատենաշարը, որևէ նյութական ակնկալություն չուներ, հանձնաժողովի 1912 թվականի հունիսի 1-ի նիստում որոշում է կայացվում այդ գրքերը անվճար բաժանել այն ազգային և դպրոցական գրադարաններին, որոնք կուղարկեն առաջման վարձը: Այդ մասին հայտարարություններ տպվեցին թերթերում: Նիստում առաջարկ եղավ նաև «Ղուկասյան մատենադարանի» հրատարակությունները ուղարկել Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի և Ս. Պետերբուրգի արևելյան ֆակուլտետների մատենադարաններին:

Քանի որ մրցանակաբաշխության ներկայացվող գործերը այնքան էլ շատ չէին, հանձնաժողովը 1912 թ. որոշում է հայ պատմիչների գործերը տպագրել մի մատենաշարով:

Առաջինը որոշվում է տպագրել Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Հայոց», հետո՝ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց», և ապա Ներսես Շնորհալու գործերը: Հանձնաժողովը դիմում է Մ. Աբեղյանին՝ խնդրելով թույլտվություն իր կողմից հրատարակած Մովսես Խորենացու բնագիրը Ղուկասյան կտակի միջոցներով տպագրելու համար: Որոշ ուշացումով, որի համար ներողություն է խնդրում, հեղինակը պատասխանում է, որ նա ուրախ է մի այդպիսի տպագրության համար, քանի որ դրանով կհրատարակվի համեմատաբար ավելի լավ մի բնագիր:

Այդ նիստում առաջարկվում է մեկ նորամուծություն ևս: Այսուհետև բոլոր հրատարակություններին պետք է կցվեր համառոտ առաջաբան հեղինակի մասին, եթե նախկին հրատարակություններում այն չէր եղել:

1913 թվականի սկզբներին հայտնի լեզվաբան Ստ. Լիսիցյանը դիմում է Ղուկասյան ֆոնդի մնայուն հանձնաժողովի անդամներին մի նամակով: Այնտեղ ասվում է, որ «Անկարելի է դեռ ըստ արժանվույն գնահատել այն ահագին նշանակությունը, որ կունենա հայ հասարակական գիտակցությանը հասունանալու համար մասնաժողովիդ ձեռնարկած «Հայ պատմագիրների» ամանագին հրատարակությունը: Այժմ, երբ ամեն մի փոքրիշատե կրթված հայ ձգտում է հասկանալ իր ազգի էությունը, պատմական դերն ու ապագան, անցյալի ուսումնասիրությունը ստանում է կարևորագույն կերպարանք և անշուշտ Ձեր հրատարակությունները գալիս են գոհացում տալու մի վերին աստիճանի առաջնակարգ պահանջին»[51]: Նա առաջարկում է տպագրել Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունը, որն այժմ մի շատ հազվագյուտ գիրք է և որ առաջնակարգ մատենադարաններն իսկ չունեն այդ հրատարակությունները, գրում է Ստ. Լիսիցյանը: Մինչդեռ այն մի չափազանց արժեքավոր աղբյուր է՝ հասկանալու հայոց հասարակական մտքի զարգացման պատմությունը 18-րդ դարում: Հանձնաժողովը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այդ գրքի նկատմամբ և անհարժեշտ է համարում այն տպագրել անհապաղ, քանի որ «Հայոց հարցը հրապարակի վրա է և այդ տեսակետից գիրքը կարող է հետաքրքրել շատերին»[52]: Որոշվում է ընդհատել Մ. Խորենացու գրքի

51 Նույն տեղում, թ. 13:

52 Նույն տեղում:

տպագրությունը և տպագրել «Որոգայթ փառաց»-ը և ապա Խորենացին, Եղիշեն (երկրորդ անգամ), Եզնիկ Կողբացին և Շնորհալին[53]:

Իրենց ծառայությունններն են առաջարկում նաև այլ հայագետներ: 1913 թվականի փետրվարին Ստ. Կանայանը առաջարկում է տպագրել Թովմաս Մեծոփեցու պատմությունը նորագյուտ բնագրով և այլ ձեռագրերի համեմատությամբ, որոնք ինքն էր պատրաստել: Հանձնաժողովը սկզբունքորեն ընդունում է առաջարկը: 1914 թ. հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Եպիսկոպոսի առաջարկությամբ որոշվում է տպագրել Թովմա Արծրունու պատմությունը, արտատպելով Ք. Պատկանյանի հրատարակությունից:

Հանձնաժողովին է դիմում նաև իրավաբանության դոկտոր Արսեն Ղլտճյանը՝ առաջարկելով տպագրել իր «Հայոց ազգային ժողովների և եկեղեցական սուրբ հարց կանոնները» աշխատությունը՝ նշելով, որ նրանց բնագիրը վերականգնել է Ս. Էջմիածնի մատենադարանի և այլ ձեռագրերի համեմատությամբ, և որ թե՛ հայոց ազգային իրավունքի և թե՛ հայոց եկեղեցական իրավունքի ուսումնասիրության համար այդ կանոնները ունեն արտակարգ նշանակություն, և որոնց մի մասը դեռ ցարդ հրատարակված չեն: Հանձնաժողովը ընդունում է Ա. Ղլտճյանի առաջարկը:

Հայ գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանի կապակցությամբ 1913 թվականին տպագրվում է Կորյունի «Սուրբ Մեսրոպի վարքը»՝ 2400 օրինակ տպաքանակով:

Հանձնաժողովը 1914 թվականի մայիսի 6-ի նիստում որոշում է կայացնում տպագրել Ագաթանգեղոսը:

1915 թվականին ավարտվում է Թովմա Արծրունու գրքի տպագրությունը: Հանձնաժողովը որոշում է բոլոր տպագրված գրքերից 100-ական օրինակ պահել, իսկ մնացածը՝ վաճառել, և եթե ցանկացող լինի բոլորը միասին գնել, այդ դեպքում վաճառել 30 կամ 35 տոկոս զեղչով: 1916 թվականի օգոստոսի 14-ի նիստում Գյուտ Աղանյանը հայտնում է, որ «Գուտենբերգ» գրատունը ցանկանում է գնել ունեցած ամբողջ գրքերը: Որոշվեց բոլոր գրքերը վաճառել 30 տոկոս զեղչով՝ լիազորելով վերջինիս կատարել այդ գործարքը:

## *ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

Թանգարանի բացումը տեղի է ունենում 1902 թվականի փետրվարի 21-ին:

Ավետիս Ղուկասյանի կտակով կրոնա-պատմական թանգարանին հատկացվում էր հինգ հազար ռուբլի, որի տոկոսներով պետք է հոգացվեր նրա ծախսերը: Սկզբնական շրջանում թանգարանի վարչությունը գործում էր առանց կանոնադրության, գնում էր եկեղեցական հնություններ, թանգարանային իրեր: Կտակի տնօրինման հարցի լուծումից հետո հանձնաժողովի աշխատանքները աշխուժանում են: 1904 թվականի նոյեմբերի 11-ին հանձնաժողովը որոշում է կայացնում կազմել թանգարանի Կանոնադրություն: Այն վերջնական տեսք է ստանում և հաստատվում 1907 թվականի մայիսի 7-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Այն կոչվում էր Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի Կանոնադրություն: Կանոնադրության մեջ ասված էր, որ թանգարանի նպատակն է ժողովել և պահպանել Հայոց ամեն տեսակ

---

53 Նույն տեղում:

եկեղեցական կրոնա-պատմական հնություններ: Այնուհետև թվարկվում էին այդ հնությունների անվանումները. հին գրչագիր մատյաններ, հին տպագրված գրքեր, վանքերի և եկեղեցիների վերաբերյալ հրովարտակներ ու վավերագրեր. գործածությունից հանված եկեղեցական հին անոթներ, սպասներ, զարդեր և զգեստներ:

Թանգարանը պետք է համալրվեր նաև պեղումների ժամանակ ձեռք բերված առարկաներով, «Այն բոլոր հնություններով, ինչ կարելի է ձեռք բերել հայոց հին վանքերի և եկեղեցիների ավերակներում»: Կանոնադրությամբ սահմանվում էր թանգարանային ցուցադրանմուշների պահպանության կարգը: Նրանք պետք է գտնվեին Թիֆլիսի Վանքի Ավագ եկեղեցու գավթում հատկապես այդ նպատակի համար կառուցված շինության մեջ: Թանգարանային գույքի պահպանության պատասխանատվությունը դրվում էր Մնայուն հանձնաժողովի վրա, ի դեմս նրա նախագահ Թիֆլիսի թեմակալ առաջնորդի և չորս անդամների, որոնք նշանակվում էին ցմահ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Թանգարանը հնություններ էր ձեռք բերում վճարովի կամ անվճար, նվիրատվության ձևով, իսկ վանքերում և եկեղեցիներում գտնված թանկարժեք հնությունները թանգարանին կարող էին հանձնվել Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի թույլտվությամբ: Կանոնադրության մեջ սահմանվում էր գույքի հաշվառման, ցուցադրման, նկարագրության կարգը: Ոչ մի իր թանգարանից դուրս չպետք է հանվեր կամ օտարվեր[54]: Թանգարանի համար իրեր գնելու նպատակով հայտարարություն է տրվում Թիֆլիսի մի շարք թերթերում:

Այդ հայտարարության տեքստում ասվում էր. «Թիֆլիսի Վաքի Մայր եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի մնայուն հանձնաժողովը որոշել է գնել կրոնա-պատմական արժեքավոր հնություններ՝ թանգարանում դրվելու համար, ի տես հասարակության և օտար այցելուների:

Այդպիսի իրեր ծախել ցանկացողները թող դիմեն Թիֆլիսի հայոց առաջնորդարան հանձնաժողովիս Սրբազան նախագահի անունով:

Նվերները նույնպես շնորհակալությամբ կընդունվեն և ի ցույց կդրվեն նվիրատուների անուններով:

Նախագահ հանձնաժողովի՝

Գարեգին արքեպիսկոպոս

Անդամ-քարտուղար՝

Խս. Հարությունյան»:

Թանգարան մուտք եղող իրերի մասին զեկուցվում էր հանձնաժողովի նիստում: Վաճառքի նպատակով ստացված իրերը ուղարկվում էին մասնագետներին՝ որոշելու համար նրանց թանգարանային արժեքը:

Լրագրական հայտարարության հիման վրա Շուշի քաղաքից տիկին Մինա Աղամյանը մի ձեռագիր ծայնագրված շարական է ներկայացնում վաճառքի համար: Հանձնաժողովը իր 1908 թվի փետրվարի 4-ի նիստում ձեռագիրը գնահատում է հիսուն ռուբլի: Սակայն գնելուց առաջ տրվում է հայագետ Ստ. Մալխասյանին՝ կարծիք հայտնելու համար: Ստ. Մալխասյանը ձեռագիրը համարում է 17-րդ դարի գործ և գնահատում «Հիսուն ռուբլի, նույնիսկ քիչ էլ ավելի»: Հանձնաժողովի անդամ Գյուտ ավագ քահանա Աղանյանը, որը նիստին ներկա չէր եղել, ձեռագիրը գնահատում է 15-20 ռուբլի: Սակայն Ստ.

54 Տե՛ս Կանոնադրություն Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի. Թիֆլիս, 1907, բ. 9:

Մալխասյանի կարծիքը հանձնաժողովը բարձր է գնահատում և չարակնոցը գնում է հիսուն ռուբլով: Հանձնարարվում է թանգարանի կառավարչին՝ «Ձեռագիրը մանրամասն նկարագրել և պահել թանգարանում համարով»[55]: Ուսուցիչ Արշակ Մադոյանը նամակով հայտնում է հանձնաժողովին, որ գտել է մի հնություն, որը «ներկայացնում է թագավորը իր նժույգի վրա, մերկ դաշույնը ձեռքին»: Գրությամբ հայտնվում է Մադոյանին, թե որքան է գնահատում հնությունը ու եթե մատչելի լինի արժանի գինը, բերել տալ Թիֆլիս՝ հնագիտական արժեքը որոշելու համար: Արձակագիր Ատրպետը թանգարանին առաջարկում է գնել մի ասեղնագործ հին վակաս, գին նշանակելով երեք հարյուր ռուբլի: Հանձնաժողովը որոշում է վակասը ուղարկել Պետերբուրգ պրոֆ. Ն. Մառին և խնդրել այնտեղի հնագիտական ընկերությանը՝ ներկայացնելով գնահատել տալ և այդ մասին հաղորդել Վարչությանը: Պրոֆ. Մառի նամակը կարդացվում է 1910 թվականի մարտի 4-ի նիստում: Մառը գտնում էր, որ վակասը «Ո՛չ գեղարվեստի, ո՛չ զուտ արվեստի կողմից որևիցե արտակարգ ինքնուրույն արժեք չունի»[56], գնահատելով այն 15–25 ռուբլի: Հանձնաժողովը առաջարկում է վակասի համար նույն գինը: Ազգագրագետ Ե. Լալայանը առաջարկում է թանգարանին՝ գնել իր կազմած հայկական հնությունների ալբոմը՝ գին նշանակելով հարյուր ռուբլի:

Հանձնաժողովը խրախուսանքի արժանի է համարում նրա նախաձեռնությունը և 1909 թ. մայիսի 6-ին որոշում վճարել, երբ հեղինակը կներկայացնի պատրաստի ալբոմը: Սակայն Ե. Լալայանը խնդրում է հանձնաժողովին վճարել ալբոմի համար, որպեսզի ինքը միջոց ունենա ալբոմը պատրաստելու: Հանձնաժողովը բավարարում է նրա խնդրանքը: Որոշ ժամանակ անց Ե. Լալայանը ներկայացնում է նաև ալբոմի երկրորդ պրակը, որի համար հանձնաժողովը վճարում է վաթսուն ռուբլի: Թանգարանը ստանում էր նաև նվիրատվություններ: Հանձնաժողովի անդամ թանգարանի կառավարիչ՝ Գյուտ ավագ քահանա Աղանյանը թանգարանին է նվիրում 7 անուն թանգարանային արժեք ներկայացնող առարկաներ:

Թանգարանի կառավարչապետ Գյուտ ավ. քհն. Աղանյանի ձեռներեցության շնորհիվ կարճ ժամանակում թանգարանը ձեռք է բերում զգալի քանակությամբ հնություններ, որոնք ունեին թանգարանային մեծ արժեք: Դրանք գործածությունից դուրս եկած բազմաթիվ հին գորգեր, ասեղնագործ սփռոցներ, եկեղեցական վարագույրներ, ծածկոցներ, թագեր, սաղավարտներ, եպիսկոպոսական գավազաններ էին, կանթեղներ, բուրվառներ, աշտանակներ, խաչեր և այլ առարկաներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ եկեղեցական առարկաների կողքին այնտեղ կային նաև աշխարհիկ և նույնիսկ հեթանոսական շրջանի իրեր[57]:

Մնայուն հանձնաժողովը բազմիցս զբաղվել է կրոնա-պատմական թանգարանի հարցերով: Նիստերում քննարկել է նրա վերաբերյալ հարցեր: 1910 թվականի նոյեմբերի 12-ի նիստում հանձնաժողովը որոշում է կայացնում հանձնաժողովի նախկին նախագահ Գարեգին Արքեպիսկոպոս Սաթունյանի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա դիմանկարը փակցնել թանգարանում: Նույնա-

---

55 Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

56 Նույն տեղում:

57 Ն. Գ. Ղաֆադարյան, Հայաստանի թանգարանների պատմություն, ԳԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 10, 1972, էջ 29:

Նման որոշում է կայցվում նաև Մնայուն հանձնաժողովի հանգուցյալ անդամներ Ալ. Ծրիցյանի, Աբ. Հովհաննիսյանի և Գ. Եվանգուլյանի վերաբերյալ[58]:

Մինչ այդ որոշում էր կայացվել թանգարանում տեղադրել հանգուցյալ կաթողիկոս Խրիմյան Հայրիկի և թանգարանի հիմնադիր Ավ. Ղուկասյանի դիմանկարները, որոնց համար պատվիրվել էին պատվանդաններ, իսկ հանձնաժողովի հանգուցյալ անդամների դիմանկարների համար՝ մետաղյա պատվանդանով ցուցափեղկ:

Ոչպես կանոն հանձնաժողովի նիստերը տեղի էին ունենում Առաջնորդարանում կամ հանձնաժողովի որևէ անդամի տանը: Այդ անհարմարությունը վերացնելու նպատակով հանձնաժողովը 1912 թվականի մայիսի 18-ի նիստում որոշում է կայացնում թանգարանում նիստեր անցկացնելու համար այն կահավորել համապատասխան կահկարասիով. գնել սեղան, գորգ, գրենական պիտույքներ, վառարան, անցկացնել էլեկտրական լուսավորություն: Հոգ է տարվում նաև թանգարանի շենքի պահպանության մասին: Այդ նպատակով որոշվում է շենքի բոլոր պատուհանները պատել երկաթյա ցանցերով և կաղնու փայտի շրջանակներով: Լրացուցիչ ձեռք բերել դարակաշարեր և վիտրինաներ:

Մնայուն հանձնաժողովը, ի նշան երախտագիտության, որոշում է կայացնում Ավետիս Ղուկասյանի կնոջ՝ Աննա Հովհաննեսի Ղուկասյանի և նրա վաղամեռիկ դստեր՝ Թամարի դիմանկարները կախել թանգարանի սրահում, իսկ Ավետիս Ղուկասյանի կիսանդրին կանգնեցնել թանգարանի բակում: Այդ ամենը զգալի ծախսեր էին պահանջում, իսկ կտակով նախատեսված գումարի տոկոսները պետք է ծախսվեին այլ որոշակի նպատակների համար: Այդ պատճառով հանձնաժողովը դիմում է Ավետիս Ղուկասյանի կտակակատարներին՝ խնդրելով թանգարանի ներքին կահավորման և կիսանդրու կառուցման ծախսերը վերցնել իրենց վրա: Վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաբյանը և անդամ Գյուտ ավ. քհն. Աղանյանը այդ հարցով դիմում են պ. Մն. Խունունցին և հայտնում իրենց որոշման մասին: Մն. Խանունցը հավանություն է տալիս այդ որոշմանը, խոստանում բանակցել մյուս կտակատար Պողոս Ղուկասյանի հետ և իր կողմից այդ նպատակի համար հանձն առնում հատկացնել 250 ռուբլի[59]:

Թանգարանի աշխատանքներում հանդիպում էին նաև բարդություններ: 1913 թվականի հոկտեմբերին Բաքվում մահանում է Բաքվի մշակութային միության հիմնադիր և ակտիվ հասարակական գործիչ Կոստանդին Խատիսյանը: Հարազատների կամքով թաղումը կատարվում է Թիֆլիսում՝ մեծ շուքով և հանդիսավորությամբ: Դագաղի վրա, ի թիվս այլ պսակների, դրված էին 8 արծաթե պսակներ, որոնք ուղարկել էին Բաքվից, այդ թվում Բաքվի մշակութային միությունից, հայ հասարակությունից, ռուսաց տեխնիկական ընկերությունից, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդից, քաղաքային ինքնավարությունից, ինչպես նաև միլիոնատեր Հ. Թաղիևից, Մարտուզա Մուխտարովից և ուրիշներից: Բաքվից եկած պատգամավորների ցանկությամբ պսակները պետք է ետ ուղարկվեին Բաքու՝ կուլտուրական միության մեջ իբրև հիշատակ պահելու համար: Սակայն հանգուցյալի այրին և հարազատները կամեցել են պսակները պահել Թիֆլիսում: Մինչ այդ տարաձայնությունների հարթումը, հանրության խնդրանքով արծաթե պսակները դրվում են կրոնա-

58 Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

59 Նույն տեղում:

պատմական թանգարանում, պահելու համար: Չնայած դրան, արդեն նոյեմբերի 5-ին հայտնաբերվում է, որ արծաթյա պսակները գողացել են թանգարանից[60]: Չարագործները, ջարդելով թանգարանի պատուհաններից մեկի երկաթյա ձողերը, ներս էին սողոսկել և գողացել արծաթյա պսակները: Թանգարանից գողության փաստը առաջացնում է Մնայուն հանձնաժողովի անդամների վրդովմունքը: Միջադեպը դառնում է հատուկ քննարկման առարկա: Հանձնաժողովի անդամ-քարտուղար Իս. Հարությունյանը մեղադրում է թանգարանի կառավարչապետին՝ առանց հանձնաժողովի անդամների հետ համաձայնեցնելու մասնավոր անձանց պատկանող իրերը հանրային սեփականություն հանդիսացող հաստատության ներսում պահելու համար: Գյուտ ավ. քհն. Աղանյանը իր տրված բացատրության մեջ պարզաբանում է արծաթյա պսակները թանգարանում պահելու հանգամանքները, ինչպես նաև այն քայլերը, որոնց նա դիմել է գողությունը բացահայտելու համար:

Հանձնաժողովի անդամ-քարտուղար Իս. Հարությունյանը հանձնաժողովին վերաբերող բոլոր գրությունները և նյութերը պահում է իր բնակարանում՝ դրանում չակնկալելով որևէ շահ, ընդհակառակը՝ զգալիորեն դժվարացնելով իր տնային պայմանները, որովհետև հանձնաժողովը, չունենալով հարմար տեղ, իր նիստերը անց էր կացնում մերթ Թիֆլիսի առաջնորդարանում, մերթ հանձնաժողովի որևէ անդամի բնակարանում և ավելի հաճախ Իս. Հարությունյանի բնակարանում, որը գտնվելով քաղաքի կենտրոնական՝ Սոլոլակի կոչվող թաղամասում, որտեղ բնակվում էին նաև հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ, հարմար էր նիստեր գումարելու համար: Ի պատիվ Իս. Հարությունյանի և նրա ընտանիքի անդամների՝ տիկնոջ՝ Երանուհի Ստեփանի Օհանջանյանի և նրա դուստրեր Մարիայի, Լյուսիկի և Նվարդի նոր թողած ժառանգության նկատմամբ բծախնդիր վերաբերմունքի, Թիֆլիսի Վանից Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանին վերաբերող և նրանց տանը գտնվող իրերը առանց բացառության և բավականին լավ վիճակում հասել են մեզ, որը հնարավորություն է տվել գրել սույն աշխատությունը, ինչ չի կարելի ասել թանգարանի նյութերի և ցուցանմուշների մասին, որոնց որոնումները առ այսօր դրական արդյունք չեն տվել:

Կրոնա-պատմական թանգարանը դարձել էր ոչ միայն հնությունների պահպանման և պրոպագանդման, այլ նաև մասսայական միջոցառումների վայր: Այդ առումով հատկանշական է հայ գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարությունը Թիֆլիսում, որը հիմնականում կատարվում է Վանքի Մայր եկեղեցում: 1913 թվականի հոկտեմբերի 12-ին, առավոտյան ժամը 11-ից, քաղաքում փակվում են հայկական առևտրական հիմնարկությունները ու ձեռնարկությունները, հայ կրթական հաստատությունները: Ժողովուրդը հավաքվում է Վանքի գավթում, որի մուտքը, առաջնորդարանը և Ղուկասյան թանգարանը զարդարված էին դրոշակներով: Վանքում ժամը 10-ից հանդիսավոր Պատարագ էր տրվում, որը մատուցում էր Աշոտ Եպիսկոպոսը: Նա, խոսելով գրերի գյուտի նշանակության մասին, ընդգծում է մեծ մարդկանց, հանճարների նշանակությունը և խաղացած դերը ժողովրդի վերածնության գործում[61]:

Երբ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սինոդը հատուկ կարգադրություն է ուղարկում Վրաստանի և Իմերեթի

---

60 «Մշակ» օրաթերթ, 12 նոյեմբեր, 1913 թ.:

61 «Մշակ», 13 հոկտեմբեր, 1913:

հայոց թեմի Առաջնորդ, Թիֆլիսի կրոնա-պատմական թանգարանի մնայուն հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Եպիսկոպոսին այն մասին, որ անհրաժեշտ է շտապ կարգով դատարկել թանգարանի շենքը՝ Ս. Էջմիածնի թանկարժեք իրերը այնտեղ տեղափոխելու համար: Մեսրոպ Եպիսկոպոսի կողմից անմիջապես կարգադրություն է արվում թանգարանի կառավարչապետ Գյուտ ավ. քհն. Աղանյանին անհապաղ դատարկել շենքը, կատարել շենքի ամրացման շինարարական աշխատանքներ: Այդ հարցը քննարկվում է նաև հանձնաժողովի նիստում 1914 թվի դեկտեմբերի 15-ին, որոշվում է թանգարանի իրերը տեղափոխել մեկ այլ տեղ, իսկ ազատված տարածությունը հատկացնել Էջմիածնի Մայր Աթոռին՝ այնտեղ տեղափոխելու համար Վանքի թանկարժեք իրերը:

1919 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության պետական գրադարանի վերատեսուչ պ. Ստ. Կանայանը դիմում է Ղուկասյան թանգարանի մարչությանը՝ խնդրելով ժամանակավորապես Ղուկասյան թանգարանի շենքում տեղավորել պետական գրադարանի գրքերը, մինչև նրանց Հայաստան տեղափոխելը: Այդ կապակցությամբ հունիսի 24-ին տեղի է ունենում թանգարանի վարչության նիստ՝ թեմի առաջնորդ Մխիթար Եպիսկոպոսի նախագահությամբ: Նիստը որոշում է հարգել դիմումը և թույլատրել Ղուկասյան թանգարանի շենքում ժամանակավորապես տեղավորել պետական գրադարանի գրքերը: Նիստը նաև որոշում է ինչպես գրադարանի, այնպես էլ թանգարանում եղած իրենց գրքերի պահպանության պատասխանատվությունը դնել վերատեսուչ պ. Ստ. Կանայանի վրա:

Կրոնա-պատմական թանգարանը զգալի օգնություն է ցույց տալիս նորաստեղծ Հայաստանի համալսարանի գիտական գրադարանի կազմավորմանը: Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի Առաջնորդ Մխիթար Եպիսկոպոսը 1920 թվականի մայիսի 12-ին տեղյակ է պահում Ամենայն Հայոց Կաթողիկոսին այն մասին, որ «Հայաստանի համալսարանի դեկան Տ. Մեսրոպ Եպիսկոպոսը խնդրել է Մնայուն հանձնաժողովին համալսարանի լեզվաբանական ֆակուլտետի համար Ղուկասյան մատենադարանի հայ մատենագիրներ մատենաշարի հրատարակություններից նվիրաբերել 200-ական օրինակ, ինչպես նաև կրոնա-պատմական թանգարանին պատկանող այն գրքերը, որոնք ժամանակավորապես պահպանվում էին Առաջնորդարանում: Վերջում Մխիթար Եպիսկոպոսը հայտնում է, որ Մնայուն հանձնաժողովը որոշել է ըստ հնարավորին բավարարել այդ խնդրանքը, և համալսարանին է ուղարկվում որպես նվիրատվություն Ղուկասյան մատենադարանի հրատարակած 15 անուն գրքերը, այդ թվում՝ «Որոգայթ փառաց»՝ 40 օրինակ, իսկ մյուս աշխատությունները՝ 200-ական օրինակ, ընդհանուր քանակով՝ 2780 օրինակ: Որպես նվեր ուղարկվում են նաև թանգարանին պատկանող իրեր, որոնք գտնվում էին առաջնորդարանում: Դրանք էին՝ մեկ գրասեղան, մեկ կանաչ սփռոց, մեկ էլեկտրական լամպ, մեկ բազկաթոռ, վեց աթոռ, երկու պատվանդան, երեք հին վարագույր, երկու ջեջիմ[62]»:

Թանգարանի կառավարչապետ Գյուտ ավ. քհն. Աղանյանի հանկարծամահ լինելը խիստ կերպով դժվարացնում է թանգարանի գործերի կառավարումը: Անհրաժեշտ էր նշանակել թանգարանի նոր տնօրեն: Այդ կապակցությամբ Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ, միաժամանակ կրոնա-պատմական թանգարանի Մնայուն հանձնաժողովի նախագահ Մխիթար Եպիսկոպոսը 1920 թվականի հունվարի 27-ին հատուկ գրությամբ դիմում է Տեր

---

62 ՀՀԱԳԿԱ ֆ. 57, ց. 2, գ. 615, թ. 1-2:

Գյուտի տիկնոջը՝ տ. Թամարին, խնդրելով նրան փետրվարի 1-ին, ժամը 12-ին, ներկա լինել Ղուկասյան թանգարանի Մնայուն հանձնաժողովի նիստին, կամ ուղարկել ներկայացուցիչ «Հանգուցյալ Գյուտ ավ. քահանայի մոտ մնացած թանգարանի հաշվի և գործերի մասին տեղեկություն տալու և հանձնաժողովին հանձնելու համար»[63]: Իր պատասխան 1920 թվականի հունվարի 31-ի նամակում Տիրուհի Թ. Աղանյանը հայտնում է, որ Տեր Հոր մահը եղել է հանկարծակի, և նա հնարավորություն չի ունեցել տնօրինելու ոչ միայն իրեն հանձնած հասարակական, այլև իր սեփական ընտանեկան գործերը, և որ ինքը և իր որդիները անկարող են գոհացուցիչ պատասխան տալ ըստ էության: Միաժամանակ Տ. Թամարը խնդրում է իրեն տրամադրել Մնայուն հանձնաժողովի անցյալ տարվա հաշվետվությունը և արձանագրությունները, որպեսզի ինքը հնարավորություն ունենա ներկայացնելու պահանջված հաշիվը: Իսկ թանգարանի շենքում գտնված գրքերի մնացորդին, որոնք մանրամասը ցուցակագրված են, նա պատրաստ է դրանց հետ միասին նաև թանգարանի բանալիները պատշաճ արձանագրությամբ հանձնել Մնայուն հանձնաժողովին[64]:

Թանգարանին պատկանող իրերի և գույքի մասին որևէ տեղեկություն չի հայտնաբերվել:

Պատերազմն անշուշտ խախտեց Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի վարչության բնականոն գործունեությունը: Պատերազմի տարիներին բազմաթիվ այլ կարևոր հարցեր ծագեցին: Թանգարանի վարչության անդամները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում զանազան այլ կոմիտեների և վարչությունների գործունեությանը, որոնք ստեղծվել էին թեթևացնելու համար հայ գաղթականների, որբերի և անապաստանների ողբերգական վիճակը:

Կրոնա-պատմական թանգարանի Մնայուն հանձնաժողովը գործեց մինչև Վրաստանում Խորհրդային կարգերի հաստատումը:

Հետաքրքրական է կրոնա-պատմական թանգարանի գույքի հետագա վիճակը, որի մասին նույնպես հավաստի տվյալներ հայտնի չեն: Իս. Հարությունյանի անձնական արխիվում հայտնաբերվել է մի ստացական, որը տրվել է նրան 1921 թվականի ապրիլի 11-ին, Հայկոմի լիազոր Գ. Մխիթարյանի կողմից: Այնտեղ նշված է, որ համաձայն Հայկոմի կոմիսարի կարգադրության Հայաստանի Հանրային գրադարան-թանգարանին ուղարկելու համար ստացել է Ղուկասյան թանգարանին պատկանող ընկ. Իս. Հարությունյանի միջոցով մեկ հատ ձեռագիր «Ճարակնոց» թղթե մաքուր բոլորագիր, ձայնագրված խազերով և բազմաթիվ զարդանկարներով, փոքրադիր կաշեկազմով: Ինչպես նշված է հիշատակարանում երկու անգամ, գրիչն է Գրիգոր երեցը, իսկ ձայնագրողը՝ Եղիազարը (գրված Երինե ապաշխարողի պատվերով): Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ ըստ երևույթին կրոնա-պատմական թանգարանի գույքը տեղափոխվել է Երևան և հանձնվել Հանրային գրադարանին ու պետական պատմական թանգարանին, ինչպես որ արվել է մյուս բարեգործական ընկերությունների կողմից:

---

63 Նույն տեղում, ֆ. 332, ց. 1, գ. 1154 թ.:

64 Նույն տեղում, գ. 1155:

## ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐ

Ավետիս Ղուկասյանի կտակում զգալի միջոցներ էին նախատեսված նպաստների համար: Դրանցից էին չքավոր հայ լուսավորչական օրիորդներին ամուսնանալու պահին օժիտադրամ հատկացնելը և չքավոր հայ լուսավորչական անհատներին և ընտանիքներին ամենամյա միանվագ նպաստ տրամադրելը: Այն նույնպես որոշում էր Մնայուն հանձնաժողովը: Օժիտադրամի համար նախատեսված էր վեց հազար ռուբլի, իսկ նպաստների համար՝ չորս հազար ռուբլի, որոնք անձեռնմխելի էին և նրանց տոկոսները միայն պետք է բաշխվեին:

Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի կանոնադրության մեջ հատուկ կարգ էր մշակված չքավոր հայ լուսավորչական օրիորդներին օժիտ տալու և չքավոր հայ լուսավորչական անհատներին և ընտանիքներին միանվագ նպաստներ տալու վերաբերյալ: Ըստ այդ կանոնների, յուրաքանչյուր տարին մեկ անգամ նպաստ էր տրվում հավասար չափով երեք հայ լուսավորչական չքավոր օրիորդների՝ ամուսնանալու ժամանակ օժիտ ձեռք բերելու համար: Ամեն տարի Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդը, իսկ թեմակալ առաջնորդ չլինելու շրջանում կոնսիստորիան հանձնարարում էր Թիֆլիսի հայ լուսավորչական եկեղեցիների միաբան քահանաներին որոշված ժամկետում տեղեկություններ ներկայացնել հանձնաժողովին՝ իրենց ծխականների մեջ եղած ամուսնացող չքավոր օրիորդների մասին: Խնդրատու օրիորդները կարող էին իրենք ևս անմիջապես դիմել Մնայուն հանձնաժողովին՝ չքավորության պատշաճավոր վկայական ներկայացնելով իրենց ծխատեր քահանաներից կամ բարեգործական ընկերություններից: Ներկայացվածների միջից նպաստ ստացողների ընտրությունը կատարվում էր հանձնաժողովի կողմից ամեն տարվա ապրիլի 7-ին, վիճակահանության միջոցով: Վիճակ ընկած չքավոր օրիորդներին հանձնաժողովը տեղեկացնում էր ծխատեր քահանաների միջոցով կամ անձամբ: Վիճակ հանած այն չքավոր օրիորդները, որոնք չեն ամուսնանա երկու տարվա ընթացքում, զրկվում էին նպաստ ստանալու իրավունքից: Սակայն եթե նրանք հետագայում ամուսնանան, ապա նպաստը նրանց տրվում էր առանց նոր վիճակահանության:

Կանոններ էին մշակվել նաև չքավոր հայ լուսավորչական անհատներին և ընտանիքներին միանվագ նպաստներ տալու մասին: Չքավորների մասին տեղեկությունները նույնպես պետք է գրավոր հայտնեին Մնայուն հանձնաժողովին Թիֆլիսի հայոց եկեղեցիների հոգևորականները: Այս դեպքում ևս չքավոր խնդրատուները կարող էին իրենք անմիջապես դիմել Մնայուն հանձնաժողովին՝ ներկայացնելով չքավորության վկայական իրենց ծխատեր քահանաներից, ինչպես նաև բարեգործական ընկերություններից:

Մնայուն հանձնաժողովը, հավաքելով չքավորների մասին բոլոր ցուցակները կամ վկայականները, որոշում էր տվյալ տարվա միանվագ նպաստի գումարի չափը և նպաստ ստացողների ցուցակը: Այդ մասին տեղյակ էր պահվում խնդրատուներին անմիջապես կամ դարձյալ ծխատեր քահանաների միջոցով: Միանվագ նպաստների բաշխումը նույնպես տեղի էր ունենում ամեն տարի, ապրիլի 7-ին, Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանում հանգուցյալ Ավետիս Ղուկասյանի հոգեհանգստի արարողությունից հետո:

Նորակազմ կանոնադրությունը և կանոնները ուղարկվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատմանը, որը այն հաստատում է 1907 թվականի մայիսի 3-ին:

1907 թվականի հունվարից մինչև 1916 թվականի օգոստոսը Մնայուն հանձնաժողովը իր նիստերում 52 անգամ անդրադարձել է չքավոր օրիորդներին օժիտի գումար և չքավորներին միանվագ նպաստ տալու հարցերին:

Մնայուն հանձնաժողովը ամեն տարի գրավոր դիմում էր Թիֆլիսի առաջնորդին, որպեսզի ծխատեր քահանաների միջոցով նշված ժամկետում տեղեկություններ ներկայացնեն չքավոր օրիորդների, անհատների և ընտանիքների մասին: Անհրաժեշտ է նշել, որ ծխատեր քահանաները իրենց վրա դրված պարտականությունները կատարում էին ամենայն բարեխղճությամբ: Սահմանված ձևով և ժամկետում նրանք ներկայացնում էին իրենց ծխատիրության սահմաններում եղած չքավորների ցուցակները: Սկզբում դրանք կազմվում էին խառը, թե՛ օժիտ ստացողներինը և թե՛ չքավորներինը մեկ ցուցակով, որը դժվարացնում էր դրանց ստուգումները: Այդ հարցը քննարկվում է հանձնաժողովի նիստում և որոշում կայացվում 1907 թ. ապրիլի 1-ին կազմել երկու ցուցակ՝ առանձնացնելով օժիտ և նպաստ ստացողներին, նշելով՝ նրանց անուն-ազգանունը, ընտանիքի անդամների կազմը և հասցեն, ստուգման համար մատչելի դարձնելու նպատակով:

Առաջին վիճակահանությունը տեղի է ունենում 1907 թվականի ապրիլի 5-ին: Հանձնաժողովը նկատի ունենալով, որ օժիտի համար դիմողները (117 հոգի) և միանվագ նպաստի խնդրատուները մեծ թիվ են կազմում, որոշում է բաշխել երկու տարվա գումարները և օժիտ հատկացնել վիճակահանության կարգով վեց չքավոր օրիորդների: Վիճակահանության արդյունքները վավերացվում էր հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Չքավոր անհատների և ընտանիքների թիվը հասնում էր 159 հոգու: Հանձնաժողովը որոշում է բոլորին տալ երկուական ռուբլի, որպես նպաստ[65]:

Հաջորդ՝ 1908 թվականին հանձնաժողովը նույն կարգով դիմում է Թիֆլիսի հայոց առաջնորդարան՝ խնդրելով հայտնել բոլոր ծխատեր քահանաներին, որպեսզի իրենց ծխերից ներկայացնեն երկուական ամենաչքավոր անհատի կամ ընտանիքի անուն և ազգանուն: Հանձնաժողովը որոշում է տվյալ տարվան հատկացված 200 ռուբլու վրա ավելացնել անցյալ տարվանից մնացած 96 ռուբլին: Օժիտադրամի համար որոշվեց օգտագործել նախորդ տարվա ցուցակները՝ ավելացնելով նորերը[66]:

Նշված կանոնների համաձայն այդ ցուցակները ուղարկվեցին ծխատեր քահանաներին՝ նշելու համար ամուսնացածների և վախճանվածների ազգանունները: Հանձնաժողովը մի նորամուծություն էլ է մտցնում: Որոշվում է տպագրել հատուկ վկայականներ, որոնք որպես հավաստիացում տրվելու էին վիճակ հանած չքավոր օրիորդներին: Այդ վկայականում նշվում էր. «Տփխիսի Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանի վարչությունը տալիս է սույն վկայականը Օր. (անուն, հայրանուն, ազգանուն) առ այն, որ, համաձայն կտակի, թանգարանի բարերար հանգուցյալ Ավետիս Ղուկասյանի 1907 թվ. ապրիլի 7-ին կատարած վիճակահանության ժամանակ հիշյալ օրիորդին ընկավ հարյուր ռուբլի օժիտադրամ:

---

[65] Իս. Հարությունյանի անձնական արխիվ:

[66] Նույն տեղում:

Ըստ թանգարանի վեցերորդ հոդվածի կանոնադրության օրիորդը եթե երկու տարվա ընթացքում չի ամուսնանում, զրկվում է նպաստը ստանալու իրավունքից»:

1908 թվականին օժիտի կարիք ունեցող օրիորդների թիվը հասնում է 185-ի: Սակայն ստուգումներով պարզվում է, որ այդ թվի մեջ էին մտցրել նաև շուրջ 25 հոգի անչափահասների, որոնք, իհարկե, հանվեցին ցուցակից, իսկ 160 օրիորդների միջև անցկացվեց վիճակահանություն: Նույն տարում նպաստի համար դիմել էին 99 հոգի: Այս անգամ էլ որոշվում է նրանց բաժանել երկուական ռուբլի: Չքավորների մասին վկայում էին ծխատեր քահանաները: Այսպես, Սարգիս ավագ քահանա Իգիթյանը 1911 թվականի մարտի 11-ին տրված վկայականում հավաստում էր. «Իմ ծուխ Սոֆիա Սուլխանյանցը հետին չքավոր է, ունի չորս փոքրահասակ զավակներ, չի կարողանում նրանց օրական չոր հաց հասցնել, թողնելով մյուս կարիքները, ուստի կարոտ է օգնության բարեպաշտ անձանց: Ի ստուգություն որի տալիս եմ սույն վկայականը իմ ստորագրությամբ և դրոշմամբ անվանական եկեղեցական կնիքով»: Գրիգոր ավագ քահանա Մանդակունու 1917 թվականի ապրիլի 5-ին տրված վկայականում կարդում ենք. «Այրի Մարգարիտ Տեր-Պողոսյանն իր անչափահաս որբերով գտնվում է հետին աստիճանի դառն չքավոր վիճակի մեջ, կարոտ օրական մի կտոր հացի: Ստույգությունը վկայում եմ ստորագրությամբ և անվանական կնիքովս»[67]: Նույնանման վիճակ էր նաև չքավոր օրիորդների պարագայում: Ելնելով նրանց ծանր կացությունից, ծխատեր քահանաները ստիպված էին լինում միջնորդել՝ օժիտադրամը հատկացնել նրանց մինչև ամուսնանալը, որպեսզի կարողանային հոգալ օժիտի ծախսերը: Հովհաննես ավագ քահանա Մարտիրոսյանը 1910 թվականի փետրվարի 13-ին օրիորդ Եղիսաբեթ Ավդալբեգյանին տված տեղեկանքում գրում էր, որ նա նշանակվել է Կարսեցի Գասպար Ղազարյանցի հետ և պսակվելու է առաջիկայում: Ծխատեր քահանան նշում էր, որ նա վիճակ է հանել 1908 թվականի ապրիլի 7-ին և խնդրում էր նրան տալ օժիտադրամ օժիտի պատրաստություն տեսնելու համար:

Այդպիսի դեպքերում հանձնաժողովի նախագահը դիմումը մակագրում էր Գյուտ ավագ քահանա Աղանյանցին. «Եթե հնարավոր է և օրինական, հակառակ չէ կանոնադրությանը, նշան դրված օրիորդին հանձնել իրեն հասանելիք վիճակով տրված մի հարյուր ռուբլի»[68]: Սովորաբար հարցը լուծվում էր դրական:

Հանձնաժողովին հարկ էր լինում գործ ունենալ երբեմն տխուր փաստերի հետ: Երբեմն օժիտադրամը հարկ էր լինում տրամադրել վիճակ հանած օրիորդի թաղման ծախսերը հոգալու համար: Օրիորդ Սոֆիա Փեշտմալճյանը 1908 թվականին վիճակ էր հանել, սակայն ինչ-ինչ պատճառներով չէր ամուսնացել: Եվ ահա 1911 թվականի հոկտեմբերին նրա մայրը՝ տիկին Մարիամը, ծանուցում է հանձնաժողովին, որ Սոֆիան մահացել է չամուսնացած և խնդրում է չստացած օժիտադրամի փոխարեն տալ իրեն թաղման ծախսը: Չնայած կանոնադրությամբ նման բան չէր նախատեսված, սակայն հանձնաժողովը հնարավոր է համարում տալ 25 ռուբլի՝ թաղման ծախսերը հոգալու համար[69]:

---

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում:

69 Նույն տեղում:

Ամուսնության համար օժիտադրամի հատկացումը մարդասիրական գործ էր և ժամանակի ծանր պայմաններում զգալի նեցուկ չքավոր օրիորդներին:

Անհատ չքավորներին և ընտանիքներին տրվող միանվագ դրամական օգնությունը, չնայած փոքր գումարին, հնարավորություն էր տալիս մարդկանց թեկուզ մեկ-երկու օր ունենալ ապրուստի լրացուցիչ միջոց:

Ավետիս Ղուկասյանի կտակով գործող Թիֆլիսի Վանաց Ավագ եկեղեցու կրոնա-պատմական թանգարանը իր համակողմանի գործունեությամբ նշանակալից հետք է թողել հայ ժողովրդի մշակութային և բարեգործական գործունեության պատմության մեջ:

***ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր***

## ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

# ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆ

(Ծննդյան 110 և մահվան 40-ամյակի առիթով)

Ականավոր լեզվաբան, հայտնի ուրարտագետ ու արևելագետ, գիտությունների վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Այվազի Ղափանցյանը ծնվել է 1887 թ. փետրվարի 17-ին Աշտարակում: Նախնական կրթությունը ստացել է տեղի երկդասյան ռուսական ուսումնարանում: Կրթությունը շարունակելու նպատակով մեկնել է Սանկտ Պետերբուրգ և ընդունվել գիմնազիա՝ 1899-ին, այն ավարտելուց հետո՝ պոլիտեխնիկական ինստիտուտ, սակայն բնական գիտությունները չեն հրապուրել ապագա լեզվաբանին, և մեկ տարի հետո թողել է այն ու տեղափոխվել Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վրացերեն բաժինը, միաժամանակ նա մի շարք դասախոսություններ է լսել հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության, ընդհանուր լեզվաբանության և կովկասագիտության վերաբերյալ: «Իմ լավագույն պրոֆեսորներն էին, - իր ինքնակենսագրության մեջ գրում է Ղափանցյանը,- Ն. Մառը, Կ. Զալեմանը, Ն. Ադոնցը, Բոդուեն դե-Կուրտենեն, Ի. Ջավախաշվիլին, Բուլիչը և էլի ուրիշներ»:

Լսելով այս և բազմաթիվ ուրիշ համբավավոր գիտնականների և խորապես տիրապետելով ընդհանուր լեզվաբանությանը և պատմագրությանը, համալսարանը գերազանցության դիպլոմով ավարտած Ղափանցյանն իր ողջ կյանքի ընթացքում իրեն հատուկ պրպտող մտքով ու մեծ եռանդով ուսումնասիրեց հայոց լեզվի պատմության հնագույն շրջանը, հայերենի և հայերի ծագման և դրանց հարակից բազմաթիվ կնճռոտ հարցեր:

1913 թ. ավարտելով համալսարանը՝ Ղափանցյանն ստանում է իր ուսուցիչ ակադեմիկոս Ն. Մառի առաջարկը՝ համալսարանում մնալու, աշխատելու և պարսկագիտության մեջ կատարելագործվելու: Սակայն նա գերադասում է վերադառնալ հայրենիք և իր ստացած գիտելիքները նվիրել իր ազգի մատաղ սերնդին: Հայրենիք վերադառնալու նրա անկեղծ մղումը ավելի է ամրապնդում Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերատեսուչ Բագրատ վարդապետ Վարդազարյանի հրավերը՝ ճեմարանում լեզվագիտական և հայագիտական առարկաներ դասավանդելու: Եվ ահա Գ. Ղափանցյանը ճեմարանում է. նա այստեղ դասավանդում է գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, հայերենի համեմատական քերականություն: Հենց այստեղ էլ տպագրվում են նրա առաջին գիտական հոդվածները՝ «Հնագույն մի քանի հուշարձաններ» («Արարատ», թիվ 1) և «Լեզվաբանական դիսցիպլին և լեզու» («Արարատ», թիվ 3):

Ճեմարանում աշխատելու տարիներին Ղափանցյանը Ն. Մառի հետ մասնակցել է Անիի պեղումներին:

1914-15 ուսումնական տարվանից ճեմարանի վերատեսուչ է հրավիրվում ճեմարանի նախկին սան, Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում դասավանդող, Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետն ավարտած և արդեն գիտնականի անուն հանած երիտասարդ լեզվաբան և գրականագետ

Ստեփանոս Մալխասյանցը: Նոր տեսուչը ճեմարանում աշխատող անվանի դասախոսներ Մանուկ Աբեղյանին, Գրիգոր Ղափանցյանին, Աշոտ Հովհաննիսյանին, Գարեգին Հովսեփյանցին և ուրիշների հանձնարարում է գրել ճեմարանի նոր կանոնադրություն և կազմել առարկայական նոր ծրագրեր: Սակայն Գերմանիայում, Ֆրանսիայում, Պետերբուրգում և ուրիշ առաջավոր երկրներում բարձրագույն կրթության մասնագետներով համալրված ճեմարանի գործունեությունը երկար չի տևում. 1917 թ. դեկտեմբերի 21-ին փակվում է ճեմարանը, և դասախոսների մի մասը, այդ թվում նաև Ղափանցյանը, տեղափոխվում է Երևան և զբաղվում ուսուցչությամբ:

1920 թ. Երևանի պետական համալսարանի հիմնադրման օրվանից Ղափանցյանը հրավիրվում է համալսարան՝ գրաբար, հայերենի համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն, ուրարտերեն և այլ առարկաներ կարդալու: Այստեղ նա ծավալում է ոչ միայն մանկավարժական, այլև գիտահետազոտական լայն գործունեություն, որի համար 1930 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, իսկ 1942-ին՝ գիտության դոկտորի աստիճան՝ honoris causa (առանց դիսերտացիա պաշտպանելու): 1943-ին ստանում է գիտության վաստակավոր գործչի կոչում:

1943 թ. Մեծ հայրենականի ամենածանր օրերին Հայաստանում հիմնվեց գիտությունների ակադեմիան՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նախագահությամբ: Գրիգոր Ղափանցյանն ընտրվեց ակադեմիայի հիմնադիր կազմի իսկական անդամ, հասարակական գիտությունների բաժանմունքի տնօրեն և ակադեմիկոս-քարտուղար:

1950 թ. Ղափանցյանը նշանակվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի տնօրեն՝ շարունակելով աշխատել համալսարանում որպես ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ: Նա այդ երկու պաշտոնները համատեղեց մինչև 1956 թ., իսկ հաջորդ տարի, 1957-ի մայիսի 4-ին, կնքեց իր մահկանացուն:

Իր գիտա-մանկավարժական գործունեության 45 տարիների ընթացքում անվանի գիտնականն ու մանկավարժը բեղմնավոր ու արդյունաշատ գործունեություն է ծավալել գիտական կադրերի պատրաստման գործում՝ հեղինակելով և չորս տասնյակից ավելի գիտական աշխատություններ:

Ակադեմիկոս Ղափանցյանի գիտական հետազոտություններն իրենց ծանրակշիռ տեղն ունեն ոչ միայն հայագիտության, այլև արևելագիտության բնագավառում:

Գիտության մեջ արժեքավոր ներդրումներ են նրա հետևյալ աշխատությունները՝ Chetto-Armeniaca (1931), «Ընդհանուր լեզվաբանություն» (1939), (սա տարիներ շարունակ բանասիրական ֆակուլտետի ուսանողների դասագիրքն է եղել), «Խեթական աղբյուրները հայերի մասին» (1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» (1940), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (1945), «Հայոց լեզվի ծագման հարցի շուրջը» (1946), «Հայաստան՝ հայերի բնօրրան» (1947), «Հայոց լեզվի պատմություն» (հին շրջան, 1961) և հրատարակվել են հետմահու մի քանի տասնյակ հոդվածներ ու նյութեր:

Գր. Ղափանցյանը խոշոր ուրարտագետ էր. Նրա «Ուրարտուի պատմությունը» (Երևանի համալսարանի հրատ. 1940) 4 մասից բաղկացած գրքում հանգամանորեն տեղեկություններ են տրվում Ուրարտուի, ուրարտացիների ծագման, նրա տնտեսական ու հասարակական կյանքի, վարչական կառուցվածքի ու քաղաքական վիճակի մասին՝ այս բոլորը քաղված հնագույն սեպագիր արձանագրություններից ու պեղումներից: Գրքում հեղինակը բերում է նաև ուրարտերենի համեմատական քերականությունը: Ղափանցյանի այս աշխատությունը մեծարժեք ավանդ է ուրարտագիտության բնագավառում և լուրջ ներդրում հայերի և հայերենի նախապատմության համար:

Առանձնապես մեծ են Ղափանցյանի ծառայությունները ընդհանուր լեզվաբանության, հայերի ու նրանց հնագույն հարևան ժողովուրդների և նրանց լեզվական առնչությունների բնագավառում: Նրա գրչին են պատկանում հայերեն, խեթերեն, խուրիտերեն, ուրարտերեն, բալայերեն, ասսուրերեն և այլ հին լեզուների աղերսակցությունները պարզելու և հայերեն բազմաթիվ բառերի ստուգաբանությունները ճշգրտելուն նվիրված ուսումնասիրությունները:

Մեր նպատակն է հանգամանորեն խոսել Ղափանցյանի լեզվագիտական հայացքների մասին՝ համառոտակի անդրադառնալով նաև նրա՝ երիտքերականական դպրոցի, ինչպես նաև ակադեմիկոս Ն. Մառի հայացքների առնչություններին:

Պետերբուրգի համալսարանում աշակերտելով երիտքերականական դպրոցի կարկառուն ներկայացուցիչ Բոդուեն դը-Կուրտենենին և լեզուների ծագման ու զարգացման վերաբերյալ ուրույն տեսակետ ունեցող Նիկոլայ Յակովլևիչ Մառին, Ղափանցյանը բնականաբար հետևել է նրանց տեսակետներին: Այսպես, հենց իր առաջին հոդվածում, որը տպագրվեց «Արարատ» թիվ 3-ում «Լեզվաբանական դիսցիպլին և լեզու» վերնագրով, երիտասարդ լեզվաբանը երիտքերականների նման լեզվական բոլոր իրողությունների հիմքում տեսնում էր մարդկային հոգին: Նա գրում է. «Լեզվական բոլոր երևույթները հանդես են գալիս մարդկանց հոգեբանության միջոցով. յուրաքանչյուր լեզվական երևույթ մկրտվում է և ձևապես կազմվում մարդու հոգեկան աշխարհում»[1]: Այսպիսով, Ղափանցյանը երիտքերականների նման լեզուն անհատական երևույթ համարելով, նրանցից մի քայլ առաջ է անցնում և ճիշտ կերպով նշում, որ անհատականը միայն ընդհանուրի դրսևորումն է. «Լեզուն ամփոփում է յուր մեջ ազգի հոգեբանությունը, և ինքն էլ այդպիսով դառնում է ազգի համար մի ընդհանուր երևույթ»[2]:

Այս բավականին վերացական հոդվածում շարադրված մտքերը Ղափանցյանին չեն բավարարում, և նա իր «Ընդհանուր լեզվաբանություն» շատ արժեքավոր աշխատության մեջ, «Ներածություն» բաժնում, հեռանում է երիտքերականների տեսությունից և լեզուն համարում ոչ թե անհատական, այլ հասարակական երևույթ. «Լեզուն պատմա-հասարակական երևույթ է. լեզուն ստեղծված է մարդկային արտադրական կոլեկտիվի կողմից. նա իր ծագմամբ, զարգացմամբ և էությամբ իսկ պայմանավորված է հասարակական գոյով»[3]:

Այս բնորոշումով Ղափանցյանը ճիշտ տեսակետի է հանգել, բայց սահմանման շարունակության մեջ արդեն հետևում է ժամանակի տարածված մառական ուսմունքին և սայթաքում՝ լեզվին տալով դասակարգային բնույթ և այն համարելով վերնաշենքային կատեգորիա (երևույթ): Լեզուն համարելով «վերնաշենքային մի բարձր կուլտուրա», Ղափանցյանը, նորից հետևելով Մառի ուսմունքին, լեզուների ցեղակցության հարցում նորից որդեգրում է սխալ տեսակետ. այն է՝ իբր թե ցեղային լեզուների խաչավորմամբ կազմվել են էթնիկական լեզուներ, որոնք և հետագայում, ազգերի ձևավորմանը զուգընթաց, դարձել են ազգային լեզուներ: Այսինքն՝ ազգային լեզուները նա համարում էր «մի քանի լեզվական միավորներից կամ սիստեմներից առաջացած նոր սինթեզիացիա»: Սրանից էլ բխեցնում էր հայերենի, այսպես կոչված, երկբնույթ խառնված լեզու լինելու հարցը և իր ստուգաբանական-բառագիտական վերլուծություններում նա հայերենում ընդգծում է հաբեթական լեզվաշերտ և այն ցեղակից համարում ոչ թե հնդեվրոպական, այլ ասիանիկ լեզուներին. «Հայոց լեզուն իր տիպոլոգիական-կառուցվածքային և ստադիալ-գաղափարախոսական

---

1 Տե՛ս «Արարատ», 1914, հմր. 3, էջ 261-271:

2 Նույն տեղում:

3 Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 19:

շատ դրսևորումներով ու հատկություններով անկասկած ցեղակից է հին փոքրասիական (ասիանիկ), լեզուներին»[4], այսինքն՝ հայերենը ցեղակից համարելով խեթա-խուռա-ուրարտա-վրացա-ճանա-մեգրելական լեզուներին, նույնիսկ՝ թուրքականին, Ղափանցյանը չէր ընդունում հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին, ինքնուրույն ճյուղ լինելը:

Հետագայում Ղափանցյանը, իհարկե, վերանայել է իր սխալ տեսակետները, բայց այնուամենայնիվ, հայոց լեզվի ցեղակցության հարցում թերահավատ մնացել: Ահա նրա վերջին եզրակացությունը. «Հայերենը գերազանցապես փոքրասիական լեզու է. իր ամբողջ կազմության երեք քառորդով նա պատկանում է փոքրասիական լեզուներին, մեկ քառորդը միայն հնդեվրոպական է»[5]:

Մինչեռ այն նույն ժամանակաշրջանում աշխարհահռչակ լեզվաբան Հրաչյա Աճառյանը ապացուցում էր, որ լեզուն դասակարգային լինել չի կարող, որ այն վերնաշենքային երևույթ չէ բազիսի վրա, և ոչ էլ ազգային լեզուները խաչավորման ճանապարհով են առաջացել:

Լեզվի հնչյունական համակարգի նկատմամբ Ղափանցյանի ըմբռնումն արդեն սահմանազատվում է Մառի տեսությունից. նա «հնչյունական օրենքի» գոյությունը ընդունում է որպես լեզվի զարգացման հիմնական օրինաչափություններից մեկը: Ղափանցյանը «հնչյունական օրենքը» կապում է լեզվի պատմական զարգացման հետ և դրանով էլ բացատրում բառերում կատարվող պատմական և փոխազդեցական հնչյունափոխական երևույթները և քննադատում Մառի այն տեսությունը, որ իբր բարդ հնչյունները (Փ, Ք, Թ, Չ, Ծ, Ց, Ջ, Ճ, Ձ) նորաստադիալ լեզուներում պահպանվել են «հաբեթական» և նախորդ վիճակներից (Հայտնի է, որ Մառը հաբեթականը համարում էր նախալեզու, որի քայքայումը սկսվել է Քրիստոսի ծննդից հազար տարի առաջ, իսկ հայերենը բխեցնում էր հաբեթական, սեմական և հնդեվրոպական լեզուների խաչավորումից):

Հայ լեզվաբանությանը մատուցած Ղափանցյանի մեծագույն ծառայություններից մեկը այն է, որ նա հայ լեզվաբանություն է ներմուծել մի քանի տերմիններ ու հասկացություններ: Այսպես, օրինակ, հնչյունաբանության մեջ նա առաջինն էր, որ, հետևելով իր ուսուցիչ Բոդուեն դե-Կուրտենենին, հայ լեզվաբանության մեջ մտցրեց *հնչյունի* և *հնչույթի* տարբերակումը: «Հնչույթը իբրև ֆոնեմա,– գրում է Ղափանցյանը,– հանդես է գալիս մեր մեջ և, իբրև այդպիսին, կազմում է լեզվի հիմնական ատաղձը՝ շինանյութը... Բառի ձևավորման հանգամանքը հանդիսանում է նրա հնչյունական արտաքինը...»[6]: Հնչույթը Ղափանցյանը համարում է հնչյունի սոցիալական տարբերակումը:

Հնչյունի և հնչույթի ղափանցյանական տեսությանը անդրադարձան հայ լեզվաբաններ Գ. Սևակը, Վ. Առաքելյանը, Էդ. Աղայանը և ուրիշներ, որոնք ավելի հստակորեն տարբերակեցին ու սահմանեցին այդ երկու հասկացությունները: Ահա թե Վ. Առաքելյանը ինչքան հստակորեն է դրանք տարբերակում. «Հնչյունական այն միավորը, որ տվյալ լեզվով խոսող հանրության համար ընդհանուր է, հասարակականորեն գիտակցված ու պատմականորեն արժեքավորված, կոչվում է *հնչույթ*, իսկ հնչույթի արտաբերման մասնակի ու անհատական հազարավոր դրսևորումները կոչվում են *հնչյուններ*»[7]:

---

4 Տե՛ս Գ. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդները հայերենում: Ստուգաբանություններ՝ «Անիծ», «Մորմ», «Խլեզ»., Երևան, 1927:

5 Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի ծագման հարցի շուրջը (ռուսերեն), Երևան, 1946::

6 Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 43:

7 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, ԳԱ հրատ., Երևան, 1955, էջ 11:

Հասկանալի է, որ յուրաքանչյուր լեզու ունի *անսահմանափակ թվով հնչյուններ* և միայն *սահմանափակ թվով հնչույթներ*, որոնք տվյալ լեզվով խոսող հասարակության կողմից արժեքավորված և ընդունված հնչյունների պատկերներն են մարդկանց ուղեղում, որոնց գրային արտահայտությունը *տառերն են*: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր գրավոր լեզվի հնչույթների քանակը խիստ սահմանափակ է՝ հայերենում՝ 39, ռուսերենում՝ 32, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներում՝ 26-ական, էստոներենում՝ 25, դասական լատիներենում և իսպաներենում՝ 23-ական, և այլն: Մինչդեռ ամեն մի հնչույթի համար կան բազմաթիվ հնչյուններ: Նույնիսկ անզեն ականջի համար շատ որոշակիորեն ընկալելի է, որ նույն հնչույթը ոչ միայն տարբեր մարդկանց կողմից տարբեր հնչյուններով է արտաբերվում, այլև նույն մարդն էլ նույն հնչույթը բառի տարբեր դիրքերում տարբեր հնչյուններով է արտաբերում: Այսպես՝ դաս, դուռ, դեռ, դերասան, դպրոց, դպիր, գրադարան, հինգերորդ, էպիզոդ բառերում նույն «դ»-ն տարբեր արտաբերումներ ունի՝ մի դեպքում կոշտ, մյուս դեպքում՝ կիսակոշտ, մի այլ դեպքում՝ փափուկ (նայած ինչ հնչյունների է նախորդում կամ հաջորդում), իսկ *էդիկ* և *դիրեկտոր* բառերում այդ նույն «դ»-ն այնքան է փափկանում, որ շատերի կողմից «ձ» է արտաբերվում (էձիկ, ձիրեկտոր): Կամ «տ» խուլ հնչյունը ունի մեկ «տ» հնչույթ, բայց տարբեր բառերում՝ հնչյունաշղթաներում նույնպես տարբեր արտաբերումներ ունի՝ տառ, տուն, տոն, տեր, համբերատար, կամընտիր, աստվածատուր, իսկ *Տիգրան* և *մատյան* բառերում այնքան է փափկանում, որ ծգտում է «ծ»-ի (Ծիգրան, մածյան):

Հայ լեզվաբանության մեջ նորություն է նաև Ղափանցյանի ներմուծած *ձևույթ* լեզվաբանական հասկացության ըմբռնումը: Նա առաջին լեզվաբանն էր, որ հայ լեզվաբանական գրականության բառագիտության բաժնում որոշակիորեն սահմանազատեց լեզվական *ձև* և *ձևույթ* հասկացությունները՝ իրենց իմաստային և գործառական (ֆունկցիոնալ) առանձնահատկություններով:

Ղափանցյանը, կատարելով արտասանվածքի հատվածային ուսումնասիրություն, բաղադրյալ բառերը (ածանցավոր, բարդ և բարդ-ածանցավոր) նույնպես ենթարկում է ձևույթային վերլուծության և բառի մեջ առանձնացնում հիմնական ու երկրորդական ձևույթներ, որպես լեզվական առանձին իրողություններ (կատեգորիաներ): Հիմնական ձևույթները (մորֆեմա), որոնք բառի հիմնական իմաստն են արտահայտում, Ղափանցյանը կոչում է *արմատ*, իսկ երկրորդական ձևույթները բաժանում է երկու տեսակի. «...առաջինը ցույց է տալիս որոշ սահմանագծում այդ հիմնական գաղափարի (իմա՝ արմատի- Խ. Բ.) համար նրա սահմանորոշումը կամ կոնկրետավորումը ըստ նոր իմաստի, և դրանք կոչվում են *բառաստեղծական* կամ *բառակազմական* (ընդգծումը հեղինակինն է) երկրորդական ձևեր (այսինքն՝ ածանցներ – Խ. Բ.), իսկ երկրորդը ցույց է տալիս բառի հարաբերությունը կամ կապը նախադասության մեջ այս կամ այն բառի հետ, մատնանշում է բառի, այսպես ասած, շարահյուսական դերը (ֆունկցիան), բառի կապական հարաբերությունները»[8] (այսինքն՝ վերջավորություններ – Խ. Բ.):

Մասնագետների համար դժվար չէ նկատել, որ Ղափանցյանը դեռ 30-ական թվականներին ինչքան ճիշտ է սահմանել *ձևույթի* տեսությունը և ինչքան ճիշտ է դրանք իրարից սահմանազատել. հարցեր, որ լեզվաբանության զարգացման այս բարձր մակարդակում քննություն են բռնել և ընդունված են լեզվաբանական նորագույն գրականության մեջ, լավագույն դեպքում՝ անունների փոփոխությամբ՝ առաջին տեսակը՝ հիմնականը կոչելով *անկախ ձևույթ*, երկրորդ տեսակները՝ *կախյալ*, որոնք նույնպես երկու տեսակ են[9]: .

---

[8] Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 211:

[9] Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 151-158:

Հայ լեզվաբանության բառագիտության բաժնում նորամուծություններ են նաև իմաստաբանության (սեմանտիկա) հետ կապված մի շարք հարցեր, որոնց հիմնադիրը ակադեմիկոս Ղափանցյանն է, և որոնք այժմ դարձել են դասագրքային ճշմարտություններ և տեղ գտել բուհական ծրագրերում ու գրեթե բոլոր դասագրքերում: Այսպես՝ Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունից» ենք ժառանգել բառերի իմաստափոխությունների հետ կապված հետևյալ դեպքերը՝

*Մետաֆորա*.– բնությունը քնել է, տերևները փսփսում են*:

*Մետոնիմիա*.– երկիրը զարթեց, երեք բաժակ խմեցի, շատ է կարդում Շեքսպիր:

*Սինեկդոխա*.– քսան գլուխ ոչխար, հարյուր դրոշի նավատորմիղ, ռուսը եկավ Կովկաս (փոխանակ՝ ռուսները եկան):

*Բառիմաստի նեղացում*.– *հավ* ընդհանրապես թռչուն է նշանակել, իսկ հիմա՝ թռչունի միայն մի տեսակը՝ *ընտանի*, իսկ ֆրանսերենում այն ձեռք է բերել միայն սագ (oil) իմաստը:

*Բառիմաստի ընդլայնում*.– Նախորդ դեպքի հակառակն է. kraska բառի արմատը *կարմիրն* է և սկզբնապես նշանակել է միայն *կարմիր ներկ*, իսկ այժմ բոլոր գույների ներկերը kraska են կոչվում: Նույնն էլ՝ чернила միայն *սև գույնի* թանաք է եղել (մուրաքյափ), իսկ այժմ, բոլոր գույնի թանաքները: Կամ հնում *մեհեան* նշանակել է Միհր աստծու կռատունը, իսկ հետո՝ ընդհանրապես *կռատուն*, *բագին* և այլն:

*Բառիմաստի շրջում* ենթաբաժնում բերում է բազմաթիվ բառեր տարբեր լեզուներից, երբ բառի սովորական նշանակությունը մեկ կամ մի քանի ընդհանուր հատկանիշներով զուգորդվում է մի նոր նշանակության հետ՝ պահելով բառի ձևական արտաքինը[10]:

Հայերենի շարահյուսության համակարգում նույնպես Ղափանցյանը ներդրումներ ունի: Նա գրում է, որ ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ կա նախադասության ավելի քան 130 բնորոշում, և դրանց կողքին բերում է իր ինքնատիպ սահմանումը, որում առկա է *ստորոգման հատկանիշը* (դիմավոր բայով հատկանիշի առարկային վերագրելը), և որն այժմ ընդունված է ժամանակակից լեզվաբանության կողմից:

Այսպիսով՝ ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանի գիտական ժառանգությունը հայոց պատմության ու հայոց լեզվի տեսության վերաբերյալ լուրջ ներդրում է հայագիտության մեջ՝ ի բացառյալ ժամանակի ոգուց բխող որոշ սխալներ:

---

* Տերմիններն ու օրինակները Ղափանցյանինն են:

10 Տե՛ս Գ. Ղափանցյան, Նշվ. աշխ., էջ 332-338:

*ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

# ՀՈՂՄԱԿՈԾ ՑՈՂՈՒՆՆԵՐ

*«Երկեւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւիտեան. դատաստան Տեառն ճշմարիտ է, եւ արդար ի նոյն»:*

*(Սաղմոս ԺԸ 10)*

## ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

*«Դու ես համբերութիւն իմ, Տէր, Տէր, յոյս իմ ի մանկութենէ իմմէ: Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ Դու ես ապաւէն իմ, եւ առ ի Քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ»:*

*(Սաղմոս Հ 5-6)*

Վերջապես եկավ վախճանը համայն աշխարհի և, մասնավորապես, հայ ժողովրդի համար ամենաահավոր ու ամենասարսափելի դարաշրջանի՝ քսաներորդ դարի: 199? թվական: Երևան: Ամառային արևակեզ շոգ օր: Գետինն անգամ այրվում էր Արևի մոլեգին տապից: Ստվերում ջերմաստիճանը հասնում էր ավելի քան քառասունի: Չնայած եղանակի այս դիվագնությանը, քաղաքը կարծես թե լիարժեք աշխուժության, եռուզեռի մեջ էր: Վերջապես տապալվել էին մարդկության համար չարիք «ժողովրդավարական», բռնատիրական կարգերը: Հայաստանը, իր շուրջ քսանինը հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա, իրեն հռչակել էր ազատ ու անկախ՝ երրորդ Հանրապետությունը հայ ժողովրդի հազարամյակների պատմության վերջին հարյուրամյակի ընթացքում: Հասարակական կարգերի փոփոխման հետ միաժամանակ կրկին գլուխ էր բարձրացրել ընչազրկությունը, աղքատությունը... Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հարևան ժողովուրդների կողմից կրկին հայտնվել էր շրջափակման մեջ, կտրվել արտաքին աշխարհից: Հայ ժողովրդի ամենահուսալի բարեկամ Ռուսաստանի հետ ցամաքային կապը կտրվել էր, մնացել էր միայն օդայինը: Իսկ այդ հանգամանքը իր հետ բերում էր շա՜տ ու շատ բարդություններ և դժվարություններ...

Ինչևիցե, վերադառնանք ամառային մեր այս շոգ օրվա նկարագրությանը:

Դատարանի ընդարձակ դահլիճ՝ իր շուրջ հիսուն նստատեղերով: Սրահի արևելյան՝ ճակատային մասում, մի փոքր ավելի բարձր հարթակի վրա, հարթակ, որն ընդգրկում էր սրահի ամբողջ լայնքը, տեղադրված էին երեք բարձր թիկնակներով գահավորակներ, կենտրոնինը՝ ավելի բարձր թիկնակով, որի վերին մասում քանդակված էր Հայաստանի Հանրապետության գերբը: Կենտրոնի գահավորակի տեսքից ակնհայտ էր, որ այն գերիշխողն է ողջ դահլիճի, ուրեմն և՝ նրա վրա բազմողը նիստի նախագահողն է, բարձր իշխանավորը դատական գործընթացի: Մյուս երկուսը նախատեսված էին դատական ատենակալների

համար: Գահավորակների դիմաց կար մի սեղան՝ շուրջ հինգ մետր երկարությամբ, վրան գցված մուգ կարմիր թավշյա զարդանախշ ծածկոց: Սեղանի աջ և ձախ մասերում դրված էին մեկական սովորական թիկնաթոռներ, աջինը՝ նախատեսված դատախազի, իսկ ձախինը՝ դատական նիստի քարտուղարուհու համար: Ճիշտ քարտուղարուհու դիմաց, սակայն դահլիճի հարթակի վրա, տեղադրված էր մի աթոռ, որը շրջափակված էր փայտյա վանդակապատով: Վանդակապատի դիմաց դրված էր ևս մի աթոռ՝ իր սեղանով, որը նախատեսված էր դատապաշտպանի համար: Սրահի հենց կենտրոնում, նախագահողի դիմաց, տեղադրված էր մի ամբիոն՝ նախատեսված վկաների և ցուցմունք տվողների համար:

Դահլիճի բոլոր աթոռները վաղուց արդեն զբաղեցված էին: Մեղադրյալի աթոռին նստած էր յոթանասունին մոտ մի ալեհեր տղամարդ՝ նիհարավուն, սակայն պատկառազդու տեսքով: Վանդակապատի աջ և ձախ կողմերից նրան հսկում էին երկու զինված ոստիկաններ: Դատապաշտպանի աթոռին տեղավորվել էր շուրջ քառասուն տարեկան մի նիհարավուն տղամարդ:

Դահլիճը լու՜ռ սպասումի մեջ էր: Նրանց համակ ուշադրությունը սևեռված էր մի կետի՝ գահավորակների ետևի մուտքին:

Առավոտյան ճիշտ ժամը 10-ին ներս է մտնում քարտուղարուհին՝ երիտասարդ, գեղեցկատես մի կին, և բարձրաձայն հայտարարում.

-Ոտքի՛, դատարանն է գալիս:

Աղմուկով բոլորը ոտքի են կանգնում, և մի ակնթարթ հետո կրկին քա՜ր լռություն է տիրում: Այդ մեռելային լռության մեջ գահավորակների ետևի մուտքից ներս են մտնում մի կին և երեք տղամարդ: Նրանք բոլորն էլ բռնած ունեին մեկական թղթապանակ, սակայն կնոջ ձեռքինը հաստափոր մի զանգված էր, որի պարունակությունն արդեն իսկ հայտնի էր բոլորին: Չորսն էլ իրենց հագին ունեին սև, խորհրդավոր թիկնոցներ և գլխներին՝ նույնպես սև բազմանկյուն թասակներ: Կինը, որը բազմեց նախագահողի գահավորակին, կլիներ շուրջ հիսուն տարեկան՝ ալեխառն վարսերով: Նիհարավուն էր, բայց և խիստ բարետես: Տղամարդկանցից երկուսը բազմեցին ատենակալների թիկնաթոռներին, իսկ մեկը՝ դատախազի աթոռին: Առաջին երկուսը խիստ համեստ տեսք ունեին, իսկ երրորդը չափազանց ինքնավստահ հաղթանդամ անձնավորություն էր: Վերջինիս այտերի կարմրությունից թվում էր, թե ուր որ է, արյունը պետք է դուրս ժայթքի այնտեղից:

Նախագահողը մի հայացք է նետում դահլիճին, քարտուղարուհուն իր մոտ կանչում, պարզելուց հետո դատական նիստի բոլոր մասնակիցների ներկայությունը, երեք անգամ փայտյա մուրճով հարվածում սեղանին դրված սալիկին և հանգիստ, սակայն յուրատեսակ ազդու տոնով սկսում խոսել.

-Երեկվա դատական նիստն ընդհատվեց՝ ամբաստանյալի առողջական վիճակի անբավարար լինելու պատճառով:- Մի փոքր դադար տալուց հետո,- Դատական նիստը շարունակվում է:

Տիրում է քար լռություն: Դահլիճի համակ ուշադրությունը սևեռվում է նախագահողին: Վերջինս բաց է անում իր հաստափոր թղթապանակը, թերթում մի քանի թերթ և այնուհետև շարունակում խոսել.

-Ամբաստանյալ Մուրադ Վազգենի Աբրահամյան, երեկվա նիստում ես հայտարարեցի, որ ձեզ վրա դատական գործ է հարուցված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 99 հոդվածի երկրորդ մասով՝ կանխամտածված մարդասպանության համար:

Մեղադրյալը կտրուկ ոտքի է կանգնում և բարձրաձայն ասում.

-Ես մարդ չե՛մ սպանել, ես մի փողոցային վայրի շո՛ւն եմ սատկացրել,- ու նորից կտրուկ նստում:

-Ձեր արտահայտությունների մեջ եղեք չափավոր, այստեղ դատարան է,- ձայնը բարձրացնելով ամբաստանյալին է դիմում դատավորը:

-Մեծարգո նախագահ, թույլ տվեք երկու խոսք,- դատավորին է դիմում դատապաշտպանը:

-Խոսե՛ք,- կտրուկ ասում է նախագահը:

-Երեկվա սրստից հետո, իմ խնդրանքով և Ձեր բարձր թույլտվությամբ, դատաբժշկական հանձնաժողովը ստուգեց և գտավ, որ ամբաստանյալի առողջական վիճակը բավարար չէ: Նա գտնվում է խիստ ջղագրգիռ վիճակում,- վերցնելով սեղանի վրայից մի թուղթ, մոտենում է նախագահին և դնում նրա առջև,- ահա բժշկական հանձնաժողովի եզրակացությունը:

-Դատապաշտպանը ճիշտ չի՛ ասում: Ես կատարելապես առողջ եմ և ամենայն լրջությամբ գիտակցում եմ իմ կատարածը: Եթե ես թույլ եմ տվել հանցանք, ապա պատրաստ եմ կրելու պատիժս օրենքի ողջ խստությամբ:

Դատապաշտպանը վերադառնում է իր տեղը և նստում: Ուշի-ուշով աչքի անցկացնելուց հետո ներալացված փաստաթուղթը, նախագահը շարունակում է խոսել.

-Համաձայն դատաբժշկական սույն եզրակացության, ես պարտավոր եմ ժամանակավորապես հետաձգելու դատական գործընթացը:

-Ես կտրականապես բողոքում եմ,- ոտքի կանգնելով ասում է մեղադրյալը:- Ես այժմ այնքա՛ն առողջ եմ, հանգիստ և հավասարակշիռ, որքան երբեք չեմ եղել իմ ողջ կյանքում: Խորապես կշռադատելով իմ ներկա էությունը, կարծում եմ, որ ես ի վիճակի եմ բացարձակապես հավասարակշիռ վիճակով մասնկցելու դատական գործընթացին: Մի բան ինձ համար պարզ է և գերագնահատելի, որ ես իմ կյանքի մայրամուտն ապրելու եմ լիարժեք մարդ որակումով:

-Բայց դուք, համաձայն դատաբժշկական հանձնաժողովի սույն եզրակացության, ի վիճակի չեք հավասարակշիռ և սթափ վիճակով սպառիչ պատասխան տալու մեր հարցերին,- շարունակում է նախագահողը:- Քիչ առաջ ձեր կողմից դրսևորված վարքագիծը մեզ կրկին լուրջ խորհելու տեղիք է տալիս:

-Քաղաքացի դատավոր, ներողամիտ եղեք համառությանս համար և,- գլուխը մի փոքր առաջ խոնարհելով,- հարգեք այս ալեհեր գլուխը: Ես ամենայն լրջությամբ խոստանում եմ իմ պատասխաններով լիարժեքորեն բավարարել ձեր բոլորի կողմից տրվող հարցերին,- լրացնելով իր միտքը, կրկին իր տեղն է նստում մեղադրյալը:

Նախագահողը, ատենակալների, դատախազի և դատապաշտպանի՝ դատական նիստը շարունակելու բարձրաձայն համաձայնությունը ստանալուց հետո, դիմում է մեղադրյալին.

-Ամբաստանյալ Մուրադ Վազգենի Աբրահամյան, համառոտակի ներկայացրեք ձեր կենսագրությունը:

Մեղադրյալը մի պահ մնում է նստած՝ կարծես չլսելով նախագահի խոսքը: Այնուհետև վեր է կենում տեղից, ձախ ձեռքի ափը քսում ճակատին՝ իբր հարդարելու համար մազերը, որն ըստ էության մի անկանոն, բռնազբոսիկ շարժում էր, որ ավելի շուտ բնորոշում էր նրա մտատանջությունն ու մտախռովությունը, քան իմաստավոր վարմունքի դրսևորում, և ասում.

-Քաղաքացի դատավոր, առաջին խնդրանքս է՝ չսահմանափակել ինձ ժամանակի առումով, և երկրորդ՝ չմիջամտել: Կենսագրությունս ներկայացնելուց հետո, ես խոստանում եմ ազնվորեն, առանց կեղծիքի պատասխանել ձեր բոլոր հարցերին:

-Ընդունված է ձեր խնդրանքը,- սիրով իր համաձայնությունն է տալիս նախագահողը:

Մի պահ մեղադրյալը խորազնին հայացք է գցում ողջ դահլիճի վրա, այնուհետև խոր շունչ քաշում, կենտրոնացնում իր մտքերը և ապա, առանց իսկ ուշադրություն դարձնելու դահլիճի վրա, հանդարտորեն սկսում խոսել:

-Ծնվել եմ 1930 թվականի դեկտեմբերի 5-ին, ձմեռնամուտին: Ճիշտ նույն օրն էր ծնվել նաև ավագ քույրս՝ Անահիտը, բայց միայն երկու տարի ինձանից շուտ: Ծնողներս պատմում էին, որ իմ ծննդյան օրը մեջ ընդ մեջ տեղացել է և՛ անձրև, և՛ ձնախառն անձրև, մոլեգնել բուք ու քամի, երբեմն բացվել է եղանակը և պայծառ Արևը դուրս եկել ու կարճ ժամանակով ջերմացրել բոլոր կենդանի արարածներին: Նույնիսկ իմ հիշողության մեջ այդպիսի տարօրինակ և խելացնոր մարտ ամիս չի եղել, ինչ մնաց որ՝ դեկտեմբերին: Ես այդ երևույթը բացատրում եմ նրանով, թեև դա իմ սուբյեկտիվ մոտեցումն է, որ երևի բնությունը խիստ զայրացած էր իմ՝ լույս աշխարհ գալու կապակցությամբ: Մոլեգնել էր բնությունը և իր աներևակայելի զայրույթն անխնա թափում էր շրջապատի, բոլոր կենդանի արարածների վրա: Լա՛վ, ասենք թե ես անարժան էի լույս աշխարհ գալու՝ ապագա կանխատեսելի մեղսալիցության համար, սակայն աստվածաստեղծ մնացյա՞լ էակներն ինչ հանցանք էին գործել և կամ ինչ մեղսազանցություն ունեցել ամենակարող Աստուծո հանդեպ, որ բնությունն անխնա իր զայրույթն էր թափում նրանց վրա:

Ինչևիցե, բնակլիմայական այս ոչ օրինաչափ երևույթը խի՛ստ, չափազանց խորը և տարողունակ խորհելու տեղիք է տալիս...

Մկրտությանս արարողությունը կատարվել է Երևանից շուրջ երեք կիլոմետր հարավ գտնվող Նորագավիթ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցում: Թեև այդ ժամանակ արդեն իշխանությունների կողմից Եկեղեցու նկատմամբ ժխտողական և անաստվածային դիրքավորումը խոր արմատներ էին գցել մեր մի բուռ դարձած Հայրենիքում, սակայն բարեպաշտ ծնողներս անտես էին առել կրոնի նկատմամբ այդ չարաբարո դիրքավորումը և ինձ մկրտել: Ես չգիտեմ, թե ով է եղել ինձ մկրտող հոգևորականը՝ ո՛ր քահանան և կամ Եկեղեցու ո՛ր կուսակրոն սպասավորը: Մի բան միայն հավաստի գիտեմ, որ կնքահոր պարտականությունները սիրով ստանձնել է մորաքրոջս ամուսինը, տատմեր Աղավնիի որդին՝ Վարդգեսը: Հենց տատմեր Աղավնին էլ քառասուն օր առաջ ընդունել էր իմ ծնունդը:

Ծնունդ-մկրտությունիցս հետո հազիվ թե մեր հարկի տակ կազմակերպված լինեն չափավոր, համեստ մի խնջույք, որովհետև ժամանակներն այլևս այլ ընթացք էին ստացել. ժխտվում էին բոլոր ազգային-եկեղեցական սովորույթները: Սկսվել էր նաև կոլեկտիվացման հետևողական գործընթացը: Պետականացվում էին, կոլեկտիվացվում բոլոր շարժական և անշարժ սեփականությունները: Մարդկանց խստագույնս արգելված էր ունենալ ոսկեդրամ: Իսկ ովքեր գաղտնի կերպով թաքցնում էին այն ու չէին ցանկանում հոժարակամ հանձնել պետությանը, հայտնաբերվելու դեպքում քրեորեն խստագույնս պատժվում էին: Ահա այս պատճառով հայ մարդը զրկվել էր իր ազգային-եկեղեցական սովորույթներից, որ ավանդվել էր մեզ դարերի խորքից, մի հանգամանք, որ բնորոշում էր ազգային դեմքն ու էությունը: Մարդկանց կարծես կամաց-կամաց ստիպում էին դառնալ խրտվիլակներ: Մարդկանց գիտակցումից ստիպողաբար հանում էին նրա ներաշխարհը, նրա դարավոր հոգեկան հարստությունը:

Ինչևէ՝ չերկարացնենք: Ծնվելուցս հետո, շուրջ երեք տարի, չգիտակցված մանկությունս անց եմ կացրել Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարևանությամբ գտնվող իմ հայրական տանը: Ինչպես ասացի, համարյա սովի շրջան էր: Ծնողներս պատմում էին, թե ինչպես ես, երբ հազիվ երկու-երեք տարեկան եմ

եղել, ճաշի ժամանակ լաց եմ եղել, խռովել միայն այն բանի համար, որ մեծ ափսեն ինձ չեն տվել:

Այդ տան հետ կապված զավեշտական մի պատմություն էր շրջում մեր ընտանիքի շուրջ: Պատմում էին, թե ինչպես մի անգամ, կեսգիշերը բավականին անց, մեր տան ընկուղային հարկից եկող տարօրինակ ձայներից պապս քնից արթնանում է: Նա խիստ աչալուրջ ու արթնամիտ մարդ էր: Սթափվելուց հետո, քնից հանում է նաև կնոջը՝ Սաթենիկին: Օտարոտի այդ ձայներից կռահելով, որ ընկուղային հարկում ինչ-որ բան է կատարվում, պապս վեր է թռչում տեղից, հենց ոտաշորով՝ մի կացին վերցնում ու շտապում դեպի ընկուղ: Այս աղմուկից արթնանում են տան բոլոր անդամները: Արթնանում է նաև հայրս, դուրս գալիս սենյակից, բայց պատշգամբից ներքև չի իջնում և վախվորած մնում: Գողերը, լսելով պապիս ոտքերի ձայնը, որ գալիս էր դեպի իրենց, մի ակնթարթում դուրս են թռչում ընկուղից և փախչում: Պապս հետևում է նրանց և Աստաֆյան փողոցով երկար տարածություն վազում նրանց ետևից, բայց, զգալով, որ անհնար է նրանց ետևից հասնելը, ետ է վերադառնում տուն: Աստիճաններով բարձրանալիս, լսում է որդու՝ Վազգենի ձայնը, որ, ոտաշորով կանգնած պատշգամբում, կամացուկ հարցնում է.

–Հայրի՞կ, կնացի՞ն:

Այս զավեշտական պատմությունը վանեցի մեր փոքրիկ գերդաստանի ավագ սերնդի շուրթերից հնչում էր միշտ, հնչում էր բոլոր ուրախառիթ հավաքների ժամանակ և սրտա՜նց ու քա՜հ-քահ ծիծաղեցնում ներկաներին: Հայրս էլ, արդարանալու համար, պատճառաբանում էր՝ «Ոտաշորով ի, ինչպե՞ս էթի»:

1933 թվականի գարնանային մի օր Սաթենիկի մայրական կողմից հարազատները գալիս են մեր տուն և զրույցի ժամանակ հորդորում Գրիգոր պապին՝ վաճառելու իրենց տունը և նորը կառուցելու Ծիլաչի թաղամասում, Սև ջուկայի մոտ, իրենց բնակարանների հարևանությամբ: Արդեն ավելի քան տասը վանեցի ընտանիքներ դուրս էին եկել Ջառաբի-Խանից, նոր տուն կառուցել այդտեղ և բնակություն հաստատել միմյանց դրկիցությամբ: Հենց նույն տարի էլ, լսելով նրանց հորդորները, Գրիգոր պապս ձեռնարկում է այդ գործին և մինչև աշուն կառուցում մի համեստ մեկ հարկանի տուն՝ իր բոլոր հարմարանքներով. երեք սենյակ, մեկ մեծ պատշգամբ, խոհանոց: Շենքն իր ողջ տարածքով ուներ ընկուղային հարկ և շուրջ 100 քառակուսի մետր բակ:

Եվ այսպես, նույն տարի, աշնանը, մեր ընտանիքը, որ բաղկացած էր ութ շնչից՝ Գրիգոր պապս, Սաթենիկ տատս, հայրս, մայրս, հորաքույրս՝ Քարմիլեն, հորեղբայրս՝ Վարազդատը, ավագ քույրս՝ Անահիտը, և ես, տեղափոխվեց նոր տուն: Այդ տանը մեր ընտանիքն ապրեց երկա՜ր տասնամյակներ՝ ականատեսը և մասնակիցը լինելով հայրենիքի և ընտանիքի հետ կապված երջանկառիթ ու դառնաղետ բազմաթիվ իրադարձությունների:

***

Մանուկ հասակից ես մայրական գուրգուրանք չեմ ստացել: Մայրական գուրգուրանք չեմ ստացել ո՛չ այն պատճառով, որ մայրս հեռու է եղել ինձանից և կամ՝ անտարբեր իմ նկատմամբ: Ո՛չ, քա՛վ լիցի: Այլ միայն այն պատճառով, որ մայրս... երկա՜ր տարիներ անբուժելի հիվանդ էր և գամված անկողնուն: Նա տառապում էր փորուռուցք հիվանդությամբ և շատ հաճախ ամիսներով գտնվում հիվանդանոցային բուժման ընթացքում: Բարի կին էր մայրս՝ Աղավնին, մարդամոտ, ամոթխած, իր հնարավորությունների չափով՝ հոգատար շրջապատի

ճկատմամբ: Անասելի ցավալի էր և խղճահարույց, որ այդ ազնիվ ու առաքինի երիտասարդ կնոջը քստմնելի, ահավոր այդ հիվանդությունը տապալել էր, վերջնականապես զրկել երիտասարդական աստվածաշնորհ վայելքներից:

Ի հակակշիռ մորս այս չափազանց դրական մարդկային բնավորության գծերի, հայրս անհրաժեշտ էր, ինչպես արդեն ճկատեցիք՝ վախկոտ, դրամասեր, նաև՝ դյուրաբորբոք: Հայրական գուրգուրանք ու հոգատարություն նույնպես համարյա չեմ զգացել ողջ կյանքումս: Նախ որ մանուկ հասակում հորս շատ հազվադեպ էի տեսնում, քանի որ մինչ նա աշխատանքից վերադառնում էր տուն, ես վաղո՜ւց արդեն Մորփեոսի գրկում էի լինում: Իսկ խելահաս տարիքում էլ, կենսական, էական զանազան լուրջ հանգամանքներից ելնելով, բազմաթիվ տարիներ զրկված եմ եղել նրա ներկայությունից...

Մանուկ հասակից երեխայի համար առաջին անհրաժեշտ նախապայմանը մայրական և հայրական գուրգուրանք, հոգատարություն, խնամք և, ամենակարևորը, ընտանեկան բարեկիրթ և աստվածահաճո դաստիարակություն ստանալն է, մի բան, որ ինձ մոտ համարյա բաց է մնացել, դատարկ: Ինչո՞ւ եմ ասում՝ համարյա, որովհետև այս բացը չի վրիպել պապիս և տատիս՝ Գրիգորի և Սաթենիկի՝ այդ երկու առաքինի և անձնուրաց անձնավորությունների նվիրյալ ուշադրությունից: Այդ նրանք էին, որ եկան ու լրացրեցին, համարյա լցրեցին այն բացը, դատարկությունը, որ ինչ-ինչ պատճառներով վիճակվել էր ինձ: Այդ նրանք էին, որ իրենց ողջ կյանքը գիտակցաբար և զոհողաբար նվիրաբերեցին հանուն իրենց երեխաների և թոռների անկարիքավոր կյանքի և այնուհետև՝ մարդավայել ապագայի կերտման գործին:

***

Հինգ տարեկանից հաճախել եմ Երևանի Լուսաշխի տան մանկապարտեզ: Ահա հենց այստեղից էլ՝ այս մանկական հաստատությունից ես աստիճանաբար սկսեցի մերձենալ մարդու համար կանխասահմանված կյանքի նախաշեմին: Իսկ մուտք գործել այնտեղ... դեռևս ժամանակ էր պահանջվում:

Լուսաշխի տունը, որ գտնվում էր Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու մոտակայքում, իր ժամանակին երևի թե Երևան քաղաքի մշակութային-մարզական աչքի ընկնող մի հաստատություն էր՝ իր երկհարկ և միահարկ ուղղանկյուն միաձույլ կառույցով, որն ուներ նաև ընդարձակ բակ, որի մի մասը հատկացված էր մանկապարտեզին, որտեղ տեղադրված էին մի քանի համեստ խաղագործիքներ. ճոճանակ, պտտաձող, թվացյալ սուրացող ճոճվող ձիեր, զեբրեր, առյուծներ...

Ահա այստեղ երկու տարի, իմ մանկական պատկերացմամբ հրաշք էակների՝ մանկավարժների և դաստիարակների ջանքերով և աջակցությամբ, ես ձեռք բերեցի կյանքի նախնական ճանաչողություն, սովորեցի արտասանել, երգել, պարել և ամենակարևորը՝ շփվեցի ինձ հասակակից երեխաների հետ և մանկահասակ մտերմություն հաստատեցի դեռևս ինձ անծանոթ շա՜տ ու շատ տղաների և աղջիկների հետ:

Մանկապարտեզ ընդունվելուց հետո հենց նույն տարի, ամռանը, ըստ սահմանված կարգի, մեր մանկապարտեզի բոլոր երեխաները իրենց ամառային հանգիստը մեկ ամսով պետք է անցկացնեին գեղատեսիլ Նորքի մանկական առողջարանում, որ գտնվում էր մեզ ծանոթ Ս. Աստվածածին եկեղեցու անմիջական հարևանությամբ: Ես թեև դժկամությամբ, բայց և այնպես, ծնողներիս և տատիս երկարատև հորդորներից հետո, համաձայնեցի չբաժանվել մանկապարտեզի իմ ընկերներից և նրանց հետ մեկնել առողջարանային այդ օջախ:

Ամառային մի առավոտ Սաթենիկ տատս ինձ տարավ մանկապարտեզ, որի մուտքի մոտ արդեն մեզ էին սպասում մի քանի ավտոբուսներ՝ մեզ՝ երեխաներիս տեղափոխելու Նորքի նշված առողջարան: Բոլոր երեխաները իրենց ծնողների հետ հավաքվել էին ավտոբուսների մոտ: Մինչ ավտոբուսների շարժվելը ես բարձր տրամադրության մեջ էի, բայց երբ հասավ հրաժեշտի պահը, և տատս ինձ ջերմագին համբուրեց բաժանվելուց առաջ, ես ներքուստ մի տեսակ անսովոր անհանգստություն զգացի, իսկ երբ ավտոբուսները շարժվեցին, և երեխաներից մեկը «մայրի՛կ» կանչելով սկսեց բարձրաձայն լաց լինել, իմ ներքին աշխարհը փոթորկվեց, ես չկարողացա զսպել ինձ և անմիջապես սկսեցի ձայնակցել նրան: Ճիշտ է, դաստիարակները մոտեցան մեզ և համոզեցին ու հանգստացրեցին, բայց և այնպես ես առաջին անգամ իմ կյանքում ճաշակեցի դառնությունը մի արտասովոր և անընդունելի իրողության. ես առաջին անգամ իմ մանկական անհոգ օրերը պետք է անցկացնեի առանց ինձ համար այնքա՜ն հարազատ ու քաղցր ընտանիքի անդամների, հատկապես առանց օրնիբուն իմ յուրաքանչյուր քայլին ու շարժումին հետևող Սաթենիկ տատի, որից ես նույնիսկ ժամերով անգամ չէի բաժանվել:

Ինչևէ, կյանքի նորամուտին ես արդեն հասցրեցի ճաշակել չար իրականության առաջին նախազգուշական հարվածը: Ես ստիպված պետք է համակերպվեի արդեն կայացած իրողության հետ և իմ նորաստեղծ ընկեր-ընկերուհիների հետ մեկ ամիս անցկացնեի ինձ համար ոչ ցանկալի, սակայն համաքաղաքային մեծ ճանաչում գտած մանկական այդ առողջարանում:

Առաջին օրը ես հոգեպես քիչ թե շատ խաղաղ անցկացրեցի, սակայն հետագա երկու օրերին ժամանակ առ ժամանակ մեկուսանում էի, թաքուն արտասվում: Այս կարճ ժամանակահատվածում ես արդեն չափազանց խիստ կարոտի զգացում էի ապրում: Անասելիորեն հոգիս տագնապում էր: Երրորդ օրն արդեն իմ համբերության բաժակը լցվեց: Ես արտասվախառն աչքերով, ամոթխածորեն և անհամարձակ մի կերպ մոտեցա իմ դաստիարակչուհուն և խնդրեցի, աղաչեցի, որ ինձ տանեն մեր տուն՝ իմ Սաթենիկ տատի մոտ: Բայց նա փաղաքշական տոնով ինձ ասաց.

-Մի՛ տխրիր, բալիկ ջան, բոլոր նորեկների համար առաջին օրերն այդպիսին են, դու կընտելանաս մեր պայմաններին, և քեզ համար ամեն ինչ շա՜տ լավ կլինի և սովորական, ինչպես ձեր տանը:

Այնուհետև ինձ տարավ մի մեծ նստարանի մոտ, նստեցրեց իր կողքին, շոյելով գլուխս՝ ինձ հետ երկա՜ր զրուցեց: Ճիշտ է, ես ականջ էի դնում նրան, բայց չէի լսում: Չէի լսում, որովհետև իմ միտքն ու հոգին այլ տեղ էր, իմ մտասևեռումը դեպի մեր տունն էր, իմ ծնողները, իմ հարազատները, հատկապես իմ ամենաքաղցր Սաթենիկ տատը:

Հաջորդ երկու օրերին իմ մտածումները գամված էին միմիայն ու բացառապես մի ուղղության. ինչպե՞ս անել, ի՞նչ ելք գտնել՝ մի կերպ այդտեղից դուրս պրծնելու և տուն հասնելու, մի բան, որ իմ ուժերից վեր էր: Հազիվ թե ես կարողանայի գտնել մեր տունը: Միայն աղոտ կերպով հիշում էի ավտոբուսի եկած ճանապարհը: Բայց ես հաստատակամորեն և վերջնականորեն որոշեցի փախչել:

Հինգերորդ օրը, երեկոյան, ես մի կերպ դուրս եկա առողջարանի տարածքից և արագ-արագ քայլերս ուղղեցի դեպի սարն ի վար՝ մեզ բերած ավտոբուսի եկած ճանապարհով: Բավականին հեռացել էի առողջարանից, երբ հանկարծ մի մարդատար ավտոմեքենա կանգ առավ ինձ մոտ, և նրանից դուրս եկավ բարձրահասակ և բարետես մի տղամարդ: Ես մտածեցի՝ վերջ մանկական իմ անմեղ երազանքի իրականացմանը: Եվ չսխալվեցի: Ավտոմեքենայից իջած

տղամարդը քայլերն ուղղեց դեպի ինձ: Նույն ակնթարթին ես թեթևակի ներքին տագնապի զգացում ապրեցի. արդյո՞ք այս մարդը կանխելու է իմ փախուստը: Երբ նա մոտենում էր ինձ, ես փորձ արեցի փախչել, բայց այդ բանն ինձ չհաջողվեց: Տղամարդը մի ակնթարթում հասավ ինձ, բռնեց իմ թևից և շատ սիրալիր տոնով հարցրեց.

-Մանկական առողջարանի՞ց ես:

-Այո, - մի կերպ կարողացա պատասխանել:

-Իսկ ո՞ւր ես գնում:

-Մեր տո՛ւն, - վախվորած և արդեն լացակումած պատասխանեցի ես:

-Իսկ որտե՞ղ է ձեր տունը:

-Չգիտեմ, ներքևում, - ուսերս շարժելով և անորոշորեն ասացի ես:

Այնուհետև բարձրահասակ տղամարդն ինձ բարձրացրեց և նստեցրեց իր ավոմեքենան և վերադարձրեց առողջարան: Ես մտմտում էի՝ ինչպե՞ս այս մարդը ճանաչեց ինձ: Բայց ես չէի կռահում մի պարզ հանգամանք, որ ես ինձ վրա կրում էի նույն այդ առողջարանի արտահագուստը: Եվ այդ բարձրահասակ տղամարդն էլ նույն այդ առողջարանի տնօրենն էր: Ինձ մատնել էր իմ արտահագուստը:

Առողջարան վերադառնալուց հետո, տնօրենն ինձ տարավ իր առանձնասենյակ, իր մոտ կանչեց իմ դաստիարակչուհուն, և նրանք երկուսով միասին սկսեցին ինձ հորդորել, համոզել, որ ես շարունակեմ մնալ առողջարանում՝ պատճառաբանելով, որ հետագայում իմ օրերը շատ ուրախ կանցնեն: Բայց ես, հեկեկոցս զսպելով, թախանձագին խնդրեցի, աղաչեցի նրանց՝ ինձ տանել մեր տուն: Իմ համառ պնդումներից վերջնականորեն համոզվելով իրենց ջանքերի անպտուղությունը, տնօրենը դիմեց դաստիարակչուհուն.

-Տիկին Շուշան, վերցրեք Մուրադի բնակավայրի հասցեն և այսօր, երեկոյան, անպայման իմաց արեք նրա ծնողներին, որ գան:

-Շատ բարի, - սիրալիր պատասխանեց դաստիարակչուհին:

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Գրիգոր պապս և Սաթենիկ տատս արդեն ինձ մոտ էին, առողջարանում: Նրանք նույնպես սկզբում փորձեցին ինձ համոզել մնալ առողջարանում, բայց ես անդրդվելի էի: Տեսնելով իմ կարոտակեզ վիճակը, Սաթենիկ տատս կտրուկ դիմեց ամուսնուն.

-Մենք անմիջապես պիտի մեր քյորփին տանենք, ես ինոր չեմ թողնի էստեղ:

Գրիգոր պապս, ելնելով իմ վիճակից, անմիջապես տվեց իր համաձայնությունը և ձեռնամուխ եղավ առողջարանի տնօրենության հետ իմ վերադարձի կարգադրություններին:

Երկու ժամ հետո մենք արդեն տանն էինք: Իմ երջանկությունն անչափելի էր: Վերջապես ես մեր տանն էի, իմ հարազատների, իմ քաղցր Սաթենիկ տատի մոտ: Ինձ թվում էր, թե ես երկար, շատ երկա՜ր ժամանակներ էր, ինչ բացակայել էի մեր տանից, իմ հարազատներից:

(Շարունակելի)

*Նվիրվում է երջանկահիշատակ Վազգեն Ա-ի մահվան 3-րդ տարելիցին*

***ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒՔԵԱՆ***

# «...ԵԹԷ ՈՉ ՃԱՄԲՈՐԴ ՄԻ ԱՐԻ...»

*«Մարդը ի՞նչ է, եթէ ոչ ճամբորդ մի արի...»*

*(Վազգէն Ա Հայրապետ)*

*Իրիկնային ժամերգութիւնը վերջացաւ: Քանի մը տարեց գիւղացիներ էին աղօթքի հետեւողները: Ետ-ետ քայլերով ու խաչակնքելով ելան եկեղեցիէն: Տէր Սարգիսը նախ ճրագները մարեց, ապա հանեց զգեստը ու կղպեց եկեղեցիին դուռը:*

*Բակին մէջ, նախապէս ժամկոչին տրամադրուած սենեակը եօթը տարիէ ի վեր իրեն կը պատկանէր: Այս գիւղի եկեղեցիին մէջ ժամկոչն ալ ինք էր, լուսարարն ալ, դպիրն ալ:*

*Ամենօրեայ սովորութեան համաձայն, բակին երկաթեայ դռնէն դուրս ելաւ ու նստաւ իր բազկաթոռին մէջ: Ինքնատիպ բազկաթոռ մըն էր ան: Ժամուն պատին քով սօսի մը կար, որուն կոճղին քանի մը տախտակներ գամելով սարքած էր այդ բազկաթոռը: Նստաւ ուրեմն իր բազկաթոռին մէջ: Երեկոյեան այս ժամուն վերջալոյսի ճառագայթներ կ'իյնային հոն: Սօսիին շուքին տակ որքա՜ն հաճելի էր այդ շողերուն լոյսը վայելել:*

*Միշտ նոյն մարդիկը կ'անցնէին այս ճամբէն: Հարեւան գիւղի մահմետական ժողովուրդը այս ժամուն շուկայէն կը դառնար: Իր գիւղացիներուն ալ արտէն վերադարձի ժամն էր: Երիտասարդները՝ ոչ, բայց տարեցները անպայման կը բարեւէին գիւղին տէրտէրը: Անոնք իրենց յիշած ամենահին օրէն ի վեր հոս տեսած էին Տէր Սարգիսը: Ոմանք կը կարծէին, թէ ան միշտ հոս կը մնայ, այս սօսիին կոթնած: Նոյնիսկ պառաւներու շշուկին համաձայն, տարեց տէր հօր առողջութեան գաղտնիքը այդ սօսիին շուքին մէջն էր:*

*Յետոյ կ'անցնէր իմամը: Ան կը խուսափէր բարեւելէ: Գետնի քարերը համրելով կ'անցնէր ժամուն առջեւէն: Տէր Սարգիսն ալ նստած տեղէն կը նայէր իմամին: Երբեմն իմամը անգիտակցաբար այդ կողմ կը նայէր ու տէր հօր նայուածքը նշմարելուն պէս, կրկին կը սկսէր համրել գետնին քարերը՝ ձգած տեղէն:*

*Թաղապետը թրաքթէորով կը վերադառնար արտէն, երկու տղաքը երկու քովերը առած: Փոշիին, մազութին, մուխին ու շարժակի աղմուկին կ'աւելնար նաեւ իր բամբ ձայնը: Ամէն գիշեր այսպէս բացառիկ խանդավառութեամբ կը բարեւէր տէր հայրը, կարծես քառասուն տարուան կարօտ կ'առնէր:*

*Այս անցորդներուն մէջ իր հարազատ բարեկամը՝ գառնարած Վէլին էր: Գիւղին Չոպանը ժամուն առջեւ հասնելուն պէս այլեւս կը թողուր հօտը անտէր: Հոնկէ վերջ անասունները կը գտնէին գոմերու ճամբան: Ջանգակներու աղմուկով տնեցիները դուրս կուգային ու տէր կ'ելլէին իրենց մալերուն: Վէլիէն առաջ երկու շուները կը հասնէին Տէր Սարգիսին քով: Բարի բարի կը նստէին ոտքերուն տակ ու կը սպասէին իրենց ամենօրեայ բաժնին: Տէր հայրը միշտ ուտելիք բան մը պատրաստած կ'ըլլար այդ շուներուն համար: Վէլին ալ օրուան յոգնութիւնը առնելու առաջին հանգրուանը կը համարէր սօսիի ծառին այդ բազկաթոռը:*

Որոշ տարիքէ մը վերջ ամէն մարդ տարեկից կը նկատուի։ Իրականութեան մէջ Զուպան Վէլին եօթանասուններեք տարեկան էր. իսկ Տէր Սարգիսը ութսունըվեց։ Սակայն գիւղին մէջ շատ քիչեր կրնային գիտնալ թէ ո՞վ աւելի տարեց է այդ երկու բարեկամներէն։

Տէր Սարգիսին երկու աղջիկները տարիներ առաջ ամուսնացած ու մեծ քաղաք գաղթած էին։ Տասնըմէկ տարի առաջ ալ կինը մեռած էր։ Ինք տեղացի էր, այս գիւղը ծնած, այս գիւղը մեծցած էր։ Այս գիւղի նախակրթարանը ուսանած, սա ընկուզենիի ճամբէն զինուոր գացած էր։ Միայն բանակի ծառայութեան ընթացքին հեռու մնացած էր գիւղէն։ Իր մանկութեան օրերուն հայկական գիւղ մըն էր այս։ Ութսուններեք բնակարաններով բազմամարդ գիւղ մը։ Շատեր գաղթած են այսօր, մեծ քաղաք հաստատուած։ Տասնըվեց տուն հայութիւն մնացած է։ Քսաններեք տուն ալ տեղացիներ հաստատուած են։ Տասնըվեց հայ տուներուն մէջ տարեցներ կ՚ապրին միայն։ Գիւղին դպրոցը շատոնց փակուած է։

Այս անապատացած միջավայրին կենդանի մխիթարանքներուն գլխաւորն է Զուպան Վէլին։ Իսկ անշունչ մխիթարութիւնը՝ քանի մը շաբաթը անգամ մը եկող օրաթերթերն են և ԱԿԱ Ռատիոյի ընկալուչը։

Երբ հովիւն ալ կը մեկնի իր տունը, Տէր Սարգիս իր այդ անշունչ ընկերներուն հետ կը փարատէ իր առանձնութիւնը։

Օրաթերթերը շաբաթական հերթականութեամբ կ՚ուղարկուին մեծ քաղաքէն գիւղ։ Շատ անգամ մէկ հատ իսկ նամակ եկած չ՚ըլլար գիւղ։ Այն ատեն ցրուիչները կը ծուլանան Տէր Սարգիսին լրագիրներուն համար մինչև գիւղ գալու։ «Ցնդած ծերուկը թող գայ շաբաթ կարդայ», կ՚ըսեն։ Այսպէս երկու-երեք շաբաթներու օրաթերթերը մէկ անգամէն կը ստանայ։

Վերջին ծրարը երէկ գիշեր վերջացուցած էր։ Երեք շաբաթներու օրաթերթերը անհամար շահեկան լուրերով լեցուն էին իրեն համար։

Իսկ ռատիօ ընկալուչը այս համեստ սենեակին ամենակատարեալ իրն էր, ամենակարևոր և ամէնէն անհրաժեշտ իրը։ Առանց սեղանի կրնար ճաշել, առանց աթոռի կրնար նստիլ, առանց անկողնի կրնար քնանալ։ Բայց առանց այդ ռատիօ ընկալուչի գիշեր մը անցընել, ամենամեծ տառապանքը կ՚ըլլար իրեն համար։ Ձեռագործ ծածկոց մը ունէր այդ գործիքը՝ վրան նկար մը նաշխուած և կատարեալ անթել մը, թէքնիքական տուեալներով սարքուած։ Հիւսիս արևելք - հարաւ արևմուտք ուղղութեամբ լար մը պրկած էր զանգակատան ու սօսիի ծառին միջև։ Այդ երկայնութեան տասնըվեց մեթրնոց հատուածը երկու ծայրերէն անջատած էր վատ հաղորդիչ յախճապակիներով։ Այդ տասնըվեց մեթրնոց լարէն ալ գիծ մը առած էր՝ գործիքին կապուող։ Այս տեղեկութիւնները ընկալուչին բացատրական պրակէն սորված ու սարքել տուած էր Բիւզանդին՝ մեծ տղուն։

Գրպանի ժամացոյցով ստուգեց թէ Մօնդէ Գարլոյի հայերէն հաղորդումը կը սկսի։ Այսպէս՝ պաքը կը շրջէր մերթ «Ամերիկայի ձայն»ի, մերթ Մօնդէ Գարլոյի, և մերթ ալ Երևանի ռատիոյի միջև։ Գտաւ կարճ ալիքի վրայ իրեն շատ ծանօթ ձայնը. «Երևանն է խօսում»։

Բոլոր հայկական ռատիօկայաններու հաղորդումներուն կը հետևէր։ Բայց ուրիշ էր տեղը հայրենիքի ձայնին։

«Կռունկ երիտասարդական հաղորդում» որ կ՚ըսուէր, ան իր ութսունըվեց տարեկան հասակով բաժին կ՚առնէր այդ հաղորդումէն։ Եւ այդ հաղորդումը յատկանշող երաժշտութիւնը, բազմաձայն նուագախումբի կատարումով՝ «Կռունկ»ը։

Երևանի ռատիոյի այս հաղորդումը յատկապէս սփիւռքահայութեան համար էր։ Յաճախ խրախուսիչ լուրեր կամ մեկնաբանութիւններ կը լսէր։ Հայրենի երկրին բարգաւաճումը բացատրող ինչ ինչ տեղեկութիւններ։

Սակայն Օգոստոսի տասնութի գիշերուան հաղորդումին վատ անակնկալ մը կը սպասէր Տէր Սարգիսին։ Երևանի ռատիօկայանի խօսնակը կը տեղեկացնէր մահը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինի։ Հայ ժողովուրդի

*«Կաթողիկոս հայրիկ Ժան»ին, «մեր օրերու Սուրբին», մինչև քանի մը տարի առաջուան բացատրութեամբ՝ «Ընկեր Վազգէն Առաջինի» մահուան մասին կը խօսէր Երևանի ռատիօկայանի խօսնակը:*

*Լրատուութենէն յետոյ կենսագրական ծանօթութիւններ տրուեցան Վեհափառ Հայրապետին մասին: Անոնցմէ շատեր նորութիւն չէին Տէր Սարգիսին համար: Այդ գիշեր բացառաբար չսպասեց որ հաղորդումը վերջանայ, անջատեց գործիքը: Ձեռքերուն մէջ առաւ գլուխը ու սկսաւ խորհիլ:*

*Տարեկից էին իրարու: Երկուքն ալ ութսունըվեց տարեկան: Վեհափառ Հայրապետը մօտ օրէն ամբողջացուցած կ'ըլլար իր գահակալութեան քառասուն տարիները: Տէր Սարգիսն ալ քառասուն տարի առաջ քահանայ ձեռնադրուած էր: Երկուքն ալ հայ ժողովուրդը միասնականութեան մէջ երազեցին: Վեհափառը միշտ վառ պահեց Սփիւռքի նկատմամբ իր առաքելութիւնը: Տէր Սարգիսն ալ միշտ վառ պահեց իր նուիրումը Մայր Հայաստանի:*

*Նմանութիւնները միշտ հակասութիւններ կը յիշեցնեն: «Ամէն տեղ հայ կայ» կ'ըսուի: Վեհափառ Հայրապետը գտնուած էր այն բոլոր հողերուն վրայ, ուր հայեր կ'ապրէին: Շրջած էր աշխարհի չորս ծագերը, երկրագունտի հինգ հողամասերը: Անհամար քաղաքներ համբորդած էր հովուապետական այցելութեամբ: Նախագահներու, արքաներու հետ տեսակցած էր: Շատերուն հետ խօսած էր իրենց լեզուով:*

*Տէր Սարգիսը միայն երկու անգամ գացած էր մեծ քաղաք, այդ ալ՝ առողջական պատճառներով: Հայերէնէ ուրիշ լեզու չէր գիտեր, տեղացիներու լեզուով խօսելու իսկ կը դժուարանար: Իսկ իր տեսակցած ամենամեծ անձնաւորութիւնը քանի մը տարին անգամ մը գիւղ այցելող եպիսկոպոսն էր միայն:*

*Օրաթերթերու միջոցաւ տեղեակ էր Վեհափառի հիւանդութեան: Վերջին օրերուն բոլորովին յուսահատ լուրեր լոյս տեսած էին: Սակայն նորէն ալ շատ ցնցիչ էր ռատիոյին լուրը: Հրաշքի յոյս չէր ձգած: Այլևս միայն ողորմութիւն մաղթել կարելի էր:*

*Դարակ մը պատին վրայ ու այդ դարակին մէջ խունկ ու խնկաման: Ելաւ նստած տեղէն, ծածկեց ռատիօ ընկալուչին ծածկոցը: Խունկ դրաւ խնկամանին մէջ ու վառեց: Խաչ հանեց ու անկողնին տակէն դուրս քաշեց փոքրիկ սնտուկ մը: Օրաթերթերէ կտրուած գրութիւններ հաւաքուած էին այդ սնտուկին մէջ: Զատեց Վեհափառին Ս. Ծնունդի ու Զատկի պատգամները, ու սկսաւ վերստին կարդալ:*

***«Այո՛, փոքր ենք համրանքով ու աշխարհի վրայ ցիրուցան, այո՛, ոսկի ու բեհեզ քիչ ունինք, չունինք շքեղ ապարանքներ ու հարուստ գանձարաններ, այսօր մեր եկեղեցին արտաքնապէս անշուք ըլլալ կը թուի և երբեմն ներքին դժուարութիւններու առաջ է կանգնած, սակայն այս բոլորէն վեր, ամէն բանէ աւելին ունինք մենք...»:***

*Այդ ամէն բանէ աւելին ունեցած ըլլալու հաստատ հաւատքը օր մը իսկ չէր պակսած Տէր Սարգիսի մօտ: Իսկ քիչ ու ցիրուցան ըլլալուն ցաւը՝ ան իր մորթին վրայ կը զգար միշտ:*

***«Գարուն է այսօր, սիրելի՛ ժողովուրդ:***

***Զատիկ է այսօր, սիրելի՛ ժողովուրդ:***

***Հա՛յ ժողովուրդ, էր ժամանակ, երբ դուն ալ Քրիստոսի նման խաչդ առած Գողգոթա բարձրացար և մահուան դառնութիւնը ճաշակեցիր, բայց որովհետև սուտին սահմանները նեղ են և անարդարութեան օրերը համրուած՝ դուն ալ մահուամբ մահը կոխեցիր, շղթաներդ փշրեցիր և հոգիդ ազատ թռիչք առաւ, դուն վերածնար նոր ուժերով, նոր յոյսերով և նոր կեանքով:***

***Ինչքա՞ն արցունք. ինչքա՞ն արիւն, ինչքա՞ն աւերակ քու Գողգոթայի ճամբաներուդ վրայ:***

***Տէ՛ր Աստուած, ի՞նչ դժուար եղաւ հայուն համար հայրենիք մը ունենալ այս արևին տակ և այնտեղ խաղաղ ապրիլ ու շինել: Շինել ու ստեղծել և կեանքի փառքը երգել ազատ ու անկաշկանդ»:***

Արցունքի, արեան ու աւերակի կենդանի վկաներէն մէկն եղած էր Տէր Սարգիսը: Եւ օրը օրին հետեւած էր հայրենիքի վերածաղկման: Ի՜նչ մեծ ցաւ էր որ չէր կրնար բաժնել իր ուրախութիւնը և հպարտութիւնը շուրջիններուն, նոյնիսկ հարազատներուն հետ: Երբեմն ծիծաղի նիւթ անգամ կը դառնար իր այդ համակրանքը հայրենիքի նկատմամբ:

«...Այստեղ, մայր հողի վրայ, վերջապէս հայը կը շինէ, կը ստեղծէ իրե՛ն համար: Կը շինէ ի՛ր ներկային ու ոսկի ապագային համար: Այստեղ ոչինչ կը կորսուի, ոչինչ կը պակսի: Ամէն ինչ կը մէկտեղուի, ամէն ինչ կը կուտակուի, ամէն ինչ կ'աճի: Եւ ինչ որ այստեղ կը շինուի, ա՛յդ կը մնայ մեզի միայն:

Հա՛յ մարդ, մանաւանդ դո՛ւն, պանդո՛ւխտ հայ մարդ, և դուն, հա՛յ երիտասարդ, ուր որ ալ գտնուիս, դարձո՛ւր դէմքդ դէպի քու պապերուդ հազարամեայ երկիրը դրախտավայր...»:

Կրկին յիշեց իր երկու աղջիկները: Ամուսնացած ու մեծ քաղաք հաստատուած: «Ուր հաց, հոն կաց» ըսած ու մեկնած էին իրենց ծննդավայրէն: Իսկ հիմա երկիր փոխելու մասին կը խորհէին: Հեռաւոր Ամերիկա գաղթել կը ցանկային: Միթէ հացի՞ համար էր իրօք: Օտար քարքերու այլասերիչ հրապոյրն էր լոկ, որոնց անունը հաց դրած էին:

...«Մենք երբեք պիտի չմոռնինք, մենք երբեք պիտի չտկարանանք, մենք երբեք պիտի չկորսուինք, քանզի իջաւ Յարեան Քրիստոս և իջաւ իջաւ Միածին Որդին ի դաշտն Արարատեան, և փառքին յոյսով լեցուց աշխարհն Հայաստան և պատմութիւնն Հայոց»:

Սոված Հայաստան, սառած Հայաստան, անբախտ Հայաստան, խորհեցաւ: Արտագաղթող հայորդիներու դրախտավայր, կորիզային մտավախութեամբ և ելեկտրական հոսանքի պակասով տանջուած դաշտն արարատեան: Յաւով լեցուն Հայաստան աշխարհ ու պատմութիւն հայոց:

...Հայ ժողովուրդը մահկանացու չէ: Յարութեան յոյսով՝ Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապ իջաւ:

Յարութեան յոյսով ինկան Աւարայրի դաշտին վրայ Վարդանը Կարմիր և իր զինուորները արի:

Յարութեան յոյսով տառապեցաւ ու մարտիրոսացաւ ամբողջ ազգը մեր և հերոսացան ազատատենչ քաջ զաւակները մեր:

Եւ այդ նոյն յոյսով և այդ նոյն տենչով արիւն արցունքով, հազար-հազար անմեղ զոհերով, մեր ժողովուրդը վերջապէս, վերջապէս այո՛, հասաւ մեր օրերուն՝ իր նոր կեանքի այս ապահով ափին, և սկսաւ վերստին շնչել, վերստին ապրիլ, ու ծաղկեցնել հին երկիրը մեր, մայր երկիրը մեր, աչքի լոյսը մեր, Հայաստանը մեր:

...Տարակուսողներ մենք գիտենք որ կան, հեռու ափերուն ցրուած հայոց մէջ, իբրև տատանող ու մարող ճրագներ, կան և այնպիսիներ ափսո՛ս, որոնց ճակատագիրն է ժխտել ու հեգնել, ոչինչ շինել իրենց հայրենի հօր կտուրին տակ, և նոյնիսկ ատել, և նոյնիսկ քանդել և այն ալ երբեմն հոգևոր «բեմի ներքև»:

Տէր Հայրը շատ լաւ գիտէր թէ որոնց կ'ակնարկուի այս տողերով: Օտար լեզու չէր գիտեր թէև, բայց լաւ գիտէր տեղական լեզուով հայհոյանքներ: Երբ պահանջքը զգար, ո՛չ մէկ բան կրնայ յաղթեցնել իր հոգեկան ընդվզումը, եթէ ոչ «Էրիֆի Տինու»յով սկսող հայհոյանքներու շարքը:

...«Ո՛վ որ Հայ Եկեղեցւոյ Սրբալոյս Միւռոնի դրոշմը իր ճակտին վրայ կը կրէ, չի կրնար բաժնուիլ Սուրբ Էջմիածնէն»:

Եւ Աստուած արժանի չըրաւ տեսնել Սուրբ Էջմիածինը: Չկրցաւ զրուցել Գեղարդայ Վանքի քահանային հետ: Ի՜նչ մեծ նշանակութիւն էր ժամերգութեան մասնակցիլ Սուրբ Գայիանէի կամ Սուրբ Հռիփսիմէի տաճարներուն մէջ: Հայ Եկեղեցւոյ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան ներկայ եղողները ի՜նչ նախանձելի մարդիկ էին:

*Տէր Սարգիսի սենեակին լոյսը չմարեցաւ մինչև առաւօտ: Հին օրաթերթերու էջերուն մէջ ան ապրեցաւ նաև իր բոլոր տենչերը, բաղձանքները:*
*Լուսաճագին հետ միասին յուսեցաւ իմամին կանչը՝ «Ալլահու էքպէր, ալլահու էքպէր»: Խաչակնքեց, սնտուկը քշեց անկողնին տակ ու ինքն ալ եկեղեցի մտաւ, ծնկաչոք աղօթեց խորանին առջև:*

***

*Սահակը պարտեզէն կը դառնար, ձեռքի տոպրակին մէջ քանի մը լոլիկ, նախաճաշի համար հաւաքուած: Կեցաւ եղած տեղը, ականջ տուաւ կոչնակի ձայնին, իմաստ մը չկրցաւ տալ, շուտ մը մտաւ տուն ու «Ժամ կ՚երթամ, տեսնեմ ի՞նչ կայ» ըսաւ:*

***

*Ծուշան հաւնոցին մէջ էր: Թէ՛ կերերը տուաւ հաւերուն և թէ հաւկիթները հաւաքեց փէշին մէջ: «Կը զարնէ տակաւին, խեր է, երթամ նայիմ հեղ մը»:*

***

*Սուրբիկ Եաեան կանուխ արթնցած՝ իր թոռնիկին Վահանիկին մազերը կը սանրէր, վար դրաւ սանտրը ու մտահոգուած՝ ըսաւ.*
*-Գնա՛ մայրդ, հայրդ արթնցուր, թո՛ղ եկեղեցի երթան մինչև, բան մը կայ անպայման:*

***

*Գիւղացիները ժամուն բակը լեցուցած էին, զարմանքով կը դիտէին Տէր Սարգիսը: Ան, առանց պատասխանելու ժողովուրդին հարցումներուն, դեռ կը շարունակէր զարնել զանգակը: Այլևս ափերը այրիլ սկսած էին: Ամուր կառչած էր պարանին ու կը սեղմէր ձեռքին մէջ: Սուգի կշռոյթով կը զարնէր և զանգակի ամէն ճօճումին իր նիհար մարմինն ալ վեր կը բարձրանար քիչ մը: Յետոյ նոր ուժով կրկին կը քաշէր պարանը ու ասիկա կը կրկնուէր անվերջ:*
*Երբ վստահ եղաւ որ բոլոր գիւղացիները լսած են, թողուց պարանը և յոգնած ձայնով ըսաւ, որ եկեղեցի գան:*
*Առաւօտեան ժամերգութիւն չեղաւ այդ առաւօտ, այլ խրատական խօսեցաւ Տէր Սարգիս: Ժողովուրդին համար իր ամէն ատենուան խօսքերն էին: Բայց ո՛չ ոք կը համարձակէր կէս թողուլ ու երթալ:*
*Խրատականին վերջաւորութեան տեղեկացուց Վեհափառին վախճանումը ու խօսքը կապեց Վազգէն Առաջինի նախադասութեամբ:*
*-Աւելի լո՛յս և խաղաղութի՛ւն հայ ժողովուրդին, Մայր Հայաստանին:*
*Աւելի լո՛յս և խաղաղութի՛ւն համայն աշխարհին, բոլոր ազգերուն:*
*Ամէն:*

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ
# ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ



# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԲԵՐՎԵՑԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*Օգոստոսի 14-ին «Կրեմլ» /Մոսկվա/ պատմամշակութային արգելանոց-թանգարանի «Ուսպենսկյան» զանգակատան ցուցասրահում տեղի ունեցավ «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի փակման հանդիսավոր արարողությունը:*

*Հանդիսությանը մասնակցում էին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, Ներսեհ աբեղա Խալաթյանը, թեմական խորհրդի անդամներ, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան պատասխանատու աշխատակիցներից Սերգեյ Սմբատյանը, Հայաստանի Հանրապետության կրոնի գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուքյանը:*

*Լազար Սուքյանը հանդիսավոր պայմաններում ընթերցեց և թանգարանի անձնակազմին հանձնեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքի նամակը ցուցահանդեսի մոսկովյան կազմակերպիչներին:*

*Փոխադարձաբար «Կրեմլ» պատմամշակութային արգելանոց-թանգարանի տնօրինուհի Իրինա Ռոդիմցևայի ստորագրությամբ պարոն Սուքյանին հանձնվեց շնորհակալագիր, որում բարձր գնահատվեց ցուցահանդեսի հայկական կողմի կազմակերպիչների, մասնավորապես պատասխանատու կազմակերպիչ Հովհաննես Թագուկյանի և ճկարիչ-ձևավորող Անդրանիկ Անտոնյանի աշխատանքը, նրանց հանձնվեցին արժեքավոր նվերներ:*

*Անվտանգության ծառայության և Մայր Աթոռի աշխատակիցների ուղեկցությամբ ցուցահանդեսի նմուշները ապահով փոխադրվեցին Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում զետեղվեցին իրենց տեղերում:*

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 10-19-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական՝ 48-րդ նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցում էին Կենտրոնական Կոմիտեի ավելի քան 250 պատգամավորներ, խորհրդականներ, դիտորդներ, հյուրեր և երիտասարդության ներկայացուցիչներ: Նստաշրջանը անդրադարձավ Կենտրոնական Կոմիտեի մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքներին, ԵՀԽ-ի 8-րդ Համագումարի նախապատրաստական աշխատանքների ընթացքին:

Նստաշրջանում լսվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայզերի և Կենտրոնական Կոմիտեի Ատենապետ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հաշվետու զեկուցումները, որոնցով նրանք անդրադարձան 1989 թվականին Մոսկվայում Կենտրոնական Կոմիտեի կողմից առաջարկված, երկար տարիներ քննարկվող և արդեն վերջնական ձև ստացած «Դեպի հասարակաց ըմբռնում և տեսիլք» տեղեկագրին:

Սույն նստաշրջանում Կենտրոնական Կոմիտեն վավերացրեց և առաջարկեց, որ «Դեպի հասարակաց ըմբռնում և տեսիլք» տեղեկագիրը ներկայացվի Հարարեում գումարվելիք 8-րդ Համագումարի մասնակիցներին, իբրև էկումենիկ շարժման ապագա գործունեության ուղեցույց 21-րդ դարում:

Նստաշրջանի մասնակիցները հետագա երկու օրերին, հինգ խմբերի բաժանվելով, քննարկեցին իրենց բաժանմունքներին վերաբերող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ եկեղեցական միության հասնելու նոր հեռանկարների ստեղծման, Ս. հաղորդության մասնակցությանը Համագումարի ընթացքում, աստվածաբանական կրթության կարևորության, էկումենիկ կրթարանի, երիտասարդության դաստիարակության, հավատք և կարգի, ավետարանչության և առաքելության, ցեղային խտրականության, տեղահանվածների, կանանց իրավունքի, բռնության դեմ պայքարի, աշխարհի բնակչության առողջության և աճի, Զատկի համատեղ տոնախմբման, տարածապաշտության և բազմաթիվ այլ կարևոր հարցեր:

Նստաշրջանի օրերին տեղի ունեցավ հատուկ հանդիպում Կենտրոնական Կոմիտեի անդամ Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների միջև, որի ընթացքում շեշտվեց ԵՀԽ-ի կյանքում Ուղղափառների գործուն մասնակցության, ինչպես նաև Ուղղափառների միջև սերտ կապի ստեղծման անհրաժեշտությունը: Առաջարկվեց 1998 թվականի մայիսին Հալեպ քաղաքում գումարել եռօրյա մի ժողով, Ուղղափառ եկեղեցիների 8-րդ Համագումարին մասնակցող պատգամավորների ներկայացուցիչների միջև, որպեսզի որդեգրվի Ուղղափառ եկեղեցիների աշխատանքի հատուկ ուղղությունը:

Հանդիպումներ ունեցան նաև Եվրոպայի և այլ ցամաքամասերի եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց կրոնական, քաղաքական-տնտեսական, ընկերային և էկումենիկ կյանքի վիճակի մասին տեղեկություններ հաղորդեցին:

Կանանց տասնամյակի ավարտին նվիրված հատուկ հավաքի ընթացքում, կանայք մեկ անգամ ևս արծարծեցին կանանց հանդեպ կատարվող անարդա-

րության հարցը, հատկապես երրորդ աշխարհում: Ներկայացվեց կանանց իրավունքներին վերաբերվող «Կենդանի նամակներ» անունով մի ծրագիր:

Հասարակության հարցերով զբաղվող խումբը նստաշրջանի ընթացքում մեկ անգամ ևս իր տեսակետները ներկայացնող հայտարարություններով հանդես եկավ, որոնք ունեին քննադատական բնույթ և ուղղված էին Նիգերիայում նավթը շահագործող ընկերությանը, քաղաքացիական պատերազմին Սուդանում և Իրաքում տառապող բնակչության հիմնահարցերին:

Դր. Ռայզերի և Արամ Կաթողիկոսի անունից նամակներ ուղարկվեցին Նորվեգիայի մայրաքաղաք Օսլո, ուր այդ օրերին գումարվում էր քաղաքագետների ժողով՝ հակահետևակային ականների օգտագործումն արգելելու վերաբերյալ:

Նույնպիսի մի նամակ ևս նստաշրջանի օրերին, սեպտեմբերի 8-ին, ուղարկվեց Երուսաղեմ, որում մերժվում էր անհատի և կազմակերպության նկատմամբ կիրառվող ամեն տեսակ վայրագություն:

ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների թիվը դարձավ 332, երբ Կենտրոնական Կոմիտեն հաստատեց այն դիմումները, որոնցով Պապուա Նոր Կինեայի Միացյալ եկեղեցին, որն ունի 600000 անդամ, և Սողոմոնյան կղզիների Միացյալ եկեղեցիները, որի կազմում 45000 մարդ կա, դարձան ԵՀԽ-ի լիիրավ անդամներ:

Արգենտինայի Քրիստոնյա Աստվածաշնչային եկեղեցին, որտեղ ընդգրկված է 25000 մարդ, ընդունվեց որպես ԵՀԽ-ի օժանդակ անդամ:

ԵՀԽ-ի 8-րդ Համագումարը տեղի է ունենալու Զիմբաբվեի մայրաքաղաք Հարարեում՝ 1998 թվականի դեկտեմբերի 3-14-ը: Համագումարի նշանաբանն է՝ «Դարձ առ Աստված, ցնծա հույսով»: Համագումարի աշխատանքները ընթանալու են Զիմբաբվեի մայրաքաղաքում գտնվող համալսարանում, որը հյուրընկալելու է շուրջ չորս հազար պատգամավորներ և այցելուներ: Մասնակիցները տոնելու են ԵՀԽ-ի հիմնադրության 50-ամյակը՝ իբրև ցնծության ոսկի տարեդարձ: Այս առթիվ առաջարկվում է, որ անդամ եկեղեցիները ևս իրենց երկրներում տոնախմբեն այդ ոսկի տարեդարձը: ԵՀԽ-ն հիմնադրվել է 1948 թվականի սեպտեմբերի 20-ին Ամստերդամ քաղաքում:

Սույն նստաշրջանի ավարտով 1991 թվականին Կանբերայի համագումարի ընթացքում ընտրված Կենտրոնական Կոմիտեն, յոթ երկար տարիներ ծառայելով ԵՀԽ-ին, իր գործունեության շրջանն ավարտեց:

Նստաշրջանը աշխատանքներն ավարտեց սեպտեմբերի 19-ի երեկոյան՝ գոհաբանական պաշտամունքով, որը տեղի ունեցավ էկումենիկ կենտրոնի մատուռում:

**ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ**
*Անդամ ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի*

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ԵՌՕՐՅԱ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 24-ին իր եռօրյա աշխատանքները սկսեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի /ԵՀԽ/ Հայաստանին նվիրված Կլոր սեղանի ղեկավարության ժողովը:

Ժողովին մասնակցում էին Հայաստանից՝ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանը, Հայ Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ Վերապատվելի Ռենե Լևոնյանը, Հայաստանյան կլոր սեղանի գրասենյակի համակարգող Կարեն Նազարյանը, «Օեն» և «Նուարդ» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Հայկ Մինասյանը և Սուսաննա Օհանյանը:

ԵՀԽ-ն ներկայացնում էր խորհրդի չորրորդ միավորման քարտուղար Ալեքսանդր Բելոպոպսկին, բրիտանական «Քրիստոնեական օգնություն» կազմակերպությունից՝ Էնթոնի Մահոնին, միջազգային եկեղեցական մարմիններից՝ Կլաուս Պոզերը և Քարոլին Կրուկովը, գերմանական «Համագործակցություն և զարգացման բողոքական ընկերություն»-ից՝ Յորգեն Յորգենսենը, «Դանիա-հայկական առաքելություն» կազմակերպությունից՝ Մայքլ Վեստը, գերմանական «Դիակոնիշես Վերկ» կազմակերպությունից՝ Լեոնարդո Գմուրը, «Միացյալ մեթոդիստական օգնության կոմիտե»-ից՝ Թերրի Ուոլենը, Լյորդ Ռոլանֆը և Քարոլ վան Գորփը:

Նախքան ժողովը մասնակիցներին ընդունեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը և, հղելով նրանց իր օրհնությունն ու աղոթքը, մաղթեց հաջողություններ և արդյունավետ աշխատանք: Նորին Սրբությունը ժողովականների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ այժմ հայ ժողովուրդն օգնության այնպիսի ծրագրերի կարիք ունի, որոնք արմատախիլ անեն նրա մոտ տեղ գտած պասիվ սպասողական հոգեբանությունը՝ ապահովելով մարդկանց աշխատանքով և ապրուստ վաստակելու միջոցներով, օգնեն նրանց ոտքի ելնել՝ ապավինելով սեփական ուժերին, պատասխանատվություն ստանձնել իրենց բարօրության և բարեկեցության համար:

Ժողովի սկզբում Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը համառոտ կերպով ներկայացրեցին Հայաստանի ներկա իրավիճակը և այն սրող երեք հիմնական գործոնները՝ 1988 թ. ավերիչ երկրաշարժը, 70-ամյա կոմունիստական հասարակարգի անկումն ու դրա հետևանքով աշխարհի հզորագույն տերություններից մեկի լիակատար քայքայումը և, իհարկե, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:

Ալեքսանդր Բելոպոպսկին նշեց ժողովի չորս հիմնական նպատակները.

1. Մինչև այժմ Հայաստանյան Կլոր սեղանի կողմից իրականացված աշխատանքների քննարկում և գնահատում:
2. Ինֆորմացիայի և փորձի փոխանակում:
3. Համագործակցություն և օգնության այլ ձևերի և միջոցների ուսումնասիրում:

4. Հայաստանում էկումենիկ համագործակցության զարգացում:

Հանդես գալով հաշվետու նյութով, կարեն Նազարյանը հանգամանորեն ներկայացրեց 1997 թ. մարտից ի վեր ընկած ժամանակահատվածում իրականացված և դեռևս իրականացվող ծրագրերը, որոնցից կարևորեց հետևյալ հինգ առաջնահերթ բնագավառները.

1. Ծառայություն և սպասարկում /բժշկական, սոցիալական, գյուղատնտեսական/:

2. Կրթություն, ուսուցում:

3. Հոգևոր ճեմարան:

4. Եկեղեցական շինարարություն:

5. Հայաստանյան կլոր սեղանի աշխատանքների համակարգում:

Ժողովի հետկեսօրյա նիստը նվիրված էր կատարվող ծրագրերի մանրակրկիտ քննարկմանը:

Հայկ Մինասյանը ներկայացրեց Ամասիայի շրջանի Եղնաջուր գյուղի վերականգնման և վերաբնակեցման ծրագիրը, որն ընդգրկում է 5 բնակելի տների, երկու նոր դասարանների, անասնագոմի կառուցում /իրագործվում է 1997 թ. հունիսի 24-ից/: Նա կարևորեց այն հանգամանքը, որ աշխատանքների զգալի մասը կատարվում է տեղի բնակիչների ուժերով:

Գևորգյան հոգևոր ճեմարանի շենքը, որը Մայր Աթոռից բռնի կերպով խլվելուց և իբրև այդպիսին ավելի քան 80 տարիներ գործել դադարելուց հետո, կրկին վերադարձվել էր Մայր Աթոռին, ս.թ. սեպտեմբերի 18-ին վերստին բացեց դռները սաների առջև: Վերանորոգված ճեմարանի կահավորման /որին նյութապես զգալիորեն աջակցել էր «Դանիա-հայկական առաքելություն» կազմակերպությունը/ ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների վերաբերյալ զեկուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

Ապա Հայկ Մինասյանը պատմեց Զանգեզուրի շրջանում վերաբնակեցված փախստական կանանց գյուղատնտեսական հմտությունների և կարողությունների ուսուցման, ինչպես նաև մրգերի չորացման և պահածոյացման ծրագրերի մասին, որոնց իրականացումից ստացվող հասույթը տրամադրվելու է գյուղի կարիքները հոգալուն /ժողովի մասնակիցները նաև համտեսեցին պատրաստված չոր մրգերը/:

Մայքլ Վեստը ներկայացրեց կիսավեր և անմխիթար վիճակում գտնվող Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցու վերանորոգման ծրագիրը:

Վերապատվելի Ռենե Լևոնյանը ծանոթացրեց բուժական մի կենտրոնի կառուցման ծրագրին: Պոլիկլինիկայից բացի, կառուցվող համալիրը կունենա նաև շարժական բուժկետ՝ հեռավոր վայրերում բժշկական օգնություն ցույց տալու համար, և սրահ՝ բժշկական գիտաժողովների անցկացման համար: Ի տարբերություն մյուս բուժական հաստատությունների, այստեղ մասնագիտացված որակյալ օգնությունը և բժշկական ծառայությունները կարիքավոր խավերի համար կլինեն անվճար:

Ժողովականների ուշադրությանն արժանացավ նաև քրիստոնեական կրթության ծրագիրը: Ծանկացողների համար կազմակերպվում են հատուկ դասընթացներ վեց ուսումնական կենտրոններում: Դասընթացի ավարտից հետո մասնակիցներն իրավունք են ստանում կրոն դասավանդել կիրակնօրյա դպրոցներում: Կրոնի ուսուցիչներին աջակցելու համար որպես աշխատավարձ վճարում են փոքրիկ գումարներ:

Հայաստանյան Կլոր սեղանի գրասենյակի ստեղծման, կազմակերպման և աշխատանքների կարգավորման, գրասենյակի կարիքների մասին խոսեց Կ. Նազարյանը: Ժողովի մասնակիցները արտահայտեցին կարծիքներ և գնահատականներ գրասենյակի գործունեության շուրջ: Քննարկվեց նաև Հայաստանյան Կլոր սեղանի ղեկավարության աշխատանքը նախորդ հանդիպումից /1996 թ., նոյեմբեր/ ի վեր ընկած ժամանակահատվածում: Մշակվեցին աշխատանքային ընթացակարգի բարեկարգման և զարգացման ուղիները:

Երեկոյան ժողովի մասնակիցները եղան Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում, դիտեցին ֆիլմ, որը պատմում էր բանտարկյալների ձեռքով պատրաստված փայտյա, մետաղյա քարե իրերի և այլ աշխատանքների մասին:

Ժողովի երկրորդ օրվա՝ սեպտեմբերի 25-ի առավոտյան նիստում ելույթներ ունեցան Սոցիալական ապահովության նախարարության ներկայացուցիչ Գրիգոր Գասպոյանը և ՀՀ արտգործնախարարի տեղակալ Վարդան Օսկանյանը:

Վերլուծելով Հայաստանի ներկա սոցիալական իրավիճակը, Գ. Գասպոյանն ընդգծեց նրա վրա բացասաբար անդրադարձող գործոնները՝ գործազրկության կտրուկ աճը, վճարովի դարձած առողջապահական ծառայությունների անմատչելիությունը բնակչության անապահով խավերի համար և ուստի՝ հիվանդացության ցուցանիշների բարձրացումը, կենսաթոշակառուների թվի աճն ու դրան հակառակ՝ հարկերի և տուրքերի հոսքի նվազումը կենսաթոշակային ֆոնդ: Նախարարությունը մշակել և կառավարությունը հաստատել է սոցիալական ապահովագրության համակարգին անցման ծրագրեր, որոնց իրագործման համար նախարարության հնարավորությունները սուղ են: Դրանց թվում են.

— «Հասունություն» ծրագիրը: Ընդգրկում է մանկատներում ապրող որբ երեխաներին:

— «Տարեց և միայնակ հաշմանդամների տնային սպասարկում» ծրագիր: Նախատեսում է իրավաբանական, խորհրդատվական, կենցաղային, առողջապահական ծառայություններ: Այս ոլորտում աշխատելու համար հարկ է պատրաստել համապատասխան կադրեր:

— «Գթության տներ» ծրագիր: Ընդգրկում է տարեց և հաշմանդամ, անկողնուն գամված և խնամքի կարոտ միայնակ ծերերին:

— Ծերանոցների ստեղծում մարզկենտրոններում:

— Անվճար հիվանդանոցի ստեղծում անվճարունակ խավերի համար:

— «Հաշմանդամների օգնության և հաշմանդամության կանխարգելում» ծրագիր: Նախատեսվում է հաշմանդամների փոխադրասայլակների, պրոթեզների, լսողական սարքերի արտադրություն:

Վարդան Օսկանյանը խոսեց Հայաստանի քաղաքական իրավիճակի, Լեռնային Ղարաբաղի շուրջ առկա հակամարտության մասին: Կարևորեց բարիդրացիական և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը բոլոր հարևան երկրների հետ: Նշվեց Լեռնային Ղարաբաղի խնդրի առկայության ազդեցությունը Հայաստանի՝ այլ երկրների հետ հարաբերությունների մշակման և ձևավորման գործում:

Այնուհետև ժողովի մասնակիցները սկսեցին 1998 թ. ընթացքում իրագործելիք ծրագրերի քննարկումը:

Կ. Նազարյանը ներկայացրեց շահույթ հետապնդող շրջանառու վարկերի նպատակով հիմնադրամ ստեղծելու նախագիծը, ըստ որի բարձր գիտելիքներ և

որակավորում ունեցող, սակայն ներկա սոցիալ-տնտեսական և այլ գործոնների հետևանքով անապահով վիճակում հայտնված մտավորականներին և գիտնականներին կտրամադրվեն վարկեր՝ նրանց ապրուստի միջոցներով և աշխատանքով ապահովելու, նրանց վիճակը բարելավելու համար:

Վաղարշապատ քաղաքի համար նախատեսվող հալվե և երիկամների համար օգտակար թեյի աճեցման ծրագիրը հնարավորություն կտա Հայաստանի դեղագործական հաստատություններին մատակարարել դեղորայքի պատրաստման համար կարևոր և բարձր պահանջարկ ունեցող հումք: Այս ծրագրում ընդգրկված ամենաչքավոր խավերը, այդ թվում նաև փախստականները, կապահովվեն աշխատանքով, իսկ եկամտի մի մասը կտրամադրվի մարդասիրական օգնության այլ ծրագրերի օժանդակությանը, կամ էլ նորերի մշակմանը:

Մեկ այլ ծրագիր, նկատի առնելով Մայր Աթոռի մկրտարանի կարիքները, նախատեսում է մկրտարանն օրվա ընթացքում ապահովել ջրով և բարելավել նրա վիճակը:

«Նուարդ» տիկնանց միության և մայրության ֆոնդի կողմից ներկայացված ծրագրերից մեկը նպատակ է հետապնդում ստեղծել կանանց առողջապահական կենտրոններ Երևանի «Շենգավիթ» թաղամասում, Գյումրիում և Գորիսում բնակվող անվճարունակ կանանց անվճար բժշկական ծառայություն և սպասարկում ապահովելու, նրանց առողջական վիճակը բարելավելու և հիվանդությունների վաղ հայտնաբերման ու կանխարգելման նպատակով: Մյուս ծրագիրը երեխաների քրիստոնեական և գեղագիտական դաստիարակության նպատակով թատերական խմբակի կազմակերպումն է Երևանի թիվ 79 դպրոցում, որտեղ կբեմադրվեն փոքրիկ պիեսներ քրիստոնեական բովանդակությամբ, որոնք կծանոթացնեն երեխաներին քրիստոնեական արժեքներին և գեղագիտության սկզբունքներին, կտարածեն քրիստոնեական գաղափարներ նոր սերնդի շրջանում: Նախկինում նման խմբակ գործել է և ունեցել մեծ հաջողություններ, սակայն դադարել է գործել ֆինանսական միջոցների սղության պատճառով: Ներկայումս թատերական հանդերձանքի, դեկորացիայի, տեսասարքերի և այլ անհրաժեշտ թատերական պարագաների գնման կարիք կա: Համապատասխան օգնության և ֆինանսավորման դեպքում խմբակը, վերսկսելով գործունեությունը, կարող է մեծ հաջողություններ ունենալ նաև արտասահմանում:

Կույրերի միավորման նախագահ Աբել Հակոբյանը ներկայացրել է Հայաստանում կույրերի համար փորձարարական համակարգչային ընթերցասրահի ստեղծման ծրագիրը: Ընթերցասրահը կունենա նաև էժան և մատչելի բրեյլիդիսփլեյների արտադրություն, որոնց վաճառքը արտասահմանում կդառնա եկամտի աղբյուր, աշխատատեղեր կստեղծվեն կույրերի համար: Ընթերցասրահից կօգտվեն ամենատարբեր տարիքի, մասնագիտությունների և հետաքրքրությունների տեր կույր մարդիկ:

Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի կողմից ներկայացվեց անասնաբուծական մի ֆերմայի ստեղծման ծրագիրը, որի իրականացման համար անհրաժեշտ գումարները կծախսվեն անասնագոմի վերանորոգման, անասունների գնման և աշխատողներին աշխատավարձի վճարման համար և ամբողջովին կփոխհատուցվեն երկու տարի անց: Ծրագիրը կապահովի տեղական բնակչությանը կաթնամթերքով և եկամտի աղբյուրով, իսկ եկամուտը կհատկացվի մարզի մանկատան 130 երեխաների կարիքները հոգալուն: Բացի այդ, կստեղծվեն տասը նոր աշխատատեղեր:

Վերապատվելի Ռենե Լևոնյանը պատմեց քրիստոնեական կրթության ծրագրի մասին, որի բաղկացուցիչ մասն էր Ավետարանական հոգևոր ճեմարանի բացումը 1997 թ. ապրիլին: Ճեմարանը սակայն կարիք ունի դասագրքերի, տեխնիկական միջոցների, գրասենյակային մշտական տարածքի: Ճեմարանից բացի, ծրագիրը նախատեսում է նաև երեխաների և անչափահասների քրիստոնեական դաստիարակություն, Ավետարանի մեկնություն, կիրակնօրյա դպրոցների հիմնում և կրոնի ուսուցիչներին խրախուսելու նպատակով փոքրիկ գումարների վճարում:

Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի կողմից ներկայացվեց Ղափանում մի նոր եկեղեցու կառուցման ծրագիրը, որի իրագործման աշխատանքների ծավալման համար անհրաժեշտ է ֆինանսական օժանդակություն: Եկեղեցին կառուցվում է առաջնորդարանի և տեղի շուրջ 45 հազար բնակչության ջանքերով:

Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը ներկայացրեց Գուգարաց թեմի անչափահաս չքավոր երեխաների ամառային հանգստի կազմակերպման ծրագիրը առաջնորդարանին հատկացված ճամբարային համալիրի տարածքում: Լինելով ոչ բարվոք վիճակում, համալիրը վերանորգման կարիք ունի, որից հետո այստեղ կարող է հանգստանալ 300 երեխա: Անհրաժեշտ է նաև ձեռք բերել անհրաժեշտ գույք, ինչը սակայն դժվարանում է ֆինանսական միջոցների սղության հետևանքով:

Օրվա երկրորդ կեսին ժողովի մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որից հետո եղան Հայ Ավետարանական Եկեղեցու գրասենյակում: Դիտեցին առողջապահական կենտրոնի տարածքը և ունկնդրեցին երեխաների կողմից տրված համերգը:

Ուրբաթ օրվա՝ սեպտեմբերի 26-ի առավոտյան կարճատև նիստում ամփոփվեցին ժողովի արդյունքները, ճշգրտվեցին 1998 թ. անելիքներն ու պարտավորությունները:

Նիստից հետո ժողովի մասնակիցները մեկնեցին Բյուրական՝ դիտելու Ս. Հովհաննես եկեղեցին, որի վերականգնման աշխատանքները վերսկսվելու են այս տարվա հոկտեմբերից, ապա այցելեցին «Նուարդ» տիկնանց միություն, ինչպես նաև օքսիդիանից պատրաստվող հուշանվերների, գրասենյակային պիտույքների և այլ իրերի պատրաստման արտադրամաս, որը, ստանալով փոքր վարկ ըստ համապատասխան նախագծի, այժմ հաջողությամբ աշխատում է:

Այնուհետև ժողովի մասնակիցները Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ հանդիպում ունեցան ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի հետ:

Երեկոյան ժողովականները կրկին անգամ այցելեցին Վեհափառ Հայրապետին՝ մեկ անգամ ևս իրենց հարգանքն արտահայտելու Նորին Սրբությանը, հաղորդելու նրան ժողովի աշխատանքների ավարտի ու արդյունքների մասին, հրաժեշտ առնելու և մեկնումից առաջ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան ժողովին մասնակից արտասահմանցի հյուրերի մի մասը մեկնեց Հայաստանից, իսկ մյուսները երկու օրով այցելեցին Զանգեզուր՝ տեղում ծանոթանալու չոր մրգի պատրաստման արտադրամասի նախագծին:

***Լարիսա Նավասարդյան***

# ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ ԿԱՏԱՐՎԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Օգոստոսի 10-ին, կիրակի օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Սպիտակ քաղաքում տեղի ունեցավ Ս. Հարություն եկեղեցու հիմնաքարերի օծման և հիմնարկեքի արարողությունը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի միաբանության անդամներ, Հայաստանի Թեմակալ Առաջնորդներ, ինչպես նաև Ս. Էջմիածնում անցկացվող ժողովին մասնակցող Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան Թեմի Հայոց Առաջնորդ Տ. Վաչե Արքեպիսկոպոս Հովսեփյանը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից մասնակցող պատվիրակության անդամները՝ Տ. Զարեհ Արքեպ. Ազնավորյանը, Տ. Օշական Եպս. Չոլոյանը, և Պրն. Խաչիկ Պապիկյանը:

Վեհափառ Հայրապետին, Հոգևոր դասին և այլ պատվավոր հյուրերին Լոռու և Արագածոտնի մարզի սահմանագծում ջերմորեն դիմավորեցին Լոռու մարզպետ Վիգեն Խաչատրյանը, Սպիտակի քաղաքապետ Սուրեն Ավետիսյանը, Գուգարաց Թեմի Առաջնորդ Տ. Սեպուհ Եպս. Չուլջյանը և այլ պաշտոնյաներ:

Արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետի ձեռամբ սրբալույս միւռոնով օծվեցին 16 հիմնաքարերը, որոնք խորհրդանշում են Քրիստոսի վարդապետությունը տարածող չորս ավետարանիչներին, առաքյալներին և Ս. Գրիգոր Լուսավորչին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ասաց Սպիտակի բնակիչներին և ներկա հյուրերին. *«Ձեզ հետ եմ թե՛ ձեր նեղության և թե՛ ուրախության օրերին: Եղել եմ ձեզ հետ ձեր աղետի, սուգի և ցավի օրերին. այսօր ձեզ հետ եմ ձեր հոգևոր և ազգային ուրախության այս բացառիկ առիթով: Ուզում եմ մասնակից դառնալ Սպիտակի կառուցմանը՝ ուժերիս ներածին չափով: Ճիշտ է, մահը եկավ, վիշտը պատեց մեզ, բայց մենք եղել ենք ապրելու համար, մենք կոչված ենք ոչ թե մահվան մասին մտածելու, այլ մենք ստացել ենք Աստծուց կյանք՝ այն իմաստավորված ձևով ապրելու համար: Անմահության գաղափարը պիտի շնչավորվի սպիտակցիների հոգում, մենք պիտի մնանք հարատևող ժողովուրդ»*:

Այնուհետև Գուգարաց Թեմի Առաջնորդ Տ. Սեպուհ Եպս. Չուլջյանը ամփոփ կերպով ներկայացրեց սպիտակցիների ապրած տառապանքի և անդադրում պայքարի, հոգևոր վերազարթոնքի և, վերջապես, վերածննդյան պատմական դրվագները: Այս ամենը, գրավոր շարադրված թղթի վրա, կնքվեց Գարեգին Ա Կաթողիկոսի, Լոռու մարզպետի և Սպիտակի քաղաքապետի ու Թեմակալ Առաջնորդի ստորագրություններով, ապա ամփոփվեց պահպանակի մեջ և տեղադրվեց եկեղեցու հիմքում:

Հիմնարկեքի ծիսակատարությունից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց Սպիտակում կառուցվող քաղաքային մշակույթի պալատին հատկացված, ինչպես նաև 1988 թ. ավերիչ երկրաշարժից զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի շինարարական տարածքներ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍՊԻՏԱԿԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԺԱՄԱՆԱԿ

*Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան ներկայացուցիչներ քաղաքային իշխանության, սիրելի մարզպետ, քաղաքապետ և այլ պաշտոնատարներ մեր Հայաստանի նոր Հանրապետության և, մանավանդ, սիրելի Առաջնորդ Գուգարաց թեմի՝ Սեպուհ սրբազան և թանկագին, ամենասիրելի հավատացյալներ՝ անդամներ Սպիտակի մեր հայ համայնքի.*

*Ես զգում եմ, որ մեր կյանքի մեջ արձանագրվում է անմոռանալի մի օր, որը պիտի հիշատակվի մեզանից հետո եկող գալիք սերունդների կողմից: Այս օրը Աստուծո այցելության օրն է մեզ, այս եկեղեցու հիմնաքարերի օծման արարողության միջից: Այսօր մի սովորական շենք չէ, որ կառուցվում է, այլ Աստուծո և մեր ժողովրդի հանդիպման վայրն ենք պատրաստում և ընծայում Աստծուն և հայցում Նրանից, որ իջնի մեր հոգիների մեջ, թագավորի մեզ և վերածի ճշմարիտ Եկեղեցու:*

*Եկեղեցին Աստուծո ներգործությունն է մեր մեջ Քրիստոսի միջոցով, Ավետարանների միջոցով և, մանավանդ, նրան հավատարիմ ժառանգորդ մեր Սուրբ Հայրերի, կենդանի և կենդանարար եկեղեցական, հոգևոր, մշակութային ժառանգությամբ և ավանդությամբ: Այս օրը ես արձանագրելու եմ «Սպիտակի օրը Մայր Աթոռի պատմության մեջ»: Մենք եկել ենք այսօր ոչ թե սովորական հովվապետական այցելության, այլ հատուկ նպատակով, այս օրը շքեղ կերպով, հոգևոր ապրումներով լեցնելու համար մեր կյանքում և մեր ժողովրդի, մեր Հայաստանի ժողովրդի և Եկեղեցու կյանքում: Եկել ենք այսօր մեր սրբազան եղբայրների, մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անդամների, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսների և աշխարհական անդամների ընկերակցությամբ, ասելու ձեզ, որ օրն այս, օգոստոսի 10-ը, մնալու է ձեր կյանքի մեջ որպես այն գեղեցկագույն օրը, որ պատմելու է ձեր զավակներին, ձեր թոռներին և ձեր ծոռներին՝ ասելով, թե քանդվել էր մեր եկեղեցին տարիներ-տարիներ առաջ, բայց քանդված չէր հավատքը մեր մեջ: Դա է կարևորը: Քարը կգա ու կգնա, քարը փոշու կվերածվի, քարի տեղ Աստված էլի մեզ քար կտա, բայց եթե մեր մեջ Եկեղեցին մեռնի, մենք կմեռնենք, եթե հավատքը մեր մեջ դադարի, մենք կդադարենք քրիստոնեական հասկացողությամբ մարդ լինելուց, հայ լինելուց: Մեր պատմության էջերը բացեք և դիտեք, պիտի տեսնեք քանի՜-քանի՜ հազարավոր եկեղեցիներ քանդվեցին մեր պատմության մեջ, ոչ թե միայն երկրաշարժից, այլ նաև մեր թշնամիների կողմից և՛ Արևելյան Հայաստանում, և՛ Արևմտյան Հայաստանում, բայց մեր թշնամիները, բոլոր ճանապարհները փակելով, չկարողացան մի ճանապարհ փակել: Հավատի ճանապարհն էր, որ հոգու ճանապարհով էր անցնում, և թշնամին չկարողացավ գտնել այդ ճանապարհը, չկարողացավ քանդել*

մեր հոգին, քանդեց քարը. քանդեց մագաղաթը, քանդեց նյութը. բայց չկարողացավ քանդել հոգին, հավատքը. գիրը. մշակույթը, լեզուն, այն բոլորը, որ մեզ կհավերժացնեն: Հետևաբար արթնացե՛ք, արթնացե՛ք, սիրեցյալ զավակներ, մաքրեք ձեր հոգին Քրիստոսի հավատքով և այս եկեղեցին բնակարան է արդարոց. քավարան մեղավորաց. ճանապարհ դեպի երկինք և հավերժություն՝ դեպի Աստված:

Եթե երբեք մենք այս եկեղեցու հիմնարկեքով և օծմամբ պիտի չվերափոխվենք, ապա ինչո՞ւ ենք կառուցում. չե՞նք ենք կառուցում... Եկեղեցին շենք չէ: Մենք ենք մեր կյանքը, մեր դպրոցը, մեր երեխաները, որոնք պետք է փոխանցեն հավատքի ուժը, որպեսզի տոկան ամեն տեսակի, ինչպես քրիստոնեական հավատքն է ասում. «Երանի այն ժողովրդին, որ գնում է դեպի Ավետարան»: Ի՞նչ է ասում Հիսուս. «Մի՛ վախնաք նրանցից. ովքեր մարմինն են սպանում և չեն կարող հոգին սպանանել», և հայերը հավատացին: Ի՞նչ արեցին 5-րդ դարի Վարդանանց քաջամարտիկ այն հերոսները, սրբերը, որոնք Ավարայրի դաշտում ընկան, իրենց կյանքը, իրենց արյունը տվեցին՝ ասելով. «Այս հավատքից ոչ ոք կարող է մեզ խախտել՝ ո՛չ հրեշտակները երկնքի և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ ամեն տեսակի հարված՝ որքան էլ որ դառը լինեն այդ բոլորը, չեն կարող խախտել մեր հավատքը»:

Օտարը մեզ չի կարող սպանել. մի տեսակ մահ կա հայի համար՝ մենք մի տեսակ մահ կճանաչենք՝ ինքնասպանություն: Եթե երբեք մեզանից պակասի հավատքը, գիրը, լեզուն, հայրենիքին ծառայելու ոգին, մեր ինքնության դրոշմը եղող արժեքները և դեպի հավերժական կյանք տանող ուժ ներշնչող գաղափարները, այն ժամանակ մենք կլինենք մեռյալներ՝ կյանքի, ապրելու մեջ մեռյալներ:

Սիրելիներ, ես երկար չեմ ուզում խոսել, բայց պարտք զգացի այս քարերի, այս շինությունների զետեղման հետ միասին ձեր մեջ Աստուծո խոսքերը հիմնավորել, ամրացնել, որ դուք հաղորդ լինեք մեր հարազատ մայրենի Եկեղեցուն, որպեսզի չլինեք օտարի ձայնին, այլ՝ ձեր հովվի: Ինչպես Ավետարանն է ասում. «Ես ճանաչում եմ իմ ոչխարներին և իմ ոչխարներն էլ՝ ինձ»: Դուք իմ հարազատ զավակներն եք, և դուք մնացեք անսասան, ամուր մեր Առաքելական Եկեղեցու հավատքին և ավանդությանը: Այսօր ես ցանկանում եմ իմ գնահատանքի խոսքն ասել ձեր երիտասարդ նվիրյալ ու դրաջան առաջնորդին՝ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին: Ես նրան ճանաչեցի, երբ վարդապետ էր: Եվ գնահատում եմ իբրև հոգևոր հայր նրա ժողովրդանվեր ոգին, ժողովրդի քրիստոնեական դաստիարակությամբ զբաղվելու ջանքը: Նաև Գուգարաց թեմի մեր բոլոր հոգևորականներին: Այստեղ կամ Վանաձորում, կամ Իջևանում և չգիտեմ տակավին որ վայրերում՝ որտեղ էլ որ գնամ, մեր քահանա կամ վարդապետ հայրերին ասում եմ՝ նվիրվեք այս ժողովրդին, մատաղ եղեք այս ժողովրդին, դրանում է ձեր մեծությունը: Աստված ձեզ չի հարցնելու, թե ինչ եք կերել կամ խմել, այլ պիտի ասի, թե ո՞ր հիվանդին օգտակար եղաք. ո՞ր մեկին բժշկեցիք, ո՞ր մեկին Աստուծո խոսքը քարոզեցիք: Եկեղեցի շինելը հոգևորականի գործն է և ոչ թե նյութական եկեղեցի կառուցողի կամ շինարարի կամ աշխատավորի գործը:

*Նաև ես ցանկանում եմ իմ գնահատանքի խոսքն ուղղել մեր մարզպետ պրն. Վիգեն Խաչատրյանին, որին ես նախապես ճանաչել եմ տակավին, երբ մարզպետ չէր: Շնորհակալություն պիտի հայտնեմ նաև մեր երիտասարդ և աշխատունակ քաղաքապետին: Ես կոչ եմ անում Սպիտակի մեր բոլոր քույրերին ու եղբայրներին, որ երբ եկեղեցին շինվի, եկեք, քար վերցրեք, քար տարեք, աղյուս շինեք, հող թափեք, մի խոսքով՝ ձեր քրտինքը թափեք այս եկեղեցու կառուցման ժամանակ: Այս պիտի լինի ձեր մասնակցությունը, այս կլինի այն միջոցը, որով այս եկեղեցին կլինի ձերը: Ուստի ես ցանկանում եմ, որ իմ կոչը հասնի մեր ժողովրդի բոլոր զավակներին:*

*Եվ նաև կուզենայի իմ գնահատանքը հայտնել երգչախմբի անդամներին, որ եկել էին և այսպես շենացնում էին մեր եկեղեցին՝ մեր շարականների ճաշակը տալով մեր ժողովրդին: Սակայն, սպիտակցիներ, ամեն անգամ չպիտի սպասեք, որ երգչախումբ գա, այլ կազմեք ձեր խումբը, Սպիտակի դպրաց խումբը, որ շարականները երգեն, որպեսզի վերածաղկի, կերպարանափոխվի մեր կյանքը մեր հայրերի շարականների հնչումովը մեր ժողովրդի կյանքում: Այս առիթով ես իմ գնահատանքի խոսքն եմ հղում այս երկրից շատ հեռու բնակվող այն օտար, ոչ հայ անձերին և կազմակերպություններին, որոնք հատուկ նվիրատվություններով ապահովել են այս եկեղեցու շինարարության մեկ կարևոր մասի ծախսերը և Ե.Հ.Խ. -ի միջոցով, ոչ հայ քրիստոնյա մեր եղբայրները ի սեր մեր Եկեղեցու և ավերից ազատված մեր ժողովրդի՝ այս նվիրահավաքն են արել, և դա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հատկացնում է Սպիտակի Ս. Հարություն կոչվելիք եկեղեցու շինության իրականացման համար: Թող Աստված նրանց մեկի փոխարեն տա 60, 80 և 100՝ ինչպես ասում է Ավետարանը: Վերջապես իմ գնահատանքը պետք է ուղղեմ Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի անդամներին, որոնք երկար տարիներ աշխատեցին, և հատկապես նրանց մեջ առանձնապես հիշելու եմ այս եկեղեցու ճարտարապետական կառույցի հեղինակ, շատ սիրելի և նվիրյալ Բաղդիկ Արզումանյանին: Ես գնահատում եմ ճարտարապետների և շինարարների գործը և ցանկանում եմ, որ ամենքս մեր լուման ունենանք այս եկեղեցու շինության գործում:*

*Վերջացնում եմ իմ խոսքը մեր ամենասիրելի երիտասարդներին ուղղելով այն: Դպրոցական սաներ, երեխաներ, համալսարանի ուսանողներ, ես Հայաստանի տարբեր վայրերում եմ եղել, շատ եմ տեսել ձեզ նման երիտասարդների, և իմ հույսը դուք եք: Ձեր աչքերի միջից տեսնում եմ հայոց ապագան: Ես ցանկանում եմ, որ դուք լինեք եկեղեցուն կապված, եկեղեցի հաճախեք, մոմ բռնեք, խորան բարձրանաք, մեկ խոսքով՝ եկեղեցին ձեր կյանքովը լցնեք մեր ժողովրդի պատվի և Աստուծո փառքի համար, հավիտյանս հավիտենից: Ամեն:*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑԻՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ

Սեպտեմբերի 19-ին Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Գյումրի՝ օրհնելու երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի անունը կրող վերակառուցված դպրոցը, որը գտնվում է վերջերս Վեհափառ Հայրապետի անվամբ վերանվանված փողոցում:

1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո այցելելով Գյումրի, երջանկահիշատակ Հայրապետը որոշեց վերականգնել ավերված դպրոցի շենքը՝ վերականգնման աշխատանքները հանձնարարելով Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդին: Վերջինս էլ ամերիկահայ Գևորգ Հովնանյանի բարերարությամբ վերականգնեց դպրոցի շենքը: Եվ ահա, ինչպես նշեց ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, կատարվեց Վազգեն Ա Կաթողիկոսի կամքը:

Վազգեն Ա Կաթողիկոսի համար հոգեհանգստյան աղոթք անելուց հետո, Նորին Սրբությունը շնորհավորեց քաղաքային իշխանություններին, ուսուցիչներին և աշակերտներին դպրոցի կառուցման առթիվ:

«Աստծու գաղափարը, Ավետարանի ճշմարտությունները, Եկեղեցու շարականները, մեր հայրերի աղոթքները պիտի հնչեն այս դպրոցի երեխաների շուրթերով», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով կենդանի պահել «գիտության, ազգային պատկանելիության, եկեղեցական նախանձախնդրության զգացմունքները», առանց որի դպրոցը կդառնա անարժեք: Բացման արարողությանը ներկա էին նաև տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները:

Նույն օրը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ բացվեց նաև Գյումրիի քաղաքային պուրակը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Յոթ Վերք Սբ. Աստվածածին եկեղեցի: Գոհաբանական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց ներկա հավատացյալներին: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Շիրակի թեմի գործունեությունը և հայտնեց Ազատանի նոր եկեղեցու կառուցման մասին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 20-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Ստեփանավան՝ այս անգամ օրհնելու Սբ. Գրիգոր Լուսավորչի անունը կրող դպրոցի նորակառույց շենքը: Դպրոցի ներսում կառուցված է նաև մատուռ, որտեղ Վեհափառ Հայրապետը կատարեց առաջին աղոթքը:

Ստեփանավանի դպրոցի կառուցումը նույնպես իրականացվել է երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ցանկությամբ: Այս անգամ դպրոցի շինարարական աշխատանքներն իրականացվել է Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի կողմից: Ինչպես հայտնեց թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանը, թեմի ջանքերով կահավորվել է նաև դպրոցը: Առաքվել է 750 սեղան, 20 համակարգիչ, երկու կոնտեյներ դպրոցական գույք: Ըստ Վաչե սրբազանի, այլ առարկաների հետ մեկտեղ, դպրոցի 700 աշակերտները կստանան նաև քրիստոնեական դաստիարակություն: Ինչպես



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՏՐՈՒՄ Է ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ
ԲԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ԺԱՊԱՎԵՆԸ

տեղեկացրեց Ստեփանավանի քաղաքապետ Ռոմեն Բաղրամյանը, ի երախտագիտություն ցուցաբերած օժանդակության, դպրոցի մարզադահլիճը կկոչվի Վաչե արքեպիսկոպոսի անունով: Վաչե սրբազանին հանձնվեց նաև դպրոցի խորհրդանշական բանալին:

«Շնորհակալ եմ գալիս Աստծու առաջ և ձեր բոլորի անունով փառք և գոհություն եմ ընծայում Աստծուն, որովհետև այս ամիսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պատմության մեջ բացառիկ ամիս էր», - գոհությամբ նշեց Նորին Սրբությունը՝ հիշատակելով Հյուսիսային Կովկասում սեպտեմբերին օծված երեք նոր եկեղեցիներն ու նույն ամսում Հայաստանում բացված երեք նոր դպրոցները:

**ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ**

## ՕԾՎԵՑ ԱՐԵՆԻԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 28-ին Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Վայոց Ձորի մարզ՝ օծելու Արենի գյուղի վերակառուցված Սբ. Աստվածածին մատուռի Սբ. Սեղանը: Սրբազան հայրերի՝ Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանի, Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանի, Տաթև արք. Սարգսյանի և Վիգեն եպս. Այքազյանի մասնակցությամբ օծվեցին նաև մատուռի չորս ավետարանիչներին խորհրդանշող չորս սյուները: Այսուհետ 14-րդ դարի այս մատուռը, որը հղացել է Մոմիկ ճարտարապետը, կդառնա գործող մատուռ: Մինչ Ս. Սեղանի օծումը, խորանում տեղադրված վեմ-քարի առջև Տաթև սրբազանը մատուցեց նաև առաջին պատարագը:

Մատուռի օծումից հետո տեղի ունեցավ բազմամարդ հանդիսություն, որին ներկա էին նաև արտասահմանյան բազմաթիվ հյուրեր:

«Բազմաթիվ եկեղեցիներ ենք վերանորոգել իմ գործունեության տարիներին, բայց այսպիսի համաժողովրդական հանդիսության առաջին անգամ եմ հանդիպում», – դիմելով մասնակիցներին ասաց Հուշարձանների Պահպանության Հայկական Ընկերության նախագահ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, որի ղեկավարությամբ Եղեգնաձորում վերականգնվել են նաև այլ եկեղեցիներ՝ Գնդեվանքը, Սբ. Կարապետ եկեղեցին և այլն: Ներկայումս վերականգնվում է Նորավանքի գլխավոր եկեղեցին՝ Սբ. Աստվածածինը:

Շնորհակալություն հայտնելով մատուռի վերականգնման համար, Արենիի գյուղապետ Միքայել Գրիգորյանը կարևորեց նաև ծխական համայնքների վերականգնումը, «որպեսզի ժողովուրդն իր հոգևոր ծարավը հագեցնելու համար ստիպված չդիմի օտարամուտ քարոզիչներին», – ասաց գյուղապետը:

«Այսօր ես ուզում եմ, որ նայեք տաճարի գմբեթին և նրանից քաղեք ձեր նախնիների հավատքը և միշտ կապված մնաք եկեղեցուն», – ներկաներին իր պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով Հուշարձանների Պահպանության Ընկերության և շինարարների աշխատանքը: Վեհափառ Հայրապետը մատուռին հանձնեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից տարված մի սկիհ: Մատուռին վերադարձվեց նաև տարիներ առաջ կորսված և վերջերս վերագտնված զանգը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մատուռի մերձակա գերեզմանատանը թաղված հինգ ազատամարտիկների համար հոգեհանգստյան կարգ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի ունեցավ նաև Արենի գյուղի խմելու ջրի ջրատարի բացումը՝ կառուցված Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդի հովանավորությամբ:

Նորին Սրբությունն այցելեց նաև Նորավանքի վերակառուցվող Սբ. Աստվածածին եկեղեցի՝ ծանոթանալու ընթացող շինարարական աշխատանքներին, որը նախատեսվում է ավարտել եկող տարվա ամռանը:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ - Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սույն թվականի օգոստոսի 19-ին 1700-ամյակի տոնակատարությունների շրջանում սկիզբ առավ անդրանիկ ուխտագնացությունը Ռումինիայից Հայաստան ժամանումով՝ գլխավորությամբ և առաջնորդությամբ 1700-ամյակի գրասենյակի ընդհանուր տնօրեն գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, Ուխտագնացությունների հանձնախմբի ատենապետ գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Ռումինիայի Հայոց առաջնորդ գերշ. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի, ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցու զանազան թեմերից ընկերակցող հոգևորականների (Գերմանիայից՝ Տ. Սերովբե վրդ. Իսախանյան, Լիբանանից՝ Տ. Մեսրոպ քհն. Քոքզյան, Ռումինիայից՝ Հայկ սրկ. Ազարյան): Ուխտավորների առաջին այս խումբը դիմավորվեց մեծ խանդավառությամբ Ուխտագնացությունների Հայաստանյան հանձնախմբի և ժողովրդային մեծ բազմության կողմից: Դիմավորմանը ներկա էին զանգվածային և լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Օգոստոսի 19-ին, երեկոյան, Հայաստան ժամանեց նաև Ուկրաինայի Հայոց առաջնորդ գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի գլխավորած Ուկրայինայի ուխտավորների խումբը:

Ամստերդամով ուխտավորների մեկ այլ խմբի հետ Հայաստան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ. գերշ. Տ. Մուշեղ եպիս. Մարտիրոսյանը: Օգոստոսի 17-ից Երևանում էին գտնվում Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Հարավային Ռուսաստանից, Թեհրանից ու Նոր Ջուղայից ժամանած ուխտավորների խմբերը:

Հարկ է նշել, որ «Հայաստան երկիր ուխտավայր» ծրագրի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նաև քույր եկեղեցիները, որոնց ներկայացուցիչներն ու անհատ եկեղեցականներ իրենց մասնակցությունն են բերում այս ուխտագնացությանը (Գերման, Անգլիկան, Ռումին և այլն): Ուխտավորների հետ Հայաստան են ժամանել զանազան երկրների թղթակիցներ, որոնք հանգամանորեն լուսաբանելու են ուխտագնացությունների հետ կապված բոլոր մանրամասնությունները:

Անդրանիկ այս ուխտագնացության լավագույնս անցկացման համար մեծապես զգալի է պետության, Հայց. եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդ սրբազանների և ժողովրդի սրտակից նախանձախնդրությունը, որի շնորհիվ էլ Սփյուռքից ժամանած ուխտավորների խանդավառությունն էլ ավելի մեծ թափ է ստանում: Տրամադրվել է շուրջ 10 հանրակառք. ամեն մեկը կրում է որևէ ուխտավայրի և սրբավայրի անունը՝ Մշո Ս. Կարապետ, Հաճկատար, Նարեկ, Վարագ, Գեղարդ, Գանձասար և այլն:

*Դիվան 1700-ամեակի*

1700-ամյակին ընդառաջ

Գրեց ուխտաւոր

# ԴԷՊԻ ՀԱՃԿԱՏԱՐ

Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման, 1700-ամյակի առթիւ կազմակերպուած ուխտագնացութեանց առաջինը սկսաւ 14 Օգոստոս 1997-ին, Ռումանիոյ թեմին և Հաճկատարի վանքին ուխտագնացութեամբ:

Ծանօթ է որ ուխտագնացութեանց հնգամեայ ծրագիրը երկճիւղ է միշտ. ուխտաւորները նախ պիտի հաւաքուին սփիւռքահայ ուխտավայր մը (տարուէ տարի՝ Ռումանիա, Լիբանան, Ֆրանսա, Երուսաղէմ, Թուրքիա, Իրան) և ապա Հայաստան աշխարհ: Նպատա՞կը - վերարժևորել սփիւռքեան մեր վանքերը, վերարթնցնել ուխտի և ուխտագնացութեան գաղափարը և ապա հանգրուանուիլ հայրենիք, որ այս առթիւ հռչակուած է «Հայաստան երկիր ուխտավայր»:

1997 թ. ուխտագնացութեան առաջին կայանը Ռումանիան էր, երկրորդը՝ Հայաստանը՝ ուր ուխտաւորները պիտի այցելեն Այրարատեան Հայրապետական, Կոտայքի և Արմաւիրի թեմերը:

Ուխտաւորներու առաջին խումբը, ղեկավարութեամբ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Պուքրէշ հասաւ հինգշաբթի, 14 Օգոստոսին, և Օթօբէնի օդակայանի Պատուոյ դահլիճին մէջ դիմաւորուեցաւ Ռումանիոյ Հայոց Առաջնորդ Տ. Տիրայր Արք. Մարտիկեանի և Ռումինիայում Հայաստանի Հանրապետութեան ժամանակաւոր հաւատարմատար Արա Պապեանի և այլ պաշտօնական անձնաւորութեանց կողմէ:

Նոյն օրը Առաջնորդ Սրբազանը, Յովնան Արքեպիսկոպոսը այցելեցին Ռումանիոյ կրօնից նախարարին և անոր հետ ունեցան հոգեշահ զրոյց: Նոյն գիշեր Պուքրէշ հասան Գերմանիոյ ուխտաւորները՝ առաջնորդութեամբ Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանի, և Երուսաղէմէն Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան:

*Հրաշափառ՝ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ*

Ուրբաթ, 15 օգոստոսի առաւօտեան ժամը 9-ին Պուքրէշի Ս. Հրեշտակապետաց Մայր եկեղեցւոյ մուտքին ուխտաւորները դիմաւորուեցան Ռումանիոյ Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի, հոգևորականութեան և ժողովրդեան կողմէ: Եկեղեցւոյ մուտքին Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսին ընծայուեցաւ աղ ու հաց և Սրբազանը, զգեստաւորեալ, նախագահեց թափորին: Կանոնական աղօթքներէ յետոյ, եկեղեցւոյ մէջ խօսք ասաւ Տիրայր Սրբազանը, բարի գալուստ մաղթեց իր սրբազան եղբայրներուն և ուխտաւորներուն, խօսեցաւ Ռումանիոյ գաղութի պատմութեան մասին և իր ուրախութիւնը յայտնեց, որ 1700-ամեակի ուխտագնացութիւնները կը սկսին Ռումանիայէն: Իր պատասխանի մէջ, Մեսրոպ Սրբազան շնորհակալութիւն յայտնեց Տիրայր Արքեպիսկոպոսին, հոգևորականաց և համայն ռումանահայութեան, իրենց սրտագին և ջերմ ընդունելութեան համար: Ան ներկաներուն

փոխանցեց իր յուզումը, քանի, այլեւ, «ուխտագնացութիւնը ծրագիր և յայտագիր չէ, գրասենեակներու մէջ մտածուած բան չէ, այլ ապրում է, կեանք է, կեանքի ոճ է, կեանքի և հաւատքի հասկացողութիւն է, և որ անդրանիկ այս ուխտագնացութիւնը մեզ պիտի տանի դէպի Հաճկատար, Ռումանիոյ հայոց աւելի քան վեց դարեան ուխտավայրը»: Ապա Սրբազան Հայրը ներկայացուց ուխտագնացութեան ինգամեայ ծրագիրը, և մաղթեց որ Հաճկատարը ի կատար ածէ մեր ժողովուրդին խնդրանքները:

Եկեղեցական արարողութիւններէն յետոյ հիւրերը բարձրացան Հայ Մշակոյթի Տունը, ուր Տիրայր Սրբազանը և Կեդրոնի վարիչ Տիկին Սիրանոյշ Նէվրուզեան բացատրութիւններ տուին թանգարանի հարստութեանց մասին:

Պուքրեշի հայոց թանգարանը, որ «հուրէ և ջուրէ» անցնելէ յետոյ դարձեալ ազգային սեփականութիւն է, պատիւ կը բերէ Ռումանիոյ հայոց Առաջնորդութեան: Այնտեղ ցուցադրուած են յատկապէս եկեղեցական իրեր, զգեստներ, կոնդակներ, հրովարտակներ և ձեռագիր մատեաններ, որոնցմէ հնագոյնը Կաֆայի մէջ, 1351 թ. գրուած ձեռագիր մատեան մըն է:

Հիւրերը ապա առաջնորդուեցան մատենադարան, ուրտեղ Մեսրոպ և Յովնան Սրբազանները բացումը կատարեցին 1700-ամեակին նուիրուած ցուցահանդէսի մը: Ցուցադրութեան դրուած էին երիտասարդ մանրանկարիչ Հայկ սրկ. Ազարեանի իքոնները և ինքնատիպ գործերը: Հայկ սարկաւագ երկու տարիներէ ի վեր Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինութեամբ կ'ուսանի Ռումանիոյ Աստուածաբանական Ակադեմիայի որմնանկարչութեան և սրբապատկերներու վերանորոգման բաժիններու մէջ:

Գնահատական խօսքերով հանդէս եկան Տ. Տիրայր, Տ. Մեսրոպ, Տ. Յովնան Սրբազանները և եղաւ յիշատակի նուէրներու փոխանակում:

Խումբը այցելեց նաև Առաջնորդարանի տարբեր բաժանմունքները, «Նոր կեանք»-ի տպարանը և ապա ուղղուեցաւ դէպի Հայոց գերեզմանատունը, ուր բացատրութիւններ տուաւ Տ. Զարեհ Ծ. վրդ. Պարոնեան: Գերեզմանատան մէջ ուխտաւորները հաւաքաբար աղօթեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ, և ապա աղօթքներ եղան Ռումանիոյ նախկին Առաջնորդ Յուսիկ Արք. Զոհրապեանի, Վազգէն Ա Կաթողիկոսի հօր՝ Աբրահամ Պալճեանի, Ռումանիոյ փառքի և տառապանքի պատմիչ Յ. Ճ. Սիրունիի, բանաստեղծ Զարեհ Պլպուլի և ընտանիքի անդամներուն հոգւոց ի հանգիստ:

*Այցելութիւն Հայոց դեսպանատուն*

Նոյն օրը, կէսօրէ յետոյ Տ. Մեսրոպ և Տ. Յովնան Սրբազանները, Տ. Սեռովբէ Հայր սուրբը և այլ անձինք քաղաքավարական այցելութիւն մը տուին Ռումանիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան ժամանակաւոր հաւատարմատար Արա Պապեանին, որ ջերմ ընդունելութիւն մը վերապահած էր իր հիւրերուն: Պրն. Պապեան արդէն մօտէն ալ կը հետևէր ուխտագնացութեան և ըստ ամենայնի մասնակցեցաւ և իր լրիւ օժանդակութիւնը բերաւ ուխտագնացութեան յաջողութեան:

*Ընդունելութիւն Ռումանիոյ Պատրիարքին մօտ*

Ուրբաթ երեկոյեան ժամը 5.30-ին ուխտաւորները առաջնորդութեամբ Տիրայր Արքեպիսկոպոսի այցելեցին Ռումէն Օրթոդոքս եկեղեցւոյ պետ Ն. Ամեն. Կ. Թէոքթիստ Պատրիարքին, իր ապարանքին մէջ: Հիւրերը պալատի

մուտքին դիմաւորուեցան Պատրիարքական փոխանորդ Տ. Թէոփանոս Արքեպիսկոպոսի կողմէ և պտտեցան պատրիարքարանի տարբեր բաժինները, թանգարանը, մատուռը, ներքին պարտէզը և ապա, Սուրբ Սինոդի դահլիճին մէջ զիրենք ընդունեց Պատրիարք Սրբազանը:

Տիրայր Սրբազանը խօսք առաւ հայերէնով և ներկայացուց ուխտաւորները, 1700-ամեակի ծրագիրը, յիշեց Հայ և Ռումէն եկեղեցւ կապերը, և յատկապէս Պատրիարքին սրտագաւ վերաբերմունքը հայոց հանդէպ: Նոյնքան սիրալիր էր Թէոքթիստ Պատրիարք իր պատասխան խօսքի մէջ, և ինք ալ յիշեց Հայ և Ռումէն եկեղեցիներու կապերը, հոգելոյս Ժուստինիան Պատրիարքին կատարած մեծ գործը, յիշեց իր այցը Ս. Էջմիածին՝ ուր հանդիպած էր Ռումէն եկեղեցւ և ժողովրդի մեծ բարեկամ Վազգէն Ա և հիացած: Ծեշտեցաւ նաև իր նորոգ կապը Գարեգին Ա-ի՝ որուն մէջ ան կ'ողջունէր մեծ էքիւմենիսքը և Քրիստոնէական եկեղեցւոյ միութեան ռահվիրան: Պատրիարքը յիշեց նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսը, որուն հետ ունեցած է բարեկամական երկար տարիներու կապեր:

Հանդիպումին ներկայ էին Ռումէն Սինոդի անդամ Պրն. Վարուժան Ոսկանեան և Ռումանիոյ Խորհրդարանի փոքրամասնութեանց երեսփոխան Պրն. Վարուժան Փամպուքճեան: Պաշտօնական թարգմանն էր Տ. Զարեհ Ծ. Վրդ. Պարոնեան:

Յանուն ուխտաւորաց խօսք առաւ Տ. Մեսրոպ Սրբազան, որ յայտնեց թէ ինչպէս իր երազը ահա մարմին կ'առնէ, և 1700-ամեակի ուխտի ճամբան կը սկսի Ռումէն հողին վրայ, Համկատարի վանքէն, և, յատկապէս, քոյր եկեղեցւոյ մը պետին ալ օրհնութեամբն ու աղօթքովը:

Այս առթիւ, Մեսրոպ Սրբազան Թէոքթիստ Պատրիարքին նուիրեց 1700-ամեակի նուիրուած մետալ մը, գործ Ռոմէն Զուլիակեանի: Իր կարգին, Յովնան Սրբազան ևս խօսեցաւ, և Պատրիարքին նուիրեց Հրայր-Բազէ Խաչերեանի «Արցախ» ալպոմը:

*Հոգևոր համերգ*

Ճիշտ նոյն երեկոյեան, ժամը 7-ին, Ռումանիոյ Հայոց Առաջնորդարանը կազմակերպած էր հոգևոր համերգ մը՝ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, և զայն ազնուօրէն դրած էր Տ. Մեսրոպ և Տ. Յովնան Արքեպիսկոպոսներու հովանաւորութեան ներքև:

Համերգը սկսաւ Հրաշափառ շարականով, երբ որ Սրբազան հայրերը մուտք գործեցին խունկերամ լեցուած եկեղեցւոյ մէջ:

Երգչախումբը կազմուած էր Ռումէն երաժշտանոցի և օբերայի լաւագոյն երգիչներով, և ղեկավարն էր բրոֆ. Մարիանա Բոբովիչի, դաշնակի վրայ՝ Լեթիցիա Ֆլավիան:

ումբը գրեթէ բոլորովին օտար, բայց հիանալի հաւատարմութեամբ և գեղեցկութեամբ մեկնաբանեց հայկական շարականները՝ Պատարագէն մասեր. շատ գեղեցիկ էր «Հրեշտակային» սրբասացութիւնը, Եկմալեանի «Հայր մերը»: Նոյնքան գեղեցիկ էր Կունոյի «Ավէ Մարիա»-ն, և բիւզանդական տաղերու մեկնաբանութիւնը:

Համերգը տեղի ունեցաւ խորհրդազգաց մթնոլորտի մը մէջ, նոյն այն եկեղեցւոյ մէջ՝ որ օծուած էր 1915 թ., հայու մահուան տարին, և սակայն նոյն այդ տաճարին մէջ հայ շարականը կը հնչէր, և պատերէն ալ մեր սուրբերը կ'ընկերակցէին հայ տաղին և յարութեան երգերուն:

Համերգի աւարտին, մատենադարանի սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն ընթացքին արուեստագէտները, տեղացի հայն ու ուխտաւորները միաձուլուեցան բարեկամութեան մէջ:

*Դէպի Սուչավա*

Շաբաթ, 16 օգոստոսի առաւօտեան կանուխ ուխտաւորները «Հայր մեր»-ով ճամբայ ելան դէպի Սուչավա, 300 մղոն դէպի հիւսիս, Պուքովինայի նահանգին այն շրջանը՝ որ Ռումանիոյ համար սուրբ քաղաք է, և հայոց համար ալ «ռումանահայոց Անի»-ն, քանի որ այդ քաղաքին մէջ, ատենին՝ կը գտնուէին 12 եկեղեցիներ և երկու վանքեր:

Ճամբուն վրայ հիւրերը Ֆոքշան քաղաքի մուտքին դիմաւորուեցան Տ. Եզրաս քհն. Պոկտանի կողմէ և մուտք գործեցին հայոց եկեղեցին, հայոց գերեզմանատունը և վայելեցին Ֆոքշանի հայոց հիւրասիրութիւնը: Ֆոքշանը իր 300 տարուան փառքին շրջանէն յետոյ՝ տխուր վկան է հին Ռումանիոյ փառքին: Այդպէս ալ խօսեցաւ փոքրաթիւ համայնքի նախագահը՝ Պրն. Պերճ Ոսկանեանը:

*Ռոման*

Ուխտաւորներու երկրորդ կայանն էր Ռոման քաղաքը, որ ԺԴ դարուն հիմնուած է հայոց կողմէ, և դարերով եղած է կարևոր հայկական կեդրոն, իր եկեղեցիներով և դպրոցներով:

Սրբազան Հայրերն ու ուխտաւորները դիմաւորուեցան Սուչավայի և շրջակայից հովիւ Տ. Թորգոմ քհն. Սանտալեանի կողմէ և առաջնորդուեցան եկեղեցի ուր տեղի ունեցաւ կարճ արարողութիւն մը: Ռոմանի եկեղեցին քանի մը տարիէ ի վեր փոխ տրուած է Ռումէն Օրթոդոքս եկեղեցւոյ, և լրիւ նորոգուած է, ունի բազմաթիւ սրբանկարներ:

*Դէպի Սուչավա*

Ուխտաւորները իրենց ճամբան շարունակեցին դէպի սուրբ քաղաքը՝ Սուչավա, և գացին Ս. Խաչ եկեղեցին, ուր իրենց կը սպասէր Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս և բազմահարիւր ուխտաւորներ, եկած Ռումանիոյ տարբեր շրջաններէն:

Երեկոյեան կիրակամտից ժամերգութենէն յետոյ Սրբազան Հայրերը կատարեցին մատաղի մսի օրհնութիւնը, և շատերն ալ մասնակցեցան «ականջապուր»-ի պատրաստութեան: Այդպէս, տասնեակներով կիներ հազարէն աւելի ուխտաւորներու համար կը պատրաստէին յատուկ ճաշ մը՝ որ կը կոչուի «ականջապուր»: Ականջապուրը արևմտահայոց ծանօթ «մանթի»-ն է, միայն թէ յատուկ վարպետութեամբ պէտք է ծալել և կարելի եղածին չափ ականջի նմանեցնել: Ուխտաւորներու միւս կերակուրը «խուրութ»-ն է, որ կը պատրաստուի պէս-պէս խոտերով, որոնց սերմերն ալ, ըստ աւանդութեան, բերուած են Անիէն:

Ուխտաւորական քաղցր երեկոյ մըն էր, տխուր, թերևս, երբ կը տեսնես հայոց բեկորները և կամ միակ հայը՝ Յովակիմ Պալթասար, 91 տարեկան, որուն դէմքը կարծես վերցուած է հին հայկական մագաղաթեայ ձեռագրէ մը: Քարերը կը խօսին մեզի, դարերը կը խօսին քեզի: Կը դիտես մարդոց դէմքերը,

հին դէմքեր, մաշուած դէմքեր թերեւս, եւ կը զարմանաս, եւ կ'ըսես՝ ահա ժողովուրդ մը, որ մեռնել չ'ուզեր:

Ամբողջ գիշերը Ս. Խաչ եկեղեցին լեցուած էր հաւատացեալներով եւ աշխատողներով:

*Վերափոխումն Ս. Աստուածածնի*

Ուխտաւորութեան բարձրակէտն էր կիրակի, 17 օգոստոս: Առաւօտեան կանուխ ժամերէն, հայ եւ յատկապէս ռումէն ուխտաւորներ ոտքով եւ նաև ծունկի կը բարձրանային Ս. Աստուածածնայ բլուրը, ոմանք ալ, միշտ ծնրադիր, երիցս կը դառնային եկեղեցւոյ շուրջ, մինչև որ Առաջնորդը եւ հոգեւորականաց դասը ժամը 9-ին բարձրացան բլուր, եւ պահ մը յետոյ սկսաւ Պատարագը: Պահ մը դուն քեզ Երուսաղէմ գիտէիր, Յիսուսի օրերը գիտէիր. հարիւրաւորները խաչվառով, աղօթքով հոն էին, ծունկի էին, հագուստ, վերարկու կը տարածէին, կ'ուզէին որ պատարագիչը իրենց վրայ կոխելով յառաջանար: Միւս կողմէ կը հնչէր Տաթեւէն բերած (եւ այնտեղ 1244-ին ձուլած) զանգակը:

Մատուռը կը յորդէր բազմութեամբ, կը յիշէիր մեր հին վանքերը, Կ. Զարեանի նկարագրած ուխտաւորութիւնը՝ երբ ռչխարներ կը բարձրանային խորան...

Պատարագիչն էր Յովնան Արքազանը, իսկ իր ոտքերուն՝ ուխտաւորներուն նուէրները... Այդ նուէրները մոմ, պտուղ, հագուստ, անձնական իրեր, դրամ, եւ յատկապէս թղթիկներ՝ զանազան եւ զարմանազան խնդիրքներով-առողջութեան խնդրանքէն սկսեալ մինչև անկարելի բաներ, բաներ՝ որոնք միայն հաւատաւոր հոգիներ կրնան մտածել եւ խնդրել Աստուծմէ: Քարոզը խօսեցաւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան, որ յատկապէս անդրադարձաւ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին, Հաճկատարի եւ 1700-ամեակի ուխտագնացութեանը: Ս. Պատարագը երգեցին Գոնսթանցայի դպիրները:

Ս. Պատարագէն յետոյ տեղի ունեցաւ խաղողի եւ մատաղի օրհնութիւն: Ճաշ, թռիչքներ, աղօթք, երգ ու շարական: Միրոյ ճաշ այնտեղ, ուր 1946 թ. հոգելոյս Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը անցուցեր էր իր քառասունքը:

Յետոյ դարձեալ թափոր, եւ պահ մը ետք Հաճկատարը իր մենութեան մէջ է: Բայց կերպով մը բաղդաւոր է, ուխտաւոր ունի. Վարագ չէ, Նարեկ չէ, Մշոյ Ս. Կարապետ չէ: Տէր ունի, թէեւ հեռաւոր:

Մեզի, ուխտաւորներուս համար ալ ուրիշ օր է եւ ուրիշ կիրակի: Եւ վաղուան կիրակիները մեզի համար տարբեր պիտի ըլլան: Հաճկատարի Աստուածածնի կիրակին ապրած ենք:

*Պոթոշան*

Կիրակի երեկոյեան ուխտաւորները այցելեցին Պոթոշան քաղաքը, որ Սուչավայէն քառասուն քիլոմեթր է: Պոթոշան մէկն է այն եօթը քաղաքներէն, ուր հաստատուեր էին հայերը՝ երբ Աղէքսանդր Բարի իշխանապետի օրով Լեհաստանէն եկան եւ հաստատուեցան Պուքովինայի տարբեր շրջանները: Բայց Պոթոշանի ամենէն հին հայկական եկեղեցին կառուցուած է 1350 թ., եւ ատեն եղած է որ 700 տուն հայեր ապրած են այստեղ, եւ ունեցած են իրենց եկեղեցիները: Ուխտաւորները այցելեցին Ս. Երրորդութիւն եւ Ս. Աստուածածին եկեղեցիները եւ հայոց գերեզմանատունը, որուն Ս. Աւետում մատռան մէջ պաշտուեցաւ հոգեհանգիստ: Արարողութենէն յետոյ ուխտաւորները հիւրասիրուեցան տեղացիներուն կողմէ:

Յիշատակելի բայց տխուր այցելութիւն մըն էր այս, և թերևս ուխտաւորութիւն մը՝ դէպի Ռումանիոյ հայոց անցեալը և այցելուներուն համար յատկանշական էր գերեզմանաքարի մը արձանագրութիւնը.- եկի, տեսի, թողի, գնացի: Մարդկային ճակատագիր, թերևս, բայց նաև հայու ճակատագիր, անպայման:

*Զամքա*

Երկուշաբթի, 18 Օգոստոսին, մեռելոցի օր էր: Ուխտաւորները Տիրայր Սրբազանի առաջնորդութեամբ իրենց վերջին այցը տուին Սուչավայի երկրորդ վանքին, որ ծանօթ է Զամքա անունով: Զամքա սլաւոներէն բերդ կը նշանակէ, և իրաւ որ ատենին եկեղեցին իբրև բերդ ալ օգտագործուած է: Զամքայի վանքը Սուչավայի հայոց կառուցած եկեղեցիներէն ամենէն մեծն է թէ՛ իր կառուցուածքով, թէ՛ իր գեղարուեստական արժէքով:

Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ հոգելոյս Վազգէն Ա Կաթողիկոսի համար, որուն վախճանման երրորդ տարելիցն էր, ինչպէս նաև Ռումանիոյ մէջ հանգուցեալ բոլոր հայերուն, և Ամերիկա, Միացեալ Նահանգներ, Արժանթին, Գանատա և այլուր մահացած ռումանահայերու յիշատակին:

Ուխտաւորները նոյն օրը վերադարձան Պուքրէշ և երեքշաբթի, 19 օգոստոսին, յատուկ օդանաւով մը մեկնեցան Հայաստան, շարունակելու համար իրենց ուխտագնացութիւնը՝ Արմաւիրի, Արարատեան և Կոտայքի թեմերուն:

Ռումանահայ թեմը իր Առաջնորդով և ժողովրդով բարի օրինակ եղան լաւագոյն կերպով կազմակերպելով այս անդրանիկ ուխտագնացութիւնը, քանի սակաւ են թուով և աշխատողներով: Բայց ցոյց տուին որ կը սիրեն հայոց եկեղեցին, և հաւատարիմ են ազգային սրբութեանց և աւանդութեանց:

Զամքայի մէջ երեք սրբազանները իրարու փոխանցեցին <u>*ուխտի մոմերը*</u> որոնք յառաջիկայ տարիներուն պիտի փոխադրուին երկրէ երկիր, և 2001 թ. Յունիսի 17-ին պիտի բերուին Ս. Էջմիածին Իջման Ս. Սեղանը:

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՂՐԻՄԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

*Հայկական գաղթավայրերի պատմության մեջ իր կարևոր ու գործուն տեղն է ունեցել Ղրիմի հայ գաղութը, որն իր արմատներով հասնում է մինչև տասներորդ դար: Հատկապես Անիի թագավորության անկումից հետո անեցի հայերն ապաստան են գտել Ղրիմի թերակղզում, ուր մինչև օրս, ամեն քայլափոխին, կարելի է տեսնել եկեղեցաշեն ու ստեղծարար հայ հոգու երբեմնի վկայությունները: Ղրիմահայ գաղութի կարևորագույն հոգևոր կենտրոնը եղել է Թեոդոսիայի մոտերքում գտնվող Սբ. Խաչ վանքը, որը հիմնվել է 1338 թվականին և շուրջ հինգ հարյուր տարի շարունակ եղել է թե՛ առաջնորդանիստ վանք և թե՛ ուխտավայր: Դարեր շարունակ մեր հավատավոր նախնիները, ամեն տարի երկու անգամ, Սբ. Աստվածածնի վերափոխման և Վերացման Սբ. Խաչի տոներին ուխտի են գնացել դեպի այդ սրբատեղին և իրենց աղոթքը վերառաքելով առ Բարձրյալն Աստված՝ նորոգել են իրենց հավատարմության ուխտը առ Աստված և իրենց Մայր Եկեղեցին:*

*Վերջին հինգ տարիներին, երկար տասնամյակների հարկադրված արգելքներից հետո, վերստին վերականգնվել են ուխտագնացությունները դեպի այս պատմական սրբավայրը: Սակայն այս տարվա, օգոստոսի 17-ի Սբ. Աստվածածնի վերափոխման տոնի օրվա ուխտագնացությունն ուներ մի նոր խորհուրդ, մի նոր հոգևոր խանդավառություն, որովհետև այն վերակենդանություն առած Ղրիմի հայ գաղութի համար առաջին ուխտագնացությունն էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված ուխտագնացությանց ծրագրի շրջագծում:*

*Օգոստոս 15-ին իբրև ուխտավորներ Ղրիմ ժամանեցին Ռոստովի Չալտըր գյուղի հայ եկեղեցուն կից մանկական-երիտասարդական երգի-պարի խումբը՝ առաջնորդությամբ իրենց Հոգևոր Հովիվ Տ. Թադեոս քահանայի: Չալտըր հայկական գյուղի բնակիչների նախնիները այնտեղ են տեղափոխվել Ղրիմից տակավին 18-րդ դարում, և իբրև խորհրդանիշ այսօր Ռոստովի Սբ. Խաչ եկեղեցում է գտնվում Ղրիմի Սբ. Խաչ վանքից տարված մի հնագույն խաչքար:*

*Հաջորդ օրը Կիևից, Օդեսայից և Լվովից ժամանեցին նաև երիտասարդ ուխտավորները, որոնք, առաջնորդությամբ Տ. Նաթան քհն. Հովհաննիսյանի, իրենց ուխտագնացությունը պիտի շարունակեին դեպի Հայաստան:*

*Նույն օրը Չալտըր գյուղի երգի-պարի խումբը համերգային մի ծրագիր ներկայացրեց հայ մեծահամբավ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու տուն-թանգարանում:*

*Օգոստոս 17, Տոն Վերափոխման Սբ. Աստվածածնի: Վաղ առավոտից Ղրիմի տարբեր կողմերից ու նաև Ուկրաինայի մի քանի այլ քաղաքներից եկած ուխտավորները խումբ-խումբ հավաքվեցին Սբ. Խաչ վանք տանող ճանապարհի սկզբին և Սրբազան Հոր ու Տ. Երեմիա և Տ. Թադեոս*

*քահանաների առաջնորդությամբ՝ «Առաւօտ լուսոյ» շարականի երգեցողությամբ շարժվեցին դեպի վանք, ուր արդեն շատերը զբաղված էին մատաղի նախապատրաստությամբ: Օրվա պատարագիչն էր Թեոդոսիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Երեմիա Մակիյանը: Պատարագի երգեցողությունը կատարեց Ռոստովի Չալթըր գյուղից ժամանած երգեցիկ խումբը: Մինչ պատարագիչ քահանա հայրը զգեստավորվում էր, Ուկրաինայի Հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Նաթան սրբազանը, իր շուրջը հավաքելով ժողովրդին, ողջույնից հետո, նրանց խոսեց ուխտի և ուխտագնացության իմաստի ու խորհուրդի, այսօրվա մեր կյանքում դրա կարևորության և վերանորոգիչ զորության մասին:*

*Այնուհետև, խաղողի օրհնությունից առաջ, Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց, մեկ անգամ ևս ողջունելով և իր օրհնությունները բաշխելով իր հավատավոր հոտին:*

*Ս. Պատարագի ավարտից հետո վանքի ողջ շրջափակում խարույկներ էին վառվում, և եփվում էր մատաղը: Ժողովուրդը պար էր բռնել ավանդական դհոլ-զուռնայի քաղցր նվագի տակ: Մինչև ուշ երեկո շարունակվեց, իրավամբ, եղբայրական սիրո ճաշը:*

*Հաջորդ օրը, օգոստոս 18-ի առավոտյան, Օդեսայից և Կիևից տասնհինգ երիտասարդներ, իբրև ուխտավոր, առաջնորդ Սրբազան Հոր գլխավորությամբ, եկան Մայր Հայրենիք՝ Սբ. Էջմիածնի կամարների տակ, Իջման Սբ. Սեղանի առջև, վերանորոգելու համար իրենց նախնյաց ուխտը:*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

*Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի տոնակատարության առթիվ նախատեսվող միջոցառումների շրջանակներում օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էին եկել սփյուռքահայ առաջին ուխտավորների մեծ խմբերը: Նրանք սրբավայր-ուխտատեղիներ մեկնելու նվիրական փափագով Հայաստան էին ժամանել տարբեր երկրներից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Գերմանիայից, Ռումինիայից, Սիրիայից, Իրանից, Ուկրաինայից:*

*Ուխտավորներին Վեհարանի մեծ դահլիճում ընդունեց և իր հայրական օրհնանքի, քաջալերանքի ու գնահատանքի ջերմ խոսքն ասաց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:*

*Հանդիպմանը ներկա էին Կանադայի թեմի առաջնորդ, «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հանձնաժողովի պատասխանատու Տ. Հովնան Արք. Տերտերյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ, «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հանձնաժողովի անդամ Տ. Նաթան Եպս. Հովհաննիսյանը, Կիլիկյան Աթոռի Ամերիկայի Արևելյան թեմի և Կանադայի առաջնորդ, 1700-ամյակի Կենտրոնական Հանձնախմբի Գործադիր Մարմնի փարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ Արք. Աշճյանը, Կիլիկյան Աթոռի Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Մուշեղ Եպս. Մարտիրոսյանը, այլ հոգևոր հայրեր:*

*Վեհարանում կայացած ջերմ ընդունելությունից և Հայոց Հայրապետի հետ «ի հիշատակ» լուսանկարվելուց հետո, ուխտավորները շրջեցին նաև Մայր Աթոռի և Վեհարանի թանգարաններում, հիացումով դիտեցին այնտեղ պահպանվող թանկարժեք եկեղեցական գանձերը և արվեստի գլուխգործոցները:*

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

# ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

*Սույն թվականի օգոստոսի 18-ից 31-ը Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցավ Կիլիկիո Կաթողիկոսության Կիրակնօրյա դպրոցների ուսուցչական կազմերի Միջթեմական համագումարը՝ հովանավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, նախագահությամբ Արցախի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանի և կազմակերպությամբ Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրենության:*

*Համագումարը նվիրված էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին և ուներ «Ճանչնանք մեր եկեղեցին իր ամբողջական պատմությամբ» կարգախոսը:*

*«Մենք կ՚ուզենք, որ մայրենի եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ընտանիքին, իրենց ազգին և իրենց եկեղեցիին. չենք կրնար թոյլ տալ, որ աս ու ան իրենց ուզած կերպով խաղան մեր եկեղեցւոյն անուան հետ: Վերջապէս չենք ուզեր, որ անկրօն ու տգետ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը»:*

*Ահա այս մտածումների ու մտահոգությունների թելադրանքով էր, որ 1930 թ. Սահակ Կաթողիկոսի վավերացմամբ սկզբնավորվեց Հայաստանյայց եկեղեցուն կից Կիրակնօրյա դպրոցների եկեղեցասեր ու ազգանպաստ գործունեությունը, գործունեություն, որը հայ մանուկների հայեցի ու կրոնական դաստիարակությունը իրականացնող և մատաղ սերնդին եկեղեցուն կապող մի առաքելություն է:*

*Եվ շուրջ յոթ տասնամյակի վաղեմություն ունեցող այս խոսքերը կարծես հնչում են այսօրվա համար և խթան հանդիսանում այդ առաքելությունը իրենց ուսերին տանող այն նվիրյալների համար, ովքեր եկեղեցուն ու ազգին ծառայելու վճռակամ գաղափարով են ապրում, իրենց ներգործուն մասնակցությամբ նպաստ բերում հայ պարմանի ու պարմանուհու հոգեկերտման սուրբ ու պատասխանատու գործին:*

*Հայց. Եկեղեցու Կիրակնօրյա դպրոցները Սփյուռքի մեջ իրենց հիմնադրման օրերից առ այսօր ծառայում են իրենց նպատակին: Եվ այդ ծառայությունը առավել նպատակասլաց ու արդյունավետ դարձնելու միտումով Կիլիկիո Կաթողիկոսության հովանավորությունը վայելող թեմերի Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրենության կազմակերպությամբ ամեն տարի օգոստոս ամսին գումարվում է ուսուցիչների և ուսուցչուհիների Միջթեմական խորհրդակցական ժողով, որի նպատակն է վերջիններիս ի մի համախմբումը և յուրաքանչյուրի փորձառության միմյանց փոխանցումը՝ ի նպաստ Կիրակնօրյա դպրոցների արդյունավետ գործունեության: Այն միաժամանակ նոր լիցք է հաղորդում ուսումնական տարվա սեմին: Հայաստանի անկախացումից հետո համագումարներին մասնակցում են նաև Հայաստանի Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչները:*

*Այս տարի, երկրորդ անգամ լինելով, համագումարը տեղի ունեցավ հայրենիքում՝ ազատ ու անկախ Արցախում (1994 թ. գումարվեց Երևանում):*

*Շուրջ 150 ուսուցիչ-ուսուցչուհիներ, եկած Սիրիայից, Լիբանանից, Կիպրոսից,*

Կանադայից, Քուվեյթից, Հունաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, օգոստոսի 18-ին, երեկոյան, Հալեպից ժամանեցին Երևան և, միանալով Հայաստանի իրենց գործընկերներին, որպես իրենց ուխտագնացության առաջին հանգրվան, այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր Վեհարանի հանդիսության սրահում նրանց ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Մանրամասնելով Հայաստանում իրենց գտնվելու նպատակը, Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Սարգսյանը հակիրճ տեղեկություն տվեց անելիքների մասին և առանձնակի շեշտեց. «Կենթադրեմ, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Հայաստանյայց Եկեղեցվո Կիրակնօրյա դպրոցներու ընտանիքին համար սա պատմական և յուրահատուկ պահ է, երբ հազիվ ոտք կոխած հայրենի հողին վրա, կուգանք Էջմիածին, մեր հավատո Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կառուցած իր հավատքի դրսևորումը եղող այս վայրին մեջ, ընդունվելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին կողմե:

Գերագույն պահ է ասիկա մեզի համար, որովհետև մենք արտասահմանին մեջ, Վեհափառ Տեր, ինչպես գիտեք, մեր խնամքին հանձնված մանուկներուն կուտանք և կներարկենք քրիստոնեական հավատք, Լուսավորչյան հավատք՝ հանդեպ մեր ազգին, մեր Եկեղեցիին, Սուրբ Էջմիածնին, որ մեզմե յուրաքանչյուրին համար Սրբություն Սրբոց է, և որուն անունն իսկ մեզմե յուրաքանչյուրին հոգին կալեկոծե , միտքը կխռովե և զինք առավելագույն չափով կկապե իր Հայրենիքին և իր հավատքի կեդրոնին՝ Սուրբ Էջմիածնին:

Մեր ուսուցիչները թեև հոգնած են, բայց կհավատամ, որ Ձեր օրհնությունը իրենց ամբողջ հոգնությունը պիտի փարատե:

Այստեղ շատերը Ձեր զավակներն են, Ձեր գործակիցները եղած են ժամանակին Կիրակնօրյա դպրոցներեն ներս և այսօր, ինչու չէ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ նաև Ձեզի գործակից են. Ձեր հայրական հովանիին ներքև պիտի գործեն որպես կիրակնօրյա դպրոցի մշակներ, Ավետարանի մշակներ: Կխնդրենք Ձեզմե, Վեհափառ Տեր, որ օրհնեք մեզ, որպեսզի վաղը առտու, ժամը չորս ու կեսին մեկնինք դեպի Ստեփանակերտ, դեպի հերոսական Արցախ, Ձեր օրհնություններով հասնինք և մեր համագումարը սկսինք»:

Ողջունելով ներկաներին՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը նախ ուրախությամբ հիշեց Անթիլիասում անցկացրած տարիները, նշեց, որ պատգամավորներից շատերի հետ գործակցել է, ապա իր խոսքը խարսխեց հետևյալ կարևոր կետերի վրա.

«Ով այցելում է Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, պետք է մշտապես իր մտապատկերում պահի այն, որ Էջմիածինը խորհուրդ է, որից ճառագում է մեր հոգու լույսը և լուսավորում դեպի Տերը տանող ուղին: Պահը, որ կապրինք միասին այս սուրբ հողին վրա, կխորհիմ, կզգամ, որ ձեզմե յուրաքանչյուրին համար, նաև ինձի համար բացառիկ հոգեկան ապրումի պահ մըն է: Ես չգիտեմ ձեզմե ովքեր նախապես եղած են Սուրբ Էջմիածին և ովքեր չեն եղած և առաջին անգամն են, որ ոտք կդնեն հայրենի հողին վրա և առաջին իսկ պահին իրենց ժամանումին կուգան մեր ազգի իբրև քրիստոնյա ազգ, ծննդավայրի՝ Սուրբ Էջմիածնի այս կամարներուն ներքև՝ ստանալու համար ուժը այն հավատքին, որ այս քարերեն, այս ամբողջ մթնոլորտեն կճառագայթե խորհրդավոր ներգործությամբ մը, և անոնք, որոնք հավատքի զգացումով կմտնեն, անոնք է, որ կհաղորդվին այդ ուժին հետ, հավատքին ուժին հետ:

*Ես կուզեի նախ իմ գնահատանքը հայտնել այն աշխատանքին համար, որ կշարունակեք հարատևորեն հառաջ տանիլ Կիրակնօրյա վարժարաններուն ընտանիքին մեջ, կշնորհավորեմ վարիչ-տնօրենին եպիսկոպոս ըլլալը: Ես այսօր կողջունեմ բոլորիդ ներկայությունը համախումբ, որ կարտահայտե կրոնական առողջ, հայեցի, եկեղեցական ավանդությամբ, Հայաստանյայց եկեղեցվո հարազատ ավանդությանց համաձայն կրոնական դաստիարակության աշխատանքը, որ էական է, կենսական է մանավանդ այս շրջանին ոչ թե միայն Հայաստանին մեջ, այլ նաև բոլոր վայրերում, ուր կապրինք, որովհետև կապրինք այնպիսի դարուն մեջ, ուր կրոնական ապրումը մարդոց կյանքին անմիջական շրջանակին մեջեն դուրս կմղվի: Նյութապաշտական և ուրիշ ձգտումներ արդիական կյանքի՝ կգրավեն մարդիկը: Հետևաբար ձեր աշխատանքը ես կնմանցնեմ տեսակ մը հոսանքին ի վեր թիավարելու աշխատանքին: Դյուրին գործ չէ հոսանքին ի վեր թիավարելը: Ատոր համար ես կողջունեմ ձեր գործը այսօր և կհայցեմ Աստուծմե, որ ձեզի հովանի ըլլա, երբ դուք այցելեք մեր Սուրբերու հավատքին վկայությունը եղող բոլոր վայրերը»:*

*Նորին Սրբությունը կոչ արեց նվիրյալ ուսուցիչներ լինել, քանզի մեր ապագան, որ մատաղ սերունդն է, գտնվում է ուսուցիչների ձեռքում:*

*Ամենայն Հայոց Հայրապետն իր ասելիքը եզրափակեց Հայրական օրհնությամբ և բարեմաղթանքով:*

*Հանդիպումն ավարտվեց Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով և աջահամբույրով:*

*Օգոստոսի 18-ի գիշերը, լույս 19-ին, ավտոբուսների շարասյունը Էջմիածնից ուղղություն վերցրեց դեպի Արցախյան բնաշխարհ:*

*Օգոստոսի 20-ին, առավոտյան, Ստեփանակերտի Երիտասարդական պալատում կատարվեց Համագումարի հանդիսավոր բացումը: Բացման խոսքով հանդես եկավ Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը: Սրբազան Հայրը, ողջունելով Համագումարի մասնակիցներին, ի մասնավորի ասաց.*

*«Մարդկային կյանքին մէջ կան պահեր, երբ մարդ ոչ միայն կը դժուարանայ խօսիլ, այլ կ'ուզէ միայն լռել ու լռութեան մէջ լսել ձայնը իր հայրերուն, այն հայրերուն, որոնց արեամբ ու քրտինքով շաղախուած է ամբողջութիւնը այն կառոյցին, որուն Հայրենիք անունը կու տանք:*

*Խորախորհուրդ սա պահուն, այնպէս կը զգամ, որ կարծես իմ վրայ յառած են սուր նայուածքները Ղարաբաղի մելիքներուն, Իսրայէլ Օրիներուն, Դաւիթ Բէկերուն, այլեւ նորօրեայ մեր ազատամարտիկներուն ու այդ խորունկ նայուածքներուն ընդմէջէն կը հաւատամ, եղած էր զսպանակիչ ույժը նաեւ իրենց կեանքին.* «Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին» *(Ղուկ. Ա 45):*

*Արձագանքն այս խօսքին, պահ մը կ'ալեկոծէ հոգիս, կը խռովէ էութիւնս, որ ամբողջութեամբ կլանուած է սա պահուան խորհուրդով: Խորհուրդ մը, որ նման է Աստուածորդւոյն ծննդեան* «Մեծ եւ Սքանչելի Խորհուրդին»*: Ու յանկարծ Խորենացիի գեղեցիկ ու լուսաւոր պատկերը կ'ուրուագծուի մտապաստառիս առջեւ, կարծէք ինծի յուշելու համար թէ* «Թէեւ մենք փոքր ածու մըն ենք, սահմանափակ թիւով. զօրութեամբ տկար եւ շատ անգամ օտար թագաւորութիւններէ նուաճուած, բայց եւ այնպէս մեր աշխարհին մէջ ալ կատարուած են քաջագործութիւններ, որոնք արժանի են գրուելու եւ յիշատակուելու»:

*Այո՛,* «մեր աշխարհին մէջ ալ կատարուած են քաջագործութիւններ, որոնք արժան են գրուելու եւ յիշատակուելու», *եւ ահա այդ աշխարհի սփիւռքացած*

*բեկորները, յարութիւն առած Տէր Զօրի ու Միջագետքի անապատներէն, եկած են վկայելու «յիշատակութեան արժանի այդ գործերը» եւ հաստատելու միանգամայն աւետարանական այն ճշմարտութիւնը որ կ'ըսէ. «Մի վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել» (Մատթ. Ժ 28):*

*Հարուստ ու ոգեշնչող մեր անցյալը ճանչնալու նախանձախնդրութենէն առաջնորդուած Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ-տնօրէնութիւնը հնգամեայ ծրագրումով, իր միջթեմական համագումար խորհրդակցական ժողովներու թեման ընտրած է «Ճանչնալ մեր Եկեղեցին իր ամբողջական պատմութեամբ», Եկեղեցւոյ պատմութեան ճանաչումը կ ենթադրէ նաեւ ճանաչումը ազգային մեր պատմութեան, որովհետեւ մեզի համար քրիստոնէութիւն եւ ազգութիւն միաշաղախուած, իրարմով ներթափանցուած կան, առանց բաժանումի եւ կամ զատորոշման»:*

*Այնուհետև Կիրակնօրյա դպրոցների Վարիչ-տնօրենությանը և Համագումարի պատգամավորներին ողջունեց Արցախի թեմի առաջնորդ Գեր. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը ներկաներին բացատրեց ուխտի կարևորությունը և հորդորեց նրանց հետագայում ևս ուխտագնացությունների գալ Արցախ: Անդրադարձավ նաև արցախյան գոյապայքարին ու սփյուռքահայության ներդրումներին այդ սրբազան պայքարի մեջ, ինչպես նաև խոսեց Արցախում հոգևոր վերազարթոնքի ու հոգևոր կյանքում տիրող իրավիճակի մասին:*

*Ներկաներին Լեռնային Ղարաբաղի վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի ուղերձը փոխանցեց փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանը, ուր ասվում էր. «Աստուծո կամոք և աստվածահաճո այն իրադարձությունները, որ սկիզբ առան ու զարգացում ստացան հայոց պատմական Արցախում, իրենց բարենպաստ ազդեցությունն ունեցան թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի հայության բոլոր, այդ թվում՝ հոգևոր դասի շրջանակներում: Վկան այսօրվա ներկայացուցչական միջոցառումն է, որը, անտարակույս, ի՛ր արժանի տեղը կգտնի Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700-ամյա պատմության մատյանում:*

*...Հաղորդելով Ձեզ ԼՂՀ իշխանությունների, ողջ արցախահայության, անձամբ իմ սրտաբուխ ողջույնը, համագումարի մասնակիցներին մաղթում եմ ամենայն հաջողություն՝ ի խնդիր հայրենաշեն և ժողովրդանվեր գործունեության»:*

*Ողջույնի խոսքեր ասացին նաև ԼՂՀ-ի փոխվարչապետ տիար Ժիրայր Պողոսյանն ու Մշակույթի նախարար տիար Արմեն Սարգսյանը:*

*Այնուհետև Հոգեշնորհ Տ. Տաթև արեղա Հակոբյանը Համագումարի մասնակիցներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ողջույնի խոսքը (տե՛ս էջ 23):*

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի ողջույնի խոսքը ներկաներին փոխանցեց Անթիլիասի միաբան հոգեշնորհ Տ. Պարթև Կյուլումյանը. «Հայրապետական օրհնութեամբ ու Քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Կիրակնօրեայ դպրոցներու այս 17-րդ Միջթեմական համագումարը: Ի՜նչ գեղեցիկ ու գոտեպնդիչ երեւոյթ է սա երբ աւելի քան հարիւր եօթանասունհինգ երիտասարդ-երիտասարդուհիներ Հայաստանէն ու Ղարաբաղէն եւ մանաւանդ Սփիւռքի գաղութներէն հաւաքուած են ազատագրեալ Ղարաբաղի բաբախող սիրտը հանդիսացող Ստեփանակերտի մէջ, մղուած իրենց քրիստոնէական հաւատքէն ու կոչումէն եւ զանոնք առաւել հաւատարմութեամբ կենսագործելու նախանձախնդրութենէն:*

*Սովորական համագումար մը չէ սա, այլ մեր ժողովուրդի կեանքին մէջ քրիստոնէական դաստիարակութեան կենսական ու անմիջական կարեւորութիւնը շեշտող առիթ մը, յիշեցում մը ու հրաւէր մը ուղղուած մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն ու մանաւանդ մեր նոր սերունդին:*

*Սովորական համագումար մը չէ սա, այլ դէպք մը երբ կրօնական դաստիարակութեան առաքելութեան յծուած ուսուցիչներ ու մտաւորականներ, եկեղեցական հայրեր թէ ազգայիններ քով-քովի կու գան միասնաբար ծրագրելու իրենց աշխատանքը եւ միասնաբար վերահաստատելու իրենց յանձնառութիւնը կրօնական դաստիարակութեան այնքան նուիրական գործին նկատմամբ:*

*Սովորական համագումար մը չէ սա ու չի՛ կրնար ըլլալ, երբ ան կը գումարուի Ղարաբաղի սրբազան հողին վրայ: Որքա՞ն արիւն, որքա՞ն արցունք հոսած է այս հողին վրայ. որքա՞ն աղօթք ու որքա՞ն հերոսութիւն շաղախուած է այս սուրբ հողին...: Ես վստահ եմ, որ ձեզմէ իւրաքանչիւրը այս հողին վրայ նոյնը պիտի չզգայ, ինչ որ պիտի զգար օտար ու օտարացնող հողերու վրայ: Արդ, այս Համագումարը տարբեր պէտք է ըլլայ իր խօսքով, իր խորհուրդով ու իր պատգամով: Ահա թէ ինչու Մենք ուզեցինք, որ Կիրակնօրեայ դպրոցներու Միջ-թեմական այս 17-րդ համագումարը տեղի ունենար Ղարաբաղի մէջ:*

*Այս առիթով, հայրական անհուն սիրով կ՚ողջունենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, իր պետութեամբ ու իր ժողովուրդով եւ իր քաջ բանակով: Ազատագրեալ Ղարաբաղը իր հերոսական պայքարով փայլուն նոր էջ մը բացաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն անգամ մը եւս կը հաստատենք մեր ամբողջական զօրակցութիւնը Ղարաբաղի մեր արի ժողովուրդին: Ղարաբաղը մե՛րն է ու մե՛րը պիտի մնայ ի գին ամէն զոհողութեան: Ղարաբաղով Հայաստանը, Սփիւռքը եւ ողջ հայութիւնը աւելի՛ զօրեղ է ու ողջ հայութեամբ Ղարաբաղը աւելի՛ պիտի զօրանայ ազատագրական պայքարի ճամբուն վրայ:*

*Յատուկ ուրախութեամբ նաեւ կ՚ողջունենք Ղարաբաղի քաջակորով Առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Եպսկ. Մարտիրոսեանը, որուն նախագահութեան ու անմիջական հոգածութեան ներքեւ կը գումարուի այս համագումարը: Առաջնորդ Սրբազանը եղաւ, Աւետարանի բացատրութեամբ, «Հովիւ քաջ, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Ան եղաւ իր հօտին հետ ու իր հօտին համար, անոր կեանքի ամենէն մռայլ օրերուն: Մնաց կառչած այս նուիրական հողին, պատրաստ իր անձը ընծայաբերելու անոր ազատագրութեան սրբազան պայքարին:*

*Ջերմ սիրով կ՚ողջունենք մեր Ս. Աթոռին երէց միաբաններէն եւ կիրակնօրեայ Դպրոցներու ընդհանուր Վարիչ-Տնօրէն՝ Գերշ. Տ. Սեպուհ Եպսկ. Սարգիսեանը: Սրբազանը քսան տարիներէ ի վեր իմաստութեամբ ու նախանձախնդրութեամբ կը վարէ իրեն վստահուած այս յոյժ կարեւոր պաշտօնը: Շնորհիւ իր նախաձեռնութիւններուն ու հետեւողական աշխատանքներուն, Կիրակնօրեայ դպրոցները աւելի կազմակերպուեցան ու ծաղկեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս:*

*Սիրելի՛ ուսուցիչ-ուսուցչուհիներ.*

*Մեր աչքերուն դիմաց կը գտնուի սա պահուն ձեր Համագումարին յայտագիրը: Արդարեւ, բովանդակալից, հետաքրքրական ու լուրջ յայտագիր մըն է սա, զոր կոչուած էք յառաջիկայ տասներկու օրերու ընթացքին բծախնդրութեամբ ու հաւատարմութեամբ իրագործելու: Սակայն, ձեզի տրուելիք դասախօսութիւնները, Համագումարի ընթացքին կատարուելիք Աստուածաշնչական մեկնութիւնները, ձեր*

կատարելիք խորհրդածութիւնները ու ապա ձեր առնելիք որոշումները կը մնան ժամանակաւոր տպաւորութիւններու ու ապրումներու զգացական սահմաններուն մէջ եւ կամ որպէս գեղեցիկ բանաձեւումներ՝ սոսկ թուղթին վրայ, երբ անոնք կեանքի չվերածուին Համագումարէն յետոյ: Համագումարի մը իմաստը Համագումարին մէջ չէ, այլ Համագումարէն ետքն է: Այլ խօսքով, կարեւորը «ի՞նչ պիտի ընենք»ը կամ «ի՞նչ լսեցինք»ը չէ համագումարի ընթացքին, այլ՝ «ի՞նչ պէտք է ընենք»ը համագումարէն յետոյ: Խօսքը որքան ալ գեղեցիկ ըլլայ, ոչինչ կ'արժէ, երբ անոր չի յաջորդեր գործը: Մենք այսօր գործողներու պէտք ունինք, հաւատաւոր, հանձնառու մշակներու, մտաւորականներու, ուսուցիչներու, ղեկավարներու, որոնք մեր կեանքին մայր էջին վրայ իրենք զիրենք կ'իրագործեն իրենց գիտակից ու պատասխանատու մասնակցութեամբ եկեղեցաշինութեան, հայրենաշինութեան ու ազգաշինութեան հրամայական ու նուիրական գործին:

Եկեղեցի, Հայրենիք ու Ազգ: Ահա՛ մեր կեանքին երեք սիւները: Դուք կոչուած էք եկեղեցաշինութեան ճամբով մասնակից դառնալու հայրենաշինութեան ու ազգաշինութեան: Եկեղեցին մեզի համար սոսկ կառոյց ու դաւանանք չէ: Եկեղեցին ժողովո՛ւրդն է եւ իբր այդպիսին Եկեղեցին միշտ որպէս Քրիստոսի խորհրդական մարմինը ու քրիստոսատիպ առաքելութիւն ինքզինք իրագործելու, այլ խօսքով՝ ինքզինք վերաշինելու ընթացքին մէջ է: Ու եկեղեցւոյ վերաշինութեան մէջ առանցքային դեր ունի կրօնական դաստիարակութիւնը: Աւետարանական ճշմարտութիւնները, բարոյական սկզբունքները, եկեղեցւոյ կեանքէն բխող հոգեմտաւոր արժէքներն ու աւանդութիւնները հիմքը կը կազմեն կրօնական դաստիարակութեան: Ահա Կիրակնօրեայ դպրոցը կոչուած է տարածիչը, քարոզիչը, դաստիարակիչը ըլլալու այդ յաւիտենական արժէքներուն ու սկզբունքներուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ամէնէն կենսական բնագաւառներէն մին եղած է միշտ կրօնական դաստիարակութիւնը: Մեր նախորդները յատուկ կարեւորութիւն են տուած Կիրակնօրեայ Դպրոցին, հաւատալով անոր իւրայատուկ դաստիարակութեան մեր նոր սերունդի հոգեմտաւոր կազմաւորման մէջ: Մենք եւս, կրօնական դաստիարակութիւնը դարձուցած ենք մեր հովուապետական ծառայութեան հիմնական առաջնահերթութիւններէն մին:

Այսօր որեւէ ժամանակէ աւելի, մեր ժողովուրդը ու յատկապէս մեր նոր սերունդը հրամայական կարիքը ունի իր կեանքը լեցնելու քրիստոնէական արժէքներով ու բարոյական սկզբունքներով, երբ որպէս ժողովուրդ, կը պատրաստուինք նշելու Հայաստանի մէջ Քրիստոնէութեան Պետականացման 1700-ամեակը: Արդարեւ, Մեր Անդրանիկ Կոնդակին մէջ, խօսելով կրօնական դաստիարակութեան կեդրոնական կարեւորութեան մասին, ըսինք՝ «Այսօրուան աշխարհի շլացուցիչ երեւոյթներն ու ապաբարոյ վարքերը սկսած են թափանցել մեր նոր սերունդի կեանքէն ներս: Մեր զաւակները հետզհետէ կը հեռանան եկեղեցիէն՝ դառնալով գերին այնպիսի կենցաղակերպերու եւ ապրելակերպերու, որոնք խոտոր կը համեմատին Աստուածաշունչի սկզբունքներուն, Հայց. եկեղեցւոյ ուսուցումներուն ու մեր տոհմիկ աւանդութիւններուն: Չէ՛ կարելի այլեւս անտարբեր մնալ այս մտահոգիչ կացութեան դիմաց: Կրօնական դաստիարակութիւնը հայեցի դաստիարակութեան հետ սերտօրէն շաղախուած, պէտք է ծրագրուած, հետեւողական ու ազդու կերպով ջամբուի մեր ժողովուրդի զաւակներուն»:

Ահա Հայց. եկեղեցւոյ առաքելութեան կապուած այս յոյժ կարեւոր բնագաւառէն ներս, կիրակնօրեայ դպրոցը կոչուած է վճռական դերակատարութեան: Արդ, կոչ կ'ուղղենք ձեր բոլորին, որ ա՛յս գիտակցութեամբ, պատասխանատուութեամբ ու

*նախանձախնդրութեամբ մտածէք ու ծրագրէք այս Համագումարի ընթացքին, զայն վերածելով անկիւնադարձային հանգրուանի մը մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ:*

*Թող Աստուած պահէ ու պահպանէ մեր սիրելի Ղարաբաղը:*

*Թող Աստուած օրհնէ այս Համագումարը»:*

*Ողջույնի ուղերձ էր հղել նաև Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի առաջնորդ Տ. Օշական եպս. Չոլոյանը:*

*Սեպտեմբերի 21-ին Համագումարի պատգամավորները այցելեցին Ստեփանակերտի՝ արցախյան ազատամարտում զոհվածների պանթեոն՝ իրենց հարգանքի և խոնարհության տուրքը մատուցելու Հայրենիքի քաջարի նահատակների շիրիմներին:*

*Հոգեհանգստյան արարողությունից հետո ոգեկոչումի և պանծացման խոսք ասաց Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն Տ. Սեպուհ եպիսկոպոս Սարգսյանը, մեկ անգամ ևս հիշեցնելով, որ այս անխոս շիրիմներում ամփոփված և ոչ մի ազատամարտիկ չի պարագրում լռության անեզրությունը: Տիրոջ խաղաղությունը հարաբերական է, զի այսպես են նրանք ավանդում մեզ իրենց քաջության ու խոհեմության, ինչպես նաև հայրենասիրության վեհաշունչ դասը, որ կյանքի գին ունի: Այս լռության արժևորումն է հենց ապրողներիս սրբագնագույն պարտքը:*

*Համագումարի աշխատանքները, որոնք հիմնականում խարսխված էին խորհրդակցական ժողովների, դասախոսությունների և աստվածաշնչական մեկնությունների վրա, դյուրացնելու ու առավել նպատակայաց դարձնելու միտումով Վարիչ-տնօրենությունը պատրաստել էր հայտագիր, որը հագեցած էր զանազան մշակութային, գեղարվեստական հանդիսություններով, հանդիպումներով, ինչպես նաև ուխտագնացություններով:*

*Համագումարի ընթացքում դասախոսություններ կարդացին Գարգև Սրբազանը (Ղուկաս ԺԶ 1-13, Տնտեսի առակի մեկնություն, «Ավետարանը ուղեցույց փրկության»), Անուշավան ծ. վրդ. Դանիելյանը (Ա Տիմ. Դ 6-16, «Տիեզերական առաջին երեք ժողովներն ու Հայց. Եկեղեցին»), Տաթև արեղա Հակոբյանը (Ղուկաս ԺԸ 1-8, Անիրավ դատավորի առակի մեկնությունը), Ս. Գեղարդ վանքի վանահայր Տ. Եղիշե քհն. Սարգսյանը («Ավարայրն Նվարսակ, Վարդանանք և Վահանյանք»), Նուպար սրկ. Պերպերյանը («Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակումը», «Ս. Գրիգոր Լուսաւորիչ - կազմակերպչական կեանք», Ա Տիմ. Գ 1-16), Հովհաննես սրկ. Հովհաննիսյանը (Հովհ. Ժ 1-21), Երևանի Համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դասախոս պարոն Արշավիր Գարունյանը (Մատթ. ԺԳ 1-9, 18-23, Հռոմ. Ը 31-39, «Մեծն Ներսես, Ներսեսյան բարեկարգություններ»), Արցախի Պետական Համալսարանի Պատմության ամբիոնի վարիչ դոկտ., պրոֆ. Վահրամ Բալայանը («Արցախը անցյալին և ներկայիս»), «Էջմիածին» ամսագրի աշխատակից տիկին Մարիամ Վարդանյանը («Վանականության ծագումն ու զարգացումը Հայաստանում, Դ-Ե դարեր»), Անթիլիասի դպրեվանքի դասախոս պարոն Անդրանիկ Զեյթունյանը («Գրերու գյուտը»), Կիրակնօրյա դպրոցների փոխվարիչ-տնօրենուհի տիկին Աստղիկ Թաշճյանը («Կիրակնօրեայ դպրոց-ծնողք-ընտանիք յարաբերութիւնը»), ինչպես և Կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի տիկին Անահիտ Ջաֆիջյանը: Վերջինս իր մանկավարժական հարուստ փորձառությունից անմասն չթողեց իր գործընկերներին՝ «Ուսուցչութիւնը կոչում, Կիրակնօրեայի ուսուցիչը, Ինչպէ՞ս ներգրաւել աշակերտը, Ըլլալ հաղորդական և այժմէական» թեմաներով հետաքրքիր ու բովանդակալից դասախոսություն հրամցնելով ներկաներին:*

ի պատիվ Արցախի մշակութային գործիչների, վերջիններս բարձր կազմակերպվածությամբ Սփյուռքի իրենց հայրենակիցներին ներկայացրեցին Արցախի մշակութային ու գեղարվեստական արժեքները՝ Համագումարի ողջ ընթացքում նրանց հրամցնելով տարբեր համույթների, թատրախմբերի բարձր կատարողական արվեստն ու արվեստագետների, մշակույթի սպասավորների ստեղծագործությունները:

Ելույթներ ունեցան Ստեփանակերտի Երգի-պարի մանկական համույթը, կամերային նվագախումբը, Ստեղծագործական կենտրոնի մանկական երգի-պարի համույթը, Երգի-պարի պետական համույթը, Շուշիի «Վարանդա» մանկական համույթը (խմբավար՝ լիբանանահայ Զաքար Քեշիշյան), Ստեփանակերտի Փափազյանի անվան դրամատիկական թատրոնը: Իր հայրենասիրական շունչն ու ապրումները իր իսկ ստեղծագործությունների միջից պատգամավորներին փոխանցեց մշակույթի անխոնջ նվիրյալ Գուրգեն Գաբրիելյանը: Հյուրերն այցելեցին նաև Ստեփանակերտի Պատմության թանգարան, քանդակագործների բաց ցուցահանդես: Նույն օրերին Մշակույթի պալատում ցուցադրվում էին նաև ֆրանսահայ լուսանկարիչ Մաքս Սվազյանի լուսանկարները, որոնք արցախյան գոյամարտի դրվագներ էին ներկայացնում:

Մեծ ոգևորություն պատճառեցին Ստեփանակերտի վերակառուցման ծավալված աշխատանքները, որոնք օրեցօր մոռացության են մատնում այն դժնդակ օրերը, երբ ստեփանակերտցին ստիպված ամիսներով դուրս չէր գալիս նկուղներից՝ պաշտպանվելով կարկուտի նման տեղացող արկերից: Այսօր քաղաքը գեղեցկանում և մաքրվում է թշնամու պատճառած ավերածություններից:

Հոգևոր վերանորոգության օրեր եղան ուխտագնացությունները դեպի Գանձասար, Ամարաս և մանավանդ՝ Շուշի!

Երկարատև պատերազմի պատճառով քարուքանդ եղած ճանապարհներն անգամ ի զորու չեղան զրկելու ուխտագնացներին Արցախի անկրկնելի բնությամբ զմայլվելու հաճույքից:

Սեպտեմբերի 24-ին Համագումարի մասնակիցները Ստեփանակերտից մեկնեցին Շուշի, ուր Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում (Կանաչ ժամ) մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գեր. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Տուն Հօր իմոյ տուն աղօթից կոչեսցի» (Ես. ԾԶ 7) բնաբանով:

Հընթացս Պատարագի Ս. Հաղորդություն ստացան համագումարի բոլոր մասնակիցները, իսկ հավարտ Պատարագի տեղի ունեցավ Հոգեհանգստյան կարգ՝ Կիրակնօրյա դպրոցների հիմնադիր Հայրապետների, առաջին վարիչ-տնօրենի և ի Տեր հանգուցյալ լուսավորության մշակների հոգիների խաղաղության համար:

Ս. Պատարագից հետո բոլորն այցելեցին Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, ուր Պարգև Սրբազանը ներկաներին համառոտ ծանոթացրեց եկեղեցու պատմությանը: Այժմ այնտեղ վերանորոգության լայն աշխատանքներ են ծավալվում:

Սեպտեմբերի 28-ի երեկոյան տեղի ունեցավ Միջթեմական Համագումարի պաշտոնական փակումը:

Համագումարի աշխատանքներն ամփոփեց և գնահատանքի խոսք ասաց վարիչ-տնօրեն Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը:

Սրբազանը արժևորեց Համագումարի՝ Արցախում անցկացնելը որպես պատմական դրվագ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմության մեջ:

Շնորհակալության ու գոհունակության խոսք ուղղեց ԼՂՀ-ի իշխանություններին՝ Համագումարի աշխատանքներին աջակցելու և դյուրություններ ստեղծելու համար: Գնահատանքի խոսք ասաց նաև Արցախի թեմի Առաջնորդ Տ. Պարգև եպիսկոպոսին ու հոգևոր դասին՝ աջակցության ու համագործակցության համար:

Ելույթներ ունեցան նաև ԼՂՀ-ի Մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը, Տ. Պարթև արեղա Կյուրումյանը, պարոն Արշավիր Գարուճյանը, օրիորդ Հասմիկ Մկրտչյանը (Երևան), Տ. Տաթև արեղա Հակոբյանը և ուրիշներ:

Համագումարը փակվեց Արցախի հիմնով և Տերունական աղոթքով:

* * *

Սեպտեմբերի 29-ի վաղ առավոտյան ուխտավորները վերադարձան Արցախից Մայր Հայաստան:

Երևան տանող ճանապարհին համաժողովի մասնակիցները այցելեցին Խոր Վիրապ: Այստեղ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցում նրանք իրենց գոհաբանական աղոթքն առաքեցին առ Աստված, խոնարհվեցին մեր հավատո հոր չարչարանաց վիրապի առջև և ճանապարհ ընկան դեպի Երևան:

Օգոստոսի 31-ի առավոտյան Համաժողովի մասնակիցները այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ մասնակցելու Մայր Տաճարում մատուցվող Սուրբ Պատարագին:

Պատարագիչն էր Գեր. Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը: Սրբազան Հայրը «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն» բնաբանով (Մարկ. Գ 34):

Պատարագի ավարտից հետո Վեհարանի ընդարձակ սրահում հյուրերին ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Ողջունելով ներկաներին՝ Սրբազան Հայրը նախ վերհիշեց Լիբանանում ապրած և Դպրեվանքում ուսանած տարիները, ապա իր ուրախությունը հայտնեց համաժողովի հաջող ընթացքի համար ու պատգամեց առավել եռանդով լծվել պատասխանատու ծառայությանը:

Էջմիածնից ուխտավորները մեկնեցին Օշական՝ խոնարհվելու հայ դպրության մեծ լուսավորչի շիրմի առաջ:

Երևանում, Ծիծեռնակաբերդում և Եռաբլուրում, խոնարհվեցին նաև Մեծ Եղեռնի բյուրավոր նահատակների ու հայոց մերօրյա գոյամարտի՝ արցախյան հերոսամարտի տարիներին քաջաբար խոնարհվածների անթառամ հիշատակի առաջ՝ երգելով՝ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Սեպտեմբերի 1-ի առավոտյան ուխտավոր հայորդիք Երևանից մեկնեցին Հալեպ՝ իրենց հետ տանելով արցախյան աննկուն ոգին, Հայրենիքի սերն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունները:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՆՈՍՅԱՆ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 28-ին, հին տոմարով Վերացման Խաչի տոնին, Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի և խարտավիլակությամբ Ռոստովի Ս. Կարապետ եկեղեցու վանահայր Տ. Թադևոս ավ. քհն. Ավագյանի: Ձեռնադրվողներն էին Հոգևոր ճեմարանի շրջանավարտ Գարիկ սրկ. Ահարոնյանը և Ճեմարանի նախկին ուսանող Պարույր սրկ. Ավագյանը:

Ծաքաթ երեկոյան, սեպտեմբերի 27-ին, կատարվեց նրանց կոչման արարողությունը, որի ընթացքում ընծայացուները ուխտեցին հեռու մնալ և մերժել հերձվածողներին և հետևել Եկեղեցու Սուրբ Հայրերին:

Կիրակի օրը, առավոտյան ժ. 11-ին, սկսվեց Ս. Պատարագը: Պատարագիչն էր Առաջնորդ Սրբազանը: Ս. Պատարագը ընդհատվեց *«Ձի ողորմած և մարդասէր ես Աստուած»* հատվածից հետո, և սկսվեց ձեռնադրության արարողությունը: Ձեռնադրության կանոնական սաղմոսների, աղոթքների և երգերի միջոցով Սրբազանը հայցում է *«Աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ»*, որից հետո ընծայացուները հրապարակավ ուխտում են ստանձնելու քահանայական լուծը:

Սրբազանը Սրբալույս մյուռոնով օծելով նորընծաների ճակատը և ձեռքերը՝ վերանվանում է Գարիկ սարկավագին Տ. Նարեկ քահանա, Պարույր սարկավագին՝ Տ. Տիրան քահանա: Նորընծա քահանաները տալիս են առաջին օրհնությունը՝ մաղթելով *«Խաղաղություն ամենեցուն»*: Ձեռնադրության Սուրբ արարողությունից հետո Սրբազան Հայրը իր պատգամը տվեց նորընծա քահանաներին, հորդորեց նվիրվածությամբ ու սրբությամբ ծառայել Աստուծո և ժողովրդին:

Նորընծաները սեպտեմբերի 29-ին վերադարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ քառասնօրյա պահեցողության շրջանը անցկացնելու:

***Տ. ՆԱՐԵԿ ՔՀՆ. ԱՀԱՐՈՆՅԱՆ***
Մոսկվայի Ս. Հարություն
եկեղեցու հովիվ

## Տ. ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆ

(Մկրտության անունը՝ Գարիկ)



Ծնվել է 1974 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում:

1981–1990 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1996 թ.:

1996 թ. մայիսի 26-ին Մայր Տաճարում, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996-97 թթ. աշխատել է որպես «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն» թանգարանի պատասխանատու տնօրեն:

1997 թ. սեպտեմբերի 27-ին ձեռնադրվել է քահանա:

Այժմ, Թեմակալ Առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, նշանակվել է Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ:

## Տ. ՏԻՐԱՆ ՔԱՀԱՆԱ ԱՎԱԳՅԱՆ

(Մկրտության անունը՝ Պարույր)



Ծնվել է 1975 թ. հուլիսի 30-ին Երևանում:

Նախնական կրթությունը ստացել է Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղի միջնակարգ դպրոցում:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1996 թ. ծառայել է Դոնի Ռոստովի Ս. Կարապետ եկեղեցում:

1997 թ. հուլիսի 6-ին, ձեռամբ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. սեպտեմբերի 27-ին ձեռնադրվել է քահանա:

Այժմ, Թեմակալ Առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանի միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, նշանակվել է Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ:

# ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԸ ՍԿՍԵՑ ԻՐ ՈՒԹԵՐՈՐԴ՝ 1997-1998 ԹԹ.-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

*«Նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ»*

*(Հռոմ. Ե 3-5):*

Հիրավի, մարդ ապրում է հույսով, հույս՝ հանդեպ վաղվա օրը, հանդեպ իր գալիքը և հանդեպ իր Արարիչն Աստված: Այդ հույսն է, որ ապրեցնում է մարդուն և նոր կենսաուժ հաղորդում նրան: Այդ հույսն է, որ հոգեպես թրծում է մարդուն և ստեղծագործելու և մշտապես նորը կերտելու զորություն շնորհում: Այնժամ ոչ մի խոչընդոտ չի կարող դիմակայել կամ կասեցնել այդ ուժը, ուժ, որ Աստծուց է սատարվում՝ իր մեջ կիզակետելով միշտ լավն ու բարին:

Այսպես ծնունդ առավ Սևանի հոգևոր Դպրանոցը:

Ութ տարի առաջ էր, երբ Արարատյան Հայրապետական Թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, առաջնորդված լուսապայծառ տեսիլքով, օրհնությամբ երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի, Սևանա գողտրիկ թերակղզում բացեց դպրանոցը, որը հետագայում, ի հարգանս լուսահոգի Հայրապետի, կոչվեց «Վազգենյան»: Վաղեմի տեսիլքն իրականություն դարձավ, մի տունն ևս վերընձյուղվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում: Եվ ահա այդ տունկը երկրորդ անգամ է պտղակալում:

Սեպտեմբերի 14-ին, Խաչվերացի տոնի՝ արդեն ավանդական դարձած կիրակի օրը, նախագահությամբ Գերաշնորհ Տ. Գարեգին արք. Ներսիսյանի, տեղի ունեցավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 1997-98 ուսումնական տարվա բացման արարողությունը: Հանդիսությունից առաջ Ս. Առաքելոց եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էին բազում հյուրեր և դպրանոցի դասախոսական կազմը: Հավարտ Պատարագի, եկեղեցում հավուր պատշաճի քարոզ խոսեց դպրանոցի առաջին սերնդի շրջանավարտ բարեշնորհ Ադամ սրկ. Տոնիկյանը: Այնուհետև ուսանողներն ու դասախոսները տեսչի և մյուս ներկաների հետ, Սրբազան Հոր առաջնորդությամբ, ուղևորվեցին ուսումնական մասնաշենք:

Հանդիսությունն սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո սաների կատարմամբ հնչեց «Մեր հայրենիք» խմբերգը: Բացման խոսքով հանդես եկավ դպրանոցի տեսուչ արժանապատիվ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը՝ ի մասնավորի կարևորելով կրթօջախի առաջընթացի և ձեռքբերումների համար հիմք հանդիսացող նախադրյալները. Սրբազան Հոր հայրախնամ հոգատարությունը դպրանոցի հանդեպ, դասախոսների անձնվեր աշխատանքը և, վերջապես, կրթօջախում տիրող առողջ մթնոլորտը:

Այս տարի դպրանոցը տվեց ութ շրջանավարտ, որոնցից երեքը՝ սարկավագներ: Մի քանի օրից նրանք իրենց ուսումը կշարունակեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ճեմարանում: Դրա փոխարեն դպրանոցը համալրվեց տասնվեց նորընծա սաներով: Շրջանավարտներից շնորհակալական խոսքով հանդես եկավ Սամվել ուրարակիր Կիրակոսյանը:

Այնուհետև ասմունքի, հոգևոր և աշխարհիկ երգերի բարձրարվեստ կատարումից հետո իր խոհերն ու ստացած տպավորությունները արտահայտեց Ա լսարանի սան Հովհաննես Աղաջանյանը: Դասախոսական կազմի անունից ելույթ ունեցան Հայ Եկեղեցու պատմության դասախոս պրն. Սանդրո Բեհբուդյանը և գրաբարի դասախոս պրն. Հենրիկ Ավետիսյանը՝ իրենց բարեմաղթանքի ու խրախուսանքի ջերմ խոսքերով ոգևորելով ներկաներին:

Վերջում նրանց իր հայրական օրհնությունը բերեց վերատեսուչ Գարեգին արք. Ներսիսյանը: Արտահայտելով իր ուրախությունը նոր տարեշրջանի բացման և երկրորդ սերնդի շրջանավարտներ ճանապարհելու առիթով՝ Սրբազան Հայրը անդրադարձավ, որ դպրանոցն արդեն ամրագրված ավանդույթներ ունի, կենսագրություն և արդյունք, որ, գումարվելով Հայ Եկեղեցու կառույցին, ծառայելու է նրա զորացմանը: Հոգևոր դպրանոցի բացման և կայացման ճանապարհին ներդրված ջանքերի ու զոհողությունների համար իրեն վարձատրված համարելով՝ Գարեգին արք. Ներսիսյանը բարեմաղթանքի իր խոսքն ու օրհնությունն ուղղեց շրջանավարտներին: Այնուհետև, իր մտածումները կիսելով ներկաների հետ, նա անդրադարձավ նաև դպրանոցի տարածքում կառուցվող նոր համալիրի բարեհաջող ընթացող շինարարական աշխատանքներին:

Հանդիսությունը փակվեց Տերունական աղոթքով և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

*Արտակ Սահակյան*
*Սևանի Վազգենյան Դպրանոցի*
*Ե լսարանի սան*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ-ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 5-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԱՄԵՆԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

*Օգոստոսի 5-ին, երեկոյան ժամը 19.00-ին, շուրջ 660 երիտասարդ-երիտասարդուհիներ այցելեցին Ս. Էջմիածին և ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից: Նրանք հավաքվեցին Վեհարանի մեծ դահլիճում, որտեղ Հ.Յ.Դ. բյուրոյի անդամ Արո Մանուկյանը հակիրճ խոսքով ներկայացրեց Հայաստանից, Արցախից, Ջավախքից, Վրաստանից և արտասահմանի 18 երկրներից եկած երիտասարդների և ուսանողների, որոնք Հայաստանում էին անցկացնում իրենց հինգերորդ բանակումը, և ապա խնդրեց Վեհափառ Հայրապետին տալ իր պատգամը:*

*Իր խոսքից առաջ Վեհափառ Հայրապետը բոլորին հրավիրեց աղոթքով սկսել այս եզակի հավաքույթը: Ապա նա տվեց իր պատգամը Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և առհասարակ մեր եկեղեցու առաքելության, մեր հայրենիքի և անկախ պետականության ամրացման և զորացման անհրաժեշտության մասին:*

*Նա ասաց, որ այսօր հայրենիքը ողջ հայության պատասխանատվությունն է Հայաստանի և աշխարհի չորս ծագերում: Մեր միակ ուժը հայության ամբողջականության և միության արտահայտությունն է:*

*Հանդիպման ավարտին Արո Մանուկյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին հայաշունչ և հայրենաշունչ խոսքի համար: Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով և Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ:*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻՆ

*Օգոստոսի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Միացյալ Ազգերի Տուրիզմի Համաշխարհային Կազմակերպության խորհրդատուներ պարոն Ռոդ Համիլթոնը և տիկին Ֆրանսուազ Գյու Ֆոն՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ներկայացուցիչ օրիորդ Անահիտ Սիմոնյանի ուղեկցությամբ: Վեհարանում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:*

*Զրույցի ընթացքում հյուրերը հայտնեցին, որ իրենց կազմակերպությունը զբաղվում է Հայաստանում տուրիզմի զարգացման հայեցակարգի, ինչպես նաև տեխնիկական օգնության ծրագրի մշակմամբ, որը հանդիսանում է Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի նախաձեռնությունը և ֆինանսավորվելու է նրա կողմից:*

*Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերի նախաձեռնությունը,- իր գնահատանքն ու երախտագիտությունը հայտնեց նրանց՝ Հայաստանի նկատմամբ մտահոգության և օգնություն ցույց տալու պատրաստակամության համար:*

*Խոսելով Հայաստանում քրիստոնեության՝ իբրև պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության և հատկապես այդ կապակցությամբ նախատեսվող միջոցառումների ծրագրի մասին, որի կարևոր մասն են կազմում ուխտագնացությունները, Նորին Սրբությունը կարևորեց տուրիզմի զարգացումը Հայաստանում: Նա նշեց, որ այդ ուխտագնացությունները կնպաստեն ժողովուրդների միջև բարեկամության և փոխհարաբերությունների սերտացմանը, հոգևոր կապերի առավել ամրապնդմանը, միմյանց ավելի մոտիկից ճանաչելուն:*

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

*Օգոստոսի 20-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար պարոն Մարատ Ալեքսանյանը և առողջապահության նախարար պարոն Գագիկ Ստամբոլցյանը՝ Վաղարշապատի քաղաքապետ պարոն Երվանդ Աղվանյանի ուղեկցությամբ:*

*Նրանք եկել էին ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Հայրապետի օրհնությունները իրենց գործերի հաջող ընթացքի համար:*

*Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց և քաջալերական խոսքն ուղղեց երկու նախարարներին: Նորին Սրբությունը շեշտեց օրենքի պահպանման, արդարության գործադրման, ինչպես նաև առողջապահական պայմանների բարելավման կարևորությունը: Խոսակցություններ տեղի ունեցան այս երկու բնագավառներում մեր հայրենի ժողովրդի ունեցած կարիքների և դժվարին պայմանների բարելավման ու զարգացման մասին:*

## ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՍԵՆԱՏՈՐ ՋԵԿ ՌԻԴՆ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

*Օգոստոսի 20-ին, երեկոյան ժամը 19.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի կողմից ընդունելության արժանացավ Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի անդամներից պարոն Ջեկ Ռիդը՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Պարոն Փիթեր Թոմսոնի, Ամերիկայի Հայկական Համագումարի ներկայացուցիչ օրիորդ Էդիտ Խաչատրյանի և Վաշինգտոնի գրասենյակից՝ պարոն Ջեմսի ընկերակցությամբ:*

*Մեկ ժամ տևած խոսակցության ընթացքում Վեհափառ Հայրապետը տեղեկություններ տվեց և վերլուծություններ կատարեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեության շուրջ: Խոսակցության առարկա եղան նաև Հայաստանում և Արցախում տիրող կացությունը և դեռևս չլուծված հարցերի լուծման հնարավորությունները:*

*Հարգարժան այցելուները եղան Վեհափառ Հայրապետի ընթրիքի հյուրերը, որի*

*ժամանակ ծավալվեց ընդարձակ խոսակցություն առհասարակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի կացության ու հոգևոր, կրոնական, կրթական, մշակութային, տնտեսական, ընկերային պայմանների զարգացման մասին:*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԻՆ

*Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի պատգամավոր, «Նարոդովլաստիե» խմբակցության նախագահ, հայ-ռուսական պատգամավորական խմբի ղեկավար Նիկոլայ Ռիժկովն իր տիկնոջ հետ՝ Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Արա Սահակյանի և նրա տիկնոջ ուղեկցությամբ: Պարոն Ռիժկովի, որը Երևան էր ժամանել Հայաստանի Ազգային ժողովի հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելության նպատակն էր հարգանքի տուրքի մատուցումը Ամենայն Հայոց Կաթողիկոսին:*

*Վեհարանում տեղի ունեցած ջերմ ընդունելության և անկեղծ զրույցի ընթացքում Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ողջունելով պարոն Ռիժկովի այցը Հայաստան և Ս. Էջմիածին, նշեց, որ վերջինս միշտ եղել և մնում է Հայաստանի և հայ ժողովրդի մեծ բարեկամը, որը հայ ժողովրդի կողքին էր նրա ամենադժվարին օրերին: Նորին Սրբությունը խորին երախտագիտությամբ վերհիշեց պարոն Ռիժկովի այցը Հայաստան 1988 թ. ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, նրա սրտացավությունն ու մտահոգությունը հայ ժողովրդի հանդեպ: Ապա Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայ և ռուս ժողովուրդների ու պետությունների միջև շարունակվող և օրըստօրե խորացող բարեկամությունն է՛լ ավելի է ամրապնդվում նաև Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների համագործակցությամբ:*

*Պարոն Ռիժկովը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, բարձր գնահատեց Հայ Առաքելական Եկեղեցու այն մեծ դերը, որ նա կատարեց երկրաշարժի օրերին և այժմ էլ շարունակում է կատարել հայ ժողովրդի կյանքում:*

*Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պարոն Ռիժկովին նվիրեց «Հայ Եկեղեցու գանձերը» ալբոմը, իսկ պարոն Ռիժկովն՝ իր գիրքը, որի մի գլուխը նվիրված է Հայաստանին:*

*Հանդիպմանը ներկա էին նաև Գեղարքունյաց թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը և Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը:*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության բնության պահպանության նախարար պարոն Սարգիս Շահազիզյանը՝ փոխնախարարներ Կորյուն Հակոբյանի և Արմեն Հունանյանի ուղեկցությամբ: Հյուրերին Վեհարանի իր աշխատասենյակում ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:*

*Հանդիպման ընթացքում պարոն նախարարը Վեհափառ Հայրապետին պատմեց*

*նախարարության գործունեության և անելիքների մասին, ներկայացրեց նախատեսվող բնապահպանական ծրագրերը և առաջնահերթ խնդիրները, որոնցից նա հատկապես կարևորեց Խոր Վիրապի վանքը շրջապատող տարածքի կանաչապատումը ու բարեկարգումը, ինչպես նաև Էջմիածին քաղաքում Ներսես Աշտարակեցու հիմնած անտառի վերականգնումը, ծառատնկումը և լճի վերականգնումն ու խնամքը:*

*Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով և հավանության արժանացնելով նախարարության ազգօգուտ ձեռնարկումները, տվեց նրանց իր հայրապետական օրհնությունն ու քաջալերանքը, մաղթեց նրանց կորով, եռանդ ու հաջողություններ աշխատանքում, ամենայն բարիք:*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

*Օգոստոսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին 32 զինվորականներ՝ մայոր Խաչատուր Խաչատրյանի և կապիտաններ Սեյրան Խաչատրյանի ու Սամվել Սիմոնյանի գլխավորությամբ: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի համաձայն, երիտասարդ զինվորականներն իրենց ուսումն այսուհետև շարունակելու են Ռուսաստանի Դաշնության Զինվորական Ակադեմիաներում: Ուստի նրանց այցելության նպատակն էր մեկնումից առաջ ստանալ Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու բարեմաղթանքները:*

*Զինվորականների հետ անկեղծ ու սրտաբուխ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր ուրախությունն ու հրճվանքն արտահայտեց նրանց այցելության առթիվ: Խոսելով նրանց ընտրած ուղու մասին, Վեհափառ Հայրապետը խիստ կարևորեց զինվորների անմնացորդ, անձնվեր, անձնուրաց նվիրվածությունն իրենց կոչմանը, ծառայությանը, պարտականությանը՝ ազգի, հայրենիքի և ժողովրդի հանդեպ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ մեր երիտասարդ սերունդն այժմ, հատկապես մեր դժվարին օրերին, կարիք ունի նոր հոգեբանություն կերտելու, կյանքի նկատմամբ նոր մոտեցում ցուցաբերելու, նորովի ապրելու: Ապա Նորին Սրբությունը հորդորեց նրանց օտար ափերում ապրել այնպես, որ հայությունը նրանց անձի միջից արտացոլվի, միշտ բարձր պահվի հայի անունը:*

*Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը տվեց զինվորներին իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները, նվիրեց նրանց Ս. Էջմիածինը խորհրդանշող փոքրիկ կրծքանշաններ:*

*Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:*

## ԻՐԱՆԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Սեպտեմբերի 12-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց իրանահայ ուխտավորներին: 52 իրանահայեր Հայաստան են ժամանել Թեհրանի Հայ Կանանց Եկեղեցասեր Միության նախաձեռնությամբ:*

*«Գնանք, տեսնենք, հայրենիքի սերը տարածենք, զարգացնենք քրիստոնեական*

*գաղափարները», – այցելության նպատակը Վեհափառ Հայրապետին հայտնեց Միության նախագահ Նվարդ Մադաթյանը:*

*Ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը, իր ամենօրյա բազմաթիվ հանդիպումների շարքում «Հայրենիքի և եկեղեցու սիրով» Հայաստան ժամանած ուխտավորների հետ հանդիպումն իր համար յուրահատուկ նշանակություն ունի: «Այս հանդիպումը մասնավոր քաղցրություն է ինձ համար», – ասաց Նորին Սրբությունը՝ վերհիշելով Նոր Ջուղայում իր առաջնորդության տարիները:*

*Վեհափառ Հայրապետը ողջունեց իրանահայ Կանանց Միության ձեռնարկը՝ կարևորելով Միության նշանակությունը հայապահպանության գործում:*

*Նորին Սրբությունն ուխտավորներին կոչ արեց միավորվել հայրենիքի շուրջ, զորացնել այն, իսկ հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունն արտահայտել հայրենաշինությամբ և եկեղեցաշինությամբ: «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սերը և օրհնությունը տարեք Իրանում ապրող իմ բոլոր եղբայրներին և քույրերին: Իրանահայությունը հատուկ տեղ ունի իմ սրտում», – եզրափակեց Վեհափառ Հայրապետը:*

*Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր աղոթքը կատարեց՝ հայցելով Աստծո օրհնությունը իրանահայությանը և հատկապես իրանահայ ուխտավորներին:*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Սեպտեմբերի 13-ին, ժամը 11-ին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանին, փոխնախարարներ Արա Ասլիկյանին և Էդուարդ Մուրադյանին: Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանի տնտեսական ու սոցիալական ներկա իրավիճակի, ժողովրդին ցուցաբերվելիք մարդասիրական օգնության ծրագրերի մասին: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ անհրաժեշտ է մշակել ժողովրդին ծանր սոցիալական իրավիճակից դուրս բերելու այնպիսի ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց ոտքի կանգնել՝ սեփական ուժերին ապավինելով, առանց դրսի օգնության ակնկալիքի: «Պետք է զարկ տալ երկրագործությանը, արհեստներին, գործարարությանը»,– ասաց Վեհափառ Հայրապետը:*

*Իր հերթին նախարարը նշեց պետության կողմից ինվեստիցիոն գործունեությունը խրախուսելու, ինչպես նաև ներդրումների համար հուսալի տնտեսական համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին:*

*Արծարծվեցին նաև Մայր Աթոռի տնտեսական իրավիճակին, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի շրջանակներում նախատեսվող միջոցառումներին վերաբերող հարցեր:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

*Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Լիբանանի Խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիի գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանի ուղեկցությամբ: Նորին Սրբություն Գարեգին*

*Ա Կաթողիկոսը կարևորելով այս հանդիպումը, նշեց, որ լիբանանահայ համայնքը կարևորագույն սփյուռքահայ համայնքներից է: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Լիբանանն ու Սիրիան էին այն երկրները, ուր Մեծ եղեռնից հետո իբրև գաղթական հանգրվան գտավ արևմտահայության մեծ մասը՝ դառնալով ապա այդ երկրների լիարժեք քաղաքացի:*

*«Հայերը Լիբանանի անկախության մի մասն են», – ասաց պրն. Բըրրին: Վերհիշելով Հայոց Հայրապետի կաթողիկոսության 18 տարիները Լիբանանում, որոնցից 15-ն անցել են Լիբանանի համար պատերազմական իրավիճակում, Խորհրդարանի նախագահը բարձր գնահատեց Վեհափառի ներդրումը՝ հանուն լիբանանցիների փրկության:*

*ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանը հայտնեց Վեհափառ Հայրապետին, որ Հայաստանի և Լիբանանի միջև որևէ խնդիր գոյություն չունի. և այսօր հարաբերությունների ամրապնդման համար անհրաժեշտ են միայն գործնական քայլեր:*

*Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատմեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մասին, փոխանակվեցին հուշանվերներ: Հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարանում:*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ 95 ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

*Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հյուրընկալեց Ամերիկայի Հայկական Համագումարի 95 անդամների: «Պատմությունը փոխվել է, և մենք էլ պետք է փոխվենք»,– խոսելով ղարաբաղյան շարժման օրերն ապրած և 1991 թ. ի վեր անկախություն նվաճած Հայաստանի մասին, ասաց Վեհափառ Հայրապետը, միաժամանակ կոչ անելով առաջնորդվել «Մեկ հայրենիք, մեկ ազգ, մեկ եկեղեցի» գաղափարով: «Ոչ թե սոսկ խոսքով, այլ կյանքով և գործով»,-ավելացրեց Վեհափառ Հայրապետը:*

*Նորին Սրբությունը խոսեց նաև հոգևոր-կրոնական այն վերազարթոնքի մասին, որ ապրում է Հայաստանը: Կառուցվում են եկեղեցիներ, տարեցտարի ավելանում է Հոգևոր Ճեմարանի ուսանողների թիվը, իսկ սեպտեմբերի 18-ին կվերաբացվի նաև Գևորգյան Ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքը:*

*Պատասխանելով Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունների հարաբերություններին վերաբերող հարցին, Նորին Սրբությունը հայտնեց Մայր Աթոռի դիրքորոշումը, որի մասին տեղեկացված է նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը. այն է՝ վերադառնալ մինչև 1956 թ. եղած դրությանը, պահպանել Կիլիկիո պատմական Կաթողիկոսությունը: «Հարկ է, որ շարժվենք ժամանակների փոփոխության ռիթմով»,-ասաց Վեհափառ Հայրապետը: Այս դրությանը, ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը, պետք է հասնել աստիճանաբար, բանակցությունների միջոցով: «Հարկ է նաև արագ շարժվել և ամեն ինչ չթողնել միայն ժամանակին»:*

*Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազանը, որը ներկա էր հանդիպմանը, հյուրերի խնդրանքով պատմեց Ղարաբաղի ներկա իրավիճակի մասին: Ինչպես նշեց Սրբազան Հայրը, երկար տարիներ իր հավատից բռնի հեռացված արցախահայությունն իր երկրորդ մկրտությունն է ապրում՝ վերակառուցվում են*

*եկեղեցիները, կառուցվում են նորերը, որոնցից Լաչինի եկեղեցու կառուցումը կավարտվի մեկ ամսից: «Ժողովուրդն էլ պատրաստ է մինչև վերջ պայքարել, միայն թե արդարությունն ու խաղաղությունը հաստատվեն Արցախում», - ասաց Պարգև Սրբազանը:*

*Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայկական Համագումարի կատարած կարևոր գործը:*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

*Սեպտեմբերի 16-ին Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի գերմանա-կովկասյան պատգամավորական խմբի ղեկավար, ԵԱՀԿ-ի միջխորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ Վիլլի Վիմմերին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Կարոլա Մյուլլեր-Հոլթեմիների և ՀՀ ԱԺ-ի Գիտության և կրթության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապայանի ուղեկցությամբ:*

*Ավելի քան մեկ ժամ տևած զրույցի ընթացքում խոսվեց Հայ Առաքելական Եկեղեցու, Հայաստանում անկախ պետականության վերականգնման և ղարաբաղյան հիմնախնդիրներին վերաբերող հարցերի շուրջ:*

*Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայաստանին ցուցաբերած Գերմանիայի ժողովրդի, պետության և Եկեղեցիների օժանդակությունը և հատկապես՝ մարդասիրական օգնությունը Գյումրիի երկրաշարժից հետո: Վեհափառ Հայրապետը մասնավորապես հիշատակեց «Դիակոնիշես Վերք» եկեղեցական մարդասիրական կազմակերպության անգնահատելի ծառայությունները:*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

*Սեպտեմբերի 25-ին Նորին Սբ. Օծություն Գարեգին Ա Կաթողիկոսին իր անդրանիկ այցելությունը տվեց վերջերս Հայաստանում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան նշանակված Սաիդ Իմամը: Զրույցի ընթացքում խոսվեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գործունեության և եգիպտահայ համայնքի մասին: Դեսպանը բարձր գնահատեց եգիպտահայ համայնքի գործունեությունը Եգիպտոսի կյանքի բոլոր ոլորտներում:*

*Վեհափառ Հայրապետը, որ բազմաթիվ անգամներ եղել է Եգիպտոսում, կարևորեց Եգիպտոսի ունեցած դերը ողջ արաբական աշխարհում: Նորին Սրբությունը հայտնեց նաև Ղպտի Օրթոդոքս Եկեղեցու պետ Շնորհազա Գ Պատրիարքի հետ ունեցած սերտ հարաբերությունների մասին:*

*Դեսպանը Վեհափառին նվիրեց իր նախորդի՝ Ահմադ Ռասլանի՝ Հայաստանի մասին գրած արաբերեն գիրքը: Վեհափառ Հայրապետն իր հերթին դեսպանին նվիրեց Էջմիածնի գանձերը պատկերող ալբոմը:*

**ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ**




# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Օգոստոսի 3-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ աբեղա Կարաղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» բնաբանով /Մատթ. Ե 48):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Օգոստոսի 10-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո» բնաբանով (Մարկ. Բ 5):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Օգոստոսի 17-ին, կիրակի.- Վերափոխումն Ս. Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Դու ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան. եւ շառաւիղ օրհնութեան՝ նախնւոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա Միածնին՝ Աստուածածին մայր Բանին» բնաբանով (Շարական *Վերափոխման*):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց *խաղողի օրհնության կարգ*:

***Օգոստոսի 24-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս եւ քարկոծ

առնէիր զառաքեալսն առ քեզ. քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք» բնաբանով (Ղուկ. ԺԳ 34):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Օգոստոսի 31-ին, կիրակի: - Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կիլիկիո Կաթողիկոսության Կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Սրբազան Հայրը՝ «Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն» բնաբանով (Մարկ. Դ 34):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Սեպտեմբերի 7-ին, կիրակի: - Դ կիրակի զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իսի-Լե-Մուլինո (Ֆրանսիա) քաղաքի հոգևոր հովիվ Տ. Սյուռոն վրդ. Գըվըգյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը: Վեհափառը հավատացյալներին ներկայացրեց Հարավային Ռուսաստան կատարած իր հովվապետական այցելության տպավորությունները:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Սեպտեմբերի 14-ին, կիրակի: - ԽԱՉՎԵՐԱՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս» բնաբանով (Հովհ. Գ 16):

Երեկոյան ժամերգությունից առաջ, ռեհաններով զարդարելով Ս. Խաչը, Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի նախագահությամբ կատարվեց Անդաստան, որից հետո Ս. Խաչը դուրս հանվեց Տաճարի բակ և «Խաչի Քո Քրիստոս երկրպագեմք» շարականի երգեցողությամբ, հանդիսավոր թափոր կազմած, Ս. Խաչը պտտեցրին Մայր Տաճարի շուրջը:

***Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի: - Յիշատակ մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ *վասն համօրէն ննջեցելոց:*

***Սեպտեմբերի 18-ին, հինգշաբթի: - Տօն է Եկեղեցւոյ:***

Այսօր, երեկոյան, Գևորգյան Ճեմարանի վերանորոգված շենքում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի բացման հանդիսավոր արարողությունը: Հանդիսությանը ներկա էին Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, պաշտոնատար այլ անձինք (տե՛ս էջ 41-47):

***Սեպտեմբերի 21-ին, կիրակի: - Բ կիրակի զկնի Ս. Խաչի: Բարեկենդան Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիս. Հովսեփյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 33-37)։ Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց *Հանրապետական Մաղթանք-Աղոթք* Հայաստանի Հանրապետության անկախության վեցերորդ տարեդարձի առթիվ:

***Սեպտեմբերի 28-ին, կիրակի.- Գ կիրակի զկնի Սրբոյ Խաչի: Տոն է Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք» բնաբանով (Մատթ. ԻԴ 30)։

## "ЭЧМИАДЗИН"

## ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (АВГУСТ-СЕНТЯБРЬ 1997)

1. Редакционная. На пути новых свершений. (стр. 3-5)
2. Совместное коммюнике делегаций Первопрестольного Св. Эчмиадзина и Киликийского Домна, 9 августа 1997 г. (стр. 6-7)
3. Патриаршие энциклики и послания благословения Католикоса Всех Армян Гарегина I. (стр. 8-29)
4. Отеческое слово и Патриаршее благословение Католикоса Всех Армян Гарегина I Нацианальному собранию армян Аргентины, 11 августа 1997 г. (стр. 21-22)
5. Отеческое слово и Патриаршее благословение Католикоса Всех Армян Гарегина I съезду учителей воскресных школ Киликийского Домна, 18 августа 1997 г. (стр. 23-24)
6. Отеческое слово и Патриаршее благословение Католикоса Всех Армян Гарегина I газете 'Зартонк'', 18 августа 1997 г. (стр. 25-26)
7. Проповедь Католикоса Всех Армян Гарегина I в праздник Воздвижения Креста Господня в Кафедральном Соборе св. Эчмиадзина, 14 сентября 1997 г. (стр. 30-32)
8. Слово Католикоса Всех Армян Гарегина I по поводу VI годовщины независимости Республики Армения в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 21 сентября 1997 г. (стр. 33-37)
9. Телеграмма Католикоса Всех Армян Гарегина I Папе Римскому с соболезнованием по случаю кончины Матери Терезы, 8 сентября 1997 г. (стр. 38)
10. Благословение Католикоса Всех Армян Гарегина I новоизбранному президенту Нагорно-Карабахской Республики, 18 сентября 1997 г. (стр. 39)
11. Поздравительная телеграмма Католикоса Гарегина I Аркадию Гукасяну по поводу избрания его президентом Нагорно-Карабахской Республики (стр. 40)
12. МАРИАМ ВАРДАНЯН - Освящение обновленного корпуса Геворковской Духовной Академии, 18 сентября 1997 г. (стр. 41-47)
13. Католикос Всех Армян - член Академий Канады и Югославии. (стр. 48)

ПАТРИАРШИЕ ВИЗИТЫ

14. МАРИАМ ВАРДАНЯН, ДИАКОН АРМЕН ХАЧАТРЯН. - Визит Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I в Южно-Российскую епархию, 29 августа-5 сентября 1997 г. (стр. 50-74)

БОГОСЛОВСКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ОТДЕЛ

15. ЕПИСКОП НОРВАН ЗАКАРЯН. Св. Богородица в контексте духовного опыта Армянской церкви (исследование)- (стр. 76-79)
16. ЗАХАРИЯ ДЗАГЕЦИ. Слово Католикоса Захарии "К Святому Кресту Богоприимному" (перевод с древнеармянского иеромонаха Баграта Галстяна)- (стр. 80-87)

17. А. Г. МУШЕГЯН. Смысл снура (нарота) или контуры восстановления обряда (исследования) - (стр. 88-93)
18. ГРИГОР БРУТЯН. Таблица армянских эпакт Анания Ширакаци. (стр. 94-103)
19. РАФАЕЛ АМБАРЦУМЯН. Массовое противостояние польских армян принудительному присоединению к Католической церкви, 17 век (исследование) - (стр. 104-141)
20. А. Г. САРЬЯН. Отечественные святые места в путевых заметках позднего средневековья, 17 век (исследование) - (стр. 142-149)
21. АЙРАПЕТ ШАТВОРЯН. История религиозно-исторического музея Главной церкви Тифлисского монастыря (исследование, продолжение) - (стр. 150-163)
22. ХАЧИК БАДИКЯН. Покровители Геворковской Духовной Академии-Григор Капанцян к 110-летию со дня рождения и 40-летию смерти (исследование) - (стр. 164-169)
23. АВАГ. Стебли на ветру (литературное) - (стр. 170-177)
24. БАГАРАТ ЭСДУКЯН. "Странник неустрашимый" (посвящается третьей годовщине смерти блаженной памяти Католикоса Вазгена I) - (стр. 178-182)

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ И ЕПАРХИЯХ

25. Возвращение экспозиции Московской выставки сокровищ Армянской церкви в Св. Эчмиадзин. (стр. 184)
26. АРХИЕПИСКОП НЕРСЕС ПОЗАПАЛЯН. Очередная ежегодная сессия Центрального Комитета Всемирного Совета Церквей, 10-19 сентября 1997 г. (стр. 185-186)
27. ЛАРИСА НАВАСАРДЯН. Трехдневный Круглый Стол Всемирного Совета Церквей в Первопрестольном Эчмиадзине, 24-27 сентября 1997 г. (стр. 187-191)
28. Освящение закладки фундамента новой церкви в г. Спитаке Католикосом Всех Армян Гарегином I, 10 августа 1997 г. (стр. 192)
29. Проповедь Католикоса Всех Армян Гарегина I при закладке фундамента новой церкви в г. Спитаке (стр. 193-195)
30. Открытие двух новых школ в городах Гюмри и Степанаване с благословения Католикоса Всех Армян Гарегина I, 19-20 сентября 1997 г. (стр. 196-197)
31. Освящение отреставрированной церкви в Арени, 28 сентября, 1997 г. (стр. 198)
32. Паломничество на Родину, в Св. Эчмиадзин. (стр. 199)
33. Паломничества в Армению к 1700-летию провозглашения христианства государственной религией Армении. (стр. 200-205)
34. Паломничество в монастырь Св. Креста в Крыму. (стр. 206-207)
35. Прием первых поомников Католикосом Всех Армян Гарегином I, 25 августа 1997 г. (стр. 208)
36. Межъепархиальный съезд учителей воскресных школ Киликийского Католикосата в Арцахе, 18-31 августа 1997 г. (стр. 209-217)

37. Свящ. Нарек Агаронян. Рукоположение во иерея в Ново-Нахидженанской и Российской епархии, 28 сентября, 1997 г. Прилагаются также биографии священников Нарека Агароняна и Тирана Авакяна. (стр. 218-220)
38. АРТАК СААКЯН. Начало Восьмого - 1997-98 учебного года в Севанской Вазгеновской семинарии. (стр. 221-222)

ПРИМЫ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВ. ЭЧМИАДЗИНЕ

39. Прием Католикосом Всех Армян Гарегином I участников V Всеармянского сбора студенческих молодежных союзов АРФ, 5 августа 1997 г. (стр. 223)
40. Прием Католикосом Всех Армян Гарегином I советников Всемирной организации по туризму, 12 августа 1997 г. (стр. 223)
41. Министр юстиции и министр здравоохранения РА у Католикоса Всех Армян Гарегина I, 20 августа 1997 г. (стр. 224)
42. Посещение сенатором США Джеком Ридом Католикоса Всех Армян Гарегина I, 20 августа 1997 г. (стр. 224)
43. Католикос Всех Армян Гарегин I принял Николая Рыжкова, 21 августа 1997 г. (стр. 225)
44. Католикос Всех Армян Гарегин I принял министра экологии РА, 21 августа 1997 г. (стр. 225)
45. Католикос Всех Армян Гарегин I благословил армянских воинов, 26 августа 1997 г. (стр. 226)
46. Паломники-армяне из Ирана в Первопрестольном Св. Эчмиадзине, 12 сентября 1997 г. (стр. 226)
47. Католикос Всех Армян Гарегин I принял министра финансов и экономики РА, 13 сентября 1997 г. (стр. 227)
48. Председатель парламента Ливана посетил Первопрестольный Эчмиадзин, 14 сентября 1997 г. (стр. 227)
49. Прием 95 членов Армянской Ассамблеи Америки Католикосом Всех Армян Гарегином I, 14 сентября 1997 г. (стр. 228)
50. Прием делегации Бундестага Католикосом Всех Армян Гарегином I, 16 сентября 1997 г. (стр. 229)
51. Католикос Всех Армян Гарегин I принял посла Египта, 25 сентября 1997 г. (стр. 229)
52. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за август-сентябрь 1997 г. (стр. 230-232)

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST-SEPTEMBER 1997)


1. Editorial. On the way of new realizations. (pp. 3-5)

OFFICIAL

2. Joint Communiqué of delegations of the Holy See of Etchmiadzin and Cilician Catholicossate, 9 August 1997. (pp. 6-7)
3. Pontifical Encyclicals and Blessing Letters of Karekin I, Catholicos of All Armenians. (pp. 8-29)
4. Fatherly message and Patriarchal blessing of His Holiness to Armenian National Assembly of Argentina, 11 August 1997. (pp. 21-22)
5. Fatherly message and Patriarchal blessing of His Holiness to Sunday Schools' Assembly of Cilician Catholicossate, 12 August 1997. (pp. 23-24)
6. Fatherly message and Patriarchal blessing of His Holiness to "Zartonk" daily, 18 August 1997. (pp. 25-26)
7. His Holiness' Homily in the Cathedral on the Feast of Exaltation of Holy Cross, 14 September 1997. (pp. 30-32)
8. His Holiness' Message in the Cathedral on the occasion of sixth anniversary of independence of Republic of Armenia, 21 September 1997. (pp. 33-37)
9. His Holiness' Telegram of Condolence to the Pope of Rome on the occasion of passing away of Mother Teresa, 8 September 1997. (p. 38)
10. The Catholicos of All Armemians gave His blessing to the newly elected president of Republic of Nagorno-Karabagh, 18 September 1997. (p. 39)
11. His Holiness' Telegram of Congratulation to Arkadi Ghukassyan for being elected as President of Republic of Nagorno-Harabagh. (p. 40)
12. MARIAM VARDANYAN - "Kevorkyan" Academy reopened, 18 September 1997.
13. His Holiness member of Canadian and Yugoslavian Academies. (pp. 41-47)

PONTIFIACAL VISITS

14. MARIAM VARDANYAN, DEACON ARMEN KHACHATRYAN - The visit of His Holiness Karekin I, Catholicos of All Armenians to the Diocese of Southern Russia, 29 August-5 September 1997. (pp. 50-74)

RELIGIO-PHILOLOGICAL

15. BISHOP NORVAN ZAKARYAN - The Blessed Virgin Mary in spiritual experience of the Armenian Church. (pp. 76-79)

16. ZAKARIA OF ZAG - The Homily of Armenian Catholicos Zakaria "To the Holy Cross" (translation by Hieromonk Bagrat Galstyan) - (pp. 80-87)
17. A. H. MUSHEGHYAN - The meaning of ritual paint or a sketch for the rite's restoration. (pp. 88-93)
18. GRIGOR BRUTYAN - The Table of Armenian epacts by Anania of Shirak. (pp. 94-103)
19. RAPHAEL HAMBARTSUMYAN - Collective self-defence of Polish Armenians against forced union in XVII century. (pp. 104-141)
20. A. G. SARYAN - Paternal holy places in Diaries of Late Middle Age, XVII century. (pp. 142-149)
21. HAYRAPET SHATVORYAN - History of the religious-historiographic museum of Vank's Cathedral in Tiflis (1900-1920) (continuation) - (pp. 150-163)
22. KHACHIK BADIKYAN - Beneficents of "Kevorkyan" Academy: Grigor Ghapantsyan (on the occassion of 110th anniversary of birth and 40th anniversary of death) - (pp. 164-169)
23. VOLODYA ABRAHAMYAM - Stalks beaten by storms. (pp. 170-177)
24. BAGRAT ESTUKYAN - "...If not a brave traveller". (pp. 178-182)

IN THE MOTHER SEE & DIOCESES

25. Treasures of Armenian Church were returned to Holy Etchmiadzin after the exhibition in Moscow. (p. 184)
26. ARCHBISHOP NERSES BOZABALYAN - Annual meeting of the Central Committee of WCC, 10-19 September 1997. (pp. 185-186)
27. LARISSA NAVASARDYAN - Meeting of Armenian "Round Table" of WCC in the Mother See, 24-27 September 1997. (pp. 187-191)
28. The foundation of Spitak's new church was blessed by Karekin I, Catholicos of All Armenians, 10 August 1997. (p. 192)
29. His Holiness' Homily after the blessing of fundaments of Spitak's church. (pp. 193-195)
30. In Gyumri and Stepanavan two new schools were opened by the blessing of His Holiness, 19-20 September 1997. (pp. 196-197)
31. Consecration of Areni's restored church, 28 September 1997. (pp. 198)
32. Pilgrimage to the Motherland and Holy Etchmiadzin. (p. 199)
33. Pilgrimages in Armenia on the occasion of 1700th anniversary of cristianity in Armenia. (pp. 200-205)
34. Pilgrimage to the Holy Cross Monastery of Crimea. (pp. 206-207)
35. His Holiness Karekin I greeted the first pilgrims, 25 August 1997. (p. 208)
36. The Assembly of Sunday School teachers from Cilician Catholicossate in Artsakh, 18-31 August 1997. (pp. 209-217)
37. PRIEST NAREG AHARONYAN - Ordination of priests in the Diocese of Nor-Nakhidjevan and Russia, 28 September 1997. With the biographies of priests Nareg Aharonyan and Tiran Avagyan. (pp. 218-220)
38. ARTAK SAHAKYAN - "Vazgenyan" Seminary of Sevan began it's eighth academic year 1997-98. (pp. 221-222)

RECEPTIONS IN THE MOTHER SEE

39. Catholicos of All Armenians greeted the participants of the fifth all-armenian camping of students and yongsters from Armenian Revolutionary Dashnak party. 5 August 1997. (p. 223)
40. His Holiness received the visit of the consultants of Tourism World Association, 12 August 1997. (p. 223)
41. The visit of Ministers of Justice and Health to His Holiness, 20 August 1997. (p. 224)
42. The visit of US senator Jack Reed to His Holiness, 20 August 1997. (p. 224)
43. His Holiness received the visit of Nikolay Rijkov, 21 August 1997. (p. 225)
44. His Holiness received the visit of the Minister of Ecology, 21 August 1997. (p. 225)
45. His Holiness Karekin I gave His blessing to Armenian soldiers, 26 August 1997. (pp. 26)
46. Armenian pilgrims from Iran in the Mother See, 12 September 1997. (p. 226)
47. His Holiness Karekin I received the visit of the Minister of Finances and Economy, 13 September 1997. (p. 227)
48. The visit of the Speaker of Lebanese Parliament to the Mother See of Etchmiadzin, 14 September 1997. (p. 227)
49. His Holiness Karekin I received 95 members of American Armenian Congress, 14 September 1997. (p. 228)
50. His Holiness Karekin I recieved the visit of Bundestag delegation, 16 September 1997. (p. 229)
51. His Holiness received the visit of the Ambassador of Egypt, 25 September 1997. (p. 229)
52. Church Pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See. (pp. 230-232)

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
# (AOUT-SEPTEMBRE 1997)


1. Sur le chemin des nouveaux travaux. (pp. 3-5)

BULLETIN OFFICIEL

2. La déclaration commune des délégations du St-Siège d'Etchmiadzine et de la Grande Maison de Cilicie. 9 août 1997. (pp. 6-7)
3. L'encyclique et la bénédiction écrite de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens. (pp. 8-29)
4. La bénédiction et le message du Catholicos de tous les arméniens au fonds national arménien d'Argentine. 11 août 1997. (pp. 21-22)
5. La bénédiction et le message du Catholicos de tous les arméniens à l'assemblée des écoles de catéchisme de la Grande Maison de Cilicie. 18 août 1997. (pp. 23-24)
6. La bénédiction et le message du Catholicos de tous les arméniens au journal "Zartong". 18 août 1997. (pp. 25-26)
7. L'homélie du Catholicos de tous les arméniens prononçée à l'occasion de la fête de la Croix. 14 septembre 1997. (pp. 30-32)
8. Le message du Catholicos du tous les arméniens prononçé à l'occason du 6ème anniversaire de l'indépendance de la République d'Arménie. 21 septembre 1997. (pp. 33-37)
9. Le télégramme de condoléances du Catholicos de tous les arméniens au Pape de Rome, à l'occasion du décès de Mère Theresa. 8 septembre 1997. (p. 38)
10. La bénédiction du Catholicos de tous les arméniens au nouveau Président de la République du Haut-Karabagh. 18 août 1997. (p. 39)
11. Le télégramme de félicitations du Catholicos de tous les arméniens à Mr Arkati Ghougassian, nouvellement élu Président de la République du Haut-Karabagh. (p. 40)
12. MARIAM VARTANIAN. La réouverture du collège Kévorkian. 18 septembre 1997. (pp. 41-47)
13. Le Catholicos de tous les arméniens membre des académiciens du Canada et de Yougoslavie. (p. 48)

VISITES PASTORALES

14. MARIAM VARTANIAN- DIACRE ARMEN KHATCHADRIAN. La visite de SS Karékine 1er au diocese du Sud de la Russie. 29 août 1997- 5 septembre 1997. (pp. 50-74)

RELIGIEUX ET PHILOLOGIQUES

15. EVEQUE NORVAN ZAKARIAN. La Ste Vierge dans l'expérience religieuse de l'église arménienne. (pp. 76-79)
16. ZAKARIA TSAKETSI. La traduction du récit " I sourpn khatchn Asdvadzngal" du Catholicos arménien Zakaria. Père Pakrad Kaloustian. (pp. 80-87)

17. A.H MOUCHEGHIAN. Le mystère de la couronne ou le tracé de la restauration du rite. Etude. (pp. 88-93)
18. KRIKOR BROUTIAN. La table additionnelle arménienne d'Ananie de Chirak. (pp. 94-103)
19. RAPHAEL HAMPARTSOUMIAN. L'autodéfense en grande masse des arméniens de Pologne contre l'union forcée au 18ème siècle. Etude. (pp. 104-141)
20. A.K. SARIAN. Les sanctuaires paternels dans les notes de vogage du tard Moyen-Age 17ème siècle. Etude. (pp. 142-149)
21. HAYRABED CHADVORIAN. L'histoire historico-religieux du musée du monastère principal de Tiflis. Suite de l'étude. (pp. 150-163)
22. KHATCHIG PATIKIAN. Les bienfaiteurs du collège Kévorkian. Krikor Gbapantsian, à l'occasion du 110ème anniversaire de sa naissance et du 40ème de son décès. Etude. (pp. 164-169)
23. AVAG. Les palissades agitéess par le vent. Ecrit. (pp. 170-177)
24. PAKRAD ESTOUKIAN. "Yété votch djamporte mi ari". Ecrit. (pp. 178-182)

AU ST-SIEGE ET DANS LES DIOCESES

25. Après l'exposition de Moscou, les trèsors de l'église arménienne ont été rapportées au St-Siège. (p. 184)
26. ARCHEVEQUE NERCES BOZABALIAN. L'assemblée annuelle du comité central du conseil mondial des églises, 10-19 septembre 1997 (pp. 185-186)
27. LARISSA NAVASSARTIAN. La table ronde de l'assemblée du conseil mondial des églises durant 3 jours au St-Siège d'Etchmiadzine, 24-27 seprembre 1997 (pp. 187-191)
28. La bénédiction des fondations de la nouvelle église de Spitak par SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, 10 août 1997 (pp. 192)
29. Le sermon de SS Karékine 1er prononçé à l'occasion de la bénédiction des fondations de l'église de Spitak. (pp. 193-195)
30. Ouverture de deux écoles à Gumri et Stépanavan avec la bénédiction de SS Karékine 1er. 19-20 septembre 1997. (pp. 196-197)
31. L'église restaurée d'Aréni a été bénie... 28 septembre 1997. (p. 198)
32 Pèlerinage en la Mère Patrie. St Etchmiadzine. (p. 199)
33. Pèlerinages en Arménie à l'occasion du 1700ème anniversaire de la proclamation du christianisme comme religion d'état. (pp. 200-205)
34. Pèlerinage au monastère Ste-Croix de Ghrim. (pp. 206-207)
35. SS Karékine 1er a reçu les premiers pèlerins. 25 août 1997. (p. 208)
36. La réunion inter-diocesènes des catéchètes du Catholicossat de Cilicie au Haut-Karabagh. 18-31 août 1997. (pp. 209-217)
37. R.P Nareg Aharonian. Consécration sacerdotale au Nouveau Nakhitchévan et en Russie, le 28 septembre 1997. Biographies des R.P/Nareg Aharonian et Diran Avakian. (pp. 218-220)
38. Ardak Sahakian. La huitième année du séminaire "Vazkénian" de Sévan a commencé. (pp. 221-222)

RECEPTIONS AU ST-SIEGE

39. Les participants du 5ème camp des associations arméniennes des jeunes étudiants de la FRA ont été reçu par le Catholicos de tous les arméniens à Etchmiadzine, 5 août 1997 (p. 223)

40. Le Catholicos de tous les arméniens a reçu les conseillers de l'organisation mondiale du tourisme, 12 août 1997. (p. 223)
41. Le Catholicos de tous les arméniens a reçu les ministres de la justice et de la santé. 20 août 1997. (p. 224)
42. Le sénateur Jack Reed des USA a rendu visite à SS Karékine 1er. 20 août 1997. (p. 224)
43. Le Catholicos de tous les arméniens a reçu Nicolas Rijkovin. 21 août 1997. (p. 225)
44. Le Catholicos de tous les arméniens a recu le ministre de l'environnement. 21 août 1997. (p. 225)
45. le Catholicos de tous les arméniens a donné sa bénédiction aux soldats arméniens. 26 août 1997. (p. 226)
46. Les pèlerins arméniens d'Iran au St-Siège. 12 septembre 1997. (p. 226)
47. SS Karékine 1er a reçu le ministre de l'économie et des finances. 13 septembre 1997. (p. 227)
48. Le Président de l'assemblée libanaise a rendu visite au St-Siège. 14 septembre 1997. (p. 227)
49. SS Karékine 1er a reçu les 95 membres du fonds arménien d'Amérique. 14 septembre 1997. (p. 228)
50. SS Karékine 1er a reçu la délégation du Bundestag. 16 septembre 1997. (p. 229)
51. SS Karékine 1er a reçu l'ambassadeur d'Egypte.25 septembre 1997. (p. 229)
52. Diverses informations écclésiastiques. Description des diffèrentes messes, homélies et célébrations aux mois d'août-septembre 1997 au St-Siège. (pp. 230-232)